ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՆՔ ԱՊՐԵԼ

Համամիութենական Լենինյան

Կոմունիստական Երիտասարդական

Միությանը,

որի շարքերում լինելու բախտը ունեցա

1922 թվից:

1

Կոշիկը թռավ մի թախտից մյուսը և կպավ քնածի ուղղակի քթին: Մի ոստյունով վեր ցատկելով տեղից ու նստելով, արթնացած երիտասարդը մի պահ չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Ապա նա տեսավ մաշված կոշիկը վերմակի վրա, բարկացած շարժումով ցնցեց վերմակը և այդպիսով վար նետեց կոշիկը հատակին: Բոլորովին սթափվելով, նա հերթով նայեց թախտերին: Բայց երեքի վրա էլ ընկերներն անշարժ պառկած էին: Ո՞ր մեկն էր նրանցից քնած և որ մեկն էր քնած ձևացնում՝ չէր կարելի ասել: Ի միջի այլոց, դրանցից մեկը՝ Վահրիճը, բոլորովին դուրս էր կասկածից: Միշտ լուրջ ու չափած-ձևած, նա այդպիսի կոպիտ կատակ չէր անի: Մնում էին Մուրադն ու Գառնիկը…

— Էյ, վայրենիներ,— դիմեց Վարդանը նրանց երկուսին,— ձեզանից ո՞ր մեկն է ավելի ապուշը…

Լռություն: Եվ մի՞թե կարելի էր, իրոք, սպասել պատասխանի:

— Կգտնեմ, միևնույնն է,— ասաց նա՝ առանց սակայն իմանալու, թե ինչպես պիտի գտնի:— Այ, այն ժամանակ վայ քեզ, Մուրադ կամ Գառնիկ…

Նորից լռություն:

«Սպասիր,— մտածեց հանկարծ Վարդանը՝ գյուտ արածի պես:— Կոշիկը… Ո՞ւմն է նա: Մուրադինը… Դե հիմա տես, թե ինչպես կգամ քո հախից, Մուրադ»…

Նա մի շարժում արեց՝ կոշիկը հատակից վերցնելու և նույն ձևով մեղավորին վերադարձնելու համար, բայց նրա ձեռքի շարժումը մնաց կիսատ: Դա կլինի հիմար կրկնություն: Պետք է հնարել մի ինքնուրույն բան…

Միայն մի րոպե մտածելուց հետո նա վեր կացավ անկողնից: Նրա աչքերը փայլում էին գոհ: Գտել էր:

Սենյակի անկյունից վերցնելով հատակին դրված թեյամանը, երիտասարդը ստուգեց՝ ջուր կա՞ մեջը: Այո, կա: Մոտենալով Մուրադի անկողնին, նա կանգ առավ, նայեց: Ընկերը պառկել էր կողքի վրա, երեսը դեպի պատը, և այնքան հաջող էր քնած ձևացնում, որ կարծես, իրոք, քնած լիներ: Ոչ մի մկան չէր շարժվում նրա դեմքի վրա, ոչնչից չէր երևում, թե նա զսպելիս լիներ ծիծաղը, կամ ականջը լարած հետևեր Վարդանին:

Վարդանը դաժան հանգստությամբ վեր բարձրացրեց թեյամանն ընկերոջ գլխավերևում, ապա ուղղության ճշտությունն ստուգելու համար, դանդաղ իջեցրեց դեպի քնածը: Այո, ծորակը գալիս էր ուղղակի նրա ականջի վրա: Նորից բարձրացնելով, նա թեյամանից մի կաթիլ ջուր կաթեցրեց ընկերոջ ականջի մեջ: Մուրադը քնածի մի հոգոց արձակեց և մեքենայական շարժումով ձեռքը տանելով դեպի ականջը, շփեց:

— Ոչինչ, ոչինչ,— շշնջաց Վարդանը,— դու քնած ձևացրու քեզ, մինչև որ ամբողջ թեյամանը դատարկեմ…

Ականջի մեջ ընկավ երկրորդ կաթիլը, ապա երրորդը: Մուրադը մշշաց և շուռ եկավ մյուս կողքի վրա:

— Չի օգնի,— շշնջաց Վարդանը,— այդ կողմումն էլ ականջ ունես…

Երբ այդ ականջի մեջ ևս ընկավ երրորդ կաթիլը, Մուրադը զարմացած բաց արեց աչքերը: Տեսնելով Վարդանին՝ թեյամանը բարձր բռնած, նա հասկացավ և հարցրեց կատաղությամբ, ընդոստ վեր կենալով տեղից.

— Ի՞նչ ես անում, հիմար:

— Առանձնապես ոչինչ,— պատասխանեց վրիժառուն ամենայն հանգստությամբ:— Սա այն կոշիկի զույգն է:

— Ի՞նչ կոշիկ, ի՞նչ ես դուրս տալիս,— հարցրեց Մուրադը՝ գլուխն ուժեղ ցնցելով, որպեսզի ջուրը դուրս թափի ականջներից:

— Դա քո կոշիկը չէ՞, ծանոթացիր:

— Իմն է, դրանի՞ց ինչ,— ոչինչ չհասկանալով, հարցրեց Մուրադը՝ ճկույթն ականջի մեջ:

— Դե լավ, բավական է ձևացնես,— կարճ կապեց Վարդանը,— մենք քվիթ ենք: Մյուս անգամ կոշիկ չես շպրտի քնած մարդկանց վրա:

— Ո՞վ… Ե՞ս… Դու խո չե՞ս ցնդվել…

Նույն վայրկյանին, համարյա միաժամանակ հասկանալով գործի էությունը, երկու ընկերները կտրուկ շուռ եկան և նայեցին Գառնիկի կողմը: Գառնիկը պառկել էր՝ վերմակով գլխովին ծածկված: Նրա ամբողջ վերմակը ցնցվում, վեր ու վար էր անում անզուսպ, բայց խեղդուկ ծիծաղից:

— Նենգ… Խաբեբա… Խորամանկ…— շշնջաց Վարդանը Մուրադի ականջին՝ Գառնիկի հասցեին:

— Դիմակավորվել իմ կոշիկո՞վ…— քթի տակ մռմռաց Մուրադը՝ փորձելով խլել թեյամանն ընկերոջ ձեռքից և հարձակվել դեպի Գառնիկը: Բայց Վարդանը չտվեց այն և հասկացրեց, որ հարկավոր է ավելի մեծ պատիժ հնարել: Մուրադը ցույց տվեց ոտքով՝ մոտենալ և քացի տալ նրա հետույքին: Վարդանը կտրուկ օրորեց գլուխը.— ոչ: Մուրադը ցույց տվեց բռունցքը: Դարձյալ ոչ: Ուրեմն էլ ի՞նչ…

Աշխատելով, որ Գառնիկը չլսի, ընկերները մի քանի րոպե փսփսում էին միմյանց ականջի, մինչև որ եկան ընդհանուր եզրակացության.— անցել էր Վարդանի առաջարկածը…

Վարդանը ոտների ծայրերի վրա մոտեցավ Գառնիկի թախտին և թեյամանն զգուշությամբ դրեց նրա անկողնի ծայրին: Բավական էր որևէ թեթև շարժում, որպեսզի թեյամանն աղմուկով ընկներ հատակին, կափարիչը չրխկոցով գլորվեր և այդ բոլորի աղմուկից արթնանար Վահրիճը: Չէր կարելի հնարել ավելի մեծ պատիժ, քան քնահար եղած լուրջ և թթված Վահրիճին իրենց ընկերոջ գլխին կապելը: Եվ որպեսզի նրանք երկուսը բոլորովին չընկնեին կասկածի տակ, հարկավոր էր

դուրս գալ սենյակից: Ճիշտ է, դրանով նրանք կզրկվեին զվարճալի տեսարանը դիտելու հաճույքից, բայց ի՞նչ արած, պետք էր բավականանալ դռան ետևից ականջ դնելով:

Արագ հագնելով շալվարները, երկու ընկերները սրբիչները գցեցին ուսերին:

— Գնա՞նք լվացվելու, Մուրադ,— հարցրեց Վարդանը՝ լսելի ձայնով:

— Գն…— սկսեց Մուրադը, բայց ծիծաղը խեղդեց նրան: Վարդանը, կատաղի դեմքով, սեղմեց ատամները և ճոճեց բռունցքներն ընկերոջ վրա.— զսպիր քեզ, հիմար…

Նրանք նայեցին սուտ քուն ձևացնողի կողմը: Վերմակն այնտեղ այլևս չէր ցնցվում: Ըստ երևույթին Գառնիկը գուշակել էր ինչ-որ դավադրություն և այժմ լարված սպասում էր, թե ինչով պիտի արտահայտվեր պատիժը:

Երկու ընկերները, դիտմամբ քսքսելով ոտքերը հատակին, դուրս ելան սենյակից և ծածկեցին դուռը՝ այն չափի աղմկոտ, որ Գառնիկը լսեր այդ, բայց Վահրիճը չարթնանար:

Դուրս գալով և դուռը ծածկելով, ընկերները մեխվեցին-մնացին տեղում: Շունչները պահած, նրանք սպասում էին թեյամանի շրխկոցին:

Նրանք սպասեցին մի րոպե, երկու, երեք, հինգ, բայց շրխկոց չեղավ: Նրանց համբերությունը կտրվում էր: Վերջապես Մուրադը, որն ավելի անզուսպն էր, կիսաբաց արեց դուռը, նայեց, ապա մտավ ներս: Տարակուսած ներս մտավ նաև Վարդանը:

Սենյակում ամեն ինչ նույնն էր: Միայն թե թեյամանն այժմ ամենայն խնամքով դրված էր լուսամուտի գոգում…

Ընկերների կատաղությանը չափ չկար: Խորամանկ Գառնիկը նորից խաբել էր նրանց: Բարկությունը թույլ չէր տալիս հնարել որևէ նոր բան, ուստի և նրանք մոտեցան քնածին՝ ամենաբնական և պարզ ծեծով ուղղակի ծեծելու համար: Բայց նույն րոպեին լսվեց նրանց ետևից.

— Դուք արդեն լվացվե՞լ եք: Էս ինչպե՞ս է եղել, որ ես ձեզանից շատ եմ քնել:

— Այսօր կիրակի է,— հիշեցրեց Վարդանը՝ սրբիչով չորացնելով իր միանգամայն չոր ձեռքերը:

— Միևնույնն է, չի կարելի այդքան քնել,— խրատական-հանդիմանական տոնով ասաց Վահրիճը նրան, կարծես ոչ թե ինքն էր շատ քնողը, այլ Վարդանը:— Թե չէ՝ քնով կմնաս, համաշխարհային հեղափոխությունը կանցնի կողքովդ: Օրինակ, սա…

Նա զզվանքով ցույց տվեց Գառնիկի կողմը:

— Նա մեր բոլորից շուտ է արթնացել…— սկսեց Մուրադը, բայց Վարդանն այնպիսի մի ցասկոտ հայացք նետեց նրա վրա, որ նա իսկույն լռեց:

— Ես կարթնացնեմ նրան,— ժպտալով դեպի Վահրիճը, պատրաստակամություն հայտնեց Վարդանը: Մոտենալով ընկերոջ թախտին, նա ասաց գերազանց քնքշությամբ.

— Գառնիկ, հոգյակս, արթնացիր…

Գառնիկը փռթկաց այդպիսի արտասովոր դիմումից, բայց և իսկույն փռթկոցը վերածեց խռմփոցի:

Վարդանն իր մատներն ամուր խրեց նրա ուսի մեջ և այնպես դաժանորեն ցնցեց նրան, որ թախտը ճռնչաց ցավագին:

— Ուշ է, արթնացիր, հոգյակս…

— Ո՞վ է,— ցատկելով տեղից, ուզեց հանկարծակի արթնացածի զարմանք ձևացնել Գառնիկը: Բայց հազիվ էր նա իր անմեղ հայացքը հառել Վարդանի աչքերին, երբ երկուսի էլ ծիծաղը եկավ և նրանք քրքջացին՝ բարձր, անզուսպ: Իսկ Մուրադի ձայնը չէր լսվում: Նա պառկել էր թախտին, փորի վրա, և ուշագնաց էր լինում լուռ ծիծաղից: Այդպիսի դեպքերում միշտ էլ ծիծաղն ընկնում էր նրա փորը, և եղել էին դեպքեր, երբ նա իրոք շնչահեղձ էր եղել՝ վախենալով ինքը և վախեցնելով ընկերներին:

— Ի՞նչ է պատահել ձեզ այսօր,— զարմացավ Վահրիճը և առանց պատասխանի սպասելու, վեր կացավ անկողնից:— Վարդան, բաց արա լուսամուտը, էլի փակե՞լ եք:

— Գիշերը ցուրտ էր,— արդարացավ Գառնիկը:

— Ցուրտ չէր: Դեռ սեպտեմբեր ամիսն է: Հարկավոր է մարզել իր մարմինը: Առողջ հոգին առողջ մարմնի մեջ: Հեղափոխությանը կայուն զինվորներ են հարկավոր:

Կանգ առնելով լուսամուտի առաջ, Վահրիճն սկսեց զբաղվել մարզանքով:

2

Այն սենյակը, որտեղ ապրում էին չորս կոմերիտականները, գտնվում էր Երևանի գլխավոր փողոց Աբովյանին զուգահեռ Նալբանդյանի վրա, երկհարկանի մի շենքի երկրորդ հարկում: Ոչ շատ մեծ և ոչ շատ փոքր, նա ուներ երկու լուսամուտ, որոնցից մեկը նայում էր դեպի հարևան միհարկանի շենքի տափակ կտուրը, իսկ մյուսը՝ դեպի փողոց: Սենյակի դուռը բացվում էր մի փոքրիկ նախասենյակի վրա, որտեղ կար նաև մի այլ բնակարանի դուռ: Կոմերիտականների հարևանը մի լուրջ և պատկառելի ընտանիք էր, որ ոչ մի կապ չէր ուզում ունենալ այդ ամուրի երիտասարդների հետ, մանավանդ որ երիտասարդները կոմերիտականներ էին, իսկ այդ ընտանիքը ուներ «հասած» աղջիկ…

Սենյակի ամենահին բնակիչը Գառնիկն էր: Երբ նա 1923 թվին դուրս ելավ որբանոցից, կոմերիտմիության Երևանի կոմիտեն նրան հատկացրեց այդ սենյակը և միաժամանակ աշխատանք ճարեց նրա համար ծխախոտի գործարանում: Մի շաբաթ անց նրան նորից կանչեցին կոմիտե և հայտնեցին, որ տալիս են ևս մի կենվորի: Գառնիկը, բարեհոգի և ընկերասեր տղա, իսկույն համաձայնեց և ուրախությամբ ընդունեց իր մոտ Մուրադին: Սա եկել էր գյուղից, որտեղ դաշնակների օրոք սպանվել էր նրա հայրը, իսկ ընդամենը երկու ամիս առաջ մահացել էր դեռ երիտասարդ, բայց վաղուց հիվանդ մայրը: Գյուղի կոմերիտական բջիջն ուղարկել էր Մուրադին քաղաք, որտեղ նա աշխատանքի էր ընդունվել շինարարության վրա որպես սևագործ բանվոր և միաժամանակ սովորում էր բանֆակում:

Մի օր ընկերները փողոցում տեսել էին, թե ինչպես երկու խուլիգաններ ծեծում էին մի տղայի: Ինչպես հետո պարզվեց, խուլիգանները մոտեցել էին միայնակ անցնող մի աղջկա և առաջարկել էին գնալ միասին ճաշարան: Մերժում ստանալով աղջկանից, նրանք սկսել էին վիրավորել նրան և նույնիսկ քաշքշել: Այդ րոպեին վրա էր հասել այդ տղան և ազատել էր աղջկան նրանց ձեռքից: Աղջիկն իսկույն անհետացել էր, իսկ տղան ինքը մնացել էր խուլիգանների ձեռքում: Սկսվել էր մի անհավասար տուրուդմփոց, անհավասար ոչ միայն այն պատճառով, որ երկուսը մեկի դեմ էին, այլև որ այդ մեկն ուժեղ չէր և ուներ, ըստ ամենայնի, ինտելիգենտական տեսք: Գառնիկն ու Մուրադը իսկույն հարձակվել էին խուլիգանների վրա, ծեծել և վռնդել նրանց: Ավելի ճիշտ՝ այդ արել էր ֆիզիկապես շատ ուժեղ Մուրադը, իսկ Գառնիկը, ոչ թուլակազմ, բայց մի քիչ վախկոտ, մի կողմ կանգնած քաջալերում էր ընկերոջը՝ մոտավորապես հետևյալ խոսքերով.

— Խփիր, ես դրանց հերն անիծեմ: Թեև սովետական երկրում ծեծն արգելված է, բայց խփիր, հեղափոխությունը չի տուժի դրանից: Ի՞նչ ես անում, տո՛, ուշք դարձրու, ետևից են ուզում հարձակվել քեզ վրա: Կողմնորոշվիր շո՛ւտ… Ախ, եթե ես քո տեղը լինեի՛, ցույց կտայի դրանց…

Կռվից հետո երեք երիտասարդները գնացել էին միասին: Պարզվել էր, որ երրորդը նույնպես կոմերիտական էր, անունը՝ Վարդան, Ալեքպոլից, որն ահա վեց ամիս էր, ինչ վերանվանվել էր Լենինական: Նա վաղուց էր երազել Երևանի մասին և ահա արդեն մի ամիս է, ինչ այստեղ է, միայն թե դեռ ոչ աշխատանք ունի և ոչ էլ քնելու տեղ: Գիշերում է այգում՝ նստարանի վրա, բայց հույս ունի, որ շուտով կընկնի որևէ հանրակացարան:

Միայն մի կարճ հայացք փոխանակելուց հետո միմյանց հետ և հասկանալով միմյանց, ընկերներն ասացին.

— Էլ ի՞նչ հանրակացարան, փոխադրվիր մեզ մոտ:

— Իրերդ շա՞տ են, գնանք միասին բերենք,— առաջարկեց Գառնիկը:

Պարզվեց, որ Վարդանի բոլոր իրերն իր մոտ էին: Դա նրա կոմերիտական քարտն էր: Նա Ալեքպոլում արդեն դուրս է եկել հաշվառումից, բայց այստեղ դեռ չի մտել հաշվառման:

— Մի ամի՞ս…— Համարյա սարսափեց Մուրադը:— Դուրս կմնաս կոմերիտմիությունից:

— Սպասում էի, մինչև որ գործ ու բնակարան…

— Իզուր էիր սպասում,— հանդիմանեց Գառնիկը:— Եվ չես է՞լ դիմել կոմիտեին… Ապա, հենց հիմա գնանք տեսնենք. կոմիտեի քարտուղարը լավ տղա է, ես նրան կխնդրեմ…

Երեք ընկերները գնացին կոմերիտմիության Երևանի կոմիտե: Մուրադը մնաց ընդհանուր սենյակում, իսկ Վարդանն ու Գառնիկը մտան քարտուղարի մոտ: Նրանք այնտեղ մնացին բավական երկար, և Մուրադն արդեն սկսել էր մտածել, որ Վարդանի «բանը պրծավ», երբ դուռը բացվեց, առաջինը դուրս ելավ Գառնիկը՝ ժպիտից լայնացած առանց այն էլ լայն դեմքով, և ետ շրջվելով, հպարտությամբ նայեց «իր գտած» Վարդանին, որը ոչ միայն ամենայն հեշտությամբ ստացել էր հաշվառման մեջ մտնելու թույլտվություն, այլև վաղվանից աշխատելու էր կոմերիտմիության օրգան «Ավանգարդ»-ի խմբագրատանը որպես ոճաբան: Կենտկոմի քարտուղարն ահա մի քանի օր էր, ինչ խնդրել էր Երևանի կոմիտեի քարտուղարին գտնել մի շատ լավ գրագետ տղա, բայց Երևանի կոմիտեի քարտուղարը չէր կարողանում կանգ առնել ոչ մի թեկնածուի վրա: Բայց ահա, բավական էր եղել մի քանի րոպեի խոսակցություն ալեքպոլցու հետ, մի քանի հարց ու պատասխան, որպեսզի քարտուղարը վերցներ հեռախոսը և առանց նույնիսկ հարցնելու կոմերիտականի համաձայնությունը, հայտներ խմբագրությանը.

— Ո՞վ է լսում: Հրայր, դո՞ւ ես: Լսիր: Վաղը քեզ մոտ կգա Վարդան անունով մի լավ տղա՝ Լենինականից: Կընդունես աշխատանքի: Տեղ չունի ապրելու, թող որոշ ժամանակ քնի խմբագրատանը, կոմպլեկտների վրա, մինչև որ մի բան մտածենք: Բայց սպասիր… Լսիր, էլ դրա կարիքը չկա, ծխախոտի գործարանի Գառնիկն ասում է, որ իր մոտ է տանում նրան: Բայց դու սկզբից, հենց վաղը, մի քիչ հոնորար դուրս գրիր նրան ավանսով: Երևում է, որ փող չունի:

— Անկողին էլ չունի,— փսփսաց նրա ականջի մոտ Գառնիկը:— Չի բերել հետը:

— Դա ես ինքս կտամ: Ինչպե՞ս: Քեզ հետ չեմ, Հրայր, այստեղ Գառնիկն ասում է, որ նա անկողին էլ չունի, ես խոստացա տալ: Ինձ երկու դոշակ են տվել, մեկն ազատ վեր է ընկած տանը: Իսկ սավան-մավան՝ ինքը կառնի: Ինչպե՞ս… Չեմ հարցրել: Սպասիր…

Հեռախոսափողը ծածկելով, քարտուղարը դիմեց Վարդանին.

— Խմբագիրը հարցնում է՝ դու գարեջուր խմո՞ւմ ես:

— Ոչ… Այսինքն՝ մի քիչ…— կմկմաց Վարդանը:

— Լսո՞ւմ ես: Խմում է: Այնպես որ, կիրակի օրերը ձեր կամպանիայից դուրս չի մնա, մի վախենա: Եվ ընդհանրապես լավ տղա է երևում: Սուսիկ-փուսիկ նստած է կաբինետում, բայց

հավատացո՞ղն ով է: Մի քիչ ձևացնում է, մի քիչ էլ քաշվում: Լսիր, դու անցյալ օրը մի թղթակցություն էիր տպել…

Մի պահ ընդհատելով այդ խոսակցությունը՝ արդեն ուրիշ նյութի մասին, նա ձեռքով արեց.

— Գնացեք, Գառնիկ, ես ձեզ հետ պրծա: Անցյալ օրը մի թղթակցություն էիր տպել մեխանիկական գործարանի մասին: Կարդացի և…

Կոմերիտականները ծածկեցին դուռն իրենց ետևից և շարունակությունը չլսեցին:

Սենյակի չորրորդ ու վերջին բնակիչը հայտնվել էր ընդամենը մի քանի ամիս առաջ: Ճիշտն ասած, Գառնիկն ու Մուրադը վաղուց էին ճանաչում նրան, մի փոքր գիտեր նաև Վարդանը: Վահրիճն աշխատում էր Տրոպիկական ինստիտուտում, որը ժողովուրդը պարզապես անվանում էր Մալարիայի հիվանդանոց: Նա այնտեղ քարտուղար էր գրասենյակում և, հասարակական ծանրաբեռնվածության գծով, նաև ագիտատոր: Նրան հաճախ կարելի էր տեսնել ոչ միայն կոմերիտմիության ակտիվի համաքաղաքային ժողովներում, այլև զանազան բջիջներում: Նա ամեն տեղ ելույթներ էր ունենում և ուղղում էր իրենից առաջ ելույթ ունեցածների սխալները: Դա նրա մասնագիտությունն էր: Խոսում էր աղմուկով, կռվարար տոնով կամ, ինչպես ինքն էր բնորոշում՝ «մարտական ոգով»:

Մի օր նա եկավ երեք ընկերների մոտ և խնդրեց մի քանի օրով գիշերել նրանց սենյակում: Նա «մերկացրել» է իր հետ մի սենյակում ապրող ընկերոջը և վռնդել տվել կոմերիտմիությունից, ուստի և անհարմար է շարունակել նրա հետ ապրելը: Մի քանի օր հետո նա կճարի ուրիշ բնակարան և կգնա ընկերների մոտից:

Ճիշտն ասած, երեք ընկերներից և ոչ մեկը դեմ չէր լինի ընդունել իրենց մոտ նաև չորրորդ ընկերոջը՝ մշտական բնակության, եթե այդ չորրորդը լիներ համակրելի մարդ:

Մի ամիս հետո Գառնիկը հարցրեց Վահրիճին.

— Դու դեռ սենյակ չգտա՞ր:

— Ի՞նչ ես ուզում ասել,— պառկած տեղից վեր ցատկելով, պատրաստվեց կռվել նրա հետ Վահրիճը:

— Ուզում եմ ասել, որ մի քանի օրը վաղուց է անցել:

— Եվ դու չե՞ս ամաչում,— հանդիմանեց ագիտատորը:— Քո մեջ խոսում է մասնավոր սեփականատիրոջ նողկալի ձայնը, իսկ դու չես էլ լռեցնում դա:

— Այդ ի՞նչ ես ասում… — ապշեց Գառնիկը:

— Ինչ որ լսեցիր: Խորհուրդ եմ տալիս քեզ լռելու, Գառնիկ: Այս անգամ ես ձեր բջիջին ոչինչ չեմ հայտնի այդ մասին, բայց եթե մի անգամ էլ կրկնես՝ կդնեմ քո հարցը: Աշխատիր վերադաստիարակվել…

Երբ սենյակի մյուս բնակիչները եկան, Գառնիկը, ավելի շուտ հաստատական ձևով, քան թե հարցական, ասաց նրանց, որ Վահրիճը կարող է մնալ սենյակում՝ մշտական բնակության: Մուրադն ու Վարդանը տարակուսեցին, բայց չհակաճառեցին:

Երբ որոշվեց, որ Վահրիճը մնալու է, ընկերները փորձեցին հաղթահարել իրենց վերապահ վերաբերմունքը նրա նկատմամբ և մերել նրան իրենց հետ: Բայց դա չէր հաջողվում, ավելի ճիշտ՝ հաջողվում էր միայն հազվադեպ ու կարճատև մոմենտներով: Դա լինում էր այն պահերին, երբ Տրոպիկական ինստիտուտի քարտուղարը, վարակվելով երեք ընկերների զվարթությունից ու չարություններից, անկեղծությունից և անմիջականությունից, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, միանում էր նրանց: Բայց մի քիչ հետո, հանկարծակի, նա սթափվում էր, նորից դառնում սառն ու

վերապահ, քաշվում մի կողմ և խրատներ կարդում «իզուր ժամավաճառ» եղող այդ «կիսակոմերիտականների» գլխին՝ ելնելով «համաշխարհային հեղափոխության» դիրքերից:

3

Գառնիկն ու Վահրիճը դուրս ելան միջանցք՝ լվացվելու: Մուրադն ու Վարդանը՝ նույնպես: Վահրիճը զարմացած նայեց նրանց: Ընկերներն արդարացան.— այո, նրանք արդեն լվացվել են, բայց լավ մարդկանց հետ կոլեկտիվ կերպով նորից լվացվելը երբեք էլ ափսոս չէ:

— Այդ դեպքում՝ գոնե հերթով, մեկ-մեկ,— դժգոհեց Վահրիճը:— Լվացարանի մոտ կանգնելու տեղ չկա:

— Եթե հերթով լվացվենք, վերջին լվացվողները կուշանան, համաշխարհային հեղափոխությունը կգա-կանցնի նրանց մոտով,— դեմքի անդրդվելի արտահայտությամբ ասաց Վարդանը: Նրա ծաղրը գուցե անցներ աննկատ, եթե անզուսպ Մուրադը չփռթկար և դրանով չցայտեցներ այն ջուրը, որն արդեն պատրաստվում էր խփել երեսին:

— Է՛յ, չակերտավոր կոմերիտական,— լվացվելն ընդհատելով, ցասկոտությամբ ասաց Վահրիճը,— խորհուրդ եմ տալիս քեզ՝ ծաղրելու ուրիշ նյութ գտնել, թե չէ դուրս կթռչես միությունից: Տեսնո՞ւմ եք ռենեգատին,— դիմեց նա մյուս երկուսին,— ծաղրում է համաշխարհային հեղափոխությունը: Օպորտունիստ…

— Իսկապես, լավ չես անում, Վարդան,— նախատեց նաև Գառնիկը:

— Խեղճ տղա… Վարդանը մեծավարի օրորեց գլուխը,— ուրեմն դու է՞լ ընկար նրա ցանցի մեջ և հավատում ես: Իսկ այնքան կուլտուրա չունես, որ հասկանաս, թե ես ում կամ ինչ եմ ծաղրում: Ես նրա ոճն եմ ծաղրում…

— Դե իհարկե, չէ՞ որ դու ոճաբան ես,— հեգնեց Վահրիճը:

— Գիտե՞ք ինչ, տղաներ,— գոտկից հետ մերկ, իր խոշոր մկանները խաղացնելով, ասաց Մուրադը,— եթե շարունակեք փչացնել իմ և ձեր կիրակին, երեքիդ էլ մի լավ կդնքսեմ երիտ-բանվորավարի: Կիմովս եմ երդվում:

Հարևանների դուռը բացվեց և շեմքի վրա երևաց նրանց աղջիկը՝ կոթավոր մի թավա ձեռքին: Տեսնելով երիտասարդներին նախասենյակում, նա իսկույն ետ քաշվեց և դուռը ծածկեց: Մի պահ անց նորից երևաց նույն թավան, բայց դրա կոթն այժմ գտնվում էր աղջկա մոր ձեռքում: Դուրս գալով միջանցք և մոտենալով իր կերոսինկային, կինը, չափից դուրս զուսպ դեմքի վրա չափից դուրս չթաքցրած թշնամական ժպիտ ձևացնելով, գլխով արեց և ասաց.

— Բարի լույս:

— Բարի լույս,— համարյա միաբերան պատասխանեցին երեքը: Վահրիճը մնաց ձեռնպահ:

Քիչ հետո, երբ ընկերները վերադարձան սենյակ, նա ասաց կնոջ հասցեին.

— Էլի ամբողջ նախասենյակը լցրեց մեշչանական բարեկեցության հոտով:

— Ես դեմ չէի լինի այդ մեշչանությունից մի բաժին էլ ինքս ուտել,— իր խիստ սև ու առատ մազերը սանրելով, ասաց Վարդանը:

— Մի օր դու կտուժես քո լեզվից,— ցավակցաբար նկատեց Վահրիճը՝ մարզանքի մի քանի շարժումներ անելով: Ապա, հիշելով, որ նա արդեն «մարզվել» է դեռ լվացվելուց առաջ, ընդհատեց և հագավ բլուզը:

Գառնիկը լուսամուտի գոգից վերցրեց տետրակի մեծության հայելին, բռնեց հեռու՝ իր լրիվ ձգված ձեռքում, և սկսեց շեշտակի նայել դրա մեջ իր մազերի խռիվին, խոշոր աչքերին և մի քիչ ծուռ, նույնպես խոշոր քթին: Նրա դեմքի վրա կար այնպիսի մի տանջալի արտահայտություն, կարծես նա ասում էր.— մի տեսեք, թե ինչպիսի՛ հետաքրքիր երիտասարդներ կան աշխարհում: Ախր ինչո՞ւ համար դա ես չեմ… Եվ միայն նրա բերանն էր, որ ամուր սեղմած շրթունքներով, ծաղրը պահած, հետևում էր իր տիրոջ մտքերին: Օ, ինչպիսի՛ բուռն ծիծաղով կծիծաղեր նա ինքն իրենով հիացող այդ երիտասարդի վրա, եթե դա լիներ ոչ թե իր տերը, այլ մի ուրիշը…

Ի դեպ, նրա շրթունքների հենց այդ ինքնաքննադատական արտահայտությունն ապացուցում էր, որ նրա ինքնահիացումը լուրջ չէր, այլ տնազավարի: Իրականում Գառնիկը ոչ միայն հիացած չէր իրենով, այլև ամենայն անկեղծությամբ ասում էր հաճախ.

— Տղա ենք, էլի…

Մի քիչ այն կողմ կանգնած, սանրվում էր Մուրադը: Նրա կռինճ մազերը, սանրի ատամների միջով անցնելիս, ամենայն հեզությամբ ձգվում էին երկար, բայց հենց որ անցնում պրծնում էին, նորից էին կծկվում և կարծես լեզու էին ցույց տալիս իրենց տիրոջը.— տեսա՞ր… Ինչո՞ւ էր նա սանրվում ապարդյուն՝ ինքն էլ չէր հասկանում:

— Մի տուր հայելին, Գառնիկ, մի տուր, Է՛, նայեմ էս տղային,— ասաց Մուրադը՝ ձևացրած հիացմունքով իր հանդեպ, ակնհայտորեն հեգնելով ընկերոջը՝ այդքան ժամանակ իրենով զբաղվելու համար: Վերցնելով հայելին, նա նայեց: Նրա հաղթանդամ մարմնի և ամուր ուսերի վրա հանգչում էր մի փոքրիկ գլուխ՝ փոքրիկ դիմագծերով՝ քթով, բերանով, աչքերով: Միայն նրա հոնքերն էին չափից դուրս հաստ ու խիտ, դեմքի հետ անհամաչափ:

Մի պահ նայելով ինքնիրեն և կարծես ոչ մի եզրակացության չգալով, նա հարցականորեն նայեց ընկերներին:

— Ոչինչ, ոչինչ,— հանգստացրեց Գառնիկը:

— Բոլորովին ոչինչ,— հաստատեց Վարդանը,— այսինքն՝ զրո:

Վահրիճը բարձրահասակ ու նիհար, նույնպես վերցրեց հայելին և մի պահ կատաղի հայացք գցեց դրա մեջ, կարծես ասում էր այնտեղից նույն արտահայտությամբ իրեն նայողին.

— Դու ո՞ւմ վրա ես ուզում մատերիալ տալ: Ես էնպիսի մատերիալ տամ քեզ վրա, որ ծնվածդ օրը մոռանաս…

Մաքրելով իր հաշիվներն իր հետ, նա հայելին մեկնեց Վարդանին.

— Չե՞ս ուզում նայել քեզ, անողնաշար ինտելիգենտ:

— Շնորհակալություն, ողնաշարավոր կենդանի,— մերժեց Վարդանը ՝ վերցնելով հայելին և նետելով թախտերից մեկի վրա,— վաղուց ծանոթ եմ ինքս ինձ հետ:

Կոմերիտականները ելան դուրս՝ նախաճաշելու:

4

Վաղ առավոտ էր: Մի հաճելի զովություն տարածված էր Երևանի դեռ ստվերոտ փողոցների վրա,— հաճելի և փութանցիկ, որովհետև երկհարկանի տների կտուրների և պատերի վրա ընկած արևի լույսը, հետզհետե վար իջնելով, շուտով պետք է ցրեր այն:

Միհարկանի քաղաքի տափակ կտուրների վրայով, հեռվում, հորիզոնի վրա, երևում էր փառահեղ Մասիսը՝ այնքան հստակ, թարմ և այնքան մոտիկ, որ թվում էր, թե ոչ միայն օդի մեջ չկար

հեռանկարը մշուշող փոշու հետք անգամ, այլև չկար հենց ինքը օդը: Դրա փոխարեն տարածությունը հագեցած էր զովությամբ, որը լիաթոք շնչում էին կոմերիտականները:

Փողոցում ոչ ոք չկար: Եվ լռություն էր շուրջը: Չկար քաղաքներին հատուկ այն խուլ, ականջով չլսվող աղմուկը, որը գոյանում է հեռու և մոտիկ բազմաթիվ ձայներից ու հնչյուններից և ֆոն է ծառայում լսվող ձայների ու հնչյունների համար: Այնքան բացարձակ էր լռությունը, որ ութ ներբանների քստքստոցը և ութ կրունկների թխկթխկոցը մայթի տափակ սալերի վրա հնչում էր ուժեղ և նույնիսկ արձագանքում էր: Ապա, ինչ-որ փողոցով, զուգահեռ, թե հատող, սկսեց անցնել մի ֆուրգոն՝ ըստ երևույթին դատարկ: Դրա բարձրացրած դղրդոցը փողոցի սալաքարերի վրա համարյա խլացուցիչ էր: Բայց ձիերի սմբակների չկչկոցը քարերի վրա, անիվների դրխկ դրխկոցը դարուփոսավոր սալահատակին, ֆուրգոնի ամբողջ կորպուսի շրխկշրխկոցը՝ չէին միախառնվում իրար, չէին լսվում որպես մի միասնական ժխոր, այլ հնչում էին որոշակիորեն առանձին-առանձին: Դատելով դղրդոցի արագ աճող և կարծես արդեն իր գագաթնակետին հասած ուժգնությունից, ֆուրգոնն ուր որ է պետք է երևար այդ փողոցում: Բայց դղրդոցը շարունակ աճում և աճում էր հասնելով անհավատալի չափերի, ապա սկսեց նկատելիորեն իջնել, իսկ ֆուրգոնը հենց այդպես էլ չերևաց Նալբանդյան փողոցում:

Նորից վերահաստատված մաքուր լռության մեջ երիտասարդները լսեցին մի ուրիշ, անընդհատ կրկնվող հնչյուն.— մուրճիկի շեշտակի հարվածներով մեխեր էին խրում տախտակի մեջ: Երևի դա կատարվում էր շատ հեռվում, որովհետև հնչյունների և դրանց արձագանքների միջև անցնում էին վայրկյաններ: Նախ լսվում էր ընդհատ-ընդհատ և ուժգին՝ թխկ, թխկ, թխկ, երկաթե գործիքի չոր հնչյունը մեխի երկաթի վրա, և ապա, մեխը հաջող կերպով խրելուց հետո, մրճիկի գոհացած և այժմ արդեն աննպատակ թկ-թկ-թկը տախտակի վրա:

Չորս ընկերները լուռ թեքվեցին դեպի հատող փողոցը և կտրելով դրա խիստ կարճ տարածությունը, դուրս ելան Նալբանդյանին զուգահեռ Աբովյանի՝ քաղաքի գլխավոր փողոցի վրա: Այդտեղ արդեն, կային մարդիկ, թեև հատուկենտ: Աշխատանքային օրվա գործնականորեն շտապ քայլքի փոխարեն նրանք քայլում էին թեև ոչ զբոսանքի ելածի թրևաքայլով, բայց և այնպես դանդաղ: Ոմանք, լրագրի փաթեթները թևերի տակ, գնում էին բաղնիք, ոմանք, ամուրիները, չորս կոմերիտականների նման, դուրս էին ելել նախաճաշելու:

— Անցեք, ջահելներ,— բղավեց մեկը դիմացի մայթի մոտից: Հազիվ էին ընկերները ցատկել առաջ, երբ նրանց ետևում լսվեց ջրի շրմփոցը: Մի բեղավոր հուժկու տղամարդ մայթի մոտով անցնող ջրի արխից դույլով ջուր վերցնելով, շաղ էր տալիս փողոցի լայնքով մեկ՝ ջրելու համար:

Դա Աբովյանի ամենաբանուկ մասն էր՝ բազմաբեղետ և յուրահատուկ կերպով շքեղ: Փողոցին մի անկրկնելի գեղեցկություն էին տալիս երկու կողմերում, մայթերի և արխերի սահմանում աճող ոչ-բարձր, բայց սաղարթախիտ ծառերը: Փողոցի թե մի թևի վրա և թե մյուս, կողք-կողքի կանգնել և իրար էին կպել բազմաթիվ ու բազմաթիվ մանրիկ խանութներ՝ ժամագործների, վարսավիրների, կոշկակարների, ծաղկավաճառների, լուսանկարիչների, դերձակների, գլխարկագործների, մանրավաճառքի և ամենից շատ մրգավաճառների…

Գուցե, ըստ մեծ քաղաքների մասշտաբների, Աբովյանի այդ հատվածն այնքան էլ երկար չէր, գուցե բավական կլինեին հինգ-վեց հարկանի երկուական-երեքական շենքեր, փոխարինելու համար տասնյակ խանութների և լրացնելու համար կվարտալը՝ մի հատող փողոցից մինչև մյուսը: Բայց այժմ մանրիկ խանութների առատությունն ու բազմազանությունն ստեղծում էր փողոցի երկարության այնպիսի մի պատրանք, որ երբ չորս կոմերիտականները հասան, վերջապես, մրգավաճառանոցների շարքին, նրանց թվաց, թե եկել են բավական հեռվից:

Բոլոր մրգավաճառանոցները՝ տախտակե փոքրիկ կրպակներ, նման էին իրար.— տախտակե նեղ դուռ՝ այդ վաղ առավոտյան արդեն դեպի ներս ծալած, կրնկի վրա բաց. դրա կողքին՝ տախտակե լայն ցուցափեղկ, որը բացվում էր վերևից ներքև և այժմ նույնպես բաց էր: Փայտե երկու ոտքերի վրա հենված, սեղանի նման, դա այժմ մի քիչ նեղացրել էր մայթը: Խանութներից դուրս ցցված այդ վաճառասեղանները, հիանալի մրգերի և առաջին հերթին Երևանի անկրկնելի խաղողի

տաշտակներով ծանրաբեռնված, անցորդներին հրավիրում էին ճաշակելու Արարատյան դաշտի ոսկե աշնան բարիքները:

Խանութպանները՝ չաղ, նիհար, տարիքոտ, երիտասարդ, նստել էին մուտքերի մոտ կամ ներսում՝ վաճառասեղանի ետևում, կշեռքի առջև, ճանճաքշիչները ձեռքներին, և ճիպոտով եզներ քշելու հույլ շարժումներով մրգերի վրայից վանում էին ճանճերին: Թղթե երկար ժապավենների խուրձի խշշոցից հետո լսվում էր օդ բարձրացած ճանճերի դժգոհ և վրդովված բզզոցը: Ուրիշ մրգավաճառներ, տաշտակների միջից մեկառմեկ վերցնելով կարմիր ու դեղին երեսներով խնձորները, սրբում-փայլեցնում էին իրենց սպիտակ գոգնոցների փեշերի ծայրերով և նորից տեղը դնում:

Չորս ընկերներն սկսեցին անցնել կրպակների մոտով: Ոչ ոք նրանց չհրավիրեց, որովհետև բոլորը գիտեին, որ նրանք իրենցից մեկի մշտական «մուշտարիներն» էին:

Գառնիկը, որը ճանապարհին արդեն գնել էր մի մեծ «մատնաքաշ» հաց և երեք հարյուր գրամ պանիր, առաջինը մտավ կրպակ և բարևեց.

— Բարի լույս, Առաքել դայի:

— Աստծու բարին, համեցեք, ջահելներ:

Առանց կանգ առնելու փոքրիկ կրպակում, երիտասարդները մտան դրա ետին սենյակը, որն ավելի փոքր էր և իր լույսն ստանում էր ետևի պատի վրա գտնվող մի շատ փոքրիկ լուսամուտից՝ տակառի ժանգոտված օղակներից սարքված երկաթավանդակներով: Կիսամթի մեջ, մի կողմում, իրար վրա դարսված էին խաղողի դատարկ քթոցներ, որոնցից գալիս էր թթված խաղողի քացախահոտը: Լուսամուտի տակ, մի պատից մյուսը, ձգված էր մի ոչ լայն տախտակ՝ սեղանի պես մի բան: Կոմերիտականներից առաջ ակներևաբար եղել էին ուրիշ նախաճաշողներ, որովհետև տախտակը թարմ շիրայոտ էր և վրան կային հացի փշրանքներ:

— Երկու կիլո՞,— հարցրեց խանութպանը կրպակից:

— Չէ, Առաքել-դայի, կիրակի օրվա առթիվ՝ երեք: Խարջի:

Գառնիկը փռեց լրագիրը, վրան դրեց հացն ու պանիրը: Մուրադը վար իջեցրեց չորս քթոց՝ նստելու համար:

— Տեղը դիր,— շշնջաց Գառնիկը,— դային նեղանում է, ասում է՝ ջարդում եք:

— Էդ հաստ քամակդ որ քթոցի վրա չդնես՝ չի՞ լինի, ջանավար,— հանդիմանեց Վարդանը:— Նոր վեր կացանք անկողնից, արդեն հոգնեցի՞ր, ինչ է:

— Մեր գյուղում ասում էին, որ կանգնած ուտողի կերածը ոտքերն է իջնում:

— Դա գիտականորեն ապացուցված չէ,— միանգամայն լուրջ տոնով ասաց Վահրիճը:

Ձեռքով պատառոտելով մատնաքաշը, բաց անելով այն և պանրի կտորները դնելով մեջը, երիտասարդներն այդ բրդուջները բռնեցին իրենց մի ձեռքում, իսկ մյուսով վերցրին խաղողի մեկական ողկույզ և սկսեցին մեծ ախորժակով կծել մեկից և բերանով հատիկներ պոկել մյուսից:

— Դժվար թե աշխարհում սրա պես համեղ նախաճաշ լինի,— հիացմունքով արտասանեց Գառնիկը:— Առաջին տեղն է գրավում…

— Ըմմմ…— արեց միայն Մուրադը՝ ի նշան համաձայնության:

— Էյ, Մուրադ, մի քիչ դանդաղ կեր,— բարկացավ Գառնիկը նրա վրա,— ի՞նչ ես արջավարի քշում: Մեզ սոված կթողնես:

— Իմ ի՞նչ գործն է,— անտարբերությամբ պատասխանեց ընկերը,— ես էդպես եմ սովոր: Չես ուզում սոված մնալ՝ հասիր ետևիցս, ո՞վ էր քեզ խանգարում: Մեր գյուղում կուլակները որ բատրակ են վարձում, առաջ բան են տալիս ուտելու ու իրենք նայում են, եթե լավ է ուտում՝ ուրեմն լավ էլ կաշխատի: Իսկ եթե ոչ՝ ուրիշին նայիր: Գյուղում ի՞նչ է շատ՝ բատրակը:

— Մենակ էդ առաջին անգա՞մն են կուշտ ուտել տալիս կուլակները, թե՞ դրանից հետո էլ,— հետաքրքրվեց Վահրիճը.

— Դրանից հետո էլ,— ասաց Մուրադը:

— Դու կուլակային ագիտացիայով ես զբաղվում,— իսկույն բնորոշեց Տրոպիկական ինստիտուտի քարտուղարը:

— Գլուխդ քարովն ես տվել,— առանց բարկանալու, նկատեց Մուրադը:— Ես ինքս եմ աշխատել նրանց մոտ:

— Բա էլ ինչո՞ւ ես թողել-եկել քաղաք, սևագործություն ես անում:

Վարդանը բարկացած նայեց երկարահասակին, բայց ասաց հանգիստ.

— Մե՞ծ բան է, որ կուլակները կուշտ փորով ուտել են տալիս իրենց բատրակներին: Դա անում են իրենց օգտին: Իսկ ուտելուց ջոկ հագնել կա, տուն պահել կա…

Գառնիկը, որ միշտ սուր վեճերին վերջ տալու համար փոխում էր խոսակցությունը, այս անգամ էլ ընկերների ուշադրությունը թեքեց այլ կողմ:

— Առաքել դայի,— բղավեց նա դեպի կրպակը,— էս մի քանի ճութ հաչաբաշն ինչո՞ւ ես գցել խարջու մեջ:

— Պատահական բան է, ես խո նպատակով չե՞մ արել,— լսվեց խանութպանի ձայնը:

— Ի՜նչ սրիկան ես…— ասաց Վահրիճը կամացուկ, նրա հասցեին:

Երիտասարդներն այլևս ոչինչ չխոսեցին.— խանգարում էր ուտելուն: Բայց նրանց աչքերն ազատ էին և կարող էին դիտել շուրջը: Իսկ դիտելու ոչինչ չկար: Նրանք նայեցին վանդակապատ փոքրիկ լուսամուտից: Այնտեղ ևս՝ ոչ մի հետաքրքիր բան.— ընդարձակ և փոշոտ մի բակ, որը պատկանում էր Նալբանդյանի վրա կանգնած տնակներին: Արևոտ բակի ուղիղ մեջտեղում, քուջուջ անելով, նույնպես նախաճաշում էր մի հավ:

Վարդանը շուռ եկավ և ետ տանելով պարկի կտորից սարքած վարագույրը, որը ծածկում էր կրպակի այդ բաժնի մուտքը, սկսեց նստած Առաքել դայու գլխի վրայով նայել դեպի Աբովյան: Այնտեղ, փողոցի մեջտեղում, արդեն արև էր, իսկ ծառերով ստվերված մայթերի վրա անցորդներն զգալիորեն շատացել էին:

Նայելով այդպես, Վարդանը հանկարծ սրընթաց ելավ դուրս և կրպակի մուտքի մոտ կանգ առնելով, սկսեց նայել փողոցն ի վեր: Մի նիհարկոտ աղջիկ, շատ լավ հագնված, գնում էր մայթով՝ մի ձեռքին փոքրիկ ճամպրուկ, մյուս թևի վրա՝ ամառային թեթև վերարկու գցած: Նա գնում էր դանդաղ քայլերով, հետաքրքրությամբ նայելով շուրջը: Ակներև էր ոչ միայն այն, որ նա հենց նոր էր իջել գնացքից, այլև որ նա առաջին անգամն էր Երևանում:

Վարդանը, որ մոռացել էր ուտելը, նայեց աղջկա ետևից՝ մինչև նրա անհետանալը, ապա դանդաղ քայլերով վերադարձավ ընկերների մոտ: Այժմ նրա դեմքը թախծոտ էր և թախծալիորեն երազկոտ:

— Ո՞ւր դուրս թռար,— հարցրեց Գառնիկը:

— Գրազ կգամ,— ասաց Վահրիճը,— որ էլի մի մեշչանկա տեսավ, նայում էր ետևից:

Բայց Վարդանը ոչ տրամադրություն ուներ նրան հակահարված տալու և ոչ էլ գոնե վիրավորվելու: Նա ասաց դանդաղ ու մտածկոտ՝ դիմելով, այնուամենայնիվ, միայն Գառնիկին ու Մուրադին.

— Մի աղջիկ անցավ փողոցով… Այնքա՜ն նման էր իմ մանկության ընկերուհուն… Թեև արդեն ութ տարի է անցել, բայց իսկույն ճանաչեցի… Այսինքն՝ ոչ թե ճանաչեցի, այլ նմանեցրի…

— Ալեքպոլի՞ց,— բարեսրտորեն հարցրեց Գառնիկը՝ ավելի շուտ ընկերոջ սրտին մոտ խոսակցությունը շարունակելու համար, քան թե հետաքրքրությունից դրդված:

— Այո, իհարկե:

— Բայց դու մի տարի էլ չկա, որ եկել էս էնտեղից: Ի՞նչպես է, որ ութ տարի է, ինչ չես տեսել նրան:

— Տասնութ թվի սկզբներին նրանց ընտանիքը փոխադրվեց Ռոստով: Այն ժամանակ մենք դեռ երեխաներ էինք: Այնպես որ, եթե ես հիմա իսկապես տեսնեմ նրան, հազիվ թե ճանաչեմ…

— Բա էլ ինչո՞ւ դուրս թռար,— բարկացավ Մուրադը:— Գիտես, որ չենք սպասի քեզ, կուտենք:

— Ես ճանաչեցի նրա քայլերը… Ես չգիտեի, թե աշխարհում մի ուրիշ աղջիկ կարող էր քայլել Ցողիկի պես…

— Դու գիտե՞ս ինչի համար կոմերիտմիությունից հեռացրին ինձ հետ մի սենյակում ապրող տղային,— հանկարծ հարցրեց Վահրիճը Վարդանին:

Բոլորը զարմացած նայեցին նրան:

— Հեռացրին սիրահարված լինելու պատճառով… Դա անհերքելի կերպով ապացուցվեց…

— Վայել չէ կոմերիտականին,— համաձայնեց Գառնիկը՝ գլուխն օրորելով:

— Այնպես որ,— կտրուկ շուռ գալով դեպի Վարդանը, նախազգուշացրեց Վահրիճը,— հաշիվդ առ…

— Սրիկա՛…— կատաղությամբ ասաց Վարդանը՝ ուղիղ նրա աչքերի մեջ:

Վահրիճը սեղմեց ատամները, նրա նիհար այտերի վրա գոյացան ուռուցքներ, որոնք արագ խաղացին մի երկու անգամ, ապա նա իր ձեռքում բռնած խաղողի կիսատ ողկույզը շեշտակի շպրտեց ընկերոջ ուղղակի երեսին: Դեռ մյուս ընկերներն ուշքի չէին եկել, երբ Վարդանը, նույնիսկ առանց սրբելու շիրան իր երեսից, խլեց դատարկ քթոցներից մեկը և թափով իջեցրեց Մալարիայի հիվանդանոցի քարտուղարի գլխին: Ոչ գլուխը, ոչ մանավանդ քթոցը, դրանից չվնասվեցին: Ուռի ճյուղերից գործված քթոցի կողը զսպանակվեց գլխի վրա և թուլացրեց հարվածի թափը: Ճյուղերի արանքից խաղողահատիկներն ազատվեցին և թափվեցին հատակին:

— Վե՛րջ տվեք, ես ձեր…— գոռաց Մուրադը և մեկին շպրտեց մի կողմ, իսկ մյուսին՝ մյուս:

Զարմացած ներս նայեց խանութպանը.

— Ցա՛, էս ի՞նչ խաբար ա…

— Ոչինչ, ոչինչ, Առաքել դայի,— կոծկեց Գառնիկը,— մենք էստեղ մի կոմսոմոլիստական հարց ենք քննում: Դռնփակ է: Դու քու գործին եղիր…

Մուտքը ծածկող պարկի կտորը նորից վար իջնելուց հետո Գառնիկը խիստ տոնով դիմեց Վահրիճին.

— Ո՞նց է խիղճդ տանում մեղադրել Վարդանին, թե իբր նա սիրահարված է: Չէ՞ որ ութ տարի առաջ նա երեխա է եղել…

— Դե գնա դու էլ քո պաշտպանությամբ,— բարկացավ նրա վրա Վարդանը: Ապա, դառնալով դեպի Վահրիճը, ասաց՝ որոշակիորեն նրան չարացնելու նպատակով:— Երեխա ժամանակվանից մինչև հիմա էլ սիրահարված եմ: Էն էլ՝ ոչ թե ութը, այլ տասը տարի: Տեսնեմ ինչ պիտի անես ինձ:

— Վկա՞ եք, ընկերներ,— հարցրեց Վահրիճը մյուս երկուսին:

— Ես էստեղ չեմ,— գլուխն օրորեց Մուրադը՝ շարունակելով ուտել:

— Ամեն մի հիմար խոսքից չեն բռնացնի,— հանդիմանեց երկարահասակին Գառնիկը:— Չե՞ս տեսնում, ջղայնացած է, դրա համար է ասում:

— Բայց հո վկա՞ եք, որ նա ինձ սրիկա անվանեց:

— Ոչ թե անվանեց,— թաշկինակով սրբելով շիրան իր երեսից, ուղղեց Վարդանը,— այլ հիմա է անվանում և միշտ էլ կանվանի: Եվ դա ոչ թե նրա համար, որ դու ինձ սիրահարված ես համարում, այլ նրա համար, որ մի ազնիվ կոմերիտականի հեռացնել ես տվել միությունից՝ սիրո պատճառով:

— Սե՛ր…— փնչաց Վահրիճը:— Իսկ չի՞ լինի, որ սեռերի առողջ փոխհարաբերությունը չզարդարենք բուրժուազիայի այդ մնացորդով:

— Սերը կապ չունի բուրժուազիայի հետ, ախմախ, սերն անմահ է:

— Տեսնո՞ւմ եք, ընկերներ, սերն անմահ է, աստված անմահ է...

— Ի՞նչ աստված…— ապշեց Վարդանը՝ քայլ անելով դեպի Վահրիճը,— դու ուզում ես ինձ մեղադրել կրո՞նի մեջ…

— Ոչ, ոչ,— հանգստացրեց բարձրահասակը՝ ծուռ-ծուռ նայելով քթոցների կողմը,— բայց դու դրան էլ կհասնես: Սե՛ր… Հեղափոխությունը թքել է սիրո վրա: Մենք դեմ ենք այդ լղրճուկ զգացմունքին: Կոմերիտականը ոչ թե պետք է սիրի, այլ ընտրի կյանքի ընկերուհի, որպեսզի նրա հետ ձեռք-ձեռքի տված դիմի դեպի համաշխարհային հեղափոխություն: Սե՛ր… Ամուսնությո՛ւն… Չէ՛ մի, երեխաներ, խոհանոց… Թյո՛ւ...

— Լսեք,— բացականչեց Գառնիկը՝ վեճն ավարտելու համար,— դուք էստեղ խոսքով եք ընկել՝ Մուրադն ամեն ինչ կերավ-վերջացրեց: Հասեք՝ քանի դեռ ուշ չէ…

Բայց կռվողներն ուշադրություն չդարձրին նրա ասածի վրա:

— Մութ մարդ ես, Վարդան,— եզրակացրեց Վահրիճը:— Պետք է պարզել քո սոցիալական ծագումը: Հարկավոր է իմանալ, թե ո՞րտեղից են գալիս քու խորթ մտքերը:

— Իմ կապիտալիստ հորից և կալվածատեր մորից,— հեգնեց լենինականցին:

— Ո՞վ իմանա… Այ, մենք երեքս գյուղացու զավակներ ենք, իսկ ես՝ նույնիսկ բատրակի զավակ: Գալով սոցիալական դրությանը, Գառնիկն ու Մուրադը հիմի բանվորներ են, մտել են պրոլետարիատի շարքերը: Ես, ճիշտ է, պրոլետար չեմ, բայց պատկանում եմ պրոֆեսիոնալ հեղափոխականների թվին՝ ագիտատոր-պրոպագանդիստ եմ: Իսկ դո՞ւ ով ես: Քո ներկայով՝ խորհրդային ծառայող, այսինքն՝ ինտելիգենտ, իսկ անցյալով… Դու ոչինչ չես պատմում քո անցյալի մասին…

— Պատմել եմ,— ընդհատեց Վարդանը,— դու այն ժամանակ դեռ չէիր երջանկացրել մեր սենյակը քո ներկայությամբ:

— Տեսնո՞ւմ եք ինչ ոճեր է բանեցնում,— գլխով ցույց տալով նրան, դիմեց Վահրիճը մյուսներին:— Իսկույն երևում է, որ ոճաբան է: Իսկ դու գիտե՞ս, որ քո աշխատանքի մտնելուց հետո «Ավանգարդ»-ը կարդալ չի լինում: Դու բանվորա-գյուղացիական մաքուր ոճով գրած թղթակցությունները դարձնում ես մի ինչ-որ ինտելիգենտական նվոց: Մարդու զզվանքն է գալիս:

Մի՞թե բանվորը կասի՝ «ես իմ առաջադրանքները կատարում եմ հանուն հեղափոխության»: «Հանուն»… Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո…

Գառնիկը ծիծաղեց: Ժպիտ եկավ նաև Վահրիճի չարությունից այլայլված դեմքին: Մի քիչ հանդարտվելով, նա դիմեց Մուրադին.

— Ինչպե՞ս կասի բանվորը, դու ինքդ ասա, շինարար:

Մուրադը, հպարտանալով, որ նրան են դիմում համաշխարհային պրոլետարիատի տեսակետն իմանալու համար, սեղմեց հացի կտորն իր բռունցքի մեջ, դեմքին տվեց «պրոլետարական» արտահայտություն և ասաց «գիտակցական» ձայնով.

— Բանվորը կասի՝ ես իմ գործն եմ անում, որ հեղափոխությունն օգտվի ընդրանից և կորչի ինպերիալիզմը: Բանվորը կասի՝ ջարդենք…

— Եվ շատ վատ կանի, եթե այդպես կասի բանվորը,— ընդհատեց նրան Վարդանը:— Նախ և առաջ, ամեն րոպե մի «ջարդիր»: Երկրորդ, ոչ թե «ընդրանից», այլ «նրանից»: Եվ երրորդ, «իմպերիալիզմը» գրվում և արտասանվում է մ տառով և ոչ թե ն, քանի՞ անգամ եմ ուղղել քեզ: Դուք վատ տղաներ չեք, Մուրադ, Գառնիկ,— ավելացրեց նա մեծավարի,— բայց դեռ կուլտուրա չունեք, դրա համար էլ ընկնում եք սրա ազդեցության տակ:

— Իսկ քեզ մոտ բավական ուժեղ է բուրժուական կուլտուրան,— ետ չմնաց Վահրիճը:— Դու ապահով մի լինի, մի օր կպարզվի, թե որտեղից է դա գալիս…

— Չէ՞ որ քեզ ասացի՝ իմ գեներալ հորից և չինովնիկ մորից:

Ավարտելով նախաճաշը, ընկերները ետին սենյակից դուրս ելան կրպակ: Գառնիկը պատի թարեքից վերցրեց ապառիկի «դավթարը», թերթեց, գտավ այն էջը, որի վերևում գրված էր «չորս տողեք», մատիտով գրեց՝ «խարջի խավող՝ 3 կիլո» և ուզեց դավթարը տեղը դնել:

— Սպասիր,— ասաց Մուրադը:— Ավելացրու կես կիլո խնձոր: Կշռի, Առաքել դայի:

Ընկերները, մի-մի խնձոր ձեռքներին, ուտելով դուրս ելան կրպակից:

5

— Իսկ հիմա ո՞վ ուր,— հարցրեց Գառնիկը:

Ընկերները դեռ չէին պատասխանել, երբ Մուրադն իր խնձորը թաքցրեց գրպանում և գլխարկն շտապ հանելով, բարևեց կողքի կրպակից դուրս ելնող մի հիսնամյա մարդու:

— Բարև ձեզ, ընկեր Սանթուրյան…

— Մուրա՞դ: Բարև: Դու է՞լ ես այս կողմերում նախաճաշում:

— Այո: Չլինի՞ դուք էլ, ընկեր Սանթուրյան:

Մուրադի ընկերները հետաքրքրվեցին, թե ով է այդ Սանթուրյանը: Գառնիկը հիշեց.

— Կարծեմ իրենց դասատուներից է:

Նրանք կանգնած սպասում էին ընկերոջը՝ խնձոր ուտելով և ականջ լսելով նրա խոսակցությունը նիհար, փոքրամարմին և խիստ տնավարի դեմքով մարդու հետ:

— Այո, Մուրադ, էդպես է դուրս գալիս, որ ես ու դու նման ենք իրար: Դու դեռ ամուրի ես, իսկ ես՝ արդեն ամուրի, ավելի շուտ՝ այրի: Ես էմիգրացիայի մեջ էի Գերմանիայում, երբ կինս այստեղ մահացավ… Ո՞վ պիտի նախաճաշ պատրաստի ինձ համար:

— Է, նորից ամուսնացեք, ընկեր Սանթուրյան:

Դասատուն զարմացած նայեց երիտասարդին՝ կարծես պատրաստվելով վատ գնահատական նշանակել նրան, ապա ասաց փոխված ձայնով.

— Չի կարելի, Մուրադ… Գուցե ընդհանրապես կարելի է, բայց ես չեմ կարող, ինձ համար սուրբ է նրա հիշատակը…

— Սո՛ւրբ…— զզվանքով շշնջաց Վահրիճը:— Սևահոգի կրոնամոլ…

— Դու դեռ սիրահարված չե՞ս, Մուրադ,— հետաքրքրվեց Սանթուրյանը:

— Ոչ,— պատասխանեց կոմերիտականը՝ ծուռ հայացք գցելով դեպի Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը:

— Այ, երբ որ զգաս, թե ինչ է սերը՝ այն ժամանակ դու ինձ կհասկանաս: Դե, ցտեսություն: Ես քեզ տնային աշխատանք չե՞մ տվել:

— Ոչ, ընկեր Սանթուրյան:

— Դե ուրեմն զբոսնիր ազատ-համարձակ: Լավ օր է: Իմ երիտասարդ ժամանակ այսպիսի օրեր չէին լինում…

Նա գնաց, իսկ Մուրադը մոտեցավ ընկերներին:

— Ո՞վ էր, Մուրադ,— հարցրեց Վահրիճը:

— Մեր ֆիզիկայի դասատուն: Հին բայլշևիկ է:

— Հին բայլշևիկ և ֆիզիկա՞…— քմծիծաղեց Վահրիճը:— Լա՛վ բայլշևիկ է, էն էլ հին… Փոխանակ պայքարելու հանուն կոմունիզմի…— Նա կտրուկ ընդհատեց իրեն,— չէ՞ որ քիչ առաջ հենց ինքն էր ծաղրում «հանուն» բառը:— Փոխանակ պայքարելու կոմունիզմի համար, դառնալ դասատու և այն էլ ի՞նչ ավանդել՝ ապադասակարգային ֆիզիկա… Իսկ կուսակցությունը դեռ չգիտե՞, որ նա կրոնապաշտ է:

— Ի՞նչ ես դուրս տալիս,— բարկացավ Մուրադը:

— Այո, այո, թող չթաքցնի: «Սուրբ» հիշատակ… «Սուրբ» սեր… Թյո՛ւ… Եվ մենք՝ մատաղ սերունդս, պետք է սովորենք դրա նմաններից…

Գառնիկը, ըստ իր սովորության, խոսակցության ղեկը շուռ տվեց մի այլ կողմ:

— Դե ասացեք, ո՞վ ուր,— կրկնեց նա:

— Ես ուզում եմ շրջել Աբովյանով,— ասաց Վարդանը:

Եվ իրոք, Աբովյանը կիրակի օրվա այդ վաղ ժամին քաղաքի ամենահետաքրքիր և հաճելի վայրն էր: Թեև արդեն արև էր, բայց դեռ շոգ չէր: Զբոսանքի դուրս ելած ժողովուրդը շրջում էր ոչ միայն մայթերով, այլև փողոցի մեջտեղով.— Աբովյանով արգելված էր տրանսպորտի երթևեկությունը: Հեռու և մոտիկ լսվում էին լրագրավաճառների կանչերը.— «Խորհրդային Հայաստան»… «Մաճկալ»… «Ավանգարդ»… Բազմաթիվ մարդիկ շրջում էին թերթ կարդալով, ուրիշները նայում էին աջ ու ձախ՝ ծանոթների փնտրելով այդ համաքաղաքային ժամադրավայրում:

— Էլի ուզում է աղջիկների ետևից նայել,— կծեց Վահրիճը:

— Իսկ ինչո՞ւ չպիտի նայեմ, ինչո՞ւ համար է աստված ինձ աչքեր տվել,— ասաց Վարդանը՝ հատկապես ընդգծելով «աստված» բառը:— Գուցե և մեկնումեկի հետ ծանոթանամ: Սիրտս սիրո պահանջ է զգում:

— Ի՞նչ Աբովյան,— բարկացավ նրա վրա Գառնիկը,— երեկ քեզ չասացի՞, որ հանդիպեց Ռոկլանան, ասաց, որ տանը մնաս, քեզ հետ գործ ունի, գալու է:

— Ես ոչ մի գործ չունեմ նրա հետ,— տհաճությամբ ասաց Վարդանը:

— Ոչ թե դու նրա հետ, այլ նա քեզ հետ:

— Նա էլ գործ չունի:

— Իսկ դու ի՞նչ ես երևակայում քեզ,— բարկացավ Մուրադը Վարդանի վրա:— Աղջիկ է, գուցե ուզում է հետդ ման գալ:

— Նա աղջիկ չէ, այլ կոմերիտուհի,— ուղղեց Վարդանը:

— Կոմերիտուհին աղջիկ չէ՞,— զարմացավ Գառնիկը:

— Եթե դա Ռոկլանան է՝ ուրեմն աղջիկ չէ,— բացատրեց լենինականցին:— Մի խոսքով, ես տանը գործ չունեմ, զբոսնելու եմ:

Վահրիճը, որ մինչ այդ լուռ հետևում էր խոսակցությանը, ասաց.

— Իսկ ես տուն եմ գնում՝ գիրք կարդալու…

Եվ հեռացավ: Նրա գնալուց հետո երեք ընկերները նայեցին իրար՝ նոր միայն իրենց զգալով միմիայն մտերիմ մարդկանց շրջանակում:

— Իսկապես, ո՞ւր ես ուզում գնալ,— հարցրեց Գառնիկը Վարդանին՝ դրանով իսկ կասկածի տակ առնելով Վահրիճի ներկայությամբ տված նրա պատասխանը և միայն այժմ սպասելով անկեղծ պատասխանի:

— Իսկապես, շրջելու եմ:

— Իսկ ես գնացի,— ասաց Մուրադը՝ գրպանից խնձորը հանելով:— Մեր գյուղից մարդիկ են եկել, քաղաքին ծանոթ չեն, պիտի ման ածեմ խանութները, բան-ման են ուզում առնել:

Մնալով երկուսով, Վարդանն ու Գառնիկը քայլեցին փողոցով դեպի վեր:

— Իսկ դո՞ւ ուր,— հարցրեց Վարդանը:

— Ես քեզ խանգարո՞ւմ եմ:

— Ոչ, ինչո՞ւ:

— Ազնիվ կոմերիտականի խո՞սք:

Վարդանն ուշացրեց պատասխանը:

— Գիտե՞ս ինչ, Գառնիկ,— ասաց նա քիչ հետո:— Ես ուզում եմ մի երկու ժամ մենակ մնալ: Եվ ոչ թե Աբովյանում, այլ դուրս գալ քաղաքից, գնալ այգիները, մի որևէ տեղ… Չգիտեմ ինչու, այսօր մեջս լցվել են իմ մանկության լիրիկական հուշերը…

— Ինչպիսի՞, ինչպիսի՞,— չհասկացավ ընկերը:

— Լիրիկական, այսինքն՝ քնարական: Ավելի հասկանալի որ ասեմ՝ զգացմունքային: Ախ, եթե ես ձայն ունենայի, ինչպե՜ս կերգեի հիմա՝ տխուր ու սիրալիր… Բայց աստված ձայն չի տվել ինձ…

— Այ տղա, ի՞նչ ես խոսքի գլխից-տակից աստծու անունը տալիս, որ էն քյալլագյոզն էլ ջղայնանա:

— Թող ջղայնանա,— մտքերով ուրիշ տեղ, ձեռքը թափ տվեց Վարդանը:— Լենինն էլ է ասում՝ «աստված չանի», «աստված գիտե», «տա աստված»… Ես ինքս եմ կարդացել ռուսերեն: Նա էլ խո աստծուն չի՞ հավատում: Ժողովրդական խոսք է, գործածում ենք՝ շատ անգամ ծաղրական ձևով:

— Ես էլ եմ գործածում:

— Դե էլ ի՞նչ կա:

Հասնելով Սպանդարյանի փողոցի անկյունին, ընկերները կանգ առան:

— Դե, ես գնացի դեպի Զանգվի կողմերը,— ասաց Վարդանը:— Դու ներիր ինձ: Տեսնում եմ, որ ուզում էիր ինձ հետ շրջել…

— Ոչինչ, ոչինչ,— հանգստացրեց բարեհոգի և զիջող Գառնիկը,— հիմի ուր որ է՝ կհանդիպեմ մեր ծխախոտագործարանի տղաներից մեկնումեկին, կգնանք մի տեղ: Սպասիր, մի բան էլ ասա, հետո գնա: Ի՞նչ է նշանակում ռեոստատ: Երեկ մեր ինժեներն էր ասում դիրեկտորին:

— Չգիտեմ,— խոստովանեց Վարդանը:

— Չի կարող պատահել: Երևի շտապում ես, դրա համար չես ուզում բացատրել:

— Ազնիվ կոմերիտականի խոսք, չգիտեմ: Դա տեխնիկական բառ է:

— Տեխնիկական… Լիրիկական…— մոլորված կրկնեց Գառնիկը՝ ընկերոջից բաժանվելով:

6

Շտապ-շտապ քայլելով դեպի տուն, Վահրիճը բարձրացավ իրենց սենյակը և բաց անելով դուռը, նայեց ներս՝ դեռ չի՞ եկել Ռոկլանան: Չորս կոմերիտականների սենյակի դուռը երբեք չէր կողպվում, և ընկերներն ու ընկերուհիները կարող էին գալ նաև բնակիչների բացակայությամբ, սպասել կամ տոմսակ թողնել: Բայց այժմ սենյակում ոչ ոք չկար, իսկ դռան մոտ, պատի վրա, չէր արված ոչ մի նոր մակագրություն:

Վահրիճը հանեց վերնաշապիկը, նետեց իր թախտի վրա: Այդպես, մայկայով, նա ավելի գեղեցիկ է…

Նիհար ու ոսկրոտ, նա ավելի բարձրահասակ էր թվում, քան թե նրա թախտի երկարությունն էր: Նայելով շուրջը, դեպի Նալբանդյանը նայող լուսամուտի գոգում տեսավ միայն մի գիրք՝ Ռաֆֆու հաստ հատորը: Բայց դա կարդալու համար չէր դրված այնտեղ: Մյուս լուսամուտի գոգում դրված էր մի փոքրիկ բրոշյուր՝ վաղուց արդեն կարդացված, ձանձրացնելու չափ ծանոթ.— «Ինչ պետք է իմանա ամեն մի կոմերիտական»:

Այնուամենայնիվ վերցնելով դա, նա մեկնվեց իր թախտին:

Սենյակի դուռն ու դեպի Նալբանդյանը նայող լուսամուտը գտնվում էին հակադիր պատերի վրա, դուռը՝ անկյուններից մեկին մոտ, իսկ լուսամուտը՝ պատի մեջտեղում: Վահրիճի թախտը դրված էր դռնով պատի տակ, երկարավուն կողմում: Փողոցի կողմի պատի տակ, լուսամուտից աջ ու ձախ, քնում էին Գառնիկն ու Մուրադը: Նրանց թախտերի միջև մնացել էր այնքան ազատ տարածություն, որ կարելի էր մոտենալ լուսամուտին: Վարդանը քնում էր դռան աջակողմյան պատի մոտ, գլխով դեպի Վահրիճի գլուխը, իսկ ոտքերով դեպի այն լուսամուտը, որը բացվում էր

հարևան միհարկանի տան տափակ կտուրի վրա: Այդ լուսամուտին ևս, կարելի էր մոտենալ, որովհետև Վարդանի ոտքերի և Մուրադի գլխի միջև նույնպես կար արձակ տարածություն: Սեղան, աթոռներ կամ այլ իրեր չկային սենյակում՝ բացի հայտնի թեյամանից, որը, ճիշտն ասած, ծառայում էր լոկ որպես ջրաման և այժմ դրված էր լուսամուտի գոգում: Գառնիկի և Վահրիճի մահճակալների տակ դրված էին նաև մեկական փոքրիկ արկղներ՝ ճամպրուկների ձև ունեցող, որոնց մեջ նրանք պահում էին իրենց փոքրաթիվ իրերը: Վարդանի և Մուրադի հագուստները մասամբ կախված էին մեխերից՝ իրենց թախտերի կողքին, մասամբ փռված էին ներքնակների տակ:

Գրքույկը ձեռքին, պառկած՝ Վահրիճը ոչ թե կարդում էր, այլ մտածում, իսկ ավելի ճիշտ՝ ոչ թե մտածում էր, այլ սպասում Ռոկլանային: Բայց աղջիկը չկար: Վերջապես երիտասարդին ձանձրացրեց այդ անգործ սպասումը, և նա, գրքույկը նետելով, վեր կացավ, մոտեցավ լուսամուտին, նայեց դեպի փողոց, թե չի՞ գալիս արդյոք աղջիկը: Բայց նա չէր երևում: Մի քիչ մնալով այդպես, Վահրիճը ետ քաշվեց լուսամուտից, որպեսզի Ռոկլանան հանկարծ չտեսներ նրան և հասկանար, որ տղան նրան էր սպասում:

Վահրիճը տեղափոխվեց մյուս լուսամուտի մոտ, նայեց դուրս: Տափակ կտուրի հողե ողորկության վրա նստել էր մի փոքրիկ կատու և լվացվում էր:

— Փը՛շտ…— արեց Վահրիճը:

Փիսիկն ընդհատեց գործը, զարմացած նայեց վերև, թե այդ ո՞վ է կիրակի օրով, իր բան ու գործը թողած, խանգարում նրան: Ապա, կարծես եզրակացնելով, որ անմիջական վտանգ չկա, որովհետև մարդը կատու չէ, որ լուսամուտից ցատկի կտուր՝ նրա մոտ, նա հանգիստ շարունակեց իր գործը: Կոմերիտականի երկրորդ «փըշտ»-ին նա պատասխանեց լիակատար անտարբերությամբ:

Վահրիճը նայեց իր շուրջը և ուշադրություն դարձնելով թեյամանի վրա, զվարթացավ: Կամացուկ վերցնելով այն, որպեսզի կափարիչը չրխկոց չարձակի, նա նշան բռնեց և ջրի շիթը բաց թողեց կատվի վրա: Կատուն սարսափած ցնցվեց, մի ոստյունով թռավ հեռու, ապա ավելի հեռու և կանգ առնելով կտուրի պռունկին, ցնցեց իր մարմինը, շաղ տվեց ջրի ցայտերը: Այժմ հարկավոր էր նորից սկսել լվացվել-սղալվելը:

Սենյակի դուռը թակեցին: Վահրիճն արագ վար դրեց թեյամանը, ապա շտապ նետվելով դեպի թախտ, պառկեց: Վերցնելով գրքույկը և բաց անելով, նա ձայն տվեց.

— Ո՞վ է, ներս եկ:

Ներս մտավ Ռոկլանան: Չնայած տաք օրվան, նա հագել էր իր կարմրավուն կաշվե պիջակը՝ չորս գրպաններով, որոնցից երկու վերևինները՝ ուղղահայաց: Պիջակը, այնուամենայնիվ, կոճկված չէր և դրա տակից երևում էր տղամարդու մոխրագույն բլուզը, որի բարձր օձիքը կոճկված էր նրա վզի վրա՝ մինչև վերջին կոճակը: Կոճկված էին նաև լայն թևքերի նեղ բերանները՝ թաթերին ընդհուպ: Բլուզի ընդարձակ, բայց կարճ փեշերն ահագին փոթերով իջնում էին նրա սև շրջազգեստի վրա: Տղամարդու մի լայն գոտի սեղմել էր նրա մեջքը: Ոտքերի վրա Ռոկլանան ուներ հասարակ և բավական հաստ գուլպաներ և ցածրակրունկ, սև կոշիկներ: Գլխին նա դրել էր շալվարի զոլավոր կտորից կարած կեպի, որը լիք լցված էր նրա թեև կարճ կտրտված, բայց առատ մազերով և ուռել էր պոմիդորի ձևով: Լայն կիսալուսնի նմանվող «կոզիրյոկը» քիվի պես կախվել էր նրա ճակատի վրա: Ոչ նրա գլխի առջևից, ոչ կողքերից կամ ետևից, դուրս չէր գալիս և ոչ մի մազ:

Գեղեցի՞կ էր Ռոկլանան, թե տգեղ՝ անհնար էր ասել: Միայն նրա խոշոր, մուգ-շագանակագույն աչքերն էին, որ ուշադրություն էին գրավում, բայց դրանք էլ թողնում էին տարօրինակ տպավորություն, որովհետև, հակառակ հագուստի և դեմքի տղամարդավարիությանը, դրանք կանացի աչքեր էին: Աչքի էր ընկնում նաև տղամարդու վրայով կարված բլուզի տակից ընդգծվող նրա կուրծքը:

— Ռոկլանա՛…– իբր թե զարմացավ Վահրիճը՝ վար դնելով գրքույկը, բայց շարունակելով պառկած մնալ,— դա ի՞նչ բուրժուական ձևականություն է՝ դուռը թակել… Ես էլ ասում եմ՝ ի՞նչ անկուսակցական քաղաքացի է: Բաց արա ու մտիր կոմսոմոլավարի:

— Համենայն դեպս, պիտի թակել, չորսդ էլ տղաներ եք ապրում,— դեմքի խիստ լուրջ, տղամարդավարի արտահայտությամբ և բամբի վերածած ձայնով, ասաց Ռոկլանան: Ապա, ծծելով մատների արանքում պահած ծխախոտը և բերանի մի անկյունից բաց թողնելով ծուխը, նա ծխախոտի ծայրով ցույց տվեց Վարդանի անկողինը.

— Էստեղ չի՞:

— Գնաց քարշ գալու: Նստիր մի տեղ: Հենց թեկուզ իմ թախտին, ոտքերիս մոտ:

Ռոկլանան նստեց Վարդանի թախտին, մեջքը հենեց պատին, ոտքը գցեց ոտքի վրա և շարունակեց ծխել մտածկոտ: Ապա ասաց.

— Դա՛…

— Ի՞նչ է, նա պե՞տք էր քեզ,— հետաքրքրվեց Վահրիճը:

Պատասխանելուց առաջ Ռոկլանան վեր կացավ, պոկեց Ռաֆֆուց մի թերթ, վերադարձավ, դրեց իր կողքին, թախտի վրա, ցուցամատով խփեց ծխախոտին, մոխիրը թափ տվեց թղթի վրա:

— Որ փնտրում եմ՝ ուրեմն պետք է:

— Իսկ ես չե՞մ կարող փոխարինել:

— Ոչ, Վահրիճ:

— Ինչո՞ւ: Ես կոմերիտական չե՞մ:

— Այո, բայց կա անհատական տարբերություն:

— Դա ինդիվիդուալիզմ է:

Ռոկլանան ներս քաշեց ծուխը, պահեց բերանում՝ քանի դեռ մտածում էր, ապա, պատասխանը գտնելուց հետո, դուրս փչեց այն: Ծխախոտը բռնած ձեռքով նա հովիարեց, ցրեց ծուխն իր դեմքի առջևից և ասաց.

— Կոլեկտիվիզմը չի ժխտում անհատականության դերը:

— Նայած ինչ հարցում,— տակը չմնաց Վահրիճը:

— Այո…— անվստահ ասաց Ռոկլանան՝ կկոցած աչքերն անորոշ մի կետի հառած, ապա, ավելի որոշակի, կրկնեց:— Այո:

— Օրինակ, սեռերի փոխհարաբերության հարցում,— անցավ կոնկրետացման Վահրիճը:— Իմ կարծիքով, անհատականացումն այդտեղ ավելորդ է և կարող է հասցնել սիրո մանր-բուրժուական կոտրած տաշտակին:

— Դու սեռական սանձարձակություն ես քարոզում, Վահրիճ:

— Աստված մի արասցե, — դուրս թռավ երիտասարդի բերանից: Քմծիծաղ տալով, նա բացատրեց.— Մեր անողնաշարն է էդպես արտահայտվում: Դու սխալվում ես, Ռոկլանա, ոչ թե սանձարձակություն, այլ ազատություն:

— Ի՞նչ ենք հասկանում դրա տակ:

Վերջապես Վահրիճը վեր կացավ, նստեց:

— Ազատություն,— ասաց նա,— դա նշանակում է՝ ազատ ընտրություն:

— Տարբերությունը, տարբերությունը…

Ռոկլանան մեկնեց ծխախոտ բռնած իր ձեռքը և մյուս ձեռքի երեսով սկսեց խփել դրա ափին, այսինքն թե՝ դիր, դիր այստեղ տարբերությունը:

— Տարբերությունն այն է,— առանց կակազելու և վարժ բացատրեց Վահրիճը,— որ սանձարձակության դեպքում սեռական ընտրությունը կանգ է առնում մի խումբ ինդիվիդումների վրա, իսկ ազատության դեպքում՝ միայն մեկի վրա: Ճիշտ է, այդ մեկը կարող է չտևել ամբողջ կյանքում, բայց տվյալ ժամանակամիջոցում նա հեգեմոն է…

Ռոկլանան մտածեց և, ըստ երևույթին, որոշակի եզրակացության չգալով, ծուռ շարժեց գլուխը, այսինքն՝ «թերևս»:

Այդ կիսահամաձայնությունից ոգևորված, Վահրիճը տեղափոխվեց Վարդանի թախտի վրա, Ռոկլանայի կողքին:

— Կարևորն այն է,— ասաց նա,— որ մենք իմպերիալիստական կապանքներ չդնենք մեր զգացմունքներին և կրքերին:

— Այո, բայց ամեն բան իր ժամանակին,— հակաճառեց կոմերիտուհին:

— Համաձայն եմ: Բայց ո՞րն է ժամանակը: Մի՞թե դու նկատի ունես այսպես ասած՝ «սուրբ պսակը»: Արբունքն է ժամանակը, ահա: Դու գիտե՞ս, թե երբ է արբունքի հասնում, օրինակ, ձեր սեռը:

— Մեր սեռը…— ասաց Ռոկլանան՝ մի փոքր մտածելով:— Դրա համար ճիշտ սահման չկա:

— Համենայն դեպս կոմերիտական հասակում բոլորս էլ արբունքի մե՞ջ ենք:

— Դա դիսկուսիայից դուրս է,— տղամարդավարի լուրջ, համաձայնեց Ռոկլանան:— Իսկ շո՞ւտ է գալու Վարդանը:

— Դժվար թե: Էնպես որ, մեզ խանգարող չկա: Միայն թե, Ռոկլանա, խնդրում եմ քեզ, որ մի կողմ թողնես մանր-բուրժուական ամոթխածությունը և ուշադրությամբ լսես ինձ: Անցյալ անգամ դու շարունակ կարմրում էիր: Ամոթ չէ՞: Վայե՞լ է կոմերիտուհուն: Մի՞թե չի կարելի ազատ խոսել գիտական հարցերի շուրջը: Ուրեմն լսիր…

Վառելով մի նոր ծխախոտ, Ռոկլանան, Վարդանին սպասելու համար, ստիպվեց մնալ սենյակում և լսել:

7

Աբովյանը հատող Սպանդարյան փողոցով քայլելով մինչև վերջ, Վարդանը բարձրացավ Կոնդ թաղամասը և անցնելով դրա ծուռումուռ փողոցներով ու նրբանցքներով, սկսեց իջնել հակադիր լանջով դեպի Հրազդան գետը: Դեռ միայն մի քիչ իջած, տնակները վերջացան, վերջացան նաև խաղողի պարսպապատ այգիները: Վարդանը հայտնվեց մի ժայռի վրա: Ժայռից մի քիչ դեպի ձախ, ծառապատ և բավական դիք լանջով մի կածան իջնում էր ավելի ներքև՝ դեպի գետը: Բայց Վարդանը թեքվեց հակառակ կողմը՝ դեպի աջ, քայլեց քիվի նման կախված ժայռի վրայով և գտնելով մի բոլորովին առանձնացած անկյուն, նստեց: Նրա մեջքի ետևում կանգնած էր տնամերձ այգու մի ցածրիկ պատ, կողքերին աճել էին եղինջի խիստ բարձր թփեր, իսկ առջևում, ներքևում՝ ձորն էր՝ իր ծառապատ գեղեցիկ լանջերով և ամենացածրում խշշացող Հրազդանով:

Վարդանն սկսեց հիացած նայել ներքև: Գետի խշշոցը շուտով անլսելի դարձավ նրա համար և ներքևի տեսարանը վերածվեց անձայն պատկերի: Ընդհակառակը, նա իր մեջքի ետևից, այգու պատի, Կոնդի բլուրի ետևից էր լսում, ավելի շուտ՝ զգում ձայներ և հնչյուններ՝ կիրակնօրյա Երևանի և մանավանդ Աբովյան փողոցի հեռավոր աղմուկը: Բոլորը քաղաքում խոսում էին, ծիծաղում, զբոսնում, շրխկոցով նարդի էին խաղում՝ տների բակերում հավաքված, թառ էին նվագում՝ բաց լուսամուտների ետևում նստած… Մուրադն իր համագյուղացիների հետ շրջում էր մարդաշատ խանութներով, Գառնիկը հանդիպել էր իրենց ծխախոտագործարանի մի խումբ երիտասարդ բանվորների և պատմում էր նրանց իր անվերջանալի պատմությունները որբանոցային անցյալից… Իսկ Վարդանը, այդ բոլորին անհաղորդ, հեռացել, առանձնացել էր բոլորից՝ մնալով միայն ինքն իր հետ… Եվ դա առաջին անգամը չէ, առաջին կիրակին չէ, երբ նա որևէ խաղաղ անկյունում նստած, վերհիշում է իր անցյալը…

Գուցե, իսկապես, իրավացի է Վահրիճը՝ համարելով նրան խորթ մարդ… Գուցե, հիշելով իր մանկությունը, նա, իրոք, երազում է ցարիզմի վերականգնո՞ւմը… Չէ՞ որ այն ամենը, ինչ եղել է հեղափոխությունից առաջ՝ մանկություն, Ռաֆֆի, սեր՝ դա ցարիզմի տարրերն են, իսկ այն ամենը, ինչ որ կա հիմա՝ թե լավ և թե վատ՝ սոցիալիզմի տարրերը…

— Ոչ ամենը,— ասաց Վարդանը հանկարծ, լսելի ձայնով:— Դա սխալ հարցադրում է…

Ասաց և սսկվեց՝ ոչ միայն այն պատճառով, որ նրա համար անակնկալ էր իր ռեպլիկայի բարձրաձայն լինելը, այլև, ավելի շատ, այդ ռեպլիկայի անճոռնիության պատճառով: «Սխալ հարցադրում»… Մի՞թե կարելի է ամեն ինչի, նույնիսկ զգացմունքների մասին խոսել այդպիսի «ժողովային» լեզվով… Վարդանը մոռացել է խոսելը: Ուրեմն, պետք է լռել, մտքի մեջ անգամ չխոսել, չգործածել այդպիսի բառեր, այլ միայն հիշել, վերակենդանացնել իր աչքի առաջ սիրելի պատկերները… Ահա այս գծով պետք է գնալ… Թյո՛ւ… նորից նույնը՝ «գծով»…

Բայց Վարդանն այս անգամ ճիգ գործադրեց չզայրանալու իր վրա և միայն ժպտաց տխուր ու հանդիմանանքով իր հանդեպ, ընդ որում ավելացրեց իր մտքում, այս անգամ արդեն՝ դիտմամբ.

— Անուղղելի կերպով վարակվել եմ, հարկավոր է «միջոցառումներ գտնել» և «արմատախիլ անել»…

Թեև նա բոլորովին էլ չփակեց աչքերը, այլ շարունակում էր նայել ոտքերի տակ փռված տեսարանին, բայց շուտով դադարեց շրջապատը տեսնելուց: Այժմ նրա հոգու աչքերի առաջ բարձրացավ այն, ինչին նա ուզում էր նայել էլի մի անգամ, էլի մի կիրակի… Բայց ոչ մի անգամ, ոչ մի կիրակի նրան այնպես չէր պաշարել մանկության հուշերի գեղեցկությունը, ինչպես այսօր: Եվ նա հասկանում էր պատճառը՝ անծանոթ աղջկա քայլվածքն Աբովյանի մայթով…

Հաճախ էր այդպես քայլում նրա մանկության ընկերուհին: Սովորաբար արագաշարժ և աշխույժ, Վարդանի հետ խոռվելու դեպքերից հետո նա քայլում էր դանդաղ, իբր թե ինքն իր համար, իբր թե անտարբեր դեպի իր ընկերը: Բայց այնքա՜ն պերճախոս կերպով սպասողական էր այդ քայլվածքը… Նայում էր Վարդանը Ցողիկի ետևից, և նրա սիրտը ճմլվում էր այդ քայլվածքի աղջկային քնքուշ աղերսանքից.— խոսիր ինձ հետ, Վարդան, ես անմիջապես շուռ կգամ և կհաշտվեմ քեզ հետ, միայն թե ասա մի բառ, արձակիր մի հնչյուն, չէ՞ որ ես դրա համար եմ «ոտքս կախ գցել»…

Եթե այժմ աշխարհում հայտնվել է մի ուրիշ աղջիկ, որը քայլում է Վարդանի համար ընդմիշտ կորած Ցողիկի նման, ինչո՞ւ, ինչո՞ւ համար Վարդանը վազ չտվեց նրա ետևից, չկանգնեցրեց նրան, չպահեց, որպեսզի նա չանհետանար, չկորչեր…

«Սխալ հարցադրում»…— նորից անցավ Վարդանի մտքով.— «մի ուրիշի մոտ կարող է կրկնվել Ցողիկի քայլվածքը, բայց մի՞թե դա նշանակում է, որ նա կարող է նման լինել իր մանկության ընկերուհուն նաև բոլոր մյուս «գծերով»… Ինչո՞ւ հասներ Վարդանը նրա ետևից, ծանոթանար հետը և հիասթափվեր…

8

Զարմանալի հակասություններով լի քաղաք էր Ալեքսանդրապոլը: Հիմնականում դա հայ արհեստավորների գավառական քաղաք էր, որտեղ շրջակա գյուղերի բնակիչները վաճառում էին իրենց մթերքը և դնում էին տեղում պատրաստած տնայնագործական պայտեր ու մեխեր, ամանեղեն ու ճոթեղեն, գնում էին աղ ու լուցկի… Բայց Ալեքսանդրապոլը նաև ռուս զորականության քաղաք էր, որովհետև դրա բերդում և այլ զորանոցներում տեղավորվել էր բավական մեծ մի կայազոր: Սպաներ, զինվորական բժիշկներ, ռուս կանայք, պաշտոնաթող գեներալներ, ռուսական մի քանի եկեղեցիներ, ռուս աստիճանավորների առանձնատների մի ամբողջ փողոց, զրնգուն երգերով փողոցներով անցնող «սալդաթների» վաշտեր ու դասակներ, ռուսերեն խոսակցություններ... Այդ բոլորը որոշակիորեն մի այլ տեսք էին տալիս քաղաքին՝ արհեստավորական տեսքից շատ տարբեր:

Եվ ապա, քաղաքին երրորդ տեսք տվողները՝ առևտրականություն, ինտելիգենցիա և անգամ արիստոկրատիա: Ոչ այնքան արհեստավորությունը, որքան որ զորականությունն էր կյանքի կոչել նրանց. զինվորական շենքեր կառուցող, զորքին մթերք և զորքի ձիերին խոտ ու գարի մատակարարող «փոդրաթչիներ», բարձր աստիճանավորության կենցաղային և կուլտուրական պահանջները բավարարող և իրոք որ մեծ քաղաքներին վայել «կոլոնիալ ապրանքների ու մթերքների մագազիններ», «մոսկովսկայա կոնդիտերսկայա», ռուսերեն գրքերի վաճառքի խանութներ, «պարտնոյ պարիժսկիխ մոդ», «կալբասնայա», «բուլոչնայա» և, իհարկե, նաև «ռասպիվոչնայա», «խարչևնյա»…

Կայազորի կարիքները հոգալու վրա ուռճացած առևտրականությունը, իր հերթին, կյանքի էր կոչել «կամերչեսկի դպրոց», «ժենսկայա գիմնազիա», «պանսիոններ», «կոնցերտներ», «գուլյանիներ», «բարեգործական ընկերություններ», մամուլ, գրքերի տպագրություն, ռուսաց լեզվի կարճատև և երկարատև դասընթացներ, «ռեպետիտորներ», ռուսական կենցաղի բազմաթիվ տարրեր: Սպասարկելու համար այդ պահանջները, ինչպես նաև ընդհանուր-վարչական «կանտորներն» ու «կանցելյարյաները», ստեղծվել էր մի ինտելիգենցիա և արիստոկրատիա, որը գավառական էր իր միայն իննսուն տոկոսով, իսկ մնացյալ տասը տոկոսով կարող էր միանգամայն արժանի լինել որևէ մայրաքաղաքի: Ալեքսանդրապոլի փողոցներում կարելի էր տեսնել բոստանչու իշասայլակի կողքով սլացող-անցնող փարիզյան իսկական «ֆայտոն»՝ երկու հիանալի ձիեր լծած, իսկ դրա մեջ՝ տիրոջը՝ ֆրակով, ցիլինդրով և սպիտակ ձեռնոցներով: Միևնույն փողոցում, իրար կպած երկու տներից մեկից կարելի էր լսել որևէ փափախչու կնոջ ճղճղոցը. «Աղջի, բեմուրազ, գետինը մտնիս, արի գործելի քից քյուրեն, կրակը մարավ», իսկ մյուս տնից՝ Մոցարտի չնաշխարհիկ հնչյունները՝ հիանալի կատարումով դաշնամուրի վրա, կամ երկու աղջիկների կիսաձայն զրույցը մաքուր ֆրանսերենով…

Ահա այդ քաղաքում, կոնտրաստներով լի այդ միջավայրում էր ծնվել մեծացել Վարդանը: Բախտն այնպես էր որոշել, որ նա, լինելով փռում խմոր շաղախող հոր և տներում լվացք անող ու լավաշ թխող մոր զավակ, իր ծնողների հետ միասին ապրեր ոչ թե նրանց նման հասարակ ու աղքատ մարդկանց շրջանակում, այլ «աչքի ընկնող» մարդկանց մի փողոցում, մի տան մեջ, որի տերն ու միակ հարևաններն, ըստ ամենայնի, արիստոկրատական մի ընտանիք էին, Ցողիկենց ընտանիքը:

Ցողիկի հայրը Գերմանիայում բարձրագույն կրթություն ստացած բժիշկ էր և այն էլ ոչ թե այս կամ այն նեղ թեքումով, այլ «ունիվերսալ»: Նա բերդում տեղավորված «լազարեթի» գլխավոր բժիշկն էր և ընդհանրապես քաղաքի «մեդիցինայի» ամենապայծառ «լուսատուն»: Լազարեթում նա ստանում էր մեծ ռոճիկ, բայց նրա և նրա ընտանիքի նյութական բարօրությունը հիմնականում խարսխվում էր նրա մասնավոր պրակտիկայի վրա: Ընդ որում, այդտեղ համարյա բացառապես նա բուժում էր վեներական հիվանդությունները: Տանը նա ոչ ոքի չէր ընդունում, ոչ ոքի՝ առանց բացառության, ամենախիստ կերպով փակելով իր «ընտանեկան հարկի՝ սրբություն սրբոցի»

դռները «խայտառակ ախտով» տառապողների դեմ: Նրա այդ վարվելակերպը միանգամայն համընկնում էր հիվանդների շահերի հետ, որովհետև փոքրիկ քաղաքում, որտեղ համարյա բոլորը ճանաչում էին միմյանց հականե-հանվանե, իսկույն հայտնի կդառնար հիվանդի նույնիսկ միակ այցելությունն այդ բժշկին, ուր մնաց հաճախելը:

Հիվանդների մի զգալի մասին, որ զինվորականներ էին, նա ընդունում էր հենց լազարեթում՝ «մասնավոր հիմունքներով»: Մյուսների, ոչ-զինվորականների հետ նրա հանդիպումները կրում էին դավադիրների հանդիպման խիստ կոնսպիրատիվ բնույթ:

Տանը Ցողիկի հայրն զբաղվում էր միայն բժշկական գրքեր և հանրամատչելի գրքույկներ գրելով: Լինելով, իրոք, առաջնակարգ բժիշկ, նա արդեն տպագրել էր մի քանի աշխատություն, որոնցից մի երկուսը նույնիսկ արժանացել էին կրկնակի հրատարակության:

Բժշկի ընտանիքը մեծ չէր, բաղկացած էր ընդամենը չորս հոգուց՝ հայր, մայր, երկու աղջիկ, որոնցից մեծն արդեն գիմնազիստկա էր, իսկ մյուսը, Ցողիկը՝ Վարդանից մի քանի ամսով փոքր երեխա: Ընտանիքը պահում էր նաև տնային ծառայող կնոջ, անպայման ռսուհու, որը թեև կոչվում էր «բոննա», բայց միաժամանակ և՛ խոհարարուհի էր, և՛ ընդհանրապես ամեն ինչ անող՝ բացի լվացքից: Լվացքը մի քանի տարի շարունակ կատարում էր Վարդանի մայրը, բայց երբ հրեաները քաղաքում բաց արեցին «պրաչեչնայա», արիստոկրատիան իսկույն ներխուժեց այնտեղ՝ հրաժարվելով կեղտոտ «պանտալոններն» ու «ռուբաշկաները» լվանալու «կուստար» միջոցներից: Վարդանի մայրն այլևս իր տղային չէր ուղարկում գնելու «կրախմալ»՝ կարտոնե փոքրիկ տուփերով, որոնց վրա նկարված էին կարմիր հաստ շրթունքներով նեգրերի գլուխներ և որոնց մեջ շխկշխկում էին օսլայի սիսեռաչափ կտորները: Իրենց լվացքը Վարդանի մայրն անում էր առանց օսլայի, իսկ ուրիշների լվացքը՝ հենց նրանց տներում:

Թեև Ցողիկենց ընտանիքը մեծ չէր, բայց, դրա դիմաց, մեծ էր նրանց բնակարանը, որը լուսամուտներ ուներ և՛ փողոցի վրա, և՛ բակի մեջ: Այնտեղ կային ճաշասենյակ, ննջարան, կաբինետ, հյուրասենյակ և նույնիսկ երկու առանձին սենյակներ, ճիշտ է, փոքր, Ցողիկի և բոննայի համար: Կային, իհարկե, խոհանոց, մառան, «պադվալ»:

Վարդանը դեռ իր ամենավաղ հասակից տեսավ սոցիալական անարդարությունը: Նրանց ընտանիքը, բաղկացած երեք հոգուց, ուներ ընդամենը երկու սենյակ, որոնցից մեկը փաստորեն նախասենյակ էր: Դրանք փոքր, անպաճույճ սենյակներ էին: Եվ եթե տանտիրոջ տունը կառուցված էր դեղին ու սև «խաս» քարերով, «սրբատաշ», ապա բակում գտնվող Վարդանենց տունը կառուցված էր աննկանոն քարերից, համարյա «խիբարից», որը երեսպատված էր կավով և սպիտակեցված էր:

Իսկ կարելի՞ էր գոնե համեմատել անգամ այդ երկու բնակարանների կահկարասին, իրերը, հագուստները…

Օրինակ, խոհանոցները:

Վարդանենց խոհանոցը կիսանկուղային մի հարկաբաժին էր՝ սենյակների տակ, և այնտեղ ճաշը պատրաստում էին կավե քուրաների վրա: Ցողիկենց խոհանոցը մի լուսավոր և մաքուր սենյակ էր «տոմետե» հատակով: Այնտեղ կանգնած էր մի փառահեղ, ընդարձակ պլիտա՝ «կաֆելե» կողերով ու երեսով՝ նիկելե փայլուն շրջանակի մեջ առնված: Պլիտան ուներ «դուխովկա»՝ մեծ ու փոքր մի քանի «կամֆորկաներով», որոնք լրացուցիչ չուգունե օղակներով կարող էին լայնացվել կամ նեղացվել՝ նայած վրան դրվող կաթսայի կամ թավայի մեծության: Վարդանենց խոհանոցում կային միայն պղնձե տնայնագործ «ղազաններ», «ժեշտե վեդրո», յուղոտ ու սևացած փայտե կոթերով դանակներ, անփայլ «չյանգյալներ», հասարակ հախճապակուց մի քանի «թաբախներ» և կավե «քյասաներ»… Ցողիկենց խոհանոցում, սպիտակ ներկված ապակեպատ շքեղ պահարանում, կանոնավոր շարված էին «Էմալիրովաննի» կաթսաներ, զանազան չափի ու մեծության «տարելկաներ», «սուպնիկներ», «սալոնկաներ» և բազում այլ ամանեղեն: Պահարանի կտուրին դրված էր պաղպաղակ պատրաստելու մի ամբողջ սարք, պլիտայի մոտ պատից կախված էին կամ

թարեքների վրա դրված էին ձու հարելու «սպիրալ», մսի մեքենա, բիսկվիթի ու «պեչենյաների» «ֆորմաներ» և էլի բազմաթիվ ու բազմատեսակ առարկաներ… Դրանց միջոցով բոննա-խոհարարուհին, հմուտ տանտիրուհու ընդհանուր հսկողությամբ ու ղեկավարությամբ, պատրաստում էր չլսված ու չտեսնված ուտելիքներ՝ ֆրանսերեն և առնվազն ռուսերեն անուններով:

Վարդանենց տանը կար հասարակ երկաթե մի հին մահճակալ՝ չթե «յորղանով», քաթանե «դոշակով» և ոչ այնքան լավ որակի «փաթուսխայից» կարած «բալիշներով»: Կար նաև մի ճռճռան թախտ, որի վրա քնում էր Վարդանը, այնքան անպաճույճ և հասարակ, որ ամեն երեխա կարող էր պատրաստել դա չորս ոտքից, երեք տախտակից և մի քանի մեխերից: Թախտի վրա փռված էր ջեջիմ, իսկ մահճակալի կողքին՝ պատի վրա, կախված էր գործարանային մի էժան գորգ՝ ծայր աստիճան անճաշակ նկարված մի ցլամարտիկով, որն աշխատում էր պարանն անցկացնել ցլի վիզը: Կար նաև թախտից ոչ պակաս անշուք մի ճաշասեղան, հագուստի պահարանի փոխարեն թիթեղի կտորտանքով ծածկված սնդուկ, բուֆետ-պահարանի փոխարեն արկղի պարզություն ունեցող «շկապ»... Պատի վրա, ներսի սենյակում, կախված էր «11 գծանոց» նավթի լամպ, իսկ դրսի սենյակում ավելի փոքր՝ «8 գծանոց»:

Տան միակ գրագետը Վարդանն ինքն էր, որի «կաբինետը» ցածրիկ լուսամուտներից մեկի գոգն էր: Այնտեղ գիր անելու համար նա ծունկ էր չոքում հատակին գցած մինդարի վրա, լուսամուտի առջև, իսկ կարդալիս ամբողջապես տեղափոխվում-նստում էր այդ լուսամուտի գոգը՝ մեջքը հենելով դրա մի պատին, իսկ ոտքերը՝ մյուս:

Իսկ Ցողիկենց սենյակները տրաքվում էին «օրեխովի մեբելից», «ֆրաժե կրավատներից», «կրուժևայից», գոբելեններից, գորգերից… Հյուրասենյակում դրված էր հիանալի դաշնամուր, բոլոր սենյակների անկյուններում՝ լաքի պես փայլող սև գույնի «պադստավկաներ» և «ստոլիկներ», որոնց վրա՝ ծաղկամաններ, ժուռնալներ, ալբոմներ, ակվարիում… Ապակեպատ պահարանները լիք-լցված էին «խրուստալով» ու «բակարայով», փառակազմ գրքերով, «գարդերոբում» պահվում էին տարվա տարբեր եղանակների համար տարբեր հագուստներ, գլխարկներ, ոտնամաններ՝ հաճախ անծանոթ և խորհրդավոր անուններով՝ ռետինկոտ, մակինտոշ, պլեդ, բոա, մուֆտա, վուալ, գամաշներ, շտիբլետներ… «Էտաժերկաների» վրա և «դիվանների» թիկնակների թարեքների վրա դրված էին «ստատուետկաներ», «բեզդելուշկաներ», «սաֆյանե» կազմով փոքրադիր գրքեր, հանքաքարի փայլուն կտորներ, Լեհաստանի աղահանքերից ի հիշատակ բերված ավետարան՝ պատրաստված աղի բյուրեղից, Մանջուրիա փոխադրված մի գեներալից նվեր ստացված գաոլյանի մի հիանալի փունջ՝ հաստ և կեռ կոթունով…

Առաստաղներից կախված էին շքեղ ջահեր, ընդ որում, ճաշասենյակում, սեղանի վերևում կախվածը սև չուգունից էր՝ սպիտակ մեծ լուսամփոփով և լամպի տակից կախված փայտե մի բռնակով, որի վրա կար զանգի կոճակ: Սեղմում էիր այդ կոճակը, և ներս էր մտնում աղախինը: Իսկ հյուրասենյակում կախված էր ամենամեծ ջահը՝ շրջապատված խրուստալե եռակողմ «պադվեսկաներով», որոնք տարրալուծում էին գազի ուժեղ լամպի լույսը և վերածում ադամանդի ճառագայթների:

Իսկ կարելի՞ էր արդյոք համեմատել Վարդանի աղքատիկ խաղալիքները՝ երեքոտանի ձին ու կարմիր ներկած թիթեղե շեփորը Ցողիկի սենյակում լիք-լցված տասնյակ ու տասնյակ սքանչելի տիկնիկների, մանկական սերվիզների, մանկական «պլիտայի», մանկական «գարնիտուրի», կախարդական լապտերի, լոտոյի, դոմինոյի, ալբոմների, փոխադրանկարների, տոնածառի զարդերի հետ:

Ոչ, հազիվ թե կարելի լիներ ավելի ակնբախ դարձնել սոցիալական կոնտրաստը, ավելի իրար մոտ բերել հակասությունները երկու հասակակից երեխաների կյանքում, քան թե դա կար Վարդանի և Ցողիկի մոտ:

Ինչ խոսք, որ եթե միայն այդ բոլորից բաղկացած լինեին Վարդանի հուշերը, հազիվ թե նա ուզենար երբևէ հիշել դրանք, իսկ ակամայորեն երբեմն-երբեմն հիշելիս հազիվ թե դառնությունը չպատեր նրա հոգին: Բայց իր մանկության վաղ շրջանում նա դեռ բոլորովին չէր զգում սոցիալական կոնտրաստը, իսկ երբ արդեն հասնում էր այն տարիքին, երբ պետք է զգար ու գիտակցեր, այդ կոնտրաստը մեղմացրին, համարյա ջնջեցին թե՛ նրա ծնողները և թե՛ Ցողիկի:

Իհարկե, չի կարելի ասել, թե Ցողիկի ծնողներն ունեին մարդասիրական լայն հայացքներ, դեմոկրատական տրամադրություններ: Ընդհակառակը, այն, որ նրանք հանդուրժել էին իրենց բակում ապրելու մի հասարակ և աղքատ ընտանիքի, դրա պատճառն այն էր, որ նրանց պատկանող այդ անշուք բնակարանը կարող էր որոշ եկամուտ բերել և անմտություն կլիներ հրաժարվել դրանից: Բացի այդ, խիստ ձեռնտու բան էր միշտ ձեռքի տակ ունենալ մի հեզ կնոջ և մի ուշիմ տղայի, որոնց կարելի էր անել տալ մանր-մունր ծառայություններ: Իսկ այդպիսիք միշտ էլ կճարվեին: Բոննան գնացել է մթերք գնելու, իսկ փոքրիկ Ցողիկին նայող չկա, զբաղվիր խնդրեմ նրանով մի կես ժամ, սիրելի հարևանուհի՝ մինչև բոննայի գալը... Բոննան երեխային տարել է զբոսանքի, իսկ կարտոֆիլը մոռացել է մաքրել, մաքրիր խնդրեմ՝ եթե կարող ես մի քանի րոպեով ընդհատել լվացքը… Ապա, Վարդան, վազ տուր կիոսկ, գնիր «դյադյայի» համար մի տուփ «Խան-քեֆի» ծխախոտ... Ապա, տեսնենք, Վարդան, կարո՞ղ ես պտտեցնել պաղպաղակ պատրաստող սարքի կոթը, չէ՞ որ դու արդեն մեծ տղա ես...

Վարդանը չի հիշում, թե երբ առաջին անգամ մտավ Ցողիկենց տուն: Բայց տեսնելով այնտեղի շքեղությունը, նա ոչ միայն հիասթափվեց իր անշուք կյանքից, այլև, ընդհակառակը, անչափ ուրախացավ և գոհ մնաց այն բանից, որ իր կյանքի մեջ մտնում էր մի նոր, շատ մեծ գեղեցկություն և հարստություն, կարծես նրան նվիրել էին մի արտակարգ խաղալիք: Մանկական պարզամտությամբ նա Ցողիկենց տունը և Ցողիկին իրեն համարեց իր կյանքի մի մասնիկը:

Վարդանի ծնողները, սակայն, շատ լավ էին տեսնում և զգում կոնտրաստը: Եվ որպեսզի նույնը չտեսներ և չզգար իրենց երեխան, որպեսզի չթունավորեր նրա մանկությունը, նրանք սկսեցին հագցնել Վարդանին այնպես, ինչպես կհագցնեին Ցողիկի ծնողներն իրենք՝ եթե տղա ունենային: Իսկ թե ինչ էր նստում դա փռում խմոր շաղախող տղամարդու և տներում լվացք անող կամ լավաշ թխող կնոջ վրա՝ գիտեին միայն նրանք իրենք: Բայց չէ՞ որ հագուստից բացի հարկավոր էր նաև երբեմն-երբեմն գնել կինոյի տոմս, շաքարե աքաղաղ, փռռան, գլորելու օղակ կամ մի ուրիշ, ոչ շատ թանկ խաղալիք…

Ցողիկի ծնողները շատ շուտով նկատեցին, որ փոքրիկ Վարդանը չուներ «ռամիկ ժողովրդին հատուկ բնածին վատ հակումներ», ուստի և ազատորեն թույլ տվեցին իրենց երեխայի ընկերակցությունը նրա հետ: Նրանց ընտանիքի խոսակցական լեզուն ռուսերենն էր: Հայերեն նրանք խոսում էին միայն ուրիշների, այդ թվում նաև Վարդանի և նրա ծնողների հետ: Ուստի և մեծ եղավ նրանց զարմանքը, երբ մի անգամ, Ցողիկի մայրը Վարդանին հայերեն ինչ-որ հարց տալիս՝ պատասխանն ստացավ մաքուր ռուսերենով: Նրանց երեխայի հետ առավոտից երեկո միասին լինելով, ուշիմ տղան սովորել էր նրանից այդ լեզուն: Նա սովորել էր նաև «իրեն պահելու» ձևերը՝ թե՛ ճաշի սեղանի շուրջը և թե՛ ընդհանրապես «հասարակության մեջ»:

Համոզվելով դրանում, Ցողիկի ծնողներն այժմ ավելի ընդարձակեցին Վարդանի արտոնություններն իրենց տանը: Այժմ, երբ նրանց մոտ հյուր էին գալիս ուրիշ արիստոկրատ ընտանիքներ՝ իրենց երեխաներով, Ցողիկի մայրը ոչ միայն դեմ չէր, որ Վարդանը ևս լիներ նրանց հետ, այլև ինքն էր ասում աղջկան.

— Иди позови Варданчика.

Եվ երբ մեծերն աննկատ հետևում էին երեխաների խաղերին, նրանցից յուրաքանչյուրն զգում էր, որ դա դեռ հարց է, թե ո՛վ էր նրանցից ամենադաստիարակվածը՝ իրենց երես առած երեխանե՞րը, թե՞ այդ աղքատի տղան…

Մի անգամ, Ցողիկի հայրը, անցնելով «տուն-տուն» խաղացող երեխաների մոտով, որոնք «ճաշկերույթի» էին նստել արիստոկրատական «էտիկետի» բոլոր կանոններով, ձեռքի լայն շարժումով ցույց տվեց նրանց իր հյուրերին և ասաց.

— Будущая золотая молодежь.

Նրա ձեռքի լայն շարժումն ընդգրկել էր նաև Վարդանին:

Հյուրերը, թեկուզև պարբերաբար, բայց և այնպես գալիս էին ու գնում, իսկ Վարդանը մնում էր, Վարդանն ամեն օր էր Ցողիկի հետ: Ուստի նա դարձել է աղջկա ամենասիրելի ընկերը՝ ավելի մտերիմ, քան նրա բոլոր «կուզեններն» ու «կուզինաները»:

Բոննան տան գործերն ավարտելուց և ճաշը պլիտայի վրա դնելուց հետո, խնդրելով գիմնազիստկային կամ հարևանուհուն՝ մեկ-մեկ նայել «պլիտային», վերցնում էր երեխաներին և գնում զբոսանքի՝ կամ քաղաքային այգի, կամ դրա ետևում գտնվող «Չերքեզի ձորը»:

Քաղաքային այգում, մի քանի «ալեյներով» և սքանչելի ծաղիկների մարգերով, կար նաև ծառերով շրջապատված մի «կրուգ», որտեղ ռսուհին նստում էր նստարանի վրա, իսկ երեխաները խաղ էին անում նրա աչքի առջև: Երկուսն էլ նույն կտորից կարած «մատրոսկաներով», ձեռքներում բռնած փայտե կոթերով խփում-գլորում էին իրենց մեծ, գեղեցիկ օղակները, որոնց մետաղը փաթաթված էր կարմիր, կապույտ, դեղին և կանաչ թղթե նեղ ժապավեններով: «Կրուգում» խաղում էին նաև ուրիշ երեխաներ, բայց Վարդանն ու Ցողիկը սովորաբար չէին մոտենում նրանց: Բայց դա արհամարհանք չէր, նրանց պարզապես լիովին բավարարում էր իրենց երկուսի ընկերակցությունը:

Երբեմն նրանք տեսնում էին որևէ աղքատիկ հագնված տղայի, որը ճիպոտի մի կտորով գլորում էր տակառի մի սովորական «օբրուչ»: Ժանգոտ օղակը, լինելով մի եզրից լայն և մյուս եզրից նեղ՝ համաձայն տակառի ձևի, գլորվում էր ոչ թե ուղիղ, այլ կոր գծով: Առանց կարիք զգալու, որ փայտի շարունակական հարվածներով ուղղություն տան իրեն, նա կանոնավոր շրջանակ էր կատարում այգու «կրուգում»: Ցողիկն ու Վարդանը նախանձով էին նայում այդ ժանգոտ «օբրուչին» և ուրախությամբ իրենց օղակները կփոխանակեին դրա հետ՝ եթե չլիներ բոննայի արգելքը:

«Չերքեզի ձոր»՝ որպես զբոսանքի ավելի հեռու վայր, նրանք այցելում էին ոչ հաճախ: Իհարկե, այնտեղ շատ ավելի հետաքրքիր էր, քան քաղաքային այգում, և երեխաները շարունակ խնդրում էին բոննային՝ իրենց տանել այնտեղ:

Այգու ետևում ձգվում էր մի բլրակ, բլրակի ետևում կար վայրէջք՝ կես-ճանապարհ և կես-փողոց, որի աջակողմյան թևի վրա գտնվող երկու շենքերի արանքով անցնում էին ձոր գնացողները: Մի քանի քայլ հետո դիմացը բացվում էր նեղ գեղեցիկ ձորը, որով հոսում էր մի փոքրիկ առվակ: Դեռ նախքան ձոր մտնելը, արձակ մասում, ջրի ափերին, երեխաները տեսնում էին շատ կանանց, որոնք լվանում էին գորգեր, կարպետներ, ջեջիմներ, կոպիտ կտորեղեն: Ոտաբոբիկ, նրանք թաց գործվածքը կամ կտորը դնում էին տափակ ողորկ մի քարի վրա և փայտե տափակավուն թակերով ծեծում: Ջուրը ցայտում էր նրանց շուրջը, թրջում նրանց շրջազգեստները ծնկներից հետ:

Կանանց միջև Վարդանը հաճախ տեսնում էր նաև իր մորը: Խեղճ կինը մի պահ ընդհատում էր աշխատանքը, դաստակով ետ էր տանում մազերը քրտնած ճակատի վրայից, ժպտում էր երեխաներին և հպարտությամբ նայում իր տղայի ետևից:

Ձորը, երկու բարձր լանջերի միջև սեղմված, ձգվում էր երկար: Աջակողմյան լանջի ամենաբարձրում երևում էին քաղաքի փողոցների վերջավորություններն իրենց տներով: Ձախակողմյան բլուրի վրա երկար ձգված էր Ալեքսանդրապոլի հայտնի բերդի քարե, խուլ պարիսպը: Ավելի ներքև, երկու լանջերի վրա ևս, այստեղ ու այնտեղ, կանգնած էին հավիտյան փակ «ցեյխաուզները», որոնց մոտ գնում-գալիս էին ռուս ժամապահների լուռ կերպարանքները:

Քիչ հետո սկսվում էր ձորի ամենագեղեցիկ մասը: Ձորը լայնանում էր, բուսականությունը դառնում էր ավելի առատ, և ահա, մյուս ափի վրա կանգնած փայտաշեն կամարն ավետում էր, որ դու մտնում ես Ալեքսանդրապոլի «բարձր հասարակության» սիրած իրիկնային զբոսավայրը: Ջրի թե մի ափի վրա և թե մյուս գտնվում էին զբոսավայրի կառուցումները. ամառային փայտաշեն ռեստորան՝ մարմարե կլոր սեղանակներով, խաղատուն, վաճառքի կիոսկներ, զրուցարաններ… Ողորկ ցեմենտած մի կլոր հրապարակ շրջապատված էր փայտե գույնզգույն, բարակ սյուներով: Դա «սկետինգռինգն» էր: Սյունից-սյուն ձգված էին պղնձե փայլուն լարեր, լարերից կախված էին բազմաձև ու բազմագույն չինական լապտերներ՝ կարտոնե տակերով և «գարմոշկայի» պես ծալծլված թղթե կողերով՝ խողովակաձև, քառանկյուն, եռանկյուն, աստղաձև, լուսնաձև… Երեկոները, քաղաքի «բարձր հասարակության» երիտասարդները և նույնիսկ տարիքավոր, հաստափոր իրավաբաններն ու «գրանդ-դամաները», ոտքերի վրա հագնելով չորսական անիվներ ունեցող կոշիկ-սայլակներ, զույգ-զույգ կամ մենակ «սահում» էին այդ ցեմենտի վրա՝ ինչպես չմշկավորները սառցի վրա:

Ցերեկով կյանքը կանգ էր առնում այդ ձորում, իսկ երեկոյան նորից վառվում էին գազի լամպերն ու չինական լապտերների մոմերը, ռեստորանի կողմից նորից տարածվում էր խորովածի հոտը, նորից հնչում էր փողային և լարային նվագախմբերի երաժշտությունը…

Իսկ այժմ շուրջը ոչ ոք չկար, ոչ ոք… Բայց ոչ, ահա դիմացի ափի վրա երևացին երեք երեխաներ՝ մի պառավի ուղեկցությամբ: Դրանք ծանոթ ճոթավաճառի երեխաներն են, բոննան գիտե նրանց, ուստի և թույլ է տալիս, որ Ցողիկն ու Վարդանը խաղան նրանց հետ միասին՝ իբրև հավասարները հավասարների:

Երեխաները մագլցում են լանջերով վեր, թփերի վրայից հավաքում են սպիտակ «բոժոժներ», լցնում իրենց գրպանները և, բերելով տուն, դնում են որևէ տեղ՝ հետագայում դրանց հետ խաղալու համար: Երբ մի քիչ հետո նրանք բակից մտնում են տուն, չեն կարողանում հավատալ իրենց աչքերին, բոժոժների կույտը շաղ է եղել բնակարանով մեկ:Սեղանների և աթոռների ոտքերին, նկարների շրջանակներին, լուսամուտների փեղկերին, ամեն տեղ հատ-հատ կպել ու անշարժացել են բոժոժները…

Երբ երեխաները հասան դպրոցական տարիքի, Վարդանին ուղարկեցին «վիճակային» դպրոց, իսկ Ցողիկի համար վարձեցին երկու «ռեպետիտոր»: Բայց Վարդանը փուչ վիճակ հանեց և չընկավ դպրոց, իսկ Ցողիկը, ծնողների համար անսպասելի կերպով, ցույց տվեց լիակատար անտարբերություն դեպի ուսումը և շուտով սկսեց ձանձրանալ պարապմունքներից, ապա նաև խուսափել: Ոչ հորդորները, ոչ սպառնալիքները, ոչ նույնիսկ մի երկու անգամ մոր տված հարվածները նրա «փափուկ տեղին»՝ չտվեցին ոչ մի արդյունք: Երեխան նստում էր՝ դեմքով դեպի լուսամուտը, նայում էր դեպի բակ, հորանջում կամ հառաչում:

— Скучает по жениху,— քմծիծաղով ասաց մի անգամ Ցողիկի մեծ քույրն իր մորը: Նա միշտ էր жених անվանում Վարդանին:

Ցողիկի մայրը փորձեց դիմել այդ վերջին միջոցին և մի անգամ, պարապմունքի ժամանակ, կանչեց նաև Վարդանին: Արդյունքը վեր էր ամեն սպասածից: Ցողիկը ոչ միայն տարվեց պարապմունքով, այլև հիանալի յուրացրեց դասը:

— Нет, тут была не тоска по «жениху», а отсутствие духа соревнования,— ասաց Ցողիկի հայրը երեկոյան:— Ну что ж, пусть учатся вместе. Ведь за это прибавки не полагается репетиторам!..

Ահա այդպես եղավ, որ Վարդանը հաջորդ տարի այլևս հարկադրված չեղավ նորից վիճակ հանելու և չորս տարի շարունակ, մինչև Ցողիկենց ընտանիքի մեկնելը Ալեքսանդրապոլից, ստացավ տնային կրթություն: Ինքնամոռացության աստիճան սիրելով ընթերցանությունը, նա ամենայն ազատությամբ օգտվում էր նաև Ցողիկենց հարուստ գրադարանից՝ համարյա առանց բացառության ռուսերեն գրքերով: Եվ գլխավորն այն է, որ դա «հետաքրքիր վեպեր» լափելու կիրք չէր նրա մոտ, այլ սովորելու, ավելի և ավելի շատ բան իմանալու բնածին ու անսահման մի

պահանջ: Շուտով Վարդանը դարձավ բացառիկորեն կարդացած ու բանիմաց երեխա և,ինչ խոսք, որ այդ հարցում շատ ու շատ ետ թողեց իր անբաժան ընկերուհուն:

Եվ ահա, աշխարհը խառնվեց իրար, տակնուվրա եղավ նաև Վարդանի ներփակ կյանքն այդ խաղաղ տանը: Ցողիկենց ընտանիքը, վախենալով քաղաքի մոտիկությունից թուրքական սահմանին, հավաքեց-պահեց տան բոլոր իրերն ու կահ-կարասին, քրեհով տվեց բնակարանն ինչ-որ մանր առևտրականի և մեկնեց «ներսերը»՝ ինչպես արտահայտվում էր Վարդանի հայրը:

Երկու անգամ, 18 և 20 թվերին, թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը և երկու անգամն էլ ստիպված եղան ազատել՝ կարողանալով, սակայն, իրենց տիրապետության ամիսների ընթացքում բնաջնջել մարդկանց մի զգալի մասը, ավարառել քաղաքը և ավերել այնտեղ շատ բան: Քաղաքը տեսավ տասնյակ հազարավոր գաղթականների՝ արևմտահայ կոտորածներից մազապուրծ եղած: Ցողիկենց տան սովորաբար փակ դարպասի հաստ ու ծանր փեղկերը գողացան և վառեցին: Փոքրիկ բակը, որն իրապես ծառերի ու ծաղիկների մեջ կորած մի պարտեզ էր, բաց մնաց ամեն մի ներս մտնել ուզեցողի հանդեպ: Մի քանի գիշերում գողացան մեղրաճանճի փեթակները, կանաչ նստարանները, աժուր զրուցարանը... Տրորեցին մեխակի, նարգիզի ու մարգարիտկաների ածուները, ջարդեցին վարդերի ու յասամանի թփերը, ճղակոտոր արեցին փոքրիկ տանձենիները, խնձորենիները, կեռասենիները…

Սակայն ոչ միայն ներփակ պարտեզը, այլև տասներկու տարեկան Վարդանի ամբողջ կյանքն էր կրնկի վրա բացվել աշխարհի բոլոր քամիների հանդեպ: Նրա հայրը մահացավ, մայրը կորցրեց իր երբեմնի ուժն ու աշխատունակությունը, Վարդանն ստիպվեց լուցկու և կանաչեղենի վաճառքով օգնել իր մորը: Նա սկսեց շփվել իր հասակակիցների հետ, որոնցից կտրված էր եղել այդքան ժամանակ: Նա տեսավ քաղաքը, որը մինչ այդ ծանոթ չէր նրան: Նա ականատես և նույնիսկ մասնակից եղավ աշխարհի խոշոր դեպքերին՝ գավառական այդ քաղաքում արձագանքված. պատերազմ, քաղաքացիական կռիվներ, Մայիսյան ապստամբություն, Նոյեմբերյան հեղափոխություն, դաշնակցականների տապալում, կոմունիստների հաղթանակ…

Ինչ խոսք, որ ութ տարի ժամանակը՝ տասներկու տարեկանից մինչև քսան տարեկանը, ավելի շատ է գիտակցական կյանքի տեսակետից, քան թե դրան նախորդող տասներկու տարիները: Ուստի և Վարդանի անցյալը մնաց նրա մոտ որպես գեղեցիկ, բայց հեռավոր հուշ, որը շարունակ խամրելով, կորցրեց իր գրավչությունը, մինչև որ ընկավ մոռացության գիրկը: Ոչնչով, բացարձակապես ոչնչով, նա այժմ չէր տարբերվում քաղաքի բոլոր մյուս երիտասարդներից: Իհարկե, նա շատ ավելի կարդացած էր, տիրապետում էր ռուսերեն լեզվին և ընդհանրապես շատ զարգացած երիտասարդ էր: Բայց դա չէր կարևորը, այլ այն, որ նրա և մյուսների կեցությունը, նրա և մյուսների բախտը, նրա և մյուսների ուղիները նույնն էին, չկար նրանց միջև ոչ մի տարբերություն:

Հեղափոխությունը կյանքի և ակտիվ գործունեության էր կոչել գյուղի և քաղաքի հոծ մասսաներին, այդ թվում նաև երիտասարդությանը: Կուլտուրայի, գիտելիքների, կրթության, կենցաղավարության, դաստիարակության այն մակարդակը, որը կար հին հասարակության, դրա «արիստոկրատիայի», դրա «ոսկե երիտասարդության» և նույնիսկ երեխաների մոտ, այդ նոր երիտասարդության մոտ գտնվում էր անհամեմատ ցածր մակարդակի վրա: Ոչ թե ռուսերեն ու ֆրանսերեն սովորելու, այլ տարրական անգրագիտությունը վերացնելու հարցն էր դրված օրակարգում: Ոչ թե անձեռոցիկ գործածելու և պատառաքաղ բռնելու «լավ տոն» յուրացնելն էր մտահոգում նրանց, այլ ամենօրյա սև հաց վաստակելը: Հայերեն մաքուր լեզուն խճողվել էր գավառաբանություններով, ժողովրդի խիստ հետամնաց խավերից եկող թրքաբանություններով և պարզապես ականջ ծակող աղավաղումներով…

Ամեն, ամեն տեղ կարելի էր տեսնել կյանքի «միջին մակարդակի» այդ ծայր աստիճան ցածրացումը: Կյանքը պետք էր սկսել նորից, ամենասկզբից, ընդ որում, այժմ դա պետք է սկսեին ոչ թե փոքրաթիվ երջանիկները, այլ ժողովրդի և նրա երիտասարդության ամենալայն զանգվածները…

Վարդանը լիովին մերվել էր նրանց հետ: Ճիշտ է, նա չէր իջել մինչև այդ ցածր մակարդակը,— դա և՝ անցանկալի էր, և՛ անկարելի նրա համար, բայց նա գիտեր, որ կարևորն իր և մյուսների դաստիարակության ու կրթության տարբերությունը չէ, այլ իր և նրանց գոյավիճակի ընդհանրությունը:

Վարդանը դարձավ պիոներ, ապա մտավ կոմերիտմիության մեջ, որոշ ժամանակ աշխատեց քաղլուսգլխվարի հիմնարկներում, ապա իրագործեց իր երազը՝ փոխադրվեց Երևան: Նրա մայրը, որն այժմ աշխատում էր կարի պետական արհեստանոցում և ապրում էր մի ուրիշ, ավելի փոքր, բայց ավելի բարեկարգ բնակարանում, սիրով ընդառաջեց իր տղայի ցանկությանը՝ դուրս գալ կյանքի ավելի լայն ասպարեզ:

10

Ութ տարի շարունակ և մանավանդ վերջին վեց տարին Վարդանը համարյա բոլորովին չէր հիշում ոչ Ցողիկին և ոչ էլ իր մանկությունը: Իսկ երբ հիշում էր, այդ հուշերն առանձնապես չէին հուզում նրան ոչ մի տեսակետից. նա լիովին ապրում էր ներկայով:

Բայց ահա, այս տարի, գարնանից ի վեր, հին հուշերը հախուռն թափով ներխուժել էին նրա էության մեջ: Եվ այդ հուշերի կենտրոնում կանգնած էր Ցողիկը… Տարօրինակ էր, որ նա ներկայանում էր նրան ոչ որպես նախկին երեխան, այլ որպես չափահաս աղջիկ… Ուրեմն, Վարդանից անկախ, նրա մտապատկերների մեջ աճել-մեծացել էր նրա մանկության ընկերուհին, ստացել աղջկա կերպարանք, որը Վարդանն այնքան պարզ տեսնում էր իր առջև: Եվ ամեն անգամ, երբ երիտասարդը հիշում էր նրան, հուզմունքը պաշարում էր նրա ողջ հոգին և մարմինը: Մանկության ամեն մի հուշ այժմ սիրելի էր նրան՝ պայմանով, եթե այնտեղ կար Ցողիկը: Իսկ որտե՞ղ չկար Ցողիկը…

Ի՞նչ էր այդ, հիասթափություն ներկայի՞ց, կարոտ դեպի «հին կյա՞նքը»՝ ինչպես բնորոշում էր ամեն մի վերհուշ Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը: Ոչ, Վարդանն զգում էր և հասկանում, որ այդ նրա էության դռներն էր թակում արբունքը…

Ինչպե՜ս կսիրեր նա հիմա Ցողիկին, կսիրեր՝ հակառակ Վահրիճի ահաբեկումների, ինչպե՜ս կշշնջար նրա ականջի մոտ սիրաբորբոք բանաստեղծություններ Տյուտոչևից ու Ֆետից, Բրյուսովից ու Բլոկից, Տերյանից ու Իսահակյանից… Կնստեին նրանք միասին՝ ահա այստեղ՝ հենց այս ժայռի վրա, կնայեին ներքև, կիհանային Զանգվի ձորով, ապա կհիշեին իրենց գեղեցիկ մանկությունը…

Ինչպե՜ս կսիրեր նա հիմա Ցողիկին…

Բայց գարնանից ի վեր, մանկության հուշերի ներխուժման հետ մեկտեղ, մեծ բեկում էր սկսվել նաև Վարդանի հայացքների մեջ՝ կյանքի և դրա երևույթների նկատմամբ: Եթե իր և իր երեք կոմերիտական ընկերների կյանքն ու կենցաղը նա մինչ այդ համարել էր միանգամայն նորմալ «նոր կենցաղ», ապա այժմ, անկախ իրենից, սկսել էր այդ բոլորին նայել կարծես թե Ցողիկենց տնից: Նայելով այնտեղից, նա ցավով էր տեսնում, թե որքան աղքատ են ապրում նրանք, որքան վատ է՝ քնել թախտերի, և ոչ թե զսպանակավոր մահճակալների վրա, չունենալ հարուստ անկողիններ և անկողինների ծածկոցներ, չունենալ վարագույրներ, գորգեր, սփռոցներ, չունենալ նույնիսկ սեղան և աթոռներ... Նա այժմ լուռ տխրությամբ էր նայում հացը, պանիրն ու «խավողն» ագահ բավականությամբ ուտող Գառնիկին ու Մուրադին, և գիտեր, որ այդ նախաճաշը, որքան էլ որ ոչ-վատ, բոլորովին էլ չէր գրավում «առաջին տեղը»: Նա արհամարհական խղճահարությամբ էր լսում Վահրիճի ատելության խոսքերը հարևան ընտանիքի տարածած «մեշչանական հոտերի» մասին:

Քանի-քանի անգամ, փողոցով անցնելիս, ոչ միայն Գառնիկը, այլև նա ինքը ծաղրել էին փողպատ կապած տղամարդկանց՝ համարելով փողպատը համարյա թե ցարիզմին հավատարիմ մնացած

լինելու ապացույց: Բայց այժմ նա հասկանում էր, որ հիմարություն է՝ «ապադասակարգային» փողպատը մեղադրել դասակարգային սարսափելի հանցագործությունների մեջ:

Շատ և շատ բան Վարդանի շուրջը նրան այլևս չէր գոհացնում:Ու թեև նա գիտեր իր իրավացիությունը, գիտակցում էր իր գերազանցությունը, բայց հենց դա վախով ու տագնապով էր լցնում նրա հոգին: Նա տեսնում էր, որ իր և իր ընկերների միջև ստեղծվում է ինչ-որ ներքին տարածություն, որ ինքն ու նրանք հեռանում են իրարից: Բոլորովին էլ կարևոր չէր այն, որ այդ տարածության մեջ ինքն առջևումն էր, իսկ նրանք՝ ետևում, կամ ինքը վերևումն էր, իսկ նրանք՝ ներքևում: Կարևորն այն էր, որ այդ տարածությունը կար, դա անջատում էր նրանց իրարից, և ո՞վ գիտե, ժամանակի ընթացքում կարող էր ավելի մեծանալ…

Իր ժամանակին նա Գառնիկին ու Մուրադին պատմել էր խիստ համառոտ, թե ովքեր են եղել իր ծնողները, և անցողակիորեն հիշատակել էր նաև իրենց տան տերերի ընտանիքի մասին: Ընկերները գոհացել էին դրանով և այլևս ոչինչ չէին հարցրել, իսկ Վարդանն ինքը, առանց որևէ բան թաքցնելու մտադրության, այլ պարզապես կարևորություն չտալով այդ անցյալին, այլևս չէր անդրադարձել դրան:

Իսկ այժմ, երբ այդ անցյալը հանկարծակի ստացել էր այդպիսի կարևորություն նրա համար, նա, իրոք որ, ինքն էր խուսափում այլևս պատմել դրա մասին իր ընկերներին: Դա ավելի կմեծացներ տարածությունն իր և նրանց միջև՝ հեռացումը կատարելով երկուստեք:

Բացի դրանից, Վարդանի հուշերի մեջ կար մի բան, որը ետ էր պահում նրան որևէ մեկին պատմելու ցանկությունից: Դա Ցողիկն էր: Նա համոզված էր, որ իր մանկության ընկերուհու նկատմամբ տածած իր հույզերն ու զգացմունքները պատմվելիս կկորցնեին իրենց նրբությունն ու քնքշությունը, մաքրությունն ու երազայնությունը, կդառնային վիրավորական զրույց աղջկա հասցեին: Ինչպե՞ս կարելի է պատմել ամենանվիրական բանի մասին, ինչպե՞ս կարելի է գոռոզամտորեն իրեն համարել ընդունակ՝ լեզվով արտահայտելու այն ամենը, ինչ զգում է հոգին: Իսկ եթե դա անհնար է, ուրեմն էլ ինչո՞ւ պատմել և անցյալի չքնաղ հուշն ակամայից ներկայացնել որպես մանկահասակ տղայի ու աղջկա մի սովորական պատմություն: Ավելորդ էր նույնիսկ այն, որ նա այսօր առավոտյան, անծանոթ աղջկա ետևից նայելուց հետո, մի երկու խոսք ասաց իր ընկերներին Ցողիկի մասին: Լավ էր, որ Վահրիճը որևէ ափեղցփեղ բան չասաց Վարդանի համար այնքան նվիրական աղջկա և նրա հուշի հասցեին, այլապես Վարդանը խաղողի մի դատարկ քթոցով կծածկեր լողլողին և ինքը կնստեր վրան՝ թույլ չտալով Մուրադին՝ ազատել իր տակից Մալարիայի հիվանդանոցի քարտուղարին:

11

Դեռ նախքան փոքրիկ քարակտորի վայր ընկնելը՝ Վարդանն արդեն զգաց, որ մեկը եկավ-կանգնեց իր գլխավերևում: Նա վեր բարձրացրեց գլուխը:

Պատի ետևում, ծնկներից հետ պատով ծածկված, կանգնած էր մի երիտասարդ, գեղեցիկ աղջիկ, բայց գուցե և ոչ գեղեցիկ, ո՞վ գիտե. նա ուներ այնպիսի խոշոր, մուգ, հայկական աչքեր, որ անհնար էր ասել՝ դրա՞նք էին իրենց գեղեցկության շողքը գցել դեմքին, թե՞ դեմքն անկախ դրանցից էլ գեղեցիկ էր:

Պատի բարձրում կանգնած աղջիկը բացարձակապես ոչնչով չհուզեց Վարդանին, ոչ դուր եկավ, ոչ ընդհակառակը, ոչ զարմացրեց, ոչ հետաքրքրեց: Բայց նրա հայտնվելն ու քարակտորի, անշուշտ, դիտմամբ վար նետելը միանգամից ցրեցին նրա մանկության պատկերները: Ոչ միայն ցրեցին պատկերները, այլև վանեցին երիտասարդին պաշարած երազկուն ու թախծոտ տրամադրությունը: Նա այժմ նորից սովորական կոմերիտական էր՝ մեկն իր նման հազարավոր մյուսներից:

— Խի՞ ես նստե ըտի,— հարցրեց աղջիկը զարմացած:

— Հենց նոր եկա:

— Չի ըլի՞, որ սուտ չխոսաս: Վրա իրեք անգամն ա, որ գալի, մտիկ եմ անում: Քիչը որ ասեմ՝ իրեք սահաթ կա, որ ըտի ես: Էդ հլա իմ տեսածով:

Վարդանը, առանց աղջկա հետ լեզվախաղ անելու որևէ ցանկության, այլ հենց այնպես, իր սովորական զվարճասիրությունից դրդված, ասաց հառաչանքով.

— Ուզում եմ վար գցել ինձ, վերջ տալ կյանքիս:

— Բա էլ խի՞ ես երկար-բարակ մտիկ անում,— զարմացավ աղջիկը,— էդ բանը մի րոպվա գործ ա, քցի՝ պրծավ-գնաց: Տղամարդն էլ էդքան երկար մտածի՞: Էրևում ա՝ առաջին անգամն ես քեզ գցում, հա՞:

— Վախենում եմ՝ չմեռնեմ, միայն ոտք ու մոտքս ջարդվի, ինվալիդ մնամ:

— Էդ՝ իրավունք ունես,— համաձայնեց աղջիկը:— Որ ըտենց ա՝ անցի մի քիչ դեսը, ընտի ծառ ու թփի տեղակ ոտիդ տակ քար ու քռա կլի: Սաղ տեղդ անկաջդ կմնա, անհոգ կաց:

Վարդանը վեր կացավ:

— Շնորհակալություն, ընկերուհի: Եվ մնաս բարև: Իմ մահվան մեջ ոչ ոքի չմեղադրել:

— Ո՞ւմ ինչ գործն ա: Բայց հլա կաց: Դու ինչի՞ ես ուզում քեզ ջնջխել:

— Սիրահարված եմ:

— Հա՛…— ծոր տվեց աղջիկը:— Որ ըտենց ա՝ իրավունք ունես, գնա: Ուրեմս նա քեզ չի՞ սիրում: Նա էլ իրավունք ունի, դու ի՞նչ սիրելու բան ես:

— Ինչո՞ւ,— վիրավորվեց Վարդանը,— բա ի՞նքն ինչ է: Քեզ նման մի անճոռնիին:

— Ինչքան էլ անճոռնի ըլի՝ էլի աղջիկ է,— դատողաբար նկատողություն արեց վերևում կանգնածը:— Ուրեմս մի արժենք ունի, որ դու նրա համար քեզ ես ճղում:

Վարդանին և՛ դուր էին գալիս աղջկա հնարամիտ պատասխանները, և՛ դրդում էին անպայման գտնել դրանցից ուժեղ պատասխաններ և չպարտվել: Բայց աղջկա վերջին խոսքերից հետո նա ոչինչ չգտավ ասելու և զայրացավ իր վրա: Դրությունն ակամայորեն փրկեց աղջիկը՝ հարցնելով.

— Հետաքրքիր ա, թե էդ ով ա: Չե՞մ ճանաչի:

— Դու ես, անգութ:

— Խի դու ինձ շուտո՞ւց գիտես:

— Այո: Ինչպես որ մի երկու անգամ դու եկել-նայել ես ինձ, իսկ ես չեմ նկատել քեզ, էնպես էլ մի քանի անգամ ես եմ տեսել քեզ՝ էս մի երկու ամսվա ընթացքում, իսկ դու՝ ոչ…

— Դու վրա քսանչորսն ես, որ քեզ վար ես քցում իմ պատճառով,— հայտնեց աղջիկը մտահոգված:— Ու բոլորդ էլ՝ մեր քռիցը: Ուրիշ տեղ չկա՞, ինչ է: Մեր քռեն խո ձեզ համար զիբիլխանա չի՞: Ուզում եք, որ միլիցիան մեզ տուգանի՞ հակասանիտարական պատճառով: Առանց էն էլ ծուռ աչքով են մտիկ անում, թե բաղմանչիներ եք:

— Ուրեմն ներողություն, ընկերուհի,— ասաց Վարդանը՝ զգալով, որ սոված է և պետք է գնալ, հետևաբար պետք է ավարտել խոսակցությունը:— Որ էդպես է՝ ես ուրիշ տեղ վերջ կտամ ինձ:

— Հլա կաց,— ասաց աղջիկը տեսնելով, որ կոմերիտականն արդեն գնում է:— Էն քսանիրեքն իրենց քցելուց առաջ ինձնից «չէ» են առել, հետո են քցել: Բա դու ինձ հետ խոսե՞լ ես, բա ես քեզ «չէ» ասե՞լ եմ որ: Բալքի «հա» եմ ասում…

Վարդանն արագ բարձրացրեց գլուխը և խուզարկու նայեց աղջկա աչքերին: Ոչ, նրա վերջին խոսքերն արդեն կատակ չէին... Իսկ եթե լուրջ էին, ուրեմն ի՞նչ, աղջիկն արդեն սիրահարվե՞ց նրա վրա…

Գուցե Վարդանը, իր տարիքին հատուկ ինքնավստահությամբ, բայց ոչ ինքնահավանությամբ, այդպես էլ մտածեր՝ եթե աղջիկն արտասանած չլիներ «բաղմանչի» բառը: Այդ բառը բացատրում էր ամեն ինչ: Դա առաջին «մասնավոր սեփականատիրոջ» աղջիկը չէր, որն ուզում էր ունենալ կոմերիտական ամուսին՝ փոխելու համար իր «սոցիալական դրությունն» անկետաներում և կյանքի հանգամանքներում, գտնել իր տեղն արևի տակ…

Նայելով աղջկա խոշոր աչքերին, որոնց մեջ այժմ նկատվում էր ինչ-որ թաքցրած թախիծ, Վարդանը մեծ կարեկցություն զգաց դեպի նա: Վարդանը գիտեր, թե որքան դժվար բան է հայ աղջկա համար՝ առաջարկել իր պատրաստակամությունը տղային՝ թեկուզև կատակով, երբ տղան դեռևս ոչինչ չի ասել և գուցե չասի էլ երբեք…Եվ այդ ամոթանքը, երևանցի աղջկա ինքնասիրությունը հոշոտող այդ ստորացումը՝ հոր «բաղի» պատճառով…

— Տուր ձեռքդ,— ասաց աղջիկը՝ խոնարհվելով ու ներքև երկարելով իր ձեռքը:— Էլ խի՞ պտիտ տաս, մեր բաղի միջով դուզբադուզ դուրս կգաս քուչեն:

Վարդանը բռնեց նրա ձեռքը և մեջքով ետ ձգվեց՝ թափով առաջ նետվելու և պատի վրա ցատկելու համար:

— Հմի որ ձեռքս թողամ՝ սաղ կտորդ ի՞նչդ կմնա, կոմսոմոլիստ,— ծիծաղեց աղջիկը:

Վարդանը պատկերացրեց և նրա մեջքով մրջյուններ անցան:

— Բայց դու կարո՞ղ ես վեր քաշել ինձ,— հարցրեց նա աղջկան:— Հանկարծ ես ինքս ներքև չքաշեմ քեզ ինձ հետ…

— Քեզ հետ՝ կարելի է, ես հակառակ չեմ,— ասաց աղջիկը, և դեռ տղան չէր ոստնել առաջ, երբ ձգեց-բարձրացրեց նրան իր մոտ:

Վարդանը զարմացած նայեց նրա նուրբ կազմվածքին: Ո՞րտեղից էր նրա մեջ այդքան ուժ…

— Բա դու ի՞նչ գիտայիր,— կարծես հասկանալով նրա միտքը, ասաց աղջիկը հպարտ, բայց և թախիծով:— Ուրեմս, որ բաղմանչու աղջիկ ենք՝ ուժ է՞լ չպիտի ունենանք: Իմ մարդը կարա ինձ վրա հույս դնի՝ ոնց որ մեջքի ետևը կաղնած սարի...

Նրանք լուռ անցան խաղողի թփերի և դեղձենիների արանքով: Դիմացը, մի քանի քայլ այն կողմ, կանգնած էր մեկ և կես հարկանի փոքրիկ տունը:

— Հավող պատիվ չանե՞մ քեզ,— հարցրեց աղջիկը:— Լավ խարջի ունենք, եզանդարի, քիշմիշի…

— Շնորհակալություն…

— Քու գործն ա…

Երբ նրանք մոտենում էին տանը, Վարդանը հարցրեց՝ լուռ չմնալու համար.

— Քաղաքի ո՞ր ծայրին է ձեր բաղը:

— Բա չտեսա՞ր,— զարմացավ աղջիկը,— էդ էր, որ անցանք:

— Ուրեմն ուրիշ բաղ չունե՞ք…

— Խի՞, ո՞վ ա տվել:

Վարդանը շուռ եկավ և նայեց մի թաշկինակաչափ այդ տարածությանը՝ մի տասնյակի չափ ծառերով և մի քանի տասնյակ վազերով: Դա էր աղջկա բախտի ճանապարհը կտրած «բաղը»... Կոմերիտականի սիրտը ճմլվեց ավելի շուտ, քան նա կորոշեր գլխով՝ ճի՞շտ էր դա «դասակարգայնորեն», թե ոչ…

Երբ փոքրիկ դարպասով նրանք դուրս էին գալիս փողոց, աղջիկն ասաց.

— Բա գնալուցդ առաջ խի՞ չես հարցնում, թե ոնց ա իմ անումը... թե՞ հաշվում ես, որ հլա չենք ծանոթվել…

— Ծանոթվել ենք,— պատասխանեց Վարդանը նրա բառով:— Իմ անունը Վարդան է:

— Դե որ ըտենց ա՝ մենք էլ Աստղիկ ենք: Միտդ պահի: Սարը սարին չի հանդիպիլ, բայց մարդը մարդին կարա հանդիպի: Ո՞վ իմանա…

12

Մի հաղթանդամ գյուղացի՝ Հայաստանի լեռնային շրջաններից, երկրորդը՝ միջահասակ, «փեշերի» գյուղերից, և երրորդը՝ փոքրամարմին, մալարիտիկի տեսքով, դաշտային շրջաններից, Մուրադի ուղեկցությամբ շրջում էին քաղաքի խանութները: Մուրադի հայրենակիցն առաջին գյուղացին էր: Վերջինը դրա խնամին էր՝ աղջկա հայրը: Երկուսով պայմանավորվել և եկել էին քաղաք՝ «հարս ու փեսի», ինչպես նաև հարսանիքի համար հարկ եղած գնումները կատարելու:

Երրորդ գյուղացու հետ Մուրադի համագյուղացին ծանոթացել էր միայն պանդոկում և տեղեկանալով, որ նա ևս անծանոթ է քաղաքին և նույնպես եկել է գնումներ կատարելու, հպարտացել էր, որ ունի մի լավ «ախպոր տղա», որն այսօր «վալադ» է դառնալու նրանց համար քաղաքում, և առաջարկել էր այդ գյուղացուն՝ միանալ իրենց:

Տարբեր հասակի ու մեծության, երեք գյուղացիներն էլ ուսերի վրա գցել էին գույնզգույն խուրջիններ, որոնք առայժմ դատարկությունից սմքած, սպասում էին «ապրանքի»: Երեք գյուղացիներն էլ քայլում էին մի տեսակ ուղտավարի, վեր ու վար ճոճվող քայլվածքով: Քայլելով խառնատոտիկ, նրանք իրենց գլուխներով և ուսերով անընդհատ ալիքավորվում էին վեր ու վար:

Մուրադն իրեն որոշակիորեն անհարմար էր զգում նրանց հետ: Նա մի քիչ հեռվանց էր քայլում նրանց խմբի կողքով և ուներ դեմքի մի այնպիսի արտահայտություն, կարծես ծանոթ էլ չէր նրանց հետ: Եվ եթե, չնայած դրան, նա հանձն էր առել ուղեկցել նրանց, ապա պատճառն այն էր, որ արդեն լինելով քաղաքի «շինարար» բանվոր, նա իր հոգու մի անկյունում, այնուամենայնիվ, դեռ մնացել էր գյուղացի և խիստ հետաքրքրվում էր գյուղի կյանքով: Խանութից-խանութ անցնելիս, առևտուր անելուց ազատ րոպեներին, երբ շրջակայքում չկար նրան ճանաչող որևէ երիտասարդ, նա հարցեր էր տալիս իր խոսակիցներին և հատկապես իր համագյուղացուն, որը նաև հեռավոր բարեկամ էր նրան:

Ահա այդ հարցուփորձն էր պատճառը, որ նա չէր ուզում բաժանվել նրանցից, չէր անհանգստանում, երբ գյուղացիները երկար-բարակ զննում էին մի չիթը, ապա մյուսը, երրորդը, որից հետո անցնում էին մի այլ խանութ, երրորդը, ապա նորից վերադառնում էին երկրորդ խանութը, առաջինը, նորից դարակներից վար էին բերել տալիս մի չիթը, երկրորդը, երրորդը…

Իսկ հետո նույնը կոշկեղենի հետ և այդպես շարունակ:

Երբ վերջապես բոլոր գնումներն ավարտվեցին, կեսօրը վաղուց էր անցել և ճաշելու ժամանակ էր: Մուրադի համագյուղացին ասաց.

— Դե հմի, Մուրադ ջան, մեզ տար ճաշ ուտելու մի օթախ: Ընենց տեղ ըլի, որ ոնչ շատ թանգաբազար, ոնչ էլ շատ ղոռադա:

Մուրադը մի պահ մտածեց տանել նրանց այնտեղ, որտեղ սովորաբար ճաշում էին ինքն ու իր ընկերները և ընդհանրապես երիտասարդությունը: Բայց հիշելով, որ Գառնիկը կարող է լինել այնտեղ և տեսնել նրանց, նա հրաժարվեց այդ մտքից: Ամեն բանի մեջ ծիծաղելին փնտրող Գառնիկի աչքից անշուշտ չէին վրիպի խուրջինավոր գյուղացիները, և երկար ժամանակով Մուրադը կդառնար ընկերոջ ծաղրանքի առարկան:

Մուրադը քայլերն ուղղեց դեպի մի ուրիշ ճաշարան՝ նույնքան անշուք և հասարակ: Բայց երբ գյուղացիները ներս մտան նրա ետևից, մալարիտիկը բացականչեց իր տեսքին վայել նվազ ձայնով.

— Այ տա, էս ո՞ւր բերիր մեզ, էս հո պալատ ա: Ըստի, հալբաթ, մեր առածներն էլ որ տանք, էլի յախաներս չենք ազատի:

Մյուս երկուսը հարցական նայեցին կոմերիտականին:

— Մի վախենաք,— ծիծաղեց Մուրադը,— մենք ամեն օր ենք էս տեսակ տեղերում ճաշում:

— Դուք՝ ուրիշ բան, Մուրադ ջան, դուք նաղդի փող ստացող մարդիկ եք, մենք կարա՞նք ձեզ հետ ոտք քցի,— ասաց համագյուղացին:

— Դրուստ, շատ չե՞ն պլոկի,— հետաքրքրվեց «փեշերի» գյուղերից եկածը:

— Նստեցեք, նստեցեք,— ասաց Մուրադը զվարթ,— խուրջինները դրեք սեղանի տակ:

— Էլ սեղանի տա՞կս որն է,— ասաց մալարիտիկը,— ստոլի վրա մի օրավար տեղ կա: Դնենք աչքներիս առաջ, թե չէ՝ կտանեն, վրեքս խաբար չի ըլի:

Մուրադը պատկերացրեց երեք ահագին խուրջինները սեղանի վրա դիզված, և նրան պաշարեց մեկն այն անզուսպ ծիծաղներից, որոնք ընկնում էին նրա փորը և համարյա շնչահեղձ անում նրան:

Գյուղացիները՝ զարմացած, խուրջինները դեռ ուսերի վրա, սպասում էին նրա ծիծաղի ավարտվելուն, որպեսզի որոշեն վերջապես՝ ո՞րտեղ դնել իրենց բեռը: Բայց ծիծաղը վերջանալու հույս չէր ներշնչում և շարունակ իջնում էր Մուրադի փորի ավելի խորքերը: Երիտասարդը հազիվ կարողացավ ձեռքով ցույց տալ սեղանի տակը: Վերջապես գյուղացիները բեռնաթափվեցին և նստեցին: Նստեց նաև կոմերիտականը:

Մոտեցավ մատուցողը, մի գնահատող հայացք նետեց նստածների վրա և ճաշացուցակը երկարեց Մուրադին: Մուրադը, որն արդեն դադարել էր ծիծաղելուց, վերցրեց թուղթը, բայց թուղթը հանկարծ սկսեց ցնցվել նրա ձեռքում, միաժամանակ սկսեցին լխկլխկալ նաև նրա ուսերը: Բայց նա մի կերպ զսպեց իրեն և հարցրեց սեղանակիցներին.

— Ո՞վ ինչ է ուզում. առաջին պորցիաներից կա սուպ ու բորչ:

— Մուրադ ջան, դու մեր վալադն էս՝ դու էլ ջոկի,— ասաց լեռնցին:

— Չորս բորչ,— պատվիրեց կոմերիտականը:

— Բո՞րշչ,— ուղղելով նրան, հարցրեց մատուցողը՝ ոչ առանց նենգության:

— Բորշչ, բորշչ,— կարմրեց Մուրադը:

Մատուցողի գնալուց հետո համագյուղացին դիմեց նրան.

— Դե հմի ասա, Մուրադ ջան, ե՞րբ պտի ետ դառնաս գեղ:

— Ինչո՞ւ դառնամ որ,— զարմացավ երիտասարդը:

— Էդ ի՞նչ խոսք է, թե ընչի,— ավելի զարմացավ գյուղացին:— Դառնաս, որ հորդ ու մորդ օջախը շենացնես, վար ու ցանքս անես, տուն ու տեղի տեր դառնաս…

— Ես արդեն բանվոր եմ,— հպարտությամբ ասաց Մուրադը:

— Է՛, Մուրադ ջան, լավ չեք անում, Քրիստոսը վկա,— հառաչեց հաղթանդամը:— Տեղից վեր կացողը քաղաք ա վազ տալի, բանվոր դառնում: Բա գե՞ղն ով շենացնի…

— Գեղում աշխատանք չկա,— հակաճառեց նրան «փեշերի» գյուղացին:— Էն ա՝ պարապ-սարապ բատրակները լիքը, սկի գործ անել տվող չունեն: Բա գեղն ու քաղաքը մե՞կ է…

— Քաղաքում էլ գործազուրկ շատ կա,— ասաց Մուրադը:— Հենց էդ գեղացիները գալիս, գործազուրկ են դառնում:

— Բա դրա վե՞րջը,— հարցրեց մալարիտիկը նվազ ձայնով բայց հանկարծ սթափվելով հարցրեց.— Այ տա, բա մեր ճաշը խի՞ չեն բերում…

Մյուսները հարցական նայեցին Մուրադին:

— Կբերեն,— ասաց նա համառոտ և անդրադարձավ կարևոր նյութին:— Վերջն էն պտի ըլի,— արտասանեց նա՝ ակամայից ընկնելով գյուղացիների խոսակցական ազդեցության տակ, ավելի ճիշտ՝ վերադառնալով դեպի իր մոտիկ անցյալի լեզուն,— որ մեր իշխանությունը յավաշ-յավաշ պտի հարստանա, զավոդ-մավոդ բաց անի, իսկ գեղումն էլ…

Բոլորը սպասողական նայեցին նրան որպես պատգամախոսի:

— Գեղումն էլ հալբաթ մի ուրիշ բան կլի,— «գել-թոզի» արեց Մուրադը՝ ինքն էլ լավ չպատկերացնելով, թե ինչ պիտի «ըլի» գյուղում, որպեսզի վերանան գործազրկությունը, բատրակությունը, չքավորությունը:

— Այ տա, սոված կտորվեցինք, գնա իմաց տու, թող մեր եմակը բերի,— խնդրեց մալարիտիկը Մուրադին:— Հրեն, ճերմակ ժամաշապիկը հագին, կաղնել, դինջ զրից ա անում ուրիշի հետ:

Մուրադը նայեց այն կողմ, հազիվ կարողացավ արտասանել՝ «էդ մեր օֆիցանտը չի, ուրիշն է», և նույն րոպեին «ժամաշապիկը» բռնկեց նրա մեջ երկրորդ խելահեղ ծիծաղը:

— Հրեն մեր ճաշ բերողն էլ է պարապ կայնե,— մատով ցույց տվեց լեռնցին:

— Ձակազը որ պատրաստ ըլի՝ կբերի,— բացատրեց Մուրադը՝ հազիվ մի կերպ վերջացնելով իր հաշիվները ծիծաղի հետ:

— Շատ կծիծղաս, մեր տղա,— նկատեց «փեշերի» գյուղացին:— Հալբաթ մեզ վրա:

— Ինչո՞ւ ձեզ վրա,— լրջացավ Մուրադը:— Բա ե՞ս ով եմ՝ գեղացու քոք, ինքս էլ բանվոր: Ձեր ասածներն են մազալու-մազալու: Բա օֆիցիանտի հագի խալաթը ժամաշա…ժամա… ժա…

Ճաշը բերեցին: Երեք գյուղացիներն էլ, չգիտես ինչու, ապշած նայեցին մատուցողի երեսին՝ լուռ հետևելով նրա շարժումներին: Միայն նրա գնալուց հետո պարզվեց ապշության պատճառը: Մալարիտիկը, մատով ցույց տալով կտրտված հացի ոչ-մեծ պաշարը, հարցրեց լացակումած ձայնով.

— Է՞ս է մեր չորսի հացը… Էս հո մի սոված կատու էլ չի կշտացնի…

— Էլի բերել կտանք,— հանգստացրեց Մուրադը:

— Պետքը չի: Ով իմանա, ինչքան պտի պլոկի: Խնամի, խուրջինիդ մեջ լավաշ ա մնացել, հանի…

— Դրուստ որ,— բացականչեց հաղթանդամը և դուրս քաշեց լավաշի փաթեթը:

Սկսեցին ճաշել: Մի քիչ ժամանակ լուռ մնալուց հետո հաղթանդամը հարցրեց Մուրադին.

— Դե, Մուրադ ջան, դու համ կեր, համ պատմի, թե ո՞նց ես ապրում, ո՞րտի, ընկերներդ ո՞վ են…

Մուրադը պատմեց մի քանի խոսքով:

— Յավաշ…— ընդհատեց համագյուղացին:— Մեկ-մեկ: Քու ասելով՝ օթախում չորս տղա եք: Մեկն Ալեքսանդրապոլից: Ուրի՞շ:

— Մյուսը որբանոցից:

— Էդ էրկու: Ուրի՞շ:

— Մեկն էլ ինձ նման գեղից էկած:

— Այ, էդ մեկը հետաքրքիր ա: Ո՞ր գեղից:

— Մեր կողմերից չէ,— ասաց Մուրադը և տվեց գյուղի անունը

— Էդ հո մեր կողքի գեղն է,— ասաց մալարիտիկը:— Ո՞ւմոնցից է:

— Բատրակի տղա է, անունը՝ Վահրիճ, հոր անունը՝ Մնացական:

— Մնացական... Մացո... Մացակ...— կրկնեց ինքնիրեն մալարիտիկը, ապա ասաց վճռական.— Էդ գեղն էդ տեսակ բատրակ չկա:

— Կարող է բատրակ չի, խնամի, միջակ է,— դիտողություն արեց լեռնցին:— Տղա է, լոպպազացած կլի: Հմի տեղից վեր կենողը բատրակի տղա ա գրվում…

— Էդ գեղը ես մեծից-պստիկ գիտեմ,— պնդեց փոքրամարմինը,— բայց էդ անունով իսան չկա էնտեղ:

— Մնացական մենք ունենք,— միջամտեց «փեշերի» գյուղացին,— բայց մեր Մնացականը մի արնախում կուլակ ա: Ղորթ ա, նրա տղեն էլ Վայրիճ ա, բայց նա գնացել ա «խորքերը»՝ պրաֆեսորության:

— Քու ասածն ու իմն իրար հեչ չեն բռնում,— ծիծաղեց Մուրադը:

— Էլ էդքանը չգիտեմ,— ասաց «փեշերի» գյուղացին՝ անտարբեր, ապա, կռճելով ափսեի միջից ճաշի մնացորդը, բացականչեց.— Էս չեղավ, էս ճաշը գեղացու համար չի, ճնճղափորիկ քաղքըցիներին ա վայել: Ներս որ մտա՝ ես ավելի կուշտ էի…

— Հիմի երկրորդը կբերեն,— հանգստացրեց Մուրադը:— Կատլետ:

— Առաջինից ի՞նչ հասկացանք, որ երկրորդն ինչ ըլի,— միանգամայն թերահավատ, հծծաց մալարիտիկը:— Ճար չկա, ես զոռ պտի տամ լավաշին…

Երբ նրանք արդեն դրամը պետք է վճարեին, հաղթանդամ գյուղացին, տեսնելով, որ Մուրադը նույնպես ձեռքը կոխեց գրպանը, բռնեց նրա ձեռքը և ասաց.

— Չէ… Ես եմ պատիվ անում: Սաղ օրը չարչարվեցիր մեզ հետ…

— Ոչ, հորեղբայր,— կտրուկ և մի քիչ վիրավորված, մերժեց Մուրադը:— Ես փողով վալադ չեմ:

— Վայի՛…— բացականչեց գյուղացին,— բա ես է՞դ եմ ասում, ախպոր տղա:

Երկար կտևեր նրանց վեճը, բայց այդ րոպեին մատուցողն անվանեց ընդհանուր գումարը, և կարծես կայծակ ճայթեց սեղանի վերևում: Հաղթանդամ գյուղացու ձեռքը, պինդ բռնել էր Մուրադի թևը՝ չթողնելով դրամ հանել գրպանից, թուլացավ, և կոմերիտականին վերջապես հաջողվեց հանել դրամը: Գյուղացիներից յուրաքանչյուրը վճարեց գումարի ճիշտ մի քառորդը՝ կոպեկ առ կոպեկ, և Մուրադը նույնպես:

Ճաշարանից գյուղացիները դուրս ելան մտահոգված, համարյա մռայլ: Քիչ հետո մալարիտիկն ասաց.

— Մարդ-գլուխ կերանք մետր ու կես չիթ…

— Հլա մետր ու վացցուն սանտիմենտր,— ուղղեց «փեշերի» գյուղացին, որը նույնպես հաշվել էր մտքում:

— Մուրադ ջան, մարդը քաղաքում պտի մի վագոն փող ունենա, որ կարենա ապրի: Բա դու ո՞նց ես յոլա գնում ռոճիկով: Հլա չես էլ ուզում գեղ ետ դառնալ…

— Ես բանվոր եմ,— ասաց Մուրադը հպարտությամբ:— Ես կառուցում եմ սոցիալիզմի հիմքերը: Կարա՞մ թողնի իմ պոստը: Բա ի՞նչ կասի բանվորը: Բանվորը կասի՝ տեղդ կաց, խտացնենք մեր շարքերը, որպեսզի կորչի իմպերիալիզմը: Բանվորը կասի՝ ջարդենք… Չէ,— ընդհատեց Մուրադն իր խոսքը՝ հիշելով Վարդանի արած նկատողությունը,— բանվորը կասի՝ կառուցենք…

13

Վարդանից բաժանվելուց հետո Գառնիկը դեռ մի քիչ ժամանակ կանգնած մնաց փողոցների անկյունում և սկսեց մտածել. ո՞ւր գնալ, ինչպե՞ս անցկացնել կիրակին…

Վատն այն էր, որ հեռանկար չկար ոչ միայն ցերեկվա համար, այլև երեկոյի: Քաղաքի երկու կինոներում էլ՝ թե «Նաիրի»-ում և թե «Պրոլետար»-ում, գնում էին ծանոթ նկարներ: «Կուլտուրայի տան» դահլիճում, ուր Գառնիկը շատ սակավ էր լինում, չկար ոչ գրական աղմկարար դիսպուտ, որտեղ կարելի լիներ զվարթ տրամադրությամբ հետևել կողմերի «մրցումներին», և ոչ էլ բանվոր-թղթակիցների կոնֆերանս, որի ամենահետաքրքիր մասը երիտասարդի համար ընդմիջումներն էին, երբ կարելի էր հանդիպել շատ ծանոթների և զրույց անել: Այսօր այնտեղ կայանալու է Մոսկվայից եկած ինչ-որ ջութակահարի համերգը. ձանձրալի բան: Ինչպե՞ս են կարողանում մարդիկ նստել մի ժամ ու կես, երկու ժամ, և լսել ջութակի ճզըր-վզըրն ու դաշնամուրի տընկ-տընկոցը…

Պետթատրոնում, ճիշտ է, կա լավ ներկայացում, բայց ոչ նրա և ոչ էլ նրա ընկերների «ֆինանսները չեն ներում»՝ ամեն կիրակի գնալ այնտեղ…

Էլի միակ հույսը մնում է երիտակումբը: Տեսնես ի՞նչ կա այնտեղ…

Գառնիկը դանդաղ քայլերով բարձրացավ Աբովյանով: Երիտ-ակումբի պատի վրա կախված էր մի մեծ հայտարարություն՝ ակումբի վարիչ Համոն այսօր երեկոյան զեկուցելու է «Կենցաղի հարցերի մասին»: Անմահ բան: Ո՞ւմ բան ու գործն է կտրվել, որ գնա նստի այնտեղ ամբողջ գեղեցիկ երեկոն և լսի Համոյի «փիլիսոփայությունները...»:

Գառնիկն սկսեց «զբոսնել», այսինքն՝ աննպատակ չափչփել Աբովյանը վերից-վար և վարից-վեր: Բայց ժամանակն անցնում էր, և դա արդեն լավ էր: Նա մի քիչ էլ կշրջի, ապա կգնա ճաշելու: Ճիշտ է, կարելի էր ճաշել և ավելի ուշ, ինչպես աշխատանքային օրերին, բայց ուրիշ զբաղմունք չկա, ի՞նչ արած: Ո՞վ է հնարել կիրակի ասած բանը…

Ամիրյան փողոցի մոտերքը Գառնիկի մոտով անցավ մի անապաստան երեխա՝ ծայր աստիճան քրքրված ցնցոտիներով, դրանցից ավելի կեղտոտ դեմքով ու մարմնով: Նա, իր կյանքից գոհ, անհոգ անցնում էր՝ սրունքներից հետ բոբիկ ոտքերով, ճոճելով իր հագուստի փեշերից և թևքերից կախված ծվենները:

— Էյ, խուժան,— ձայն տվեց Գառնիկը:

Անապաստան երեխան կանգ առավ՝ զգուշության համար բավական պատշաճ հեռավորության վրա:

— Ասա տեսնեմ ինչ ես ասում,— դիմեց նա կոմերիտականին:

— Ինչո՞ւ մանկատուն չես գնում:

— Թե որ լավ է՝ դո՞ւ ինչու չես գնում:

— Բա ինձ կընդունե՞ն, ախմախ,— խոսելով ինչպես հասակակիցը հասակակցի հետ, բարկացավ Գառնիկը:— Ես խո քու տարիքին չե՞մ:

— Իսկ ես քու խելքին չեմ,— դիմադարձեց երեխան:

— Խելքդ շները տանեն,— բարեմաղթեց Գառնիկը:— Իսկ դու գիտե՞ս, որ ես էլ եմ եղել մանկատանը, էն էլ՝ ոչ թե մանկատանը, այլ ամերիկական որբանոցում: Երդվում եմ,— ավելացրեց նա՝ ձեռքը դնելով իր Կիմ-ի վրա:

Անապաստանի դեմքը մի պահ լրջացավ: Նա հավատաց, որովհետև կոմսոմոլիստները սուտ տեղը չեն երդվում Կիմ-ով:

— Այ, վատն էր, բայց ես չէի փախչում:

— Սկի էլ վատ չի եղել: Ես մի ընկեր ունեմ, Գող Գևո են ասում, նա էնտեղից է: Ասում է՝ շատ լավ էր, ոչ դիսցիպլինյա կար, ոչ պարապմունք, ման արի քեֆիդ: Էյ, մի մոտենա, թե չէ կփախչեմ,— նախազգուշացրեց անապաստանը՝ տեսնելով, որ կոմերիտականը մի քայլ արեց դեպի նա:

— Հիմար, որ ուզենամ քեզ բռնել՝ չե՞մ կարող,— բարկացավ Գառնիկը:— Ես հենց էնպես մոտեցա, որ փողոցի շարժումը չխախտեմ:

— Սուտ ես խաբում,— ծիծաղեց երեխան՝ նայելով երիտասարդի աչքերին, համոզված լինելով, որ նա իսկույն կորցնելու է իր լրջությունը և նույնպես ծիծաղելու է իր ստի վրա:— Լավ էլ ուզում ես բռնել, բայց չես կարա:

— Բա որ բռնե՞մ:

— Եկ փորձենք,— առաջարկեց երեխան:

— Դե որ էդպես է՝ մի քիչ էլ հեռացիր, հետո փախիր: Ես կսպասեմ:

— Չեղավ,— մերժեց անապաստանը:— Դա ազնվություն չի: Եկ հենց մեր կաղնած տեղից պոկ գանք ու վազենք: Ո՞վ է հաշվում:

— Հաշվիր դու:

— Մեկ…— ասաց երեխան։— Երկու…

Իսկ «երեքն» արդեն, նա արտասանեց վազքի ընթացքում:

Գառնիկը սլացավ նրա ետևից:

Որպեսզի մարդիկ նրանց չխանգարեին և ոչ էլ նրանք մարդկանց, երեխան ու կոմերիտականը վազում էին ոչ թե բազմամարդ Աբովյանով, այլ հատող սակավամարդ փողոցով՝ Ամիրյանով: Բավական վազելով այդտեղ, նրանք շուռ եկան Սունդուկյան փողոցը:

— Բռնե՛ք խուժանին,— բղավեց ինչ-որ մեկը,— բան է փախցրել…

— Հեռո՛ւ կաց,— բարկացավ նրա վրա Գառնիկը,— մի կտրիր առաջը, թող փախչի…

Մարդը զարմացած նայեց կոմերիտականին:

Երեխան վազում էր ինչպես մատաղ եղնիկ: Գառնիկն արդեն շնչակտուր էր լինում, բայց տարածությունը նրանց միջև մի փոքր կրճատվել էր: Այդ բանից ոգևորված, նա ավելի արագացրեց վազքը: Լավ էր, որ փողոցում շատ մարդիկ չկային, այլապես «խուժանի» վազքը պիտի առաջացներ մեծ հարայիրոց: Եղած հատուկենտ մարդկանցից շատերը, հատկապես կանայք, սարսափահար ետ էին մղվում «վտանգավոր խուժանից», իսկ նրանց, ովքեր պատրաստվում էին բռնել երեխային, Գառնիկը բղավում էր խզված ձայնով.

— Ձեռ մի՛ տվեք… Թող փախչի…

Վերջապես նա հասավ երեխային և ձեռքը թափով իջեցրեց նրա ուսին: Երեխան մի վայրկյանում դուրս սողոսկեց՝ թողնելով նրա բռան մեջ իր ցնցոտիներից մի փոքրիկ փունջ: Բայց նա շատ հեռանալ չկարողացավ: Գառնիկը նորից հասավ նրան և պինդ բռնեց նրա դաստակից: Երեխան այս անգամ ապարդյուն փորձ չարեց թևն ազատելու, այլ կանգ առնելով, սկսեց արագ-արագ շնչել: Զգացվում էր, որ նրա սրտիկն ուժեղ բաբախում էր: Շունչ էր առնում նաև Գառնիկը:

Երբ նրանք բավական հանգստացան, Գառնիկը, դեռ հևալով, ընդհատ-ընդհատ արտասանելով բառերը, ասաց.

— Հիմի տեսա՞ր… որ եթե... ուզենայի բռնել… կբռնեի… Այսինքն՝ բռնեցի…

Երեխան լուռ էր: Նա այդ րոպեին չէր էլ մտածում մեջբերել սովորական պատճառաբանություններ, թե՝ «մարդիկ ինձ խանգարեցին» կամ «ոտքս քարի կպավ՝ ցավեց, դրանից էլ չկարացի լավ վազել» և այլն: Նա մտածում էր ավելի կարևոր բանի մասին, ծրագրում էր, թե ինչպես էր փախչելու մանկատնից: Ուստի և մեծ եղավ նրա ապշությունը, երբ Գառնիկը թողեց նրա դաստակը և ասաց.

— Դե հիմի գնա՝ ուր որ ուզում ես: Տեսա՞ր, որ չէի ուզում քեզ բռնել: Գնա՛…

Բայց անապաստան երեխան չէր շարժվում տեղից:

— Հիմար,— ասաց կոմերիտականը և ձեռքը դրեց նրա սրտին։— Դեռ խփում է…

Նա նայեց շուրջը: Մի երեխա, «խուժանին» հասակակից, բայց մի քիչ ավելի լավ հագնված, մի կուժ և մի բաժակ ձեռքին, շտապում էր դեպի Աբովյան՝ զբոսնողներին ջուր վաճառելու: Բայց քանի որ այդտեղ ևս կարող էին ճարվել հատուկենտ խմողներ, նա մանկական բարձր ճղավոցով արդեն ազդարարում էր իր «ապրանքի» մասին.

— Սառի՛ ջուրի՛… Նորի բերած սառի՛ ջուրի՛ ...

— Է՛յ, «սառի ջուրի»,— ձայն տվեց երիտասարդը նրա բառերով,— էստեղ արի…

Երեխան մոտ վազեց, երկու անգամ ողողեց բաժակը, երրորդ անգամ լցրեց և հրամցրեց Գառնիկին: Վերջինս բաժակը մեկնեց «խուժանին».

— Խմի՛... Խմի, ասում եմ քեզ: Թող սիրտդ հանգստանա…

Վճարելով ջուր վաճառողին, կոմերիտականը «խուժանի» հետ վար իջավ Սունդուկյանով:

— Սովա՞ծ ես:

— Բա ի՞նչ եմ: Ջրից հետո ավելի սովածացա:

— Գնանք ճաշենք, ես էլ եմ սոված:

— Սուտ ես խաբում: Կոմսոմոլիստները հետո են ճաշում: Դու սոված չես:

— Քու ի՞նչ գործն է: Որ ասում եմ՝ ուրեմն գնանք:

— Թե փող ես տալիս՝ տուր: Մի հաշիվ է, ինձ ճաշարան ներս չեն թողնի:

— Ինձ հետ կթողնեն, գնանք:

— Պիվա էլ կպատվե՞ս: Գող Գևոն էրկու անգամ պատվել է:

— Ղալաթ է արել: Ես քեզ համար գարեջրի փող չունեմ: Լիմոնադ՝ խնդրեմ:

— Լիմոնադը դու խմի, դա աղջկա բան է,— մերժեց «խուժանը»:

Գառնիկը մի պահ մտածեց գնալ իրենց սովորական ճաշարանը, բայց հետո հիշեց, որ Մուրադը կարող է այնտեղ լինել և տեսնել նրան: Իսկ դա ցանկալի չէր: Գառնիկը հաճախ էր ծիծաղում ընկերոջ վրա, ճիշտ է, ընկերական ծաղրով, բայց և այնպես: Մուրադը՝ պարզամիտ և ոչ հնարագետ, փնչում էր ամեն անգամ՝ առանց կարողանալու փոխհատուցել: Ա՛յ թե հիմա առիթ կունենար իր վրեժը լուծելու… Վաղը կպատմեր.— «Երեկ նստած էի ճաշարանում, մեկ էլ տեսնեմ՝ ներս մտան երկու խուժաններ»… Կամ թե չէ.— «Մի խուժան հյուրասիրում էր մեր Գառնիկին»… Ու թեև Գառնիկը գիտեր, որ Մուրադն ընդունակ չէր այդպիսի սրամիտ բաներ ասելու, այլ դրանք իր սեփական սրամտություններն էին, որոնք նա վերագրում էր իր ընկերոջը, բայց և այնպես, ի՞նչ իմանաս, Մուրադ է, հանկարծ վերցրեց ու մի բան հնարեց նրա վրա…

Գառնիկը երեխայի հետ միասին շեղեց ճանապարհը և մտավ մի ուրիշ ճաշարան: Որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ նա այնտեղ տեսավ Մուրադին…

Մուրադը նրան չտեսավ, որովհետև խոսակցությամբ էր զբաղված երեք գյուղացիների հետ: Դուրս գալ, գնալ, մի ուրիշ տեղ՝ Գառնիկն այլևս չէր կարող, որովհետև այս անգամ արդեն Մուրադն անպայման կնկատեր նրան. ճաշարանում դեռ մեծ շարժում չկար և ամեն մի մտնող-ելնող դառնում էր ուշադրության առարկա:

Գառնիկն ու երեխան գրավեցին մի հեռավոր սեղան: Գառնիկը նստեց մեջքով դեպի դահլիճը: Ի միջի այլոց, եթե Մուրադը հակառակ դեպքում տեսնի էլ նրան՝ ոչինչ: Գառնիկն ավելի շատ ծաղրելու բան կունենա.— սեղանի տակ դրված խուրջինները, լավաշի դեզը, բանվոր «շինարարի» այնպիսի «սերտ կապը» գյուղի աշխատավորության հետ, որ չի մնացել նրանց միջև ոչ մի տարբերություն, բանվորը նորից դարձել է գյուղացի…

Անապաստան երեխան ճաշերի հարցում ցույց տվեց ավելի մեծ բանիմացություն, քան սպասում էր Գառնիկը:

— Ես բորշ եմ ուզում,— ասաց նա:— Սմետանով: Ասա, թող հացը շատ բերեն:

Գառնիկը մատուցողին պատվիրեց երկու բորշչ և ավելացրեց.

— Կատլետի հետ միասին կբերես մի շիշ գարեջուր:

— Երկու…— կամացուկ թելադրեց «խուժանը» բարձրացնելով իր կեղտոտ մատներից երկուսը:

— Ղալաթ ես արել: Մեծանաս՝ շատ կխմես: Իսկ հիմի էդ էլ շատ է քեզ համար…

Նրանք ճաշեցին լուռ, առանց մանկատուն գնալու մասին «ագիտացիայի»՝ հակառակ «խուժանի» սպասածի: Գառնիկը խոսեց միայն մի անգամ, այն էլ բոլորովին ուրիշ բանի մասին:

— Էյ,— ասաց նա,— ի՞նչ ես վրա-վրա քշում, ինձ էլ հաց թող:

— Թող սեղան չնստեիր սոված խուժանի հետ,— ասաց երեխան անտարբեր տոնով, բայց և իսկույն ժպտաց, հացի պնակը մեղմ հրեց դեպի կոմերիտականը և ասաց բոլորովին ուրիշ ձայնով.— Առ, ախպեր ջան, ես հանաք եմ անում…

Պատառը մնաց Գառնիկի բերանում: Նա կտրուկ բարձրացրեց գլուխն ափսեի վրայից, երկար և տխուր նայեց երեխային, դանդաղ ծամելով կուլ տվեց պատառը, էլի նայեց և ասաց խոր ցավակցությամբ.

— Ես քու հերդ անիծեմ, անխելք տղա…

Երեխան, որ ամբողջ ժամանակ անթարթ նայում էր կոմերիտականի երեսին, հայացքն իջեցրեց վար և նրա երկար, սև թարթիչները թրթռացին մի քանի անգամ:

— Ե՞րբ պիտի վերջանա էս պատմությունը,— ասաց Գառնիկը բարձրաձայն, բայց ինքն իր հետ խոսելով.— երեկ ես էի որբանոցում, էսօր դու ես խուժան…

— Մի նեղանա, ախպեր ջան,— շշնջաց երեխան՝ ուտելն ընդհատելով,— կգնամ մանկատուն: Ազնիվ խուժանի խոսք…

— Քու գործն է, ուզում ես՝ գնա, ուզում ես՝ մի գնա,— ասաց Գառնիկն առանց խորամանկության, հոգու խորքից եկող անկեղծությամբ:— Դու կարծում ես՝ ես չգիտե՞մ, որ մանկատանը շատ ձանձրալի է: Ապուշները չեն կարողանում կազմակերպել երեխաների զվարճությունը, դեռ անուններն էլ շեֆ է…

— Չէ, ասում են՝ ոչինչ, էնքան էլ վատ չէ,— մխիթարեց խուժանը:— Կգնամ:

— Ես ուրիշ բան եմ մտածում,— ասաց Գառնիկը:— Եթե ընկերներս համաձայն լինեին՝ ես քեզ կտանեի մեզ մոտ: Լավ սենյակ ունենք, չորսով ենք ապրում:

— Չեն համաձայնի,— վճռական կերպով հայտարարեց երեխան:— Էդ մենակ դու ես հիմար, որ խուժանների հետ գլուխ ես դնում: Ես մանկատուն կգնամ: Մենակ թե մեկ-մեկ արի, ինձ տար ման ածելու քեզ հետ: Այ, հենց հիմի, որ կատլետը կերանք ու պիվան խմեցինք՝ գնանք…

Գառնիկը չպատասխանեց: Նա մտածում էր: Նա պատկերացրեց աչքի առաջ իր ընկերներին՝ Վարդանին, Մուրադին և վերջում միայն Վահրիճին: Ոչ, իհարկե, նա չի համաձայնի: Իսկ մեկը հարցնի, թե նրա մնալո՞ւն ով է համաձայն: Ի՞նչ լավ կլիներ, եթե չքվեր, գնար: Նրա թախտի վրա կքներ «խուժանը»: «Ախպեր ջան»… Նրանց երեքից ոչ մեկը եղբայր չունի, նա կդառնար բոլորի փոքր եղբայրը…

— Թյո՛ւ…— ասաց Գառնիկը բարձրաձայն,— դեռ ինքն էլ բատրակի տղա է…

— Ո՞վ,— զարմացավ երեխան:

— Կեր, կեր, քու գործը չի: Ու լավ իմացիր, որ ես քեզ ոչ ագիտացիա արեցի, ոչ էլ զոռեցի: Թե ուզում ես՝ կտանեմ մանկատուն, իսկ թե չես ուզում՝ քու հերն էլ անիծած:

— Հեր ունե՞մ, որ անիծես,— ժպտաց երեխան։— Մեր էլ չունեմ։ Իսկ մանկատուն՝ կգնամ, տղամարդը մի անգամ կասի ու խոսքի տերը կլինի։ Պիվա լցրու…

14

Վահրիճի «գիտական» զրույցը Ռոկլանայի հետ մոտենում էր իր վախճանին, ավելի շուտ՝ եզրակացությանը։ Ռոկլանան անընդհատ ծխում էր և շուտ-շուտ նայում դեպի դուռը։ Ռաֆֆու վեպի թերթի վրա արդեն դիզվել էր ծխախոտի մնացուկների մի պատկառելի կույտ։

Վահրիճը խոսում էր ոգևորված։ Նա վերապատմում էր իր երբևէ կարդացած «հանրամատչելի առողջապահական գրքույկների» բովանդակությունը՝ դա համեմելով իր բորբոքված երևակայության բավական գարշելի «պտուղներով»։ Երբ նա հարկ եղածից ավելի էր մտնում «խորքերը», Ռոկլանան գրքի շուռ տրվող թերթի նման շուռ էր տալիս ծխախոտ բռնած ձեռքը և ասում էր.

— Անցիր վրայով…

— Եվ այսպես,— ասաց, վերջապես, Վահրիճը՝ արդեն հավաքելով իր զրույցի «փեշերը»,— մենք այս բոլորից տեսանք, որ սեռն է հանուն մարդու և ոչ թե մարդը հանուն սեռի։ Ի՞նչ եմ ուզում ասել դրանով, ընկերներ։ Ասեմ, թե ինչ եմ ուզում ասել դրանով, ընկերներ, այսինքն՝ Ռոկլանա։ Ուզում եմ ասել, որ սեռական կյանքով ապրելը մեր բնական իրավունքն է և եթե ճիշտը կուզենաս իմանալ՝ նաև պարտականությունը։ Այնպես որ… տուր ձեռքդ, Ռոկլանա…

Առաջարկն անսպասելի էր և անհասկանալի։ Աղջիկը հարցական նայեց երկարահասակին։

— Տուր ձեռքդ…— կրկնեց նա։

Ռոկլանան ծխախոտը փոխադրեց ձախ ձեռքը և տարակուսանքով երկարեց աջը նրան։

Վահրիճը ոտի վրա առևտուր անողի ազարտով շրխկացրեց իր ձեռքը նրա ձեռքին, պինդ սեղմեց, թափ տվեց և ասաց.

— Մենք միասին ենք գնում դեպի կոմունիզմ՝ գաղափարական գծով, կոմերիտական գծով, լինենք միասին նաև մարմնական գծով…

Ռոկլանայի ձեռքը ցնցվեց, ցնցվեց և ամբողջ մարմինը։ Անսպասելիությունից կարկամած, նա մի պահ նայեց նիհար երիտասարդին և ասաց հանգիստ.

— Թող ձեռքս, Վահրիճ…

— Ընկեր, ընկեր,— սթափեցնող ձայնով և հանդիմանական տոնով ասաց Վահրիճը։— Դու գիտե՞ս, թե ինչ ես անում, դու մերժում ես քեզ նման կոմերիտականի սերը…

— Թող ձեռքս,— ասաց Ռոկլանան ավելի կտրուկ, և այնպես ցնցեց իր ձեռքը, որ ազատեց նրա ափի միջից։

Վահրիճը վեր ցատկեց տեղից, կանգնեց աղջկա առջև, թևերը կանթեց և ասաց.

— Ուրեմն էդպե՞ս, Ռոկլանա… Լավ։ Շատ լավ։ Բայց չմոռանաս։ Ինչպես երևում է՝ քեզ նէպման է հարկավոր։

— Ես գիտեմ իմ դասակարգային պարտքը,— ասաց աղջիկը։— Ես մեշչանկա չեմ, որ նէպմանի ձգտեմ։ Ես կոմերիտուհի եմ։

— Կոմերիտուհի՞,— ծիծաղեց Վահրիճը:— Դու կոմերիտուհի չես, այլ կոմերիտմիության անդամ՝ ձևականորեն: Ես գիտեմ, թե ով է կանգնած քո հիվանդոտ ուղեղում՝ Վարդանը…

— Դա քու գործը չէ: Ու եթե հարցն էդպես ես դնում, մի՞թե նա կոմերիտական չէ:

— Նա մութ էլեմենտ է՝ մեր միության մեջ սողոսկած: Այո, ես դա կպարզեմ: Ո՞ւր է քո կոմերիտական առողջ բնազդը: Այդպե՞ս ես կատարում դու քո սեռական ընտրությունը՝ ըստ Չարլզ Դարվինի…

Ռոկլանան հանգիստ ավարտեց ծխախոտը, մնացուկը նետեց մյուսների վրա, ապա վերցրեց գրքի թերթը, զգուշությամբ տարավ դեպի լուսամուտը և թափ տվեց հարևան միհարկանի տան կտուրի վրա: Ապա նետեց նաև թերթը:

— Դե, ես գնացի,— դիմեց նա Վահրիճին:— Վարդանին կասես, որ ես երկար սպասեցի նրան: Գործ ունեմ հետը:

— Ես նամակաբեր չեմ:

— Լավ, ես ինքս կգրեմ պատի վրա, թող կարդա: Կամ էգուց կանցնեմ:

— Վերջին անգամն եմ առաջարկում, Ռոկլանա, տուր ձեռքդ…

— Ոչ, Վահրիճ, թեև մենք միևնույն միության անդամներ ենք, թեև երկուսս էլ ընթանում ենք դեպի ապագան, բայց լինել քեզ հետ ձեռք-ձեռքի այդ գծով և այդ ուղղությամբ՝ ես չեմ կարող: Էլ չկրկնես:

— Դա քու վերջին ռեզյումե՞ն է:

— Ասածներս համարիր դեկրետ:

— Ռոկլանա…

Բայց աղջիկն իր ձեռքերը կոխեց կաշվե պիջակի վերին՝ ուղղահայաց գրպանները, իրար վրա բերեց պիջակի եզրերը և մոտեցավ դռանը:

— Ոչ, ես քեզ դուրս չեմ թողնի,— կտրեց նրա ճանապարհը Վահրիճը,— մինչև որ չասես, թե ինչու ես մերժում ինձ: Ո՞վ է այդ անողնաշարը, որ նրան համեմատում ես ինձ հետ: Ասա, երբևէ նկատե՞լ ես իմ մեջ իդեոլոգիական թեքում:

— Դա ի՞նչ կապ ունի:

— Ունի: Ես քու մերժման մեջ քաղաքական իմաստ եմ դնում, այսինքն՝ ոչ թե դնում, այլ գտնում: Դու օրգանապես չես կարող տանել հարազատ կոմերիտականներին: Այդ դեպքում ես քեզ հետ կվարվեմ այնպես, ինչպես պրոլետարիատը մյուս դասակարգերի հետ, այսինքն՝ ցույց կտամ իմ դիկտատուրան…

Այս ասելով Վահրիճը հանկարծ գրկեց Ռոկլանային և ձգվեց համբուրելու: Կոմերիտուհին, զուտ աղջկա ճարպկությամբ, մի թափով դուրս պրծավ նրա գրկից՝ սահելով վերևից-ներքև: Ապա նորից ուղղվելով, հանեց աջ ձեռքն իր գրպանից և մի շառաչուն ապտակ հասցրեց Վահրիճի երեսին:

— Ո՛ւ… — դուրս պրծավ Մալարիայի հիվանդանոցի քարտուղարի բերանից ինչ-որ բացականչության սկիզբ, բայց այդ րոպեին դուռը բացվեց և ներս մտավ Գառնիկը: Տեսնելով դռան անմիջապես մոտ կանգնած երկուսին, նա կանգ առավ անսպասելիությունից, խուզարկու նայեց մեկ սրա հուզված երեսին, մեկ մյուսի, լուռ անցավ առաջ, ապա ասաց.

— Ռոկլանա, ես հայտնեցի Վարդանին քո ասածը, իսկ նա ձեռքը թափ տվեց…

— Վարդանն էլ կորչի, բոլորդ էլ հետը,— համարյա արտասվեց աղջիկը և դուրս նետվեց սենյակից:

Երկու կոմերիտականները նայեցին իրար, բայց ոչինչ չխոսեցին: Գառնիկը պառկեց իր թախտի վրա և սկսեց նայել առաստաղին, իսկ Վահրիճը, հագնելով վերնաշապիկը, գնաց դուրս՝ ճաշելու:

15

Երեկոյան կողմ չորս ընկերներն իրենց թախտերի վրա պառկած, կարճում էին ժամանակը՝ մտածելով օրվա տպավորությունների մասին կամ երբեմն-երբեմն կցելով կարճատև, ոչ աշխույժ խոսակցություն: Չորսն էլ պառկել էին հագուստով, իսկ Գառնիկն ու Մուրադը նաև չէին հանել սանդալները:

Չորս ընկերների անկողինները խիստ տարբերվում էին միմյանցից: Գառնիկի գորշ ներքնակի վրա գցված էր որբանոցից դուրս գրվելիս ստացած ամերիկական լավորակ «աղյալը»: Մուրադն իր խիստ հաստ ներքնակն ու վերմակը բերել էր գյուղից: Վերմակի երեսը կարված էր հազար ու մի գույներ ու նախշեր ունեցող չթերի համահավասար չափի փոքրիկ եռանկյունիներից: Դա ժողովրդի ծայր աստիճան աղքատ խավերի դեռ հնամյա հնարագիտությունն էր՝ օգտագործելու համար ձեռքն ընկած կտորեղենի ամենափոքրիկ պատառներն անգամ: Վերմակն ստացվել էր գեղեցիկ և կարող էր նույնիսկ թվալ, որ ոչ թե աղքատությունը, այլ շռայլությունն էր կարել դա:

Վարդանի վերմակն ալեքսանդրապոլցու սովորական վերմակ էր՝ դեռ «Մարոզովի» չթից կարած պատկերազարդ երեսով: Վահրիճը քնում էր շալե կտորի տակ:

Ընկերներից միայն Գառնիկն ու Վահրիճն ունեին երկուական սավան, իսկ Մուրադն ու Վարդանն իրենց վերմակները վրաներն էին վերցնում առանց սավանի: Ի միջի այլոց, սպիտակեղենը լվանալ տալիս նրանք բոլորն էլ մի երեք օր քնում էին ընդհանրապես առանց սավանի:

Գալով բարձերին, չորսն էլ բավական կեղտոտ էին՝ քրտինքի հետքերով: Շաբաթը մեկ երիտասարդները շուռ էին տալիս բարձերը և տեսնելով, որ մյուս երեսը «համեմատաբար» մաքուր է, քնում էին այդ երեսի վրա: Հաջորդ շաբաթ արդեն, այդ երեսն էր գերազանցում մյուսին իր գույնի մուգությամբ և մյուս երեսն էր դառնում համեմատաբար մաքուրը: Չգիտես ինչու, ընկերները մեծ դժկամությամբ և շատ սակավ էին հանում բարձերի երեսները՝ լվանալ տալու համար: Ըստ երևույթին պատճառն այն էր, որ խիստ տհաճ բան էր՝ մի քանի օր գլուխը դնել «միթելից» դուրս ցցված փետուրների ծակծկող ծայրերի վրա:

Գառնիկը նայում էր առաստաղին: Նրա ծուռ քիթը և շրթունքների այն դարսվածքը, որ կարծես հենց այն է՝ նա պատրաստվում էր ծիծաղել ինչ-որ մեկի վրա, նրան տալիս էին զվարճալի տեսք: Ընդհակառակը, Վարդանի դեմքը լուրջ էր և ոգևորված: Նրա խիստ սև ու հարթ մազերը համերաշխ հոսանքով ձգվում էին լայն ճակատից դեպի ետ և փայլում էին: Ուղիղ քիթը, հստակ գծագրված գեղեցիկ շրթունքները և միշտ մտածկոտ արտահայտություն ունեցող շագանակագույն աչքերը նրան տալիս էին երիտասարդ բանաստեղծի տեսք:

Մուրադի նեգրական կռինճ մազերի հետ խիստ սազում էր արևի տակ աշխատելու հետևանքով կիզված նրա թուխ դեմքը՝ ճիշտ է, փոքրիկ դիմագծերով, բայց պլակատների վրա նկարվող բանվորի տիպիկ, առնական արտահայտությամբ: Որ նա մոտ անցյալում եղել էր գյուղացի՝ դա նրա դեմքի վրա կարդացվում էր լոկ այն րոպեներին, երբ նա խոսում կամ թեկուզ միայն մտածում էր գյուղի մասին: Այդպիսի դեպքերում նրա ծնոտը թուլանում էր ու մի քիչ կախվում, այտերի վրա հայտնվում էր ինչ-որ միամիտ ու երջանիկ, համարյա «հորթական» ժպիտ, շրթունքները փոխում էին իրենց ձևը, կարծես ուր որ է՝ պիտի սկսեին երգել գյուղական «լե-լե, լե-լե, լե-լե ջան»-ը: Բարեբախտաբար այդպիսի արտահայտություն նրա դեմքի վրա գալիս էր շարունակ ավելի և ավելի հազվադեպ:

Տարօրինակ տպավորություն էր թողնում Վահրիճը: Մտածելիս լիներ նա թե մյուսների հետ խոսելիս, երեսը դեպի պատը դարձրած քնելիս լիներ թե ընկերներին նայելիս, միշտ թվում էր, թե նա պառկած կամ նստած է մենակ, ինքն իր համար: Իսկ այժմ նա իրոք պառկել էր «ինքն իր համար», նայում էր առաստաղին և մռայլ մտածում՝ անշուշտ Ռոկլանայի մասին և այն մասին, թե չլսե՞ց արդյոք սենյակ մտնող Գառնիկն ապտակի շրխկոցը: Երբեմն-երբեմն նրա մռայլությունը տեղի էր տալիս սպառնագին արտահայտության, որն ամենայն պերճախոսությամբ ասում էր՝ «դու սպասիր, ես քեզ ցույց կտամ…»: Պառկել էր նա ըստ սովորականի՝ ձեռքերը գլխի տակ դրած, որից նրա սուր արմունկները ցցվել էին աջ և ձախ: Ցցվել էին նաև նույնքան սուր ծնկները, որովհետև նա պառկել էր իր երկար ոտքերը մի քիչ կծկած: Կարճ խուզած մազեր ունեցող իր փոքրիկ գլխի և ճակատի վրա նա գցել էր մի ոչ այնքան մաքուր թաշկինակ՝ ճանճերից պատսպարվելու համար: Աչքերը՝ ոսկրոտ մեծ քթի երկու կողմերում, այդ քթի հարևանությամբ թվում էին իրականից Է՛լ ավելի փոքր և այժմ տենդոտ փայլում էին թաշկինակի եզրի տակից: Քթի տակ նա պահում էր նեղ բեղիկ, որը կարծես քթի նետած ստվերն էր: Նրա շրթունքները, վերևինը՝ բարակ, իսկ ներքևինը՝ հաստ, ամուր սեղմված էին և թրթռում էին երբեմն-երբեմն՝ երբ նրա նիհար այտերի վրա երևում էին ատամները սեղմելուց գոյացած շարժուն գնդիկներ:

Վահրիճի «ինքն իր համար» պառկած լինելն ընդգծվում էր նաև նրանով, որ մյուս երեքը հագնված էին միանման, իսկ նա՝ տարբեր: Երեք ընկերները, դեռ գարնանը, միասին գնել էին իրենց մոխրագույն շալվարները, որոնք ոչ միայն հիմա, այլև հենց առաջին օրը, հենց խանութում, այն տեսքն ունեին, կարծես խունացել էին արևից կամ գունաթափվել էին լվանալուց: Բայց դրանք ունեին մի անկասկած առավելություն՝ էժան էին: Նույն օրն էլ հենց նրանք գնել էին իրենց շեղօձիք սպիտակ վերնաշապիկները, որոնց օձիքները գնված օրից ի վեր չէին կոճկվել ավելի, քան մի կոճակով: Օձիքը, ինչպես Գառնիկն էր ասում, շան ականջի նման միշտ շեղակի կախված էր նրանց կրծքի վրա: Եվ երեքն էլ այդ վերնաշապիկների վրա կապում էին ծոպավոր սպիտակ գոտիներ՝ պարանի պես կլոր և ոլորած: Ոտքերին նրանք ունեին սանդալներ, որոնք հագնում էին ոչ այնքան «ըստ սեզոնի», որքան որ ըստ էժանության:

Վահրիճը սանդալներ չէր հագնում, այլ կոշիկներ, որոնցից վերև նրա բարակ սրունքները գրկում էին «գետրիները»՝ կոշիկների հետ միասին կազմելով մի ամբողջություն՝ երկարաճիտ սապոգների նման մի բան: Իհարկե, նա կրում էր ոչ թե սովորական շալվար, այլ ոտնամաններին պատշաճ գալիֆե՝ կապույտ գույնի, լայն, որը ըստ մտահղացման, պետք է ազդեցիկ տեսք տար նրա նեղ կազմվածքին: Եվ, ինչպես վայել է գալիֆեին, նա դրա հետ կրում էր խիստ երկար փեշերով վերնաշապիկ՝ ինչ-որ խիստ փայլուն, բաց վարդագույն «լաստիկ» կտորից: Դրա օձիքը շեղ չէր, այլ ուղիղ, սկսվում էր համարյա պորտի մոտից և բարձրանում էր մինչև կոկորդը, մինչև սուր ծնոտի տակը և կոճկված էր երևի քառասունից ոչ պակաս մոտիկ-մոտիկ կոճակներով՝ մանրիկ, կլորիկ, որոնք մտնում էին ոչ թե կտորի վրա բաց արված սովորական կոճկատեղերի, այլ եզրին կարված «ղայթան» թելի ճեղքերի մեջ: Վահրիճը չէր կոճկում միայն ամենավերին երեք-չորս կոճակները: Դա կարծես նրա համար էր, որ կանգուն օձիքի երկու մասերը մի քիչ հեռանային իրարից և տեղ տային նրա դուրս ցցված կլթակին: Ինչ խոսք, որ այդպիսի վերնաշապկի վրա նա կապում էր սև կաշվե խիստ նեղ գոտի՝ դրանից տեղ-տեղ կախված ծայրերով, արծաթի նմանեցրած և սևով նախշած փոքրիկ ճարմանդներով, որոնք նրա գոտին նմանեցնում էին ձիասարքի:

Գառնիկը վաղուց էր ուզում ծիծաղել Մուրադի վրա՝ խուրջինավոր գյուղացիների հետ սեղան նստած լինելու համար, բայց զգուշանում էր՝ դեռ չիմանալով, տեսե՞լ էր նաև Մուրադը նրան, թե ոչ: Ուստի և, «հող շոշափելու» համար, նա ասաց անտարբեր:

— Ես էսօր մի խուժանի տարա մանկատուն:

Նրա ասածին չարձագանքեց ոչ ոք, այդ թվում նաև Մուրադը:

Ապահովվելով, Գառնիկն ավելացրեց՝ շրթունքների վրա խաղացնելով զվարթ քմծիծաղ.

— Բայց լավ էիք չորսով լավաշ պատառոտում…

Մուրադը վեր ցատկեց տեղից, նայեց ընկերոջը:

— Ո՞վ է քեզ ասել:

— Ես էնտեղ էի:

— Ո՞րտեղ…

— Նույն տեղը: Մի շատ լավ հագնված ընկերոջ հետ:

— Փչում ես: Որ գիտես՝ բա մե՞նք որտեղ էինք նստել:

— Խուրջիններից մի քիչ բարձր:

Եվ ծիծաղեց:

— Մեր գյուղացիներն էին,— կոտրված ձայնով խոստովանեց Մուրադը:

— Թե՞ դու էիր նրանց գյուղացին:

— Թեկուզև լինեմ գյուղացի, ի՞նչ կա որ, ինչո՞ւ ես ծաղրում: Գյուղացիությունը մեր դաշնակիցն է, այո:

— Չեմ ծաղրում, ինչո՞ւ: Բայց ես կարծում էի, թե դու հարյուրտոկոսանոց բանվոր ես, իսկ բանից դուրս է գալիս, որ բանվորա-գյուղացի ես, ավելի շուտ՝ գյուղացիա-բանվոր… Հա, ի միջի այլոց, Մուրադ, դու ինչո՞վ ես քար կրում պատ շարողների համար:

— Այ, էս պրոլետարական մեջքովս,— հոժարությամբ պատասխանեց Մուրադը՝ ուրախանալով, որ խոսքն ուրիշ կողմ է շուռ գալիս:

— Այո, բայց մեջքիդ վրա ի՞նչ ես վերցնում:

— Փալան:

— Հայերեն դա կլինի համետ,— կտրվելով իր մտքերից, ուղղեց Վարդանը:

— Իսկ լավ չի՞ լինի, Մուրադ, — առաջարկեց Գառնիկը,— որ էդ տախտակե չոր համետի տեղակ խուրջին գցես ուսիդ, խուրջինով կրես քարը: Հի՛-հի՛…

Ծիծաղեց նաև Վարդանը:

— Ախմախ,— հայհոյեց Մուրադը՝ նույնպես ծիծաղելով սրտանց: Ապա հանկարծ այնքան վառ պատկերացրեց իրեն՝ խուրջինն ուսին, շինարարական լաստակների վրայով երրորդ հարկ բարձրանալիս, որ մի կատաղի քրքիջ մի պահ դուրս պրծավ նրա կրծքից, ապա փախավ ներս և իջավ դեպի փորը: Գառնիկը վեր ցատկեց տեղից, վերցրեց լուսամուտի գոգում դրված թեյամանը՝ արևի տակ խիստ տաքացած ջրով, և սպասողական կանգնեց անձայն ցնցվող ընկերոջ մոտ՝ հարկ եղած դեպքում ջուրը նրա երեսին շաղ տալու կամ բերանը լցնելու համար: Դա ավելի բռնկեց Մուրադի ծիծաղը և նա դուրս նետվեց նախասենյակ՝ հանգստանալու համար:

Վարդանը բարկացած նայեց Գառնիկին:

— Ես ի՞նչ ասացի որ…— արդարացավ ծուռքիթը:

Քիչ հետո, երբ Մուրադը մտավ ներս, Վարդանը հանդիմանությամբ դիմեց նրան.

— Իսկ դու ի՞նչ ես ամեն մի դատարկ բանի վրա ատամներդ բաց անում «էփած քյալլի» նման՝ ինչպես մեր Ալեքսանդրապոլում են ասում: Չե՞ս կարող՝ դու էլ նրան ձեռք առ:

— Սովորեցրու,— զվարթ խնդրեց Մուրադը:

— Գառնիկ,— դիմեց Վարդանը նրան՝ աչքով անելով «շինարարին»,— էդ ինչի՞ց է, որ դու էդքան դուր ես գալիս մեշչանկաներին…

— Ի՞նչ մեշչանկա,— շփոթվեց Գառնիկը:

— Դու ինձնից լավ գիտես: Մեր հարևանի աղջիկը:

— Ես էլ եմ նկատել, ես էլ,— բացականչեց Մուրադը՝ նորից նստելով իր թախտին:— Քեզ տեսնելիս քիչ է մնում կաստրուլը քցի վար:

— Դե, դա կատակ չէ,— սրտնեղվեց Գառնիկը:

— Իհարկե կատակ չէ,— համաձայնեց Վարդանը:— Մի՞թե սերը կատակ է: Բայց հետաքրքիր է, ինչո՞ւ է նա մեր չորսից հենց քեզ հավանել: Չլինի՞ իդեոլոգիական ընդհանուր գծեր է գտել… Վա՛յ քեզ՝ եթե Վահրիճն էլ նկատի ու համոզվի…

— Վարդան,— խիստ տոնով դիմեց նրան երկարահասակը,— խոսում ես՝ խոսիր քեզ համար, իսկ ի՞նչ գործ ունես ինձ հետ:

Եվ ատելությամբ նայեց նրան, որի պատճառով Ռոկլանան մերժել էր մի քանի ժամ տևող նրա «գիտական» զրույցի «եզրափակիչ մասը» և կայծեր էր հանել նրա ձախ այտից:

Մալարիայի հիվանդանոցի քարտուղարի մռայլությունը մի փոքր ցրեց ընկերների զվարթ տրամադրությունը: Նրանք նորից լռեցին:

— Իսկ լուրջ որ խոսենք,— ասաց քիչ հետո Վարդանը,— ինչո՞վ է խեղճ աղջիկը մեշչանկա: Ոչնչով: Հայրը խորհրդային հիմնարկի հաշվապահ է, մայրը… մայրը, ճիշտ է, մեշչանկա է: Իսկ ինքը սովորում է խորհրդային դպրոցում: Դա էլ սխալ է, որ բոլոր ոչ-կոմերիտականներին մենք համարում ենք մեշչանկաներ, մանավանդ նրանց, ովքեր մի քիչ լավ են հագնվում:

— Մի քիչ էլ դուխի են գործածում, մի քիչ էլ պուդրի են ցանում, մի քիչ էլ պոմադա են քսում…— հեգնեց Վահրիճը:

— Ի՞նչ կա որ,— ասաց Վարդանն անտարբեր,— մեզ վրա դուխի չե՞ն ցանում ածիլելուց հետո: Նո՛ւ, ոչ դուխի, այլ օդեկոլոն, բայց դա միևնույնն է, միայն կոնցենտրացիան է տարբեր…

— Ի՞նչը, ի՞նչը,— հետաքրքրվեց Գառնիկը:

— Կոնցենտրացիան: Այսինքն՝ խտությունը, անուշահոտ յուղի տոկոսը սպիրտի մեջ:

— Դու էդ բոլորը ո՞րտեղից գիտես,— ակամա հարգանքով հարցրեց Մուրադը:

— Կարդացել եմ:

— Ամեն բան կարդալով չեն սովորում: Տեսածից էլ են սովորում:

— Իհարկե,— համաձայնեց Վարդանը՝ չկռահելով ընկերոջ միամտաբար լարած թակարդի մասին:

— Դե ուրեմն ասա, դու ո՞րտեղից ես իմանում, որ չյանգյալը գդալի պես չեն բռնում՝ ոնց որ մենք երեքս ենք անում, իսկ բիսկվիտը կտրտում են չայի գդալով ու ոչ թե դանակով, ինչպես Մայիսի մեկի տոնին Գառնիկը դանակ պահանջեց թեյարանում ու դու էլ բացատրեցիր…

Վահրիճը մի քիչ ետ տարավ թաշկինակը գլխի վրայից ու թեթևակի բարձրանալով, սպասողական նայեց Վարդանի դեմքին՝ իր գլխի մոտ:

— Դա էլ է գրքերում գրած,— ասաց լենինականցին՝ մի փոքր լռությունից հետո:— Գիրքը կոչվում է՝ «Քաղաքավարության ձևերը»:

— Է՛, չեղավ,— բարձի վրա գլուխն օրորեց Մուրադը,— դա ընկերական բան չէ, ոչ էլ կոմսոմոլիստի վայել, որ բան թաքցնենք իրարից: Կարող է պատահել, որ իսկապես, էդպիսի գիրք կա, բայց դու պրակտիկա ունես, քոռ խո չե՞նք, տեսնում ենք: Ճի՞շտ է, Գառնիկ:

— Բա ի՞նչ է,— հաստատեց ընկերը:

— Նայել եմ մեր տան տերերին, նրանցից սովորել,— խոստովանեց Վարդանը:

— Ուրիշ էլ ի՞նչ ես սովորել…— նենգությամբ հարցրեց Վահրիճը:

— Շահագործել պրոլետարիատին, ապրել նրա հավելյալ արժեքի հաշվին,— հանգիստ պատասխանեց Վարդանը:

— Էլի՛ դուք զրույցը շուռ տվեցիք ուրիշ կողմ,— բարկացավ Մուրադը:

— Ես մեղավոր չեմ,— արդարացավ լենինականցին,— նա ինքն է քաղաքական աստառ տալիս իմ ամեն մի խոսքին՝ նույնիսկ կենցաղի հասարակ հարցերին:

— Էսօր երիտ-ակումբում զեկուցում կա կենցաղի հարցերի մասին,— հիշելով, ի միջի այլոց, ասաց Գառնիկը:

Վարդանը ցատկեց ոտքի:

— Լո՞ւրջ ես ասում:

— Բոլորովին լուրջ: Ի՞նչ կա որ:

— Ժամը քա՞նիսին…

— Էդքանը չկարդացի, ի՞նչ հետաքրքիր է: Երևի սովորական ժամին: Հիմի երևի կսկսվի: Չլինի՞ ուզում ես գնալ:

— Ապա, շուտ վեր կացեք,— շտապեցրեց Վարդանը բոլորին:

— Ո՞ւր…

— Վեր կացեք, վեր կացեք, էլ ոչ մի խոսք: Իսկ դու հիմար խո չե՞ս, Գառնիկ: Էդպիսի զեկուցում՝ ու դու նոր ես ասում էդ մասին: Ինչպե՞ս է, որ ես չեմ իմացել: Երեկ երեկոյան դեռ ոչ մի հայտարարություն չկար: Էյ, Մուրադ, քեզ հետ չե՞մ, վեր կաց: Վահրի՞ճ…

— Մենք առանց դայակների էլ յոլա կգնանք,— ասաց երկարահասակը՝ սանդալները հագնելով:

— Ո՞վ հավես ունի էս լավ իրիկունը թողած, գնա զեկուցում լսի,— ծուռ քիթն ավելի ծռեց Գառնիկը:— Ավելի լավ է՝ նորից գնանք տեսնենք էն կինոնկարը:

— Ոչ մի կինոնկար: Ապա, մա՛րշ…

— Որ հետաքրքիր չի եղել՝ մի լավ կծեծեմ քեզ,— խոստացավ Մուրադը:

— Ներկայացում չես գնում, որ հետաքրքիրն ես հարցնում, հարգելի ընկեր: Ոչ թե հետաքրքիր է, այլ կարևոր…

Ընկերներն իջան փողոց, դուրս ելան դեպի բոլոր ուղիների կենտրոն Աբովյանը և արագ-արագ քայլեցին դեպի երիտ-ակումբ, որը, բարեբախտաբար, հեռու չէր:

Որքա՜ն անսպասելի էր չորս ընկերների համար, երբ նրանք տեսան ակումբի դահլիճը լիք-լցված: Նստելու տեղ չկար: Զեկուցումը դեռ չէր սկսվել և դահլիճը դժժում էր բազմաթիվ կիսաձայն ու բարձրաձայն խոսակցություններից, ծիծաղից:

Իհարկե, բոլորը չէ, որ եկել էին զեկուցման նյութից հետաքրքրված: Երիտասարդության մի զգալի մասը, ամեն օր հաճախելով ակումբ, ներկա էր լինում յուրաքանչյուր զեկուցման՝ միայն թե կարճեր իր ազատ ժամերը: Իսկ այդ օրը կիրակի էր և ակումբի հաճախորդների թիվը՝ սովորականից ավելի շատ:

Ընկերներից երեքը դահլիճի զանազան կողմերում նկատելով ծանոթների, մոտեցան և մի կերպ խցկվեցին նրանց միջև՝ նեղացնելով առանց այդ էլ նեղ նրանց տեղը: Իսկ Վարդանը չնստեց, այլ ուղղվեց դեպի բեմանման հարթակի ետևի սենյակը, որի դուռը բացվում էր պատի մի անկյունում: Ներկայացումների ժամանակ դա դերասանների ելումուտի սենյակն էր, համապատասխանում էր «կուլիսների ետև»-ին, իսկ զեկուցման օրերին այնտեղից էին դուրս գալիս զեկուցողն ու նախագահության անդամները:

Իր աշխատանքի առաջին իսկ ամիսներից Վարդանը, իբրև Կենտկոմի օրգանի աշխատող, արդեն մտել էր կոմերիտմիության «ղեկավար շրջանները» և յուրային էր այնտեղ: Ավելի ճիշտ՝ ոչ թե ինքն էր մտել, այլ ներգրավել էին՝ հաշվելով նրան ավելին, քան թե մի սովորական ոճաբանի:

Սենյակը, ուր մտավ նա, նույնպես լիք-լցված էր: Աթոռների վրա և երկու լուսամուտների գոգերում նստել էին Երևանի կոմիտեի և թերթի խմբագրության աշխատողները, քարտուղարներ և ակտիվիստներ՝ զանազան բջիջներից: Նրանք բոլորը խոսակցում էին, վիճում, ծիծաղում, իսկ ոմանք էլ ծխում: Բազմոցի վրա, փռված դիրքով, նստել էին թերթի խմբագիր Հրայրը, Երևանի կոմիտեի քարտուղար Գրիգորյանը և կոմիտեի հրահանգչուհին «աղջիկների գծով»՝ Օկտան:

— Արի, Վարդան,— մի կողմ քաշվեց և տեղ արեց իր կողքին Երևանի կոմիտեի քարտուղարը:— Սեղմվիր, Օկտա:

— Չեմ նստի, ընկեր Գրիգորյան,— հրաժարվեց Վարդանը՝ բարևելով նրան և մյուսներին:

— Ո՞նց է դահլիճի վիճակը,— հարցրեց Հրայրը,— հա գալի՞ս են:

— Կանգնելու տեղ էլ չկա:

— Տղաներին բերեցի՞ր,— հարցրեց Գրիգորյանը:

— Բոլորս էլ էստեղ ենք,— հայտնեց Վարդանը և աչքերով սկսեց փնտրել ինչ-որ մեկին: Նկատելով իր ուզած մարդուն՝ ակումբի վարիչին, բազմոցից ոչ հեռու կանգնած և ամենայն հանգստությամբ ինչ-որ բան պատմելիս, նա մոտեցավ, բարևեց գլխով և հարցրեց.— Բա ինչո՞ւ երեկ հայտարարություն չկար, որ զեկուցելու ես, Համո:

— Երեկ դեռ չէի մտածել էդ մասին: Էսօր տեսա, որ ոչ մի ուրիշ միջոցառում չունենք ակումբում, որոշեցի բացը լրացնել: Իսկ ինչո՞ւ ես հարցնում: Չե՞ս տեսնում, որ բոլորն իմացել են, ու դահլիճը լիքն է հարյուր տոկոսով:

— Այո, բայց դո՞ւ երբ ես պատրաստվել:

— Վարդան,— լսվեց բազմոցի վրայից Օկտայի ձայնը:

Լենինականցին ետ նայեց:

— Ասված է արդեն: Մի կրկնիր:

— Ինչպե՞ս չկրկնեմ,— տաքացավ Վարդանը:— Բա կարելի՞ է էդպիսի պատասխանատու նյութի մասին զեկուցել՝ առանց պատրաստվելու: Ոչ թե միայն պետք է ասել, այլև հայհոյել:

— Հայհոյված էլ է:

Համոն, մի ձեռքը գրպանում, իր գործը գիտեցողի ինքնավստահ արտահայտությունը դեմքին, ներողամիտ ժպտալով իզուր անհանգստացողների վրա, ասաց՝ ավելի շուտ դիմելով բազմոցի վրա նստածներին, քան թե Վարդանին:

— Մի հուզվիր, սիրելիս: Կենցաղի հարցերը մեր ամենօրյա հարցերն են, մենք դրանք գիշերն էլ ենք տեսնում երազում: Վայ էն զեկուցողին, որը, ընդհակառակը, միշտ անտեղյակ է իր թեմային ու միայն զեկուցման առթիվ է պատրաստվում:

Եվ նայեց Երևանի կոմիտեի քարտուղարին՝ մի քիչ հարցական: Վերջինս ուզեց ինչ-որ բան ասել, բայց այդ րոպեին դուռն արագ բացվեց և ակումբի ադմինիստրատորը, դրսի գործերի առթիվ գրգռված ձայնով, բղավեց դեպի ներս:

— Համո, դռները փակում եմ, էլ տեղ ու դադար չկա:

— Ղալաթ ես անում,— ասաց Երևանի կոմիտեի քարտուղարը և դիմեց սենյակում գտնվողներին.— Ապա, ոտքի, բոլոր աթոռները դահլիճ…

— Բա մե՞նք ինչի վրա պիտի նստենք,— բողոքեցին այս ու այն կողմից:

Գրիգորյանը նայեց Հրայրին՝ կարծես օգնության կանչելով: Միաժամանակ նրա աչքերն արտահայտում էին՝ «իսկապես, էս ի՞նչ ասացի». Հրայրը ծիծաղեց: Գրիգորյանը քորեց գլուխը և նույնպես ծիծաղեց: Համոն գրպանից հանեց մի բանալի, տվեց ադմինիստրատորին.

— Իմ կաբինետում չորս աթոռ կա, բեր դահլիճ:

— Բազմոցը նույնպես,— ավելացրեց Գրիգորյանը:— Այս բազմոցը նույնպես: Վեր կաց, Օկտա: Վեր կաց, վեր կաց: Եվ մի հուզվիր,— դու նախագահության աթոռին ես նստելու: Համո, հաստ տախտակներ ունե՞ս:

— Հաստ տախտակնե՞ր…— փորձեց հիշել ակումբի վարիչը:

— Այո: Անցած շաբաթ ես ստացել:

— Բայց ես դրանք մեխել եմ պադվալում: Պերեգարոդկա եմ արել:

— Պոկել տուր: Վաղը նորից տեղը կամրացնես: Զգույշ թող լինեն, վրան մեխ չմնա, շալվար-մալվար պատռի:

Համոն դուրս վազեց:

Երբ դռան երկու փեղկերն էլ բաց արեցին՝ բազմոցը դուրս տանելու համար, հավաքվածների աղմուկը ներխուժեց սենյակ: Լուսամուտների գոգերում նստածներն անհանգստացան, որ տեղ չեն գտնի, և բազմոցի ետևից նետվեցին դուրս:

— Է՛յ, արիստոկրատիա,— ձայն տվեց Գրիգորյանը,— ապա, ետ դարձեք: Դուք տախտակների վրա էլ կնստեք:

Դռները նորից ծածկեցին, և հավաքվածները, օգտվելով միասին լինելու առիթից, շարունակեցին զբաղվել զանազան կարևոր, բայց զեկուցման հետ կապ չունեցող հարցերով:

— Ինչպե՞ս են գործերդ, Վարդան,— հարցրեց Գրիգորյանը:

— Ինչպե՞ս պիտի լինեն: Ոչինչ: Բայց մի քանի գործերով հենց ուզում եմ գալ ձեզ մոտ, ե՞րբ ազատ կլինեք:

— Եկ՝ երբ ուզում ես:

Պայմանավորվեցին հենց հետևյալ օրը:

Դուռը նորից բացվեց, նորից ներս մտավ ադմինիստրատորը՝ այս անգամ առանց աղմուկի: Արագ մոտենալով այն խմբին, որտեղ կոմիտեի քարտուղարն էր կանգնած, նա ասաց անհանգստացած ձայնով.

— «Նախկին» դաշնակ երիտասարդները խմբով եկան…

— Իդիո՛տ,— զայրացած բացականչեց Օկտան Համոյի հասցեին,— մի օրվա մեջ զեկուցում է պատրաստել… Հետաձգել է հարկավոր, ընկեր Գրիգորյան:

Ադմինիստրատորը հարցական նայեց քարտուղարին:

— Դու գնա, մի բացակայիր,— ասաց քարտուղարը նրան:

— Ոչինչ չենք հետաձգում: Ուզում եք ասեն, թե վախեցա՞նք:— Նա նայեց Օկտային: Յունգ-շտուրմի համազգեստ հագած, «աղջիկների գծով» հրահանգչուհին իր բարկության այդ րոպեին իրոք որ գեղեցիկ էր: Զինվորական կանաչավուն վերնաշապիկը, որն իջել էր կապույտ շրջազգեստի վրա, բոլորովին էլ չէր սքողում նրա կանացիությունը: Գոտին սեղմել էր առանց այն էլ բարակ մեջքը, իսկ գոտկակալը, կրծքի վրայով շեղակի ձգված դեպի ուսը, երկու մասի էր բաժանել հուզված կուրծքը: Նրա փոքր, բայց չափազանց աշխույժ աչքերը փայլում էին «հերսից»:

Օկտան նկատեց, որ իրենով հիանում են, շփոթված ժպտաց, կարմրեց, ապա լեզու հանեց Գրիգորյանին և հեռացավ: Գրիգորյանը նայեց շուրջը, թե ոչ ոք չտեսա՞վ արդյոք նրա «ոչ-ղեկավարական» թուլությունը: Հրայրը, քթի տակ ժպտալով, շուռ տվեց երեսը մի կողմ: Վարդանը չհասցրեց:

— Ո՞նց է սազում անպիտանին բարկանալը,— դիմեց Գրիգորյանը նրան:— Նկատե՞լ ես:

— Դա չնկատելու բա՞ն է,— զարմացավ Վարդանը:

Երիտասարդները հառաչեցին և բաժանվեցին զանազան կողմեր:

— Օկտա…— ձայն տվեց Երևանի կոմիտեի քարտուղարը:

Աղջիկը կասկածանքով նայեց նրան: Բայց Գրիգորյանի աչքերում խաղացկուն արտահայտության հետքն անգամ չէր մնացել: Աղջիկը մոտեցավ:

— Դրանք իզուր տեղը չէ, որ եկել են, Օկտա: Պատրաստվիր ելույթի: Վախենում եմ Համոն խայտառակի մեզ:

— Ե՞րբ պատրաստվեմ,— վրդովվեց հրահանգչուհին,— կատարված փաստի առաջ դրեց մեզ անպիտանը:

— Բաց անել տուր գրադարանը, թարմացրու հիշողությանդ մեջ անհրաժեշտ գրականությունը…

— Թարմ է, ընկեր Գրիգորյան: Ես կխոսեմ, բայց հո չե՞մ կարող զեկուցողին փոխարինել:

— Մի քանի կրակոտ տղաներ որ վեր կենան, շատ լավ էլ կփոխարինեն:

— Ուրեմն պիտի կազմակերպել,— համաձայնեց աղջիկը:— Սպասիր: Հրա՛յր…

Խմբագիրը մոտեցավ:

— Դե նա կխոսի, իհարկե,— գլխով արեց Գրիգորյանը:— Բայց էլի պետք է հանել մի քանիսին:

— Դու էլ կխոսես,— ասաց Հրայրը քարտուղարին:

— Ես…— ցավակցությամբ օրորեց նա գլուխը ու նայեց ժամացույցին:— Հենց հիմա սկսվելու է Կենտկոմի բյուրոյի նիստը…

— Բացակայիր, ընկեր Գրիգորյան:

— Չի կարելի:

Այնուամենայնիվ նա ոչ ոքի ոչինչ չասելով, դուրս ելավ սենյակից, դանդաղ անցավ դահլիճով՝ նայելով «նախկին» դաշնակներին, ապա հավաքված երիտասարդությանը, գնաց Համոյի կաբինետը և հեռախոսով կապվեց կոմերիտմիության Կենտկոմի քարտուղարի հետ:

— Թող և եկ,— եղավ պատասխանը:— Մի զեկուցման մեջ հեղափոխության բախտը չի վճռվում:

— Այո, բայց լավ չէ՝ եթե տապալվենք:

— Չենք տապալվի,— լսվեց Կենտկոմի քարտուղարի ձայնը, որը, ինչպես թվաց Գրիգորյանին, ավելի անհոգ էր, քան հարկավոր էր այդ պահին:— Երբեք մի մոռանա, որ ինձանից ու քեզանից բացի ուրիշ կոմերիտականներ էլ կան՝ գուցե մեզանից էլ ավելի պատրաստված: Կտան հարկ եղած հակահարվածը:

— Դա էդպես է,— համաձայնեց Գրիգորյանը:— Ավելի ճիշտ՝ էդպես կարող էր լինել, եթե էդ քյալլագյոզը լավ կազմակերպած լիներ երեկոն:

Կենտկոմի քարտուղարը մի պահ պաուզա տվեց, ապա հեռախոսափողը նորից ճպճպաց.

— Ո՞վ կա էդտեղ մեր բանիմաց տղաներից:

Գրիգորյանը թվեց:

— Եվ հետո՝ մասսան,— ավելացրեց նա,— դահլիճում նստած են մեխանիկական գործարանի կրակոտ տղաներից շատերը: Մի քանի հոգի էլ, մոռացա ասել, կուսակցական ընկերներից են հետաքրքրվել եկել…

— Թող և եկ,— կրկնեց Կենտկոմի քարտուղարը որպես եզրակացություն:— Ամեն ինչ լավ կանցնի: Բայց գալուցդ առաջ մի անգամ էլ խոսիր տղաների հետ, զգուշացրու: Իսկ դաշերիտներից ո՞վ կա էդտեղ, ճանաչո՞ւմ ես:

Գրիգորյանը ճանաչում էր նրանց մեծ մասին և սկսեց անվանել նրանց:

— Զգուշացրու լուրջ կերպով,— նորից ասաց Կենտկոմի քարտուղարը:

Իսկ դահլիճն աղմկում էր այն սպասողական խուլ աղմուկով, որը նախորդում է բոլոր լարված և կարևոր դիսպուտներին ու դիսկուսիաներին: Բարձրաձայն ենթադրություններ՝ երեկոյի մասին, լուռ հայացքներ՝ դեպի սենյակի դեռ ծածկված դուռը, կիսաձայն հաղորդում միմյանց՝ դաշնակների ներկայության մասին, մեկ այստեղ, մեկ այնտեղ տեղից բարձրացող երիտասարդներ, որոնք նայում են դաշերիտների խմբին, որի հետ, ով գիտե, գուցե հարկ կլինի այսօր թուր թրի խփել: Այսինքն ինչպե՞ս թե՝ «գուցե»: Դա անխուսափելի է…

— Քիչ մնաց, որ չգայինք,— ուշացած վախով ասաց Մուրադն իր կողքերին նստածներին՝ իր բանֆակի ընկերներին:— Մի Գառնիկ ունենք, նա է մեղավոր: Կարդացել էր հայտարարությունն ու եկել հանգիստ պառկել իր համար: Քիչ մնաց, որ գնայինք կինո…

Երիտ-ակումբի դահլիճն արդեն իրենից ներկայացնում էր մի հոծ բանակի իջևանատեղ: Դահլիճի հիմնական աթոռների քառանկյունին չորս կողմից շրջապատված էր մյուս սենյակներից բերված զանազանաձև աթոռների, բազմոցների, տախտակներից սարքված նստարանների լայն շրջանակով, որը երեք կողմերից հասնում էր մինչև պատերը, իսկ առջևի կողմից՝ մինչև բեմահարթակի եզրը: Բայց հարթակի վրա ևս, նախագահության աթոռների ետևում, դրված էին տախտակից սարքված նստարաններ, որոնց վրա նույնպես խռնվել էր երիտասարդությունը:

Դաշնակցական երիտասարդները, թեև ուշ եկած, բայց տեղավորվել էին առաջին երկու շարքերում, որոնք կոմերիտականներ ազատ էին թողել՝ սպասելով ավելի հաճելի հյուրերի, քան դրանք:

Դաշնակները մոտ տասը հոգի էին: Բոլորը լավ հագնված, լավ սնված, դեմքերի ինքնավստահ և անպատկառ արտահայտությամբ: Համարյա բոլորը հաղթանդամ էին ու գեղեցիկ, բայց ինչ-որ վանող բան կար այդ գեղեցկության մեջ.— երևի դա այն մեծամիտ ու արհամարհական անտարբերությունն էր դեպի շրջապատը, որն ընդգծված կերպով երևում էր նրանց ամեն մի շարժման ու միմիկայի մեջ:

Միայն նրանցից մեկը, որին դաշերիտներն իրենց շրջանակում «թեորետիկ» էին անվանում, խիստ տարբերվում էր մյուսներից: Նիհար և ընդհանրապես փոքրամարմին, մի քիչ կուզ, նա ուներ ժամանակից շուտ մաշված ու տարեց դեմք, թեև հասակակից էր մյուսներին: Նրա մագաղաթի գույնի հիվանդոտ այտերի վրա իջել էին արտասովոր երկարություն ունեցող բակենբարդներ: Նա ընդհանրապես միակն էր Երևանում և անշուշտ ամբողջ Հայաստանում, որը բակեններ էր կրում:

Մինչդեռ «թեորետիկի» բոլոր ընկերները հագնված էին աշնանավարի թեթև՝ ուսանողական սև բլուզներ, «ապաշներ» և ամենաշատը՝ մոխրագույն թեթև կոստյումներ, նա միակն էր, որ նստել էր մուգ-սրճագույն տաք կոստյումով և դեռ դրա վրայից էլ հագած դեղին վերարկուով: Նա ոչ թե նստել, այլ կիսապառկել էր աթոռի վրա՝ ոտներն առաջ ձգած: Նրա բաճկոնի և վերարկուի օձիքները ետևի կողմից վեր էին բարձրացել և համարյա թաղել նրա գլուխն իրենց մեջ: Մուգ փողպատի ծայրը դուրս էր պրծել ոչ միայն բաճկոնի, այլև վերարկուի տակից և այժմ հանգչում էր դրա դեղին ֆոնի վրա:

«Թեորետիկը», որը միակ անճաշակ հագնվածն էր նրանց մեջ, տգեղը և հիվանդոտը, նստած էր վայելչատես խմբի կենտրոնում: Երկու կողմից և ետևից հաղթամարմին, կուշտ սնված դաշերիտները շրջապատել էին նրան և, ուրիշների հանդեպ սանձարձակորեն արհամարհոտ, միմյանց նկատմամբ ազատորեն հավասար, նրան վերաբերվում էին հարգանքով ու պատկառանքով: Սենյակի դուռը բացվեց, դահլիճ դուրս եկան այնտեղ գտնվողները: Երեք հոգի բարձրացան բեմահարթակ, իսկ մյուսները, այդ թվում նաև Վարդանը, անցան դահլիճ ՝ աչքերով որոնելով համեմատաբար ցանցառ նստած շարքեր:

Օկտան սեղանի ետևում գրավեց կենտրոնական աթոռը, նրա մի կողքին նստեց Համոն՝ միակ հանգիստ մարդն ամբողջ դահլիճում, իսկ մյուս կողքին՝ կաշեգործարանի կոմերիտական բջիջի քարտուղարը՝ գործունյա և լուրջ երիտասարդ, որը միայն մի թուլություն ուներ՝ սիրում էր նստել նախագահությունների սեղանների ետևում: Ընդ որում, նրա դեմքի վրա լինում էր այնպիսի մտազբաղ և հոգնած արտահայտություն, կարծես ամբողջ հավաքույթի, զեկուցման, նախագահելու և այլ հոգսերը ծանրացած էին նրա ուսերին:

— Ընկերներ…— ասաց Օկտան՝ ցուցամատը տկտկացնելով արծաթափայլ զանգի կոճակի վրա: Իսկ երբ դահլիճում տիրեց լռություն, նա շարունակեց.— Ինչպես ձեզ հայտնի է, հին կենցաղը փուլ է գալիս և ստեղծվում է նորը: Մենք՝ կոմերիտականներս, առաջին հերթին ինքներս ենք դրա ստեղծողը, հետևաբար նաև՝ պատասխանատուն: Բայց մենք ոչ միայն ստեղծում ենք նոր կենցաղը, այլ մտածում ենք այդ մասին, թե ինչպես ստեղծենք, կազմակերպենք: Առանց դրա չի կարելի: Պրակտիկա և թեորիա՝ ասել է Մարքսը…

— Մի քիչ սխալ եք բերում ցիտատը, բայց ոչինչ,— ասաց դաշերիտների «թեորետիկը»՝ առանց աղջկան նայելու:

Օկտան ուշադրություն չդարձրեց նրա վրա և շարունակեց.

— Իհարկե, սա վերջին անգամը չէ, որ մենք քննելու ենք կենցաղի հարցերը: Թույլ տվեք, ուրեմն, զեկուցման համար խոսքը տալ ընկեր Համոյին: Խնդրեմ, ընկեր Համո…

Ակումբի վարիչը միշտ մի ձեռքը գրպանում, մյուսը՝ կրծքի առջև պահած, հռետորի դիրքով, առաջ եկավ և կանգնեց այնտեղ, որտեղ սովորական ամբիոնն է դրված լինում: Լսվեցին երկու, թե երեք ծափեր: Համոն ձեռքը հանեց գրպանից, շարժեց փոթորկոտ ծափահարություններ խաղաղեցնելու ձևով: Դաշերիտները, որոնք առաջին անգամն էին տեսնում նրան, հետաքրքրված ձգվեցին առաջ՝ ուշադիր լսելու և գնահատելու համար նրա կշիռը: Երկրորդ շարքի նստածներն արմունկները դրեցին առջևի աթոռների թիկնակներին և մարագ մտած կատուների պես սկսեցին անթարթ նայել զեկուցողին:

— Ընկերներ,— սկսեց Համոն,— ինչպես Օկտան ասաց, կենցաղի հարցերը,— ես նկատի ունեմ և՛ հին կենցաղը, և՛ նորը,— կարևոր հարցեր են…

Օկտան աննկատելիորեն թթվեցրեց դեմքը: Նրան դուր չեկավ, որ առաջին իսկ խոսքերից զեկուցողը հենվեց ուրիշի վրա՝ նրա վրա: Սեփական ասելիք չունի՞, ինչ է…

Իսկ Համոն շարունակեց.

— Ես ընկեր Օկտայի հետ համաձայն եմ նաև երկրորդ հարցում, որ մենք վերջին անգամը չէ, որ խոսում ենք այդ հարցերի մասին…

«Կարծես զեկուցողը ես էի, իսկ ինքը մտքերի փոխանակության կարգով է ելույթ ունենում: Իդիոտ...»— զայրացավ մտքում Օկտան և գլուխը կախեց զանգի վրա:

Դաշերիտները նայեցին իրար և ապա «թեորետիկին»: Վերջինս՝ առանց աչքը կտրելու զեկուցողից, ձեռքով արեց յուրայիններին.— «սպասեցեք տեսնենք ինչ է ասում»…

Չէր անցել դեռ երկու րոպե, երբ ամբողջ դահլիճը կշռեց ու գնահատեց զեկուցողին. նա ճոռոմախոս էր, իսկ նրա զեկուցումը՝ ջուր…

Դաշերիտները խրախճանքով նայեցին իրար: Նրանց լարվածությունն իսկույն չքացավ: Իսկ դահլիճում սկսվեց ամենասարսափելի բանը հռետորի համար՝ մասնավոր խոսակցությունների խուլ դժժոցը:

Համոն իսկույն զգաց իր պարտությունը և սառը քրտինքը պատեց նրան: Նա չէր կարողացել իր ձեռքը հավաքել աուդիտորիան, որն այժմ ապրում էր իր անկախ, ուրույն կյանքով…

— Դեռևս ընկեր Լենինը,— ձայնը բարձրացնելով, փորձեց նա այդ ձևով գտնել կորցրածը,— Ինեսա Արմանին գրած…

— Ոչ, թե Արմանին, այլ Արմանդին,— ուղղեցին «թեորետիկն» ու մեխանիկական գործարանի բանվորներից մեկը միաժամանակ:

Համոն ձեռքով արեց, այսինքն՝ հանգստացեք, ես գիտեք ինչ եմ ասում.. Այնուամենայնիվ, ուղղելով, կրկնեց.

— Ինեսա Արմանդին գրած իր նամակում...

— Ո՞ր նամակում,— հարցրեց «թեորետիկը»,— որքան հայտնի է, Լենինը երկու նամակ է գրել նրան:

— Ձեզ որ մնա՝ քսանը գրած կլինի,— արհամարհանքով ձեռքը թափ տալով, դուրս տվեց Համոն և վստահ նայեց դահլիճին՝ սպասելով բուռն ծիծաղի: Բայց միայն դաշերիտները, իրար նայելուց հետո, բարձր հռհռացին:

— Չխանգարել,— սաստեց Օկտան՝ շատ ավելի Համոյի վրա զայրացած, քան թե նրանց:

— Դա դաշերիտներն են խանգարում,— բղավեց Վահրիճը:

Դաշնակ երիտասարդներից մեկը վեր ցատկեց տեղից, նայեց ետ՝ տեսնելու համար, թե ով էր բղավողը: Նայեց երկար, ուշադիր, կարծես միտքը սահելու համար նրա դեմքը, և նստեց:

Համոն կառչեց այդ նոր մտքին.

— Այո, ընկերներ, դաշնակները, իհարկե, դեմ են նոր կենցաղին: Նրանք արտասահմանում, իրենց թերթերում, գրում են այն մասին, իբր թե…

Եվ տեղնուտեղը հնարեց մի փչոց:

— Արտասահմանյան թերթերում այդպիսի…— բղավեց դաշերիտներից մեկը «թեորետիկի» կողքին նստած, ցանկանալով ասել, որ «այդպիսի բան չի գրված»: Բայց «թեորետիկը», առանց աչքը կտրելու զեկուցողից, ոտքի մի ուժեղ, բոլորովին էլ ոչ «թեորետիկական» հարված հասցրեց նրա ոտքի չոր տեղին և սեղմեց իր գունաթափ շրթունքները:

— Դու խո չե՞ս ցնդվել, ախմախ,— շշնջաց երկրորդ շարքից մեկը՝ բացբերանի ականջին:— Դու որտեղի՞ց գիտես, թե ինչ է գրված դաշնակների թերթերում… Մի՞թե մենք ստանում ու կարդում ենք դրանք: Խելքդ որտե՞ղ է…

— Մարտի ութն ազատագրեց կանանց,— թփից թուփ ցատկոտելով, շարունակեց Համոն:— Այժմ կանայք իրավահավասարազոր են մեզ: Հեղափոխությունն ազատում է կնոջը խոհանոցի աշխատանքից: Ահա նոր կենցաղի նախապայմաններից մեկը: Եվ մեր կոմերիտմիությունը գտնվում է նոր կենցաղի առաջին շարքերում…

Օկտան ամոթից կախել էր գլուխը: Դահլիճում շատերը նույնպես: Մեխանիկական գործարանի երիտասարդ բանվորները, կատաղած դեմքերով, պատրաստ էին վազելու բեմահարթակ և ծեծելու ձախողված զեկուցողին:

— Քաղքենիությունն արդեն ընկել է հնի գիրկը և դեռ ընկնում է,— հուսահատ, արդեն իր «ապլոմբը» կորցրած, շարունակում էր Համոն,— այժմ մեր աղջիկները դուխի և պուդրի չեն գործածում, ինչպես նաև պոմադա: Նրանք չեն ցցում իրենց կանացի հմայքները՝ դասակարգային ճիշտ ուղիներից շեղելու համար իրենց ընկեր կոմերիտականներին: Նրանք, ինչպես հավասարները հավասարների հետ, ձեռք- ձեռքի տված նրանց հետ, գնում են դեպի սոցիալիզմ…

Վերջին բառը, յուրաքանչյուր կոմերիտականի համար սրբազան, նա արտասանեց բարձր և, իհարկե, ստացավ ծափահարություններ: Դրանից ոգևորված, նա շարունակեց.

— Ահա կանացի այդ հմայքների սքողման համար է, որ մեր աղջիկների մեջ, թեկուզև դանդաղ, բայց հետզհետե լայն ծավալ է ստանում կաշվե պիջակը, կեպին…

— Ճիշտ է, բռավո,— բղավեց Վահրիճը:

— Այո, կաշվե պիջակը, կեպին…— կրկնեց զեկուցողը:

— Ծխախոտը, տղամարդավարի խոսելը…— շարունակեց դաշնակներից մեկը և նայեց «թեորետիկին»: Վերջինս գլխով հավանության նշան արեց:

— Ո՞վ է շարունակ խանգարում առաջին շարքերում,— տեղից վեր ցատկեց Օկտան:

— Ռեալիկայի կարգով ամեն ինչ կարելի է,— ասաց մի դաշնակ:

— Դուրս անել, դրանք խորթ էլեմենտներ են,— ձայն տվեցին դահլիճից:

— Ձեզ էլ հենց էդ է հարկավոր՝ դուրս անել, որպեսզի քննադատողներ չլինեն, ասաց «թեորետիկը»՝ առանց ետ նայելու,— բայց չէ՞ որ սա դիսպուտ է:

— Մենք ոչ ոքի դուրս չենք անում,— ասաց Օկտան,— միայն թե առաջարկում ենք կարգ պահպանել, այսինքն՝ լռել:

— Ամենաանկարգը զեկուցողն է, որովհետև նա բոլորից շատ է խոսում,— սրախոսեց մի դաշնակ: Մյուսները միահամուռ հռհռացին: Ծիծաղեցին նաև կոմերիտականներից շատերը:

— Մենք գիտենք, թե դուք ինչի համար եք եկել,— դիմեց Համոն դաշերիտներին:— Եվ մենք պատրաստ ենք ընդունելու ձեր մարտահրավերը:

— Ըստ կարգի,— տեղից վեր ցատկելով, ասաց «թեորետիկը» և իր նիհար, հիվանդոտ ձեռքը երկարեց դեպի Օկտան:

— Չխանգարել զեկուցողին,— աղմկեցին դահլիճում:

— Ես ձայն եմ պահանջում ըստ կարգի,— մեկնած ձեռքը ցնցելով, կրկնեց «թեորետիկը»:

— Խնդրեմ,— ստիպվեց ձայն տալ նրան Օկտան:

«Թեորետիկը», բաճկոնի և վերարկուի բոլոր կոճակներն արձակած, ինչպես հաստ պատյանի միջից երևացող վտիտ հարսնյակ, դարձավ դեպի դահլիճը և ասաց.

— Ես հարց եմ տալիս զեկուցողին՝ ովքե՞ր են այդ «մենք»-ը:

— Դուք…— սկսեց Համոն, բայց Օկտան ընդհատեց նրան և ոտքի ելավ:

— Դուք…— սկսեց նա, բայց նրան ևս, իր հերթին, ընդհատեց «թեորետիկը»:

— Ոչ,— ասաց նա,— թող զեկուցողն ինքը պատասխանի:

— Դա ձեր գործը չէ, թե ով է պատասխանում,— զայրացավ Օկտան:— Ես նախագահում եմ և ինքս եմ պատասխանում: Իսկ դուք, ընկեր կամ քաղաքացի, խոսելիս շուռ եկեք այս կողմ, դուք հարցը մեզ եք տվել և ոչ թե դահլիճին: Այդպես: Իսկ հիմա լսեցեք: «Դուք» ասելով մենք հասկանում ենք կարգ խանգարողներին: Ուրիշ բան մի վերագրեք մեզ: Վերջացրեք ձեր խոսքը, ընկեր Համո…

Բոլորի համար միանգամայն հասկանալի էր, որ Օկտան պատահաբար չէ, որ ասաց «վերջացրեք» և ոչ թե «շարունակեցեք»:

— Ես վերջացնում եմ, ընկերներ,— շտապեց կառչել փրկության այդ ծղոտից Համոն:

— Իսկ սկսե՞լ էիր որ,— չհամբերելով, զայրացած ձայն տվեց մեխանիկական գործարանի բանվորներից մեկը:

Բոլորը ծիծաղեցին: Դաշնակներից երկուսը վեր կացան և ժպտերես, քաջալերաբար, նայեցին ռեալիկա տվողին:

— Տեղներդ վեր ընկեք,— ասաց երիտասարդ բանվորը:— Ո՞նց էլ ձեռաց ուրախացան:

— Ես վերջացնում եմ,— կրկնեց Համոն:— Ճիշտն ասած, ես այսօր մտադրություն էլ չունեի զեկուցում տալու, այլ պետք է դնեի և դրեցի մի շարք հրատապ հարցեր, որպեսզի դրանց շուրջը ծագեր մտքերի փոխանակություն: Եվ դա, ինչպես տեսնում եմ, ինձ հաջողվեց, ես կարողացա բորբոքել ձեր ակտիվ հետաքրքրությունը…

— Դուք արդեն վերջացրի՞ք, ընկեր Համո,— սոսկալի զայրացած, այլևս առանց «ցերեմոնություն» անելու նրա հետ, հարցրեց, բայց փաստորեն նրա ձայնը կտրեց Օկտան և, իհարկե, առանց նրանից պատասխան սպասելու, դիմեց դահլիճին.— քանի որ ընկեր Համոյի զեկուցումը, այսինքն՝ ներածական խոսքը, երկար չէր, ուստի և, իմ կարծիքով, կարիք չկա ընդմիջում հայտարարելու: Խնդրում եմ ելույթ ունենալ ցանկացողներին՝ հանդես գալ…

Նա նստեց: Համոն, թրջված հավի նման, շփոթված ժպտալով, եկավ և նստեց իր տեղը:

— Իդիոտ…— շշնջաց Օկտան նրա ականջին:

Կաշեգործարանի կոմերիտական բջիջի քարտուղարը, որն ամբողջ զեկուցման ընթացքում հրեշներ և դժոխքի սատանաներ էր նկարում իր փոքրիկ բլոկնոտի մեջ, պոկեց այնտեղից մի թերթիկ, վրան գրեց՝ «ապուշ», և տվեց նախագահին՝ գլխի շարժումով խնդրելով հանձնել մյուս կողմում նստածին:

Օկտան աչքի ծայրով նայեց թերթիկին, վերադարձրեց դա տիրոջը և շշնջաց նրա ականջին.

— Ասված է:

17

Թեև ընդմիջում չէր հայտարարված, բայց դա տեղի ունեցավ անհրաժեշտության բերումով, մի քանի րոպեով: Ճիշտ է, դահլիճում ունկնդիրները շարունակում էին նստած մնալ իրենց տեղերում և սպասել, բայց դիսպուտն անմիջապես չշարունակվեց: Դահլիճի զանազան կողմերից դեպի բեմահարթակ էին շտապել մեխանիկական գործարանի և կաշեգործարանի երիտասարդ բանվորները, ակտիվիստներ, բջիջների քարտուղարներ, Հրայրը, Վարդանը, Վահրիճը… Սեղանը չորս կողմից շրջապատած, դեպի Օկտան թեքված, նրանք այժմ շշուկով քննում էին երեկոն շարունակելու կարգը. արդյոք իսկույն հանդե՞ս բերել «կարող ուժերին», թե՞ հերթը տալ առայժմ դաշնակներին… Ի՞նչ վերաբերմունք ցույց տալ ելույթների մեջ Համոյի զեկուցմանը՝ լռե՞լ դրա մասին, թե՞ հայհոյել… Չզանգահարե՞լ արդյոք Կենտկոմ և իմանալ՝ դեռ չի՞ վերջացել բյուրոյի նիստը: Չինդրե՞լ, որ այնտեղից էլ գան և ելույթներ ունենան: Իսկ ավելորդ խուճապայնություն չի՞ լինի դա արդյոք…

Իրար գլխի հավաքված, խորհրդակցում էին նաև դաշերիտները: «Թեորետիկը», որը, վերջապես, հանել է վերարկուն և գցել ընկերներից մեկի ծնկներին, առանց քողարկելու, մատով մեկառմեկ ցույց էր տալիս բեմահարթակում հավաքվածներին և ինչ-որ բան էր ասում կամ հարցնում նրանցից յուրաքանչյուրի մասին: Հետո երևի ասաց ինչ-որ ծիծաղելի բան, որովհետև բոլորը միանգամից հռհռացին, իսկ նա, առանց փոխելու դեմքի լուրջ և խիստ արտահայտությունը, շարունակեց իր խոսքը:

Դահլիճն զգում էր, որ կարևոր բան է պատրաստվում, և համբերատար սպասում էր: Մի տեղում աթոռներից մեկը հանկարծ դուրս պրծավ տախտակի ծայրի տակից և բոլոր նստածները թափվեցին հատակին: Բարձրացավ ծիծաղ և ամենից շատ ծիծաղեցին հենց ընկածները: Իսկույն վեր կենալով, նրանք նորից սարքեցին իրենց նստարանը:

Ծիծաղը ցրեց դահլիճի լարված-սպասողական տրամադրությունը, զվարթացրեց մարդկանց: Իսկ բեմահարթակի վրա, վերջապես, խորհրդակցությունն ավարտվեց, հավաքավածները միանգամից շտկվեցին, վեր բարձրացան սեղանի վրայից և ցրվեցին իրենց տեղերը: Օկտան ձեռքը տարավ դեպի զանգի կոճակը: Հրայրն էլի ինչ-որ բան ասաց նրա ականջին, Օկտան երկու անգամ դրականորեն թափ տվեց գլուխը և զանգահարեց.

— Ուշադրություն, ընկերներ, շարունակում ենք: Ո՞վ է ուզում ելույթ ունենալ…

Ոչ ոք չարձագանքեց: Դահլիճում նստած բազմաթիվ կոմերիտականներ, որոնք զեկուցման ժամանակ հազիվ էին զսպում իրենց և անհամբեր սպասում էին դրա ավարտվելուն, որպեսզի ելույթ ունենան, այժմ հասկացան, որ հարկավոր չէ շտապել: Եթե խորհրդակցողները որոշել են ելույթ ունենալու մասին առաջարկն անելուց հետո հանդես չբերել իսկույն որևէ ընկերոջ, այլ սպասել, ապա հասկանալի է, որ այդպես է հարկավոր: Այլապես Օկտայի հարցից հետո այսինչ ընկերն իսկույն ձայն կխնդրեր և կխոսեր: Միութենական կազմակերպվածության ոգին, առանց բառերի և առանց հրահանգի, միանգամից համակեց ամբողջ դահլիճին:

Դաշերիտները նայեցին իրար երեսի: Հայացքներից երևում էր, որ նրանք սպասում էին այդպիսի ընթացքի, դա նրանց ենթադրած վարիանտներից մեկն էր և նրանք նախապատրաստվել էին ինչպես այն վարիանտի համար, երբ առաջինը կխոսեին կոմերիտականները, այնպես էլ այս վարիանտի համար: Պարզ է, որ կոմերիտականներն ուզում են նախ նրանց հանել բեմահարթակ: Պետք էր ընդունել մարտահրավերը…

— Ինձ կարելի՞ է,— հարցրեց «թեորետիկը»՝ ձեռքը մեկնելով:

— Խնդրեմ,— ասաց Օկտան և դիմեց դահլիճին:— Ձայնը տրվում է Ջաբարյանին:

Ասաց և լռեց: Ինչո՞ւ էր հարկավոր ցույց տալ, որ նրան հայտնի էր դաշնակ երիտասարդի ազգանունը… Պետք էր այնպես ձևացնել, թե նա գաղափար անգամ չուներ այդ սուբյեկտի գոյության մասին, պետք էր հարցնել նրա ազգանունը…«Իդիոտկա»,— ասաց նա իր մասին և մի քիչ հանգստացավ:

— Ես ուշադրությամբ լսեցի զեկուցումը «Կենցաղի հարցերի մասին»,— սկսեց իր խոսքը «թեորետիկը»՝ հանգիստ և միանգամայն հաշտ ձայնով:— Ճիշտն ասած, սկզբում՝ ինձ թվաց, թե զեկուցողը մի քիչ բոբիկ է…

— Իսկ հետո պարզվեց, որ բոլորովին է բոբիկ,— ռեպլիկա բաց թողեց դաշնակներից մեկը:

Դահլիճում ծիծաղեցին: Ջաբարյանը ներողամիտ ժպտաց՝ ցույց տալով, որ նա ռեպլիկան համարում է թույլ կատակ, նայեց ռեպլիկան բաց թողնողին, որը սարսռաց «թեորետիկի» հայացքի՝ միայն նրան և մյուս դաշնակներին տեսանելի թաքուն ցասումից:

— Իսկ հետո պարզվեց,— շարունակեց Ջաբարյանը,— որ զեկուցողն այստեղ բոլորովին մեղավոր չէ, նա շատ էլ լավ պատրաստված էր և ընդհանրապես ցույց տվեց իր կոփվածությունը: Նա արեց ամեն հնարավոր բան՝ իր թեզիսներն ապացուցելու համար: Այնպես որ, ինչպես նման դեպքերում դուք ասում եք ձեր բջիջներում, ես «զեկուցումը համարում եմ բավարար»…

Դահլիճով շարժում անցավ: Բոլորը, ծայր աստիճան հետաքրքրված և դեռ ոչինչ չհասկանալով ելույթ ունեցողի վարմունքից, բացարձակ լռության մեջ լսում էին նրան:

— Եվ դա բոլորովին էլ զեկուցողի մեղքը չէ,— շարունակեց Ջաբարյանը,— որ նա, չնայած իր աչքի ընկնող իրազեկությանն այդ թեմային, չկարողացավ ապացուցել իր թեզերը: Չկարողացավ այն պարզ պատճառով , որ դարերից ի վեր գոյություն ունեցող կենցաղը ոչնչով էլ «հին» չէ, իսկ «նոր» կենցաղ պարզապես գոյություն չունի և չի կարող ունենալ…

«Ահա թե ինչ…»— հասկացավ դահլիճը:

— Ինչպե՞ս թե գոյություն չունի,— լսվեց մի աղջկա բարակ, զայրացած ձայն:

Ջաբարյանն իրանով ձգվեց դեպի հարց տվողը և, կարծես խոսելով երեխայի հետ, իրար խփելով թափ տվեց ձեռքերը.

— Չկա: Կատուն կերել է:

Ապա նորից դառնալով ամբողջ դահլիճին, նորից ընդունեց չափահասների հետ խոսողի լուրջ տոն և շարունակեց.

— Կենցաղը՝ դա էլ խո սոցիալական սիստեմ չէ՞, որ վերցնեք ու ոչնչացնեք: Կենցաղը դարերով ստեղծված կենսավիճակ է և դա վեր է ամեն դասակարգայնությունից: Վերցնենք, օրինակ՝ կնունքն ու հարսանիքը: Դրանք ինչպես կային կապիտալիզմի օրոք, այնպես էլ եղել են ֆեոդալիզմի ժամանակ և ավելի վաղ: Իսկ ինչո՞վ եք ժխտում, թե չեն լինելու նաև ապագայում: Եվ ինչո՞ւ չլինեն, ձեզ եմ հարցնում, ինչո՞ւ չլինեն…

Ըստ երևույթին այդ հարցը, որպես հռետորական պրիոմ, նրան դուր եկավ և նա կրկնեց նորից՝ ավելի եռանդուն և բողոքող ձայնով.

— Այո, ինչո՞ւ չլինեն: Ո՞ւմ է խանգարում այն, որ ծնողները և նրանց հարազատներն ուրախանում են նոր մարդու, նոր քաղաքացու ծնունդով կամ երկու երիտասարդների կյանքերի միավորումով: Ինչո՞ւ չուրախանալ, հը՞…

Եվ նա մի այնպիսի դառը հայացքով նայեց դահլիճում նստածներին, կարծես ապացուցված ճշմարտություն էր, որ նրանք չեն ուրախանում այդ մարդկային ուրախություններով:

Դահլիճը լսում էր լուռ, առանց որևէ ռեպլիկա արձակելու: Բոլորն այնտեղից թշնամանքով էին նայում դաշնակցական երիտասարդին և մազաչափ չէին համոզվում նրա ասածներում: Նրանք պատրաստել էին զայրացած խոսքեր, համոզիչ հերքումներ, բայց զսպում էին իրենց և ռեպլիկաներ բաց չէին թողնում: Վեր կկենան, կխոսեն:

— Ձեկուցողը, օրինակ, խոսք բացեց մարտի ութի մասին,— շարունակեց տարիքոտ և ապրած մարդու տեսքով երիտասարդ դաշնակը:— Ես միանգամայն համաձայն եմ, ընկերներ, որ կնոջը պետք է ազատագրել: Բայց ինչո՞ւ ստեղծել այն սխալ տպավորությունը, թե իբր այդ հարցը միայն այսօր է դրվում: Դուք ո՞րտեղ էիք, երբ հենց այդ ձեր չսիրած դաշնակցությունը պայքարում էր հանուն կնոջ և տղամարդու իրավահավասարության: Ես դրանով չեմ ուզում պաշտպանել դաշնակցությունը, բայց իրականությունը միշտ պետք է պաշտպանել…

Օկտան նայեց ժամացույցին: Բայց ոչ, չպետք է ընդհատել նրան: Թող ասի ամեն ինչ, այլապես ոչ միայն նա և նրա համախոհները, այլև կոմերիտականները կկարծեն, թե զեկուցման կազմակերպիչները, պատասխանելու ոչինչ չունենալով, պարզապես լռեցնում են հակառակորդին:

— Մենք ռեակցիոներներ չենք,— շարունակեց Ջաբարյանը,— մենք կույր չենք և տեսնում ենք, որ մարդկության պատմությունն անընդհատ էվոլյուցիայի մեջ է և այդ էվոլյուցիան մեզ տանում է դեպի պրոգրես: Ուրիշ բան, թե մենք ինչ ենք հասկանում «պրոգրես» ասելով: Այստեղ կարող են տարաձայնություններ լինել ձեր և մեր, այսինքն՝ ուզում եմ ասել՝ ձեր և իմ միջև: Էնգելսն ասում է, որ բնության մեջ կա ոչ միայն էվոլյուցիա, այլև կան թռիչքներ: Ենթադրենք: Բայց ինչո՞ւ նույնը մեխանիկորեն փոխադրել մարդկային հասարակության մեջ: Դա կնշանակի աղավաղել պատմական մատերիալիզմը, Մարքսի ուսմունքը…

Ձարմանքի և զայրույթի մի խուլ բացականչություն, քամու պոռթկումի պես, անցավ դահլիճով: Ջաբարյանը մարքսիզմի պաշտպանի դերում… Ջաբարյանը պաշտպանում է մարքսիզմը կոմերիտականներից…

«Թեորետիկը», փորձված հռետորի հոտառությամբ, զգաց, որ եթե այժմ չանցնի կոնկրետ փաստարկումների, կարող է «իր հպատակությունից» բաց թողնել դահլիճը:

— Վերցնենք օրինակներ,— շտապ ասաց նա: Եվ իրոք, իսկույն տիրեց լռություն:— Ի՞նչ է ստացվում, երբ մենք ուզում ենք, այսպես ասած, հեղափոխականացնել կենցաղը: Ստացվում է այն, որ մենք հրաժարվում ենք ամեն մի նորմալ բանից և որդեգրում ենք աննորմալը: Մենք աղջկան հանում ենք կոֆտայի միջից և կոխում ենք կաշվե պիջակի մեջ, այդ մասին, որպես նվաճման, հայտարարում ենք բեմերից, իսկ ոմանք էլ,— նա այստեղ անսխալ կերպով մատն

ուղղեց դեպի Վահրիճը,— ռեպլիկաներով հաստատում են ընդհանուրի հավանությունը: Մենք քաղքենիություն ենք հայտարարում սերը, կանացիությունը, քնքշությունը: Մենք դեմ ենք ամուսնական օջախին և սեռական ազատ կապերի կողմնակիցներ ենք…

— Ներեցեք,— ընդհատեց Օկտան,— ովքե՞ր են «մենք»-ը:

— «Մենք»՝ այսինքն՝ դուք:

— Լավ,— համաձայնեց Օկտան,— «մենքը»՝ դա մենք ենք, իսկ այդ դեպքում ովքե՞ր եք դուք:

Դահլիճում Օկտայի հարցը ջերմ հավանություն գտավ: Ոմանք ծիծաղեցին, մյուսները ծափահարեցին:

— Այդ դուք ինքներդ պիտի ասեք, թե ովքեր ենք մենք,— իրեն չկորցրեց Ջաբարյանը:— Քիչ առաջ դուք բացատրեցեք, որ մենք՝ դա անկարգներն են: Բայց կարծում եմ, որ ես այստեղ ոչ մի անկարգություն չեմ անում, այլ բոլոր կանոնների համաձայն ելույթ եմ ունենում: Ճիշտ է, զեկուցողն ուրիշ բան էր ուզում ասել մեր մասին՝ ասելով մեզ «դուք», բայց դուք, ընկեր նախագահ, հնարավորություն չտվեցիք, որ նա իր ասելիքն ավարտեր և ստանար արժանի հակահարվածը: Բայց նրա մտքերն արտահայտեց նույն լողլող ընկերը դահլիճից՝ մի նոր ռեպլիկայով՝ մեզ համարելով դաշնակներ… Ես բողոքում եմ դրա դեմ,— հանկարծ ձայնը բարձրացրեց Ջաբարյանը,— ոչ ոք իրավունք չունի վարկաբեկել խորհրդային ուսանողին: Ինչ վերաբերում է մեր նախկին դաշերիտ լինելուն…

— Մենք այստեղ այդ հարցը չենք քննում,— ընդհատեց Օկտան:— Դուք նյութից շեղվեցիք: Եվ խնդրում եմ արդեն կլորացնեք ձեր խոսքը…

— Ես ավարտում եմ: Թույլ տվեք եզրափակել: Այսպիսով, չպետք է բնության օրենքները վերագրել նաև կենցաղային և սոցիալական երևույթներին: Չպետք է թռիչքի ու հեղափոխության օրենքը տարածել ամեն ինչի վրա: Կենցաղը, օրինակ, զարգացել է դարերի ընթացքում, հասել է իր գագաթնակետին: Ինչո՞ւ ենթադրել, ուրեմն, թե սրանից հետո էլ դրա մեջ ինչ-որ փոփոխություններ են կատարվելու: Օրինակ, սերը: Դա մարդկային զգացմունքներից ամենանվիրականն է և ամենակատարյալը: Դա ոչ կարող է այլևս փոփոխվել և ոչ էլ վերացվել: Մինչդեռ, մեզ հայտնի են դեպքեր, երբ ազնիվ ու նվիրված կոմերիտականներին դուրս են շպրտում կոմերիտմիությունից՝ լոկ սիրահարված լինելու պատճառով…

— Ճիշտ է,— լսվեց դահլիճից բարձրաձայն:

Վահրիճը վեր ցատկեց տեղից և նայեց: Այո, դա նա էր՝ անցյալում նրա հետ նույն սենյակում ապրող տղան:

— Տեսնո՞ւմ եք, ընկերներ: Մի՞թե ես ստում եմ: Նոր կենցաղ ասածդ, դեռ չծնված, վարկաբեկել է իրեն: Ո՞րն է դրա ելքը: Իմ կարծիքով պետք է հանգիստ թողնել կենցաղը: Այլապես կգա մի օր, երբ այլևս ոչ մի ծնող թույլ չի տա, որ իր տղան և մանավանդ աղջիկը մտնի կոմերիտմիության մեջ: Չկա ոչ մի նոր կենցաղ, որովհետև չկա նաև հին կենցաղ: Դա ի՞նչ քյալլագյոզական բաժանում է և սխոլաստիկա: Եղբայր, կենցաղն ինքը չի փոփոխվում, դուք ինչո՞ւ եք զոռով փոխում այն… Ես վերջացրի:

18

Ջաբարյանը նստեց իր տեղը, իսկ Օկտան, գլուխը զանգի վրա կախած, սկսեց մտածել: «Թեորետիկի» ելույթը ջուրն էր նետել կոմերիտական ակտիվիստների հետ քիչ առաջ հանած նրա որոշումները՝ դիսպուտը վարելու կարգի և ելույթ ունեցողներին ինչ հերթականությամբ ձայն տալու մասին: Ո՞ւմ տալ հաջորդ ձայնը… Խելոք տղաներ շատ կային ակտիվիստների մեջ, բայց կանգ առնել որևէ մեկի վրա նա չէր կարողանում: Ջաբարյանի նման պատրաստված և

խորամանկ թշնամուն պետք է հակադրել ոչ պակաս ուժեղ կոմերիտականի: Բայց ո՞ւմ առաջին հերթին:

Իսկ վայրկյաններն անցնում էին, նա ժամանակ չուներ երկար մտածելու: Դահլիճը նրա դիմաց թնդում էր բացականչություններից, տասնյակ և տասնյակ վառվռուն երիտասարդներ ձայն էին պահանջում: Օկտան գիտեր, որ նրանց ճնշող մեծամասնությունը կարող էր տալ արժանի հակահարվածը, ոչ միայն արտասանել ցասկոտ խոսքեր, այլև կկարողանար փաստարկել դրանք: Ահա հենց թեկուզ ինքը՝ պրոֆեսիոնալ հրահանգչուհի Օկտան, նույնպես զգում է, որ կարող է խոսել, ասել շատ բան: Բայց Ջաբարյանի ասածները տարրալուծելու և դրանք հասկանալու համար, նրան հարկավոր էր որոշ ժամանակ, և ոչ միայն ժամանակ, այլև նախապատրաստություն: Այ, եթե զեկուցման մասին նա իմացած լիներ մի երկու օր առաջ…

— Ինձ կարելի՞ է մի ձայն,— լսեց նա իր ականջի մոտ: Օկտան բարձրացրեց գլուխը: Սեղանի մոտ կանգնած էր հիսունն անց մի մարդ՝ ճաղատ գլխով, փոքրամարմին, խիստ սովորական տեսքով:

— Դուք ուզում եք խոսե՞լ…— հարցրեց Օկտան դժկամությամբ:

— Մի վախենա, աղջիկս,— ժպտալով շշնջաց տարիքոտը,— ես կոմունիստ եմ:

— Խնդրեմ, խնդրեմ,— շփոթվեց գեղեցիկ կոմերիտուհին:

— Իսկ ինչպե՞ս է ձեր ազգանունը:

— Սանթուրյան:

Օկտան վեր կացավ և մի քանի անգամ զնգզնգացրեց զանգը:

— Ձայնը տրվում է ընկեր Սան… Սանթուրյանին:

— Մուրադ,— ապշած ձայն տվեց Վահրիճն իրենից բավական հեռու նստած բանֆակի ուսանողին:— Քու ֆիզիկոսը…

Եվ ծայր աստիճան վրդովված նախագահի վրա, ծաղրական արհամարհանքով՝ դեպի ձայն ստացածը, լարվեց առաջ:

Որևէ երիտասարդի փոխարեն ինչ-որ տարիքոտ մարդու հայտնվելն աուդիտորիայի առջև՝ անակնկալ էր բոլորի համար: Ամբողջ դահլիճը նայեց՝ չսպասելով նրանից ոչ մի հետաքրքիր ելույթ, լուռ դժգոհելով այդ անտեղի միջամտությունից, որը փաստորեն նշանակում էր ընդմիջել իսկական դիսպուտը:

Ամենից ավելի վրդովված էր Մուրադը: Ու թեև նա հարգում էր Սանթուրյանին, բայց այդ րոպեին պատրաստ էր բղավելու՝ ի՞նչ գործ ունես մեր երիտասարդական շրջանակում, գնա քու ֆիզիկան դասավանդի: Ճիշտ էր ասում Վահրիճն այսօր առավոտյան՝ պիտի սկսի պապիս տարվա հնություններ պատմելը…

Եվ իրոք, Սանթուրյանը չէր ներշնչում ոչ մի վստահություն, ոչ մի հույս: Դանդաղ բարձրանալով բեմահարթակ, նա, փոխանակ սկսելու իր խոսքը, կանգ առավ և քթի տակ երկու անգամ կրկնեց՝ կարծես ինչ-որ բան մտաբերելու համար.

— Ջաբարյան… Ջաբարյան…

Ապա դիմեց «թեորետիկին».

— Դու էջմիածնեցի՞ ես:

— Դա ի՞նչ կարևոր է,— զարմացավ և նույնիսկ վիրավորվեց դաշերիտը:

— Եթե հարցնում եմ՝ ուրեմն կարևոր է,— հանգիստ նկատեց Սանթուրյանը:

Այդ տարօրինակ խոսակցությունը հետաքրքրեց բոլորին և դահլիճում վերահաստատվեց լռությունը:

— Ենթադրենք, թե էջմիածնեցի եմ, հետո՞:

— Դու Ջաբարենց որի՞ տղան ես՝ Միխակի՞, թե՞ Գարսևանի:

Դահլիճում ծիծաղեցին:

— Ես բողոքում եմ,— տեղից վեր ցատկելով, դիմեց Օկտային «թեորետիկը»,— դա ի՞նչ ավելորդ և անտեղի հարցեր են:

— Դու գուցե մոռացե՞լ ես հորդ անունը,— հանգիստ և հոգատար տոնով հարցրեց Սանթուրյանը:— Միխակն էն է, որ Աբրահամ Մաթևոսյանին իզուր տեղը Սիբիր քշել տվեց, որ տիրանա նրա բաղին, ու հիմի չորս բատրակ է պահում: Իսկ Գարսևանն էն է, որ տասնհինգ թվին սպանեց իր ֆահլաներից մեկին, կաշառքով ազատվեց դատարանից, դաշնակների ժամանակ ակտիվիստ էր ու հիմի չորս բատրակ էլ նա է պահում: Հիմի դու դրանցից որի՞ տղան ես…

— Ես բողո... — հազիվ կարողացավ արտասանել «թեորետիկը»՝ կատաղած վեր ցատկելով տեղից: Բայց դահլիճում պոռթկաց այնպիսի մի փոթորկալի ծափահարություն Սանթուրյանի հասցեին, որ մի քանի րոպե Օկտան չէր կարողանում լռություն վերահաստատել: Ի միջի այլոց՝ չէր էլ փորձում: Շնորհակալությունից ու երախտագիտությունից բաբախող սրտով նա պատրաստ էր վազ տալու տարիքոտ մարդու մոտ և ներողություն խնդրելու նրանից իր քիչ առաջվա դժկամության համար նրա հանդեպ: Հիացած նրա ելույթի փայլուն սկիզբով, նա սրտատրոփ սպասում էր շարունակությանը: Հանկարծ դուրս չգա՞, որ դա պատահական փայլուն բռնկում էր միայն… Ի՞նչ պիտի ասի Սանթուրյանը դրանից հետո…

— Բա մենք չիմանա՞նք, թե ում հետ ենք խոսում,— պնդեց ելույթ ունեցողը:— Մեր ժողովուրդն ասում է՝ «խաչը տերն է զորավոր անում»: Այսինքն՝ խոսողի անձնավորությունն է իմաստավորում նրա խոսքը: Այ, քիչ առաջ էստեղ մի փոքրիկ վեճ ծագեց «մենք» և «դուք»-ի մասին: Բայց դա շատ ճիշտ վեճ էր: Պետք է պարզել, թե ովքեր են կողմերը: Թե ով ենք մենք՝ դա հայտնի է, մենք բանվորի, գյուղացու, աշխատավոր ինտելիգենցիայի զավակներ ենք: Այսինքն՝ զավակները դուք եք,— ժպտալով դիմեց նա դահլիճին,— իսկ ես ձեր հայրիկն եմ…

Նա այնպիսի մտերմական սրտալիությամբ ասաց այդ հասարակ խոսքերը, որ դահլիճը նորից թնդաց երկար ժամանակ չլռող ծափահարությունից:

— Իսկ դո՞ւք ովքեր եք,— շեշտակի դառնալով դեպի դաշերիտները, հարցրեց Սանթուրյանը:— Դուք կուլակների, առևտրականների, փոդրաթչիների տղաներ եք, ինքներդ էլ դեռ մինչև անցյալ տարի դաշնակցական երիտասարդական կազմակերպության անդամներ…

— Մենք բողոքում ենք,— որոտաց դաշնակցականների խումբը միահամուռ:

— Ըստ կարգի,— գոռաց «թեորետիկը»՝ խիստ պրակտիկ կերպով:

— Չխանգարել,— սաստեց նախագահողը:

Սանթուրյանը դարձավ դեպի Օկտան.

— Ձայն տուր դրան, աղջիկս, տեսնենք ինչ է ասում:

— Խոսեցեք,— ասաց նախագահողը՝ իսկույն ենթարկվելով կոմունիստի կամքին:

Ջաբարյանը հուզված դիմեց դահլիճին.

— Անցյալ տարի, ինչպես հայտնի է, գումարվեց դաշնակցական երիտասարդական կազմակերպությունների կոնֆերանս, որտեղ մենք լիկվիդացիայի ենթարկեցինք այդպիսիք: Եվ դեռ այն ժամանակ ձեր ներկայացուցիչն ասաց ռուսական առածի խոսքերով. «Ով որ անցյալը հիշի՝ նրա աչքը դուրս գա»… Իսկ ի՞նչ ենք տեսնում մենք հիմա, մի տարի հետո: Ելույթ է ունենում մի ինչ-որ ոմն և նորից հիշեցնում է մեզ մեր անցյալը, որը հենց ինքներս ենք դատապարտել մի տարի առաջ…

— Քավ լիցի, քավ լիցի,— ժպտաց Սանթուրյանը:— Մի՞թե ես ձեզ մեղադրեցի այն բանում, որ դուք խաբել եք մեզ և մինչև հիմա թաքուն կերպով պահում եք ձեր դաշերիտ կազմակերպությունները: Համենայն դեպս ինձ էդպիսի բան հայտնի չէ: Ես միայն էն եմ ասում, որ դաշերիտ կազմակերպությունները լիկվիդացիայի ենթարկելը «թռիչքային» գործ է, կարելի է անել մի կոնֆերանսում, իսկ դաշնակցական գաղափարներից հրաժարվելը երկարատև պրոցես է և տեղի է ունենում կամաց-կամաց, էվոլյուցիոն կերպով…

Նա չկարողացավ իր խոսքը շարունակել: Ռևանշը, դեմագոգի խոսքերը նրան վերադարձնելը՝ դրանք միանգամայն տեղին գործածելով, այնքան ակնբախ ու էֆեկտավոր էր, որ դահլիճում որոտաց ծափահարությունների մի նոր ալիք:

— Իսկ ռուսական առածի մեջ ասած «անցյալը հիշելու» մասին ես կասեմ հետևյալը: Մի՞թե այսօր նորից դաշնակցական քարոզներ կարդալն անցյալը հիշել չի նշանակում… Այնպես որ, եթե աչք է դուրս գալու, ապա դեռ հարց է, թե ում աչքն է դուրս գալու…

Այս անգամ նրան ընդհատեց դահլիճի ծիծաղը:

— Ես էլ հենց էն եմ ուզում ցույց տալ, որ դուք առայժմ մնացել եք նախկինը…

— Ճիշտ է,— լսվեց Մուրադի ձայնը:

— Ճիշտ է,— թնդաց դահլիճը:

— Եվ իմ ցույց տալու նպատակն էն է, որ եթե կան ձեր մեջ ազնիվները, ապա հասկանան և հրաժարվեն իրենց դիրքերից: Փաստերը ցույց են տալիս, որ դուք դրանցից դեռ չեք հրաժարվել, դուք դեռ դաշնակցականներ եք:

— Դուք քաղաքական մեղադրանք եք շպրտում մեզ,— գյուտ արածի նման բացականչեց դաշերիտներից մեկը:

— Իհարկե: Ապա ինչպե՞ս: Ես դա չեմ թաքցնում:

— Դա դեռ պետք է ապացուցել:

— Անկասկած: Ես իսկույն կանեմ դա՝ եթե, իհարկե, ընկեր նախագահին ինձ ժամանակ տա…

— Խոսել… Խոսել…— որոտաց դահլիճը:

— Խոսեցեք՝ ինչքան որ ուզում եք,— ասաց Օկտան հուզված:

— Իհարկե,— դառը քմծիծաղեց «թեորետիկը»,— խոսեցեք՝ ինչքան որ ուզեք: Ձերն է դիկտատուրան:

— Իսկ մենք ե՞րբ ենք ամաչելով թաքցրել այդ հանգամանքը,— ժպտաց Սանթուրյանը:— Մեր դիկտատուրան մենք արդար վաստակել ենք ձեր հոգևոր հայրերին ու նրանց հովանավորողներին ջարդելով, մեր արյան գնով…

Այլևս դժվար էր որոշել՝ Սանթուրյանն ավելի շատ խոսո՞ւմ էր, թե՞ սպասում ծափահարությունների ավարտելուն: Դահլիճում նստած հարյուրավոր կոմերիտական-կոմերիտուհիներն տասնյակ արտամիութենական երիտասարդներն այնպես էին զգում, թե իրենք

են խոսում Սանթուրյանի բերանով, իրենք են ջախջախում երես առած դաշերիտներին: Հին բայլշևիկի յուրաքանչյուր խոսքից հետո նրանց կրծքերն ավելի էին թեթևանում՝ դատարկվելով կուտակված խոսքերից, որոնք նրանք իրենք դեռ չէին վարժվել արտահայտելու այդքան լիակատար և այդքան փայլուն կերպով:

— Այժմ անցնենք ըստ էության,— շարունակեց Սանթուրյանը:— Եվ խոսենք կոնկրետ: Այ, դու, Ջաբարենց տղա, ասում ես, օրինակի համար, կնունքի ու հարսանիքի մասին: Համաձայն եմ, դրանք կենցաղ են: Եվ համաձայն եմ, որ դրանք գալիս են դարերի խորքից և համաժողովրդական բնույթ ունեն: Կլինեն դրանք ապագայում, թե չեն լինի՝ եկեք չքննենք, մեզ դա հայտնի չէ, եկեք խոսենք անցյալի ու ներկայի մասին: Քու հայրդ, Ջաբարենց տղա, կնունք է արել, մկրտել քեզ, նրա բատրակներն էլ են կնունք արել, մկրտել ապագա բատրակներին: Բայց քու կնունքից հետո հերդ գնացել է տուն ու փառավոր կերուխում է արել իր ազգ ու բարեկամի հետ, իսկ ձեր բատրակը նստել ու մտածել է, թե ինչպե՞ս վճարի տերտերին նրա հասանելիքը: Ի՞նչ է դա, միասնական կենցա՞ղ, թե՞ երկու տարբեր դասակարգերի վիճակ: Դու ասա, ի՞նչն է դրանց միջև ավելի շատ նմանությո՞ւնը, թե՞ տարբերությունը…

Սանթուրյանը գոհ էր, որ հաճախակի և երկար ծափահարում են իրեն: Նախ դա ապացուցում էր, որ դահլիճը հիանալի յուրացնում է նրա կատարած վերլուծությունները, և ապա, այդ ակամա ընդմիջումները հնարավորություն էին տալիս տարիքոտ մարդուն հանգստանալու: Իսկ հանգստանալ նրան հարկավոր էր, որովհետև նա հուզված էր: Միայն երկար տարիների ընթացքում ձեռք բերած ինքնատիրապետության շնորհիվ էր, որ նա, այնուամենայնիվ, չէր մատնում իր վիճակը և թվում էր միանգամայն հանգիստ: Ինչպիսի՛ հաճույքով նա կհրաժարվեր այդ հանգիստ վերլուծություններից ու պոլեմիկայից, կիջներ բեմահարթակից, կմոտենար այդ լկտի լակոտներին և մի-մի ապտակ կհասցներ նրանց մռութներին ու քացի տալով դուրս կշպրտեր դահլիճից: Բայց… ծափահարությունները նորից մեղմացան, հարկավոր է շարունակել…

— Գալով թռիչքին, ապա դա, մեր համոզմունքով, էվոլյուցիայի հետ միասին հատուկ է ոչ միայն բնության, այլև հասարակական երևույթներին: Ինքդ ասա, Ջաբարյան, չէ՞ որ խորհրդային իշխանությունը քեզ ու քո ընկերներին հնարավորություն է տվել բարձրագույն կրթություն ստանալու և էդ բոլոր բաներն իմանալու: Ասա, մի՞թե կարելի է էդ տեսակ երեխայական բաներ դուրս տալ, թե բնության մեջ թռիչքը, հեղափոխությունը գուցե կարելի է, բայց մարդկանց գործերի մեջ՝ ոչ: Դու մե՞զ ես դրել երեխայի տեղ, թե ինքդ ես երեխա:

— Ինքը,— բղավեց մի աղջիկ:

— Սխալ է,— հակաճառեց մի երիտասարդ բանվոր՝ թավ ձայնով,— նա երեխա չէ, այլ աղվես:

— Սպասեցեք,— ընդհատեց Սանթուրյանը ռեպլիկաները:— Որ աղվես է՝ դա բոլորիս է հայտնի: Բայց որպեսզի նա նորից ոտքի չցատկի ու բողոքի, թե վիրավորում ենք նրան, եկեք թել առ թել վերլուծենք նրա աղվեսությունը: Ճիշտն ասած, դա էնքան էլ մի բարդ խորամանկություն չէ և կոչվում է օգտագործել մեր թերությունները, փաստարկել դրանցով ու տակավանց էլ չարախնդալ դրանց վրա: Օրինակ, այսօրվա զեկուցման մասին: Մենք բոլորս էլ տեսանք, որ դա թույլ զեկուցում էր, երիտասարդը չէր պատրաստվել և ընդհանրապես դեռ բավական բոբիկ է: Ոչինչ, կսովորի: Բայց Ջաբարենց Միխակի, թե Գարսևանի տղան այդ զեկուցումը համարեց հաջող: Իսկ թե ինչու՝ ինքներդ տեսաք:

Համոն, որ ամբողջ ժամանակ նստել էր սեղանի ետևում՝ գլուխը կախ, վեր բարձրացրեց հայացքը և խրոխտ նայեց շուրջը, կարծես նրա զեկուցման հեղինակությունը փրկվել էր:

— Իսկ հետո,— շարունակեց Սանթուրյանը,— այդ դաշերիտը հենվեց մեր պրակտիկ թերությունների վրա: Այն, ինչը որ հանդիսանում է նոր կենցաղի ծամածռությունը, տնազը, նա համարեց նոր կենցաղ: Ճիշտ է, մեր աղջիկներից ոմանք մտել են տղամարդու շորերի մեջ, բայց մի՞թե մենք այդ ենք քարոզում, մի՞թե դա է նոր կենցաղը: Դա իրոք որ անճոռնիություն է և եթե կուզեք՝ հենց ինքն ամենաթունդ քաղքենիությունն է: Դրանք կարծում են, թե բավական է, որ

տղամարդու պիջակ հագնես, որպեսզի հավասարվես տղամարդուն: Ուրեմն, եթե մենք էլ կնկա դեյրա հագնենք՝ կհավասարվենք նրա՞նց: Հրեն, Շոտլանդիայում, տղամարդիկ դեյրա են հագնում կանանց պես: Այո, այո, մի ծիծաղեք, ես դա լուրջ փաստ եմ ասում: Բայց չնայած դրան, էլի տղամարդիկ մնում են արտոնյալ, իսկ կնանիք՝ իրավազուրկ... Ի՞նչ կարող են անել շալվարն ու դեյրան, երբ որ երկու մարդ, ասենք թե՝ Ջաբարենց Միխակն ու նրա բատրակը, երկուսն էլ շալվար են հագնում, բայց տնտեսական տարբեր վիճակի մեջ են: Դու աշխարհը վերափոխիր, կոմերիտական, թե չէ հագուստ փոխելը մեծ հունար չի…

Ծիծաղի և ծափերի մի նոր տարափ նորից հնարավորություն տվեց Սանթուրյանին՝ սրբելու իր ճակատի քրտինքը և ջուր խմելու սեղանի վրա դրած ջրամանից:

— Այո, շարունակեց նա հանգստացած,— մենք դեռ շատ ունենք թերություններ: Հնարավոր է, որ իսկապես, մի որևէ բջիջում հիմարություն են արել, սերը համարել են հանցանք և դրա պատճառով տղային վռնդել են կոմերիտմիությունից: Բայց մի՞թե դա է նոր կենցաղը: Նոր կենցաղն էն է, որ հենց էգուց նրան վռնդողները գնան նրա մոտ, գլխարկները հանեն, ներողություն խնդրեն և վերադարձնեն նրան իրենց շարքերը: Եվ դա կարվի…

Երբ նորից ավարտվեցին հերթական ծափահարությունները, Սանթուրյանն անսպասելիորեն դարձավ դեպի նախագահողը և ասաց.

— Ես վերջացրի:

Անծանոթ մարդը, ֆիզիկայի շարքային ուսուցիչը, բեմահարթակից վար իջավ ամբողջ դահլիճի օվացիաների տակ: Բոլորը հասկացան, որ նրա խոսքից հետո այլևս ավելորդ էին ուրիշ ելույթներ:

— Երեկոն համարում եմ փակված,— զվարթ հայտարարեց Օկտան՝ աչքերով փնտրելով Սանթուրյանին՝ մոտենալու և հետը ծանոթանալու համար: Բայց այդ րոպեին բոլորը ոտքի կանգնեցին ու դիմեցին դեպի ելքը, և տարիքոտ մարդը կորավ նրանց մեջ:

Մուրադը մոտեցավ Վահրիճին:

— Հիմի հասկացա՞ր, թե ով է իմ ֆիզիկայի դասատուն,— հարցրեց նա հպարտությամբ:

— Գնանք, գնանք,— ասաց Վարդանը՝ Գառնիկի հետ միասին մոտենալով Մուրադին:— Նա հասկացող չէ: Դու մե՛զ տուր քո հարցը: Ապա, Գառնիկ, բնորոշիր մի բառով՝ ո՞վ է ընկեր Սանթուրյանը…

Գառնիկը նայեց ընկերոջը դժգոհությամբ այդպիսի ավելորդ հարց նրան տալու համար, և ասաց՝ ուսերը թոթվելով.

— Շատ պարզ է՝ կոմունիստ:

19

Երբ երիտասարդությունը դուրս հորդեց երիտակումբից, դեռ հազիվ երեկոյան ժամի տասն էր: Չնայած դրան Աբովյանն արդեն խիստ սակավամարդ էր, իսկ դա նշանակում էր, որ մյուս փողոցներում, առավել ևս, ոչ ոք չկար: Բայց մի քանի հարյուր տղաներ և աղջիկներ ողողեցին փողոցն իրենց ուրախ հեղեղով, անկյունների մոտ բաժանվեցին վտակների և գնացին հոսելու մյուս փողոցներով, ինչպես արյունը երակներով: Նրանք գոհ և ուրախ էին ոչ միայն նրա համար, որ երեկոն անցել էր հաջող, նոր կենցաղի կողմնակիցների հաղթանակով, այլև շատ ավելի մեծ պատճառով: Նրանք ամեն րոպե իրենց կյանքում գիտակցում էին խնդությամբ, որ ունեն երկիր, ունեն պետություն, ունեն մայրաքաղաք, որտեղ արդեն կան համալսարան, ինստիտուտներ, տեխնիկումներ, հրատարակչություններ, թերթեր, գործարաններ ու արհեստանոցներ, հիմնարկություններ և ձեռնարկություններ… Նրանք ունեն կոմունիստական կուսակցություն, որը

ղեկավարում էր վերածնված Հայաստանը, ունեն կոմունիստական երիտասարդական միություն, որտեղ նրանք սովորում են արժանի փոխանորդներ լինել ավագ սերնդին… Ճողոպրած իրենց հայրենիքի ավերված ու բնաջնջված հատվածից, եկած որբանոցներից, ելած գյուղերից, ամեն տեղից, որտեղ մինչ այդ մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյությունը, նրանք միայն այժմ էին սկսում ապրել, ապրել բառի իսկական իմաստով, այսինքն՝ աշխատել, սովորել, հաղթանակել, ուրախանալ, հանգստանալ…

Եվ այժմ, իրիկնային Աբովյանի վերևում, երկինքը նրանց թվում էր ավելի բարձր, քան միշտ, փողոցները և ուղիները նրանց առջև՝ ավելի բաց և հյուրընկալ…

— Դու տեսա՞ր ինչպես պատասխանեց դաշերիտներին այդ «սևահոգի կրոնամոլը»,— ոգևորված դիմեց Վարդանը հատկապես Վահրիճին:— Դու ծափահարո՞ւմ էիր նրան, թե ոչ: Իսկ իմ ձեռքերն ուղղակի ցավեցին:

Երկարահասակը չպատասխանեց:

— Ես մինչև հիմա չգիտեի, թե էդպիսի դասատու եմ ունեցել…— խոր շունչ քաշելով, ասաց Մուրադը— Լավ կերան լակոտները նրա ֆիզիկան, քիմիան էլ հետը…

Վահրիճը դարձյալ լուռ էր:

— Սպասիր, Մուրադ,— ընդհատեց Գառնիկը նրան, տեսնելով, որ ընկերն ուզում է շարունակել իր ներբողը, և դարձավ դեպի Վահրիճը:— Գիտե՞ս ինչ, հարգելի ընկեր… Քանի որ դու մեզ հետ ես ապրում, ուրեմն բարի եղիր ու ասա քո տեսակետն ընկեր Սանթուրյանի ելույթի մասին: Ինչո՞ւ ես լռում:

Վարդանը ժպիտով նայեց ընկերոջը.— այդպես, դեմ տուր դրան պատին…

— Նա լավ հակահարված տվեց թշնամիներին…— սկսեց Վահրիճը:— Դաշնակցությունը, հանձինս իր երիտասարդության, այս երեկո ստացավ ևս մի հարված և…

— Լսիր, դու գել-թոզի մի անի,— զայրացավ Գառնիկը:— Քեզ կոնկրետ հարց են տալիս՝ կոնկրետ էլ պատասխանիր: Դու հիմա համաձա՞յն ես, որ սերը սուրբ զգացմունք է, իսկ կաշվե պիջակը…

— Ի՞նչ ես կպել ինձ,— արտասովոր թունոտությամբ, զարմացնելով ընկերներին, ֆշշաց նրա վրա Վահրիճը:

— Վերջ տվեք, վերջ տվեք,— ստանձնելով սովորաբար Գառնիկին պատկանող հաշտարարի դերը, միջամտեց Մուրադը:— Մի փչացրեք մեր լավ տրամադրությունը:

Բայց Գառնիկը ցուցաբերեց արտակարգ համառություն:

— Ոչ,— ասաց նա, նույնիսկ կանգ առնելով,— կամ պիտի պատասխանի, կամ մեզանից մեկն այլևս չպիտի մտնի մեր սենյակը: Մեզ երկուսիս համար տեղ չկա նույն հարկի տակ…

— Ի՞նչ է պատահել քեզ,— զարմացավ մինչև անգամ Վարդանը:

— Ոչինչ, ես ուզում եմ, որ մենք վերջապես որոշենք մեր մեշչանիզմի սահմանը:

— Ա՛… ա՛… ա՛… հասկացա, հասկացա,— անսպասելիորեն ծղրտաց Վահրիճը՝ ծիծաղի նման մի ծամածռություն գոյացնելով իր նիհար դեմքի վրա:— Հարգելի ընկերն ուզում է իմանալ՝ մեշչանկա՞ է մեր հարևանի աղջիկը, թե ոչ: Իրավունք ունի՞ նա նրա…

— Ի՞նչ ես անում,— բղավեց Մուրադը՝ հարձակվելով Գառնիկի վրա:

— Թո՛ղ, ես դրա…

Ուժեղ Մուրադի համար ոչ մի դժվարություն չներկայացրեց խլել Գառնիկի ձեռքից այն մեծ քարը, որը նա վերցրել էր փողոցի մեջտեղից ՝ Մալարիայի հիվանդանոցի քարտուղարին խփելու համար:

— Հո՞ւպ տվեց քու ցաված տեղը,— բարձր ծիծաղեց Վարդանը՝ աշխատելով կատակի վերածել այդ ամենը և իրոք որ չփչացնել գեղեցիկ երեկոն:— Իմ կողմից քեզ ազատ իրավունք, Գառնիկ, սիրիր մեր հարևանի աղջկան: Իրավունք նաև ընկեր Սանթուրյանի կողմից: Ինչպե՞ս է անունը, կարծեմ Լիլիա՞… Դա նշանակում է՝ Շուշան…

— Վարդան, քեզանից էլ կնեղանամ, վերջ տուր,— սաստեց Գառնիկը:

— Ես դեմ չեմ,— հոժար համաձայնեց լենինականցին,— կարող ես նեղանալ ինձանից էլ, բոլորիցս էլ, բայց ընկեր Սանթուրյանից՝ երբեք: Նա այսօր քեզ մի այնպիսի՛ իրավունք տվեց որ…

Մուրադը բարձր ծիծաղեց:

— Ի սեր աստծու— վախեցավ Վարդանը— մի ծիծաղիր՝ մինչև տուն հասնենք: Էստեղ ջուր չկա՝ վրադ շաղ տալու համար:

Այդ խոսքի վրա ծիծաղեց նաև Գառնիկը և այդպիսով՝ լարված տրամադրությունը չքացավ:

Ընկերներն առանց նկատելու արդեն դուրս էին եկել իրենց փողոցը: Նրանք նորից անդրադարձան դիսպուտին: Ճի՞շտ արեց Օկտան, որ փակեց երեկոն: Ճի՞շտ է, որ ուզում են մի նոր երեկո կազմակերպել՝ շատ ավելի լավ պատրաստված զեկուցողով, իսկ թեման լինելու է՝ «Սերը և մենք…»:

Երբ նրանք արդեն մոտենում էին իրենց տանը, Գառնիկը նայեց վեր՝ դեպի փողոցի վրա նայող իրենց լուսամուտը, և հարցրեց.

— Ո՞վ վերջինը դուրս եկավ սենյակից:

— Մենք բոլորս միասին դուրս եկանք,— հիշեցրեց Վարդանը,— ի՞նչ կա որ:

— Չե՞ս տեսնում, էլի մոռացել ենք լույսը մարել:

— Ես ինքս եմ մարել,— վստահեցրեց Մուրադը:

— Իսկ փա՞ստն ինչ է ասում,— հարցրեց տնտեսարար Գառնիկը՝ մատն ուղղելով դեպի վեր:

Երբ նրանք բարձրացան իրենց հարկը և մտան նախասենյակ, ավագ հարևանուհին ամանեղենը լվանալու համար ջուր էր վերցնում իր հավիտենապես վառ կերոսինկայի վրայից: Չորս կոմերիտականներից նա քիչ թե շատ տանում էր միայն Վարդանին՝ նրա ռուսերեն իմանալու և ըստ երևույթին մյուսներից մի փոքր ավելի порядочный լինելու համար, թեև, ճիշտն ասած, եթե կախեիր էլ նրան, չէր կարողանա ասել, թե ինչով էր արտահայտվում մյուսների ոչ-порядочный լինելը:

Դիմելով Վարդանին, նա ասաց.

— Вас в комнате ждет девушка.

Վարդանը մի պահ չհասկացավ, թե ում էր վերաբերում այդ «вас»-ը՝ միայն նրա՞ն, թե բոլոր չորսին: Ապա հասկացավ՝ միայն նրան: Ռոկլանան է…

Նրա դեմքի վրա հայտնվեց սապոն կուլ տված մարդու արտահայտություն:

— Нет, нет,— հանգստացրեց հարևանուհին, որը հմուտ հոգեբանի նման հետևում էր երիտասարդի դեմքի խաղին,— не тот гермафродит.

— Գիտե՞ք ինչ, տիկին,— զայրույթով ասաց Վարդանը,— մյուս անգամ չհամարձակվեք այդպես արտահայտվել մեր ընկերուհու հասցեին…

Եվ թափով շուռ գալով, մոտեցավ դռանը: Միայն այդտեղ նրա գլխում ծագեց այն հարցը, թե ուրեմն ո՞վ է սպասում նրան կամ նրանց՝ այդ ուշ ժամին: Հետաքրքիր է…

Նա բաց արեց դուռը: Սենյակի մեջտեղում, մեջքով դեպի ներս մտնողները, կանգնել էր այդ առավոտյան Աբովյան փողոցի մայթով անցած աղջիկը…

— Ցողի՛կ…— սրտապատառ ուրախությամբ բացականչեց Վարդանը:

Աղջիկը շուռ եկավ: Ռաֆֆու հատորը, որ նա բռնել էր ձեռքում և կարդում էր կախված լամպի տակ, վար ընկավ հատակին:

— Ցողիկ…— կրկնեց Վարդանը՝ նետվելով դեպի իր մանկության ընկերուհին:

Աղջիկը չկարողացավ ոչինչ արտասանել: Նա գրկախառնվեց տղայի հետ, ապա, կարծես չհավատալով, ձեռքը դրեց նրա սև ու հարթ մազերին, ետ հրեց նրա գլուխը և նայեց երեսին՝ նա՞ է արդյոք… Նրանք մի պահ նայեցին միմյանց աչքերի, մի պոռթկումով մոտեցան իրար՝ համբուրվելու, բայց շփոթված հեռացան:

— Նստիր, Ցողիկ…

Աղջիկը նայեց շուրջը:

— Նստիր էստեղ, սա է իմ անկողինը:

— Ты сначала представь меня своим товарищам глупенький,— նկատողություն արեց աղջիկը:

— Прости, дорогая,— շփոթված ասաց Վարդանը և դիմեց ընկերներին:— Հա, իսկապես որ… Ներեցեք, տղաներ, ես այնքան ուրախացա, որ մոռացա… Ծանոթացեք իմ մանկության ընկերուհու, իմ… իմ Ցողիկի հետ:

Երեք կոմերիտականները, որ մինչ այդ լուռ մեխվել-մնացել էին դռան մոտ, առաջ եկան՝ նայելով իրենց սենյակում հայտնված անսպասելի տեսիլին:

Տեսե՞լ էին նրանք արդյոք այդպիսի աղջկա՝ թեկուզև հեռվից, թեկուզև փութանցիկ… Տեսել էին, այո: Բայց որտե՞ղ, որտե՞ղ… Մի՞թե կարելի էր երկմտել դրանում.— նրանք տեսել էին ոչ թե նույնիսկ այդպիսի աղջկա, այլ հենց նրան, և տեսել էին արբունքի հասած երիտասարդների իրենց երազներում:

Արբունք… Սքանչելի հասակ, երբ ականջիդ հնչում է չնաշխարհիկ և անորսալի երաժշտություն, երբ հոգիդ լցված է այնպիսի երանությամբ, որ մաղվում է գիտակցությունդ… Բայց ամենահուզիչն ու գլխապտույտ առաջացնողն այն սպասումն է, որ համակում է քո ամբողջ էությունը՝ ամբողջ ժամանակ, քուն, թե արթուն: Դու սպասում ես, որ գալու է, հայտնվելու է նա, որպեսզի կարողանաս, վերջապես, զեղել քո հոգին նրա ոտքերի տակ, նրա ձեռքերի վրա, նրա աչքերի մեջ…

Քանի՛-քանի առավոտներ, խաղաղ արթնացած, այնքան խաղաղ, որ չգիտես, թե երբ փոխադրվեցիր քնի աշխարհից արթնության աշխարհը, վեր էին կացել-նստել մերթ Վարդանը, մերթ Մուրադը, մերթ Գառնիկը՝ դեռևս երազի տպավորության տակ…

Կա՞ ավելի մեծ գանձ, քան այն, ինչ որ գտնում ես դու երազում: Եվ կա՞ ավելի մեծ կսկիծ, երբ արթնանալով, ընդմիշտ կորցնում ես այն…

«Ո՞վ էր, ո՞վ էր երազի մեջ հայտնված այդ աղջիկը»,— հարց ես տալիս ինքդ քեզ: Մի՞թե գոյություն չունեցող էակ... Չի կարող լինել այդպես, դու չես ուզում, որ լինի այդպես: Նա անշուշտ կա, գոյություն ունի, միայն թե հարկավոր է փնտրել նրան, լավ փնտրել, ամբողջ աշխարհում փնտրել…

Իսկ ինչո՞ւ համար ամբողջ աշխարհում… Գուցե նա ապրում է հարևան փողոցի վրա և դա զուտ պատահականություն է, որ դու մինչև հիմա չես տեսել նրան…

Այնքան մեծ է երազում տեսածի կորուստի կսկիծը և այնքան բուռն է նրան վերագտնելու տենչը, որ երիտասարդն սկսում է մտաբերել. մի՞թե երբեք չի տեսել նրան կյանքում… Նա սկսում է վերհիշել իր բոլոր ծանոթուհիներին, ընկերուհիներին, երբևէ տեսած անծանոթ աղջիկներին… Դրանցից մեկը չէ՞ արդյոք երազում հայտնված աղջիկը…

Եվ անցնում են աչքի առաջով նրանք՝ ծանոթ կամ անծանոթ երիտասարդ աղջիկներն ու կանայք: Կան դրանց մեջ և՛ տգեղները՝ կաշվե պիջակ հագած և կեպի դրած, կան և՛ գեղեցիկները. դու հայացքդ դանդաղեցնում ես վերջինների վրա: Բայց դրանցից ամենալավն անգամ անսահման հեռու է քո երազից: Կամ նա որբուհի է՝ վատ հագնված, իր գեղեցկության զգալի մասն անշուք հագուստների մեջ կորցրած, կամ քաղքենուհի է, նէպմանուհի, «բաղմանչու» կամ խանութպանի աղջիկ, թեկուզև գեղեցիկ, բայց այս անգամ արդեն քո հոգուն խորթ, մեծամիտ, ինքնահավան, երես առած… Կամ, վերջապես, դա այն երջանիկ ծնունդներից է, որոնք գեղեցիկ են թե արտաքինով և թե հոգով, բայց դրանք էլ չունեն «գեղեցկության կուլտուրա»՝ ինչպես Վարդանն է ասում: Նրանց խոսելը, շարժուձևերը, միմիկան, ոչ միայն գեղեցիկ չեն, այլև իջեցնում են առաջին պահին ստացած քո լավ տպավորությունը…

Եվ ամաչում են Վարդանը, Մուրադը, Գառնիկը, որ դեռ երեկ «քիչ էր մնում» սիրահարվեին դրանց վրա: Իսկ այսօր, այդ հեքիաթական երազից հետո, որն ազնվացրել է նրանց ճաշակը, նրբացրել է նրանց հոգին, նրանք այլևս անկարող են սիրել ուրիշին՝ բացի երազի այդ աղջկանից…

Եվ շրջում են նրանք Մոխրատիտիկի կոշիկը ձեռքներին՝ գտնելու համար այն ոտքը, որից ընկել է դա… Եվ այդ տենչալի որոնումը, այդ անհագուրդ կարոտը նրանց ետ է պահում պատահական հմայքներից, թեթև «սիրաբանություններից», չմտածված քայլերից…

Կոմերիտականների սենյակը կարծես շողշողում էր Ցողիկի արձակած փայլից: Ոչ, երիտասարդներից ոչ մեկը կյանքում չէր տեսել այդպիսի ներդաշնակ, անթերի աղջիկ…

Ցողիկն ուներ նուրբ կազմվածք և այնպիսի թեթև, օդային տեսք, որ տղաները չէին կարողանում հավատալ, թե նա իրական աղջիկ է և ահա գտնվում է նրանց սենյակում: Այնպիսի մի մտերիմ քնքշություն և գեղեցկություն էր ճառագում նրանից, այնպիսի հստակ և մաքուր հայացքով էր նա նայում կոմերիտականներին՝ սպասելով, թե երբ պիտի, վերջապես, ձեռք մեկնեն նրանք ու ծանոթանան իր հետ, այնպիսի մեղմ, մի քիչ թախծոտ ժպիտ կար նրա դեմքի վրա, որ թե Մուրադը և թե Գառնիկը իսկույն ճանաչեցին նրան. այո, հենց նա է իրենց երազների մեջ այնքան անգամ այցելած աղջիկը… Արթնանալուց հետո նրանք չէին կարողանում հիշել նրա դեմքը, արտաքինը, արթնանալուց հետո մնում էր նրա միայն խելապտույտ առաջացնող խաղաղ տպավորությունը, բայց այժմ նրանք անսխալ կերպով վերհիշեցին նրան…

Այո, այդ նա է: Բայց այժմ, երբ նա հայտնվել է, երիտասարդներն ամոթով էին մտածում այն մասին, թե ինչո՞ւ համար էին փնտրում նրան: Ինչպե՞ս կարելի էր համարձակվել մտածել, որ այդպիսի մի էակ կարող էր սիրել նրանց նման հասարակ, շարքային կոմերիտականների, ոչ թե սիրել, այլ գոնե թեկուզ ծանոթություն ունենալ նրանց հետ…

Ահա թե ինչու, առավել ևս, անհավատալի էր աղջկա ներկայությունն իրենց սենյակում, ահա թե ինչու նրանք դանդաղում էին մոտենալ նրան և ծանոթանալ նրա հետ:

— Մուրադ,— վերջապես մոտենալով, ձեռքը մեկնեց և ներկայացավ գանգրահերը: Եվ, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, ավելացրեց ոչ առանց հպարտության.— բանվոր…

Ավելացրեց և լեզուն կծեց կատաղությունից: Ո՞ւմ ինչ հոգն է, թե նա բանվոր է, ինչո՞ւ է ասում նա այդ մասին տեղի-անտեղի: Մեկը լիներ՝ տար մի հատ նրա վզակոթին…

— Գառնիկ,— անվանեց իրեն մյուս ընկերը: Նա ուզեց ավելացնել՝ «տղա ենք, էլի», բայց վերջին վայրկյանին կուլ տվեց խոսքերը: Ասել այդպես՝ կնշանակեր ուղղակի հեգնել ընկերոջը նրա «բանվորի» համար:

Վահրիճը մոտեցավ հանդիսավոր, կանգնեց աղջկա առաջ, ոտքերը միացրեց իրար, ձգվեց և նոր միայն ներկայացավ.

— Վահրիճ: Պրոֆեսիոնալ հեղափոխական:

Գառնիկը գերագույն ճիգ գործադրեց իր վրա՝ չբղավելու համար «էշ-ախմախ»: Իսկ Մուրադի փորը և ուսերն սկսեցին ինչ որ կասկածելի կերպով ցնցվել, լխկլխկալ, կարծես նա ֆուրգոն էր նստել և գնում էր անբարեկարգ ճանապարհով:

— Մի՞թե դուք այդքան տարիքոտ եք,— անկեղծ զարմանքով դիմեց Ցողիկը Մալարիայի հիվանդանոցի քարտուղարին:

— Իսկ ինչո՞ւ եք այդպես կարծում,— չհասկացավ նրա հարցը Վահրիճը:

— Եթե դուք եղել եք պրոֆեսիոնալ հեղափոխական՝ հեղափոխությունից առաջ…

— Ես հիմի եմ էդպիսին:

— Հիմա՞… Բայց կարծեմ հիմա այդպիսի պրոֆեսիա գոյություն չունի:

Նա հարցական նայեց իր ընկերոջը:

«Դուրս է տալիս, բանի տեղ մի դնիր, իմ սիրելի»,—ուզեց ասել Վարդանը, բայց միայն դեմքի վրա արտահայտեց այդ: Եվ ասաց.

— Գիտե՞ս, Ցողիկ, ես քեզ տեսել եմ դեռ առավոտյան: Դու անցնում էիր Աբովյանով՝ վերարկուն թևիդ գցած և ճամպրուկը ձեռքիդ: Բայց ես աչքերիս չհավատացի, թե դա դու ես: Ես դեմքդ չտեսա, այլ ճանաչեցի քայլվածքդ…

— Մի՞թե դու չես մոռացել, թե ինչպես եմ ես քայլում,— ժպտաց աղջիկն իր մեղմ, մի քիչ թախծոտ ժպիտով:

— Կարելի՞ է արդյոք մոռանալ… Իսկ ինչպե՞ս գտար դու ինձ:

— Ես Ռոստովից եկել էի Ալեքսանդրապոլ, այսինքն՝ Լենինական, մի փոքրիկ գործով: Հասցեդ վերցրի մամայիցդ: Ես քեզ նամակ եմ բերել նրանից: Վերցրու: Ոչ, ոչ, մի դիր մի կողմ, կարդա հենց հիմա, как тебе не стыдно, ведь это от матери!

Վարդանը, Ցողիկի կողքին նստած, սկսեց կարդալ, իսկ աղջիկը լուռ սպասել՝ նայելով տղաներին:

Առաջին անգամ իրենց կյանքում կոմերիտականներն զգում էին ամոթով ու շփոթությամբ, որ չունեն աթոռ՝ աղջկան նստեցնելու համար, չունեն թեյի պարագաներ՝ թեյ հյուրասիրելու համար, չունեն սեղան, ոչինչ չունեն…

Այժմ, յուրաքանչյուրն իր թախտի վրա նստած, մի պահ նայում էր աղջկան, ապա, շփոթված, շուրջը, ապա փոխադրում էր հայացքը Վարդանի վրա՝ կարծես նոր միայն տեսնելով նրան: Հարգանքի և ակնածանքի մի ինչ-որ նոր զգացում դեպի քիչ առաջվա իրենց հավասար ընկերը պաշարել էր նրանց: Եվ հենց այդ հարգանքն ու ակնածանքը հեռացրել էին Վարդանին նրանցից, ստեղծել էին նրանց միջև այն տարածությունը, որից այնքան վախենում էր Վարդանը ցերեկը՝ Հրազդանի ձորալանջին նստած: Ցողիկը, ոչ-այս աշխարհի այդ աղջիկը, Վարդանի մանկության

ընկերուհին, իր հայտնվելով բացահայտել էր, որ Վարդանը նույնպես, ինչ-որ ուրիշ տեղից էր, ուրիշ աշխարհից: Երբ նա և Ցողիկը փոխանակեցին միմյանց հետ ռուսերեն լեզվով մի քանի խոսք՝ մյուսների համար անհասկանալի, դա նման էր այն բանին, որ նրանք երկուսով մտան իրենց աշխարհը, և դուռը փակեցին ընկերների քթի առջև…

Ցողիկն իր գեղեցկության ու հմայքի շողերը նետել էր Վարդանի վրա, որն այժմ ընկերներին երևում էր զարմանալի կերպով արտակարգ, գեղեցիկ… Դեմքը խոնարհած, նա խորասուզված կարդում էր մոր նամակը: Իսկ նրա կողքին, թև-թևի, նստել էր Ցողիկը…

Ինչպե՜ս էր նստել Ցողիկը… Այդքան հասարակ, բայց այդքան շքեղ... Ոչ, կոմերիտականների ընկերուհիներից ոչ մեկը չգիտեր այդպես նստել: Օրինակ, Ռոկլանան... Գցում է մի ոտքը մյուսի վրա, ծխախոտը բռնած ձեռքը դնում է ծնկին և սկսում է ճոճել ոտքի թաթը…

Ցողիկը նստել էր ուղիղ, բայց ոչ ձգված: Չորս ընկերների սենյակի ոչ-այնքան մաքուր հատակի վրա հանգչում էին նրա փայլուն լաքած զույգ «լոդոչկաները», որոնցից, ինչպես պատիճների միջից, բարձրանում էին աղջկա սլացիկ և բարեկազմ ոտքերը: Ի՜նչ գեղեցիկ է, երբ աղջիկը նստում է ոտքերն իրար ընդհուպ՝ կիսակոշիկներից մինչև ծնկները, որոնք այժմ, նստած ժամանակ, երևում են կարճ շրջազգեստի տակից՝ առաջացնելով միայն գեղեցկության պաշտամունքի մի անծանոթ զգացում…

Ցողիկը հագել էր ինչ-որ անծանոթ շքեղ կտորից կարած, անծանոթ շքեղ ծաղիկներով և անծանոթ շքեղ ձևի զգեստ: Անծանոթ էր նույնիսկ այդ կտորի գույնը: Ոչ այդպիսի գույն, ոչ այդպիսի ծաղիկներ չեն պատահում բնության մեջ… Մանուշակագո՞ւյն էր կտորը՝ մանուշակագույն չէր: Նարնջագույն ոսկեծաղիկնե՞ր էին շաղ եկել դրա վրա՝ մանր և իրարից հեռու-հեռու՝ դրանք ոսկեծաղիկներ չէին: Թվում էր, թե հենց այդ զգեստով էր հայտնվում երիտասարդներին նրանց երազների աղջիկը…

Այդ զգեստի վրայից Ցողիկը հագել էր բաց մոխրագույն ժակետ: Բայց ի՜նչ մոխրագույն էր դա… Ի՞նչն է լինում այդ գույնի՝ մո՞ւկը, մոխի՞րը… Վիրավորական են նույնիսկ այդ համեմատությունները: Եվ ի՜նչ կտորից էր կարված այդ ժակետը, երբ չուներ ոչ միայն խավ կամ անողորկություններ, այլև թվում էր, թե գործված էլ չէր թելերից, այլ պատրաստված էր ինչ-որ ամբողջական նյութից՝ հարթ ու ողորկ, սակայն անփայլ: Ժակետը նման էր այն ամուր պատյանին, որը պինդ գրկում է վարդի դեռ չբացված, պիրկ կոկոնը: Ժակետը, խիստ փոքր ու կարճ, ուներ լայն բացվածքի կուրծք, աղջկա իրանը գրկող նեղ մեջք, դեպի չորս կողմ լայնացած փեշեր, և կոճկվում էր ընդամենը մի կոճակով՝ աղջկա կրծքի տակ:

Կոմերիտականներին ծանոթ էր աղջկա միայն մազերի դարսվածքը: Դա «նախահեղափոխական» դարսվածք էր՝ ինչպիսին նրանք տեսել էին թե հեղափոխական կանանց, թե գիմնազիստկաների և թե հայտնի դերասանուհիների լուսանկարների վրա: Քունքից-քունք նրա գլուխն օղակել և ճակատին հովանի էր արել մազերի մի հաստ, կլոր պսակ: Դրա հովանու տակ, առավել ևս, տղաների ուշադրությունն իր վրա էր գամում նրա նուրբ դիմագծերով, նիհարկոտ, ինչ-որ հոգեկան արտահայտություն ունեցող դեմքը: Բարակ շրթունքներ, բարակ քիթ, նիհար ծնոտ և կզակ. թվում էր, թե այդ բոլորը պետք է տգեղացնեին նրան: Սակայն նրա դեմքն ուներ այնպիսի մի ոչ-շլացուցիչ, բնական գեղեցկություն, որ անկարելի էր կտրել նրանից քո կախարդված հայացքը: Իսկ նրա աչքերը, ոչ-մեծ և կարծես սովորական, ունեին իրենց խոր խորքից եկող այնպիսի հայացք, որը կարծես քո երազների մեջ լսած անձայն նվագը լիներ: Շրջում էիր ամբողջ օրը՝ այդ նվագն ականջներումդ, ավելի ճիշտ՝ հոգուդ մեջ, և չէիր կարողանում վերարտադրել դրա մեն-մի հնչյունն անգամ: Ոչ գլանակ փաթաթող կամ ծխախոտ լցնող հաստոցների մեղմ չխկչխկոցը գործարանում, ոչ քարտաշների մուրճերի չկչկոցը կառուցվող շենքի մոտ, չէին խլացնում այդ նվագը: Այնուամենայնիվ, չնայած դրան, ոչ մի հնչյունով, ոչ մի, դու չէիր կարողանում արտաբերել այն, և պատրաստ էիր լաց լինել քո անզորությունից: Իսկ հիմա պարզվում է, որ դու չէիր էլ կարողանա անել այդ, որովհետև դա նվագ չի եղել, այլ հայացք՝ Ցողիկի հայացքը…

Վարդանը հասավ նամակի ինչ-որ կետի, ժպտաց և նայեց Ցողիկին: Աղջիկն զգաց նրա հայացքը և նույնպես նայեց ընկերոջը: Նա հասկացավ, որ նամակի այդ հատվածը վերաբերում է իրեն: Վարդանը մի քիչ մոտեցրեց նամակը նրան, նա թեքեց գլուխը դեպի տղան, և նրանք միասին կարդացին այդ, ընդ որում Ցողիկի մազերի պսակը շոյվեց Վարդանի մազերին:

Ավարտելով ընթերցումը, Ցողիկը ժպտաց, ներքին մի մղումով սեղմվեց Վարդանին իր ուսով, բայց և իսկույն հեռացավ՝ ներողություն հայցող հանցավոր հայացքով նայելով սենյակում գտնվող մյուսներին:

Վերջապես Վարդանն ավարտեց ընթերցումը, գոհ ժպիտով մի պահ ընկավ մտքերի մեջ՝ մեքենաբար շոյելով նամակի թերթը, ապա սթափվեց, դրեց նամակը բարձի տակ և դարձավ դեպի Ցողիկը: Նայելով աղջկա երեսին, տղան մեկնեց իր ձեռքերը և բռնեց աղջկա նախ մի ձեռքը, ապա նաև մյուսը: Աղջիկը, որ նստել էր իր սև ու մոխրագույն կաշվից կարած երկարավուն նեղ պայուսակը զույգ ձեռքով գոգում պահած, դրեց այն մի կողմ և պատրաստակամ հանձնեց իր ձեռքերը տղային:

— Դե պատմիր, Ցողիկ… Մանրամասն, ամեն, ամեն ինչի մասին՝ սկսած այն օրից, երբ դուք գնացիք Ալեքսանդրապոլից…

— Это потом,— ասաց աղջիկը,— а пока надо завести общий разговор. Ведь правда?— հարցրեց նա՝ ժպիտով դիմելով մյուսներին՝ հավանության ակնկալումով: Նկատելով նրանց անհասկացող հայացքները, նա զարմացած հարցրեց ընկերոջը.— Что, они не владеют русским языком?

— Пока не знают ни одного слова.

— Надо было предупредить, глупенький мой! То что мы делаем— признак плохого тона!..

Плохой тон… Хороший тон… Այդ ե՞րբ էր… Վարդանը վաղուց էր մոռացել այդ արտահայտությունները…

— Դե, տղաներ,— ժպտաց Ցողիկը,— եկեք ծանոթանանք հիմա ավելի մոտիկից: Դուք ի՞նչ գործարանում եք բանվորություն անում, Գառնիկ:

— Գառնիկը նա է,— ժպտաց կոմերիտականը,— իսկ ես Մուրադն եմ: Ոչ թե գործարանի բանվոր եմ ես, այլ շինարար…

Աստիճանաբար ծագեց ընդհանուր խոսակցություն: Պարզվեց, որ Ցողիկը մի ժամից ավելի է, ինչ սպասելիս է եղել Վարդանին: Հարևանուհին հրավիրել է նրան իրենց բնակարանը,աղջիկն այնտեղ նստել է կես ժամից ավելի՝ զբաղվելով զրույցով տանտիրուհու հետ: Ապա, չուզենալով այլևս զբաղեցնել և խանգարել նրան, վեր է կացել գնալու: Այդտեղ հարևանուհին հայտնել է, որ կոմերիտականների դուռը միշտ բաց է, կարելի է մի քիչ էլ այնտեղ սպասել, եթե աղջիկը չի ուզում մնալ իրենց բնակարանում: Աղջիկը կտրուկ մերժել է մտնել տղաների սենյակը՝ առանց տերերի ներկայության, բայց հարևանուհին ասել է, որ ոչ մի անպատեհ բան չկա այդտեղ, և որ նրանց բոլոր ընկերներն ու ընկերուհիներն այդպես են վարվում, դա նրանց մոտ ընդունված կենցաղ է: Եվ եթե, վերջապես, Ցողիկը առաջին անգամը լինելով իր կյանքում, վճռել է կատարել այդպիսի «անտակտ» քայլ, ապա միայն նրա համար, որ ուզեցել է անակնկալի բերել Վարդանին:

— Ձեր հարևանուհին բողոքում էր, որ դուք անհանգիստ հարևաններ եք,— մեղմ հանդիմանությամբ ասաց Ցողիկը:— Իհարկե, ես չէի ասի ձեզ այդ մասին՝ եթե ինքը խնդրած չլիներ: Նա իրավացի է, կեսգիշերից հետո չի կարելի աղմկել:

Կոմերիտականները չպատասխանեցին: Նրանք անհարմար զգացին իրենց, որ այն «մեշչանկան» բամբասել է և հենց դրանով, հենց սկզբից, «սևացրել» է նրանց այդպիսի աղջկա առջև:

Ցողիկը կարծես հասկացավ կոմերիտականներին և շտապեց ավելացնել.

— Բայց նրանց աղջիկն ականջիս շշնջաց, որ «մաման չափազանցնում է», և որ դուք բոլորդ էլ լավն եք, մանավանդ՝ Գառնիկը:

Գառնիկը կաս-կարմիր կտրվեց: Մուրադը նայեց նրան՝ հաղթական փայլն աչքերում, որոշելով մատի փաթաթան դարձնել դա և ծիծաղել ընկերոջ վրա:

Վահրիճն այդ ամբողջ ժամանակ լուռ նստել էր իր անկողնի վրա և ակնապիշ նայում էր Ցողիկին: Նա չէր կարողանում «մշակել» իր վերաբերմունքը նրա հանդեպ: Որ Ցողիկը կոմերիտուհու կամ «համակրողի» տիպ չէր՝ դա նրա համար պարզ էր դեռ առաջին հայացքից: Բայց որ նա նաև «մեշչանկա» չէր՝ դա էլ էր պարզ առաջին հայացքից:

Ուրեմն, էլ ո՞վ էր, ի՞նչ էր Ցողիկը, եթե չէր պատկանում աշխարհում գոյություն ունեցող այդ երկու կատեգորիաներից և ոչ մեկին: Մի՞թե գոյություն ուներ աղջիկների նաև երրորդ կատեգորիա… Եվ ի՞նչ էր ներկայացնում դա իրենից: Ի՞նչպես «կողմնորոշվել» այդ կատեգորիայի հանդեպ:

Գուցե այդպես էլ Վահրիճը չկարողանար դուրս գալ իր երկմտանքից, եթե Ցողիկն ինքը չօգներ նրան:

Վարդանի ընկերուհին, որպես դաստիարակված և տակտի տեր աղջիկ, կոմերիտականների հետ զրուցելիս հավասարապես դիմում էր թե մեկին, թե մյուսին և թե երրորդին: Բայց շուտով Վահրիճը նկատեց, որ մինչդեռ աղջիկը մյուսներին դիմում է սրտաբուխ անկեղծությամբ, ապա նրա հետ խոսում է զուտ «քաղաքավարությունից դրդված»: Ճիշտ է, աղջիկը նրան դիմում է նույն տոնով ու նույն ձայնով, բայց տարբերությունն ակնբախ է և անշուշտ բոլորը նկատում են այդ:

Համոզվելով դրանում, Վահրիճն իր մեջ զգաց ատելության բուռն կուտակում նրա հանդեպ և իսկույն «կողմնորոշվեց»:

— Սովորական մեշչանկա…— արտասանեց նա մտքի մեջ և արձակելով ինչ-որ արհամարհական կռանչոց, պառկեց թախտի վրա:

Ցողիկը կարմրեց: «Хам» — անցավ նրա մտքով:— Лежать в присутствии девушки?

Ոտքի կանգնելով, նա վերցրեց պայուսակը:

— Դե, կոմերիտականներ, ձեզ բարի գիշեր: Արդեն ուշ է և դուք ուզում եք քնել:— Вардананчик, надеюсть, ты проводишь меня?

— Ցողիկ…— հանդիմանությամբ ասաց ընկերը՝ ոտքի ցատկելով:— Как ты можешь такие вопросы задавать мне?…

Երբ նրանք դուրս ելան սենյակից, Մուրադը մոտեցավ Վահրիճին, բարձրացրեց բռունցքը և թափով իջեցրեց դեպի նրա նեղ թիկունքը: Բայց Գառնիկը, որը հասել էր նրա ետևից, խփեց նրա արմունկին, և բռունցքը, Վահրիճի թիկունքի փոխարեն, դրմփոցով իջավ անկողնի վրա: Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը, երեսը դեպի պատը պառկած, վեր ցատկեց և ապշած նայեց նրան:

— Ախմախ,— գոռաց Մուրադը,— չկարողացա՞ր սպասել մինչև աղջիկը դուրս գար, հետո լեշդ փռեիր… Թող թևս, Գառնիկ, թե չէ ես քեզ կդնքստեմ էս էշի փոխարեն:

«Էշը» բարվոք համարեց ծպտուն չարձակել:

20

Երբ Վարդանն ու Ցողիկը դուրս ելան փողոց, այնտեղ ոչ ոք չկար, կեսգիշեր էր արդեն: Երիտասարդը թևանցուկ արեց աղջկան և նրանք լուռ քայլեցին փողոցն ի վար: Խելահույզ

խնդությունը պաշարել էր Վարդանին, բայց նա մեծ ճիգով էր կարողանում համոզել իրեն, որ այդ ամենը երազ չէ, որ ահա եկել է Ցողիկը, և նրանք քայլում են միասին, թևանցուկ…

Ինչպես նրանց սենյակի մյուս բնակիչները, նույնպես և Վարդանը, չուներ մտերիմ աղջիկ: Երբեմն, ընկերներով կամ մենակ շրջելիս, նա նայում էր որևէ գեղեցիկ աղջկա, ցանկություն էր զգում նրա հետ ծանոթանալու, մտերմանալու: Ընդ որում, նա աղջկա հետ թևանցուկ շրջելու մասին երազում էր որպես հեռու ապագայի, որպես մի բավականության, որը դեռ պետք էր նվաճել՝ անցնելով փոխադարձ մտերմության երկար ճանապարհ:

Եվ ահա, հանկարծ հայտնվում է ամենագեղեցիկը նրա տեսած բոլոր աղջիկներից, և Վարդանը, որը դեռ կյանքում չի բռնել որևէ աղջկա ձեռք, բռնում է նրա զույգ ձեռքերն իր ափերի մեջ, իսկ փողոց դուրս գալուց հետո շրջում է նրա հետ՝ սեղմ թևանցուկ արած, որովհետև մտերիմներ են նրանք, հին մտերիմներ… Մի՞թե դա նման չէ երազի…

Նրանք երկուսն էլ նայում էին ներքև՝ մայթի քարերին: Բայց ոչ, դրանց նայում էր միայն Ցողիկը: Իսկ Վարդանը նայում էր աղջկա փոքրիկ, փայլուն կիսակոշիկներին և այնպե՛ս հասկանում էր դրանց լեզուն… Մի՞թե կա աշխարհում մի ուրիշ էակ, որը քայլի այդքան արտահայտիչ… Դա ոչ թե քայլվածք է, այլ անբարբառ խոսակցություն տղայի հետ…

«Թեև արդեն կեսգիշեր է,— ասում էր այդ քայլվածքը,— բայց ես ոչ մի տեղ չեմ շտապում և ուզում եմ լինել քեզ հետ, Վարդան… Այն, որ մենք քայլում ենք փողոցով, դա բոլորովին չի նշանակում, թե մենք գնում ենք ինչ-որ տեղ: Դա պարզապես նշանակում է, որ մենք քայլում ենք և ոչ թե, օրինակ, կանգ ենք առել: Մեր քայլելը չունի ոչ մի նպատակ և հենց ինքն է իր նպատակը...»:

Եվ իրոք, աղջկա բարեկազմ ոտքերը շարժվում էին արտակարգ կերպով արտահայտիչ: Յուրաքանչյուր անգամ նրա փոքրիկ թաթը գետնից կտրվելիս կարծես թե կատարելու էր ավելի մեծ քայլ, բայց և իսկույն, դեռ օդի մեջ, ափսոսալով, որ այդպես անխնայողաբար է կրճատելու տարածությունը, իջնում էր իր բարձրացած տեղից ոչ հեռու, համարյա նույն տեղում: Ժողովուրդը դրան ասում է «ոտքը կախ գցել»: Եվ նրա ամեն մի քայլն ասում էր տղային.— «Ես լսում եմ քեզ, Վարդան… Ես սպասում եմ քեզ, Վարդան… Խոսիր… Խոսիր…»:

Հասնելով փողոցի անկյունին, Վարդանն սթափվեց, հարցրեց ռուսերեն.

— Իսկ դու ո՞րտեղ ես իջևանել, Ցողիկ:

— Քեռուս մոտ,— պատասխանեց աղջիկը նույն լեզվով և այնուհետև նրանց խոսակցությունը գնաց այդպես՝ ըստ նրանց վաղեմի սովորության:

— Մի՞թե դու քեռի ունես Երևանում: Իսկ ո՞րտեղ է նրա տունը: Մենք ճի՞շտ ենք քայլում:

— Ոչ, հարկավոր է հակառակ ուղղությամբ:

Նրանք շուռ եկան: Բայց այժմ, երբ նրանց առջև կար նպատակ, հասնելու տեղ, նրանց քայլվածքը բոլորովին էլ չդարձավ ավելի արագ կամ գործնական:

— Դու… երկա՞ր ժամանակով ես եկել, Ցողիկ:

— Կամ մի քանի օրով, կամ… ընդմիշտ:

— Ընդմիշտ, ընդմիշտ…— հուզված շշունջով թելադրեց Վարդանը…— Դա է միակ վարիանտը…

— Ոչ, լավագույն վարիանտը մի քանի օրովն է:

— Եվ հետո նորից Ռոստո՞վ…— վախեցած հարցրեց երիտասարդը՝ նույնիսկ կանգ առնելով:

— Ոչ, ոչ, Լենինական:

— Լենինակա՞ն…— չհասկացավ Վարդանը:

Աղջիկը նայեց նրա երեսին, մեղմ ժպտաց: Նրան դուր էին գալիս տղայի սև, առատ մազերը և նա ուզում էր շոյել դրանք: Բայց նրա մի թևը գտնվում էր Վարդանի թևի մեջ, մյուս ձեռքում նա բռնել էր պայուսակը: Փոխադրելով պայուսակը մյուս ձեռքը, նա խառնեց տղայի մազերը:

— Կխոսենք ամեն ինչի մասին: Մի՞թե կարելի է մի րոպեում:

Ձեռքն իջեցնելով, նա նորից ուզում էր վերցնել պայուսակը, որը խանգարում էր թևանցուկին, բայց տղան կես-ճանապարհին բռնեց նրա ձեռքը, պահեց իր ափի մեջ: Նրանք արեցին այդպես մի երկու քայլ, ապա աղջիկը ներողամիտ ժպիտով նայեց տղայի աչքերին, ապա հայացքով ցույց տվեց պայուսակը: Վարդանը հառաչեց և բաց թողեց նրա ձեռքը:

— Դե պատմիր քո մասին, Ցողիկ, ձերոնց մասին…

Ցողիկը լուռ էր մի քանի րոպե, ապա ասաց բոլորովին այլ բան.

— Երևանը նման չէ ոչ Լենինականին և ոչ էլ Ռոստովին: Եվ ի՜նչ գեղեցիկ է խշշում ջուրը մայթերի մոտ: Դու ուշադրություն դարձնո՞ւմ ես, Վարդան:

— Ես արդեն վարժվել եմ, Ցողիկ:

— Վարժվել գեղեցկությա՞նը… Դու ինձ վախեցնում ես, Վարդան: Մի՞թե դու ռոմանտիկ չես…

— Ես ավելի ռոմանտիկ եմ, քան հարկավոր է, Ցողիկ: Ավելի, քան հարկավոր է,— կրկնեց նա՝ չգիտես ինչու հիշելով Վահրիճին:— Բայց ես հիմա տեսնում եմ միայն քեզ, միայն քեզ, միայն, միայն…

Երիտասարդը բուռն մղումով մոտեցավ աղջկա դեմքին և իր վերջին բառերն արտասանեց նրա երեսն ի վար:

— Այ, հիմա դու ինձ դուր ես գալիս,— ժպտաց Ցողիկը՝ իր ջինջ հայացքով նայելով տղայի աչքերի մեջ:— Ասա, Վարդան…

Նա կտրուկ ընդհատեց իրեն: Ոչ, նա այդ հարցը չէր կարող տալ՝ նայելով տղայի աչքերի մեջ: Խոնարհելով գլուխը և նայելով մայթի քարերին, նոր միայն նա կրկնեց.

— Ասա, Վարդան, ճի՞շտ տպավորություն է մնացել իմ մեջ այն մասին, որ անցյալում, երբ մենք մանուկներ էինք… դու ինձ շատ էիր սիրում…

— Ոչ…— շշնջաց Վարդանը և նրա ձայնը նույնիսկ խզվեց: Նա զգաց, թե ինչպես աղջկա թևը ցնցվեց իր թևի մեջ՝ անսպասելի պատասխանից:— Ոչ,— կրկնեց նա,— ես քեզ շատ չէի սիրում: «Շատ»՝ դա քիչ է: Ես քեզ սիրում էի աշխարհի չափ…

Եվ այս անգամ նույնպես, նա զգաց, թե ինչպես նորից ցնցվեց աղջկա թևն իր թևի մեջ, բայց արդեն մի ուրիշ հուզումով: Վարդանը, հազիվ արտաբերելով բառերն իր չորացած կոկորդից, շարունակեց.

— Բայց ես ինքս էլ չգիտեի, թե այդքան սիրում էի քեզ: Միայն այն օրերին, երբ ձեզ մոտ հյուր էին գալիս քո կուզենները, ես մռայլվում էի՝ առանց իմանալու, որ դա... որ դա խանդ է…

— Ես դա հիշում եմ…— շշնջաց աղջիկը:— Այդպիսի դեպքերում ես միշտ ծիծաղում էի քեզ վրա, բայց դու ինձ ավելի էիր դուր գալիս այդպես մռայլ ու բարկացկոտ: Մի անգամ դու նույնիսկ անտեղի վիրավորեցիր ինձ կոպիտ կերպով, ու թեև ես վիրավորվեցի ու հեռացա, բայց հոգուս խորքում այնքա՜ն ուրախ էի՝ չգիտեմ ինչու…

— Միայն ձեր մեկնելուց հետո,— շարունակեց տղան,— ես հասկացա, թե ինչ կորցրի: Քանի՛-քանի գիշերներ, վերմակը գլխիս քաշած, ես լաց եմ եղել քեզ համար, Ցողիկ…

— Իսկ ես վերմակը չէի քաշում գլխիս, որովհետև մաման կտեսներ և նկատողություն կաներ, չէ՞ որ դա հակաառողջապահական է,— տխուր ժպտաց Ցողիկը:— Ես պարզապես շուռ էի գալիս դեպի պատը... Ահա սա է քեռուս տունը...

Վարդանը նայեց: Դա միհարկանի մի բարեկարգ շենք էր՝ Աբովյանը հատող Ալավերդյանի վրա, որի մոտով այնքա՜ն հաճախ էր անցել Վարդանը՝ առանց իմանալու, թե դա որևէ առնչություն ունի իր մանկության ընկերուհու հետ:

Ոչ տղան և ոչ աղջիկը ոչ մի կարևորություն չտվեցին այն բանին, որ դա էր Ցողիկի քեռու տունը և անտարբեր անցան դրա մոտով՝ շարունակելով իրենց ճանապարհը:

— Ուրեմն, մերոնց մասին,— ասաց աղջիկը:— Պապան այլևս չկա…

Վարդանը կանգ առավ և ցավակից հայացքով նայեց աղջկան: Բայց երևի դա վաղուց կատարված բան էր, որովհետև աղջկա դեմքի վրա չերևաց անմիջական վշտի արտահայտություն, այնտեղով անցավ միայն սգավոր հիշողության աղոտ ստվերը:

— Մաման ողջ-առողջ է և նույնիսկ չի ծերացել: Քույրս... Դու հիշո՞ւմ ես նրան...

— Իհարկե:

— Ուրեմն, քույրս... Նա էլ ողջ-առողջ է: Մի քանի տարի առաջ ամուսնացավ մի տնտեսվարի հետ, որը հետո վատնիչ դուրս եկավ: Նրան ձերբակալեցին, իսկ քույրս հիմա ապրում է մի նէպմանի հետ: Շատ չաղացել է և ընդհանրապես...— Ցողիկը թափ տվեց ձեռքը:— Չի մնացել նրա մեջ ոչ մի ռոմանտիկա, ոչ գոնե սենտիմենտալիզմ: Դու հավատո՞ւմ ես ժառանգականությանը, Վարդան:

— Մարքսիզմն այդ հարցում...— սկսեց կոմերիտականը:

— Իսկ ես հավատում եմ: Հավատում եմ, որովհետև տեսնում եմ: Նա մամային է քաշել իր պրակտիկությամբ: Իսկ թե ում է քաշել մաման՝ ես չգիտեի, մինչև որ այսօր առաջին անգամ կյանքում տեսա քեռուս... Նշանակում է՝ երկուսն էլ պապիցս են ժառանգել…

Վարդանին հաճելի էր, որ Ցողիկն այդպիսի անկեղծությամբ խոսում էր նրա հետ յուրայինների մասին: Բայց, ավելի ճիշտ, նա դա համարում էր միանգամայն բնական, և շատ կզարմանար, եթե Ցողիկն այլ կերպ վարվեր:

Աղջիկը շարունակեց.

— Տասնվեց թվին, երբ մենք գնացինք Ռոստով, պապան անմիջապես ծառայության ընդունվեց այնտեղի մի հոսպիտալում, և մեր կյանքը նորից գնաց իր սովորական ճանապարհով: Ճիշտ է, առաջին շրջանում մեզ բոլորիս համար խորթ ու անսովոր էր ապրել ընդամենը երեք սենյակում, առանց մերիրերի ու կահ-կարասու, առանց մինչև անգամ բոննայի, բայց սովորեցինք. դժվար տարիներ էին: Սրանց իշխանությունը…

— Ցողի՞կ...— զարմացած ընդհատեց Վարդանը:— Ինչո՞ւ ես ասում «սրանց»…

— Մամայի խոսքն է,— տխուր ժպտաց աղջիկը,— իսկ ես մեքենաբար կրկնում եմ: Ուրեմն խորհրդային իշխանությունը պապային ձեռք չտվեց: Ընդհակառակը, նրա համար նշանակեցին «ուդարնի պայոկ» և նա շարունակեց աշխատել: Իհարկե, դրանով ապրել չէր կարելի, և մաման կամաց-կամաց սկսեց վաճառել իր ադամանդները: Պապայի ամբողջ հարստությունը ջուրն ընկավ, որովհետև նա գլխի չէր ընկել ժամանակին ոսկի դարձնել դա և ասիգնացիաներով էր պահում, իսկ մյուս մասն էլ բանկումն էր... Ե՞տ դառնանք, թե թեքվենք այս փողոցը:

— Այդ փողոցում մայթերն անկանոն են: Ետ դառնանք:

— Պապան մեռավ տիֆից: Մենք մնացինք առանց ապրուստի աղբյուրի: Մաման ծախեց-ծախծխեց իր վերջին զարդերը և սկսեց... գիտե՞ս ինչ սկսեց մաման... Էժան գնով ուրիշներից գնել իրեր և վաճառել շուկայում…

— Սպեկուլյացիա,— ամենայն անողոքությամբ բնորոշեց Վարդանը:

— Այո...— տխուր համաձայնեց Ցողիկը:

Նրանք մի փոքր տեղ քայլեցին լուռ:

— Ես դեռ սովորում էի, իսկ քույրս ոչ սովորում էր և ոչ աշխատում: Աշխատել չէր ուզում նաև մաման: Նրա համար ավելի հեշտ էր զբաղվել այն բանով… սպեկուլյացիայով: Մի անգամ ես նրան տեսա շուկայում... Ամոթ... Խայտառակություն… Նա երևի ամբողջ շուկայի ամենաճղճղան վաճառորդուհին էր: Մեդիցինայի գեներալի կինը... Արիստոկրատական ընտանիքի անդամ… Սա Աբովյանը չէ՞, Վարդան:

— Աբովյանն է:

— Թեքվենք: Ես շատ սիրեցի այս փողոցը: Մինչև ո՞ւր է գնում սա:

— Պատմիր, Ցողիկ, պատմիր:

— Դու կարծում ես, թե հե՞շտ է պատմելը: Ժամանակ տուր ինձ: Ուրեմն, սա ձեր քաղաքի գլխավո՞ր փողոցն է:

— Այո: Գլխավորը:

— Ուրեմն, այսպես: Ամենից լավ ապրում էր քույրս: Եթե հիշում ես, նա գեղեցիկ աղջիկ էր: Նա հիմա էլ է գեղեցիկ, թեև խիստ չաղացել է: Եվ հիմա էլ է լավ ապրում: Նա մի վուլգար աֆորիզմ ունի.— «Գեղեցկությունը մի վայրուտա է, որը ոչ մի ֆորմացիայի ժամանակ ինֆլյացիայի չի ենթարկվում»… Դե, և ղեկավարվում է դրանով…

— Հասկանալի է…— ասաց Վարդանը կամացուկ:

— Գիտե՞ս ինչ, Վարդան, Աբովյանը թեև խղճուկ փողոց է, բայց ունի մի ինչ-որ մեծ գեղեցկություն: Ես համոզված եմ, որ երբ սրանք սկսեն վերակառուցել քաղաքը…

— Այո, մենք շուտով կսկսենք վերակառուցել,— մի փոքր գրգռված, ասաց Վարդանը:

Ցողիկը նայեց նրան, ժպտաց շփոթմունքով.

— Դե ներիր ինձ, թանկագին… Իսկապես որ, դա հիմար բառ է:

— Ինչո՞ւ հիմար: Դա պարզապես մեր բառը չէ: Այդ «նրանք» են ասում՝ «սրանք»:

— Գիտեմ, գիտեմ: Իսկ դու կարծում ես, թե մաման «նրանցից» չի՞: Օ՛, եթե նա տղամարդ լիներ և հնարավորություն ունենար, մի օրում կխորտակեր սրանց իշխանությունը: Այսինքն՝ բայլշևիկների,— իսկույն ուղղեց նա իրեն:

— Մեր,— ավելի ճշտեց Վարդանը:

— Ձեր, ձեր, ձեր,— ժպիտով հանգստացրեց նրան Ցողիկը:— Եվ մեր: Ես քաղաքականության չեմ խառնվում և լոյալ քաղաքացուհի եմ: Բավակա՞ն է դա քեզ:

— Բավական է,— ժպտաց Վարդանը:— Առայժմ:

Ցողիկը, որ պատրաստվում էր շարունակել իր պատմությունը, ընկերոջ վերջին բառի վրա կանգ առավ, նայեց նրան:

— Առա՞յժմ: Իսկ հետո՞:

— Հետո կխառնվես քաղաքականության, կդադարես «լոյալ» լինելուց,— դու գիտե՞ս ինչ զզվելի բառ է դա,— և գուցե նույնիսկ մտնես կոմերիտմիության մեջ:

— Քեզ հետ կարելի է՝ իմ մանկության ընկերոջ հետ:

Վարդանը հիշեց «բաղմանչու» աղջիկ Աստղիկին, որը նույնպես ասաց՝ «քեզ հետ կարելի է»:

— Քանի՜-քանի անգամ,— շարունակեց Ցողիկը՝ կտրելով տղայի մտքերի ընթացքը,— շատ նեղ վիճակում գտնվելիս մենք հիշել ենք, որ Ալեքսանդրապոլում պահած ունենք մեր հարուստ բնակարանի բոլոր իրերն ու կահ-կարասին: Քանի՜-քանի անգամ մենք ցանկացել ենք, որ դրանք լինեին մեզ մոտ և մենք կարողանայինք վաճառել, փոխանակել ուտելիքի հետ: Գալ Հայաստան դրանք տանելու կամ տեղում վաճառելու համար՝ մենք չէինք կարողանում, միշտ խանգարում էր որևէ բան: Նախ, երկու անգամ ձեզ մոտ եղան թուրքերը: Երկրորդ, ձեզ մոտ դաշնակցական կառավարություն էր, անիշխանություն, թալան: Երրորդ, սկսեցին քաղաքացիական կռիվները: Իսկ չորրորդ, մենք վստահություն չունեինք՝ մնացե՞լ է արդյոք մեր ունեցվածքը, թե՞ ենթարկվել է թալանի…

— Իսկ ո՞րտեղ էիք պահել,— հետաքրքրվեց Վարդանը:

— Մեր նկուղում: Դու չե՞ս հիշում՝ դրա դռնակը բացվում էր նախասենյակի հատակի վրա, բոննայի սենյակի դռան մոտ: Նախասենյակը ծածկված էր մոզայիկ տոմետով, և նկուղի դռնակն էլ ներկված էր ճիշտ նույն ձևով: Համարյա ոչ ոք չէր նկատում տարբերությունը: Իսկ նկուղը գտնվում էր մեր դահլիճի և իմ սենյակի տակ՝ նույնպես երկու սենյակից բաղկացած:

— Ես հիշում եմ փողոցի վրա դրա երկու փոքրիկ լուսամուտները՝ ուղղակի մայթի մոտ,— ասաց Վարդանը:

— Այո, այո: Մեր մեկնելուց առաջ պապան ծեփել տվեց դրանք, կողպեքով փակեց դռնակը և բանալին վերցրեց մեզ հետ: Մեր տան կենվորների ընտանիքը, իհարկե, գիտեր ամեն ինչի մասին: Բայց նրանք ազնիվ մարդիկ էին, և պապան ապահով էր: Սա ի՞նչ այգի է, Վարդան:

Վարդանը նոր միայն սթափվեց, նայեց շուրջը: Նրանք հասել էին Աբովյանի ներքևի ծայրին, որից այն կողմ փողոցն անվանվում էր Շահումյան: Դրա ձախ թևի վրա գտնվում էր փոքրիկ այգին՝ ընկած այդ փողոցի և Նալբանդյանի միջև:

— Գուցե ուզում ես նստե՞լ, Ցողիկ,— հարցրեց Վարդանը:

— Այո, այո, ես մի քիչ հոգնեցի:

Ոչ ոք չկար փողոցներում, իսկ այգում չկար նաև լուսավորություն: Բայց այգին, առանց ցանկապատերի և ոչ-սաղարթախիտ, լուսավորվում էր Շահումյան և Նալբանդյան փողոցների մանրիկ լույսերի թույլ անդրադարձումներով: Այգու վերին ծայրում, Աբովյանից-Նալբանդյան ձգված խիստ կարճ փողոցի վրա, կանգնած էր «Պրոլետար» կինոյի միհարկանի շենքը: Դա այժմ բոլորովին մութ էր և միայն դրա կտուրի վրա, հավաբնի չափ մի «աշտարակի» ճակատին, փայլում էր քաղաքային ժամացույցի ցիֆերբլատի ջարդված ապակին: Ապակու մի քառորդից ավելի՝ 8, 9 և 10 թվանշաններով, կոտրվել-ընկել էր մեծ կտորի ետևը: 7-ի և 10-ի արանքում գոյացել էր արձակ տարածություն: Ժամացույցի մեծ սլաքն այժմ կախված էր այդ արձակ տարածության վրա, իսկ փոքրը համարյա հասել էր 2-ին:

Երիտասարդները, մտնելով այգի և քայլելով երկու փողոցների լույսերի անդրադարձումների տակ, անցան այգու միակ ծառուղիով և նստեցին նստարաններից մեկի վրա: Երբ նրանք նստեցին՝

հանկարծ դարձավ համարյա բոլորովին մութ: Այդտեղ ցածրում, թփերն ու տերևներն ավելի խիտ էին և նստածների վրա լույս չէր ընկնում:

— Իսկ քեռիդ չի՞ անհանգստանա, որ չես վերադարձել:

— Չեմ կարծում: Ես նրա կնոջն ասացի, որ գալիս եմ քեզ մոտ՝ իմ մանկության ընկերոջ: Ի միջի այլոց, կարող են և անհանգստանալ, դա նրանց գործն է,— անտարբերությամբ ավելացրեց Ցողիկը:— Ես նրանց չսիրեցի:

— Իսկ չե՞ս մրսում, Ցողիկ:

— Այսպիսի տաք գիշերո՞վ: Այն էլ՝ ժակետ հագած: Գուցե դո՞ւ ես մրսում, Վարդան, սիրելիս: Դու միայն վերնաշապկով ես:

— Ոչ, ոչ:

— Համենայն դեպս օձիքդ կոճկիր,— նախազգուշացրեց Ցողիկը և ինքն սկսեց կոճկել: Ավարտելով, նա ձեռքով թեթևակի խփեց տղայի այտին:

— Ես ձեր տան կենվորներին հիշում եմ,— աղջկա քնքշությունից շփոթված, շտապ ասաց տղան:— Նրանք մի երկու տարի ապրեցին ձեր տանը և դաշնակների օրոք վերադարձան իրենց քաղաքը՝ Կարս: Հետո իմացանք, որ քսան թվին թուրքերը նրանց կոտորել են…

— Այո, այո:

— Իսկ քսանմեկ թվին ես ու մայրիկը փոխադրվեցինք ավելի լավ բնակարան:

— Ես դա էլ գիտեմ: Մեր տան նոր կենվորները գրել էին այդ մասին: Նրանք ամեն ամիս քրեհ էին ուղարկում մեզ և երբեմն էլ նամակ էին գրում: Իսկ մենք պատասխանում էինք: Թեև մենք նրանց երեսն էլ չէինք տեսել, բայց եզրակացնում էինք, որ նրանք վատ մարդիկ չէին:

— Իսկ մենք վատ մարդիկ էինք,— արտասանեց Վարդանը՝ իր իսկ համար անսպասելի ինչ-որ վիրավորանքով:— Ու թեև դուք «տեսել էիք մեր երեսը» այդքան տարիներ, բայց ոչ մի նամակ չգրեցիք մեզ…

— Վարդան…— բացականչեց աղջիկը՝ կարծես նոր միայն հիշելով վաղուց ի վեր կատարած անուղղելի սխալը:

— Այո, այո… Ոչ մի նամակ, ոչ մի... Իսկ հայրս, մինչև իսկ մահանալուց առաջ, հիշեց ձեզ...

Ցողիկը զույգ ձեռքերով բռնեց տղայի թևերից, ձգեց նրան դեպի իրեն և ասաց խնդրական ձայնով.

— Վարդան... Թանկագին... Պետք չէ... Մի խոսիր այդպիսի տոնով... Ի՞նչ կարող էի անել ես: Չէ՞ որ ես դեռ երեխա էի՝ քեզ նման: Ես իմ կյանքում ոչ ոքի նամակ չէի գրել և չէի էլ մտածել այդ մասին: Այ, հիմա հասկանում եմ, որ կարելի էր գրել: Բայց այն ժամանակ...

— Իսկ ձերո՞նք, ձերո՞նք…

— Մերոնք, մերոնք, — յուրայինների հանդեպ գրգռված, կրկնեց աղջիկը:— Դու մինչև հիմա չհասկացա՞ր, թե ովքեր էին մերոնք: Էգոիստներ: Մի՞թե դա է իսկական արիստոկրատիան: Մաման ցույց տվեց իր իսկական դեմքը՝ երբ դարձավ շուկայի սպեկուլյանտկա, իսկ քույրս…

— Դա է:

— Ի՞նչն է դա:

— Դա է իսկական արիստոկրատիան, այո:

— Սխալվում ես, թանկագին, սիրելի: Արիստոկրատիա, իմ կարծիքով, դա նշանակում է… Բայց եկ չվիճենք այդ մասին: Գուցե, իսկապես, դու ինքդ ես իրավացին: Համենայն դեպս ես մերոնց չեմ պաշտպանում: Գուցե միայն հայրս էր բացառություն կազմում մեր մեջ…

— Ոչ, Ցողիկ,— ընդհատեց Վարդանը:— Ոչ թե հայրդ, այլ դու: Ես նույնիսկ զարմանում եմ, որ դու ծնվել ես այդպիսի ընտանիքում: Իսկ հայրդ… Թեև լատինական առածն ասում է՝ «մեռածների մասին՝ կամ լավ կամ ոչինչ», բայց քո հայրը... վեներական հիվանդությունների բժիշկ էր…

— Իսկ ինչո՞ւ «բայց»,— ծայր աստիճան զարմացավ Ցողիկը:— Մի՞թե վատ բան է՝ ազատել մարդկանց սարսափելի ախտից:

Վարդանը քմծիծաղ տվեց: Ցողիկը, ոչ այնքան վիրավորված, որքան որ զարմացած, մթության մեջ նայեց ընկերոջ դեմքին:

— Դու մոռանում ես, Ցողիկ, որ ձեր ընտանիքի բարօրությունը հիմնված էր… հիմնված էր ուրիշների սիֆիլիսի վրա...

— Ինչպե՛ս ես դու արտահայտվում, Վարդան…— խոր թախիծով շշնջաց աղջիկը՝ ոչ այնքան իր ընտանիքի հասցեին ասված, խոսքերից վիրավորված, որքան որ տղայի արտահայտվելու շիփշիտակ ու գռեհիկ ձևից վշտացած:— Դու փոքր ժամանակ կիրթ երեխա էիր…

— Որի համար շնորհակալություն ձեր ընտանիքին: Հազիվ թե իմ հայրը կարողանար ինձ այդպիսի կրթություն տալ: Դուրս է գալիս,— քմծիծաղեց տղան,— որ ես էլ եմ պարտական Ալեքսանդրապոլի սիֆիլիտիկներին…

— Վարդան…

Աղջկա ձայնից տղան հասկացավ, որ նա արտասվեց: Տարավ ցուցամատը, ստուգեց: Ցողիկի աչքերը թաց էին: Վարդանը վերցրեց նրա պայուսակը, հանեց այնտեղից թաշկինակը, սրբեց-չորացրեց նրա աչքերը և ասաց հանգիստ, համարյա անսիրտ ձայնով:

— Իմ սիրելի Ցողիկ... Իմ մանկության ընկերուհի... Սովորիր նայել իրերին ուղղակի և անվանել դրանք իրենց իսկական անուններով: Ներիր ինձ, որ ես, որպես կոմերիտական, ուզում եմ քաղգրագիտության մի փոքրիկ դաս կարդալ քո լոյալ գլխին... Ոչ-բարդ դաս: Այ, ասա, Ցողիկ... Դու մտածե՞լ ես երբևէ այն մասին, թե ինչ կլիներ, եթե քո մանկության այն անցյալում մի օր հանկարծ առողջանային բոլոր սիֆիլիտիկները և այլևս չհիվանդանար ոչ մի նոր մարդ…

— Ինչի՞ համար է այս կեղտոտ խոսակցությունը,— համարյա աղերսանքով, հարցրեց Ցողիկը:

— Կլիներ այն,— շարունակեց տղան,— որ ձեր ընտանիքը կսնանկանար…

— Ամոթ... Խայտառակություն...— արտասանեց աղջիկը՝ չգիտես, իրենց խոսակցությա՞ն հասցեին, թե ընտանիքի, որի վաղեմի բարօրության աղբյուրը, վերջապես, հասկանալի դարձավ նրան:

— Բնության մեջ կա մի այսպիսի օրենք,— շարունակեց կոմերիտականը:— Կոչվում է հավասարակշռության օրենք: Եթե անտառում ապրում են գայլեր և աղվեսներ, ապա շնորհիվ այն բանի, որ այնտեղ ապրում են նաև եղնիկներ ու նապաստակներ: Առաջինների գոյությունը պայմանավորված է վերջիններով: Եվ գիտե՞ս ինչպես է կոչվում այդ անտառը... Կապիտալիստական հասարակություն…

Ցողիկը վշտահար խոնարհեց գլուխը և երկու ձեռքերով բռնեց քունքերը: Պայուսակը սահեց նրա գրկից, ընկավ գետին, բայց նա ուշադրություն չդարձրեց դրա վրա: Վարդանն ինքը բարձրացրեց այն:

— Խեղճ պապա...— ասաց աղջիկը:— Եթե իմանայի՛ր... Քեզ հարկավոր էր ուրիշ գործ անել կյանքում: Բոլոր մյուս վեներոլոգներին՝ նույնպես: Հարկավոր չէր բուժել ոչ ոքի...

— Ինչո՞ւ ես կարիկատուրայի վերածում իմ ասածը,— ժպտաց Վարդանը:— Բուժել հարկավոր էր: Բայց բուժելը կիսամիջոց է: Պետք էր վերացնել հիվանդությունը ծնող հիմքը, այսինքն՝ կապիտալիզմը: Հարկավոր էր լինել հեղափոխական: Իսկ քո հա՞յրը…

— Ոչ, ոչ,— օրորեց Ցողիկն իր գլուխը՝ ափերի մեջ առած.— Ոչ, ոչ, նա դաշնակցական չէր և ոչ էլ մի ուրիշ կուսակցության անդամ…

Վարդանը նայեց նրան և մի խանդաղալի կարեկցություն դեպի աղջիկը համակեց նրան: Նա նորից հիշեց «բաղմանչու» աղջկան: Հայրերի «սոցիալական վիճակն» անեծքի պես կախված է զավակների գլխավերևում՝ որպես նրանց «սոցիալական ծագումը»… Եվ իսկապես, ի՞նչ մեղավոր է Ցողիկն այն բանում, որ նրա հայրը հեղափոխական չի եղել: Իսկ մի՞թե հեղափոխական էր հենց նրա՝ Վարդանի հայրը… Ինչո՞ւ համար է այս անտեղի խոսակցությունը: Ինչո՞ւ համար է նա պղտորում իր հին ընկերուհու հետ հանդիպման այս չքնաղ գիշերը: Ճիշտ չէ՞ր կասկածում արդյոք Ցողիկը, որ Վարդանի մեջ չի մնացել ոչ ռոմանտիկա, ոչ ընդհանրապես գեղեցկության զգացում... Ինչպե՞ս կարելի է լինել կոմերիտական՝ ամեն րոպե և ամեն տեղ, նույնիսկ գիշերվա այս խաղաղ պահին, քո կյանքի առաջին և գուցե վերջին աղջկա հետ ամայի այգու նստարանի վրա նստած…

— Ներիր ինձ, Ցողիկ, խնդրում եմ,— ասաց Վարդանն անսպասելի պոռթկումով, խլելով նրա ձեռքերը:— Ներիր, իմ սիրելի Ցողիկ: Ոչ դու ես մեղավոր և ոչ էլ հայրդ: Բայց իմ մեջ նստած է մի խոր վիրավորանք բոլոր հարուստների հանդեպ, դու հասկացիր ինձ: Դա գալիս է իմ մանկությունից, թեև ես այն ժամանակ չէի գիտակցում դա: Իմ հայրը մահացավ հեղափոխության հենց նախօրյակին՝ առանց մի լավ օր տեսնելու: Մորս երիտասարդությունն անցավ ուրիշների դռներին լվացք անելով ու հաց թխելով: Մի մեղադրիր ինձ, Ցողիկ…

Ցողիկը բռնեց տղայի ձեռքն իր ձեռքերի մեջ և սկսեց շոյել, շոյել… Նրանք լուռ մնացին շատ երկար ժամանակ:

21

Լռությունը միայն արտաքինից է նման անշարժության: Դրա խորքում շարունակվում են հոսել մտքերը, բորբոքվել կամ խաղաղվել զգացմունքները, ընթանալ տրոփուն կյանքը…

Առաջինը խոսեց Վարդանը.

— Շարունակիր, թանկագին,— ասաց նա:

— Ես քեզ դեռ պետք է պատմեմ ամենահետաքրքիրը,— ասաց աղջիկը պատրաստակամ:— Եվ ամենակարևորը…Վերջապես մաման վճռեց ուղարկել ինձ Լենինական և տեսնել, թե ինչ վիճակի մեջ է մեր ունեցվածքը: Իսկ ես իմ կողմից, խիստ ուզում էի տեսնել Երևանը՝ երեք պատճառով: Առաջինը, որ նա, այսինքն՝ սա, դարձել է Հայաստանի մայրաքաղաքը: Իսկ հիշո՞ւմ ես, այն ժամանակ... անցյալում... ո՞վ էր Երևանին կարևորություն տվողն Ալեքսանդրապոլում: Մեր կարևոր քաղաքը հարևան Թիֆլիսն էր… Երկրորդ պատճառն այն էր, որ ես ուզում էի բարձրագույն կրթություն ստանալ: Մեր դպրոցի տղաներից մեկն ավարտելուց հետո եկել է այստեղ սովորելու և շատ է գովում ձեր համալսարանը: Նա միշտ նամակներով ինձ համոզում էր նույնպես գալ: Իսկ ես վախենում էի, որովհետև հայերեն լեզվից մի քիչ կաղում էի: Բայց վերջերս սկսեցի պարապել և իմ կարծիքով…

— Իսկ ի՞նչ տղա է դա…

— Մի՞թե միևնույնը չէ:

— Եվ ինչո՞ւ էր քեզ կանչում:

— Դու բոլորովին չես փոխվել, Վարդան,— հիացած շշնջաց Ցողիկը:— Խանդոտ ես՝ ինչպես երեխա ժամանակ: Ծիծաղելի է հնչում, ճի՞շտ է.— խանդոտ՝ ինչպես երեխա ժամանակ…

— Դու նրան սիրո՞ւմ ես:

— Ինչպե՞ս ասեմ…— կմկմաց աղջիկը:

— Իսկ ես, հիմարս,— դառնացած խոսեց ինքն իր հետ Վարդանը,— երբեք չէի մոռանում քեզ, իսկ վերջին ժամանակներս հիշում էի ամեն օր… Տեսնելիս ուրախացա հորթի պես…

Ցողիկը ծիծաղեց և մեղմ գրկեց ընկերոջը.

— Ես քեզ եմ ջղայնացնում, թանկագին: Ուզում եմ, որ խանդես: Ես առայժմ ոչ ոքի չեմ սիրում՝ բացի քեզանից… որպես իմ մանկության ընկերոջ…

— Իսկ նա քեզ սիրո՞ւմ է:

— Կարծեմ: Դա նրա անձնական գործն է: Համենայն դեպս նա ինձ ոչինչ չի ասել իր զգացմունքների մասին և, իմ կարծիքով, միշտ եղել է միայն ընկեր՝ թե արտաքնապես և թե հոգու խորքում:

— Քեզ հետ չի կարելի լինել միայն ընկեր,— մռայլ արտասանեց Վարդանը:

— Ինչո՞ւ,— հասկանալով, ժպտաց Ցողիկը՝ ծիծաղելու պատրաստ:

— Հենց այնպես,— չուզեց բացատրել տղան:

— Բոլորը պարտավոր են ինձ սիրե՞լ,— զվարթությամբ պարզաբանեց նրա միտքն աղջիկը:

— Ոչ թե պարտավոր են,— նույն մռայլ տոնով ուղղեց Վարդանը,— այլ անհնար է չսիրահարվել…

— Այդքան հավանո՞ւմ ես դու ինձ,— ուրախացավ աղջիկը՝ իր ջինջ հայացքով շեշտակի նայելով ընկերոջ երեսին:

— Ես ոչ թե իմ մասին եմ ասում, այլ բոլորի,— խանդի նոպայից հետո դեռ իրեն չգտած, նույն մռայլ տոնով ասաց Վարդանը:

— Բայց դրանով դու միայն քեզ ես մատնում,— զվարթ չարացրեց աղջիկը նրան:

— Գիտե՞ս ինչ, Ցողիկ… Շարունակիր պատմությունդ: Ասա Երևան գալուդ երրորդ պատճառը:

— Երրորդը... Ես ուզում էի տեսնել այդ տղային…

Վարդանը ոտքի ցատկեց:

— Ես կատակ եմ անում,— վախեցած բացականչեց աղջիկը:

— Ոչ, դա կատակ չէ…

— Երդվում եմ, Վարդան:

— Կարիք չկա, Ցողիկ: Եվ վերջապես, դու ինձ պարտավոր չես:

Ցողիկը նույնպես ոտքի ելավ և կանգնեց ընկերոջ դիմաց:

— Վարդան,— շշնջաց նա տագնապով,— երդվում եմ մեր մանկության հուշերով…

— Ձեռք մի տա դրանց,— գլուխը բացասաբար ցնցելով, խեղդուկ ձայնով արտասանեց տղան:— Դրանք այլևս մերը չեն, այլ միայն իմը…

Ցողիկն իր աչքերի խորքից եկող մեղմ հայացքով նայեց տղային՝ որոշակիորեն տատանվելով՝ այսպե՞ս շարունակել իր խոսակցությունը, թե՞ այլ կերպ: Իսկ թե որն էր այդ «այլկերպը»՝ Վարդանը չէր հասկանում: Նա աղջկա դեմքի վրա տեսնում էր միայն տատանումը:

Նայելով իր մանկության ընկերուհուն՝ դեմ-դիմաց, այդքան մոտիկից, նայելով այդքան գեղեցիկ աղջիկ դարձած Ցողիկին, Վարդանը պատրաստ էր գոռալով լաց լինել այն վիրավորանքից, որ այդ աղջիկն այլևս նրանը չէ, այլ մի ուրիշինը… Եվ նորից, որտեղից-որտեղ, անկոչ կերպով ներս խցկվեց նրա կոմերիտական գիտակցությունը: Վարդանը համարյա ատելություն զգաց իր հանդեպ, որ անձնական վշտի այդ տխուր պահին անգամ, նրա ուղեղը նորից սողոսկեց այն «սոցիալական» միտքը, որ եթե չլիներ համաշխարհային պատերազմը, չլինեին թուրքերը, չլինեին հարուստներ և աղքատներ, Ցողիկենք չէին մեկնի Ռոստով, իրարից չէին բաժանվի մանկության ընկերները, չէր անցնի նրանց պատանեկությունն իրարից հեռու, չէին շրջապատի աղջկան ուրիշ տղաներ, չէր սիրի աղջիկը նրանցից մեկին…

Ցողիկը, վերջապես, ինչ-որ բան վճռելով, բաց արեց սև ու մոխրագույն կաշվից կարած իր երկարավուն պայուսակը և հանելով այնտեղից մի ծալած թուղթ, մեկնեց տղային.

— Կարդա:

Վարդանը մեքենաբար վերցրեց թուղթը, բայց և իսկույն ասաց.

— Հարկավոր չեն ինձ քո գաղտնիքները: Վերցրու:

— Կարդա, կարդա: Խնդրում եմ:

Նրանք քայլելով մոտեցան ծառերից ազատ մի տեղի և Վարդանը փողոցից եկող լույսի շողերի տակ կարդաց այն նամակներից մեկը, որոնցով Ցողիկին համոզում էին գալ Երևան և ընդունվել համալսարան: Նամակը ռուսերեն էր և գրված էր իգական սեռով: Վարդանը նայեց ստորագրությանը: Աղջկա անուն…

— Ինչ անտանելի եք բոլոր աղջիկներդ,— ասաց նա զայրացած, նամակը մի ընդոստ շարժումով վերադարձնելով ընկերուհուն:

— Ներիր մեզ,— ծիծաղը ձայնի մեջ, լուրջ տոնով աղերսեց Ցողիկը:— Ով էլ մենք լինենք՝ անծանոթուհիներ, թե մանկության ընկերուհիներ, միևնույնն է, մնում ենք աղջիկներ:Իսկ դու, ինչ է, ուրախ չե՞ս, որ ընկերը դուրս եկավ ընկերուհի:

Վարդանը, որը պատրաստ էր ինչ-որ խենթություն անել ուրախությունից, երիտասարդի հպարտությամբ զսպեց իրեն և ոչինչ չպատասխանեց: Այո, երիտասարդի հպարտությամբ… Մի րոպե առաջ նրան վայրենի կթվար այդպիսի բան իր ընկերուհու նկատմամբ... Ինչպե՞ս կարելի էր ունենալ Ցողիկի հանդեպ ուրիշ զգացում, քան հոգու հատակից եկող ամենաբաց անկեղծություն... Նա համոզված էր, որ ճիշտ այդպես անկեղծ ու պարզ էր նաև Ցողիկը նրա հանդեպ: Բայց Ցողիկը, տղայի համար անսպասելի կերպով, ցուցաբերեց աղջկային խորամանկություն և տղան հասկացավ, որ նա այլևս անցյալի երեխան չէ, և նրանք անցյալի մանուկ ընկերները չեն: Վարդանն զգաց, որ այժմ իրար դեմ-դիմաց կանգնած են դեռ միմյանց չպատկանող երիտասարդ տղա և երիտասարդ աղջիկ... Ցողիկի աղջկային խորամանկությունն էր հենց, որ առաջացրել էր տղայի մեջ հպարտության փոխզգացումը…

Նրանք վերադարձան դեպի իրենց նստարանը, տղան սպասեց, մինչև որ աղջիկը նստի, ապա նստեց նաև ինքը:

— Բայց դու էլի չհասկացար,— ասաց Ցողիկը Վարդանին։— Դա մի խորամանկություն է իմ և այն տղայի կողմից: Որպեսզի մաման ոչինչ չկասկածի, մենք պայմանավորվել ենք, որ նա իր նամակներն ստորագրի աղջկա անունով…

— Ճիշտ է, ինձ կարելի է հիմարացնել,— համաձայնվեց Վարդանը,— բայց միայն մի անգամ: Այնպես որ, այլևս իզուր մի չարչարվիր, Ցողիկ: Ուրեմն, մենք կանգ առանք երրորդ պատճառի վրա: Շարունակիր…

— Երրորդ պատճառը... Ոչ, Վարդան, դա դու չէիր: Երրորդ պատճառն այն էր, որ ես ուզում էի տեսնել, վերջապես, քեռուս, ծանոթանալ նրա հետ: Ես տեսնում եմ, որ դու զարմացած ես: Հասկացիր, հիմարիկ, ես որտեղի՞ց իմանայի, թե դու Երևանումն ես: Ես չգիտեի նույնիսկ՝ կենդանի՞ ես դու արդյոք…

Վարդանի հոգին լիովին խաղաղվեց:

Հավաբուն-աշտարակի վրայից քաղաքային կոտրված ժամացույցն ազդարարեց ժամի երկո՞ւսը, երե՞քը, չո՞րսը…— երիտասարդներն ուշադրություն չդարձրին անգամ: Նրանք չնայեցին այն կողմ և չտեսան, թե ինչպես զարկերի հնչյուններից սարսափած, ժամացույցի միջից դուրս թռան գիշերելու համար այնտեղ մտած մի քանի ճնճղուկներ և սլացան դեպի մի ավելի խաղաղ ու մութ վայր…

22

— Իսկ հիմա լսիր ամենահետաքրքիրը և ամենակարևորը…— շշնջաց Ցողիկն արտասովոր հուզումով— Դու ինձ կհասկանաս... Միայն դու ինձ կհասկանաս, Վարդան... Ուրեմն…

Նա պաուզա տվեց: Թվաց, թե փնտրում է սկիզբը, բայց և իսկույն շարունակեց՝ շտապելով արտահայտել իրեն, ասել ամեն ինչ այն կարգով կամ անկարգությամբ, ինչպես դա կար իր մեջ:

— Ես ասացի, որ երբեմն, կրիտիկական մոմենտներին, մենք երազում էինք այն մասին, որ մեր հին տան իրերն ու կահ-կարասին մեզ մոտ լինեին և մենք կարողանայինք վաճառել դրանք: Բայց երբ ծանր պահը մի կերպ անցնում էր և մենք շարունակում էինք ապրել, բոլորս էլ զղջում և ամաչում էինք մեր րոպեական թուլության համար: Ինչպե՞ս կարելի էր վաճառել անցյալը… Չէ՞ որ մենք երազում էինք, թե կգա մի օր, երբ աշխարհը նորից կխաղաղվի, ամեն ինչ կգտնի իր տեղը և մենք կվերադառնանք Լենինական, այսինքն՝ Ալեքսանդրապոլ: Պապան այդ քաղաքի հետ կապված էր իր երկար տարիների աշխատավայրով, իր համբավով, իր պացիենտներով: Մաման՝ իր տուն ու տեղով, իր սեփականությամբ: Քույրս՝ Օլգինսկի գիմնազիայով, Չերքեզի Զորի թաքուն անկյուններով... Ես՝ իմ մանկությամբ…

Նա նայեց իր ընկերոջը, գլուխը թեքեց նրա ուսին, ապա իսկույն ուղղվեց և նորից շարունակեց.

— Բայց անցավ ժամանակ, պապան մահացավ, մաման սկսեց տնավորվել նոր քաղաքում ու վարժվել իր նոր տնտեսությանը: Ես որոշ ժամանակ մնացի միակը, որը երազում էր անցյալի մասին: Բայց հետո իմ միջից նույնպես ջնջվեց ամեն մի…

Նա կանգ առավ:

— Այ, տեսնո՞ւմ ես, Վարդան: Ես ուզում եմ լինել շատ ճիշտ, դրա համար էլ դժվարանում եմ ասել, թե ինչը ջնջվեց իմ մեջ: «Ամեն մի» ի՞նչ: Հո՞ւշ… Բայց դա պատահում է միայն շատ թույլ հիշողություն ունեցող մարդկանց հետ: Ճիշտ է, Ալեքսանդրապոլից հեռանալիս ես փոքր էի, հազիվ տասներկու տարեկան, և որոշ հուշեր կարող էին, իհարկե, իսկապես ջնջվել իմ մտքից, ինչպես և ջնջվեցին: Բայց դա չէր կարևորը: Ամենասարսափելին այն էր, որ իմ միջից ջնջվել էր ամեն մի զգացմունք՝ հին հուշերի հետ կապված…

— Տարօրինակ է,— ասաց Վարդանը կամացուկ,— այդպես լինում է միայն այն ժամանակ, երբ անցյալում ոչ մի լավ բան չես ունեցել, կամ, ընդհակառակը, շատ ավելի գոհ ես ներկայիցդ…

— Այո, այո: Բայց ես ոչ իմ անցյալից եմ այդքան դժգոհ և ոչ էլ ներկայից շատ գոհ: Ուրեմն էլ ինչո՞ւ էի դավաճանել իմ մանկության անցյալին... Ըստ երևույթին, Վարդան, մարդն այնպես է ստեղծված, որ նրա մեջ միշտ ավելի ուժեղ է ռեալը, ներկան, որը բոլոր կողմերից նյութականորեն շրջապատում է քեզ, ամեն րոպե զգացնել է տալիս իրեն, քան թե անցյալը, որը չքացել է երկրի երեսից և մնացել է միայն քո հոգու աննյութական ծալքերում... Այո, այո, ըստ երևույթին, հենց այդպես է: Համենայն դեպս, երբ մայրս մեր նկուղի բանալին տվեց ինձ և պատվիրեց մեկնել Լենինական, որպեսզի, եթե մեր ունեցվածքը մնացել է, գրեմ նրան և նա գա դա վաճառելու, իմ մեջ այլևս չկար այն զգացումը, թե մենք պատրաստվում ենք վաճառել ինչ-որ նվիրական բան, վաճառել մեր անցյալը: Ես հանգիստ սրտով նստեցի գնացք և մեկնեցի…

Աղջիկը լռեց, մի քանի րոպե մնաց անշարժ, ապա վերցրեց տղայի ձեռքը և սկսեց շոյել՝ կարծես նախապես մխիթարելով այն տհաճ խոստովանության համար, որը պատրաստվում էր անել:

— Գիտե՞ս ինչ,— ասաց նա, կտրուկ թողնելով նրա ձեռքը, ըստ երևույթին, վճռելով ասել ամեն ինչի մասին ուղղակի:— Ես ուզում եմ լինել քեզ հետ միանգամայն անկեղծ, միանգամայն, միանգամայն... Երբ ասացի, որ չէի փնտրում քեզ՝ չիմանալով՝ դու ո՞ղջ ես թե ոչ, ես, իհարկե, ասացի ճշմարտությունը: Բայց դա ամբողջը չէ, Վարդան... Ես նաև մոռացել էի քեզ... Ավելի ճիշտ՝ ոչ թե մոռացել էի, այլ չէի հիշում... Իսկ երբ հիշում էի, դա ինձ չէր հուզում ոչ մի կերպ... Բացի, իհարկե, առաջին տարուց կամ ավելի ճիշտ՝ կես տարուց…

Աղջկա անկեղծությունը, թեկուզև այնքան դառը, հուզեց տղային և նա նայեց իր վաղեմի ընկերուհուն շնորհակալությամբ, համարյա ուրախ:

— Դու չես կարող պատկերացնել,— շարունակեց աղջիկը,— թե որքան թարմ ու մաքուր էր մնացել մեզ մոտ նկուղի կողպեքի բանալին... Մենք դա պահում էինք սրբություն-սրբոցի նման: Ինչ ծիծաղելի է երբեմն մարդու հոգեբանությունը: Մեզ թվում էր, թե քանի դեռ այդ բանալին մեզ մոտ է, ոչինչ չի կարող պատահել մեր իրերին ու կահ-կարասուն, դրանք մեր ձեռքումն են... Ես չեմ կարող չհիշել Մոլլա Նասրէդդինի անեկդոտներից մեկը: Երբ մոլլային հայտնում են, որ նրա սնդուկը գողացել տարել են, նա հանգիստ պատասխանում է.— «Ոչինչ, բանալին ինձ մոտ է...»: Ահա այդ մոլլայի ապահովության զգացումն ունեինք բոլորս: Երբեմն հանում էինք բանալին, դնում սեղանի վրա և բոլորս նայում, նայում... Կարծես թե երկաթի այդ փոքրիկ կտորն իր մեջ պարունակում էր մեր ամբողջ ունեցվածքը, մեր անցյալը, այն, որ մնացել է Ալեքսանդրապոլում: Անատոլ Ֆրանսը, իմ կարծիքով, հեգնելով իր միտքը, ասում է.— ամենահաճելի ընթերցանությունը գրացուցակների ընթերցանությունն է: Այսինքն՝ երբ կարդում ես գրքերի վերնագրերը, քեզ թվում է, թե դու դրանով իսկ կարդացիր այդ գրքերը: Ահա այդպես էլ այդ բանալին մեր ունեցվածքի վերնագիրն էր…

Վարդանի հոգում, որտեղ խուռներամ խլրտում էին հազար ու մի զգացմունքներ՝ ուրախություն Ցողիկին հանդիպելու համար, թախիծ, որ աղջիկն այդպես մոռացած է եղել նրան, հետաքրքրություն նրա պատմության նկատմամբ, հույս, որ ամեն ինչ լավ է ավարտվելու, բարձրացավ նաև մի նոր, վաղուց չճաշակած զգացում՝ մեծ բավականություն այդպիսի մակարդակի խոսակցության համար: Վաղուց էր, ինչ ոչ ոք նրա հետ չէր խոսել և ոչ ոքի հետ նա չէր խոսել հոգեբանական այդպիսի նրբությունների մասին, չէր արտասանել կամ լսել այդպիսի ճիշտ նախադասություններ, այդպիսի դիպուկ մտքեր, Անատոլ Ֆրանսի անունը…

— Ես նրա համար ասացի բանալու թարմ և մաքուր մնալու մասին,— շարունակեց աղջիկը,— որ այն կողպեքը, որը ես պիտի բանայի այդ բանալիով, ժանգոտվել էր համարյա տակետակ: Աստված իմ, ինչպիսի՛ կոնտրաստ... Երբ ես մոտեցրի այդ երկուսը միմյանց, չէի հավատում, թե դրանք որևէ առնչություն ունեն իրար հետ... Բայց լսիր հերթով… Ուրեմն... Այն առևտրականը, որին քրեհով էինք տվել մեր բնակարանը, Կարս մեկնելիս մեր նախասենյակի տոմետե հատակն ամբողջովին ծածկել էր լինոլեումով՝ հենց հատկապես նկուղի դռնակը բոլորովին քողարկելու համար: Մեր տան

երկրորդ բնակիչները չէին էլ կասկածել նկուղի գոյության մասին: Չգիտեին դրա մասին նաև հիմիկվա բնակիչները: Շատ լավ մարդիկ են: Ամուսինն աշխատում է քաղաքային գործադիր կոմիտեի կոմունալ բաժնում, իսկ կինը մեքենագրուհի է մի ուրիշ հիմնարկում: Ունեն բազմանդամ ընտանիք՝ չորս երեխա, երկու տատ, կնոջ եղբայր, որը շուտով պատրաստվում է ամուսնանալ… Մի խոսքով, մեր բոլոր սենյակները լիքն են մարդկանցով: Երեկոյան բոլորը տանն էին, երբ ես մտա ներս: Ներկայացա,— ձեր տանտիրուհու աղջիկն եմ: Ընդունեցին շատ ջերմ, թեև ոմանք ասում էին, թե սրանք, այսինքն՝ բայլշևիկները կոպիտ են վարվում մասնավոր սեփականատերերի հետ: Հայտնեցի գալուս նպատակը: Խիստ զարմացան նկուղի գոյության համար, բայց այլևս չհետաքրքրվեցին, թե ինչ իրեր են պահված այնտեղ: Ինձ պահեցին իրենց մոտ գիշերելու: Քնեցի... Իմ սենյակում… Կողքի մահճակալում պառկած էր նրանց փոքրիկ աղջիկը և անդադար պատմում էր ինձ իրենց պատկոմական ջոկատի մասին: Աստված իմ, այնքան բան իմացա այդ երեխայից…Եթե չմեղքանայի նրան՝ մինչև լույս չէի թողնի քնել և պատմել կտայի: Ինձ թվում էր, թե նա ծիտ էր, որը եղել էր ամեն տեղ, տեսել էր ամեն ինչ, իսկ ես... բոժոժ էի, խխունջ... Հիշո՞ւմ ես, քանի՛-քանի անգամ ենք հավաքել Չերքեզի Ձորում…

— Հիշում եմ: Ամեն ինչ: Իսկ... ի՞նչ զգացումով մտար դու ձեր տունը:

— Երևակայիր, ոչ մի: Տարօրինակ է, չէ՞... Մի՞թե ես այդպիսի անհոգին եմ՝ երևի կմտածես դու իմ մասին: Բայց ոչ մեր բակի դարբասն էր մնացել, ոչ էլ ծառերն ու թփերը: Հենց փողոցից բակ մտնելիս ինձ պաշարեց մի զգացում, թե իբր ես մտնում եմ ինչ-որ անծանոթ, ավելի ճիշտ՝ հազիվ ծանոթ, հազիվ մի երկու անգամ տեսած վայր: Ինչպե՞ս կարող էր դա առաջացնել իմ մեջ որևէ զգացում…

— Նույնը և բնակարանում,— շարունակեց նա՝ դարձյալ մի պահ լռելուց հետո:— Ոչինչ, ոչինչ չէր հիշեցնում նախկինը: Անպաճույճ, ուղղակի ասած՝ աղքատիկ կահավորում, շատ քիչ իրեր, իսկ սենյակների դասավորությունը՝ մերինից բոլորովին տարբեր: Համարյա բոլոր սենյակներում՝ մահճակալներ ու թախտեր, ճաշասենյակը՝ կաբինետում, դահլիճը՝ վարագույրով երկու մասի բաժանված... Ոչ, Վարդան, մեր տուն մտնելիս ես չունեի ոչ մի, ոչ մի զգացում: Բայց դրա փոխարեն, ինչպիսի՞ զգացումներով ես դուրս ելա այնտեղից…

23

— Ես բաց արեցի մեր նկուղի դռնակը և սկսեցի իջնել քարե աստիճաններով: Մանկությանս ժամանակ ես երբեք չէի եղել այնտեղ և այժմ իջնում էի առաջին անգամ: Թեև նախապես ես քանդել էի տվել դեպի փողոց նայող երկու լուսամուտների քարե ծեփվածքը, բայց սանդուղքների վրա մութն էր, ես ոչինչ չէի տեսնում իմ դիմաց: Բայց վերջապես ես ոտք դրեցի քարե հատակի վրա և տեսա լուսամուտներից մեկի կեղտոտ ապակիները: Շուտով իմ աչքերը սովորեցին կիսախավարին, և ես նայեցի շուրջս…

Ցողիկը լռեց, հուզված սեղմեց ընկերոջ ձեռքը և շշնջաց խեղդուկ ձայնով.

— Ի՜նչ կատարվեց այդ րոպեին ինձ հետ, Վարդան... Իմ ամբողջ մարմնով սարսուռ անցավ... Ես վերադարձել էի իմ մանկության աշխարհը, վերադարձել էի դեպի անցյալը, մեր տուն... Բայց ի՜նչ տարօրինակ էր այժմ այդ տունը… Նա ամբողջովին տակնուվրա էր եղել, խառնվել էր իրար... Բայց ոչ, ես սխալ ասացի, ոչինչ տակնուվրա չէր եղել: Ընդհակառակը, ամեն մի իր, կահույքի ամեն մի առարկա խնամքով և ընդհուպ դրված էր մյուսի կողքին կամ մյուսի վրա՝ հնարավորին չափ քիչ տեղ գրավելու համար: Սարսափելի էր այդ դասավորությունը: Մեր բոլոր սենյակների, խոհանոցի, նախասենյակի իրերը, միախառնված, խտացել էին, սեղմվել, համարյա մինչև առաստաղ լցրել ամբողջ նկուղը: Եվ մի այնպիսի՜ քաոսային շփոթ կար դրանց դասավորության մեջ... Խոհանոցի պլիտան մեջք-մեջքի էր տվել պապայի բյուրոյի հետ, դրանց վրա խնամքով դարսված էին իմ դասագրքերն ու մեր ճաշի ամանները, մամայի հին տուֆլիներն ու նախասենյակի կախարանները... Վարդան, դու, իհարկե, շատ ես լսել «ժամանակի փոշի» արտահայտությունը…

— Այո, այո,— գլխով արեց կոմերիտականը.— և ուղղակի իմաստով, և փոխաբերական:

— Ուրեմն, երևակայիր ամենասարսափելին այն էր, որ ոչ մի չափով փոշի չէր նստել մեր հին տան որևէ առարկայի վրա: Ութ տարում և ոչ մի փոշեհատիկ... Թվում էր, թե բոննան ամեն օր սրբել էր դրանք, և վերջին անգամ՝ իմ գալուց անմիջապես առաջ... Ոչ մի փոշի՝ ոչ ուղղակի իմաստով և ոչ էլ փոխաբերական,— տխուր ժպտաց աղջիկը:— Ես անցնում էի կահ-կարասու արանքներում մնացած նեղ միջանցքներով, ինչպես կիրճերով, և նայում էի, նայում, նայում... Ես լաց չէի լինում, ոչ, իմ արցունքներն իրենք էին գլորվում, գլորվում, գլորվում… Մեր հին տունը պատժում էր ինձ այն բանի համար, որ ես այդքան տարիներ մոռացել էի նրան: Պատժում էր նրանով, որ շրջապատելով ինձ, ամեն կողմից մտնում էր իմ հոգու մեջ, իմ սրտի... Բայց մի՞թե պատիժ էր դա: Ես այնքան երջանիկ էի, ճիշտ է, սարսափելի, վշտահար երջանկությամբ: Ինձ թվում էր, թե ես հեքիաթի մեջ եմ որովհետև մի՞թե իրականության մեջ մարդ այդքան ռեալ կերպով կարող է վերադառնալ դեպի իր անցյալը... Իսկ արցունքներս գլորվում էին, գլորվում դասագրքերի վրա, մամայի մուֆտայի վրա, մեր փոքրիկ ակվարիումի չորացած մամուռի վրա…

— Ինչպե՜ս ես պատմում,— և հիացմունքով, և սարսուռով, ասաց Վարդանը:— Մարմնովս դող է անցնում…

— Լսիր, լսիր... ես չգիտեի՝ րոպենե՞ր են անցել, թե՞ արդեն ժամեր: Ես անընդհատ շրջում էի նկուղի մեծ սենյակի և փոքր սենյակի կիրճերով, շրջում էի, շրջում, և դա վերջ չուներ: Ճիշտ է, ես հաճախ կանգ էի առնում, երկար նայում: Գուցե ես մի քանի անգամ էի անցնում միևնույն տեղերով, բայց չէի նկատում այդ, որովհետև ամեն անգամ անցնում էի նորանոր կողմերով կամ կիսախավարի մեջ նկատում էի նորանոր առարկաներ... Երեսով դեպի լույսը, կանգնած էր մեր բուֆետ-պահարանը: Դրա ապակիները փայլում էին: Ապակիների ետևում հանգիստ շարված էին մեր խրուստալը, բակարան, ֆարֆորը, ֆայանսը... Ես ճանաչեցի իմ գավաթը, պապայի սիրած ափսեն՝ Նապոլեոնի նկարով, մրգերի վազաները... Եվ հանկարծ... Աստված իմ, ի՜նչ կատարվեց իմ հոգու հետ... Գետնի վրա, բուֆետին հենած, դրված էին գույնզգույն թղթերով փաթաթված գլորելու երկու օղակներ... Քոնը և իմը…

— Եվ ի՞մը...— ցնցվեց Վարդանը:

— Այո, այո… Մեր օղակները… Ինչպես երկու մտերիմ երեխաներ, իրար գրկած, կանգնել էին նրանք միասին…

— Ինչպե՞ս էր ընկել իմ օղակը ձեր տուն…— արտասովոր հուզումով հարցրեց Վարդանն ինքնիրեն:

— Ուրեմն դու այդ չե՞ս հիշում,— տխուր ժպտաց Ցողիկը:— Մի օր, երբ մենք դեռ շատ փոքր էինք, ես քեզ ամեն օրվա նման առաջարկեցի օղակ գլորել: Դու գլորեցիր, բայց միայն մի անգամ՝ քեզանից հեռու շպրտելու համար քո օղակը: «Ես երեխա խո չե՞մ, որ օղակ գլորեմ»,— ասացիր դու արհամարհանքով: Ես խղճացի քո օղակին և տարա մեր տուն: Մի օր հետո ես ինքս էլ դադարեցի իմը գլորելուց, որովհետև նույնպես զգացի, որ «այլևս երեխա չեմ»... Շուտով դրանք անհետացան մեր նախասենյակից, և չհետաքրքրվեցի էլ, թե ուր: Հիմա հասկանում եմ, որ մեր բոննան վերցրել էր և պահել: Շնորհակալություն նրան, թող բարի լինի նրա հիշատակը մեր սրտում…

— Ապրո՞ւմ է նա արդյոք...— բարձրաձայն մտածեց Վարդանը:

— Ես չէի հիշում այդ ամենը,— խոստովանեց աղջիկը:— Չէի հիշում քեզ: Բայց երբ տեսա մեր օղակները միասին, ամեն, ամեն ինչ մի վայրկյանում վերականգնվեց իմ հիշողության մեջ և իմ հոգում... Ախ, ես իմ կյանքի կեսը կտայի, եթե այդ րոպեին դու լինեիր ինձ մոտ... Բայց ես չգիտեի նույնիսկ, կենդանի՞ ես դու արդյոք... Հետևյալ օրվանից ես սկսեցի փնտրել ձեզ, հարցուփորձել, տեղեկանալ... Ես մի օրով էի եկել Լենինական, բայց մնացի մի քանի օր՝ հենց ձեզ... հենց քեզ գտնելու համար: Եվ եթե, վերջապես, գտա, մորդ, ապա շնորհիվ այն բանի, որ Լենինականը փոքրիկ քաղաք է: Օգնեց նաև պատահականությունը…

— Այո, մենք վաղուց էինք փոխադրվել ձեր տնից,— ասաց Վարդանը,— և այլևս չէինք եղել այնտեղ: Ի՞նչ գործ ունեինք:

— Երբ ես դուրս ելա նկուղից,— շարունակեց Ցողիկն իր պատմությունը,— ես այլևս խելագարություն էի համարում մեր ունեցվածքը վաճառելու միտքը: Միայն մի ցանկություն էր պաշարել ինձ՝ չվերանորոգել մեր պայմանագիրը տան կենվորների հետ, խնդրել նրանց՝ որքան կարելի է շուտ փոխադրվել ուրիշ բնակարան: Ես տենչում էի… Ինչո՞ւ եմ խոսում անցյալ եղանակով,— ես տենչում եմ դուրս բերել նկուղից իմ մանկությունը, դասավորել մեր սենյակներում, վերականգնել մեր հին տունը և ապրել այնտեղ, ապրել, ապրել... գոնե մի քանի տարի... Թող մայրս չհամաձայնի վերադառնալ այնտեղ, թող քույրս ծիծաղի ինձ վրա: Ես նորից փեղկեր գցել կտամ մեր դարբասին, կփակեմ դրանք, կվերականգնեմ բակում մեր հին պարտեզը ՝ վարդի թփերով ու ծառերով, բեսեդկայով ու մեր շան տնակով, և կապրեմ այնտեղ մենակ... Միայն թե ինձ մոտ լինես դու…

— Ե՞ս…

— Դու, դու, Վարդան, իմ մանկության ընկեր, իմ մանկության անբաժան մաս, իմ ամբողջ, ամբողջ մանկություն…

Պոռթկուն մի շարժումով շուռ գալով դեպի երիտասարդը, աղջիկը բռնեց նրա ձեռքերը և շշնջաց նրա երեսն ի վար.

— Գնանք Ալեքսանդրապոլ, Վարդան… Ի՞նչ գործ ունես դու Երևանում... Մի՞թե քեզ հաճելի չէ վերադառնալ քո մանկության քաղցր տարիները... Վերջ ի վերջո կարելի է երջանիկ լինել ամեն տեղ, այսինքն՝ չլինել Ռոստովում կամ Երևանում, բայց լինել Ալեքսանդրապոլում: Դու այնտեղ էլ աշխատանք կգտնես քեզ համար, իսկ ինձ հարկավոր չէ բարձրագույն կրթություն, ես գերադասում եմ երջանկությունը: Գնանք Լենինական, Վարդան... Մենք կփակենք դարբասը, ոչ ոքի չենք թողնի բակ, կվերցնենք մեր գույնզգույն օղակները, կգլորենք և կծիծաղենք, կգլորենք և լաց կլինենք, որ մենք և՛ մանուկներ ենք, և՛ մանուկներ չենք... Հետո կմտնենք բնակարան, դու կնստես բազմոցի վրա, իսկ ես՝ դաշնամուրի մոտ, և ես կնվագեմ քեզ համար Շոպենի չքնաղ նոկտյուրնը: Հետո կմտնենք բոննայի սենյակը, մի քանի րոպե լուռ կնստենք այնտեղ և բարի խոսքով կհիշենք մեր մտքում մեր վերջին բոննա Պոլյային: Հետո դու կգնաս կաբինետ, կնստես աշխատելու՝ բյուրոյի առջև, իսկ ես խոհանոցում ճաշ կպատրաստեմ պլիտայի վրա…

— Կոմունալ բաժինը թույլ չի տա, որ երկու հոգով զբաղեցնենք մի ամբողջ տուն,— դեմքի անդրդվելի արտահայտությամբ ասաց Վարդանը:

Ցողիկն արձակեց մի կարճ բացականչություն, ետ քաշվեց Վարդանից, ձեռքը տարավ դեպի իր բերանը, կծեց ցուցամատի արմատի կոճը և ընկերոջից հիասթափվելու մտքից սարսափած հայացքով նայեց նրա աչքերին՝ կարծես ստուգելու համար՝ լո՞ւրջ է ասում նա այդ բանը, թե կատակով:

— Եվ հետո, ես չեմ ուզում վերադառնալ իմ մանկության խղճուկ բնակարանը,— նույն տոնով շարունակեց կոմերիտականը:

— Ոչ, ոչ, Վարդան, դու կապրես ինձ մոտ, իմ բնակարանում... մեր բնակարանում... Չէ՞ որ ես սիրում եմ քեզ, իմ մանկություն…

Նա գրկեց տղային:

— Իսկ մա՞յրս,— հարցրեց Վարդանը՝ մեղմ ազատվելով աղջկա թևերից:— Նորից մեր հին բնակարանո՞ւմ... Եվ ես, կեսգիշերին արթնանալով ձեր սենյակներից մեկում, պիտի նայեմ խրուստալե ջահին և մտածեմ, որ մի քանի քայլ ինձանից հեռու, իր անշուք սենյակի խարխուլ թախտի վրա պառկել է իմ դժբախտ մայրը, իմ լվացք անող և հաց թխող մայրը՝ զրկված և՛ ամուսնուց, և՛ միակ որդուց... Այդպե՞ս, Ցողիկ…

Բայց Ցողիկը քարացել էր և կարկամել:

— Ոչ, Ցողիկ,— ասաց կոմերիտականը ինչ-որ անսպասելի ատելությամբ հեռու քաշվելով աղջկանից,— դու ոչ թե ինձ ես սիրում, ոչ թե նույնիսկ քո մանկությունը, այլ միայն ինքդ քեզ... Դու էգոիստ ես: Դու գուցե ամենամեծ էգոիստն ես ձեր ընտանիքում: Ո՞վ եմ ես քեզ համար, ի՞նչ եմ ես քեզ համար. քո մանկության աքսեսուար, գույնզգույն օղակի պես մի բան և ուրիշ ոչինչ: Դու մտածում ես ոչ թե իմ և քո երջանկության մասին, այլ միայն քո: Մանկությո՜ւն... Նայած, թե ինչ մանկություն: Դու, իհարկե բաղձանքով կհիշես այն: Իսկ ե՞ս... Ես նույնիսկ զարմանում եմ, որ դա կարելի է անվանել «քաղցր» բառով: Ինձ համար քաղցր եղել է ոչ թե իմ, այլ քո մանկությունը, ես հիմա եմ հասկանում դա: Իսկ իմ մանկությունը դեռ կանգնած է ձեր բակում՝ պատերի ծեփը թափված, անուղղելիորեն խղճուկ... Ձեր տնից փոխադրվելուց հետո ես չեմ տեսել այն և չեմ էլ ուզում տեսնել: Ես վախկոտ մարդ չեմ, բայց իմ մեջ կա ինչ-որ անհեթեթ սարսափ, որ եթե ես տեսնեմ այն, ինձ զոռով կտանեն նորից այնտեղ, կստիպեն մնալ ընդմիշտ և նորից պտտեցնել ձեր պաղպաղակի սարքի կոթը... Դու չես հասկանա ինձ, եթե ասեմ, թե որքան ուրախ կլինեմ, եթե քանդեն իմ «մանկությունը», քոնն էլ հետը, բաց անեն դրա տեղ մի լայն փողոց կամ կառուցեն շատ մեծ շենք: Այ, այն ժամանակ ես կգնամ այնտեղ, կնայեմ և կասեմ անցորդներին ու բնակիչներին,— ահա այստեղ կանգնած էր մի ժամանակ իմ մանկությունը, թող հավիտյան չքվի այն՝ իր կոնտրաստի՝ Ցողիկի մանկության հետ…

Վարդանի համար անսպասելի էր, որ նույնիսկ իր այդ դաժան խոսքերից հետո աղջիկը չարեց բողոքի ոչ մի շարժում, չարտասանեց զայրույթի ոչ մի բառ: Լռեց նաև կոմերիտականը: Քաղաքային ժամացույցը հավաբնի նմանվող «աշտարակի» վրայից նորից ազդարարեց ինչ-որ ժամ: Ցողիկը դանդաղ բարձրացրեց գլուխը, նայեց ընկերոջը, ձեռքը դրեց նրա ձեռքի վրա: Աղջկա ափը սառն էր, և տղային թվաց, թե դա միայն ֆիզիկական սառնություն չէր…

— Երբ ես պատրաստվում էի դուրս գալ նկուղից,— ասաց աղջիկը,— սանդուղքի կողքին նկատեցի մեկուկես տասնյակից ավելի ինչ-որ հաստ գրքեր, չափազանց հաստ, ոչ մեծադիր, բոլորն իրար նման: Վերցրի դրանցից մեկը և նայեցի.— «Свод законов Российской империи», 13-րդ հատոր... Շնորհակալություն քեզ, Վարդան... Դու ինձ հասկանալի դարձրիր, որ նրանց ներկայությունն իմ մանկության շեմքի վրա, սանդուղքի մոտ, ուներ սիմվոլիկ նշանակություն... Նորից շնորհակալություն քեզ, Վարդան: Իսկ այժմ գնանք: Ժամը քանի՞սը կլինի:

— Նայիր,— ասաց Վարդանը՝ ցույց տալով ոչ թե ժամացույցը, այլ այգու բոլորովին հակադիր կողմը:

— Ի՞նչ է այնտեղ,— վախեցած հարցրեց աղջիկը,— հրդե՞հ:

— Ոչ: Լուսաբաց:

Երբ նրանք թևանցուկ, Աբովյան փողոցով քայլեցին վերև դեպի Ալավերդյան, երկուսն էլ զգում էին, որ անցկացրել են իրենց կյանքի մի վճռական, նշանավոր գիշեր: Այժմ նրանց թևանցուկը, թեև դարձյալ մտերմական՝ սառն էր և անհույզ: Պարզապես հանդիպել են մանկության երկու ընկերներ, որոնք վաղուց ոչ մի ընդհանուր բան չունեն միմյանց հետ, և ահա քայլում են միասին…

Իսկ երբ նրանք խոսեցին, խոսքերը նույնպես սովորական էին և պրակտիկ: Հուզականն ու կարևորը, իր լուծումը գտած, մնացել էր խավար այգու ծառերի ու թփերի տակ և բացվող առավոտն այժմ անշուշտ ցրել, ցնդեցրել էր այն…

— Ի՞նչ պիտի ասես քեռուդ,— ժպտաց Վարդանը:

— Չգիտեմ, չգիտեմ: Բայց ոչ, գիտեմ: Կասեմ, որ, ուրեմն, քեզանից հետո գնացի հանրակացարան՝ ընկերուհուս մոտ, երկար զրուցեցինք, և որովհետև արդեն ուշ էր, մնացի նրա մոտ գիշերելու:

— Աղջիկներ, հնարագետ սատանաներ,— արտասանեց երիտասարդը:— Ես մի այնպիսի աղջկա հետ եմ ամուսնանալու, որ միամիտից էլ միամիտ լինի և չկարողանա խաբել ինձ:

— Իսկ ես այնպիսի մի տղայի հետ, որին կարողանամ խաբել ամեն րոպե,— ետ չմնաց Ցողիկը, բայց և ավելացրեց վայրկենական թախիծով.— թեև ինձ բոլորովին էլ պետք չի լինի խաբել նրան...

Երբ նրանք հասան աղջկա քեռու տանը, աղջիկն ասաց.

— Ուրեմն, Վարդան, դու այսօր հրավիրված ես քեռուս մոտ ճաշի: Չմտածես մերժել, թե չէ նա շատ կվիրավորվի: Ուզում է տեսնել իմ մանկության ընկերոջը: Իսկ ես իմ կողմից հրավիրում եմ նաև ընկերներիդ՝ Մուրադին, Գառնիկին և…

— Եվ վերջ,— ընդհատեց Վարդանը:

— Այո, այո, ես ուզում էի ասել ճիշտ նույնը: Բարի գիշեր: Աստված իմ... Բարի լույս:

Ցողիկը զանգը տվեց և արագ ձեռքով արեց ընկերոջը՝ հեռացիր՝ քանի դուռը չեն բացել: Թող չտեսնեն քեզ…

Իսկ Վարդանն շտապեց ոչ միայն հեռանալ այդտեղից, այլև որքան կարելի է շուտ հասնել իր սենյակը: Նա ուզում էր տեսնել այնտեղ իր ընկերներին: Չգիտես ինչու, նրան թվում էր, թե դա կարևոր է, խիստ կարևոր... Նա համարյա սկսեց վազել:

Ճիշտ է, նրանց սենյակում չկա ոչ ակվարիում և ոչ էլ նույնիսկ սեղան, բայց այնտեղ են Գառնիկն ու Մուրադը: Իհարկե, դժբախտաբար այնտեղ է նաև Վահրիճը, բայց ի՞նչ արած, կյանքում կան և՛ հաճելի մարդիկ, և՛ ատելի: Դրա համար էլ գոյություն ունեն սեր և ատելություն…

Երբ Վարդանը մտավ իրենց սենյակը, երեք կոմերիտականներն էլ արթուն էին: Բայց եթե Գառնիկն արդեն հագնվում էր, եթե Վահրիճը նոր էր արթնացել և դեռ պառկած էր անկողնում, ապա Մուրադի աչքերում դեռևս երեկոյան արթնությունն էր, նա աչք չէր փակել ամբողջ գիշերը և մտածել էր: Նա լրիվ հագնված էր և որոշակիորեն պարզ էր, որ նա հանված չի էլ եղել բոլորովին…

Երեք երիտասարդները տարբեր զգացմունքներով նայեցին Վարդանին: Տարբեր զգացմունքներով, բայց բոլորի հայացքներում ևս կար մի ընդհանուր բան: Նրանք թախծալի նախանձով էին նայում լենինականցուն՝ այդպիսի սքանչելի աղջկա հետ մի ամբողջ գիշեր շրջելու, սիրաբորբ խոսքեր նրան շշնջալու և նրանից լսելու համար:

Հասկանալով նրանց այդ հայացքը, Վարդանը ժպտաց տխուր ու ներողամիտ, և ասաց.

— Էհ, ընկերներ, դուք ոչինչ չգիտեք…

24

Այդ առավոտ «Ավանգարդի» խմբագրատան բոլոր հինգ աշխատակիցներն էլ նկատեցին, որ Վարդանն աշխատանքի ընթացքում մեկ-մեկ հորանջում է և մի երկու անգամ նույնիսկ կախեց գլուխը և նիրհեց:

— Ըհը…— բարձր հազաց և մյուսներին աչքով արեց մեքենագրուհին՝ սատանայի պես տգեղ և սատանայի պես աշխույժ մի աղջիկ:

Վարդանը ցնցվեց, բարձրացրեց գլուխը: Բոլորը ծիծաղեցին: Լենինականցին, բարկացած, բայց միայն իր վրա, դուրս ելավ խմբագրության միակ սենյակից, գնաց լվացարան, բաց արեց ծորակը և դեմ արեց գլուխը սառցային սառը ջրին: Չորացնելով իր սև, առատ մազերը և ետ սանրելով, նա վերադարձավ միանգամայն թարմացած և դեռ դռան մոտից դիմեց բոլորին.

— Ապա, էլ ո՞ւմ մոտ կա ոճաբանելու պատրաստ նյութ:

Աշխատակիցներից մեկը երկարեց նրան տետրակի թերթի երկու էջի վրա գրած մի թղթակցություն.

— Խնդրեմ: Արդեն կարող ես աղավաղել:

— Եթե միայն տեղ թողել ես,— փոխադարձաբար կծեց Վարդանը:

— Դու հնարագետ տղա ես, միշտ կգտնես աղավաղելու բան,— շարունակեց կատակն ընկերը:

Բայց Վարդանն ընկավ մտքերի մեջ և չպատասխանեց:

— Վարդա՞ն,— զարմացած վեր բարձրացրեց գլուխը խմբագիր Հրայրը,— ինչո՞ւ լռեցիր: Չէ՞ որ դու խոսքի տակ մնացողը չես:

Բայց լենինականցին չպատասխանեց նաև նրան: Մոտ քաշելով թղթակցությունը, նա կարդաց, կատարեց անհրաժեշտ ուղղումները և դրեց մի կողմ: Դա զբաղեցրեց նրան միայն մի քանի րոպե: Այնուհետև նա նորից ամփոփվեց իր մեջ և սկսեց մտածել նախորդ գիշերվա մասին: Նա իր հոգում զգում էր մի զարմանալի թեթևություն, եթե ոչ դատարկություն: Դա և՛ հաճելի էր նրա համար, և՛ դառը: Այսպիսով, ուրեմն, պարզվեց նրա համար, որ նա չի սիրում Ցողիկին... Այո, այո... Իր կյանքում հանդիպած ամենագեղեցիկ, ամենանուրբ և ամենակրթված աղջկան... Չի սիրում... Իր և նրա միջև որպես անջրպետ կանգնած է նրանց մանկությունը…

Տարօրինակ է... Մինչև երեկ նրան թվում էր, թե ընդհակառակը, հենց մանկությունն է նրանց միջև ընդհանուրը, հենց դա է կապում նրանց միմյանց հետ... Երբ երեկ հայտնվեց Ցողիկը, հենց այդ մանկությունն էր, որ իրավունք տվեց նրանց խոսել իրար հետ դու-ով, քայլել կիպ թևանցուկ, շոյել և փաղաքշել միմյանց... Եվ ահա, պարզվեց, որ այդ մանկությունը չի կապում նրանց, այլ ընդհակառակը, բաժանում է... Իսկ եթե նրանց մանկությունն անցել է միատեղ, կազմել է միասնություն, ապա դա, ինչպես մարքսիզմն է ասում, եղել է հակադրությունների միասնություն…

Մի՞թե դեռ երեկ Վարդանը կարող էր հավատալ, թե նա իր վաղեմի ընկերուհու հանդեպ պիտի զգա այդպիսի անբարյացակամություն, համարյա ատելություն... Իսկ գիշերը, այգու նստարանի վրա, եղան պահեր, երբ նա պատրաստ էր ամենակոպիտ կերպով վիրավորել աղջկան և կարծեմ նույնիսկ վիրավորեց…

Իսկ ինչո՞վ է մեղավոր Ցողիկը և ի՞նչ բանում… Մինչև հիմա էլ Վարդանը չի կարողանում պատասխանել այդ հարցին և գուցե երբեք էլ չկարողանա: Ոչ, ոչ, դա պատասխան չունի, որովհետև դա տրամաբանական հետևություն չէ, այլ զգացում՝ նրա ամբողջ էության մեջ լցված: Ընդհակառակը, տրամաբանությունը թելադրում է նրան, որ հիմարություն է Վարդանի կողմից, թողած Նիկոլայ երկրորդին և Կերենսկուն, Անտանտան ու թուրքերին, կապիտալիստներին ու «գարադավոյ»-ներին, դաշնակներին ու կուլակներին, իր դասակարգային ամբողջ փուքը թափել մի չքնաղ աղջկա վրա… Բայց ի՞նչ կարող է անել նա, եթե այդ այդպես է՝ հակառակ ամեն մի տրամաբանության... Իհարկե, Ցողիկը չքնաղ աղջիկ է և մի ուրիշը կարող է սիրել նրան և երջանիկ լինել նրա հետ, բայց Վարդանը, որի մանկությունը և Ցողիկինը…

— Ըհը,— լսվեց նորից:

— Չոռ,— բարկացավ Վարդանը,— չեն թողնում, որ մարդ խորանա իր մտքերի մեջ: Ես համոզված եմ, որ Արիստոտելի կողքին մեքենագրուհի չի եղել նստած:

— Չնայած դրան նա մեծ փիլիսոփա էր,— պաշտպանեց իրեն երիտասարդ աղջիկը:— Իսկ դու չես կարող լինել Էդիսին, թեկուզև նստած ես իմ կողքին:

— Սպանեց,— բացականչեց Հրայրը:— Տեղնուտեղը…

Մեքենագրուհին շարունակեց աշխույժ չխկչխկացնել:

Բոլորը զարմանում էին, որ Վարդանը ոչ միայն չէր կարողանում պատասխանել, այլև չէր էլ փորձում: Շուտով բոլորը հասկացան, որ նրա հետ կատարվել է կամ կատարվում է ինչ-որ լուրջ բան:

Իսկ Վարդանի հոգում նորից նույն հաճելի, բայց և մի քիչ դառնահամ թեթևությունն էր, դատարկությունը… Այն, որ նախորդ գիշեր նա այդպես անսպասելի կերպով փոխվել էր իր հին ընկերուհու հանդեպ՝ բոլորովին վիշտ չէր պատճառում նրան, ավելի ճիշտ, պատճառում էր միայն մի քիչ, մի փոքր… Դրա փոխարեն նա գոհ էր, որ այլևս վերջացան անցյալի հետ կապված իր երազկոտ մտորումները, աղջկան երբևէ տեսնելու իր այնքան երկարատև տենչանքները, ենթագիտակցական անձկալի սպասումը…

Շուտով Վարդանը նկատեց, որ նա դադարել է Ցողիկի մասին մտածելուց և վերհիշում է նախորդ երեկոյան տեղի ունեցած զեկուցումը կենցաղի հարցերի մասին: Բայց գուցե նա մեղավոր չէր այդպիսի անհոգությամբ ուրիշ նյութի անցնելու մեջ, որովհետև նրա շուրջն «Ավանգարդի» աշխատակիցներն աշխույժ խոսակցում էին նույն այդ զեկուցման և «ինչ-որ Սանթուրյանի» հիանալի ելույթի մասին, և այդ խոսակցությանն ակամա ունկնդրում էր նաև Վարդանը:

— Պետք է ամեն կերպ պրոպագանդայի ենթարկել մաքուր, մեծ, համայնապարփակ սերը,— ոգևորված ասում էր Հրայրը՝ բռունցքն աշխուժորեն խփելով սեղանին:— Դա մեր երիտասարդության համար նույնքան անհրաժեշտ է, որքան որ քաղդաստիարակությունը: Համարյա նույնքան…— ուղղեց նա իրեն:

«Ամեն կերպ պրոպագանդայի ենթարկել…»— կրկնեց Վարդանն իր մտքում: Ճիշտ է ասում Հրայրը: Բայց անո՞ւմ է Վարդանն արդյոք այդ բանը… Նա ոչ սիրահարված է, որ «անձնական օրինակ» տա ուրիշներին, ոչ... Ինչո՞ւ թվարկել «ոչ»-երը: Նա միայն երբեմն-երբեմն լեզվակռիվ է անում Վահրիճի և որոշ դեպքերում նրա ազդեցության տակ ընկնող Գառնիկի հետ: Ուրիշ ոչինչ: Ահա և քեզ «ամեն կերպ»…

Նա ուզում էր շարունակել ինքնամեղադրանքները բայց հանկարծ հիշեց, որ պայմանավորվել էր այսօր գնալ Երևանի կոմիտեի քարտուղարի մոտ մի քանի հարցերով, որոնցից մեկը հենց սիրո համար միությունից վտարված կոմերիտականի հարցն էր: Համենայն դեպս, դա էլ պայքար է հանուն սիրո: Ուրիշ էլ ի՞նչ կարող է անել…

Հանկարծ Վարդանի թուխ դեմքը շառագունեց մի անսպասելի, աշխարհի չափ մեծ հուզումից: Եվ ինչ լավ էր, որ բոլոր աշխատակիցները, վեճով կամ իրենց գործերով զբաղված, չնկատեցին այդ…

Քաշելով իր առաջ թղթերի ոչ հաստ մի դաստա, Վարդանն զգույշ նայեց շուրջը և գրեց վերնագիրը՝ «Սիրո երգը…»:

Գուցե իրոք, այդպե՞ս է ծնվում գրողը՝ հանկարծակի և անսպասելի, դրդված ոչ թե փառասիրությունից, այլ իր կոմերիտական պարտքը կատարելու գիտակցությունից…

Ինչ-որ մեկը կամ ինչ-որ մի ուժ սկսեց շարժել Վարդանի ձեռքը: Եթե ընդհատեին նրա գործը և հարցնեին, թե ինչ է ուզում գրել հաջորդ տողերում, նա չէր կարողանա պատասխանել: Բայց ձեռքը գրում էր, այն շարժում էր ինչ-որ մեկը կամ ինչ-որ ուժ, և ստացվում էր բավական լավ: Հուզմունքը ոտից-գլուխ պաշարել էր կոմերիտականին: Երանի ոչ ոք ոչինչ չնկատեր՝ մինչև որ նա ավարտեր գրելը: Ահա քիչ է մնացել, նա այդ զգում է: Ահա նա գրում է վերջին տողերը: Վերջ: Իսկ այժմ՝ ստորագրությունը:

Վարդանը նույնիսկ գրեց իր անվան սկզբնատառը և կտրուկ կանգ առավ: Խելագարվե՞լ է, ինչ է… Ուզում է, որ բոլոր աշխատակիցները ծիծաղե՞ն իր վրա: Կամ թեկուզ գովե՞ն: Նա գետինը կմտնի թե ծաղրից և թե գովասանքներից: Ծածկանուն է հարկավոր…

Ծածկանվան որոնումը տևեց համարյա այնքան, որքան որ պատմվածքի գրելը: Վարդանի ուղեղով անցան Հրենցներ, Աստղենցներ, Կայծունիներ, Մրճունիներ… Քանի-քանի անգամ նա ակամայից շեղվեց իր մտքերից, սկսեց ծաղրել իր գտած անունները. Հրենց՝ գետին դրենց… Մրճունի՝ տաղանդը մի մրջյունի…

Ծածկանունը եկավ անսպասելի մի վայրկյանում, ինքնիրեն: Դա ծածկանուն էլ չէր, այլ ուրիշ, գոյություն չունեցող, համենայն դեպս Վարդանին անծանոթ կոմերիտականի անուն-ազգանուն.— Արամայիս Գևորգյան…

Պատմվածքը գաղտագողի ծալելուց և գրպանը դնելուց հետո նա դիմեց խմբագրին.

— Հրայր, եթե տպարան ուղարկելու շտապ նյութ չկա, ես դուրս պիտի գնամ մի ժամով: Գնալու եմ Գրիգորյանի մոտ:

— Գնա:

— Իսկ մեքենագրելու ուրիշ բան չունե՞ս,— հետաքրքրվեց տգեղ աղջիկը՝ թղթակցության մեքենագրությունն ու ձեռագիրը դնելով նրա սեղանի վրա:

— Ոչ, ոչ, չկա…

Նախքան կոմերիտմիության Երևանի կոմիտե գնալը Վարդանը մտավ խմբագրությունից բավական հեռու գտնվող մի հիմնարկ, հեռու ոչ միայն տարածությամբ, այլև իր աշխատանքի բնույթով, և դիմեց իր ծանոթ կոմերիտուհի մեքենագրուհուն:

— Դու շա՞տ ես զբաղված:

— Ընդհանրապես այո, բայց մասնավորապես հիմա ոչ: Ի՞նչ կա որ:

— Տպիր սա ինձ համար, խնդրում եմ: Նյութերը տարա տպարան, իսկ այս մեկը չընդունեցին, ասում են՝ ձեռագիրը լավը չէ: Իսկ վերադառնալ մինչև խմբագրատուն չեմ ուզում, հեռու է: Արա այդ բանը՝ ընկերական գծով:

— Տուր տեսնեմ: Ո՞ր հիմարը չի ընդունել, սա լավ ձեռագիր է: Ճիշտ է, անճոռնի է, բայց կարդացվում է:

— Ես մի ժամից կգամ կվերցնեմ,— ասաց Վարդանը՝ առանց որևէ տրամաբանական կապի իր նախորդ ասածների հետ:

Երևանի կոմիտեում նա ուղղակի մտավ Գրիգորյանի կաբինետը և կանգ առավ շեմքի վրա: Այնտեղ, լուսամուտի մոտ, դեմ-դիմաց նստել էին Գրիգորյանն ու Կենտկոմի քարտուղարը և զրուցում էին: Լենինականցին ուզում էր ետ դառնալ, բայց Գրիգորյանը բացականչեց.

— Ահա հենց Վարդանն էլ մեզ կպատմի մանրամասնությունները: Քաշիր աթոռը, Վարդան, նստիր…

Խոսքը նորից նախորդ օրվա զեկուցման մասին էր: Վարդանը շարադրեց ելույթները, պատմեց ունկնդիրների տրամադրության մասին, ասաց նաև իր կարծիքը: Մտքերի մի կարճ փոխանակությունից հետո Գրիգորյանը դիմեց նրան.

— Իսկ հիմա ասա տեսնեմ, թե ի՞նչ գործով ես եկել ինձ մոտ:

— Հենց նույն այդ գործերով: Մի՞թե մեր մարտական ընկերը չպետք է վերականգնվի միության մեջ:

— Անշուշտ,— համաձայնվեց Գրիգորյանը:— Բայց ես չեմ հիշում այդպիսի դեպք: Ե՞րբ է պատահել:

— Վահրիճի ասելով՝ մոտ մի տարի առաջ: Ես դժբախտաբար չգիտեմ այդ տղայի անուն-ազգանունը, բայց կիմանամ:

— Տարօրինակ է,— մենախոսեց Գրիգորյանը,— դուրս է գալիս, որ իսկապես մոռացել եմ:

— Լա՛վ մոռանալու բան է,— գլուխն օրորեց Կենտկոմի քարտուղարը՝ կիսազինվորական ձևի հագնված, սապոգներով մի երիտասարդ՝ առնական կազմվածքով և մի փոքր կանացի տեսք ունեցող գեղեցիկ դեմքով: Դառնալով դեպի դուռը, նա ձայն տվեց.

— Ռիմա…

Ներս մտավ քարտուղարուհին:

— Ռիմա ջան, ապա, հանիր արխիվից և բեր սիրահարվածության համար միությունից վտարված կոմերիտականի գործը: Մոտ մի տարվա դեպք եմ ասում:

— Սուտ է: Էդպիսի դեպք չի եղել: Ոչ մի տարի առաջ, ոչ երկու:

— Ինչպե՞ս չի եղել,— բորբոքված ոտքի ցատկեց Վարդանը:— Երեկ երեկոյան կենդանի վկան, այսինքն՝ ինքը տուժողը ռեպլիկա բաց թողեց: Պառավել ես, Ռիմա, հիշողությունդ թուլացել է:

— Ղալաթ ես արել,— անցողակի նետեց աղջիկը Վարդանին և նորից դառնալով դեպի քարտուղարները, կրկնեց.— փչոց է:

Եվ դուրս ելավ:

Քարտուղարները նայեցին իրար, ապա Վարդանին:

— Ես կիմանամ Տրոպիկական ինստիտուտի Վահրիճից, որն ապրել է նրա հետ մի սենյակում:

— Իմացիր առանց հետաձգելու,— պատվիրեց Կենտկոմի քարտուղարը:

— Մյուս գործը, որով եկել էի ձեզ մոտ, ընկեր Գրիգորյան, հետևյալն է: Հերիք չէ՞ ամեն մի քոսոտի մենք համարենք «մասնավոր սեփականատեր»:

— Ի՞նչ է պատահել,— հետաքրքրվեց Գրիգորյանը:

— Այն, որ ամեն մի փոքրիկ բակ ունեցողի մենք երբեմն նույնպես համարում ենք «բաղմանչի» և դրանից հանում համապատասխան եզրակացություններ…

— Դու կոնկրետ խոսիր, կոնկրետ,— առաջարկեց Կենտկոմի քարտուղարը:

Վարդանը կակազեց: Նա հիշեց, որ ոչինչ չգիտե Աստղիկի ընտանիքի, ծնողների, հենց իրեն՝ աղջկա մասին: Միայն առաջին տպավորությունը և կարեկցանքի զգացումն էին դրդել նրան՝ տալ քարտուղարին այդ հարցը:

— Ես ընդհանրապես եմ ասում, ոչ թե կոնկրետ,— ելքը գտավ նա:— Եթե, օրինակ, ընտանիքն աշխատավորական է, բայց ունի պապերից մնացած մի տնակ և փոքրիկ պարտեզ, որտեղ կան խաղողի մի քանի թփեր, մի՞թե նա «մասնավոր» է և «սեփականատեր»:

Գրիգորյանը նայեց Կենտկոմի քարտուղարին, բայց վերջինս չէր պատրաստվում խոսել: «Հարցը քեզ են տվել՝ դու էլ պատասխանիր»,— ասում էր նրա հայացքը:

— Լիբերալ ես դատում, լիբերալ,— հառաչելով դարձավ Գրիգորյանը դեպի Վարդանը:— Մարքսը մեզ սովորեցրել է, Էյնշտեյնն էլ համարյա նույնն է ասում, որ ամեն ինչ հարաբերական է: Մի քիչ ավելի հարուստ երկրում, իհարկե, քու այդ քոսոտ բաղմանչին կարող էր համարվել չքավոր: Բայց աղքատ Հայաստանում, որտեղ դեռևս… Մի խոսքով, նա կուլակ: Նա հոգեբանորեն է կուլակ…

Գրիգորյանը նայեց Կենտկոմի քարտուղարին: Վերջինիս աչքերում նա կարդաց անհավանություն: Ուրեմն ի՞նչ... Բայց Կենտկոմի քարտուղարը չուզեց Վարդանի ներկայությամբ անհարմար կացության մեջ դնել Գրիգորյանին: Դառնալով դեպի կոմերիտականը, նա ասաց ժպիտով.

— Կարճ ասած, ծանոթացել ես մի աղջկա հետ, որին հավանել ես և հիմա ուզում ես ներգրավել միության մեջ, բայց չգիտես՝ խանգարո՞ւմ է դրան ծնողների սոցիալական դրությունը, թե ոչ:

Վարդանն ապշեց այդպիսի պայծառատեսությունից:

— Այո,— խոստովանեց նա:

— Եվ, իհարկե, սիրահարվել ես:

— Այդ մեկը ոչ:

— Աչքը վախեցել է, թե իրեն էլ կվտարեն միությունից,— ծիծաղելով դարձավ Կենտկոմի քարտուղարը Գրիգորյանին:

— Ճիշտ չէ,— բողոքեց Վարդանը,— ես պարզապես դեռ ոչ ոքի չեմ սիրում, բայց…

Նա քիչ մնաց ասեր.— «բայց քիչ առաջ մի պատմվածք գրեցի սիրո մասին. տեսնո՞ւմ եք, որ չեմ վախենում»:

— Ծանոթացիր նաև ծնողների հետ,— խորհուրդ տվեց նրան Կենտկոմի քարտուղարը,— և ինքդ որոշիր՝ արժանի՞ է նրանց աղջիկը մեր շարքերում լինելու, թե ոչ: Իսկ երբ հարցը հասավ մեզ՝ մենք էլ կասենք մեր կարծիքը:

— Իմ վերջին հարցը հետևյալն է,— դիմեց Վարդանը նորից Գրիգորյանին, քանի որ հենց նրա մոտ էր եկել ինքը:— Կոմերիտականն իրավունք ունի՞ ատելու իր ընկերոջը, թե ոչ.

— Չեմ հասկանում:

— Մենք բոլորս միության անդամներ ենք: Բոլորս գնում ենք դեպի համաշխարհային հեղափոխություն: Բայց ես իրավունք ունե՞մ, չնայած դրան, սիրել ոչ թե կոմերիտմիության ամբողջ անձնակազմը, այլ ոմանց էլ ատել:

— Ի՞նչ ես ամենաբարդ հարցերը հավաքել-եկել գլխիս,— բարկացավ Գրիգորյանը:— Խնդրեմ, դիմիր Կենտկոմի քարտուղարին:

— Ոչ, ոչ, ընկեր Գրիգորյան,— աշխուժացավ Կենտկոմի քարտուղարը,— հարցը ձեզ է տրված՝ ուրեմն դուք էլ բարի եղեք պատասխանելու:

— Չեմ կարող:

— Չէ, լուրջ, Գրիգորյան:

— Չեմ կարող, ազնիվ խոսք: Այսինքն՝ որևէ պատասխան կարող եմ տալ, բայց հազիվ թե շատ ճիշտ լինի: Ավելի լավ է՝ ինքդ ասա, իսկ մենք լսենք: Համաձա՞յն ես, Վարդան:

Կենտկոմի քարտուղարը լրջացավ, մտածեց մի պահ, ապա ասաց.

— Այո, Վարդան… Չնայած մեր դասակարգային ընդհանուր շահերին, ընդհանուր նպատակին, դու կարող ես քո անձնական փոխհարաբերությունների մեջ մեկին սիրել, մյուսին ավելի շատ սիրել, երրորդի նկատմամբ զգալ անտարբերություն, իսկ չորրորդին էլ ուղղակի ատել: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել, կյանքը սխեմա չէ, այլ կենդանի մարդկանց ու կենդանի հույզերի աշխարհ: Բայց, իհարկե, լավ չէ, երբ մի կոմերիտականն ատում է մյուսին՝ թեկուզև անձնական կյանքում: Հենց որ

նա էդպիսի մի բան զգաց, իսկույն հարց պիտի տա իրեն՝ «իսկ գուցե դա միայն անձնական զգացմունք չէ՞, գուցե դրա արմատներն ավելի խո՞րն են, բայց ես դեռ չեմ գիտակցում դա»…

— Դու Վահրիճի մասի՞ն ես ասում,— հարցրեց Գրիգորյանը Վարդանին:

— Այո:

— Դե էլ ի՞նչ անձնական զգացմունք: Նա քյալլագյոզի մեկն է և քու ատելությունը որոշ հիմք ունի: Միայն թե ատելը քիչ է, հարկավոր է վերադաստիարակել նրան:

— Ե՞ս… Վահրիճի՞ն…— ծիծաղեց Վարդանն այդ մտքից:— Ես նրա հետ երկու րոպեից ավելի չեմ կարող հանգիստ խոսակցել: Իսկ դաստիարակել կարող եմ միայն տերթոդիկյան մեթոդով, այսինքն՝ ֆալախկայով…

Քարտուղարները ծիծաղեցին:

— Ի՞նչ Վահրիճ է դա,— հետաքրքրվեց Կենտկոմի քարտուղարը:

Գրիգորյանն սկսեց պատմել:

25

Չնայած նրան, որ համարյա մի տարի էր, ինչ Վահրիճն ապրում էր երեք կոմերիտականների հետ, բայց նրանցից ոչ մեկը չէր եղել նրա աշխատավայրում: Ոչ մեկն ընդհանրապես չէր եղել մյուսի աշխատավայրում: Ուստի և, երբ Վարդանը մտավ Տրոպիկական ինստիտուտի գրասենյակը, երկարահասակ քարտուղարը ծայր աստիճան զարմացած նայեց նրան:

Տրոպիկական ինստիտուտի երկհարկանի շենքը, ամենագեղեցիկը Երևանի բոլոր շենքերից, գտնվում էր նույն Աբովյանի վրա, կոմերիտմիության Երևանի կոմիտեից մի քանի քայլ այն կողմ: Գրասենյակը գտնվում էր առաջին հարկի մի փոքրիկ սենյակում: Գրասեղանների ետևում բոլոր աշխատակիցները նստած էին սպիտակ խալաթներով, և Վահրիճը նույնպես: Նա խոսում էր իր մոտ կանգնած պառավ հավաքարարուհու հետ, և խոսում էր առարկություն չվերցնող հրամայական տոնով: Խեղճ պառավը, միաժամանակ թարթելով և՛ կոպերը, և՛ գլուխը, երկյուղած լսում էր կոմերիտականին:

— Ջնջոցներ դուրս են գրված ընդամենը երեք ամիս առաջ,— ասում էր երկարահասակը,— իսկ ջնջոցների մորտիզացիայի ժամկետը, իմ կարծիքով, պետք է լինի ոչ պակաս, քան վեց ամիս: Էնպես որ, գնա և ասա դիրեկտորին, որ ես հրաժարվում եմ դուրս գրելուց: Վերցրու նրա կարգադրությունը: Իհարկե, նա իմ պետն է և ես պիտի ենթարկվեմ նրան, բայց նա անպարտիական է և ունի սպեցի հոգեբանություն, չի հասկանում խնայողական ռեժիմը: Սպասիր: Ետ տուր նրա կարգադրությունը: Թող մնա ինձ մոտ որպես անհերքելի ապուցույց: Ի՞նչ ես ուզում, Վարդան…

Ընկերոջն ուղղված վերջին խոսքերը, երևի իներցիայի ուժով, ասվեցին նույն անբարյացակամ տոնով, որն ուղղված էր Տրոպիկական ինտիտուտի անտնտեսվար դիրեկտորի հասցեին: Բայց ոչ… Վարդանը հասկացավ, որ դա ուրիշի նկատմամբ եղած անբարյացակամությունը չէր, որ «մեխանիկորեն» փոխադրվեց նրա վրա: Երևում էր, որ չոր ու պաշտոնական տոնն ընդհանրապես Վահրիճի աշխատանքի «ոճն» էր, թեկուզև նա խոսելիս լիներ միևնույն սենյակում ապրող իր ընկերոջ հետ…

— Ընկեր Վահրիճ,— դիմեց Վարդանը նրան՝ անդրդվելիորեն լուրջ դեմքով,— ես ձեզ մոտ եկել եմ մի փոքրիկ խնդրով: Բարի եղեք ասել ինձ ձեր նախկին տան հասցեն…

— Ինչի՞դ է պետք,— զարմացավ, բայց և համարյա գլխի ընկավ երկարահասակը:

— Ես ուզում եմ ծանոթանալ ձեր վտարած տղայի հետ:

— Ելնենք մի րոպե միջանցք,— կամացուկ առաջարկեց քարտուղարը: Միջանցքում նրա խոսակցության տոնը փոխվեց սովորականի:— Ի՞նչ է, Վարդան, կլյաուզա՞ ես ուզում սարքել իմ դեմ:

— Ոչ, Վահրիճ, ուզում եմ օգնել, որ անմեղ վտարված ընկերը վերադառնա կոմերիտմիություն:

Միջանցքում հայտնվեց պառավ հավաքարարուհին: Անցնելով Վահրիճի մոտով, նա ասաց.

— Ընկեր Վայրիճ, դիլեկտորն ասաց, որ ջնջոցներն իրենց տնից բերեմ:

— Էդ նրա անձնական գործն է,— ձեռքը թափ տվեց քարտուղարը:— Ես քեզ ոչ մի հասցե չեմ տա, Վարդան:

— Կիմանամ, Վահրիճ, մի հաշիվ է:

— Գնա իմացիր՝ եթե կարող ես:

— Հենց դու ինքդ կասես ամենայն խոնարհությամբ: Լավ իմացիր, որ բանը հասել է մինչև Երևանի և Կենտրոնական կոմիտեի քարտուղարներին:

— Ուրեմն կլյաուզան արդեն սկսե՞լ ես, սրիկա…

— Վահրիճ,— ասաց Վարդանը՝ զայրույթից ամբողջովին կարմրելով,— հանուն հիվանդների հանգիստը չվրդովելու՝ ես թքամանը չեմ տալիս գլխիդ, որ ձայնդ գլուխդ չգցես: Տուր հասցեն, և ես կգնամ...

Վահրիճը, սպիտակ խալաթը հագին, նիհար, բարձրահասակ, խալաթի գրպանից հանեց իր ձեռքը և դեմ անելով ընկերոջ քթին՝ ցույց տվեց երեք մատների հայտնի կոմբինացիան: Վարդանը նայեց շուրջը և չտեսնելով ոչ ոքի, նախ բռունցքով ուժեղ խփեց նրա ձեռքին, ապա, ավելի մեծ թափով, դեմքի ուղիղ մեջտեղը:

Դժվար էր ասել, թե ինչ պատասխան էր տալու նրան Վահրիճը, բայց այդ րոպեին միջանցք մտավ մի ֆելդշերուհի և դուռը բաց պահելով, ներս թողեց երկու սանիտարների, որոնք բերում էին պատգարակի վրա պառկած մի հիվանդի:

— Այնպես որ,— ասաց Վահրիճը շատ սիրալիր, համարյա ժպտալով,— վճիռը վերջնական է և ենթակա չէ բեկման:

— Ի՞նչ կա որ,— նույնպիսի սիրալիրությամբ պատասխանեց լենինականցին,— ես կկատարեմ ձեր խնդիրը և այդ մասին կհաղորդեմ Երևանի կոմիտե և Կենտկոմ…

Եվ գնաց:

Վահրիճն ստուգեց՝ արյուն չի՞ գալիս քթից: Համոզվելով, որ ոչ, նա ձգեց իրեն, դեմքին տվեց Տրոպիկական ինստիտուտի ամենաազդեցիկ աշխատողի արտահայտություն և վերադարձավ գրասենյակ: Զևացնելով, թե զբաղվում է ինչ-որ գրություններ կարդալով, նա նստեց, իր փոքրիկ գլուխն առավ ափերի մեջ և սկսեց մտածել՝ անթարթ նայելով գրասեղանին: Վարդանի բռունցքի հարվածները նրան չէին հուզում, ոչ, նա սովորել էր դրանց, ինչպես նաև Վարդանն էր սովորել նրա նույն կարգի պատասխաններին: Վահրիճին անհանգստացնում էր մի ուրիշ բան՝ սիրահարված լինելու համար կոմերիտմիությունից հեռացվածի գործի բացվելը… Իհարկե, Վահրիճն ինքը, որպես դրա գլխավոր հեղինակը, կստանա խիստ նկատողություն՝ եթե ընդհանրապես դուրս չթռչի միությունից…

Ահա թե ինչպես փորձանքը գալիս է բոլորովին անսպասելի կողմից…

Բայց սպասիր, սպասիր…

Վահրիճը խրախճանքով վեր ցատկեց տեղից և նետվեց դեպի դուռը՝ Վարդանին վերադարձնելու համար, բայց և իսկույն թափ տվեց ձեռքը, նստեց և անմիջապես զբաղվեց իր սովորական գործերով: Նրա նիհար դեմքի վրա փայլում էր արտասովոր զվարթ ժպիտը…

Ինչպե՜ս էր նա մոռացել… Չէ՞ որ այդ կոմերիտականին հեռացրին բոլորովին էլ ոչ սիրահարված լինելու պատճառով, կոմերիտմիության հասցեին վիրավորական խոսքեր շպրտելու համար: Այդպես է գրված բջիջի արձանագրության մեջ: Երբ Վահրիճը, ապա նաև մի քանի ուրիշ կոմերիտականներ մեղադրեցին նրան սիրահարվածության, իր դասակարգային գործերը մոռանալու և անձնական-քաղքենիական հույզերի ետևից ընկնելու մեջ, այդ սրիկան վեր կացավ և ասաց.— «Ինձ համար գրող չարժե այն միությունը, որն ուզում է ինձ անջատել իմ սիրած աղջկանից»… Եվ թողեց ժողովը, հեռացավ: Իսկ բջիջը, մի կողմ թողնելով նախորդ մեղադրանքը, նրան հեռացրեց հենց այդ պատճառով... Դե հիմի գնա և ապացուցիր քո կոմիտեների հետ միասին, ընկեր Վարդան, թե ինչի համար են հեռացրել նրան: Կա բջիջի արձանագրությունը, որը հաստատել է Երևանի կոմիտեն... Այնպես որ, ես այսօր, գործից հետո, հենց ինքս կտամ քեզ նրա հասցեն, խնդրեմ: Իսկ քեզ, Վարդան, ես ցույց կտամ, դեռ թող գա ժամանակը… Քեզ չի հաջողվի արատավորել այդքան դժվարությամբ ձեռք բերած իմ «անշեղ կոմերիտականի» անունը…

26

Երբ Ցողիկը մտավ տուն, նրա քեռին արդեն դուրս էր գնացել: Հապճեպ բացատրելով քեռու կնոջը, որ նա եղել է ընկերուհու մոտ և ամբողջ գիշերը մինչև լույս նրանք անքուն խոսակցել են, աղջիկը հրաժարվեց նախաճաշից, իսկույն հանվեց և պառկելով, վայրկենապես քնեց: Թեև դրանից մի քանի րոպե հետո բակի կողմից, դեպի ուր նայում էր նրա սենյակի լուսամուտը, սկսեցին լսվել ինչ-որ անընդհատ չկչկոցներ, բայց Ցողիկը, խոր քնի մեջ ընկղմված, չէր լսում դրանք: Հնչյունները նրա լսողությանն սկսեցին հասնել միայն ժամը տասի մոտերքը, երբ նա արդեն բավական կշտացել էր քնելուց: Բայց էլի դեռ երկար ժամանակ չէր արթնանում, իսկ չկչկոցները նրա գիտակցության մեջ միանում էին ինչ-որ խառնիխուռը և տարօրինակ պատկերների հետ, որոնք վերածվում էին կցկտուր և անկապ երազների: Արթնանալուց հետո Ցողիկը չկարողացավ հիշել դրանցից և ոչ մեկը: Մնացել էր մի տխուր և բավական տհաճ տպավորություն, բայց այն էլ, Ցողիկը շուտով հասկացավ, գալիս էր ոչ թե երազներից, այլ Վարդանի հետ իր անցկացրած գիշերից:

Ուրեմն, նրանք չեն սիրում իրար… Եվ տարօրինակ կլիներ, եթե լիներ այլ կերպ: Բաժանվել են նրանք մանուկ հասակում, ութ տարի եղել են իրարից հեռու և գաղափար էլ չեն ունեցել միմյանց մասին: Երբ երեկ տեղի ունեցավ նրանց նոր հանդիպումը, երկուսին էլ մի պահ թվաց, թե նրանք սիրեցին իրար: Բայց բավական էր միասին անցկացրած անքուն գիշերը և խոսակցությունը, որպեսզի պարզվեր, որ դա սեր չէր, այլ մանկական հուշերի և տպավորությունների բուռն հորձանքը…

Ճիշտ է, հաճախ են պատահում դեպքեր, երբ երիտասարդ տղան ու աղջիկն առաջին հայացքից սիրահարվում են իրար: Բայց մի՞թե «առաջին հայացք» էր Ցողիկի և Վարդանի երեկվա հանդիպումը… Ոչ, դա հին ծանոթների հայացք էր դեպի անցյալը… Եթե չլիներ դա, Վարդանը գուցե, իրոք, հենց առաջին հայացքից սիրահարվեր նրա վրա, որովհետև Ցողիկը, նա ինքն էլ գիտե այդ, գեղեցիկ աղջիկ է: Բայց Վարդանը ոչ միայն չսիրահարվեց, այլև մի այնպիսի կուտակված վիրավորանք դուրս հորդեց աղջկա հանդեպ, որ կարծես խեղճ Ցողիկն էր եղել նրա և նրա ընտանիքի բոլոր դժբախտությունների պատճառը… Ոչ, ունենալով հոգու մեջ այդպիսի մաղձ դեպի մեկը կամ նրա դասակարգը, չի կարելի սիրել նրան…

Իսկ Ցողի՞կը… Եթե չլինեին նրա մանկական գեղեցիկ հուշերը՝ կապված Վարդանի հետ, եթե նա և տղան, իրոք որ, երեկ հանդիպած լինեին առաջին անգամ, կսիրե՞ր արդյոք աղջիկը նրան առաջին

հայացքից... Ոչ... Ոչ, ոչ... Ճիշտ է, Վարդանը հետաքրքիր տղա է, բայց ոչ Ցողիկի ճաշակի: Ուրեմն, դուրս է գալիս, որ Ցողիկի մոտ ևս, ինչ որ մի պահ սեր թվաց, լոկ մանկության հուշեր էին և ուրիշ ոչինչ…

Իհարկե, եթե Ցողիկը, տարիների ընդմիջումից հետո, երեկ, տեսներ Վարդանին իր ճաշակի երիտասարդի կերպարանք առած, նա իրոք որ կսիրահարվեր նրան և ոչ ոքի չէր զիջի «իր» Վարդանին, չէր զիջի՝ մանկության ընկերուհու գերազանց իրավունքով: Գործադրելով աղջկական իր բոլոր հնարքները, նա կսիրահարեցներ տղային իր վրա, խելքից կհաներ նրան…

Բայց այդպիսի բան տեղի չունեցավ, որովհետև Ցողիկը չհավանեց տղային ինչպես հարկն էր և, մյուս կողմից, պարզվեց անսպասելի կերպով, որ նրանց համատեղ մանկությունը բոլորովին էլ չի եղել իդիլիական, և Ցողիկը չունի տղայի վրա «մանկության ընկերուհու գերազանց իրավունք»…

Ցողիկը հասկացավ, որ արթնանալուց հետո իրեն պաշարած տխրության և տհաճության զգացումը գալիս է ահա հենց այն բանից, որ Վարդանն իր մաղձոտ խոսքերով ցրեց նրանց մանկության երևութական իդիլիան: Այժմ Ցողիկն ափսոսում էր իր մանկությունը, ցավով էր տեսնում դրա երազային քնքշության աստառը: Ու թեև նա գիտակցում էր, որ Վարդանն իրավացի է, որ Վարդանն ինքը ոչինչ չի աղճատել, այլ աղճատված է եղել հենց ինքը՝ այդ համատեղ մանկությունը, բայց և այնպես նա մի խուլ դժգոհություն էր զգում տղայի հանդեպ: Ինչպե՞ս կարելի է լինել այդքան չոր ու դաժան, այդքան կոմերիտական, որ նույնիսկ անմեղ մանկությունը դրվի սոցիալական հերձասեղանի վրա, մասնատվի ու անալիզի ենթարկվի և հանվի այնտեղից «դասակարգային» եզրակացություն…

Իսկ չկչկոցները լուսամուտի ետևում շարունակվում էին անընդհատ: Դրանք խանգարում էին մտածել: Ցողիկը գիտեր, թե ինչ հնչյուններ են դրանք: Քարտաշները քար են տաշում մրճիկներով: Նրա քեռու տան բակում կառուցվում է բազմահարկ մի շենք: Երբ այն պատրաստ լինի, քեռու տունը կքանդեն և փողոցը կլայնանա: Իսկ առայժմ շենքի բարձրացող հարկերը, միհարկանի այդ տան պատին համարյա ընդհուպ, մթագնել են դեպի բակ նայող սենյակները, որտեղ միշտ կիսախավար է:

Հարկավոր է վեր կենալ: Դե, ի՞նչ արած, հո Ցողիկն ինքը չի՞ ընտրել կամավորաբար իր մանկությունը… Եթե նրա մանկության ընկերը, աղքատ ծնողների զավակ Վարդանի փոխարեն, լիներ ծանոթ ճոթավաճառի աղջիկը կամ տղաներից մեկը, հո այդ մանկությունը չէ՞ր լինի աղճատված: Կամ թե չէ, եթե Ցողիկի ծնողները, Վարդանի ծնողների նման, լինեին չքավորներ… Այ, ապրում են չորս կոմերիտականներ միասին, մի սենյակում և, ինչպես երևում է, ապրում են համերաշխ: Ի՞նչն է պատճառը: Այն, որ նրանք բոլորն էլ չքավոր մարդկանց զավակներ են: Ճիշտ է, այն երկարահասակը զզվելին է, բայց нет семьи без урода:

Համերաշխության սոցիալական լինելը վաղուց էր զգացել Ցողիկն իր անձնական կյանքում: Ռոստովում, իր աշակերտական տարիներին, նա միշտ մտերմանում էր հարուստների աղջիկների հետ՝ «տնտեսավարների», բարձր պաշտոնյաների, նէպմանների, սպեկուլյանտների... Դա կատարվում էր ինքնաբերաբար: Ցողիկը ոչ միայն չէր արհամարհում աղքատների զավակներին, ոչ միայն չէր խորշում նրանցից, այլև, ընդհակառակը, համարյա միշտ հավանում էր ավելի, քան հարուստների շփացած երեխաներին: Բայց չքավորների հետ նա չէր գտնում խոսակցելու կամ գործելու ընդհանուր նյութ, և ընկերություն չէր ստացվում իր ու նրանց միջև: Եվ իրոք, հո չէ՞ր կարելի մտքեր փոխանակել «կրուժևայի» նոր «ուզորների» մասին մի աղջկա հետ, որը կարկատանված թևքերով էր հաճախում դպրոց... Կամ կարելի՞ էր արդյոք աշակերտական «պիկնիկ» կազմակերպելու առաջարկ անել մի աղջկա, որն առանց նախաճաշելու էր գալիս դասի…

Խուսափում էին Ցողիկից և հարուստների մյուս աղջիկներից նաև իրենք՝ աղքատները: Բայց ինչպիսի՛ սրտաշարժ համերաշխության մեջ էին նրանք իրար հետ... Հարուստ ընկերուհիներից աննկատելի, նրանք իրենց չոր հացի կտորները կիսում էին իրար հետ, սովորում էին մի քանի հոգով մի դասագրքից…

Երանի Ցողիկը ծնված չլիներ «լուսատու» վեներոլոգի ընտանիքում, երանի ոչ մի «ընդհանուր նյութ» չունենար հարուստ աղջիկների հետ և երանի չքավորներն ընդունեին նրան իրենց սրտաշարժ ընկերախմբի մեջ՝ առանց խորթության զգացման…

Բայց մի՞թե Ցողիկն ինքն է ընտրել իր ծնողներին, իր սոցիալական ծագումը…

Հարկավոր է վեր կենալ: Ի՞նչ օգուտ առաստաղին նայելուց և մտածելուց: Եթե նա ինքը չի ընտրել իր սոցիալական ծագումը, ապա հո կարո՞ղ է ընտրել իր սոցիալական վիճակը... Վերջ անցյալին՝ մանկությանը, Ռոստովին: Պետք է մնալ Երևանում և սկսել նոր կյանք…

Ցողիկը վեր կացավ և ուզում էր հագնվել, երբ իր դիմաց նկատեց մի չքնաղ աղջկա՝ ինքնիրեն... Նա կանգ առավ և սկսեց նայել: Ոչ, դա մեծամիտ ինքնասիրահարություն չէր. այլ հիացում իրենով՝ ինչպես ուրիշով: Նա հայելու մեջ իր կերպարանքին նայում էր անկեղծ նախանձով և ապա, հիշելով, որ դա ինքն է, շառագունում էր երջանկության զգացումից: Ապա դարձյալ մոռանում էր այդ և շարունակում հետաքրքրությամբ զննել «այն աղջկան»:

Բայց այնքան թախծոտ էր այդ ինքնահիացումը… Ինչպիսի՜ կոնտրաստ այդ գեղեցիկ աղջկա և նրան շրջապատող իրերի միջև... Սկսած հայելու շրջանակից, որը ներկայացնում էր գալարված և իր պոչն իր բերանով բռնած օձի, ամեն ինչ անճաշակ էր, քաղքենիական, գռեհիկ, բայց հավակնոտ: Մահճակալ՝ չորս հսկայական «խնձորներով» և հազար ու մի տեսակ ոլորված նիկելե ֆիգուրներով, պատի վրա գորգ՝ ամբողջովին ծածկված ինչպես հազվագյուտ, այնպես էլ գրոշանոց ափսեներով, քեռականջ պսակադրության ժամանակ նրա հարսանեկան հագուստը զարդարած մոմե ծաղկեփնջով, թրի մի դատարկ պատյանով, որի մասին դեռ երեկ, ճաշի ժամանակ, պատմեց քեռին՝ հավատացնելով, որ դա «Շամիլիայի» թրի պատյանն է, իսկ թուրն ինքը գտնվում է «Անգլիայի ամենացենտրալնի մուզեյում...»:

Ցողիկին թվում էր, թե ինքը մի գեղեցիկ ամբողջության բեկոր է, որ եկել-ընկել է այդ անարժան միջավայրը: Նա ափսոսում էր ինքնիրեն: Բայց վերադառնալ դեպի իր նախկին, «արիստոկրատական» կյանքը նա այլևս չէր կարող և չէր էլ ուզում: Չէր կարող, որովհետև այդ կյանքն այլևս գոյություն չուներ, և չէր ուզում, որովհետև մեծ սարսափով զզվանքով հասկացել էր արդեն, որ իրոք, դա խարսխված է եղել ուրիշների սիֆիլիսի վրա՝ թե ուղղակի իմաստով և թե փոխաբերական:

Իսկ եթե այդպես էր, եթե նրա համար հակակրելի էր և՛ «արիստոկրատական» անցյալը, և՛ քաղքենիական ներկան, ապա էլ ուրեմն ի՞նչ էր մնում նրան... Ըստ երևույթին, մնում էր ապագան, մնում էին դեպի այն ձգտող և այն կառուցող բոլշևիկները, կոմերիտականները, բանվորներն ու գյուղացիները: Եվ հենց նրանց հետ էր, որ համարյա ոչ մի ծանոթություն չուներ Ցողիկը... Դպրոցում նա ոչ միայն հեռու էր եղել աշխատավոր ծնողների զավակներից, այլև մի կերպ «գլուխ պահելով» անցել էր դասավանդվող քաղգրագիտության, դասակարգային պայքարի պատմության, հասարակագիտության, քաղտնտեսության, դիալեկտիկայի մոտով՝ առանց յուրացնելու դրանք, առանց որևէ ցանկություն ունենալու այդ բանին…

Ինչպես երևում է, պետք է նորից սկսել ոչ միայն կյանքը, այլև կրթությունը…

Բակում հնչեց շինարար բանվորների աշխատանքի ընդմիջման զանգը, որից հետո, վերջապես, մրճիկների հարվածները դադարեցին: Ցողիկը հագնվեց տնավարի, դուրս ելավ նախասենյակ՝ լվացվելու: Բայց պղնձե դեղին լվացարանում ջուր չկար: Չկար նաև դույլի մեջ: Իսկ քեռու կինը տանը չէր:

Ցողիկը վերցրեց դույլը և դուրս ելավ բակ՝ շինարարական հրապարակի ծորակից ջուր վերցնելու համար: Ինչպիսի՜ կոնտրաստ սենյակի կիսախավարի և դրսի պայծառ լույսի միջև... Այնտեղ, որտեղ ընդհատվում էր կառուցվող շենքը, բակում վառ արև էր: Արևի տակ, արձակ տարածության մեջտեղում, գետնից դուրս էր ցցվել մեկուկես մետր բարձրության մի բարակ խողովակ, որը վերջանում էր դեղին, փայլուն ծորակով: Այժմ այն բաց էր: Ջրի շիթի տակ կռացած

մի երիտասարդ բանվոր, գոտկից հետ մերկ, լվացվում էր՝ լվանալով ոչ միայն իր երեսն ու թևերը, այլև կուրծքը, մեջքը:

Դույլը ձեռքին, Ցողիկը մեխվեց-մնաց իր տեղում: Ծորակի տակ, ջրի սառնության հաճույքից խայտալով, իր պիրկ մկաններն էր խաղացնում երիտասարդ տղամարդու մի ատլետիկ մարմին՝ արևից մուգ-շագանակագույն դառած: Շուրջը ոչ ոք չկար, բոլոր բանվորներն արդեն նստել էին նախաճաշի, և աղջիկն առանց վախենալու, որ կարող են նկատել իրեն, նայում էր հիացմունքով, անթարթ: Իսկ երբ երիտասարդն ինքը վեր բարձրացնի գլուխը և նայի, նա այնպես պիտի կարծի, թե աղջիկն սպասում է ծորակի ազատվելուն...

Ցողիկի ընկերուհիները, այդ թվում նաև այն մեկը, որն այժմ սովորում էր Երևանի համալսարանում, հաճախ էին մեղադրում իրենց ընկերուհուն այն բանի համար, որ նրա մեջ ավելի ուժեղ էր ֆիզիկական սերը դեպի տղամարդիկ, քան թե «քիմիական»՝ ինչպես նրանք կատակով անվանում էին հոգեկան սերը:

Բայց դա անհիմն և անարդար մեղադրանք էր: Ցողիկն իր կյանքում դեռ չէր էլ զգացել երբևէ, թե ինչ բան է ֆիզիկական սերը: Տղամարդու մարմնական գեղեցկությունը նրան պատճառում էր զուտ էսթետիկական բավականություն, որը հասնում էր պաշտամունքի: Իհարկե, նա երազում էր ունենալ այդպիսի կազմվածքի տեր ամուսին, բայց ոչ թե նրա համար, որ ավելի հաճելի է, երբ քեզ գրկում են մկանոտ և հուժկու թևերով, քան թե բարալիկ «ճռներով», այլ նրա համար, որ ամեն օր տեսնի իր առջև բնության այդ հրաշալիքը՝ տղամարդու գեղեցիկ մարմինը:

Որքա՜ն հաճախ էր նա վիրավորվել իր ընկերուհիներից և վրդովված մեկնաբանել էր նրանց իր «տեսակետը»: Ամբողջ համաշխարհային քաղաքակրթությունն ու արվեստը՝ դա տղամարդու քաղաքակրթություն է և արվեստ, ստեղծված տղամարդու ձեռքով և տղամարդու համար: Աշխարհի բոլոր թանգարանները լի են գեղեցիկ կանանց արձաններով, բոլոր ժողովուրդների գրականությունները փառաբանում են կնոջ հրապույրներն ու հմայքը: Իսկ տղամարդունը՝ անհամեմատ քիչ: Բավական է… Եթե իսկապես, հիմա կինը հավասար է տղամարդուն, ապա ուրեմն մենք կանայքս էլ պիտի պաշտամունքի առարկա դարձնենք մեր «կուռքը»՝ տղամարդուն…

Իսկ երիտասարդը դեռ լվացվում էր և լվացվում: Իհարկե, կեղտից չէ, որ մաքրում էր նա իրեն, այլ երեխայի պես խաղում էր ջրի հետ: Նա կարծես մոռացել էր, որ ընդմիջման ժամ էր, րոպեներն անցնում էին և հարկավոր էր շտապել նախաճաշելու:

Բայց ահա վերջապես նա ուղղվեց, վար քաշեց ծառի ճյուղից կախված իր սրբիչը և սկսեց չորացնել մարմինը: Եվ հանկարծ, կարծես զգալով, որ նայում են իրեն, նա կտրուկ շուռ եկավ:

— Մուրադ…— բացականչեց Ցողիկը:

Կոմերիտականը կաս-կարմիր կտրվեց ամաչելուց և սրբիչը նետելով ուսերին, ծայրերով ծածկեց իր հուժկու կուրծքը:

Ցողիկը մոտեցավ նրան, վար դրեց դույլը, երկու ձեռքով բռնեց սրբիչի երկու ծայրերից, ետ արեց դրանք և սրբիչը դրեց մի կողմ:

— Գիտե՞ք ինչ, Մուրադ… Ամաչում և ծածկում են այլանդակ մարմինը: Իսկ դուք կարող եք մրցել Միքել-Անջելոյի Դավթի հետ…

Ապա, ինքն էլ ամաչելով իր ասածից, խոսքը փոխեց.

— Ահա թե որտեղ եք աշխատում դուք…

— Իսկ դու… դուք ի՞նչ գործ ունեք էստեղ, ընկեր Ցողիկ…

— Ես այստեղ եմ իջևանել: Սա իմ քեռու տունն է:

— Սա՞... Չնեղանաք, Ցողիկ, անպետք մարդ է ձեր քեռին:

— Ես ենթադրում եմ:

— Մեր բանվորներից ոչ մեկը չի սիրում ընդրան...նրան: Հենց մի գլուխ գոռգոռում է մեզ վրա.— «հայաթս կեղտոտեցիք, հայաթս թրջեցիք»... Իսկ հայաթի օրերը հաշված են: Չէ, չէ, անպետք մարդ է: Ընդրա… նրա կնիկն էլ իր հետը:

— Չնայած դրան, այսօր դուք, Վարդանը և Գառնիկը հրավիրված եք մեզ մոտ ճաշի: Սպասեցեք, Մուրադ, ձեր ուսը դեռ թաց է...

Վերցնելով սրբիչը, Ցողիկն սկսեց չորացնել այն:

— Ես ինքս կանեմ, ես ինքս,— շփոթված մերժեց տղան:

— Իսկ եթե ես ինքս եմ ուզում անե՞լ,— ասաց աղջիկը հանգիստ:— Դուք քարի պես մկաններ ունեք, Մուրադ…

— Ես չեմ գա:

— Ո՞ւր չեք գա:

— Ճաշի: Առավոտը, ճիշտ է, ես Վարդանին խոսք տվեցի, որ կգամ, բայց էն ժամանակ չէի իմանում, թե ով է քեռիդ: Ես մի անգամ թունդ կռվել եմ ընդրա... նրա հետ:

— Ուրեմն կհաշտվեք: Էլ ոչ մի խոսք, Մուրադ, եթե չեք ուզում, որ ես ընդմիշտ խռովեմ ձեզ հետ…

Մուրադը ձայն չհանեց:

— Ուրեմն,— ասաց Ցողիկը,— որոշված է: Իսկ հիմա գնացեք նախաճաշելու:

Աղջիկն ամբողջ ժամանակ անթարթ նայում էր տղային, նրա մկաններին: Արտասանելով վերջին խոսքերը, նա դարձյալ չկտրեց իր հայացքը հուժկու մարմնից:

— Գնացեք, Մուրադ:

— Ես ախորժակ չունեմ…

— Գնացեք, խնդրում եմ,— աղերսեց գեղեցիկ աղջիկը՝ իր մեջ զգալով հանկարծակի և անզուսպ մի ցանկություն՝ փարվելու այդ ատլետին, դնելու իր գլուխը նրա լանջի վրա:

— Քեռուդ կինը…— բացականչեց երիտասարդը կամացուկ և ծլկվեց:

Ցողիկը նայեց ետ: Իր տան դռան առջև, քարե փոքրիկ հարթակի վրա, կանգնել էր գիրությունից իր մարմնաձևերը կորցրած, վիթխարի ձվի կերպարանք ստացած մի կին՝ քառասունն անց: Ցողիկը դույլն արագ մոտեցնելով ծորակին, լցրեց, վերադարձավ, սիրալիր ժպտաց քեռու կնոջը և ուզում էր ասել՝ «նա իմ ընկերոջ ընկերն է», բայց վերջին վայրկյանին փոխեց խոսքը:

— Հարցնում էի շենքի մասին,— ասաց նա անտարբեր:— Երևակայեցեք, քեռակին, չորս հարկ է ունենալու:

— Էդ առանց հարցուփորձի էլ հրեն երևում ա,— ասաց չռված աչքերով կինը, որի այտերի կարմիր, հսկայական խնձորները խոսելու ընթացքում սկսեցին շարժվել վեր վար՝ կիսով չափ պատնեշելով աչքերն իրենց ուռուցիկություններով:— Չեն էլ ամաչում, չփլաղ կաղնում են մարդու տալու աղջկա կշտին, լեզու են թրջում:

Իսկ նրա հայացքը, խոսքերին հակառակ, ասում էր.— «Հլա էրեկ ես էկել, արդեն շանց ես տալիս քու ով ըլնելը: Քշերը, ո՞վ իմանա, ուր էիր, հմի էլ էդ ջահել բուղին ես կալմեջ արել...»:

Վերադառնալով խմբագրատուն, Վարդանը մի քիչ ժամանակ զբաղվեց զանազան թղթերով, ապա մեքենագրել տված իր պատմվածքը տարավ Հրայրի մոտ, անփույթ նետեց նրա գրասեղանին և ասաց.

— Ոմն Արամայիս Գևորգյան ինչ-որ պատմվածք է գրել: Կարդա, տես, եթե կարիք կա՝ ոճաբանեմ…

Եվ անտարբեր քայլերով վերադարձավ դեպի իր սեղանը:

Խմբագիրն անմիջապես վերցրեց փոքրիկ պատմվածքը, կարդաց, շուռումուռ տվեց, նորից կարդաց և ասաց.

— Ոճաբանելու կարիք չկա, Վարդան…

Լենինականցու աչքերի առջև երևացին սև ու սպիտակ բծեր: Վերջ… Նա այլևս այդպիսի «ղալաթ» չի անի…

Խմբագիրը շարունակեց.

— Որովհետև արդեն ոճաբանված է:

— Ինչպե՞ս թե ոճաբանված է,— տեղից վեր ցատկեց Վարդանը:

— Ուզում եմ ասել՝ լավ լեզվով է գրված: Կարելի է նույնությամբ ուղարկել տպարան: Կզետեղենք կիրակի օրվա համարում…

Եվ մակագրեց. տպել…

Վարդանի աչքերի առջև նորից երևացին սև ու սպիտակ բծեր, բայց այս անգամ սպիտակն ավելի շատ էր: Նա մեծ ճիգով զսպեց իր ուրախությունը և շատ ավելի մեծ ճիգով՝ «բացբերանությունը»: Նա նույնիսկ հորանջեց անտարբերությունից:

— Վարդան,— ասաց խմբագիրը,— դու գնացիր կոմետե և երևի նույնպես չես նախաճաշել:

— Մի՞թե դու նույնպես:

— Այո: Ընդմիջումի ժամանակ խմբագրականն էի ավարտում: Գնանք միասին նախաճաշելու:

Դուրս գալով Աբովյան, Վարդանն ուզում էր մտնել իրենց սովորական կաֆեն, բայց Հրայրը բռնեց նրա թևից, շուռ տվեց նրան դեպի մի փոքրիկ ճաշարան: Իսկ երբ մատուցողը մոտեցավ նրանց, առաջին բանը որ պատվիրեց խմբագիրը, գինի էր:

— Երկու թեյի բաժակ,— ասաց նա:

Վարդանն ապշած նայեց նրան:

Հրայրը, օղակ-օղակ գանգուր մազերով, նիհար ու սուր դեմքով, մի պահ նայեց ճաշացուցակին, ապա հրեց դա ոճաբանի կողմը:

— Մնացածը դու ընտրիր:

Երբ սեղանի վրա հայտնվեց նաև ուտելիքը, Հրայրը վերցրեց իր բաժակը, խփեց Վարդանի բաժակին և ասաց.

— Դե, սիրելի Արամայիս, կենացդ: Շնորհավորում եմ քո մուտքը գրականություն…

Վարդանը սառեց-մնաց իր տեղում: Նա մի պահ ուզեց ժխտել, բողոքել, բայց խմբագիրն այնպես անթարթ ու շեշտակի էր նայում նրան, որ անհնար էր նրա հայացքի տակ սուտ ասել:

Վարդանը, անզորությունից հառաչելով, վերցրեց բաժակը:

— Շնորհակալություն, սիրելի Հրայր, ես…

Երկու կոմերիտականների հայացքները հանդիպեցին իրար և նույն վայրկյանին մի անզուսպ քրքիջ պաշարեց նրանց:

— Սրա՜ն նայիր,— հազիվ արտասանեց Հրայրը ծիծաղի միջից,— խաբել է ուզում խմբագրին: Մենք խոտ չենք ուտում, ընկեր…

Ապա, նորից լրջանալով միանգամից, կրկնեց.

— Կենացդ:

— Ինչպե՞ս է գրված, Հրայր, ոչի՞նչ:

— Ճիշտն ասած, մի առանձին բան չէ, բայց առաջին անգամվա համար լավ է: Մանավանդ՝ եթե նկատի ունենանք, որ հանճարեղ մարդու նման կես ժամում ես դա գրել: Մյուս անգամ այդպիսի բան չանես:

— Իսկ դու ի՞նչ գիտես, թե կես ժամում:

— Գլխավորն էն է, որ գիտեմ: Մնացածը հարցի կազմակերպչական կողմն է: Դե խմիր, խմիր, Արամայիս: Ինչպես էր ազգանունդ, մոռացա:

— Գևորգյան:

Հրայրը գլուխն օրորեց.

— Լրիվ դիմակավորում: Ոտից-գլուխ:

— Աշխատակիցներին առայժմ ոչինչ չասես,— խնդրեց Վարդանը:— Ուզում եմ տեսնել, թե ինչ կարծիք են հայտնելու օբյեկտիվ կերպով:

— Երանի թե հնարավոր լիներ չասել,— քմծիծաղեց խմբագիրը:— Նրանք ինձանից առաջ գիտեն էս բոլորը:

— Ախր ինչպե՞ս,— ծայր աստիճան զարմացավ լենինականցին:

— Էհ, Վարդան, Վարդան… Էսքան ժամանակ է, որ աշխատում ես մեզ հետ, ու դեռ չգիտես, թե ինչ սատանա է նստած մեր գրամեքենայի ետևում…

— Էլի նա…

— Բա էլ ո՞վ:

Կես ժամ հետո կոմերիտականները բարձր տրամադրությամբ վերադարձան խմբագրություն: Բայց Վարդանին վիճակված չէր երկար ժամանակ մնալ պատմվածքի պատճառած ուրախ տրամադրության մեջ: Խմբագրատան հենց շեմքի վրա նրա առաջը կտրեց Ռոկլանան՝ ծխախոտը բերանին.

— Բարև ձեզ, տղաներ: Կարելի՞ է քեզ մի քանի րոպեով, Վարդան…

— Ես աշխատանքի եմ գնում…— կմկմաց լենինականցին:

— Ոչինչ, ոչինչ,— թույլ տվեց խմբագիրը,— գնա, Վարդան…

Եվ մտավ ներս:

Անպաշտպան Վարդանը մնաց կաշվե պիջակավորի տրամադրության տակ:

Աղջիկը ձեռքերը կոխեց իր պիջակի ուղղահայաց գրպանների մեջ, իրար վրա քաշեց պիջակի եզրերը և հանդիմանանքով նայեց լենինականցուն:

— Վայե՛լ բան է դա, Վարդան…

— Ի՞նչը,— գրգռված հարցրեց տղան:

— Այն, որ կոմերիտականը խուսափում է իր նման կոմերիտականից:

— Ես չեմ խուսափում, այլ միշտ զբաղված եմ:

— Նույնիսկ ժողկոմն էդպիսի բան չէր ասի: Ազատ ժամանակ բոլորն էլ ունեն: Հիմի հո ազա՞տ ես:

— Էդպես է երևում:

— Դե գնանք:

— Ո՞ւր ես տանում ինձ:

— Մի վախենա, չեմ ուտի քեզ: Գնանք հենց թեկուզ այգի, նստենք: Ես քեզ ասելու բան ունեմ:

Վարդանը, ինչպես դեպի կախաղան գնացող հանցապարտ, հետևեց աղջկան:

Պատահական զուգադիպությամբ Ռոկլանան այգում ընտրեց այն նստարանը, որի վրա գիշերը նստել էին Վարդանն ու Ցողիկը:

Նստելով և իսկույն ոտը ոտի վրա նետելով, աղջիկն իր կաշվե պիջակի հորիզոնական գրպաններից մեկից հանեց ծխախոտի տուփը, մյուսից՝ լուցկին:

— Ծխիր դու էլ, Վարդան:

— Ինչպես գիտես, ես ծխող չեմ:

— Քու գործն է:

Աղջիկն սկսեց լուռ ծխել՝ առանց այլևս ուշադրություն դարձնելու տղայի վրա: Կիսափակ աչքերով նա նայում էր դեպի հեռուն և, ըստ երևույթին, մտածում: Այդպես անցավ մի քանի րոպե, ապա նա հանկարծակի շրջվեց դեպի տղան:

— Վարդան… Կատարիր մտքով մի պատմական էքսկուրս դեպի անցյալը: Ի՞նչ ենք տեսնում մենք այնտեղ... Մենք այնտեղ տեսնում ենք, որ միշտ տղամարդն է իր սերը հայտնել կնոջը, իսկ կինը պասսիվորեն սպասել է այդ րոպեին… Բայց այդ անցյալը վաղուց է ընկել անցյալի գիրկը: Մենք նոր մարդիկ ենք, Վարդան: Մենք հավասար ընկերներ ենք, Վարդան: Կինը մեր հասարակարգում, շնորհիվ մարտի ութի…

Վարդանի դեմքի վրա երևաց տանջանքի մի անսքող արտահայտություն: Ցողիկ և Ռոկլանա... Ցողիկ և Ռոկլանա... Ինչ լեզվով էր խոսում մեկը և ինչ լեզվով է խոսում մյուսը... Ինչպիսի նուրբ մտքեր էր արտահայտում և այն էլ ինչպիսի ճկուն ձևով՝ մեկը, և որքան պրիմիտիվ ու կոպիտ է անում այդ բոլորը՝ մյուսը… Եվ ինչ հմայիչ էր մեկը, իսկ ինչ անտանելին է մյուսը՝ ոտքը ոտքին

գցած, ծխախոտը մատների արանքում, որը, զեկուցում կարդացող թթու տղամարդու արտահայտությունը դեմքի վրա, պատրաստվում է սեր բացատրել նրան…

Կացնի հարվածի պես հասավ հանկարծ Վարդանի ականջին.

— Ես քեզ սիրում եմ, Վարդան... Ինձ վրա վերցնելով նախաձեռնությունը, որպես ակտիվ կոմերիտական, ես ինքս եմ ասում քեզ այդ մասին: Կշռիր, գնահատիր և տուր ինձ քո ռեզյումեն…

— Իսկ ես քեզ չեմ սիրում, Ռոկլանա:

— Հնարավոր է,— առանց զարմանալու կամ վշտանալու, տղամարդավարի շարժելով գլուխը, հաստատեց աղջիկը:—Եվ հնարավոր է, որ ես էլ քեզ չեմ սիրում: Սերը՝ դա մեշչանական խոսք է և արտահայտում է նախահեղափոխական մի անողնաշար զգացմունք: Ես սխալ ձևակերպեցի իմ միտքը: Ես ոչ թե քեզ սիրում եմ, այլ ուզում եմ քեզ հետ միասին անցնել ճանապարհը դեպի համաշխարհային հեղափոխություն:

— Ես այդ էլ չեմ ուզում,— կտրուկ մերժեց տղան:

Ապշությունից նույնիսկ ծխախոտն ընկավ աղջկա մատների արանքից:

— Ինչպե՞ս…— արտասանեց նա:— Մի՞թե դու այն կողմ չես գնում:

— Ճիշտ այն կողմ՝ դեպի կոմունիզմ:

— Ես նույնպես: Էլ ուրեմն ինչո՞ւմն է բանը,— տարակուսեց աղջիկը:— Եթե մենք միշտ միասին ենք կոմերիտական գծով, դասակարգային գծով, հազար գծերով, ուրեմն կարող ենք նաև…

— Ոչ,— մերժեց Վարդանը,— ես քեզ հետ չեմ կարող լինել հազար ու մեկերորդ գծով:

Աղջիկը վրդովված ցատկեց ոտքի:

— Ինչպե՞ս թե… Դու… մերժում ես… քո... զինակից... ընկերուհու... սե՞րը...

Այնուամենայնիվ մի բաժակ գինին ազդել էր Վարդանի վրա: Բայց այդ ազդեցությունը բարերար էր: Նա դարձել էր ավելի համարձակ ու կտրուկ, քան սովորաբար լինում էր աղջիկների հետ խոսելիս:

— Ծիծաղելի է,— ասաց նա ինքնիրեն,— մի կոմերիտականի վտարում են միությունից՝ սիրահարված լինելու համար, իսկ մյուսին մեղադրում են չսիրելու համար…

Նայելով աղջկան, Վարդանը նույնիսկ ցնցվեց նրան սիրելու լոկ մտքից և զգալով իր հոգու խորքում բուռն խորշանք դեպի նա, վճռեց մինչև վերջ արտահայտել իր զգացմունքը: Եվ ասաց դաժան հանգստությամբ.

— Նստիր, Ռոկլանա… Նստիր, նստիր.... Եվ լսիր…

Ձայրույթը մի պահ թույլ չտվեց նրան՝ գտնելու իր ասելիքը: Նա ուզում էր ամեն ինչ միանգամից հորդել դուրս, իսկ միանգամից դա անհնար էր:

— Ինչպե՞ս կարելի է սիրել քեզ, Ռոկլանա,— ասաց վերջապես,— դու ոչ տղա ես, ոչ աղջիկ...

— Ես կոմերիտական եմ,— ցասումով բացականչեց Ռոկլանան:— Ի՞նչ կարևոր է իմ սեռը:

Վարդանի փորի մեջ և կրծքի տակ ցնցվեց մի այնպիսի խելագար քրքիջ, որ նա ապշեց, թե ինչպես իր մեջ ուժ գտավ զսպելու դա: «Ինչ լավ է, որ Մուրադը չի լսում,— մտածեց նա,— թե չէ ես հաստատապես կզրկվեի իմ ընկերոջից»…

Ներքին ծիծաղը միանգամից բարեհոգի դարձրեց Վարդանին և նա աղջկան պատասխանեց արդեն առանց զայրույթի:

— Ախր, այ Ռոկլանա, որպես տղա դու շատ նման ես աղջկա, իսկ որպես աղջիկ՝ տղայի: Բայց դու ոչ աղջիկ ես, ոչ տղա, այլ... հիբրիդ: Մի՞թե հեղափոխությանը պետք են անսեռ կոմերիտականներ: Լավ, լավ, մի վիճիր, գիտեմ ինչ պիտի ասես: Դեպի համաշխարհային հեղափոխություն պիտի գնալ տղա-աղջիկ հավասար շարքերով ոտք-ոտքի: Այո՛, բայց անձնական, այսպես ասած, ընտանեկան փոխհարաբերությունների մեջ հո հարկավո՞ր է, որ մեկը լինի տղամարդ, իսկ մյուսը կին…

— Թերևս,— կիսատ համաձայնվեց աղջիկը՝ զգալիորեն տատանվելով, ապա, կկոցած աչքերով մի փոքր մտածելուց հետո, կրկնեց ավելի վճռական,— այո:

— Տեսնո՞ւմ ես: Ուրեմն հարկավոր է հավատարիմ մնալ իր սեռին: Մի՞թե քեզ դուր կգա, եթե ես շրջազգեստ հագնեմ և կանացի զանազան նազանքներ բանեցնեմ...

— Տղամարդը պիտի լինի տղամարդ,— կտրուկ ասաց Ռոկլանան:

— Իսկ կի՞նը:

— Նա էլ:

— Էլի եկանք, նույն տեղը կանգ առանք,— հուսահատ բացականչեց Վարդանը:— Քեզ դո՞ւր է գալիս, որ տղամարդը տղամարդու նման է: Իսկ մեզ էլ, երևակայիր, դուր է գալիս կանանց կանացիությունը, քնքշությունը, նրա…

— Կարող ես չշարունակել,— ընդհատեց Ռոկլանան:—Տեսնում եմ, որ Կիմը քո միայն կրծքի վրա է և ոչ թե տակը: Դու ունես մեշչանական ճաշակ և քեզ մեշչանկա է հարկավոր:

— Այո, այո:

— Ի՞նչ... Դու խոստովանո՞ւմ ես:

— Գիտե՞ս ինչ, Ռոկլանա... Դու երեկ երեկոյան չկայի՞ր երիտ-ակումբում: Ո՞չ: Իսկ չես է՞լ լսել այնտեղ կատարվածի մասին: Ելույթ ունեցավ մի մարդ՝ Սանթուրյան ազգանունով,— միտդ պահիր,— ապացուցեց, որ մենք իզուր ենք ամեն մի կանացիություն համարում քաղքենիություն: Այնպես որ, Ռոկլանա, լսիր իմ խորհուրդը, եղիր իսկական աղջիկ: Գուցե դրանից հետո էլ ես քեզ չսիրեմ, բայց ի՞նչ կարևոր է դա: Կսիրի ուրիշ մեկը: Բայց այսպես…

— Ազատ եք:

— Ի՞նչ:

— Ասում եմ՝ ազատ եք, ընկեր, կարող եք գնալ: Հանգիստ թողեք ինձ…

Վառելով մի նոր ծխախոտ, աղջիկը շարունակեց նստած մնալ և ծխել:

— Եվ չնեղանաք ինձանից,— նետեց նա հեռացող տղայի ետևից,— եթե հենց այսօր ես ձեր ընկերներին իրազեկ դարձնեմ ձեր քաղքենիությանը և կոմերիտուհու սիրո մերժմանը…

Վարդանը միայն ձեռքը թափ տվեց և հեռացավ:

Նրա գնալուց հետո աղջկա ամբողջ «տղամարդավարիությունը» միանգամից փուլ եկավ: Նա մի կողմ շպրտեց դեռ նոր սկսած ծխախոտը, հազիվ զսպեց իր արցունքները և, շրթունքները կծոտելով, սկսեց մտածել: Նրա աչքի առաջ կանգնեց նրա անցյալի ամենավճռական պահը…

Դաշնակների ժամանակ մի անձրևոտ օր, երեկոյան կողմ, հազիվ տասներեք տարեկան Ռոկլանան, որն այն ժամանակ դեռ Ռոկլանա չէր, իր հոր և մոր հետ անցնում էր Երևանի ծայրամասային մի փողոցով: Հենց քիչ առաջ տանտերը վտարել էր նրանց իրենց տնից և նրանք գնում էին որոնելու մի ուրիշ ապաստարան՝ իրենց ողորմելի ունեցվածքը շալակած:

Հանկարծ, որտեղից որտեղ, դիմացից երևաց Երևանի հայտնի մաուզերիստներից մեկը: Նա ոչ հարբած էր, ոչ զայրացած, ոչ ուրախ էր, ոչ տխուր: Մոտեցավ հանգիստ և հավասարվելով թշվառ ընտանիքին, հանեց մաուզերը և տեղնուտեղը սպանեց տղամարդուն: Հենց այնպես: Առանց որևէ պատճառի:

— Վա՛յ.— ճչաց երիտասարդ կինը՝ ծունկի չոքելով գետնի վրա, որտեղ, իր շալակած քուրջերի հետ պառկել և թավալվում էր նրա ամուսինը:

Նույն այդ վայրկյանին, հոր սպանության պատկերից այլայլված, Ռոկլանան սկսեց արձակել շան կաղկանձի նմանվող այնպիսի ձայներ, որ մոր արյունը սառեց երակներում: Թողնելով ամուսնուն, նա նետվեց դեպի աղջիկը:

— Վնաս չունի, բալա ջան, խմբապետը հանաք արեց, հանաք արեց, հերդ հիմի վեր կկենա, վեր կկենա... Քեզ հետ եմ... Քեզ հետ եմ... Շուռ արի, մի նայիր էն կողմ…

Կրակոցի վրա տներից դուրս թափվեցին մարդիկ, խլեցին կիսախելագար երեխային մոր գրկից, տարան մի տուն, ջուր տվեցին, հանգստացրին և իսկույն, կաթի հետ խաշխաշ խառնելով, տվեցին խմելու, որպեսզի նա իսկույն քնի և մոռանա պատահածը: Մորը նույնպես, բարի մարդիկ տարան իրենց մոտ, իսկ հոր դիակը թաղեցին հետևյալ օրը՝ փողոցներում մահացածների հետ միասին մի ընդհանուր գերեզմանոցում:

— Հաշվիր, թե տիֆ է ընկել, մեռել,— մխիթարեց նրան հյուրընկալող տան պառավը:

— Չէ, մայրիկ, էն տեսակ տղամարդը տիֆ ընկնող չէր: Նա հարուր տարի էլ կապրեր...

— Աստված էր տվել, աստված էլ վերցրուց: Իսկ դու ջահել, սիրուն կնիկ ես, աչք-ունքդ տեղը: Բախտը մի անգամ էլ կթակի դուռդ: Անցածը մտիցդ հանի…

— Չէ, մայրիկ, ես պիտի գնամ մինիստրի քովը, բողոքեմ…

— Ձեռք վերցրու, բալա ջան: Հրեն, քաղաքացիք ու գեղացիք շաբաթներով վեր են ընկած մինիստրի դռանը, չեն կարենում երեսը տեսնեն:

— Ես պիտի գնամ…— պնդեց երիտասարդ կինը:— Հոգուս որ հասցնի՝ դուռն էլ կջարդեմ, բայց կընկնեմ քովը…

Եվ իրոք, նա ընկավ մինիստրի «քովը» և այն էլ՝ առանց դուռը ջարդելու: Ցնցոտիների մեջ անգամ նա գեղեցիկ կին էր և երիտասարդ լկտի քարտուղարը, նկատելով նրան հավաքվածների թվում, ձայն տվեց.

— Դո՞ւ ընչի ես կայնե, քույրիկ, առաջ արի մի տենամ…

Եվ ժպտաց՝ աչքով անելով:

— Ես մինիստրի մոտ եմ գնում,— ասաց գեղեցիկ կինը՝ խստադեմ և համարձակ:

Քարտուղարը լրջացավ՝ ենթադրելով, թե կինը մինիստրի ծանոթուհիներից և կամ նրա «զակազն» է: Անմիջապես դուռը բաց արեց և ներս թողեց նրան:

Մինիստրը՝ միջահասակ, գեր մի տղամարդ, քառասունհինգից-հիսուն տարեկան, լավ ապրած մարդու սպիտակ, կուշտ դեմքով, սև, հաստ բեղերով և կլոր յուղափայլ աչքերով, վեր կացավ իր գրասեղանի ետևից և եկավ կնոջն ընդառաջ:

— Դուք ինձ մո՞տ, քույրիկ: Նստեցեք, խնդրեմ: Նստիր, նստիր,— պնդեց նա եզակի՝ արդեն տեսնելով, թե ինչ կատեգորիայի մարդու հետ գործ ունի և համապատասխանորեն կողմնորոշվելով:— Ասա տեսնեմ ինչ կա:

Միաժամանակ նա քաղաքավարությամբ և վավաշոտությամբ բռնեց կնոջ թևից, նստեցրեց նրան բազմոցի վրա, իսկ ինքն աթոռը քաշեց, նստեց նրա առաջ, ընդ որում նրա ծնկները շփվեցին կնոջ ծնկներին:

Այդ մարդկային վերաբերմունքից սրտաշարժված, կինը փղձկաց և սկսեց հեկեկալ: Մինիստրն իսկույն փոխադրվեց բազմոցի վրա, գրկեց նրան, շոյեց մազերը և սկսեց մխիթարել: Մի քանի վայրկյան հետո կինն զգաց, որ մինիստրի մատները սողում են նրա ուսերից ներքև՝ դեպի կուրծքը,— մի հանգամանք, որ բոլորովին էլ պարտադիր չէ վշտահար կնոջը մխիթարելու համար: Նա սթափվեց, ընդհատեց լացը, ըստ հնարավորի մեղմությամբ ետ տարավ մինիստրի ձեռքը՝ աշխատելով չվիրավորել նրան, և պատմեց իր գլխին եկածը:

— Դու լավ ճանաչեցի՞ր նրան, քույրիկ:

— Ո՞վ չի ճանաչում էդ արնախումին, պարոն մինիստր:

— Լավ, քույրիկ, ես վաղը կկանչեմ նրան, կհարցնեմ:Դու ի՞նչ կոմպենսացիա ես ուզում ամուսնուդ մահվան դիմաց: Կոմպենսացիա՝ այսինքն՝ ինչպե՞ս ասեմ... Նու, օգնություն, նպաստ:

— Ես ուզում եմ, որ մի գյուլլա էլ նրա սիրտը խրեք: Ինձ ուրիշ բան պետք չէ:

— Գյուլլա…— մտածկոտ կրկնեց մինիստրը՝ կարծես ծանր ու թեթև անելով կնոջ առաջարկը:— Գյուլլա… Ես կաշխատեմ: Համենայն դեպս նա կստանա որևէ պատիժ: Իսկ դու, քույրիկ...

Նա նորից բռնեց կնոջ ուսերը:

— Իսկ դու, քույրիկ, խոսք կտա՞ս, որ անօգնական չես թողնի ինձ՝ եթե ես էլ, իմ հերթին, քու կարիքն ունենամ…

— Ես ի՞նչ կարող եմ օգնել քեզ, պարոն մինիստր,— ապշեց կինը՝ ոչինչ չհասկանալով:— Ես մի գաղթական կին...

— Լռել…— ժպտալով ընդհատեց մինիստրը՝ թեթևակի խփելով նրա այտին:— Տա աստված, որ բոլոր գաղթական կանայք լինեն քեզ նման: Մի խոսքով՝ պայմանավորվեցի՞նք…

Երկու օր հետո, մինիստրը, տեսնելով, որ մաուզերիստը, չնայած իր կողմից եղած քաղաքավարի հրավերին, չի գալիս ներկայանում, ձեռքը թափ տվեց այդ գործի վրա և շուտով պետք է որ բոլորովին մոռանար, եթե պատահաբար չհանդիպեր նրան ճաշարանում: Մարդասպանն այնտեղ մենակ նստած, մի փոքրիկ սեղանի մոտ, ճաշում էր համեստ, առանց խմիչքի:

— Բարև, սրիկա մաուզերիստ,— բարեկամաբար կատակեց մինիստրը:

Մաուզերիստը, ուտելիքը ծամելով, նայեց նրան և առանց ժպտալու, բայց հյուրասիրաբար, տեղ առաջարկեց ազատ աթոռի վրա, նախապես ափով սրբելով դրա վրայից հացի փշրանքները:

— Այ տղա, էդ ո՞ւմ ես սպանել անցած շաբաթ՝ առանց մի պատճառի:

Մաուզերիստը մտածեց և ասաց խորին անկեղծությամբ.

— Աստված վկա, միտս չի: Խի, բա՞ն է պատահել:

— Էլ ի՞նչ պիտի պատահի: Սպանել ես:

— Կարող է,— զիջողաբար համաձայնվեց մաուզերիստը:— Կարող է:

— Խմած ես եղել, չես հիշում,— օգնեց մինիստրը:

— Հլա մի հարցրու, թե էս մի ամիս է՝ բերանս գինի գնացե՞լ է որ: Ես ստամոքսի յազվա ունեմ: Բժիշկն արգելել է:

— Բա որ հարբած էլ չես եղել, ինչո՞ւ ես սպանել իզուր տեղը:

— Ի՞նչ ես դարտակ-դարտակ դուրս տալի,— բարեկամաբար նախատեց մաուզերիստը մինիստրին:— Ես խո գազան չե՞մ: Երևի մի բան արել է ինձ:

— Ոչինչ էլ չի արել: Կնիկն ամեն ինչ մանրամասն պատմեց ինձ:

— Ուրեմն կնկա հաշիվ կա արանքը…— գլխի ընկավ մաուզերիստը:— Դե էդպես ասա:

— Իզուր ես սպանել, իզուր,— մի անգամ ևս նախատեց մինիստրը՝ աշխատելով շտապ փակել կնոջ հարցը:— Չպետք է անեիր:

— Ախպեր ջան, թե անմեղ տեղն եմ արել՝ ղալաթ եմ արել, քեզ հազար ներողություն: Պրծա՞նք:

— Պրծա՞նք…— դառը քմծիծաղեց մինիստրը:— Դրանով մեռածը կկենդանանա՞:

— Այշի, դու ասա՝ կնիկը կենդանի լինի, մարդու հետ ի՞նչ գործ ունես: Գինի պատվե՞մ…

Միայն տուն վերադառնալուց հետո երիտասարդ կինը հասկացավ մինիստրի «պայմանավորվել» խոսքի գարշելի իմաստը: Նա այլևս ոտք չդրեց նրա մոտ և չհիշեցրեց իր խնդիրը: Իսկ ոճրագործն ազատ շրջում էր Երևանում: Կինը գիտեր, որ դրա պատճառը ոչ թե այն էր, որ նա դրժել էր «պայմանը» և դրա համար էլ մինիստրը միջոցներ ձեռք չէր առնում, այլ այն, որ ինչ էլ լինի, «շունը շան միս չի ուտի...»:

Եվ որովհետև նա չուներ աշխարհում ոչ մի մտերիմ՝ բացի իր փոքր աղջկանից, ուստի և նրա մոտ հորդեց իր սիրտը.

— Ախ, բալա ջան, քա՞նի գրող արժե կինն առանց տղամարդու... Ես ու դու անտեր ենք, ինչ ուզենան՝ կանեն մեզ հետ մարդիկ... Ոչ հեր ունենք, ոչ որդի, ոչ ախպեր, ոչ ամուսին…

Կիսախելագար վիճակից հազիվ ապաքինված փոքրահասակ աղջկա հոգում մոր այդ խոսքը դրոշմվեց խորը, պատգամի նման: Քանի՛-քանի անգամ դրանից հետո մայրը կրկնեց նույն բանը: Քանի՛-քանի անգամ փոքրահասակ աղջիկն անձամբ տեսավ ու համոզվեց, թե ինչ էր նշանակում երիտասարդ գեղեցիկ կին՝ առանց ամուսնու, դաշնակցական դժոխքում… Ամեն տեղ վիրավորում, վշտացնում, անպատվում, հարստահարում էին տղամարդ չունեցող գեղեցիկ կնոջը, նրան քաշում-տանում էին հարբած մաուզերիստները, իսկ երբ դիմադրում էր, ծեծում էին՝ ինչպես տղամարդը տղամարդուն... Հիմնարկներում նրան խոստանում էին տալ աշխատանք, բայց ամեն անգամ աշխատում էին «պայմանավորվել» նրա հետ... Խանութպանները մթերք էին առաջարկում նրան «բոլորովին ձրի», բայց…

— Ախ, մայրիկ, երանի ես տղա ծնված լինեի,— ամեն անգամ, մորը մխիթարելով, երազում էր աղջիկը:— Ես չէի թողնի, որ մատով դիպչեին քեզ…

Բայց նա ծնվել էր աղջիկ և անզոր էր պատնեշել մորը պատուհասներից գոնե մեկից: Ընդհակառակը, հետզհետև աղջկան իրեն էլ էին սկսում նայել չար տղամարդիկ որպես զոհի, նրա դեռ մանկական կյանքի վրա էլ էր կախվել անպատվության և անարգանքի սպառնալիքը: Եվ ոչ թե ինքը մորը, այլ մայրն էր պաշտպանում նրան այն զարհուրելի ճակատագրից, որը բաժին էր ընկել տղամարդ չունեցող բոլոր կանանց և աղջիկներին:

Ռոկլանան իր մանկական հոգու ամբողջ ուժով ատեց իր թույլ սեռը: Եթե նա ունենար մեծամեծ գանձեր, ապա բոլորը կտար՝ միայն թե դառնար տղամարդ: Բայց քանի որ չուներ ոչ մի գանձ, ապա պատրաստ էր տալու իր կյանքի կեսը, իսկ դա ոչ ոքի պետք չէր՝ նույնիսկ ամբողջովին…

Երբ մայրը տիֆից մեռավ, Ռոկլանան, բոլորովին անտեր, մի տղայի դիակի վրայից հանեց նրա ցնցոտիները, հագավ, կտրեց իր մազերը և դարձավ տղա: Նրա նիհար դեմքը, սմքած կուրծքը, իրոք որ, նրան նմանեցնում էին տղայի, և անապաստան երեխաներից ոչ մեկը չէր կասկածում նրա ինչ լինելու մասին: Ընդհակառակը, մի ուրիշ անապաստան տղայի, իսկական տղայի, բոլորն անվանում էին աղջիկ, որովհետև նա շատ գեղեցիկ էր և քնքուշ: Իսկ Ռոկլանան ատում էր նրան: Տղան պետք է նման լինի տղայի: Աղջիկը՝ նույնպես:

Դժվար էր ասել, թե ինչով կվերջանար Ռոկլանայի կյանքը, եթե շուտով վրա չհասներ հեղափոխությունը: Մյուս անապաստան երեխաների հետ միասին նրան նույնպես տարան մանկատուն և ուզում էին տղաների հետ միասին լողացնել բաղնիքում, բայց Ռոկլանան ներս չէր մտնում, դիմադրում էր, քաշքշում, հայհոյում կծում: Ոչ ոք դրա վրա ուշադրություն չէր դարձնում, որովհետև ուրիշ շատ տղաներ էլ անում էին նույնը: Կոպտորեն առաջ մղելով և նույնիսկ մի երկու անգամ խփելով, նրան հրեցին դեպի հանվելու սենյակը, և այդտեղ նա ստիպված եղավ խոստովանել, որ նա աղջիկ է…

Ռոկլանային տարան աղջիկների մանկատուն:

Իր ամբողջ պատանեկության ընթացքում նա այդպես էլ չմտերմացավ և ոչ մի աղջկա հետ: Ամենայն լրջությամբ և համոզվածությամբ նա իրեն համարում էր տղա և արհամարհում էր բոլոր աղջիկներին, իսկ առավել քնքուշներին և կանացիներին՝ ուղղակի ատում: «Մեշչանկա» բառի հետ նրա ծանոթությունը նման էր ատրճանակ ձեռք բերելու: Նա այդ բառով էր սպանում ամեն մի որբուհու, որն աշխատում էր իր աղքատիկ, խեղճ զգեստը զարդարել որևէ ծաղիկով, ժապավենով, կոճակով... «Մեշչանկա» էր գեղեցիկ և երկար հյուսեր ունեցողը, սև ու խոշոր աչքերի տերը, ծիծաղկոտը, թախծոտը, երգել կամ պարել սիրողը... Բոլորն էին «մեշչանկա»՝ բացի իր նման մի քանի ուրիշ տղամարդացածներից:

Երբ Ռոկլանան դուրս գրվեց որբանոցից և աշխատանքի ընդունվեց մի կոոպերատիվում՝ որպես վաճառորդուհի, նա արդեն եկել էր այն համոզման, որ խորհրդային կարգերում կանայք անտեր չեն և ոչ ոք չի սպառնում նրանց պատվին և արժանապատվությանը: «Որովհետև մենք հիմա ինքներս ենք տղամարդ»,— հանեց նա այդտեղից իր սխալ եզրակացությունը և շարունակեց մնալ իր կեղծ դերի մեջ: Ատելությունը դեպի ամեն մի կանացի քնքշություն՝ մնաց նրա մեջ:

Բայց շուտով Ռոկլանան սարսափով նկատեց, որ այն, ինչ նա ատում և արհամարհում էր ուրիշների մոտ, աճում և զարգանում էր հենց իր մոտ... Ամեն առավոտ անկողնից վեր կենալիս նա ընկճված տրամադրությամբ էր նկատում, որ նա օրեցօր կազդուրվում է, գիրանում, ընդունում հասուն աղջկա, իսկական աղջկա գծագրություններ…

Ուրեմն հարկավոր է ավելի խնամքով թաքնվել տղամարդավարի հագուստների մեջ…

Բայց կար նաև ֆիզիկական կերպարանքի փոփոխվելուց էլ ավելի սարսափելին: Խուսափելով աղջիկներից և շարունակ ընկերակցելով տղաների հետ, նա երկար ժամանակ ոչ մի խտրություն չէր դնում նրանց միջև, բոլորին վերաբերվում էր հավասար վերաբերմունքով: Առավել ևս զարմանալի էր նրա համար, երբ նկատեց, որ Վարդանի նկատմամբ իր մեջ աճում է մի ինչ-որ հատուկ հետաքրքրություն: Երկար ժամանակ նա չէր հասկանում, իսկ հասկանալուց հետո չէր ուզում ընդունել, որ դա սեր էր, աղջկա իսկական սեր՝ տղայի նկատմամբ... Բայց աչք փակելն իզուր էր, և նա ստիպված եղավ հանձն առնել ինքն իր հանդեպ, բայց և իսկույն արդարացում փնտրել իր զգացմունքի համար: Արդարացումը եղավ այն, որ նա իր սերը համարեց մի ինչ-որ նոր կատեգորիա, այսպես ասած՝ կոմերիտական սեր, որտեղ բոլորովին էլ կարևոր չէր տղա և աղջիկ լինելու հանգամանքը: Պարզապես երկու ընկերներ ուզում են միասին անցնել կյանքի և դասակարգային պայքարի ուղին…

Ի՞նչ էր ուզում Ռոկլանան Վարդանից՝ ինքն էլ չգիտեր: Համբույրի և գգվանքների լոկ միտքն անգամ նրան թվում էր հանցագործություն, հակահեղափոխության նման մի բան: Միայն հանդիպել ավելի հաճախ, գրքեր կարդալ միասին, երազել կոմունիզմը միասին, դե, նաև կինո ու թատրոն գնալ միասին: Ուրիշ ոչինչ: Եվ այդ անսիրտ Վարդանը մերժում է իր մարտական ընկերուհու այդպիսի համեստ սիրո կոնկրետ առաջարկը…

Ռոկլանան հառաչեց, նայեց քաղաքային կոտրված ժամացույցին և տեսնելով, որ արդեն ժամանակն է, դանդաղ քայլերով գնաց դեպի իր աշխատանքի վայրը՝ Կոոպերատիվ տեխնիկում, որտեղ նա քարտուղար էր:

28

Ռոկլանայից բաժանվելուց անմիջապես հետո Վարդանը մոռացավ նրա նույնիսկ գոյությունը: Եվ եթե չլիներ նրա հոգում մնացած տհաճ տպավորությունը, պիտի թվար, թե նա չէր էլ հանդիպել այդ աղջկան: Նրան նորից ամբողջովին համակեց արտակարգ ուրախության զգացումը.— «Կիրակի օրը տպվելու է իմ պատմվածքը… Մի՞թե, իրոք, ես գրող եմ դառնալու... Մի՞թե, իսկապես, այսօր իմ գրական կյանքի առաջին օրն է»…

Երբ հասնելով խմբագրատանը, նա տեսավ մի երիտասարդի, որն «Ավանգարդի» դռան մոտ կանգնած, չէր վստահում մտնել ներս, Վարդանը, արդեն որպես գրականության փորձված գայլ, նույնիսկ մի տեսակ հայրական խղճահարություն զգաց ամաչկոտ թղթակցի հանդեպ:

— Դու մեզ մո՞տ ես գալիս, ընկեր,— ասաց նա ժպտերես:— Խնդրեմ, մտիր: Երևի նյո՞ւթ ես բերել:

— Ոչ մի նյութ,— ասաց երիտասարդը՝ նույնիսկ մռայլվելով, որ խաբում է նրա հույսերը:— Ուրեմն դու էստե՞ղ ես աշխատում, ընկեր:

— Այո:

— Դե էն ժամանակ մի բան խնդրեմ: Էրեկ իրիկուն երիտ-ակումբում մի զեկուցում կար: Ես էնտեղ էի…

— Ես էլ էի էնտեղ, — ասաց Վարդանը:

— Ուրեմն լսեցի՞ր Սանթուրյանի ելույթը: Ինձ հենց էդ Սանթուրյանն է հարկավոր: Ում հարցնում եմ՝ չեն ճանաչում: Ես հենց հիմի երիտ-ակումբից եմ գալիս, բայց էնտեղ էլ ոչ վարիչը, ոչ ադմինիստրատորը, ոչ մեկը բան չկարացին, թե ասեն: Իրենք էլ առաջին անգամ էրեկ են տեսել նրան:

— Նա բանֆակի դասատու է,— հայտնեց Վարդանը:—Նրա ուսանողներից մեկը հենց ինձ հետ մի սենյակում է ապրում:

— Իսկապե՞ս,— ուրախացավ երիտասարդը:— Ուրեմն ես իրիկունը կգնամ բանֆակ, մի մեծ, մեծ շնորհակալություն կհայտնեմ նրան:

— Արժե,— համաձայնվեց Վարդանը:— Նա շատ ճիշտ խոսեց:

— Եվ ինձ էլ պաշտպանեց:

— Քե՞զ…

— Իհարկե: Էն, որ սիրահարված լինելու պատճառով հեռացրել են միությունից:

— Ուրեմն դո՞ւ ես դա,— բացականչեց լենինականցին:— Էս ամբողջ օրը ես քու հասցեն եմ փնտրում: Ապա, մի արի էս կողմ, ես գործ ունեմ քեզ հետ:

Երիտասարդներն սկսեցին դանդաղ քայլել փողոցով:

— Ամենից առաջ՝ անունդ ի՞նչ է:

— Կնյազ:

— Այ տղա, ինչո՞ւ չես փոխում,— մտերմաբար հանդիմանեց Վարդանը:— Բա դա կոմերիտականի անո՞ւն է:

— Փոխելու վրա էի, բայց ինձ վտարեցին:

— Իսկ հիմի մի հաշի՞վ է:

— Մի հաշիվ է,— հառաչեց Կնյազը:

— Ճիշտ չես մտածում... Բայց հիմի գլխավորը դա չէ: Դու ինձ ասա, վաղո՞ւց էիր կոմերիտական:

— Երկու տարի:

— Ակտիվի մե՞ջ էիր:

— Ոնց ասեմ,— ձեռքն անորոշ շարժեց Կնյազը:— Ակտիվի ու պասսիվի արանքը:

— Էլի ոչինչ,— բավարարվեց Վարդանը:— Համենայն դեպս, հարգելի ընկեր, դու էնքան գիտակցություն հո ունեի՞ր, որ կոմերիտականը պետք է պայքարի անարդարության դեմ:

— Դա մինիմում է,— ներողամտաբար քմծիծաղեց Կնյազը:

— Դե որ մինիմում է ու դու էլ լավ ես հասկանում դա, ասա խնդրեմ, Կնյազ, դու ո՞նց պիտի պայքարեիր համաշխարհային իմպերիալիզմի դեմ, երբ չես պայքարել քեզ անարդար կերպով միությունից հեռացնելու դեմ…

— Ինձ տեղին են հեռացրել,— կամացուկ ասաց նախկին կոմերիտականը:

Վարդանն ապշած նայեց նրան:

— Այո, այո: Հենց որ բջիջում սկսեցին իմ սերը փնովել, ես մի քանի կոպիտ խոսքեր ասացի միության հասցեին, էն էլ՝ ոչ թե բջիջի մասշտաբով, այլ համահայաստանյան…

— Մեծ ղալաթ ես արել…— մռայլվեց Վարդանը:

— Էն էլ ինչքա՜ն մեծ,— ծոր տվեց Կնյազը:— Հենց որ տուն հասա՝ գլուխս պատեպատ էի տալիս, բայց էլ ի՞նչ օգուտ: Էդպես էլ արձանագրել էին ու ինձ վռնդել:

— Այ թե ինչու համար քու գործը չգտան,— հասկացավ Վարդանը:— Ախր այսօր ես քու գործով գնացել էի Երքաղկոմ, էնտեղ էր նաև Ցեկայի քարտուղարը: Ոչ անունդ գիտեի, ոչ էլ ուրիշ տվյալներ ունեի: Իսկ սիրո պատճառով ոչ մի վռնդվածի գործ չկար արխիվում:

— Քու անունդ ի՞նչ է:

— Վարդան:

— Շնորհակալություն քեզ, Վարդան ջան,— զգացված արտասանեց նախկին կոմերիտականը:— Եվ ներողություն, որ իմ պատճառով սխալ գործ ես պաշտպանել: Եթե իմանան, քեզ էլ նկատողություն կանեն, որ խոսել ես միությունը հայհոյողի օգտին:

— Գործը մի քիչ բարդանում է,— համաձայնվեց Վարդանը՝ ավելի դանդաղեցնելով քայլերը: Ապա մտածկոտ կանգ առավ, լռեց մի պահ և բացականչեց.— Բայց էլի դու մեղավոր չես: Այսինքն՝

մեղավոր ես էնքան, որ կոպիտ խոսքերիդ համար պետք էր քեզ նկատողություն անել՝ առանց գործիդ կցելու կամ հենց թեկուզ կցելով: Իսկ գլխավոր մեղավորը ձեր բջիջի անդամներն են և ամենից առաջ՝ Մալարիայի հիվանդանոցի Վահրիճը…

— Դու էդ քյալլագյոզին է՞լ ես ճանաչում,— զարմացավ Կնյազը:

— Այո: Դժբախտաբար մի սենյակում էլ ապրում ենք: Եվ համարյա ամեն օր կռվում ենք իրար հետ: Երեկ սիրո հարցի մասին խոսելիս, քու կապակցությամբ, բանը հասավ խաղողի քթոցն իրար գլխի տալուն: Դժբախտաբար՝ դատարկ: Իսկ էսօր հարցնում եմ նրանից քու հասցեն, որ ծանոթանամ քեզ հետ, հաջողացնենք նորից վերականգնել քեզ միության մեջ, չի ասում սրիկան: Գնացի հայտնեցի ընկեր Գրիգորյանին: Էգուց նրան կանչելու է Երքաղկոմ: Էնպես որ, Կնյազ, բոլորը մտածում են քու մասին՝ բացի քեզանից: Ինձ հետ երկու ուրիշ լավ տղաներ էլ են ապրում, նրանց համակրանքն էլ քու կողմն է: Իսկ ինչո՞վ վերջացավ քու սերը…

— Ես հենց էդ կապակցությամբ եմ փնտրում Սանթուրյանին,— ժպտաց Կնյազը:— Էսօր իմ երեխի կարմիր կնունքն է, դրանից հետո ուզում եմ տանը մի փոքրիկ քեֆ կազմակերպել: Իսկ ո՞վ կգա միությունից վտարվածի տունը... Հեր ու մեր ոչ ես ունեմ, ոչ Մանուշը, երկուսս էլ որբանոցից ենք: Պիտի մարդ ու կին մենակ նստենք, անցկացնենք մեր ուրախությունը: Իսկ Մանուշը կպել է, թե հրավիրի էդ ընկեր Սանթուրյանին: Նա որ էդպես է խոսել, ուրեմն չի մերժի, կգա…

Վարդանն այնպես սրտաշարժվեց, որ պատրաստ էր մեծավարի գգվել իր հասակակցին, որն իր կյանքի ամենանշանավոր օրերից մեկում մնացել էր մենակ իր ուրախության և տխրության հետ: Բայց, զսպելով իր մեջ քնքշության պոռթկումը, նա ասաց կոմերիտավարի հասարակ.

— Իսկ ի՞նչ կասես, եթե կոմերիտական ընկեր-ընկերուհիների մի խումբ հավաքեմ ու գանք բոլորովս քեզ շնորհավորելու…

— Չի կարող պատահել,— բացականչեց Կնյազը՝ թերահավատ նայելով նոր ծանոթին:

— Բա որ եկա՞նք:

— Դու հաստա՞տ ես ասում,— ուրախությունից համարյա արտասվեց Կնյազը:

— Էհ, ընկեր, ընկեր,— հանդիմանեց լենինականցին:— Կտրվել ես մասսայից մի քանի քյալլագյոզների պատճառով, կարծում ես թե…

— Կտրվել եմ, կտրվել եմ, ճիշտ է,— հոժարությամբ հանձն առավ Կնյազը:— Դու չկարծես, թե ես ընկերներ չունեմ: Ճիշտ է, մի քանիսն ինձնից երես են դարձրել, բայց մնացած բոլորից ես ինքս եմ երես դարձրել, որ չճնշվեն իմ ծանոթությունից…

— Ուրեմն ամոթ քեզ,— ասաց Վարդանը:— Ուրեմն մոռացել ես որբանոցում իրար հետ կերած մի կտոր հացը…

— Ճիշտ է, իրավունք ունես: Իմ էդպես վարվելուց նրանք կամաց-կամաց ստիպված եղան ձեռք քաշել ինձնից: Ուրեմն ի՞նչ ես ասում, նրանց է՞լ կանչեմ:

— Քու գործն է: Ես պատասխանատու եմ իմ խմբի համար: Քանի՞ մարդ բերեմ:

— Քառասուն,— ուրախությունից շողալով, համարյա գոռաց Կնյազը:— Լավ իմացիր, տղա է, ոչ թե աղջիկ:

— Հիմար բան չե՞ս ասում: Բա դա կոմերիտականին վայե՞լ խոսք է: Ի՞նչ տարբերություն:

— Հետո էլ աղջիկ կլինի,— ուղղեց Կնյազն իրեն:— Բայց որ առջնեկը տղա է՝ դա լավ է: Դու ժխտո՞ւմ ես դա:

— Անձնական փորձ չունեմ,— ասաց Վարդանը:

Նրանք ծիծաղեցին:

— Ուրեմն, Կնյազ, կգանք մի քանի հոգով: Տես, ծախս-մախս չանես: Կմտնենք, կշնորհավորենք, դուրս կգանք: Իհարկե, դրանից առաջ կլինենք ակումբում, էնտեղից միասին կգնանք ձեր տուն: Ո՞ր ակումբումն է կնունքը:

— Երկաթուղային: Ես մի բան խնդրեմ քեզ, Վարդան: Ի՞նչ կլինի, որ դու ինքդ կամ քու ընկերն իմ կողմից խնդրի Սանթուրյանին, որ գա: Եթե էդ բանն անեք՝ ինձ շատ օգնած կլինեք: Ես էնքան գործ ունեմ, էնքան գործ, որ չգիտեմ, թե ինչպես պիտի հասցնեմ…

— Իմ ընկերը երեկոյան բանֆակում կասի Սանթուրյանին,— խոստացավ Վարդանը:— Բայց կգա թե ոչ՝ էդ էլ իր գործն է:

— Ես չգիտեմ, թե ինչքան շնորհակալ եմ քեզնից, Վարդան, ինչպես կոմերիտականը կոմերիտականից: Դե, ես գնացի: Հա, հասցես… Ոչ, հասցես պետք չէ, կհանդիպենք ակումբում…

Նա շփոթվել էր ուրախությունից: Երբ նա արագ քայլերով հեռացավ, Վարդանը դեռ մի պահ կանգնած, նայեց նրա ետևից: Խիստ անշուք հագնված, սովորական տղա, Կնյազը համարյա վազում էր՝ ուրախացնելու իր կնոջը, կատարելու պարտքը նորածնի նկատմամբ: Նա երջանիկ էր:

Վարդանի հոգին նույնպես համակվեց մեծ ուրախությամբ այն բանի համար, որ ինքը մի փոքրիկ, շատ փոքրիկ օժանդակություն է բերում այդ երջանկությանը թե իր անփորձ գրչով և թե կոմերիտականի իր ազնիվ վարմունքով:

29

Աշխատանքից դուրս գալիս Վահրիճի տրամադրությունը չափազանց ընկած էր: Նա իզուր էր համոզում իրեն, որ ամեն ինչ կարգին է և ոչ ոք չի կարող պատասխանատվության կանչել նրան՝ Կնյազին կոմերիտմիությունից վտարել տալու համար: Նա գիտեր, որ եթե միության օրգանները ձեռնարկել են այդ գործի քննությանը, ուրեմն չի օգնի ոչ մի արձանագրություն, ոչ մի ձևական պատճառաբանություն: Կպարզեն ամեն ինչ, և Վահրիճը կդառնա գլխավոր մեղադրյալը…

Հասնելով Աբովյանի և Կնունյանցի անկյունին, նա ուզում էր թեքվել՝ տուն գնալու համար, երբ հանկարծ նկատեց դիմացից եկող դաշնակ երիտասարդների մի խմբի: Դեմքի վրա արհամարհական արտահայտությամբ Վահրիճն ուզում էր անցնել նրանց մոտով, երբ նրանցից մեկը նայեց Մալարիայի հիվանդանոցի քարտուղարին և բարձրաձայն դիմեց իր ընկերներին.

— Երեկ երեկոյան էս լողլողը չէ՞ր երիտակումբում մեզ վրա հաչողը:

— Էս լողլողն էր,— հանգիստ տոնով հաստատեց ընկերներից մեկը՝ նույնպես բարձրաձայն:

— Օրթոդոքս կոմերիտակա՜ն…— քմծիծաղեց մի երրորդը Վահրիճի երեսն ի վար:

Վահրիճը կատաղեց:

— Քաղաքացիներ,— ասաց նա խիստ ձայնով,— եթե մի խոսք էլ ասեք ինձ՝ ես ստիպված կլինեմ դիմել միլիցիայի…

— Ո՞ւմ, ո՞ւմ…— առաջ եկավ մի չորրորդը՝ ոտից-գլուխ չափելով երկարահասակին: Բայց նույն րոպեին նրան մի կողմ հրեց հինգերորդը, կանգնեց կոմերիտականի դիմաց, նայեց թափանցող հայացքով և ասաց.

— Բարև, Վահրիճ:

— Ճանաչո՞ւմ ես դրան,— զարմացան ընկերները:

Դաշնակ երիտասարդը չպատասխանեց նրանց և կրկնեց նորից, ավելի պահանջկոտ.

— Վահրիճ, բարև:

— Բարև…— կմկմաց երիտասարդը:

— Էդ դո՞ւ ես մեր գլխին կոմերիտական խաղում, սրիկա… Հիմի մի հատ չհասցնե՞մ էդ քու կեղտոտ ռեխին: Ես քու…

Նա բարձրացրեց բռունցքը, թափ առավ, բայց չխփեց:

Վահրիճը կանգնել էր չափազանց գունատված և ուղղակի դողում էր: Դաշնակ երիտասարդները, ծայր աստիճան հետաքրքրված, նայեցին իրենց ընկերոջը:

— Մացակ անունով մի կուլակի լակոտ է,— բացատրեց վերջինս:— Մեր հարևան գեղից: Սրա հերն իմ հորը դեռ մինչև հիմի էլ հազար մանեթ է պարտք:

— Վայ ես քու ստեղծողի…— հայհոյեց դաշնակներից մեկը՝ չարախինդ ժպտալով:— Տես թե ոնց է դիմակավորվել, դեռ մեզ վրա էլ հաչում է շան նման:

Դառնալով դեպի նրան ճանաչող իր ընկերը, հարցրեց.

— Երևի դաշերիտ է՞լ է եղել:

— Էդ մեկը ոչ, բայց ի՞նչ նշանակություն ունի: Հերը մի արնախում գազան, իսկ ինքը… Մի քանի տարի առաջ պիտի տեսնեիր սրան իրենց գյուղում: Հետը խոսել չէր կարելի, թագավորի տղի պես էր իրեն պահում…

Դաշնակներից մեկն ընդհուպ կանգնեց Վահրիճի դիմաց, թևերը կանթեց կողերին և խրախճացող չար ժպիտով նայեց ուղիղ նրա աչքերի մեջ:

— Դե, հիմի՛ ինչ կասես, ընկեր կոմերիտական… Քու հոգին մեր բռի մեջ է…

— Անհարմար է,— շշնջաց Վահրիճը,— մարդիկ մեզ վրա ուշադրություն են դարձնում: Անցնենք…

«Թեորետիկը», որն ընկերներից ետ էր մնացել լիմոնադ խմելու համար, մոտեցավ կանգ առած խմբին: Առանց վերարկուի, նա բաճկոնի տակից, այնուամենայնիվ, հագել էր բրդե հաստ սվիտր, իսկ վզին փաթաթել էր շալե շարֆ, որի երկու երկար ծայրերը կախ էին ընկել նրա կրծքի վրա:

— Ի՞նչ բան է,— ասաց նա մոտենալով:

— Ապա, թեորետիկ, նայիր սրան: Ճանաչեցի՞ր:

— Հետո՞ ինչ,— բարկացավ նրանց վրա «թեորետիկը»:

— Իրիկվա լողլողն է:

— Ես ձեզ եմ հարցնում՝ հետո՞ ինչ,— խիստ զայրացավ բակեններով դաշերիտը:— Ինչո՞ւ եք բռնացրել: Ներեցեք սրանց, ընկեր կոմերիտական:

— Որտեղի՞ց էստեղ կոմերիտական,— ծիծաղեց մեկը:— Կուլակի լակոտ է, ներս է սողոսկել միության մեջ:

— Նո՞ւ, նո՞ւ, նո՞ւ,— ծայր աստիճան զարմացավ «թեորետիկը»:

— Մեր հարևան գյուղից: Հերն էլ իմ հոր ստորադրյալներից է:

— Պատկերը փոխվում է,— ասաց «թեորետիկը» ինքն իրեն, բայց և այնպես դարձյալ մեծ դժգոհությամբ նայեց իր ընկերներին և ասաց,— ձեր ի՞նչ գործն է, թե ներս է սողոսկել: Ամեն մարդ հարմարվում է իր կարողացածի պես: Վերջ տվեք:

Վահրիճը շնորհակալ հայացքով նայեց նրան և ուզում էր հեռանալ, բայց «թեորետիկը» բռնեց նրա թևը:

— Սպասիր: Այնուամենայնիվ չի խանգարի մի քիչ խոսել քեզ հետ: Բայց գնանք մի տեղ, էստեղ հարմար չի, կնկատեն քեզ մեզ հետ, կվարկաբեկվես: Ինչքան էլ չլինի, մենք նախկին դաշերիտներ ենք: Դու դուրս արի Ազիզբեկովի հրապարակը: Էնտեղ մի փիթիխանա կա, գիտե՞ս:

— Գիտեմ,— հլու պատասխանեց Վահրիճը:

— Մտիր էնտեղ, իսկ մենք քու ետևից գալիս ենք:

Վահրիճը գնաց մոլորված քայլերով, իսկ դաշերիտները՝ նրա ետևից, տիրաբար նայելով նրան: Նրանք մտքեր չէին փոխանակում նրա մասին, այլ լուռ, անթարթ նայում էին նրա լողլող կերպարանքին՝ գալիֆե շալվարով, գետրիներով, երկարափեշ բլուզով, դրա վրա կապված նեղ գոտիով, որն իրենից կախված փոկերով ու փայլուն ճարմանդներով նման էր ձիասարքի: Վերջապես դաշերիտներից մեկն ասաց քմծիծաղով.

— Անզգույշ հիմար: Իսկական կուլակի տղայի պես է հագնվել:

— Եվ շատ էլ լավ է արել,— հավանություն տվեց «թեորետիկը»:— Սովորիր: Երբ կուլակի տղան ծպտվում է կոմերիտականի յունգ-շտուրմ համազգեստի մեջ, ապա դա ծպտվելու առաջին, պրիմիտիվ աստիճանն է: Իսկ երբ նա ծպտվում է հենց կուլակի տղայի հագուստի մեջ, նա դրանով ուզում է ասել, թե տեսեք, ես էնքան իսկական կոմերիտական եմ, որ ուզեմ՝ կուլակի պես կհագնվեմ, ուզեմ՝ բուրժույի: Եվ ոչ ոք չի կարող ինձ վրա կասկածել: Չէ, էդ լակոտը հիմար չի…

Երբ նրանք մտան «փիթիխանա» և տեղ գրավեցին Վահրիճի զբաղեցրած սեղանի շուրջը՝ փոքրիկ ճաշարանի խորքում, «թեորետիկը», առանց ժամանակ կորցնելու, ասաց կիսաձայն.

— Լսիր, սիրելի Վահրիճ… Դաշնակների մասին սրանք էնպիսի լուրեր են տարածում, թե իբր մենք հավաքագրում ենք զանազան մարդկանց, օգտագործում ենք հակահեղափոխական նպատակների համար և այլն: Չգիտեմ, իրենք հավատո՞ւմ են իրենց փչոցին, թե ոչ, բայց որ դա զրպարտություն է՝ փաստ է: Այ, վերցնենք, օրինակի համար, քեզ: Դու կուլակի տղա ես և ապօրինի կերպով խցկվել ես կոմերիտմիության մեջ: Մենք իմացանք էդ մասին: Ուրեմն ի՞նչ պիտի անենք: Ըստ կոմունիստների ենթադրության՝ մենք քեզ պիտի հավաքագրենք և, խաթրով լինի, թե զոռով, ծառայեցնենք մեր շահերին: Իսկ մեր մտքից էդպիսի բան չի էլ անցնում…

Մյուս դաշերիտները, Վահրիճից ոչ պակաս զարմացած, նայում էին «թեորետիկին»:

— Մենք, սիրելի Վահրիճ,— շարունակեց նա,— ոչինչ չենք ուզում քեզանից: Ոչինչ: Ինչպես ապրել ես մինչև հիմի՝ էնպես էլ ապրիր սրանից հետո: Հենց որ դուրս ելանք էնտեղից՝ մենք նույնիսկ ծանոթ էլ չենք իրար հետ ու չենք ճանաչում իրար: Վերջ: Եվ դու, առանց վախենալու մեզանից, սրանից հետո էլ կարող ես ժողովներում մեզ հայհոյել, անվանել դաշնակներ, իսկ մենք քեզ՝ քյալլագյոզ և այլն: Մի խոսքով, ոչինչ չի փոխվում…

Խոսքն ընդհատելով, նա փիթի պատվիրեց՝ ներկա գտնվողների թվի համաձայն: Ոչ ոք չէր խոսում, բոլորն ապշել էին և տարակուսանքով նայում էին իրենց ավագ ընկերոջը:

— Ինչպե՞ս շնորհակալություն հայտնեմ ձեզ, ընկերներ…— հուզված արտասանեց Վահրիճը՝ դիմելով գլխավորապես «Թեորետիկին»:

— Ոչ մի շնորհակալություն,— մերժեց վերջինս:— Մեզ ի՞նչ օգուտ, եթե մի անմեղ երիտասարդ տուժի այն պատճառով, որ նրա հայրը կուլակ է: Եվ եթե կուզես ճիշտն իմանալ, էդ մենք պիտի

շնորհակալություն հայտնենք քեզ, եթե, իհարկե, դու հարգես մեր խնդիրը և ապրես կոմերիտմիության մեջ էնպես, ինչպես ապրել ես մինչև հիմի:

— Չեմ հասկանում,— հանցավոր ժպտաց Վահրիճը:

— Ի՞նչ կա չհասկանալու,— զարմացավ «Թեորետիկը»:— Ինչպես որ անողոք օրթոդոքս ես եղել մինչև հիմի, էնպես էլ շարունակիր լինել: Ուրիշ ոչինչ:

— Ախր դա սխալ է,— ժպտաց Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը:— Ես էլ առաջ կարծում էի, թե դա օրթոդոքսություն է, բայց հիմի տեսնում եմ, որ քյալլագյոզություն է: Մի երկու տարի առաջ ես ազդեցություն ունեի շատ բջիջներում, բայց հիմի… Հիմի կյանքը զարգանում է, կոմերիտականներն արդեն հասկանում են, որ իմ դիրքն օրթոդոքսություն չէ, այլ քյալլագյոզություն, ձախություն: Ես էլ եմ հասկացել դա և հենց դրա համար էլ ուզում եմ վերակառուցվել…

— Այշի, բա՛ն չունես,— ձեռքը թափ տվեց «Թեորետիկը»:— Դու ի՞նչ գործ ունես կյանքի զարգացման հետ: Ով ինչ ուզում է՝ թող անի կամ ասի, իսկ դու ապրիր՝ ինչպես ապրել ես:

Վահրիճը հասկացավ և սառը քրտինքը պաշարեց նրան:

— Դուք ուզում եք, որ ես մնամ քյալլագյո՞զ…

— Ինչո՞ւ ես խիստ տերմիններ գործածում,— մտերմաբար հանդիմանեց նրան «Թեորետիկը»:

— Եվ որպեսզի ինձ հեռացնե՞ն կոմերիտմիությունից:

— Ոչինչ, եթե հեռացնեն՝ կգաս մեզ մոտ: Բայց դու աշխատիր, որ չհեռացնեն:

— Դե հենց դրա համար էլ ուզում եմ վերակառուցվել:

— Գիտե՞ս ինչ,— ընդհատեց «թեորետիկը» նրան՝ բավական խիստ տոնով,— ընկերությունը երկուստեք է լինում: Եթե մենք խոստանում ենք բոլորովին չխանգարել քեզ՝ ապրելու էնպես, ինչպես ապրել ես մինչև հիմի, ուրեմն մի փոքրիկ լավություն էլ դու պիտի անես մեզ համար: Նորից եմ կրկնում. էստեղից դուրս գալուց հետո մենք քեզ անծանոթ ենք և ոչ մի գործ չունենք քեզ հետ: Ու էդպես էլ կմնանք էնքան ժամանակ, քանի դեռ չես վերակառուցվել: Հասկացա՞ր:

— Դուք ուզում եք, որ մի կողմից ինքներդ խփեք ինձ, իսկ մյուս կողմից կոմերիտականնե՞րը,— հուսահատ բացականչեց Վահրիճը:

— Իսկ դու եղիր տղամարդ,— քաջալերեց դաշերիտների ղեկավարը,— էնպես արա, որ կոմերիտականները ոչ թե խփեն, այլ լսեն քեզ, համամիտ լինեն քեզ հետ: Էն ժամանակ մեր քննադատությունը կվերաբերի ոչ թե անձամբ քեզ, այլ նրանց: Իսկ դու ի՞նչ ունես վնասվելու: Կոմերիտմիության մեջ տեղ չունենաս՝ մեզ մոտ կունենաս:

— Մեզ մոտ՝ այսինքն՝ նախկին դաշերիտներիս,— բացատրեց մի ուրիշը:

— Այո, այո,— հաստատեց «Թեորետիկը»,— նախկին, նախկին…

Դաշնակ երիտասարդներից մեկը ձեռքը երկարեց Վահրիճին.

— Ապա, մի հանիր Կիմդ, տեսնեմ մոտիկից: Ես ձեռքումս դեռ Կիմ բռնած չկամ:

Վահրիճն արձակեց իր կոմերիտական կրծքանշանի քորոցը, հանեց նշանը և տվեց դաշնակներին: Կարմիր դրոշակի մեջտեղում գրված էին գերմաներեն երեք տառեր՝ «Կոմունիստական երիտասարդական ինտերնացիոնալ» բառերի սկզբնատառերը: Դա կրծքանշանների այն պարտիայից էր, որը Գերմանիայի կոմերիտմիությունը նվիրել էր Սովետական Միության կոմերիտմիությանը:

Կիմն անցավ ձեռքից-ձեռք: Հետաքրքրությամբ և ուշադիր զննելով ամեն մի մանրամասնություն, շոշափելով նշանն իրենց մատների արանքում, նայում էին դաշնակցականները կոմունիստական երիտասարդության միության խորհրդանշանին:

— Հալալ է քեզ, խորամանկ տղա,— գովեցին նրանք Վահրիճին:— Առ, կախիր իր տեղը…

30

Դաշնակները կերան իրենց փիթին և ելան դուրս: Վահրիճը շարունակեց մնալ անշարժ նստած: Կիսախավար փոքրիկ ճաշարանը լրիվ խավարել էր նրա աչքին: Ճաշարանն ի՞նչ, խավարել էր նրա ամբողջ կյանքը…

Իհարկե, հիմարություն կլիներ կարծել, թե փոքրիկ Հայաստանի փոքրիկ մայրաքաղաքում որևէ մեկը երբևէ չպետք է ճանաչեր նրան: Բայց Վահրիճը, անճանաչ մնալով մի քանի տարի, ունեցավ հենց այդ հիմարությունը, որ կարծեց, թե այդպես էլ շարունակվելու է մինչև վերջ: Այսպես ասած՝ նրա զգոնությունը թուլացավ և նա լիովին ապահով զգաց իրեն: Ախ, հիմար, ախմախ… Հարկավոր էր իր ժամանակին, կոմերիտական տոմսը ձեռքին, փոխադրվել Թիֆլիս կամ Բաքու և կամ հենց թեկուզ Խարկով: Դե գնա ու ճանաչիր Մացակի տղա Վահրիճին…

Բայց արդեն ուշ էր: Մի կողմից նրա քյալլագյոզությունների տուտն էր բացվել, իսկ մյուս կողմից դաշերիտները պահանջում էին, որ նա շարունակեր մնալ նույն քյալլագյոզը: Դա նրանց խիստ հարկավոր էր՝ կոմերիտմիությունը վարկաբեկելու համար: Լսի՞ նրանց Վահրիճը՝ դուրս կթռչի միությունից: Չլսի՞ նորից դուրս կթռչի: «Թեորետիկը» կատակ չէր անում և հարկ եղած դեպքում կիրագործի իր սպառնալիքը…

Բայց տարօրինակ է մարդու հոգեբանությունը, հատկապես՝ երիտասարդ մարդու: Ամենադժվարին կացության մեջ անգամ նա փնտրում և գտնում է լուսավոր մի ելք կամ գոնե հույսի մի նշույլ: Փիթին դեռ լրիվ չէր սառել Վահրիճի առջևում, երբ նա եկավ այն եզրակացության, որ իրեն անմիջական վտանգ դեռևս չի սպառնում: Ոչ ոք նրանից չի պահանջել, որ նա հենց այս րոպեից և ամեն քայլափոխին քյալլագյոզություն անի: Հարցը, ճիշտն ասած, վերաբերում է միայն հրապարակային ելույթներին ու զեկուցումներին, որոնց սովորաբար ներկա են գտնվում նաև դաշերիտները: Այ, այդ ժամանակ, իսկապես որ, Վահրիճն ստիպված պիտի լինի ունենալ ձախ ելույթներ: Իսկ ո՞վ գիտե, ե՞րբ է տեղի ունենալու հաջորդ հրապարակային զեկուցումը: Եվ հետո, Վահրիճը կարող է նույնիսկ մի երկու անգամ չգնալ, բացակայել, հիվանդ լինել: Ի՞նչ է, դաշերիտներն իրենք չե՞ն հիվանդանում…

Մալարիայի հիվանդանոցի քարտուղարն այնքան ներշնչեց իրեն այդ լավատեսական մտքերը, որ նրա ախորժակը նույնիսկ բացվեց և նա կերավ դաշերիտների հյուրասիրած փիթին: Իսկ ուտելու ընթացքում նա հիշեց իր մանկությունը և ընդհանրապես անցյալը…

Վահրիճն իրենց գյուղի ամենահարուստ մարդու երեխան էր: Նրա ծնողները չափից դուրս գոհ և հպարտ էին իրենց բացառիկ կեցությամբ և նույն ոգով դաստիարակում էին նաև Վահրիճին: Երեխան, ուզեր, թե չուզեր, խաղ էր անելու գյուղի մյուս երեխաների հետ, այսինքն՝ չքավորների: Եվ ահա, խաղի կեսին, մայրը ձայն էր տալիս նրան: Վահրիճը վազում էր տուն: Մայրը տալիս էր նրան մի մեծ կտոր հաց՝ վրան յուղի հաստ շերտով:

— Տար կեր,— կարգադրում էր մայրը:— Ոչ ոքի չտաս:

Վահրիճը վերադառնում էր երեխաների մոտ՝ ուտելիքը ձեռքին: Խաղընկերները, բոլորը սոված, թողնում էին խաղը և հավաքվելով նրա շուրջը, թուքը կուլ տալով լուռ հետևում էին նրա կծելու, ծամելու, կուլ տալու յուրաքանչյուր շարժմանը:

Վահրիճը ոչ միայն չէր քաշվում նրանց հայացքներից, այլև մեծ բավականություն էր զգում իր բացառիկ կեցությունից, այն բանից, որ ինքն ուտում է, իսկ մյուսները նայում են: Շեմքի վրայից նայում և նույնպես բավականություն էր զգում նրա մայրը:

Վահրիճի ծնողներն ընդհանրապես ատում էին գյուղի բոլոր երեխաներին: Նրանք բոլորը, կիսաքաղց ու կիսամերկ, կլորիկ էին, թմբլիկ, կարմրաթուշ, իսկ իրենց Վահրիճը չնայած տեսակ-տեսակ սննդարար ուտելիքներին և իր ագահ ախորժակին, շարունակ նիհար էր՝ «ճլերք» ընկածի նման:

Կուլակ Մնացականի ընտանիքի կյանքն ընդհանրապես եսասեր, մարդատյաց և ծայր աստիճան անկիրթ մարդկանց կյանք էր: Նրանց գերագույն բավականությունն իրենց հարուստ լինելն աղքատների աչքի առջև ցուցադրելն էր: Եթե նրանք ոչխար էին մորթում՝ ապա ոչ թե բակում, այլ փողոցում, բոլորին ի տես: Նոր գորգ էին գնում՝ ապա մի քանի օր շարունակ դա կախված պիտի լիներ բակում, պարանի վրա, որպեսզի պատի ետևից բոլորը տեսնեին նրանց այդ նոր իրը: Գնում էին սնանկացած մի ընտանիքի միակ կովը՝ ապա այնպես պիտի կթեին այն, որ դրա նախկին տերը, նրա կինն ու երեխաները տեսնեին և հառաչեին…

Նույն բացառիկ կեցության մեջ էր Վահրիճը նաև հետագայում, դպրոցում: Նա լավ էր սովորում և դա հասկանալի էր: Նա կարիք չուներ այս կամ այն հոգսի պատճառով դասերից բացակայելու կամ ուսումը վերջնականապես թողնելու և հոտաղություն անելու: Նա միշտ ունենում էր բոլոր դասագրքերն ու գրենական պիտույքները, միշտ պատրաստում էր դասերը: Քաղցն ու այլ հոգսերը չէին խանգարում նրան:

Եվ ահա, ինչպես ձյունը օգոստոս ամսին, վրա հասավ խորհրդային իշխանությունը: Կուլակ Մնացականի կյանքը միանգամից փոխվեց: Ճիշտ է, ոչ ոք ձեռք չէր տվել նրանց հարստությանը, բայց այժմ հարկավոր էր խնամքով թաքցնել դա ուրիշների աչքերից, հարկավոր էր ձևանալ «միջակ» և եթե հնարավոր էր՝ նույնիսկ «չքավոր»:

Վահրիճը, գավառական կենտրոնի միջնակարգ դպրոցն արդեն ավարտած, իրենց գյուղի «ամենաուսումնական» երիտասարդը, հանկարծ զգաց, որ իր բացառիկ կեցությունը հասել է իր վախճանին: Ոչ իր հոր հարստությունը և ոչ էլ նույնիսկ իր կրթված լինելն այժմ հիմք չէին տալիս նրան՝ համարվելու գյուղի ամենաառաջին երիտասարդը: Այժմ արդեն առաջին պլանի վրա էին բատրակներն ու չքավորները, նրանց կիսաքաղց և անուսում զավակները: Այժմ նրանք էին հասարակության շարժիչ ուժը, նրանց էին ընտրում զանազան մարմինների մեջ, նրանցից էին ընդունում կուսակցության և կոմերիտմիության մեջ:

Որոշ ժամանակ կողքից դիտելով այդ ամենը և ավելի ու ավելի մեծ ատելությամբ լցվելով դեպի նոր ժամանակի առաջավորները, Վահրիճը հանկարծ կատարեց իր համար մի մեծ հայտնագործություն: Նա հասկացավ, որ չկար ավելի հեշտ ու հասարակ բան, քան կոմերիտական դառնալը: Ի՞նչ առանձին հնար կար այդտեղ: Ի՞նչ գիտություն էր պահանջվում դրա համար: Եթե երեկվա սոված ու անուսում բատրակը կարող է լինել կոմերիտական, ինչո՞ւ, առավել ևս, չի կարող լինել Վահրիճն ինքը: Ժողովում մի փսլնքոտ վեր կկենա և կբղավի՝ «Կեցցե Կոմինտերնը», իսկ դու նրանից էլ ավելի ուժեղ բղավիր՝ «Կեցցե Կոմինտերնն էլ, Պրոֆինտերնն էլ, Սպորտինտերնն էլ»… Ուրիշ ոչինչ: Կամ թե չէ, մի ուրիշն իր ելույթի մեջ կասի՝ «Կորչի իմպերիալիզմը», իսկ դու ասա՝ «Թող հավետ կորչի արյունարբու իմպերիալիզմը»: Ամոթ էլ է, որ Վահրիճը չանցնի նոր առաջ եկած «երեկվա անբան անասուններից…»:

Այդ բոլորը լավ: Իսկ ի՞նչն է խանգարում նրան: Հայրը… Եվ շատ է խանգարում: Շատ: Իսկ հայրը կալվածք չէ, որ հրաժարվես դրանից ու վերջանա-գնա: Հայրը քո «սոցիալական ծագումն» է…

Երկար ծանր ու թեթև անելուց հետո Մնացականի ընտանիքը լուր տարածեց, թե իբր իրենց տղան մեկնում է Ռուսաստանի «ներսերը»՝ «պրաֆեսորություն» սովորելու: Ախ, երանի թե, իսկապես, էն գլխից հենց այդպես էլ արած լիներ Վահրիճը… Բայց նա եկավ ընդամենը Երևան, նույնիսկ չփոխեց իր անուն-հայրանուն-ազգանունը և բավականացավ միայն իր ծննդավայր գյուղի անունը

կեղծելով: «Ծով Հայաստան է,— մտածում էր նա,— ինձ ո՞վ պիտի ճանաչի էս ահագին քաղաքում…»:

Փիթին վերջացավ: Վահրիճը մի կուշտ որձկոց արձակեց և դա նրա մեջ ավելի ուժեղացրեց լավատեսությունը: Ի՞նչ է պատահել որ… Ոչինչ էլ չի պատահել: Ո՞վ է տեղեկացել իր «սոցիալական ծագման» մասին: Դաշերիտները, այսինքն՝ յուրայինները: Նրանցից վնաս չկա: Այ, ուրիշ բան կլիներ, եթե այդ մասին իմանար թեկուզև մի կոմերիտական…

Այնուամենայնիվ, չնայած այդքան լավատեսական մտքերին, երբ Վահրիճը դուրս ելավ «փիթիխանայից», նրա տրամադրությունը սարսափելի ընկած էր և արևը մթնել էր նրա գլխին…

31

Ամբողջ օրը Ցողիկը մտածում էր՝ կգա՞ Մուրադը, թե ոչ… Ապա, սթափվելով, լուռ հանդիմանում էր իրեն.— «Եվ ամոթ չէ՞ քեզ՝ այդքան անհանգստանալ մի տղայի համար, որին դեռ երեկ չէիր էլ ճանաչում…»:

Օգնելով քեռու կնոջը ճաշ պատրաստելու և տնային այլ գործերում, նա, շարունակ ականջը կախ, սպասում էր շինարարների աշխատանքի ավարտմանը, որպեսզի դուրս վազեր և նորից պարտադրեր Մուրադին գալ անպայման, անպայման…

Ճիշտ է, Ցողիկը մի անգամ բակից լսեց զանգի հնչյուններ, բայց դա, ըստ երևույթին, բանթողի ազդանշան չէր, որովհետև դրանից հետո ևս մրճիկների չկչկոցները չդադարեցին:

Ցողիկը, մի գոգնոց առջևը կապած, ամանեղենը չորացնելու սրբիչն ուսին գցած, աշխատում էր թափթփված և անկարգ խոհանոցում և մտածում էր: Ինչ տարօրինակ են սիրո ճանապարհները… Մանկությունից ի վեր ճանաչում ես մի տղայի, տարիներ շարունակ խաղ ես արել նրա հետ, տխրել ես և ուրախացել երեխայական հասակի խնդություններով և դառնություններով, բայց այսօր չես կարողանում սիրել նրան, իսկ մի ուրիշին, որին դեռ երեկ…

Իսկ ի՞նչ գործ ունի այստեղ սերը… Մի՞թե կարելի է լինել այդքան թեթևսոլիկ… Մուրադը պարզապես դուր է գալիս նրան, բայց այնքան է դուր գալիս, որ դա համարյա նման է սիրո…

Տարօրինակ էր տեսնել այդ գեղեցիկ, բարեկազմ, արիստոկրատ աղջկան իր նրբաճաշակ հագուստի վրա քեռու կնոջ անճոռնի գոգնոցը կապած, քաղքենիական կուշտ և գռեհիկ խոհանոցում կանգնած, ափսեները սրբելիս: Թվում էր, թե անտիկ աշխարհի մի արձան էր վար իջել իր պատվանդանից, առել շունչ ու հոգի, և զբաղվում էր իրեն այնքան անհարիր երկրային գործերով…

Ցողիկը հանկարծ նայեց իր թևի փոքրիկ ժամացույցին: Մի՞թե շինարարները մինչև հիմա աշխատում են… Շտապ սրբելով վերջին ափսեները, նա հանեց գոգնոցը, դուրս ելավ բակ:

Կառուցվող շենքի վրա և շուրջը ոչ ոք չկար: Ըստ երևույթին բանվորները վաղուց էին գնացել՝ դեռ այն ժամանակ, երբ Ցողիկը լսել էր զանգի հնչյունները: Միայն երեք ծեր քարտաշներ էին մնացել արտաժամյա աշխատանքի…

«Պետք է գնալ տղաների մոտ»,— վճռեց Ցողիկը և հագնելով ժակետը, ելավ փողոց: Քեռու կնոջը նա միայն այնքանն ասաց, որ շուտով կվերադառնա:

Կոմերիտականների սենյակում գտնվում էր միայն Վահրիճը: Փիթիից հետո այլևս պահանջ չզգալով ճաշելու, նա ուղղակի եկել էր տուն:

Լսելով դռան թակոցը, նա, առանց վեր կենալու, ասաց՝ «մտեք»: Տեսնելով Ցողիկին, նա արագ վեր կացավ՝ ոչ իհարկե քաղաքավարությունից դրդված, այլ հետաքրքրված:

— Ներեցեք, ես ուզում էի Վարդանին:

— Ներս արի,— հրավիրեց Վահրիճը և, ուղղելով իրեն, կրկնեց.— Համեցեք: Ուր որ է՝ կգա:

Աղջիկը նստեց Վարդանի թախտի ծայրին:

Վահրիճը, որի տրամադրությունը մինչ այդ շատ վատ էր, աշխուժացավ: Սենյակում իրենց մենակ գտնվելը հուսադրեց նրան և մոռացնել տվեց նախորդ օրվա իր անբարյացակամությունն աղջկա նկատմամբ: Այժմ նրան թվաց, թե ինքը երեկ սխալվում էր՝ նույնպիսի անբարյացակամություն վերագրելով նաև աղջկան իր հանդեպ: Պարզապես նրանք դեռ չեն ճանաչում միմյանց: Ուրեմն հարկավոր է ճանաչել…

Ցողիկի արտաքին գեղեկցությունը, այն էլ՝ հոգեկան գեղեցկության լույսով թափանցած, Մալարիայի հիվանդանոցի քարտուղարին գամել էր իր տեղում: Մինչև այդ նրան անծանոթ մի ուժ, որը ճառագում էր աղջկանից, կաշկանդել էր նրա լեզուն, նրա շարժումները:

Գուցե երկար մնար Վահրիճը մեծ գեղեցկության հմայքից անշարժացած, եթե նրա ուղեղով չանցներ այն միտքը, որ ահա այս արտակարգ, անթերի աղջիկը պատկանում է Վարդանին… Նույն պահին երեք զգացմունք, իրար փոխարկվող, փոթորկվեցին նրա հոգու մեջ: Նախ նա զգաց մի կատաղի նախանձ Վարդանի հանդեպ, ապա, դրանից էլ ավելի ուժեղ, գիտակցությունը մթագնող այնպիսի մի ատելություն, որ նրա մարմինն անգամ տնքաց անտանելիորեն մեծ, նրա վտիտ կազմվածքի մեջ չտեղավորվող այդ զգացմունքից: Եվ ապա, վերջապես, նրա մեջ ծագեց վրեժխնդրության, Ցողիկին Վարդանից խլելու այնպիսի մի մրրկալի ցանկություն, որ նա նույնիսկ զրկվեց դատելու ընդունակությունից, կշռելու, թե հնարավո՞ր էր դա արդյոք: Խլել՝ ինչ գնով էլ լինի: Եվ դա ոչ այնքան Ցողիկի հմայքների համար, որքան որ Վարդանին ջախջախելու: Համարյա միայն դրա համար: Ոչ թե համարյա, այլ լոկ միայն դրա համար: Չէ՞ որ Վարդանն այժմ կյանքում զբաղեցնում է այն տեղը, որը հեղափոխությունից առաջ պատկանում էր Վահրիճին…

Ի՞նչ անել… Եթե ուրիշ պարագաներում լիներ՝ Վահրիճը չէր տատանվի նույնիսկ ուժ գործադրել աղջկա վրա: Բայց այժմ, այստեղ, այս ժամին, երբ ամեն րոպե կարող են ներս մտնել կոմերիտականները…

«Ուրեմն հարկավոր է դիմել փորձված մեթոդին»,— վճռեց Վահրիճը: Հարկավոր է «գիտական» զրույց սկսել Ցողիկի հետ: Այդ «թեման» կարող է հավասարակշռությունից հանել ամենասառնարյուն աղջկան անգամ: Միայն թե հարկավոր է կամաց-կամաց, քայլ առ քայլ տանել աղջկան զրույցի «խորքերը», առաջացնել նրա հոգու մեջ համապատասխան «հուզմունք»:

Ճիշտ է, Ռոկլանայի նկատմամբ այդ «մեթոդը» չտվեց ոչ մի արդյունք՝ եթե արդյունք չհաշվենք Վահրիճի ստացած շառաչուն ապտակը, բայց այստեղ Ռոկլանան չէր մեղավորը, այլ Վահրիճն ինքը, որի համբերությունն ի վերջո կտրվեց և նա դիմեց «դիկտատորական» միջոցի: Ոչ, նրա «մեթոդը» փորձված է ուրիշ մի քանի աղջիկների նկատմամբ…

— Քանի՞ տարեկան եք, Ցողիկ,— հարցրեց հանկարծ լողլողը:

— Դա ի՞նչ հարց է,— զարմացած նայեց նրան աղջիկը:

— Մատղաշ եք երևում:

— Իսկ ի՞նչ է նշանակում մատղաշ,— բառը չհասկանալով հարցրեց Ցողիկը:

— Այսինքն՝ քյորփա:

— Չեմ հասկանում ձեզ,— ասաց աղջիկն անտարբեր՝ տեղից վեր կենալով: Նայելով շուրջը նա օրորեց գլուխը:— Փնթի եք ապրում, ընկեր կոմերիտականներ, նույնիսկ չեք հարդարում ձեր անկողինները…

Նա սկսեց կարգի բերել անկողինները՝ նախ Վարդանինը, ապա Մուրադինն ու Գառնիկինը, իսկ վերջում մոտեցավ նաև Վահրիճի անկողնին: Լողլողը մի կողմ քաշվեց՝ նրան չխանգարելու համար:

— Գիտե՞ք ինչու հարցրի ձեր տարիքի մասին,— բացատրեց Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը:— Որովհետև նույնիսկ դժվար է ասել՝ դուք արբունքի հասե՞լ եք արդեն, թե ոչ:

Ցողիկը, որն արդեն ավարտում էր նրա անկողինը հարդարելը, կտրուկ շուռ եկավ և ապշած նայեց երիտասարդին:

— Ի՞նչ եք կարծում, Ցողիկ, ե՞րբ է արբունքի հասնում ձեր սեռը…

— Что за мерзость!— ասաց Ցողիկը՝ զայրույթից և ամոթից կաս-կարմիր կտրվելով:

Բայց Վահրիճը, ինքն արդեն բորբոքված, որոշեց շարունակել: Բոլոր կանանց և աղջիկների մասին ունենալովամենավատ կարծիքը, նա համոզված էր, որ բոլորն էլ վաղ թե ուշ տեղի կտան իրենց «զգացմունքին»՝ միայն թե հարկավոր է հաստատուն կերպով տանել «համապատասխան գիծ»…

— Մի րոպե լսեցեք ինձ, Ցողիկ,— խնդրեց նա:— Մենք, տարբեր սեռերի երկու ներկայացուցիչներ, ահա գտնվում ենք մի սենյակում և մեզանից բացի ոչ ոք չկա էստեղ: Խոսենք բացեիբաց՝ ինչպես վայել է ներկա պայմաններում: Մենք…

Նրա խոսքը մնաց կիսատ: Ցողիկը, իր զայրույթի մեջ ոչ միայն շլացուցիչ կերպով գեղեցիկ, այլև պերճախոս կերպով սպառնական, մի քայլ արեց դեպի կուլակ Մնացականի որդին: Դժվար էր ասել, թե նրա որ այտի վրա կդրոշմեր աղջիկն իր ապտակը, բայց այդ րոպեին դուռը բացվեց և ներս մտավ Մուրադը:

— Մուրադ…— բացականչեց Ցողիկը՝ նետվելով դեպի նա և համարյա գրկելով նրան, կարծես պատսպարվելով նրա պաշտպանության տակ: Ապա, հավաքելով իրեն, հարցրեց հանգիստ.— Դուք որտեղի՞ց եք գալիս այսքան ուշ: Ձեր աշխատանքը վաղուց է ավարտվել:

— Գնացել էի ճաշելու…— կմկմաց տղան:

— Այ-այ-այ…— հանդիմանեց աղջիկը և այլևս ավելորդ համարելով պահպանել Վահրիճի նկատմամբ որևէ տակտ, շարունակեց.— Չէ՞ որ ես ճաշի եմ հրավիրել ձեզ, Վարդանին և Գառնիկին…

— Կգանք, անպայման կգանք,— շփոթված ժպտաց շինարար բանվորը:— Բայց խո ուտելու համար չե՞նք գա, այլ զրույց անելու: Դրա համար էլ նախապես գնացինք ճաշելու:

— Նրա՞նք էլ են ճաշում,— բացականչեց աղջիկը:

— Երևի: Ես ընդրանց… նրանց չեմ տեսել:

Լսելով, որ աղջիկը ճաշի է հրավիրել բոլորին՝ բացի իրենից, Վահրիճն այնպիսի մի թույնով նայեց դեպի խոսակիցները, որ եթե նա ունենար Մուրադի կազմվածքը և ուժը, իսկ Մուրադը՝ նրանը, նա տեղնուտեղը կխեղդեր երկուսին էլ, իհարկե, սկսելով աղջկանից:

Մնացականի տղայի հայացքն ընկավ իր հարդարված անկողնին: Բարձրացնելով «գետրի» հագած իր ոտքը, նա հանկարծ մի քացի տվեց իր թախտին, ապա, նույն ոտքով, քանդեց-ավերեց անկողինը:

— Մեշչանական բարեկեցության թարախը չմտցնել մեր սենյակը,— ճղավեց նա:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Մուրադը՝ մեկ Վահրիճին նայելով, մեկ Ցողիկին:

— Ոչինչ,— ասաց Ցողիկը հանգիստ։— Ես հարդարեցի ձեր անկողինները, իսկ այդ բանը, ինչպես տեսնում եք, դուր չի գալիս ձեր ընկերոջը։

— Փոխանակ շնորհակալություն հայտնելո՞ւ,— շուռ գալով դեպի լողլողը, ասաց Մուրադը։— Ախմ…

Կիսատ թողնելով բառը, նա դիմեց աղջկան՝ հուզմունքից մոռանալով հոգնակի խոսելը.

— Ցողիկ, խնդրում եմ քեզ, մի քանի րոպեով գնա Լիլիայի մոտ։ Նա մենակ է։ Մորը ես հենց նոր տեսա սանդուղքի վրա, բաղնիք էր գնում բոխչայով, իսկ հերն ուշ է տուն գալիս։ Խնդրում եմ։ Մենք էստեղ կոմսոմոլիստական մի փոքրիկ հարց պիտի լուծենք… դռնփակ։

Ցողիկը նայեց բանվորի ատլետիկ կազմվածքին, ցասումը զսպված հանգիստ դեմքին, և նրա մտքով անցավ ակամայորեն.— «Ոչ, ոչ… Ոչ թե համարյա սեր է դա, այլ ուղղակի սեր… Աստված իմ, այդպես հանկարծակի»…

Եվ ելավ դուրս։

Մուրադը դանդաղ մոտեցավ Վահրիճին, կանգ առավ ընդհուպ նրա դիմաց և, նրանից մի քիչ ցածրահասակ, վարիցվեր նայեց նրա աչքերին։

— Լսիր, սրիկայի մեկը… Եթե մի անգամ էլ վիրավորես էդ հրեշտակին, մորս գերեզմանով եմ երդվում, որ շանսատակ կանեմ քեզ ու ինքս էլ կներկայանամ միլիցիայի քաղաքամասը՝ Մարքսի փողոցի վրա։

Ձայրույթից սրամիտ դառած, նա ավելացրեց.

— Դու խո գիտե՞ս. ինը մատներս մեռյալ ժամ կհայտարարեն, իսկ ես քեզ հենց մի մատով կսատկացնեմ…

— Ես ի՞նչ եմ արել որ…— կմկմաց Վահրիճը։

— Էլ ի՞նչ պիտի անես։ Նա առանց զզվելու կարգի է քցում մեր կեղտոտ անկողինները, իսկ դու ոտքով քանդում ես նրա սարքածը։ Չէ՞, ախր դու կոմերիտական ես և էն էլ՝ բատրակի տղա…

Մուրադը հազիվ էր լսել իր իսկ արտասանած «բատրակի տղա» խոսքերը, երբ հանկարծ մի անսպասելի միտք ցնցեց նրան և ետ շպրտեց Մալարիայի հիվանդանոցի քարտուղարից։ Ճաշարանում նախորդ օրվա իր խոսակցությունը համագյուղացիների հետ մի վայրկյանում վերականգնվեց նրա հիշողության մեջ և նա բացականչեց, համարյա բղավեց.

— Բայց դու բատրակի տղա չես, այլ կուլակի լակոտ…

— Ինչո՞ւ ես հայհոյում ինձ…— սիպ-սպիտակելով, արտասանեց Վահրիճը։

— Դու բատրակի տղա չես,— այս անգամ լիաձայն բղավեց Մուրադը։— Դու արնախում կուլակ Մնացականի լակոտն ես։ Գյուղում լուր ես տարածել, թե գնում ես Ռուսաստան՝ պրոֆեսոր դառնալու, իսկ ինքդ եկել-խցկվել ես կոմսոմոլի մեջ…

Այնքան ապշեցուցիչ էր Մուրադի համար այդ ամենը, որ նա ինքն էլ չհավատաց իր ասածին, չհավատաց երեկվա իր լսածին։

— Ասա, ճի՞շտ է դա,— հարցրեց նա պահանջկոտ։

Վահրիճը, այլայլված դեմքով, թուլացած նստեց իր անկողնի վրա՝ առանց կարողանալու մի բառ արտասանել։

— Ես քեզ հետ չե՞մ,— բռնելով նրա վերնաշապկի օձիքից ու ցնցելով, ասաց Մուրադը:— Եվ դու խաբել ես մեզ, թե դաշտային շրջանների այսինչ գյուղից ես: Դու փեշերի գյուղերից ես, կուլակի ծպտված զավակ…

Որքան շատ էր մերկացնում Մուրադը Վահրիճին, այնքան քիչ էր հավատում դրան, ավելի ճիշտ՝ չէր ուզում հավատալ: Նա այդ րոպեին այնքան տրամադիր էր համոզվելու, որ ինքը սխալվում է, որ եթե Վահրիճն իսկույն սկսեր ժխտել, Մուրադն անմիջապես կհրաժարվեր իր մեղադրանքներից: Նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իրոք, իրենց հետ նույն հարկի տակ ապրող ընկերը կուլակի տղա է, և ինքն ահա մերկացնում է նրան: Դա արտակարգ, բացառիկ դեպք էր և իբրև այդպիսին չէր կարողանում տեղավորվել պարզամիտ երիտասարդի գիտակցության մեջ:

Վահրիճը, վերջապես, գերագույն ճիգ գործադրելով իր վրա, հավաքեց իրեն: Բայց նա հասկացավ, որ ջնջել իր շփոթմունքն ու այլայլվելը ծիծաղով կամ հանգիստ տոն բռնելով՝ այլևս ուշ է: Ուրեմն հարկավոր էր այլ կերպ վարվել: Եվ իրոք, ոչ միայն չծածկելով իր շփոթմունքը, այլ ավելի ընդգծելով այն, նա կմկմաց.

— Վերջ… Վերջ մեր ընկերությանը… Ես այլևս չեմ կարող ապրել այն հարկի տակ, որտեղ ինձ վրա կասկածում են: Եթե դու, Մուրադ, ինձ հայհոյեիր՝ անվանելով կուլակի զավակ, ես դա կարող էի ներել: Բայց եթե դու ոչ թե հայհոյում ես, այլ էդպես անվանում ես ինձ ուղղակի իմաստով՝ այդ արդեն…

Նա նյարդային շարժումներով հավաքեց իր անկողինը, ծալեց, ապա տակից դուրս քաշեց իր արկղը:

— Ես հենց հիմի ֆայտոն կնստեմ, կգնամ մեր գյուղը ու էնտեղից տեղեկանք կբերեմ, թե ով եմ ես՝ բատրակի՞ զավակ, թե կուլակի: Էն ժամանակ, Մուրադ, առաջինը դու ինքդ ներողություն կխնդրես ինձնից, բայց արդեն ուշ կլինի: Էլ սրանից հետո մենք չենք կարող իրար հետ ապրել: Մնաս բարև: Թող քու կոմերիտական խիղճը լինի քու դատավորը, նախկին ընկեր…

Նա շալակեց անկողինը, բռնեց սնդուկի ունկը և մի ուժեղ քացիով բաց արեց սենյակի դուռը: Նախասենյակից, թարս քացիով նա շրխկալի ծածկեց այն և նրա ոտնաձայնը մարեց արագ, ինչպես փախչողի ոտնաձայն…

32

Վարդանը գնացել էր ոչ թե ճաշարան, այլ տպարան: Օրվա ամբողջ մնացյալ մասը մտածելով իր գրած պատմվածքի մասին, նա եկել էր այն հաստատ եզրակացության, որ ինքն անպատասխանատու հիմարի մեկն է և ուրիշ ոչինչ: «Ինչպե՞ս կարելի է, իրոք որ, պատմվածքը գրել մի քանի րոպեում և տպագրության տալ հենց առաջին գրչից… Իսկ այժմ, հազիվ մի քանի ժամ անցած, նա, վերհիշելով իր գրածը, այնտեղ տեսնում է այնքա՜ն թերություններ, համատարած թերություն…

Տպարանում նա այնքան փոխեց-փոխփխեց իր գրածը, որ հարկ եղավ նորից արտագրել այն: Լավ էր, որ գրաշարները դեռ չէին շարել: Վարդանը փոխեց նաև ազգանունը: Արամայիսն այժմ Գևորգյան չէր, այլ Ախուրյան՝ նրա հայրենի Լենինականի մոտով անցնող գետի անունով: Հրայրը երեկոյան տպարան գալով կկարդա այդ նորամուծությունները և, իհարկե, գոհ կմնա:

Երբ Վարդանը մտավ իրենց սենյակ, նա իսկույն նկատեց Վահրիճի թախտի մերկությունը:

— Ի՞նչ նորություն է,— հարցրեց նա մտածկոտ նստած Մուրադին:

— Որ ասեմ՝ կշշմես…

Եվ Մուրադն սկսեց արագ-արագ պատմել նախորդ օրվա խոսակցության և այդ օրվա պատահածի մասին: Նրա խոսելու ընթացքում Վարդանն անընդհատ բացականչում էր կամ արտասանում կիսատ բառեր՝ առանց կարողանալու լրիվ արտահայտել իր զարմանքն ու հետաքրքրությունը, ավելի ճիշտ՝ աշխատելով չընդհատել ընկերոջը:

— Իսկ հիմի,— ավարտեց Մուրադը,— չնայած էդքան փաստին, նստել ու մտածում եմ, թե իզուր չզրպարտեցի՞ մի մարտական ընկերոջ…

— Վերջ տուր, վերջ տուր,— բարկացավ Վարդանը:— Մարտական ընկե՜ր… Ավելի լավ է՝ դու էն մասին մտածիր, թե ինչպես մենք երեքս էլ կույր ենք եղել մինչև հիմա, չենք նկատել խորթ տարրը մեր հարկի տակ: Ամոթ ու խայտառակություն… Եթե ես Գրիգորյանի տեղը լինեի, մեզ երեքիս էլ իսկույն կվտարեի կոմերիտմիությունից…

— Երևակայիր, դա ճիշտ է,— համաձայնվեց բանվոր շինարարը:— Մարդ էլ էդքան շշմած լինի՞, որքան որ մենք էինք: Հիմի որ ետ եմ նայում հիշում, ախր նա փաստորեն սկի ծպտված էլ չէր: Ընդրա… նրա ամեն մի խոսքի ու քայլի մեջ երևում էր, որ նա ուրիշ մարդ է, մերոնցից չի: Վարդան,— բացականչեց նա հանկարծ,— խնդրում եմ քեզ, արա մի ընկերական ծառայություն, հայհոյիր ինձ ձեր Գյումրու էն թունդ խոսքերով ու մի երկու հատ էլ հասցրու դդումս գլխիս: Խնդրում եմ՝ որպես կոմերիտականը կոմերիտականին…

Մի ուրիշ դեպքում Վարդանն անշուշտ պիտի ծիծաղեր նրա խնդրի վրա, բայց այժմ ասաց լուրջ կերպով.

— Ե՞ս քեզ ծեծեմ, թե դու ինձ: Ես ավելի եմ մեղավոր, քան դու և Գառնիկը միասին: Ուրիշ անգամ որ լինի՝ կլոպազանամ, թե ես ձեզանից ավելի կուլտուրական եմ, ավելի կարդացած, բանիմաց… Ես թքել եմ ուզում էդ բոլորի վրա, եթե մի կուլակի լակոտի էլ չեմ կարողացել մերկացնել: Ճիշտ էր ասում Կենտկոմի քարտուղարը, որ երբ մարդ մարդու ատում է, պիտի նայի աստառի կողմը, թե արդյոք դասակարգային չէ՞ էդ աստառը…

— Իսկ ես, Վարդան, լա՞վ արեցի, որ թողեցի Վահրիճին գնալու:

— Բա ուրիշ ի՞նչ կարող էիր անել: Միլիցիա՞ կանչեիր: Բայց նա ոչ գողություն է արել և ոչ էլ մի ուրիշ էդպիսի բան: Միլիցիոները քեզ կասեր՝ էդ քու ներքին, միութենական գործն է, ինձ ինչո՞ւ ես անհանգստացնում…

— Բայց մի՞թե էդ սրիկան իրենց գյուղ գնաց: Իհարկե ոչ: Նա երևի գնաց մի ուրիշ քաղաք՝ էնտեղ էլ խաբելու ու մի տեղ խցկվելու:

— Եվ լավ էլ կանի:

Մուրադը ծայր աստիճան զարմացած նայեց նրան:

— Այո, այո,— պնդեց Վարդանը:— Լավ էլ կանի: Դրա համար էլ նա կուլակի զավակ է, խորթ տարր: Իսկ դու, եթե տղամարդ ես, խտացրու շարքերդ, որ ուրիշները չխցկվեն էնտեղ: Իսկ եթե խցկվեցին՝ միայն քեզ վրա կատաղիր, ոչ թե մեկ ուրիշի: Մենք խո չէի՞նք կարող էդ սրիկային տեղեկանք տալ, թե «տրվում է սույնը առ այն, որ տվյալ քաղաքացին շունշանորդու մեկն է և բոլորին խորհուրդ է տրվում զգուշանալ նրանից»:

— Գիտե՞ս ինչ,— ասաց Մուրադը հանկարծ:— Շատ լավ արեցիր, որ չհայհոյեցիր ինձ ձեր Գյումրու էն թունդ խոսքերով ու մի երկու հատ էլ չհասցրիր գլխիս: Ոչ ես եմ մեղավոր, ոչ էլ դու կամ Գառնիկը: Մեղավորը Երևանի կոմիտեի նախկին քարտուղարն է և ակտիվիստների մի մասը: Այո, այո: Փոխանակ կոմերիտականին իր աշխատանքով չափելու, խոսքերով էին չափում: Ում ֆրազներն ավելի ճռճռան էին, նրանք էլ համարվում էին ամենալավ կոմերիտականները: Եվ հենց իրենք էլ առաջին հերթին: Դե, եթե ֆրազն է չափանիշը, ի՞նչ դժվար բան կա էդտեղ, ամեն մարդ էլ

կարտասանի: Իսկ ընդրանից օգտվում էին զանազան Վահրիճները: Դե արի ու գտի, թե որն է էդտեղ բանվորի տղան, որ միայն քյալլագյոզ է, և որն է կուլակի լակոտը, որը թշնամի է…

— Կեցցես, Մուրադ,— բացականչեց Վարդանը,— դու քո բանվորական հոտառությամբ շեշտն էնպիսի մի կենտրոնական տեղ դրեցիր, որ ես ուղղակի նախանձում եմ քեզ: Միայն թե, եկ դրանով մեղքը մեր վրայից բոլորովին չքերենք: Մենք էլ, մեր հերթին, զգոն չենք եղել և…

Դուռը թակեցին:

— Ցողիկն է,— սթափվեց Մուրադը:— Ախր նա եկել էր մեր ետևից, մտավ Լիլիայի մոտ: Համեցեք,— ձայն տվեց նա,— մտիր…

Դուռը բացվեց և դանդաղ քայլերով ներս մտավ Ռոկլանան:

— Բարև, Մուրադ:

— Իսկ ինչո՞ւ մենակ ինձ:

— Ես էդ քաղաքացուն… ընկերոջը, ցերեկը տեսել եմ: Իսկ Գառնի՞կը որտեղ է:

— Դեռ չի եկել: Նստիր:

— Շո՞ւտ է գալու:

— Կգա: Գո՞րծ ունես հետը:

— Իմ գործը բոլորիդ հետ է, նույնիսկ էն… Վահրիճի: Ի՞նչ է, ջհաննամվե՞լ է ձեր մոտից:

— Ջհաննամվել է: Որ ասեմ թե ինչու՝ կշշմես:

— Ավելի լավ է՝ առաջ ես ասեմ: Գառնիկին սպասել չեմ կարող, շտապում եմ, երեկոյան կարմիր կնունք եմ անցկացնելու, պիտի պատրաստվել: Ուրեմն, լսիր, Մուրադ… Խոսքը վերաբերում է լուռ ու մունջ նստած էդ քու ընկերոջը…

Բայց նա չկարողացավ շարունակել: Դուռը նորից թակեցին և այս անգամ մտավ Ցողիկը:

Ռոկլանան, կարծես կարիճից խայթված, վեր ցատկեց տեղից, զարմանքով և ատելությամբ նայեց այդ «մեշչանկային»՝ կոմերիտականների սենյակը մտած, ապա կտրուկ շուռ գալով դեպի տղաները, խուզարկու նայեց՝ որոշելու համար, թե նրանցից որի՞ն է «վերաբերում» այդ «մանր բուրժուան…»:

— Ռոկլանա, ծանոթացիր իմ մանկության ընկերուհու հետ,— ասաց Վարդանը:

— Ցողիկ…— անվանեց աղջիկն իրեն՝ ձեռքը մեկնելով: Բայց նրա ձեռքը կախված մնաց օդում: Ռոկլանան փոխանակ սեղմելու այն, իր ձեռքերը կոխեց կաշվե պիջակի վերին, ուղղահայաց գրպանների մեջ և փեշերը բերեց իրար վրա:

— Ռոկլանա…— արտասանեց նա անկախ տոնով:

Ցողիկը, աշխատելով չխորացնել գժտությունը, իսկ աղջկա կոպտությունը վերագրելով ոչ թե նրա անբարյացակամությանն իր հանդեպ, այլ նրա անկուլտուրականությանը, ասաց մեղմ ու հաշտ ձայնով.

— Ռոկլանա՞… Գուցե Ռոկսանա՞:

— Ես արդեն ասացի՝ Ռոկլանա:

— Այդպիսի անուն չկա,— ժպտաց Ցողիկը:

— Կա,— կացնի հարվածի պես չոր ու շեշտակի, բաց թողեց կաշվե պիջակավորը:

— Դա նոր անուն է,— բացատրեց Վարդանը:— Բաղկացած է Ռոզա Լյուքսեմբուրգի, Կլարա Ցետկինի և Նադեժդա Կրուպսկայայի անունների առաջին տառերից:

— Ռո… Կլա… Նա…— կազմեց Ցողիկը և ժպտաց:— Ստացվել է ոչինչ: Բայց մի՞թե ավելի վատ են գոյություն ունեցող անունները՝ Շուշան, Նվարդ, Աշխեն, Ռոզա…

— Ցողիկ…— թշնամաբար ավելացրեց Ռոկլանան:

— Այո, հենց թեկուզ Ցողիկ,— ժպտաց Վարդանի ընկերուհին:— Մի՞թե վատ անուն է:

— Կապիտալիզմի վերջին ստադիայի, այսինքն՝ իմպերիալիզմի համար դա ոչինչ, հարմար է,— փնչաց Ռոկլանան տղամարդավարի:— Բայց մենք, քաղաքացուհի, մի մոռացեք, որ նոր կյանքի շինարարներ ենք... Եվ մենք մարդիկ ենք, ոչ թե ծաղիկներ՝ Շուշա՛ն, Ռոզա՛…

Ցողիկը լրջացավ, թախիծով նայեց նրան և ասաց.

— Ի միջի այլոց, Շուշան՝ դա արթնացող բանվոր դասակարգի բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանի անունն է:— Նա այդ բանը հիշեց դպրոցում սովորածից:— Իսկ Ռոզա՝ դա, ինչպես ձեզ հայտնի է, Լյուքսեմբուրգի անունն է: Եվ չնայած դրան, ո՛չ նա, ո՛չ Կուրղինյանը…

Մուրադը, որ լուռ հետևում էր աղջիկների լեզվակռվին, շտապեց ընդհատել դա, որպեսզի չստանա ավելի սուր բնույթ և ինքն ստիպված չլինի հանդես բերել իր «արջավարի» միջամտությունը:

— Ժամանա՞կ գտաք վիճելու,— հանդիմանեց նա աշխատելով ձևանալ զվարթ:— Մենք ճաշի ենք հրավիրված Ցողիկի մոտ, ուշանում ենք…

Այդ նորությունն այնպիսի ներգործություն արեց Ռոկլանայի վրա, որ նա չկարողացավ որևէ բառ արտասանել, այլ միայն շուռ եկավ, լուռ նայեց Վարդանի աչքերին և հանդիմանական ու արհամարհական արտահայտությամբ, ցավակցաբար, օրորեց գլուխը: Իսկ նրա հայացքն ասում էր.— «Ամոթ քեզ, կոմերիտական… Չէ՞ որ ամեն մի գդալ ճաշի հետ դու այնտեղ կուլ ես տալու բուրժուազիայի ամբողջ գաղափարախոսությունը: Էլ ինչպե՞ս կարող ես այդ ճաշից հետո ծառայել համաշխարհային հեղափոխությանը»…

Վարդանը կախել էր գլուխը և չէր նայում Ռոկլանային: Բայց նա ոչ բարկացած էր աղջկա վրա, ոչ ատում էր նրան, ոչ քաշվում էր նրանից և ոչ էլ մի ուրիշ այդպիսի բան: Նրան պարզապես տհաճ էր նա, անտանելիորեն տհաճ: Եվ այդ տհաճ աղջիկը, աստված իմ, սիրում է նրան՝ Վարդանին… Կարո՞ղ է լինել ավելի անտանելի բան, քան տհաճ աղջկա սերը… Դա ստորացնում, ոչնչացնում է քեզ քո սեփական աչքում, դու սկսում ես մտածել՝ ահա թե ում եմ ես արժանի, ահա թե որքան անպետքն եմ ես, եթե այդպիսի մի տղայանման աղջիկ համարձակություն ունի ինձ սիրելու և դեռ փոխադարձություն սպասելու, ավելի ճիշտ՝ ոչ թե սպասելու, այլ տղամարդու համառությամբ քեզ հետապնդելու…

Իսկ մի քանի քայլ այն կողմ կանգնած էր Ցողիկը՝ որպես Ռոկլանայի բևեռային հակադրությունը: Ինչպիսի՛ ոչնչացնող կոնտրաստ Ռոկլանայի համար…

Իր էության ամեն մի մասնիկով այդ կոնտրաստն զգում էր նաև Ռոկլանան: Նույնիսկ այն միտքը, որ Վարդանն ու Ցողիկը սիրում են միմյանց և դա է պատճառը, որ Վարդանը մերժում է նրան, այնքան չէր ջախջախում Ռոկլանային, որքան որ իր և Ցողիկի համեմատությունը, որը նա ակամայորեն կատարում էր իր մտքում: Նախանձի և ատելության բուռն զգացումով կոմերիտուհին տեսնում և անկախ իր կամքից ընդունում էր Ցողիկի սքանչելի գեղեցկությունը: Ու թեև ինքը չուներ գեղեցիկ աղջիկ լինելու ոչ մի պրետենզիա, ոչ մի ցանկություն, բայց և այնպես իրեն լիովին ոչնչացված էր համարում նրա համեմատությամբ: Ինչպիսի՛ գեղեցկություն…

Ինչպիսի՛ զարհուրելի մագնիս, որը կարող է դեպի իրեն ձգել ամեն մի երիտասարդի և տանել իր հետ դեպի կործանված հին աշխարհը…

Ռոկլանան գերագույն արգահատանքով նայեց նաև այդ երկու թուլամորթ, անողնաշար կոմերիտականներին, որոնք, ոչ միայն սիրահարված Վարդանը, այլև նրա «բանվոր» ընկերը, չէին կարողանում դիմադրել աղջկա «բուրժուական» գեղեցկության հմայքին և այնպե՛ս տարված էին նրանով…

Ռոկլանայի մեջ առաջացավ այդ երեք «արարածներին» հակադրվելու այնպիսի

՛

մի ցանկություն, որևէ վայրենի արարքով նրանց շշմեցնելու, նրանց «մեշչանական» զգացմունքներին դիպչելու մի տենչ: Բայց դա արտահայտեց միայն նրանով, որ իր կաշվե պիջակի մի գրպանից ծխախոտ հանեց, մյուս գրպանից լուցկի, վառեց ծխախոտը, թքեց ու դուրս եկավ:

— Что за девушка!— շնջաց Ցողիկը՝ երկու ձեռքերով շփելով իր քունքերը:

Մի քանի րոպե նրանք երեքն էլ կանգնել էին լուռ ամոթահար՝ առանց կարողանալու նայել միմյանց: Ապա Մուրադն օրորեց գլուխը և բարկացած թքեց:

Գառնիկը դեռ չկար: Սպասել նրան այլևս չէր կարելի: Կոմերիտականները, տալով Լիլիային Ցողիկի հասցեն և խնդրելով հաղորդել Գառնիկին, դուրս ելան սենյակից:

33

Այդ օրը, առավոտվանից ի վեր, Գառնիկը, իր հաստոցի առջև կանգնած, մտածում էր այն «խուժանի» մասին, որին նախորդ օրը տարել էր մանկատուն: Ի՞նչ եղավ նա, հաշտվե՞ց իր վիճակի հետ, թե՞ փախավ… Գուցե նրան չի հաջողվել փախչել և այժմ նա իր ամբողջ «տղամարդությունը» մոռացած, լաց է լինում երեխայի պես, զղջում է իր երեկվա թուլության, մանկատուն գնալու համաձայնություն տալու համար... Հարկավոր է այսօր անպայման, անպայման գնալ և տեսնել նրան, մխիթարել, սիրտ տալ…

Հակառակի պես, կարծես նրա համար, որ Գառնիկը ոչ մի րոպե չմտածի ոչնչի մասին՝ բացի այդ «խուժանից», մի ուրիշ անապաստան երեխա շուտ-շուտ մոտենում էր գործարանի լուսամուտին և աղերսում.

— Մենծ ախպերներ, ինչ կլինի մի պապիլոզ դուրս քցեք ինձ համար…

Միայն փառահեղ երևակայության տեր մարդը կարող էր «գործարան» անվանել ծխախոտի այդ խիստ փոքրիկ արհեստանոցը, այնքան փոքրիկ, որ նա տեղավորված էր երեք ցուցափեղկ ունեցող մի նախկին խանութում: Մի քանի հին հաստոցներ՝ հողե հատակի վրա ամրացված, կազմում էին այդ «գործարանը»: Դրանց վրա պետք էր ավելացնել նաև այն երկու սեղանները, որոնց մոտ նստած, մի քանի բանվորուհիներ, մի ծեր կազմարարի ղեկավարությամբ, ծխախոտի տուփեր էին պատրաստում կիսակարտոնից և վրան սոսնձում էտիկետի թղթեր, իսկ մի քանի ուրիշները, մեծ արկղների միջից վերցնելով գլանակներն ու հաշվելով, շարում էին այդ տուփերի մեջ:

Աղջիկներն աշխատում էին միայն սեղանների մոտ, իսկ հաստոցների առջև կանգնած էին միայն տղաներ: Երկար ժամանակ նրանք դա համարում էին միանգամայն բնական և հասկանալի: Բայց մի անգամ, «գործարանի» ինժեներն ասաց, որ աշխարհի բոլոր այլ վայրերում ծխախոտի հաստոցների մոտ կանգնած են կանայք և աղջիկներ: Տղաները նախ ապշեցին, ապա ցավակցեցին այդ կանանց ու աղջիկներին և ապա սկսեցին ամաչել այն բանից, որ իրենք «կնկա» գործ են կատարում:

Որպես վնասակար աշխատանքի վրա գտնվողներ, բանվորներն ու բանվորուհիներն ստանում էին կաթ, որը խմում էին փոքրիկ կումերով, աշխատանքային օրվա ընթացքում: Մի անգամ էլ, երբ անապաստան երեխան նորից կրկնեց իր խնդիրը, Գառնիկը, գլանակների մեջ ծխախոտ լցնող իր հաստոցի առջև կանգնած, բարձրացրեց իր կաթի շիշը և ցույց տալով, հասկացրեց «խուժանին».— «Ի՞նչ ծխախոտ, երբ քու կաթ խմելու ժամանակն է»: Եվ ճիշտ ու ճիշտ նախորդ օրվա երեխայի նման, «խուժանն» ասաց.

— Կաթը դու խմի, դա աղջկա բան է:

Բարձրացնելով իր կեղտոտ մատը, նա ցույց տվեց խանութի ցուցափեղկի վերին մասը: Այնտեղ ապակիներից մեկը հանված էր և դրա տեղ ամրացված էր օդափոխիչ վենտիլյատոր: Վերջինս աշխատում էր այնպիսի աղմուկով, որ նույնիսկ խլացնում էր հաստոցների համեստ չկչկոցը: Երբ նա շատ էր ձանձրացնում, բանվորները դադարեցնում էին դրա աշխատանքը, մանավանդ որ, դրսի մաքուր օդը ներս բերելուց շատ ավելի նա խառնում և տակնուվրա էր անում ծխախոտի մանր փոշիով հագեցած ներսի օդը:

Այժմ վենտիլյատորը կանգնած էր, և «խուժանը» ցույց տալով այն, հասկացրեց, որ բանվորները կարող են հենց դրա արանքներից դուրս նետել նրա համար ծխախոտը: Բայց բանվորներն այդպիսի բան անել չէին էլ մտածում՝ ոչ միայն երեխայի դաստիարակության և առողջապահության նկատառումներով, այլև «գործարանի» կարգապահությունը չխախտելու համար:

«Գործարանի» հենց դիմացը գտնվում էր Երևանի շուկան, որի կենտրոնում կանգնած էր սյուների վրա հանգչող բավական ընդարձակ մի ծածկ: Դրա տակ տեղավորված հսկայական կշեռքի՝ «ղանթարի» անունով կոչվում էր նաև ամբողջ շուկան: Վաճառքի կրպակներն ու սեղանները տեղավորված էին ոչ միայն արևի տակ, այլև այդ ծածկի:

«Խուժանը» հուսահատվելով «պապիլոզ» խնդրելուց, վերադառնում էր իր հիմնական «աշխատավայրը», պնդացնում էր ուժերը որևէ նեխած մրգով կամ ձմերուկի կլեպի վրա մնացած վարդագույն բարակ շերտով, նորից էր զգում ծխելու պահանջ և չգտնելով գետնի վրա որևէ «մարդավարի» մնացուկ, նորից էր վերադառնում «մեծ ախպերների» մոտ:

Երբ, վերջապես, աշխատանքային օրն ավարտվեց, Գառնիկը թափ տվեց իր հագուստը, ելավ խանութի ետևի բակը, թեթևակի լվացվեց և նետվեց դուրս: Առանց նույնիսկ ճաշարան գնալու, նա վազ տվեց դեպի մանկատուն, որը բավական հեռու էր՝ քաղաքի ծայրին, և գտնվում էր սև քարե երկհարկանի մի շենքում:

Մոտենալով մանկատանը, նա լսեց՝ երեխաները երգում էին: Բայց դա նոր կոմպոզիտորների հորինած զվարթ երգերը չէին, այլ վաղուց ծանոթ, մի թախծալի եղանակ: Գառնիկի սիրտը ճմլվեց: Նա ինքն էլ էր երգել նույնը՝ մանկատանը եղած ժամանակ: Հայկական կոտորածներում ոչնչացված մեկ և կես միլիոն ժողովրդի զավակներ, հարյուր հազարավոր երեխաների միջից փրկված միավորներ, նրանք, դանթեական դժոխքի բոլոր զարհուրանքները տեսած, սգում էին անուղղելիորեն աղճատված իրենց մանկությունը: Ոչ մի խաղալիք, ոչ մի կուշտ ուտելիք կամ բարօր կենցաղ չէր կարող սփոփել նրանց: Ի միջի այլոց նրանք չունեին ոչ խաղալիք, ոչ կուշտ ուտելիք և ոչ էլ բարօր կենցաղ: Պարզապես աղքատիկ օթևան, կիսաքաղց վիճակ, տխուր և ձանձրալի օրեր... Որբանոցների մոտով անցնող մարդիկ, լսելով նրանց երգերը, փշաքաղվում էին՝ եթե նույնիսկ այդ երգերը չունեին որևէ առանձին, տխուր բովանդակություն: Բայց ի՜նչպես էին երգում երեխաներն ամեն մի երգ, ինչպիսի՛ իմաստ էին դնում դրա մեջ…

Յար Սոնա, յար Սոնա,

Ե՞րբ պիտի լուսանա…

Այժմ անցել էին տարիներ, արդեն «լուսացել էր», բայց Գառնիկը նորից լսում էր նույն երգը: Համարյա ամբողջովին փոխվել էր որբերի կազմը, թուրքերի կոտորած ծնողների զավակների

փոխարեն այժմ մանկատներում գտնվում էին դաշնակցական Հայաստանում սպանվածների կամ համաճարակներից մահացածների երեխաները, նրանց այժմ խնամում էր պետությունը, բայց որբությունը միշտ մնում է որբություն, և սիրող մայր ունենալու բնական, համարյա բնազդական պահանջը, ծնողական գգվանքի կարոտը միշտ էլ պիտի թախիծով լցնեին որբ երեխայի ամեն մի երգի ամեն մի ելևէջը.

Ցար Սոնա, յար Սոնա,

Ե՞րբ պիտի լուսանա…

— Իսկապես, ե՞րբ պիտի լուսանա,— հառաչով կրկնեց իր մտքում Գառնիկը և սթափվելով, նայեց շուրջը: Իսկ շուրջն արև էր, Երևանի պայծառ և գույնզգույն աշունը:

«Դու կենսուրախ երիտասարդ չես,— քննադատորեն մեղադրեց իրեն Գառնիկը:— Դու հենց սկզբից ևեթ հայր պիտի ծնված լինեիր, որովհետև մի խուժանի տարել ես մանկատուն, բայց չես կարողանում մոռանալ նրան, գնալ քու գործին: Ախր մեկը լինի՝ հենց քու մասին հոգա, մի՞թե դու ինքդ տեսել ես հայր ու մայր, քույր ու եղբայր… Դու սիրած աղջիկ էլ չունես, որ գոնե մի քնքուշ խոսքով քեզ գուրգուրի: Իսկ ընկերներդ ի՞նչ, նրանք էլ տղամարդիկ են քեզ նման…»:

Մանկատանը ծագեց անսպասելի մի դժվարություն: Կիրակի օրվա այն աշխատողները, որոնք Գառնիկից ընդունել էին երեխային, այսօր հանգստանում էին: Այն երիտասարդ կինը, որն այժմ մոտեցավ կոմերիտականին, ոչ նրան էր ճանաչում և ոչ էլ երեկ ընդունված «խուժանին»:

— Երեկ մեզ մոտ բերել են ոչ թե մի, այլ մի քանի երեխա,— հայտնեց կինը:— Ինչպիսի՞ն էր ձեր բերածը:

— Մի կեղտոտ երեխա էր՝ գզգզված մազերով, քրքրված ցնցոտիներով…— սկսեց նկարագրել Գառնիկը, բայց և իսկույն ընդհատեց՝ հասկանալով, որ բոլոր այդ նշանները խիստ ընդհանուր են, ընդ որում, դրանք բոլորը ոչնչացել են դեռ երեկ՝ բաղնիքում և վարսավիրի մատների տակ: Չէր օգնի նաև այն, եթե կոմերիտականն իմանար երեխայի անունը: «Խուժանները» փողոցում ապրելիս ունեն մի անուն, ավելի շուտ՝ մականուն, իրենց որսացողներին չեն հայտնում ոչ մի անուն, իսկ եթե հայտնում են էլ, ապա դա լինում է երկրորդ անունը, մանկատներում նրանք գրանցվում են երրորդ անունով, իսկ փախչելուց և նորից բռնվելուց հետո հնարում են իրենց չորրորդ, հինգերորդ և հաջորդ անունները…

— Խնդրեմ, շրջեցեք, գտեք,— առաջարկեց երիտասարդ կինը՝ գնալով իր գործին:

Գառնիկը մնաց բակի մեջտեղում կանգնած:

Երեխաները, գլուխներն անվարժ ձեռքով անհավասար խուզված, միանման գորշ հագուստներով, առաջին հայացքից բոլորն իրար նման, շրջապատեցին Գառնիկին: Բայց նրանք բոլորը չէին: Շենքի երկու հարկերում ևս, թե առաջին հարկի սենյակներում ու պատերի տակ, և թե երկրորդ հարկի երկար պատշգամբում, վխտում էին ուրիշ շատ երեխաներ: Դրանցից ո՞րն էր Գառնիկի ծանոթը…

Կոմերիտականին շրջապատած երեխաները ոչինչ չէին անում կամ ասում, ոչինչ էլ չէին սպասում Գառնիկից: Պարզապես իրենց միօրինակ կյանքի ձանձրույթն էր պատճառը, որ նրանք հավաքվում էին ամեն մի այցելուի շուրջը:

Բայց ահա նրանցից մեկը կես քայլ արեց դեպի կոմերիտականը և ասաց.

— Բարև:

— Բարև,— անցողակի նայելով նրան, պատասխանեց Գառնիկը՝ հայացքն անօգուտ հածելով բոլորի վրայով:

— Բարև,— ասաց նաև մի ուրիշը:

— Բարև, բարև:

— Չե՞ս ճանաչում ինձ:

Գառնիկը զարմացած նայեց երեխային: Իհարկե, նա ինքը ոչ մի դեպքում չէր կարողանա ճանաչել նրան: Կոմերիտականի դիմաց կանգնել էր մաքուր սպիտակ դեմքով և ձեռքերով մի երեխա՝ երեկվանից ի վեր կարծես ավելի նիհարած, փոքրացած, միրգ փախցնողի իր անհանգիստ աչքերը թախծոտ աչքերի փոխած, ինքն ամբողջովին ընդհանրապես փոխված…

Գառնիկն առաջին պահին նույնիսկ մի տեսակ ափսոսանք զգաց դրա համար: Երեխան երեկ թողնում էր ավելի կենդանի և բնական տպավորություն, ուներ իր անհատական դեմքն ու կերպարանքը: Իսկ այժմ որբանոցի բակի մեջտեղում կանգնած էր որբ երեխայի մի «տիպար»՝ այնքան նման մյուսներին, որքան որ հաստոցից դուրս ելնող գլանակները միմյանց…

«Ես էլ ժամանակին էսպես եմ եղել»,— անցավ Գառնիկի մտքով: Նա գրկեց երեխային և մտերմաբար բարևեց:

— Ո՞նց ես զգում քեզ էստեղ:

— Գիտե՞ս, ոչինչ:

— Երևի ինձ շատ ես հայհոյել, որ բերեցի քեզ:

— Դո՞ւ ես ինձ բերել որ,— հարցրեց երեխան:

Գառնիկը զարմացած նայեց նրան: Չլինի՞ դա ուրիշ երեխա է…

Բայց նախկին «խուժանը» նրա ծանոթն էր և ուրիշ բան էր ուզում ասել:

— Դո՞ւ ես ինձ բերել որ,— կրկնեց նա:— Ես ինքս եկա իմ ոտքով: Իսկ դու գալիս էիր կողքովս՝ առանց թևս բռնելու:

— Իսկ ինչո՞ւ դու ինքդ եկար քու ոտքով,— հետաքրքրվեց Գառնիկը:

Խոսակցությունը տեղի էր ունենում բարձրաձայն, մյուս երեխաների ներկայությամբ:

— Երեկ որ քեզ հետ մտանք ճաշարան ու ճաշ բերողը չվռնդեց ինձ, դեռ հլա քեզ հետ հավասար ինձ էլ ճաշ բերեց տվեց՝ հենց էդ էր պատճառը: Հենց ճաշարանում էլ որոշեցի, որ գամ որբանոց, մարդ դառնամ ու էդ սրիկա ճաշ բերողից վրեժ հանեմ: Ախր վառել է նա ինձ: Մտնում ես, որ հաց ու ոսկոր հավաքես սեղանների վրայից, մեկ էլ տեսար՝ տվեց վզակոթիդ: Սպասիր, ես որ մարդ դառնամ, ամեն օր էնտեղ եմ ճաշելու, որ նա ինքը ծառայի ինձ: Հենց որ ճաշն ուշացրեց՝ հերսոտելու եմ վրան:

Գառնիկը չկարողացավ ոչինչ պատասխանել: Հուզմունքի մի գունդ կանգնել էր նրա կոկորդում, ոչ վար էր իջնում, ոչ վեր բարձրանում, և խանգարում էր խոսելուն: Նա միայն գլխով արեց,— «ապրես, ճիշտ ես մտածել»… Իսկ իր համար նա մտածեց,— «չէ, սա այլևս որբանոցից փախչողը չի»…

— Ուրեմն չե՞ս զղջացել, որ որբանոց ես եկել,— այնուամենայնիվ հարցրեց նա:

— Խելա՞ռ ես, ինչ է:

— Իսկ չե՞ս ձանձրանում:

— Հլա չէ: Ախր սրանք բոլորն իմ ընկերներն են,— ասաց երեխան՝ իր շուրջը հավաքվածների մեջ ցույց տալով շատերին:— Ես գիտեի, թե նրանք մեռել են, բայց ի՞նչ տեսնեմ՝ էստեղ են: Չէ, հլա չեմ ձանձրանում,— կրկնեց նա:— Իսկ սրանք ձանձրանում են: Ոչինչ, հետո ես էլ կձանձրանամ,— կարծես հանգստացնելով կոմերիտականին, ավելացրեց նա:

Գառնիկը, որն ուզում էր ընդհանուր զրույց սկսել բոլոր երեխաների հետ, հանկարծ թողեց այդ միտքը, դուրս ելավ նրանց շրջանակի միջից և քայլերն ուղղեց դեպի որբանոցի շենքը:

— Որտե՞ղ են ձեր ղեկավարները,— հարցրեց նա մի որբի:

— Ընկեր վարիչի սենյակն էս է,— մատով ցույց տվեց երեխան:

Գառնիկը մտավ մի նեղ միջանցք, աջ թևի դռան վրա կարդաց մակագրությունը և առանց թակելու մտավ ներս:

Մի փոքրիկ սենյակում, աթոռների վրա նստոտած, ժամանակ էին կարճում որբանոցի «ղեկավարները»՝ վարիչը, երկու դաստիարակչուհիները, ծախսարարը, քարտուղարուհին…

Եթե Վարդանն ու Մուրադն այդ րոպեին տեսնեին իրենց ընկերոջը, հազիվ թե ճանաչեին նրան: Սովորաբար բարեհոգի Գառնիկը կաս-կարմիր էր կտրվել կատաղությունից:

— Ապա,— ասաց նա առանց առաջաբանի,— բոլորդ մա՛րշ էստեղից դեպի հայաթ:

— Ի՞նչ է պատահել, ո՞վ ես դու,— ոչ այնքան զայրացած, որքան որ զարմացած, հարցրեց վարիչը՝ վեր կենալով տեղից:

— Մա՛րշ՝ ասում եմ ձեզ և ուրիշ ոչինչ: Չե՞ք էլ ամաչում: Երեխաներն էնտեղ ձանձրանալուց պատեպատ են ընկնում, իսկ սրանք էստեղ նստած անեկդոտներ են պատմում իրար…

— Կորեք դուրս,— գոռաց վարիչը,— դուք ո՞վ եք, որ եկել եք ինձ կարգադրություն անելու:

— Ես քեզ «դուրս» ցույց կտամ, բյուրոկրատ,— վրա քշեց Գառնիկը դեպի նա:— Ես էգուց ձեր բոլորի հարցը կդնեմ որտեղ որ պետքն է, իսկ հիմի ելեք դուրս ու զբաղեցրեք երեխաներին: Շո՛ւտ…

— Ձեզ ո՞վ է ուղարկել,— հարցրեց վարիչը՝ մի փոքր կասկածի մեջ ընկնելով նրա համարձակ տոնից:

— Ոչ ոք: Այսինքն՝ բոլորը, խորհրդային ժողովուրդը: Բա դուք խիղճ չունե՞ք: Ձեզանից ոչ մեկը որբ չի եղե՞լ: Մի րոպե պատկերացրեք, թե դուք ինքներդ եք նրանց տեղը: Կդիմանա՞ք գոնե մի օր… Դուրս եկեք, դուրս եկեք,— համոզող տոնով կրկնեց նա,— անհարմար է, ընկերներ:

— Իսկ որ դուրս գանք, ի՞նչ անենք,— հարցրեց երիտասարդ կանանցից մեկը: Եվ քանի որ, Գառնիկի հաստատ ենթադրությամբ, նա դաստիարակչուհի էր, նրա հարցը կատաղեցրեց կոմերիտականին:

— Մայմունություն արեք,— գոռաց նա,— գլխի վրա ման եկեք: Հասկանալի՞ է:

— Իսկ չի՞ կարելի, որ խորհուրդ տալու փոխարեն դու ինքդ գլխիվայր ման գաս, ընկեր կոմերիտական,— հարցրեց վարիչը կռվարար տոնով:

— Կարելի է:

«Ղեկավարները» նայեցին իրար:

— Կարելի է,— կրկնեց Գառնիկը,— գնանք:

Երբ բոլորը միասին ելան դուրս, որբանոցի վարիչը, հազիվ կոմերիտական հասակը գերաճած տղամարդ, ծափ տվեց մի քանի անգամ և բոլոր որբերի ուշադրությունը հրավիրեց իր կողմը:

— Ապա, երեխաներ, հավաքվեցեք էստեղ: Չեղավ, շատ մի մոտենաք, մեջտեղում թողեք ազատ տարածություն: Հիմա ընկեր կոմերիտականը ձեզ համար քայլելու է գլխիվայր…

Եվ չարախինդ նայեց Գառնիկի կողմը:

Գառնիկը, քաղաքավարությամբ գլխով անելով նրան՝ ի նշան հավանության և շնորհակալության, վեր բարձրացրեց իր թևերը, ապա հանկարծ կռացավ, իջեցրեց դրանք դեպի գետին, և դեռ ոչ ոք աչք էլ չէր թարթել, երբ նա սկսեց քայլել, համարյա վազել գլխիվայր, ձեռքերի վրա, ձեռքերի փոխարեն ոտքերը վեր ցցած:

Լսվեց երեխաների, և ոչ միայն երեխաների, հիացական բացականչությունը: Գառնիկը ձեռքերի վրա վազ տվեց բավական տարածություն և հասավ որբերի շրջանակին: Երեխաներն իսկույն ցատկեցին աջ և ձախ՝ ճանապարհ տալով նրան: Գառնիկը նկատեց գետնի վրա ընկած կոնսերվի մի դատարկ տուփ, ձեռքերի վրա վազեց այն կողմ, վերցրեց տուփը և շպրտեց վեր: Բարձրացավ միահամուռ ծիծաղ: Հավասարակշռությունը կորցնելով, Գառնիկը շուռ եկավ և ցատկեց ոտքի: Բոլորը նրան ծափահարեցին, և վարիչը, մոտ վազելով կոմերիտականին, բռնեց նրա երկու ձեռքերը, ամուր սեղմեց և շշնջաց.

— Ներողություն, սիրելի ընկեր… ազնիվ խոսք՝ ներողություն…

Ապա ավելացրեց հանցավոր.

— Բայց ես էդպիսի բան չեմ կարող անել.— համ վարիչ եմ, համ էլ շնորհք չունեմ…

— Դու էլ ուրիշ բան արա,— նույնպես կամացուկ, արդեն իր բարկությունը մոռացած, բարեկամաբար խորհուրդ տվեց Գառնիկը:— Ինչո՞ւ դաստիարակչուհիները երգեր չեն սովորեցնում երեխաներին: Բա դա երգելու բա՞ն է.

Յար Սոնա, յար Սոնա,

Ե՞րբ պիտի լուսանա…

34

Լիլիան, ականջը ձայնի, սպասում էր Գառնիկի գալուն: Առաջին անգամ իրենց ողջ հարևանության ընթացքում նա պետք է խոսեր տղայի հետ… Նա հուզված էր, նրա այտերը կարմրել էին և նա գիտեր, որ դա սազում է իրեն:

Վերցնելով շալե փոքրիկ, ծաղկավոր թաշկինակը, աղջիկը կանգնեց հայելու առաջ և կապեց իր գլխին՝ ինչպես անում են տնային աշխատանքով զբաղվող կանայք և աղջիկները: Լիլիան գիտեր, որ այդ թաշկինակը նույնպես շատ էր սազում իրեն: Երբ Գառնիկը տեսնում էր աղջկան դրանով, խեղճ տղայի աչքերն ուղղակի կլորանում էին հիացմունքից, իսկ կուրծքն ավելի ուժեղ էր ելնում-իջնում հուզմունքից և զսպած հառաչանքից:

Լիլիան թաշկինակը կապեց ամենայն խնամքով՝ ազատ թողնելով իր փոքրիկ ականջները: Հանգույց անելով ծոծրակի վրա, նա, որպես վերջին և ամենաանդիմադրելի դետալ, թաշկինակի տակից դուրս հանեց ճակատի վրա իր ամենալավ խոպոպներից մեկը: Հետո լեզու ցույց տվեց ինքնիրեն, ծռմռեց շրթունքները և անսպասելի ամոթահարությամբ վար իջեցրեց աչքերը: Չէ՞ որ նա ոչ «սատանա» աղջիկ էր և ոչ էլ գոնե մի փոքր համարձակ: Նա ամաչկոտ էր, ինքնամփոփ, ոչ ձեռներեց: Բայց եթե նա սիրում է այդ կոմերիտականին և այսօր էլ բախտը նրան ընձեռել է բացառիկ բարեհաջող պայմաններ, երբ բնակարաններում ուրիշ ոչ ոք չկա, ինչպե՞ս կարելի է բաց

թողնել առիթը՝ տղային ավելի խելքահան անելու համար: Խորամանկությունն ի ծնե տրված է բոլոր աղջիկներին և մի՞թե նա մեղավոր է, որ ինքն էլ է այդպիսին: Ճիշտն ասած, ի՞նչ մեծ խորամանկություն է անում նա որ: Մե՞ծ բան է մի փոքրիկ խոպոպը: Իսկ եթե մեծ բան է՝ ապա միայն Գառնիկի համար…

Հանկարծ Լիլիան լսեց կոմերիտականների դռան ձայնը: Ինչպե՞ս չէր լսել տղայի ներս մտնելը նախասենյակ… Նրա հուզմունքն ու շփոթությունը հասան գագաթնակետին: Բայց գագաթնակետին հասավ նաև խորամանկությունը: Նա հիշեց, որ իրեն շատ է սազում սպիտակ գոգնոցը, որը և նա իսկույն կապեց իր ծաղկավոր շրջազգեստի վրա: Նորից վազելով դեպի հայելին և տալով իր խոպոպին խիստ համեստ ու միաժամանակ խիստ գրավիչ մի նոր ձև, նա շտապեց դուրս՝ քանի դեռ տղան նորից չէր գնացել տնից: Ո՞վ գիտե:

Գառնիկը, տեսնելով, որ սենյակում ոչ ոք չկա և հասկանալով, որ ուշացել է, մոտեցավ «փոստային» պատին՝ տեսնելու համար, թե ոչինչ չի՞ գրված այնտեղ իր համար: Ոչ, նոր մակագրություն չկար: Բայց զարմանալի նորությունն այն էր, որ Վահրիճի թախտը դատարկ էր: Գառնիկը, որը չէր սիրում հանելուկներ, երկար չմտածեց այն մասին, թե ինչու, ինչ կերպ և ուր է գնացել Մալարիայի հիվանդանոցի քարտուղարը: Գնացել է իրենց մոտից՝ այդ է կարևորը և ուրախալին: Իսկ մանրամասնությունները չեն փախչի, նա դրանք հետո կիմանա իր ընկերներից:

Տատանման մեջ կանգ առած, նա մտածում էր՝ իսկո՞ւյն գնալ ճաշելու, թե՞ մի քիչ պառկել թախտի վրա, հանգստանալ և ապա գնալ: Այդ րոպեին նա լսեց դռան մի երկչոտ, կարծես գաղտագողի թակոց:

— Մտեք,— ձայն տվեց Գառնիկն անտարբեր, միայն այն բանով մի փոքր հետաքրքրված, թե տեսնես ո՞վ է այդպես կամացուկ թակողը:

Տեսնելով ներս մտնող աղջկան, երիտասարդը սառեց-մնաց իր տեղում: Ոչ ուրախություն և ոչ նույնիսկ զարմանք չնկատվեց նրա դեմքի վրա, այլ միայն սարսափ:

— Ներեցեք, որ ընդհատեցի,— շփոթվելուց ասաց աղջիկը, փոխանակ ասելու՝ «խանգարեցի»:— Ձեր ընկերները ձեր ընկերուհու հետ գնացին նրանց տուն և խնդրեցին, որ դուք էլ գնաք: Հասցեն հետևյալն է…

— Դուրս գնացեք, Լիլիա,— խնդրեց Գառնիկը՝ հոգատարությամբ անհանգստանալով նրա համար,— քանի դեռ ձեր մայրը չի իմացել…

— Նա տանը չէ: Ուրեմն հասցեն հետևյալն է…

— Տանը չէ՞… Բա ո՞ւր է գնացել:

— Բաղնիք: Ենքան էլ երկար է սիրում լողանալ, որ ուղղակի չեմ կարող ասել: Ուրեմն, Ալավերդյան փողոց…

— Էն դեպքում քանի որ նա երկար է սիրում լողանալ, նստեցեք, Լիլիա,— հրավիրեց Գառնիկը:— Էսքան ժամանակվա հարևաններ ենք, իսկ դուք դեռ չեք էլ մտել մեր սենյակը:

— Մի՞թե ես մեղավոր եմ, Գառնիկ… Կարծեմ Գառնիկ է ձեր անունը,— նորից խորամանկություն արեց աղջիկը՝ նստելով նրա թախտի ամենածայրին:— Դուք խո տեսնո՞ւմ եք, թե ինչքան խիստ է իմ մաման…

— Խիստը դեռ ոչինչ,— հառաչեց Գառնիկը:— Ավելի վատն էն է, որ մեզ չի սիրում…

— Այո…— համաձայնվեց աղջիկը:— Եվ ամենից շատ ձեզ,— այսինքն ձեզ, բացատրեց նա՝ մատն ուղղելով դեպի տղան:

— Իսկ ինչո՞ւ ամենից շատ:

— Նա իրավունք ունի,— բարեկամական տոնով նկատեց աղջիկը:— Դուք ամեն անգամ ինձ տեսնելիս նայում եք, իսկ նա նկատում է դա ու ջղայնանում: Մյուսները չեն նայում, իսկ դուք նայում եք: Ինչո՞ւ եք էդպես անում…

— Աստված ինձ աչքեր է տվել, որ ուր ուզենամ՝ էնտեղ էլ նայեմ,— վիրավորված հիշեցրեց Գառնիկը: Եվ բարկությամբ լի դեպի աղջկա «մեշչանկա» մայրը, ավելացրեց:— Իսկ եթե ջղայնանում է՝ թող ջղայնանա իր աղջկա վրա, որն ինքն էլ ինձ է նայում…

— Նայում է, ճիշտ է,— կոտրված հանձն առավ աղջիկը երրորդ դեմքով:— Նա էլ է մեղավոր…

— Մի՞թե դա մեղք է,— զարմացավ կոմերիտականը՝ առանց աչքը կտրելու նրա խոպոպից:

Աղջիկը ձայն չհանեց և միայն իր մի ուսը շարժեց աղջկային մի գեղեցիկ ժեստով, այսինքն՝ «Ես ի՞նչ գիտեմ»:

— Ոչ, դա մեղք չէ,— պատասխանեց Գառնիկն իր հարցին:— Դա…

Այդ բառի վրա վերջացավ նրա համարձակության ամբողջ պաշարը:

Մի քանի րոպե նրանք լուռ նստած էին, ապա աղջիկն սթափվեց, ասաց.

— Գնացեք, դուք ուշանում եք:

— Գնալս չի գալիս,— կակազեց Գառնիկը:— Ուզում եմ տանը մնամ…

— Ձեր գործն է,— հասկանալով, մտքի մեջ ուրախացավ աղջիկը: Վեր կենալով, նա մոտեցավ դռանը, այնտեղից ետ շրջվեց և ասաց.— Շնորհակալություն, որ ես ձեր սենյակը տեսա: Իսկ հիմա… գուցե դուք էլ մեր բնակարա՞նը տեսնեք…

— Իսկ…

— Ոչ, ոչ, նա լողանում է:

— Այո, բայց…

— Պապա՞ն: Նա հաշվետվություն է պատրաստում և երկու շաբաթ շարունակ արտաժամյա է աշխատելու:

— Բարդ գործ է հաշվետվությունը,— համաձայնվեց Գառնիկը:— Որ էդպես է՝ գնանք…

Հարևանների շեմքի մոտ նրա երկչոտությունը բռնեց, թեև գիտեր, որ տանը ոչ ոք չկա: Իսկ երբ մտավ ներս՝ նա իրեն զգաց տուն կողոպտող ավազակի նման:

«Ահա թե ինչպես են ապրում մարդիկ…— մտածեց կոմերիտականը՝ ակնածանքով կանգ առնելով դռան մոտ:— Ինչպիսի՜ շքեղություն, ինչպիսի՜ ցոփ կյանք…»:

Կյանքի ցոփությունն այդ սենյակում արտահայտվում էր նրանով, որ պատի վրա խփված էր մի հնամաշ գորգ, դրա տակ դրված էր կարպետով ծածկված մի թախտ, դրա առջևում՝ ճաշի սեղան, իսկ սենյակի մի անկյունում, շիրմայի ետևում, դրված էր Լիլիայի ծնողների լայն մահճակալը: Սենյակում կային նաև աթոռներ, շատ աթոռներ, համարյա վեց հատ, իսկ կարմիր ներկված հատակի վրա, որը փայլում էր քսած մոմից, գցված էր ուղեգորգ, որը երեք վտակներով հոսում էր դեպի ճաշասեղան, դեպի շիրման և դեպի մյուս սենյակի դուռը: Սենյակը մեծ էր, ուներ երկու լուսամուտ, պատի վառարան… Մի՞թե կարելի էր մի հայացքով, այն էլ հուզված Գառնիկի շփոթված հայացքով, ընդգրկել դրա ամբողջ ճոխությունը... Իսկ սեղանի վերևում կախված էլեկտրական լամպն ուներ մետաքսե վարդագույն լուսամփոփ:

Աղջիկը ցույց էր տալիս սենյակի զանազան կողմերն ու առարկաները և բացատրություններ էր տալիս, բայց Գառնիկը, հուզմունքից իրեն կորցրած, չէր էլ լսում նրան: Հուզված էր նաև աղջիկը, և դրա համար էլ նրա բացատրություններն ունեին մոտավորապես հետևյալ բնույթը.

— Իսկ սա մեր ճաշի սեղանն է, որի վրա ճաշում ենք…

Սա գորգ է, այսինքն՝ խալիչա: Սրանք էլ մեր լուսամուտներն են…

Սպառելով այդ սենյակը, նա մատն ուղղեց դեպի մյուսը.

— Իսկ Էնտեղ ես եմ քնում: Ուզո՞ւմ եք տեսնել:

— Վաղուց…— դուրս տվեց Գառնիկը:

Նրանք մտան այդ սենյակը: Ավելի ճիշտ՝ մտավ Լիլիան, իսկ Գառնիկը կանգ առավ շեմքի վրա և ակնածանքով նայեց: Երկարավուն փոքրիկ սենյակում դրված էր աղջկա մահճակալը: Սիրահարված տղային թվաց, թե այն հարդարված է հեքիաթային գեղեցկությամբ: Անկողնի վրա փռված էր սպիտակ ծածկոց, դրված էր ժանյակազարդ մի մեծ բարձ: Որպես աղջկա անկողնու ձյունային մաքրության արթուն պահակներ, կանգնած էին մահճակալների չորս հաստ, նիկելե ձողերը, որոնց վրայի «խնձորները» նման էին սպառնական «գյուրզերի»:

Բայց փոքրիկ սենյակի խստակյաց տեսքը մեղմացնում էր սեղանակը՝ մահճակալի ոտքերի մոտ դրված: Սեղանակի վրա, ինչպիսի՜ ճոխություն, դրված էր էլեկտրական լամպ՝ կանաչ լուսամփոփով: Դարսված էին գրքեր, գրքեր, գրքեր, երևի բոլորն էլ «սիրահարական վեպեր»: Սեղանակի առջև դրված էր մի փափուկ աթոռ, իսկ կողքին՝ երկրորդը, որի վրա, իհարկե, նստում էր հյուր եկած որևէ ընկերուհի:

— Համեցեք, մտեք,— հրավիրեց աղջիկը:

Գառնիկն ակնածալի քայլերով մտավ ներս, նայեց շուրջը, պատերին՝ զվարթ գույնի պաստառով պատած: Մահճակալի կողքին, գորգի նման, խփված էր ինչ-որ գեղեցիկ, գույնզգույն կտոր: Դիմացի պատի վրա կախված էին երկու ափսեներ՝ առյուծի և արծվի նկարներով, և աշակերտների մի խմբանկար: Անշուշտ, Լիլիան էլ կար այնտեղ:

«Հետաքրքիր է, ո՞ւր է նայում լուսամուտը»,— միանգամայն անտեղի անցավ Գառնիկի մտքով և նա մոտեցավ լուսամուտին՝ մահճակալի կողքին գտնվող: Զգվեց, զարմանքով նայեց դուրս: Նրա աչքին բացվեց մի անծանոթ, շատ հաճելի բակ՝ շրջապատված ծառերով, լի ծաղիկների թփերով: Բակի վրա բոլոր երեք կողմերից բացվում էին միհարկանի տնակների դռներ: Մի մեծ ընկուզենու տակ դրված էր թախտ, որի վրա պառկել էր մի ծերունի և ծխում էր իր համար: Մի կին լվացք էր փռում, դռներից մեկի մոտ խաղ էին անում երկու երեխաներ…

Որ իրենց շենքի ետևում բակ կար՝ Գառնիկն առաջին անգամն էր իմանում: Բայց նա մինչ այդ չգիտեր ոչ միայն այդ մասին, այլև չէր էլ պատկերացնում, թե քանի սենյակ ունի իրենց հարևանների բնակարանը, ուր են նայում դրա լուսամուտները և այլն: Այժմ թվում էր, թե նա ընկել է մի անծանոթ աշխարհ, որը, սակայն, միշտ գտնվելիս է եղել իր կողքին, ընդամենը մի քանի քայլով իրենից բաժանված…

— Նստեցեք, Գառնիկ,— հրավիրեց աղջիկը ՝ աթոռ առաջարկելով:

Գառնիկը ետ դարձավ լուսամուտի մոտից, դանդաղ մոտեցավ սեղանակին:

— Գիտե՞ք ինչ, Լիլիա…— ասաց նա թախծոտ տոնով:— Գիտե՞ք ինչ… Ես իմ կյանքում առաջին անգամն եմ լինում ուրիշի տանը…

— Չի կարող պատահել,— ժպտաց Լիլիան:

— Ազնիվ կոմերիտականի խոսք: Մեր տունը ես լավ չեմ հիշում, ոչ էլ ծնողներիս, որոնց սպանել են թուրքերը: Ես լավ հիշում եմ որբանոցը, բայց մի՞թե դա տուն էր: Էնպես որ, ես ճիշտ եմ ասում:

— Մի՞թե դուք բարեկամներ կամ ընկերներ չունեք,— զարմացավ Լիլիան:

— Բարեկամներ՝ ոչ, իսկ ընկերների հետ հանդիպում ենք փողոցում կամ ակումբում:

— Դուք ոչ ոք չունե՞ք,— կարեկցաբար հարցրեց աղջիկը:— Ո՞չ մի բարեկամ:

— Ոչ ոք՝ բացի Վարդանից ու Մուրադից: Իհարկե, ուրիշ շատ ընկերներ կան, բայց ամենահարազատները դրանք են:

— Իսկ…— կակազեց աղջիկը,— իսկ ընկերուհի՞…

— Բառի բուն իմաստով՝ ոչ…

— Նստեցեք,— կրկնեց աղջիկը՝ ծածկելու համար իր շփոթությունը և ուրախությունը, որ տղան չունի մտերիմ աղջիկ:

Հանկարծ Գառնիկը, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, թափ տվեց իր վրայից երկչոտությունն ու խռովքը, նստեց և ձեռքով ցույց տվեց Լիլիային մյուս աթոռը:

— Դու էլ նստիր:— նա անցավ եզակիի:— Եվ լսիր… Մենք, Լիլիա, կոմերիտականներս, սիրում ենք նայել մարդու ուղղակի աչքերին և ճշմարտությունն ասել ուղղակի ճակատին, որքան էլ որ դա դուր չգա: Դու գիտե՞ս, որ ես վաղուց սիրում եմ քեզ…

Աղջկա գլուխը, որը մինչ այդ դիք կանգնած էր իր տեղում, տղայի հարցից հետո միանգամից թուլացավ նրա պարանոցի վրա և խոնարհվեց առաջ: Նրա այտերը կարմրեցին, կոպերը փակվեցին, ատամները կծեցին ներքևի շուրթը: Լիլիան լուռ գլխով արեց.— «գիտեմ»…

— Իսկ դու գիտե՞ս, որ ես էլ գիտեմ, որ դու էլ ինձ ես սիրում…

Աղջիկը մի կտրուկ շարժում արեց՝ կարծես հակաճառելու համար: Նրա աղջկային արժանապատվությունը մի պահ վրդովվեց տղայի այդպիսի ինքնավստահությունից: Բայց, հանդիպելով տղայի աչքերին, Լիլիան փախցրեց հայացքը:

Տղան իր աթոռով փոխադրվեց նրա մոտ, կողքանց նայեց նրա երեսին, բայց աղջիկը նրան չէր նայում, այլ, զգալով իր վրա գամված հայացքը, աչքերը հառել էր հատակին:

Գառնիկը բռնեց անօգնական դիրքով նրա գոգում հանգչող ձեռքերից մեկը, աղջկան ձգեց դեպի իրեն: Լիլիան, հավասարակշռությունը կորցրած առարկայի նման, թեքվեց և դեմ ընկավ տղայի ուսին: Գառնիկը շողաց ուրախությունից, մի պահ գրկեց նրա մեջքը, ապա, իր արածից շփոթված և մանավանդ՝ անպարկեշտ չերևալու համար, իսկույն թողեց նրան և ցատկեց ոտքի:

Մի քիչ հետո, վերականգնելով իր հավասարակշռությունը, նա նորից նստեց և ասաց.

— Լիլիա… Սա մի բացառիկ դեպք է, որ մենք մենակ ենք մնացել: Ո՞վ գիտե, մեկ էլ պիտի ունենա՞նք էս տեսակ առիթ: Էնպես որ, եկ ամեն ինչի մասին խոսենք-պայմանավորվենք հենց հիմի՝ քանի դեռ ժամանակ ունենք: Ուրեմն, առաջին. էլ երկար դեսուդեն չենք քաշքշի, հենց էս մի քանի օրս կգնանք Զագս…

Աղջիկը մի երկչոտ ճիչ արձակեց՝ իր կյանքի մեծ փոփոխության այդպիսի անսպասելի մոտիկությունից տագնապած:

— Երկրորդ,— շարունակեց Գառնիկն անվրդով:— Դու ինքդ կհայտարարես մորդ իմ կողմից, որ մտքովն էլ չանցկացնի, թե ես կարող եմ քեզ հետ եկեղեցիով պսակվել:

Աղջիկն ուսը շարժեց, այսինքն՝ «ես ի՞նչ գիտեմ»:

— Գիտենալ-չգիտենալու բան չկա էստեղ,— ասաց կոմերիտականը խիստ տոնով:— Մենակ թե դու չընկնես մորդ մանր-բուրժուական ազդեցության տակ: Մնացյալը մենք կհարթենք կամ էվոլյուցիայով, կամ հեղափոխական փորձված ճանապարհով:

Աղջիկն այնպիսի մի հեզ հայացքով նայեց տղային, որ տղան դողաց երջանկությունից: Դա կնոջ հայացք էր իր ամուսնուն: Եվ այդ հայացքն ասում էր՝ «արա ինչպես հարմար է, իսկ ես կհնազանդվեմ…»:

— Երրորդ…— սկսեց Գառնիկը, բայց ջղայնացած ընդհատեց:— Ի՞նչ եմ հաշվում հիմարի պես՝ առաջին, երկրորդ, երրորդ…

Ապա իսկույն, հասկանալով, որ ինքը չէ այդտեղ մեղավորը, նա իր բարկությունը շուռ տվեց ըստ պատկանելվույն.

— Մեշչանիզմ, մանր-բուրժուականություն, նույնիսկ խոշոր: Էսքան ժամանակ ապրում ենք իրար կողքի ու իրար չենք ճանաչում: Եթե ես ծանոթ լինեի քու տեսակետների հետ, խո էսօր չէի՞ հաշվի՝ առաջին, երկրորդ, երրորդ… Ես մինչև անգամ չգիտեմ, դու հարմա՞ր կին կլինես ինձ համար, կամ ես քեզ՝ հարմար ամուսին: Գոնե մի քանի անգամ իրար հետ կինո գնացած լինեինք, խոսեինք, ծանոթանայինք, թե չէ էսպես…

— Դու ոնց որ ուզես՝ ես էնպես էլ կլինեմ,— կամակատար կերպով ասաց Լիլիան՝ տղայի տատանվելուց վախեցած:

— Այ, տեսնո՞ւմ ես,— բարկացավ Գառնիկը,— արդեն սկսվում է մեր մեջ առաջին տարաձայնությունը: Էդ ինչո՞ւ համար պիտի դու ամեն ինչի մեջ իմ ասածի նման լինես ու ոչ թե ես քու ասածի նման… Օրինակ, հանկարծ մեկ էլ տեսար, վերցրի ու ասացի՝ «եկ, Լիլիա, ամսեկան մի անգամ գնանք բաղնիք»…

Աղջիկը զարմացած նայեց նրան:

— Տեսնո՞ւմ ես: Իսկ դու պիտի սապոնն ու սպիտակեղենը տաս ձեռքս ու ինձ վռնդես տնից, որ մինչև չլողանամ՝ տուն չգամ:

— Իհարկե,— բավական համարձակ ասաց աղջիկը՝ տեսնելով, որ հարցը վերաբերում է կնոջ մոտ այնքան շեշտված, բայց տղամարդու մոտ երբեմն այնքան պակասող հատկությանը՝ մաքրությանը:

— Եվ այլն և այլն,— ամփոփեց Գառնիկը:— Ուրեմն, դուրս է գալիս, որ որոշ հարցերում դու պիտի լսես ինձ, իսկ մի շարք ուրիշ հարցերում՝ ես քեզ…

— Էդպես ես ուզում՝ էդպես կանենք,— նորից նույն հեզությամբ համաձայնեց աղջիկը: Բայց այս անգամ նրա հեզությունը ոչ միայն չբարկացրեց երիտասարդին, այլև, ընդհակառակը, մի հաճելի նվաղում պատճառեց սրտին և գլխին: Գառնիկը, առաջին անգամ իր կյանքում, զգաց, թե ինչպիսի տղամարդկային երջանկություն է՝ իր կողքին ունենալ նվիրված, կամակատար, քնքուշ մի էակի, այսինքն՝ կնոջ…

Մի քանի ժամ շարունակ, այդպես խելոք, իրար մոտ նստած, Գառնիկն ու Լիլիան խոսակցում էին, հարցեր տալիս միմյանց, պատասխանում, պատմում… Փոխադարձ ծանոթության ու մտերմության այն ճանապարհը, որը տղան ու աղջիկը սովորաբար անցնում են մի քանի ամսում կամ շաբաթում, գոնե մի քանի օրում, նրանք պետք է անցնեին սուղ ժամերի ընթացքում: Եվ միանգամայն բնական է այն, որ իրենց խոսակցությամբ և մոտ ապագայի ծրագրերով տարված, նրանք չնկատեցին, թե ինչպես Լիլիայի սենյակի դռանը մոտեցավ և շեմքի վրա սառեց-մնաց տաք բաղնիքից հետո խիստ քրտնած ու կարմրած «մեշչանկան» ՝ Գառնիկի ապագա զոքանջը…

— Այս ի՞նչ եմ տեսնում,— բղավեց նա:

Կարծես շանթ անցավ սենյակով: Երիտասարդները ոտքի ցատկեցին, թեև, ավելի մեծ հաջողությամբ, նրանք կարող էին տապալվել հատակին:

— Այս ի՞նչ եմ տեսնում…— խզված ձայնով կրկնեց լողացած կինը՝ մրրկի նման ներխուժելով սենյակ:

— Մենք, մայրիկ…— կմկմաց կոմերիտականը:

— Ի՞նչ… Մայրի՞կ… Կորիր այստեղից... Կորիր, կորիր…

Գառնիկը, որքան էլ որ շփոթված, այնուամենայնիվ գիտակցեց, որ բարվոք է՝ առայժմ հավաքել իր «փասափուսան»: Վերջին պահին նա մի ճեպ հայացք նետեց դեպի աղջիկը և խնդությամբ կարդաց նրա աչքերում— «Գնա, սիրելի Գառնիկ, ես ամեն ինչ կհարթեմ… Սա առաջին մայրը չէ, որ հուր ու կայծակ է թափում, իսկ ես առաջին աղջիկը չեմ, որ սիրահարված եմ և պիտի ամուսնանամ իմ սիրած տղայի հետ, և ինչ գնով էլ լինի՝ կամուսնանամ…»:

35

Ցողիկը, Վարդանի և Մուրադի հետ միասին, մտավ իր քեռու տունը: Նա բաց արեց նեղ միջանցքի վրա գտնվող դռներից ձախակողմյանը և կոմերիտականներին հրավիրեց ներս: Դա մի փոքրիկ սենյակ էր՝ լուսամուտը փողոցի վրա: Լուսամուտի մոտ դրված էր մի փոքր սեղան՝ առանց սփռոցի, դրա կենտրոնում կանգնած էր մի շիշ գինի, դրված էին երկու գավաթներ, ափսեներ՝ մսի կտորներով, և հաց: Երկու տղամարդ, երկուսն էլ հիսունն անց և բավական ճաղատ, նստել էին սեղանի շուրջը, դեմ-դիմաց: Նրանք արդեն ավարտել էին «շտապ կարգի, ոտի վրա» ուտելը և այժմ դավադիրների տեսքով փսփսում էին:

— Ներս, ավելի ներս,— ասաց Ցողիկը՝ ցույց տալով դիմացի դուռը:

Ներսի սենյակն արդեն ընդարձակ էր, լուսամուտներ ուներ թե փողոցի վրա և թե բակի: Այդտեղ արդեն, բաց էր արված մեծ սեղան՝ սպիտակ նախշեր ունեցող սպիտակ սփռոցով, որի վրա դրված էին սկուտեղներ, շշեր, պնակներ, ափսեներ՝ լի խնձորով, տանձով, խաղողով, գինիով, ձկնով, բողկով, կանաչիով, պանիրով…

— Նստեցեք, տղաներ,— հրավիրեց աղջիկը՝ աթոռներ առաջարկելով դեպի փողոց նայող լուսամուտներից մեկի մոտ:

Մուրադը շշմել էր: Նա իր կյանքում չէր տեսել այդպիսի ճոխ սեղան: Մի՞թե ճաշարանների սեղաններն իրենց անշուք սերվիզով կարող էին համեմատվել անգամ դրա հետ…

Իսկ սենյա՜կը, սենյա՜կը… Առաստաղը՝ քիվերով ու նախշերով, հատակը՝ կարմիր, պատերը՝ ծածկված դեղին պաստառներով, որոնք ունեն ոսկեգույն գծեր... Դռան մոտ պատից գլուխը դուրս էր ցցել մի եղջերու՝ հսկայական պոզերով և ապակյա խոշոր աչքերով: Դռան հակադիր պատի վրա կողք-կողքի կախված են երկու մեծ, գունավոր նկարներ՝ ոսկեզօծ շրջանակներով. Օթելլոն խեղդում է Դեզդեմոնային, իսկ Նապոլեոնը, թևերը կրծքին խաչած, նայում է այրվող Մոսկվային: Օթելլոյից ու Նապոլեոնից ներքև խփված է մի փոքրիկ պատվանդան, վրան ճենապակե արձանիկ՝ հովիվ տղան մի թևով գրկել է հովվուհի աղջկան և նրանք նայում են ծառի տակ հանգչող կամ արածող իրենց գառներին: Տղայի ուսը կա, աղջկան գրկած ձեռքը կա, իսկ թևի մեջտեղի մասը կոտրվել է: Արձանիկից ներքև արդեն, դրված է փափուկ թախտ՝ գորգով ծածկված:

«Ահա թե ինչպես են ապրում իմպերիալիզմի վարձկանները,— անցավ Մուրադի մտքով, և նա ցասումով շարունակեց.— պիտի ջարդել...»: Սակայն վերջին բառի վրա նա կտրուկ կանգ առավ: Ի՞նչը ջարդել և ինչո՞ւ համար ջարդել: Մի՞թե ափսոս չէ: Այ, հովվի թևը, օրինակ, ջարդված է, և

Մուրադն ափսոսում է դրա համար: Ոչ թե ջարդել, այլ հարկավոր է այնպես անել, որ բոլոր մարդիկ ապրեն այսպիսի կյանքով: Բայց ինչպե՞ս թե… Պրոլետարիատն ապրի այսպիսի զեխ կյանքո՞վ: Այս ինչե՞ր է մտածում նա: Արդեն սկսում է ընկնել բուրժուական գաղափարախոսության ազդեցության տակ: Այս ո՞ւր են բերել նրան Վարդանն ու Ցողիկը: Ինչո՞ւ նա համաձայնվեց գալ, նա, անաղարտ բանվորը…

Վարդանն ու Ցողիկը, որ լուռ հետևում էին Մուրադի զարմացած, հիացած հայացքին, նայեցին միմյանց, և ապա Ցողիկը հարցրեց.

— Հավանո՞ւմ եք քեռուս բնակարանը, Մուրադ:

Մուրադը մի արտահայտիչ շարժում արեց ձեռքով, այսինքն՝«բառեր չեմ գտնում արտահայտելու…»:

Ցողիկը վախեցած նայեց իր մանկության ընկերոջը: Մի՞թե նա էլ է հիացած և «բառեր չի գտնում արտահայտելու»…

Վարդանը, ըմբռնելով ընկերուհու հարցական հայացքը, ասաց քմծիծաղով.

— Мещанский вкус.

— Да ещё дешевенький,— ավելացրեց աղջիկը:

Նրանք երկուսն էլ ներողամիտ հայացքով նորից նայեցին Մուրադին, և հանկարծ Ցողիկի սիրտը ծակեց այն տխուր միտքը, որ ահա այսպիսի լավ երիտասարդը, այսպիսի ատլետիկ կազմվածքով ու պողպատե մկաններով, չունի այնքան կուլտուրա, որ կարողանա տարբերել բարոկկոն ու ռոկոկոն, մոդեռնն ու պարզապես անճաշակությունը…

— Դուք սովորո՞ւմ եք, Մուրադ,— հարցրեց աղջիկը՝ տրամաբանորեն շարունակելով իր միտքը:

— Որ սովորում եմ՝ օգո՞ւտն ինչ,— իր վրա բարկացած, թափով արտասանեց երիտասարդ շինարարը:

— Ինչպե՞ս թե…— տարակուսանքով հարցրին աղջիկն ու Վարդանը միանգամից:

— Իհարկե,— պնդեց Մուրադը նույն զայրույթով:— Ինձ նման դմբոներին հարկավոր է դուրս շպրտել բանֆակից: Իզուր ենք տեղ գրավում էնտեղ: Արդեն երկրորդ տարին է, որ սովորում եմ ու ռուսերեն եմ անցնում, բայց ի՞նչ եմ սովորել՝ տավարիշչ, խլեբ, վադա ու մի քանի հատ էլ ուրիշ էդպիսի բառ: Ռուսերեն դասից հետո ուսանողներս հավաքվում ենք միջանցքում ու ծիծաղելով պատմում ենք իրար, թե ով ինչ կերպ գլուխ պահեց, դասավանդողին խաբեց ու «բավարար» ստացավ: Իսկ էսօր, դե կեր, Մուրադ, դուք իրար հետ խոսում եք ռուսերեն, իսկ ես նայում եմ ոչխարի նման…

— Ներողություն եմ խնդրում ձեզանից, Մուրադ,— զղջումով ասաց աղջիկը:— Իսկապես որ շատ մեծ անքաղաքավարություն է, երբ երրորդ անձնավորության ներկայությամբ խոսում են նրան անհասկանալի լեզվով: Բայց ես երբեմն մոռանում եմ, որ դուք…

— Եվ լավ ես անում, որ մոռանում ես,— առանց նկատելու, որ եզակի է խոսում, ասաց Մուրադը:— Ի՞նչ կփոխվի, եթե չխոսես ռուսերեն: Դրանով ոչ դու քու սովորածը կմոռանաս, ոչ էլ ես իմ չիմացածը կսովորեմ…

Պատճառաբանությունն այնքան զորեղ էր, որ ոչ մեկը չառարկեց:

— Իսկ դու ազնիվ ընկեր չես,— հարձակվեց Մուրադը Վարդանի վրա:— Այո, այո: Եվ մի ծիծաղիր, ես բոլորովին լուրջ եմ ասում: Էսքան ժամանակ է, որ ապրում ենք միասին, ու քու մտքով չի էլ անցել, թե ինձ ու Գառնիկին ռուսերեն սովորեցնես:

— Ե՞րբ եք ասել, որ մերժել եմ,— լրջացավ, սկսեց պաշտպանվել Վարդանը:

— Որ էդքան գիտակցություն ունենայինք ու ինքներս ասեինք քեզ՝ էլ մեր անունը Մուրադ ու Գառնիկ չէր լինի, այսինքն՝ դմբո… Դու պիտի ինքդ ստիպեիր մեզ:

— Իսկ ինչպե՞ս եք սովորում մյուս առարկաները,— հետաքրքրվեց Ցողիկը:

— Նույն…— Մուրադը կուլ տվեց գռեհիկ բառը, որով ուզում էր որակել, և ասաց.— նույն զիբիլն է: Ամենից լավ սովորում եմ ֆիզիկան, էն էլ՝ որովհետև շատ եմ հարգում Սանթուրյանին ու չեմ ուզում նրա սիրտը կոտրել նրա դասավանդած առարկայի գծով:

— Իսկ ո՞վ է քեզ խանգարում լավ սովորել,— անցավ հարձակման Վարդանը:— Խորհրդային իշխանությունը քեզ հնարավորություն է տվել, իսկ դու…

— Գիտե՞ս ինչ, Վարդան, դու դեմագոգիա մի անի:

Ցողիկը ծիծաղեց:

— Այո, այո: Թեև նա քու հին ընկերն է, բայց մեկ-մեկ սիրում է դեմագոգիայով գլուխ պրծացնել ինձանից: Մեղավորը, Վարդան, մենք բոլորս ենք՝ ես, դու, Գառնիկը, հլա էն սրիկայի մասին չեմ խոսում: Մի մարդ որ գոհ լինի իր կյանքից, էլ ինչո՞ւ պիտի սովորի: Իսկ ես ու Գառնիկը գոհ էինք, որովհետև ուրիշ ավելի լավ կյանք չենք տեսել, այլ ընդհակառակը, տեսել ենք ավելի վատը: Մեր կոմերիտական կենցաղը մեզ լրիվ բավարարում էր: Բայց ըհը, եկավ Ցողիկը, խոսեց ռուսերեն, ու մենք տեսանք, թե ինչքան վատ է, որ մենք չենք խոսում: Մենք ասացինք՝ համեցեք, նստեցեք, ու առաջին անգամ տեսանք, որ նստեցնելու տեղ չունենք, ոչ աթոռ, ոչ էլ էն բանը… բազմաթոռ: Իսկ հիմի, էս րոպեիս, տեսնելով էս ճոխությունը, ես ավելի եմ մի տեսակ դառնում: Մի՞թե մենք մարդավարի ենք ապրում: Մի՞թե մենք մարդ ենք՝ հարյուր տոկոսով…

Ցողիկը, չթաքցրած հիացմունքով, նայում էր Մուրադին: Աղջկա սիրտն այժմ խնդությամբ էր լցվել այն համոզմունքից, որ «այս տղայից մարդ դուրս կգա…»:

Լինելով ընտանեկան լավագույն դաստիարակություն ստացած աղջիկ, որի մոտ այնքան սուր, համարյա հիվանդագին կերպով շեշտված էր գեղեցկի, վայելուչի, ճաշակի զգացումը, նա անկարող էր լսել կամ տեսնել որևէ տգեղություն, տգիտություն, անտեղյակություն՝ առանց հիասթափության ծանր զգացումի: Նա գիտեր, որ ինքն անկարող կլիներ իր կյանքը կապել թեկուզև Միքել-Անջելոյի Դավթի հետ, եթե նա իր մտքի ճկունությամբ, իր զարգացումով, իր դաստիարակությամբ թեկուզ մի փոքր ցած լիներ աղջկանից: Դեռ ճանապարհին, քայլելով դեպի իր քեռու տունը, նա մտքում համեմատել էր իր կողքով քայլող երկու կոմերիտականներին և թախիծով մտածել, թե որքան լավ կլիներ, եթե միմյանց միացվեին Մուրադի հուժկու կազմվածքն ու Վարդանի դաստիարակությունը, գիտելիքները, աղջկան կես խոսքից հասկանալու ընդունակությունը, գեղեցկության զգացումը… Կստացվեր մի երիտասարդ, որի ետևից Ցողիկը պատրաստ կլիներ գնալ աշխարհի ծայրը…

Այժմ, լսելով Մուրադի դաժան խոսքերը՝ ինքն իրեն ուղղած, աղջիկը մեծ խնդությամբ հասկացավ, որ այդ բանվոր-շինարարն ինքնագոհ ու սահմանափակ երիտասարդ չէ, որին վիճակված է միշտ մնալ այդպիսին, ինչպիսին որ կա: Չի անցնի երկար ժամանակ, և Մուրադը, Աստված իմ, թեկուզև անցնի երկար ժամանակ, ի՞նչ կա որ: Նրանք դեռ երիտասարդներ են և նրանց դիմաց ձգված է մի ամբողջ կյանք…

— Իսկ ինչո՞վ է զբաղվում քեռիդ,— հնչեց Ցողիկի ականջին Վարդանի ձայնը:

Ցողիկը մտքում դժգոհեց այդ անտեղի միջամտությունից ճիշտ այն րոպեին, երբ նա երազում էր, թե ինչպես ապագայի օրերից մեկում ինքն ու Մուրադը կնստեն միասին մի գեղեցիկ, մեծ, շատ մեծ զբոսայգում, և Մուրադը կասի նրան այնպիսի խոսքեր, կարտահայտի այնպիսի ճկուն մտքեր,

կզեղի այնպիսի նուրբ զգացմունքներ, որպիսիք չէր կարողանա նույնիսկ աղջիկն ինքը. ճիշտ այդ րոպեին Վարդանի հարցը խզեց նրա երազը:

— Քեռի՞ս: Անցյալում նա երկաթավաճառ է եղել, իսկ հիմա, մեծ տուրքի պատճառով փակել է խանութը և զբաղվում է… իր քրոջ գործով…

— Հասկանալի է,— ասաց Վարդանը:— Եվ դու հարմար գտար մեզ բերելու մի էդպիսի մարդու տունը…

— Աստված իմ,— բացականչեց Ցողիկը:— Ես ասացի՝ իր քրոջ, բայց դա ճիշտ է ոչ բոլորովին: Քեռիս պարզապես լիկվիդացիայի է ենթարկում դեռ չվաճառած իր երկաթեղենը, որից հետո մտադիր է ծառայության մտնել պետական որևէ խանութում՝ որպես ապրանքագետ կամ վաճառորդ:

— Էդ երկու նստածներից մե՞կն էր քեռիդ,— հարցրեց Մուրադը:

— Այո: Իսկ մյուսն անշուշտ երկաթեղեն գնող է:

Սենյակի դուռը բացվեց և ներս մտավ շարժական մսակույտը՝ Ցողիկի քեռակինը: Գոգնոցն իր ահավոր փորի վրա կապած, թևքերը վեր քշտած և իր գերանաչափ բազուկները բաց արած, նա դեմքի վրա գոյացրել էր այնպիսի մի տանտիրուհիական պաշտոնական ժպիտ, որ սկուտեղներից ամենամեծն անգամ ազատ կարող էր մտնել նրա բերանը և դուրս գալ՝ ինչպես թավան փուռը:

— Բարև ձեզ, բարև ձեզ,— ասաց նա՝ արևածաղկի բադաթի նմանվող իր հաստ ու լայն թաթը մեկնելով կոմերիտականներին:

Մուրադը, նստած, բռնեց նրա ձեռքը, թեթևակի սեղմեց: Վարդանը կանգնեց ոտքի, անվանեց իրեն, նույնպես բռնեց արևածաղկի բադաթը, բայց իսկույն թողեց: Կնոջ ձեռքը սարսափելի տաք էր և կարծես հագեցած էր այն բոլոր ուտելիքների հյութերով, որոնցով նա պատրաստվում էր հյուրասիրել կոմերիտականներին: Վարդանին այնպես թվաց, որ եթե նա մի փոքր անգամ սեղմեր այդ ձեռքը, դրա մաշկի բոլոր ծակոտիներից չխրթմա պիտի դուրս ցայտեր:

— Լավ որ եկաք,— շարունակեց ուրախանալ տանտիրուհին:— Ցողիկիս ասում եմ՝ որ ըտենց լավ-լավ ընկերներ ունես, բա խի՞ չես բերում տենանք…

Եվ նա, առանց թաքցնելու, «տենում» էր, ոտից-գլուխ զննում էր երիտասարդներին: Մուրադը գոհունակությամբ հասկացավ, որ կինը չճանաչեց նրան:

— Հալբաթ էս մեկը կըլի քու էրեխա վախտվա հընգերը,— երշիկի նման հաստ մատը դեպի Վարդանն ուղղելով, հարցրեց տանտիրուհին:

— Այո, քեռակին:

— Դե զրից արեք, զրից արեք, էս ա՝ կնստենք սեղան: Մենք էլ ենք սոված:

Եվ գնաց դեպի դուռը: Շեմքի վրա նրան դիմավորեց ամուսինը, որը նույնպես մտնում էր մեծ սենյակ՝ հյուրերի հետ ծանոթանալու համար:

— Վերջապես գնա՞ց,— հարցրեց կինը:

— Գնաց,— զվարթ հաղորդեց ամուսինը:— Ինչքան որ ժանգոտ երկաթ-մերկաթ կար՝ դիփ սաղացրի գլխին: Բեհը տվեց, էգուց գալիս ա տանի: Պտի գեղերում ծախի:

— Էդ իրա գործն է,— անտարբեր թափ տվեց կինն իր բադաթը:— Լավ գին տվե՞ց:

— Չէր տալի, բայց որ կատարը մի քիչ տաքացավ՝ կակղեց: Է, կնիկ ջան, մարդի միջի էշը որ չըլի…

— Էշի գինը հազար մանեթ կըլի,— ավարտեց կինն ասացվածքն ու գնաց իր գործին:

Տղամարդը մոտեցավ լուսամուտի մոտ նստածներին: Մասամբ՝ հաճախորդի հետ խմած գինուց, մասամբ՝ հաջող առևտրից, նրա տրամադրությունը բարձր էր: Ուստի և, կոմերիտականների հետ նա ծանոթացավ ոչ թե սովորական պատշաճության կանոնները պահպանելով, այլ բավական վիրավորական մտերմականությամբ: Ի միջի այլոց, դրա գլխավոր պատճառը, գինուց և հաջող առևտրից ավելի, այն էր, որ նա երիտասարդներին համարում էր իրենից շատ ցածր արարածներ, ոչ արժանի լուրջ վերաբերմունքի:

Դիմելով Վարդանին, նա, առանց ձեռք տալու, բարևեց՝ ձևացնելով հին Լենինականի՝ Գյումրու բարբառը և անվանելով նրան գյումրեցիներին տրվող ծաղրական մականունով.

— Յա, Օնի՞կ, բարև քեզի… Ծո, ըսել է դո՞ւն ես մեր Ցողիկի հընկերը:

— Բարև ձեզ,— զուսպ պատասխանեց Վարդանը:— Այո, ես եմ:

— Խո չնեղեցա՞ր, այ օղուլ,— շարունակեց կատակել երկաթավաճառը:— Թե նեղեցար՝ մե ստաքանըմ պաղ ջուր բերեմ՝ խմե…

Դառնալով դեպի Մուրադը, նա հարցրեց՝ դեռ շարունակելով «գյումրեցերեն» խոսելը.

— Դո՞ւ ուրտից ես, ախպոր մանչ:

— Ես ծագումով գյուղացի եմ,— ասաց բանվոր-շինարարը,— իսկ հիմի…

— Ըսել է այվա՞զ ես,— բնորոշեց նա գյուղացիներին տրվող ծաղրական մականունով, անքաղաքավարի կերպով չլսելով երիտասարդին մինչև վերջ: Եվ այժմ արդեն, խոսելով «գեղացնակ», շարունակեց:— Հո՞րի իս էկի քաղաք: Չըս գի՞նա: Ի՞մալ իս: Ճժե՞ր իմալ ին:

Ցողիկը կախել էր գլուխը՝ և՛ զայրույթից, և՛ զղջումից, որ կոմերիտականներին բերել էր մի այդպիսի անասունի մոտ: Վերջ տալու համար նրա ծաղրական ցանցառություններին, նա ասաց.

— Քեռի, դու կատակում ես, որովհետև տրամադրությունդ բարձր է, իսկ չէ՞ որ իմ ընկերները դեռ ոչինչ չեն խմել: Մի՞թե դա հավասարություն է:

— Խմե՞լ,— կրկնեց երկաթավաճառը:— Էս սհաթիս ես էդ գործը կազմակերպեմ: Աղջի,— բղավեց նա կնոջը:— Ի՞նչ էղավ քու ճաշը: Սոված կտորվեցինք…

Եվ որովհետև կինը չէր կարող լսել նրան, նա ելավ դուրս:

— Ես էլ գնամ քեռակնոջն օգնելու,— ասաց Ցողիկը՝ շտապելով քեռու ետևից:

Մնալով մենակ, կոմերիտականները նայեցին միմյանց: Նրանք ոչինչ չասացին իրար, այլ միայն դառը քմծիծաղով օրորեցին գլուխները:

36

Կասկած չկար, որ Ցողիկը նկատողություն էր արել քեռուն՝ այդ տոնով նրա ընկերների հետ խոսելու համար, և նկատողությունն արել էր բավական խիստ, որովհետև երկաթավաճառը ճաշի սեղանի շուրջը նստած ժամանակ ոչ միայն լուրջ ու զուսպ էր կոմերիտականների հետ, այլև նկատելիորեն վիրավորված էր երևում իր քրոջ աղջկանից:

Բայց, որքան էլ որ զուսպ ու լուրջ, նա, այնուամենայնիվ, չէր կարողանում զսպել իր մեջ այդ «քոնձռոմոլների» նկատմամբ արհամարհանքը և իր գերազանցության զգացումը: Բայց նա այժմ ուրիշ կերպ էր արտահայտում դա: Ի միջի այլոց, նա այդ անում էր ոչ թե գիտակցորեն, դիտմամբ,

այլ, այսպես ասած՝ բնականաբար, ելնելով իր էությունից: Նա ուրիշ կերպ ոչ կարող էր մտածել, ոչ վարվել:

— Համեցեք, տղաներ,— հրավիրեց նա այն մարդու անկեղծ առատաձեռնությամբ, որը գիտե, որ սեղանի վրա ամեն ինչ առատ է և բոլորին կբավարարի, հետևաբար և խնայելու հարկ չկա:— Սա գինու լավ մազա է, այսինքն՝ զակուսկի: Իշխան ձուկ: Կերած չեք լինի:

— Ո՞րտեղից պիտի կերած լինեն խեղճերը,— մայրական ցավակցությամբ, բայց առավել ևս՝ իր գերազանցության գիտակցութամբ, հառաչեց քեռակինը:— Սկի լսած կա՞ն որ: Սևանի ձուկ է, տղաներ ջան:

— Ճաշարանում շատ անգամ է լինում,— ասաց Մուրադը:— Մեկ-մեկ վերցնում ենք:

— Է՛,— ծոր տվեց քեռին՝ իսկույն «վերակառուցվելով»,—ճաշարանի իշխանն ի՞նչ իշխան է: Ո՞վ գիտա դրա պատրաստելը: Ամեն մի էշ հմի իշխան էփող ա դարցե:

— Մարդի միչի էշը որ չըլի…— սկսեց կինը:

— Էշի գինը հազար մանեթ կըլի,— ավարտեց ամուսինը:

— Դե, դու էլ վերցրու, համեցի,— դիմեց նա Վարդանին՝ դեմ անելով ձկան պնակը:— Մուղաթ կաց՝ չքցես սուփրին, կեղտոտես: Դե հիմի մի քիչ էլ սոկից քաշի թաբախդ: Քթալը վերցրու, քթալով քաշի, օրենքն էդ է: Չանգալով չի քաշվի, չսխալվես:

— Ի՞նչ ես սովորեցնում, քեռի,— ծիծաղեց Ցողիկը՝ աշխատելով զվարթություն մտցնել անախորժ մթնոլորտի մեջ:— Նա ամեն ինչ գիտե:

— Է՛, Ցողո ջան,— հառաչեց քեռու կինը,— ո՞րտիան պտի իմանա: Դու գիտաս ամեն մարդ կարա քու պատվավոր ընտանիքի նիստ ու կա՞ցն ունենա: Խեղճի ծնողները վայթե սկի կուշտ փորով հաց էլ չեն կերել…

— Գիտե՞ս, քեռի, ես Երևանը շատ հավանեցի,— հայտնեց Ցողիկը՝ խոսակցության նյութը փոխելու համար:— Ես թեև դեռ շատ քիչ բան եմ տեսել, բայց դա էլ բավական է ճիշտ տպավորություն ստանալու համար:

— Հլա ավելի կսիրես,— խոստացավ քեռին:— Հլա ունթունվի համալսարան, հլա քեզ պսակենք մի լավ պրաֆեսորացու տղի հետ… Երիտասարդ,— դիմեց նա հանկարծ Մուրադին,— հլի մի էդ առաջիդ պզտի թաբախը վե կալ, շուռ տու, նայի քամակին:

Մուրադը զարմացած նայեց նրան:

— Վե կալ, վե կալ, մի վախենա,— քաջալերեց տանտերը: Մուրադը վերցրեց փոքր ափսեն, նայեց ետևի կողմը:

— Չհասկացա՞ր,— ներողամիտ ծիծաղեց երկաթավաճառը:— Մի տուր էստեղ: Նայի, ի՞նչ է գրած: Գրած է անգլիերեն.— «Սերվի զավոդ»: Մաքուր ֆառֆուռ է:

— Հինգ հատ ունենք ընդրանցից,— հայտնեց տանտիրուհին:— Մեկը՝ հրեն, թուռշի է մեչը, մնացածները՝ էն, էն, էս: Ամեն մեկի միչի նկարն ուրիշ ջուռա է:

Վարդանը վերցրեց ափսեն տղամարդու ձեռքից, նայեց, դրեց սեղանին:

— Գրված է գերմաներեն,— ասաց նա:— Եվ սա Սևրից չէ: Ի միջի այլոց, ֆարֆոր էլ չէ, այսինքն՝ ճենապակի, այլ ֆայանս է:

— Ի՞նչ ես դուրս տալի,— բարկացավ երկաթավաճառը:

Ցողիկը վերցրեց ափսեն, նայեց մի վայրկյան, դրեց տեղը:

— Վարդանը ճիշտ է ասում, քեռի:

— Ի՞նչ եք գլուխ ուռեցնում,— սրտնեղվեց քեռին:— Նիկալայի ժամանակ հատին երկու մանեթ եմ տվել, էն Զորավորը վկա: Վեց հատ էր, հլա մեկն էլ կատուն ջարդեց:

— Խաբել են քեզ, քեռի,— ժպտաց Ցողիկը:

— Գիտա՞ս ինչ, քրոջ աղջիկ,— դարձավ քեռին դեպի նա՝ հազիվ զսպելով իր ցասումը:— Քու հերը մարդ էր, բայց մենք էլ էշ չենք: Ինձ խափողը հլա չի ծնվել մոր փորից: Դու ո՞նց ես անուն դնում Սերվի ֆառֆուռին:

— Լավ, լավ,— ձեռքով արեց կինն ամուսնուն՝ նույնպես վիրավորված,— վերջ տու: Թող մեր թաբախները կավե քրեղան ըլնեն:

— Դու գերմաներենն ու անգլիերենը ո՞րտեղից ես ջոկում,— խիստ անհաջող կերպով զսպած արհամարհանքով, դիմեց տանտերը Վարդանին:

— Ես չգիտեմ ոչ մի լեզուն, ոչ մյուսը,— խոստովանեց կոմերիտականը:— Բայց ափսեի տակ բառերը գրված են գոթական տառերով: Հետևաբար…

— Կերեք, կերեք,— առանց սպասելու, որ տղան իր խոսքն ավարտի, ասաց կինը սեղանակիցներին:

Երկաթավաճառը չափազանց զայրացած էր Վարդանի վրա և առիթ էր որոնում որևէ նկատողություն անելու նրան, ապացուցելու, որ նրա գիտեցածը մի պատահական ծաղիկ է նրա տգիտության և անկուլտուրականության աղքատիկ անապատում: Բայց նա պատրվակ չէր գտնում: Վարդանը ոչ գինու բաժակն էր շուռ տալիս թևի մի անզգույշ շարժումով, ոչ էլ, մանավանդ, լպստում իր ափսեն կամ քացախ ցանում պանրի վրա: Իսկ դրանից պակաս որևէ անշնորհքություն երկաթավաճառն անկարող էր ըմբռնել: Օրինակ, ձվածև կազմվածքով և խնձորաձև գլխով կինն ուտում էր չմփչմփացնելով ու ծպծպացնելով, հաճախ զկրտում էր ու ործկում, բայց դա բնական բան էր նրանց ընտանիքում:

Իսկ Ցողիկը բռնազբոսիկ շաղակրատությամբ դեռ աշխատում էր կցել սեղանի շուրջը որևէ անմեղ խոսակցություն, թուլացնել մթնոլորտը:

Չգտնելով Վարդանին խայթելու որևէ առիթ, երկաթավաճառը նորից դարձավ դեպի Մուրադը:

— Չնեղանաս, երիտասարդ, խամ ես, չգիտես, դրա համար եմ սովորեցնում, որ եթե մի ուրիշ տեղ մարդամեջ մտնես, վրադ չծիծաղեն: Չնեղանաս… էդ զատը, որ ըտի դրած է՝ պատ սվաղելու մալայի նման, հենց կատլետ վերցնելու համար է: Դու խի՞ դա թողած, քթալով ես վերցնում կատլետը…

— Գդալով պետք չէ,— համաձայնվեց Վարդանը,— այլ պետք է պատառաքաղով: Ոչինչ, կսովորենք, դեռ ջահել ենք: Իսկ էդ «պատ սվաղելու մալայի նման զատը» ոչ թե կատլետ վերցնելու համար է, այսինքն՝ կողիկ, այլ խմորեղեն…

Երկաթավաճառը զարմացած նայեց լենինականցուն: Ցողիկի քեռու դեմքը կարմրել էր կատաղությունից, բայց նա չհամարձակվեց հակաճառել երիտասարդին՝ տեսնելով, որ նա այնքան էլ «էշ» չէ, որքան որ ինքն էր ենթադրում, և, ընդհակառակը, կարող է ավելի նեղը լծել տանտիրոջը:

— Կերեք, կերեք,— ասաց նա՝ խոսքն ուղղելով բոլորին:— Ճաշի ժամանակ չեն խոսի: Մնա, կխոսեք բջիջի ժողովին…

Վարդանը հացի կիսատ պատառը դրեց վար: Բավական է… Պետք է վերջ տալ այդ ճաշին…

— Ներեցեք,— դիմեց նա երկաթավաճառին՝ խիստ քաղաքավարի:— Դուք պատառաքաղը բռնել եք գդալի նման, մինչդեռ պետք է բռնել ինչպես բիզ:

— Ես զառաֆաթ եմ անում,— շփոթվեց տանտերը՝ իսկույն ձեռքի մեջ շուռումուռ տալով պատառաքաղը և չգտնելով դրա բռնելու ճիշտ ձևը:

— Դուք մի ուրիշ «զառաֆաթ» էլ եք անում, այսինքն՝ կատակ,— դաժանությամբ շարունակեց կոմերիտականը:— Կատլետը պիտի կտրել ոչ թե դանակով, այլ պատառաքաղով: Ձեր երրորդ զառաֆաթն այն է, որ գարչիցան, այսինքն՝ մանանեխը վերցնելիս դուք ամեն անգամ գդալը կոխում եք ամանը, մինչդեռ հարկավոր է վերցնել մի անգամ և քսել ձեր ափսեի եզրին: Ի միջի այլոց, ձեր չորրորդ զառաֆաթն այն է, որ դուք մանանեխի համար գործածում եք մետաղե գդալ, մինչդեռ հարկավոր է փայտյա: Ձեր հինգերորդ զառաֆաթը…

— Ձենդ քեզ քաշի՛, լակոտ,— գոռալով ոտքի ցատկեց երկաթավաճառը:— Դու ի՞նչ զիբիլ ես, որ իմ տան մեջ ինձ նիստուկաց ես սովորեցնում: Աբա, փասափուսեքդ քաշեք իմ տնից, հայդա՛…

— Хам!— բացականչեց Ցողիկը քեռու երեսն ի վար:— Хам!…

— Արա, դու էդ ո՞ւմ ես խամ ասում, քա՛ծ,— հարձակվեց նրա վրա քեռին:— Բա որ ես խամ եմ, ուրեմն դո՞ւ ես խասը: Էս չե՞ն քու հնգերները…

Վարդանը ձեռքի մի շարժումով խնդրեց Ցողիկին՝ լռել, մի ուրիշ շարժումով սաստեց միջամտել ուզեցող զայրացած տանտիկնոջը՝ «տեղդ վար ընկիր ու մի խանգարիր, տիկին», մի երրորդ շարժումով ետ պահեց Մուրադին, որն ուզում էր հարձակվել լկտի «մասնավորների» վրա և «երիտբանվորավարի» դնքսել նրանց, և ասաց տանտիրոջը.

— Գիտե՞ք ինչ, քաղաքացի… Եթե Ցողիկը չլիներ, մենք, իհարկե, ոտք չէինք կոխի այստեղ: Սպասեցեք, սպասեցեք, մի հուզվեք: Մենք հիմա ազատ կթողնենք ձեզ…

Դառնալով դեպի Ցողիկը, նա շարունակեց.

— Վերջացնենք մեր երեկ գիշերվա խոսակցությունը, Ցողիկ: Դու հիմա տեսնո՞ւմ ես, թե ինչ արարածներով լի հին աշխարհի դեմ ենք մենք պայքարում: Եվ դու ուզում էիր լոյալ մնալ մեր և սրանց միջև… Գնանք, Մուրադ, դու ոչինչ չունես ափսոսալու, որ եկար այստեղ: Բավական է հին աշխարհը տեսնես միայն կինոներում…

— Սպասեցեք,— ասաց Ցողիկը,— ես էլ եմ գալիս ձեզ հետ:

— Դո՞ւ խի ես ճաշդ կիսատ թողնում,— բարկացավ քեռու կինը:— Վախենում ես ճամփեն չգտնե՞ն:

— Վախենում եմ, որ ես ինքս չգտնեմ «ճամփեն» առանց նրանց,— ասաց Ցողիկը:— Գնանք, տղաներ…

Կոմերիտականները միջանցքից դեռ դուրս չէին ելել փողոց, երբ Ցողիկն շտապ ներս մտավ աջակողմյան սենյակը, վերցրեց իր փոքրիկ ճամպրուկն ու թեթև վերարկուն և նորից միացավ իր ընկերներին:

Երկաթավաճառը, ճաշի սեղանի մոտ նստած, լուռ մտածում էր. լա՞վ արեց, թե վատ, որ վռնդեց իր տնից երկու կոմերիտականներին: Հանկարծ մարդ չուղարկե՞ն նրանք իր տունը խուզարկելու և գտնելու նկուղում պահած ահագին երկաթեղենը…

Նրա կինը, որ միջանցքում կանգնած, ուշադիր հետևում էր, որպեսզի կոմերիտականները դուրս գնալիս «բան-ման չթռցնեն», հանկարծ վազելով մտավ ներս՝ ամուսնու մոտ:

— Հլա մի դուս արի, քվորդ ախչիկը չամադանը վե կալեց ու էթում ա նրանց հետ…

Ցողիկի քեռին մի ոստյունով ցատկեց մեծ սենյակից փոքրը, մի երկրորդ ոստյունով՝ այդտեղից միջանցք, իսկ երրորդով՝ միջանցքից փողոց:

— Ցողո,— հրամայաբար ձայն տվեց նա աղջկա ետևից,— ետ դարցի, շո՛ւտ…

— Убирайтесь!— ասաց Ցողիկը՝ թեթևակի շուռ տալով իր գլուխը և ցույց տալով քեռուն միայն իր պրոֆիլը:

— Կեցցե՛ս,— բացականչեց Մուրադը,— հարյուրտոկոսային կոմերիտական վերաբերմունք…

Նա վերցրել էր ճամպրուկն աղջկա ձեռքից: Վարդանը վերցրել էր աղջկա վերարկուն:

Փողոցում արև էր, պայծառ օր, և երիտասարդների առջև բաց էին բոլոր ճանապարհները…

37

Երեք ընկերները, լուռ, զայրացած, շտապ անցնում էին փողոցներով՝ քայլելով հաստատուն և անտատան, կարծես գիտեին, թե ուր են գնում: Դժվար էր ասել, թե նրանցից որ մեկն էր ուղություն տալիս մյուսների քայլերին, բայց անցնելով Ալավերդյանը և թեքվելով Աբովյան, նրանք իջան այդ փողոցով և ուղիղ եկան Ցողիկին արդեն ծանոթ այգին:

Հազիվ էին նրանք նստել և դրել իրենց կողքին աղջկա ճամպրուկն ու վերարկուն, երբ նրանց լռությունը փոխարկվեց վրդովված, աղմկալի խոսակցության:

— Хам!,— մի անգամ ևս կրկնեց Ցողիկը քեռու հասցեին:— Վարդան, սիրելիս, նա հենց ինքը խնդրեց, որ ծանոթացնեմ քեզ իր հետ, իսկ երբ ասացի, որ հրավիրել եմ նաև քո երկու ընկերներին, ուրախացավ: Եվ ահա…

— Նրան աուդիտորիա էր պետք՝ իր սեփական գերազանցությունը ցույց տալու համար,— հայտնեց Վարդանն իր կարծիքը:— Դա հատուկ է բոլոր քաղաքների մեշչանկաներին:

— Բայց դու լա՛վ կպցրիր նրան,— հրճվանքով ասաց Մուրադն ընկերոջը:— Հենց իր զենքով:

Իհարկե, այդ «ճաշի» ժամանակ ամենից շատ տուժել, ամենից շատ վիրավորանք կրել էր շինարար բանվորը: Ուստի և Ցողիկը, հոգու խորքից եկող անկեղծ կարեկցությամբ ու զղջումով, դրեց իր ձեռքը տղայի ձեռքի վրա և ասաց.

— Ես ներողություն եմ խնդրում ձեզանից, Մուրադ, հատկապես ձեզանից՝ այդ անախորժ դեպքի համար…

— Ումնի՞ց, ինչո՞ւ,— ժպտաց Մուրադը:— Դու ի՞նչ մեղավոր ես, որ կան էդպիսի սրիկաներ: Իսկ ինձ ցավակցել հարկավոր չէ: Քանի դեռ Վարդանն ինձ հետ է՝ ոչ ոք չի կարա իմ խաթրին կպչի: Իսկ հետո ես ինքս կսովորեմ պաշտպանել ինձ՝ թե քաղաքավարության կանոններով ու թե ռուսերեն:

Քաշելով Վարդանին իր կողմը, Մուրադը մի թևով գրկեց նրան, սեղմեց ուսին:

— Թող, արջ,— բարկացավ ընկերը,— ոսկոր-մոսկոր կջարդես:

— Ամոթ է, ի՞նչ տղամարդ ես,— ծիծաղեց Մուրադը,— մի հասարակ գգվանքի էլ չես դիմանում: Ինտելիգենտ:

Մուրադի զվարթությունը վարակեց նաև մյուսներին: Քիչ առաջվա դեպքը, որ մինչ այդ նրանց թվում էր լուրջ և կարևոր իրադարձություն, դարձավ ծաղրի առարկա: Վերհիշելով դրա առանձին

մոմենտները, խոսքն իրարից խլելով, կոմերիտականները ծիծաղում էին, իսկ Ցողիկը, նրանց միջև նստած, ժպտում էր՝ մերթ-մերթ ինքն ևս ասելով մի քանի խոսք:

— Էդ բոլորը լավ,— ասաց Մուրադը՝ հանկարծ լրջանալով,— բա դու հիմի ի՞նչ պիտի անես, Ցողիկ, քանի որ թքեցիր ու հեռացար նրանց մոտից: Որտե՞ղ պիտի քնես:

— Չգիտեմ,— իրեն հատուկ այնքան սազող թախծալի ժպիտով ասաց Ցողիկը:— Առայժմ կգնամ հյուրանոց, մինչև որ ընդունվեմ համալսարան և տեղ տան ինձ հանրակացարանում…

— Հրեն հյուրանոցը,— ցույց տվեց Մուրադը Նալբանդյան փողոցի վրա կանգնած երկհարկանի մի փոքրիկ շենք:— Բա էդ տնակը կբավարարի՞ Երևանին: Ինչքան չլինի՝ մայրաքաղաք ենք: Դու էնտեղ ազատ համար չես գտնի, Ցողիկ:

— Այդ մասին մտածելն էլ ավելորդ է,— հաստատեց Վարդանը:

Այգու միակ ծառուղիում, որտեղ նստած էին նրանք, զբոսնող մարդիկ սկսում էին շատանալ: Օրվա երկրորդ կեսի դեռ արևոտ այն պահն էր, երբ առավել խոր են շնչում ծառերի սաղարթները, երբ առավել գեղեցիկ է երևում շրջապատը: Զբոսնող մարդիկ դեպքերով ոչ հարուստ փոքրիկ քաղաքի բնակիչներին հատուկ հետաքրքրությամբ նայում էին այդ նստարանին, որի վրա նստած էին երկու հասարակ, սովորական կոմերիտականներ՝ կեպիները դեպի ծոծրակները թեքած, վերնաշապիկների շեղ օձիքներն արձակած, ծակոտկեն սանդալներով, իսկ նրանց միջև նստած էր մի բարեկազմ և շքեղ աղջիկ՝ ճաշակով հագնված, բարձր ոտքերով, սև ու մոխրագույն կաշվից կարած պայուսակը գոգում: Իսկ նրանց կողքին դրված էր ճամպրուկ, ճամպրուկի վրա՝ վերարկու: Իսկույն կարելի էր ասել, որ եկվորը կամ մեկնել պատրաստվողն աղջիկն էր, իսկ երիտասարդները դիմավորել էին նրան կամ պատրաստվում էին ճանապարհ դնել:

— Այդ դեպքում, ի՞նչ արած,— նորից ժպտաց աղջիկն իր թախծոտ ժպիտով,— կվերադառնամ Ռոստով…

— Ուրեմն դու դեռ չհասկացա՞ր, որ վերադարձի ճանապարհ չունես,— տաքացավ Վարդանը:— Թե՞ դեռ շարունակում ես տատանվել… մանր-բուրժուազիայի պես:

— Վերադառնալ բնակարանի պատճառո՞վ,— զարմացավ Մուրադը՝ չհասկանալով Վարդանի խոսքերի ավելի խոր իմաստը:— Ի՞նչ է, ամբողջ քաղաքում մի տեղ չպիտի՞ գտնենք քեզ համար: Ապա, Վարդան, շարժիր հանճարդ…

Կոմերիտականներն սկսեցին փոխնիփոխ անվանել զանազան աղջիկների, որոնց մոտ Ցողիկը կարող էր ապրել, և, դժբախտաբար, նույնպես փոխնիփոխ մերժել ամեն մի թեկնածություն: Մերթ աղջիկների ընտանեկան վիճակը թույլ չէր տա հյուր կամ կենվոր ընդունել, մերթ աղջիկները հենց իրենք համապատասխան չէին, որովհետև… Այդտեղ երիտասարդները նայում էին իրար և լուռ հասկանում.— աղջիկները կարող էին ամեն րոպե ծաղրել կամ վիրավորել «մեշչանկային» կամ պարզապես հենց սկզբից մերժել ընդունելու նրան:

Ի միջի այլոց, կոմերիտականների ծանոթ աղջիկների թիվն այնքան էլ շատ չէր, և երկուսն էլ շուտով սպառեցին համեստ ցուցակը՝ առանց որևէ մեկին ընտրելու: Բայց եթե նույնիսկ ընտրեին էլ, հազիվ թե բան ստացվեր դրանից: Որտե՞ղ էին ապրում այդ աղջիկները՝ նրանց հայտնի չէր: Վարդանն ու Մուրադը նրանց հետ հանդիպում էին ամեն տեղ, բայց ոչ տներում: Դեռ հարկավոր էր գտնել նրանց: Դա կարելի էր անել վաղը, մյուս օրը, իսկ Ցողիկն ապրելու տեղ չուներ հենց այսօր…

Տղաների խոսակցության ամբողջ ժամանակամիջոցում աղջիկը ներողամիտ ժպիտով նայում էր նրանց՝ թե շնորհակալության զգացումով, որ նրանք ուզում էին տեղ գտնել նրա համար, թե համոզված, որ չեն գտնի: Նա կարծես սպասում էր խոսակցության ավարտվելուն, որպեսզի վեր կենար, հրաժեշտ տար նրանց և գնար էլի իր Ռոստովը:

— Հակառակ դեպքում,— ասաց Մուրադը,— մենք կցրվենք զանազան ընկերների մոտ, իսկ մեր սենյակը կտանք քեզ:

— Դա ինքնըստինքյան հասկանալի է,— գլխով արեց Վարդանը:

— Իսկ իմ համաձայնությունը հարցրե՞լ եք,— ծիծաղեց Ցողիկը:

— Սպասեցեք, գտա,— բացականչեց հանկարծ Վարդանը, բայց և իսկույն ավելի կամացուկ, հարց տվեց իրեն.— գտա որ… Մի խոսքով, ընկերներ, ես երեկ պատահաբար ծանոթացա մի աղջկա հետ... Ատամներդ բաց մի անի էփած քյալլի պես, Մուրադ, էստեղ ծիծաղելու բան չկա: Եթե ճիշտը կուզենաք իմանալ, ոչ թե ես ծանոթացա նրա հետ, այլ նա ինձ հետ: Մի խոսքով, գուցե նրա մոտ հնարավոր լինի տեղավորել Ցողիկին, հը՞…

— Ինձ ինչո՞ւ ես հարցնում,— ծիծաղեց Մուրադը:— Էդ դու ինքդ պիտի իմանաս: Իսկ նա Ցողիկի մազերը չի՞ պոկի խանդից:

— Հիմար-հիմար դուրս մի տա,— բարկացավ Վարդանը:

Ցողիկը սրտանց ծիծաղեց:

— Չէ, ազնիվ կոմերիտականի խոսք, Ցողիկ,— դարձավ դեպի նա Վարդանը,— դա էդպիսի ծանոթություն չէ: Իսկ դու, Մուրադ, եթե ոչինչ չգիտես, ուրեմն մի խոսի: Ոչ Աստղիկը կարող է խանդել ինձ, ոչ Ցողիկը…

Նա նայեց քաղաքային կոտրված ժամացույցին:

— Դուք սպասեցեք ինձ էստեղ, ես կես ժամից կգամ: Հույս ունեմ, որ կհաջողվի: Կսպասե՞ք:

— Ուրիշ ի՞նչ կարելի է անել,— ժպտաց Ցողիկը:

— Մենակ թե շուտ արի, որ ես բանֆակից չուշանամ,— զգուշացրեց Մուրադը:

Վարդանն արագ քայլերով դուրս ելավ այգուց:

38

Հասնելով Կոնդ, Վարդանը վստահ մոտեցավ տներից մեկի դռանը, բայց այն պահին, երբ ուզում էր մտնել ներս, զարմանքով նկատեց, որ դռան վերևում տունն ունի պատշգամբ, մինչդեռ Աստղիկենց տունը չուներ այդպիսին: Ուրեմն նա սխալվել է, պետք է լինի հարևան տունը…

Սակայն հարևան տունը, սրբատաշ սև քարից կառուցված, բոլորովին այն չէր, ինչ նա փնտրում էր: Գուցե մյո՞ւս կողմի հարևանի տունը… Բայց դա, միհարկանի և խիստ ցածրիկ, դարձյալ այն չէր…

Հանկարծ Վարդանը հիշեց, որ այդ փողոցի ետևում կա ևս մի փողոց: Դե իհարկե, այնտեղ է ապրում Աստղիկը և ոչ թե այստեղ…

Այդ նոր փողոցի վրա արդեն բոլոր տները նման էին իրար և բոլորը միասին նման էին նրա որոնած տանը. բոլորն էլ մեկուկես հարկանի էին, անշուք և անկանոն քարերից շարած պատերով, բոլորն էլ ունեին երկփեղկանի, դարպասաձև դռներ, որոնք բացվում էին «դալանի» վրա, այսինքն՝ կամարակապ առաստաղով միջանցքի, որն անցնում էր շենքի միջով դեպի բակ:

Այլևս առանց կարողանալու որոշել, թե դրանցից որն է Աստղիկի տունը, Վարդանն սկսեց մտնել բոլոր դռներով և, դուրս գալով բակ, հարցնել՝ չի՞ ապրում արդյոք այդտեղ Աստղիկ անունով մեկը:

Վերջապես, մի բակում, գետնի վրա ծալապատիկ նստած մի կին, միջին տարիքի, բոբիկ հաստ ոտքերով, որ բուրդ էր «չիբխում», ասաց.

— Էստեղ է ապրում:

Եվ վեր կացավ:

— Կարելի՞ է տեսնել նրան:

— Ես եմ Աստղիկը,— ներկայացավ կինը:

Վարդանը ներողություն խնդրեց և նետվեց դուրս:

Այ քեզ բան… Նա չի կարողանում գտնել Աստղիկի տունը... Գուցե այս փողոցի վրա՛ ևս չէ... Իսկ որտե՞ղ է ուրեմն…

«Հիմար»,— բացականչեց հանկարծ Վարդանն իր հասցեին: Ի՞նչ կարիք կար այդքան երկար որոնելու: Եթե նա չի կարողանում գտնել տունը դռան կողմից, հո հե՞շտ կլինի գտնել ետին պատի կողմից…

Եվ իրոք, տնակների արանքներով անցնող նեղ ճանապարհով մի փոքր իջնելով դեպի ձորը, Վարդանը թեքվեց դեպի երեկվանից ի վեր իրեն ծանոթ քարաժայռը և մագլցելով դրա ետևում կանգնած ցածրիկ պատի վրա, իջավ «բաղ»:Նրա դիմաց, թաշկինակաչափ պարտեզի այն կողմում, կանգնած էր Աստղիկենց մեկևկես հարկանի տունը՝ ամբողջ վերին հարկի երկարությամբ փայտե հին պատշգամբով:

Հազիվ էր արել Վարդանը մի քանի քայլ, երբ իր ետևում լսեց մի աննշան ձայն.

— Ընն…

Չհասկանալով, թե ինչ է դա և կարևորություն էլ չտալով, նա շարունակեց քայլել: Բայց նորից.

— Ընն…

Վարդանը նորից կարևորություն չտվեց դրան: Եվ իզուր: Լսվեց երրորդ անգամ.

— Ընն… Ղա՛ֆ…

Եվ մի փոքրիկ շնիկ, ոզնու չափ, ոզնու պես էլ կլոր, իր դեռ լրիվ չամրացած սպիտակ ատամները խրեց լենինականցու ոտքի մեջ:

— Կորի՛ր,— բղավեց Վարդանը ցավից ու անսպասելիությունից և բնազդական մի շարժումով վեր բարձրացրեց տուժած ոտքը: Բայց շնիկը, ատամները նրա մարմնի մեջ խրած, նույնպես բարձրացավ օդ և կախված մնաց ոտքից:

— Կորի՛ր, ես քու…— հայհոյեց Վարդանը և սկսեց պտույտ գալ առողջ ոտքի վրա՝ տուժած ոտքը հորիզոնականորեն բռնած և թափահարելով: Վերջապես շնիկը, չկարողանալով դիմադրել կենտրոնախույս շարժմանը, շպրտվեց հեռու և սկսեց աղիողորմ վնգստալ՝ ոչ այնքան ցավից, որքան որ վիրավորանքից, թե ինչո՞ւ են վշտացնում իր նման փոքրիկին, չեն թողնում կծել նաև մյուս ոտքը:

Շան վնգստոցի վրա տան մոտից լսվեց Աստղիկի ձայնը.

— Էն ո՞վ ա քար քցում խեղճ թուլին:

— Լա՛վ խեղճ թուլա է,— բարկացած ձայն տվեց Վարդանը՝ կաղեկաղ քայլելով և զգուշությամբ ետ-ետ նայելով:

Ծառերի ետևից հայտնվեց Աստղիկը: Տեսնելով կոմերիտականին, նա զարմացած կանգ առավ:

— Դո՞ւ ես…

— Այո, ես եմ: Եվ իզուր ես կարծում, թե ես քար եմ գցել ձեր շանը: Ընդհակառակը, նա ինքը կծեց ինձ:

— Չէ, դրո՞ւստ,— ուրախացավ Աստղիկը:

Պատասխանելու փոխարեն Վարդանը մի քիչ վեր քաշեց շալվարի փողը և վար իջեցրեց կիսագուլպան՝ ցույց տալու համար կծած տեղը, տեսնելու համար նաև ինքը: Նրա մաշկի վրա, իրարից բավական հեռու, փակագծերի նման կիսակոր, ձգվել էին ատամների երկու շարքերի հետքերը:

— Վայ, ջանիկս,— բացականչեց աղջիկը շնիկի հասցեին:— Ուրեմն արդեն սովորել ա կծե՞լ: Ինչպե՞ս, կարգին ցավացրե՞ց…

— Շատ ուժեղ,— ասաց Վարդանը ցասումով:

— Վայ, ջանիկս,— կրկնեց աղջիկը:

Շնիկը, տեսնելով իր տիրուհուն, մոտեցավ՝ վեր ցցած պոչը շարժելով: Աղջիկը կռացավ, գգվեց նրան, ժպտաց, և բարեկամաբար, թեև ամուր, խփեց նրա մեջքին: Շնիկը բավականությունից շարժեց պոչը և տիրուհու քաջալերանքից երես առած, համարձակ նայեց Վարդանին.

— Ղըռռ…

Վարդանը մարտական դիրք բռնեց:

— Մըռռ...

Վարդանը բարվոք համարեց մի քայլ ետ գնալ:

— Դե, Դոխիկ,— բարկացավ Աստղիկը շան վրա՝ ավելի շուտ քաջալերող, քան թե սաստող բարկությամբ:

Շնիկը նայեց նրան՝ ժպիտից փայլող աչքերով, ապա, իսկույն դառնալով դեպի Վարդանը, մռայլվեց և կրկնեց.

— Ղըռռ…

Եվ ապա, մի պահ անց.

— Մըռռ…

— Բա խի՞ էիր էն կողմից գալի, որ ամեն մի էրեխա-շուն քեզ կծի,— հանդիմանեց Աստղիկը:

— Փողոցի կողմից ձեր տունը չգտա:

— Վայ…— զարմացավ երիտասարդ տանտիրուհին,— էդքան շո՞ւտ մոռացար: Հլա մի օր է անցել:

— Այո, մի օր, բայց…

— Ղըռռ…— լսվեց քայլող զույգի ետևից:

Վարդանը բնազդաբար ցատկեց մի քայլ առաջ և շարունակեց.

— Բայց, չնայած դրան, ահա մենք նորից հանդիպեցինք:Դու ճիշտ ասացիր երեկ, Աստղիկ, որ սարը սարին չի հանդիպի, բայց…

— Մըռռ…

— Բայց մարդը մարդին կհանդիպի,— ավարտեց Վարդանը՝ Աստղիկին գցելով իր և շնիկի արանքը:

Տան մոտ Աստղիկը կանգ առավ և հարցրեց.

— Դե ասա տենամ՝ ընչի՞ ես էկե:

— Հենց Էնպես, զրույց անելու: Բացի դրանից... դուք քրեհով տալու սենյակ չունե՞ք

— Ինչո՞ւ չէ,— ժպտաց աղջիկը՝ ենթադրելով, թե երիտասարդն իր համար է ուզում դա:— Լավ տնվոր որ ըլի՝ ես կքաշվեմ հորս ու մորս կուշտը, իմ օթախը կտամ ընդրան:

— Կարող ես և մնալ քո սենյակում: Աղջիկ է քրեհողը:

— Աղջի՞կ… Էդ ո՞վ ա:

— Մի լավ աղջիկ:

— Սիրա՞ծդ ա,— շշուկով ու խոստովանելու քաջալերող ժպիտով հարցրեց Աստղիկը:

— Ո՛չ, ի՞նչ ես ասում: Նա... մորաքրոջս աղջիկն է:

— Այսինքն՝ էդ ինձ համար մի հաշիվ ա, ով ուզում ա՝ թող ըլի: Թե ուզում ես՝ էթանք հորս ու մորս կուշտը, խոսի հետները…

Աստղիկի ծնողները Վարդանին ընդունեցին մեծ կասկածանքով.— կամ փեսացու է, կամ ֆինբաժնի «ավազակներից», որ եկել է տան «նալոգն» ավելացնելու… Բայց բավական եղավ մի քանի րոպեի խոսակցություն, որպեսզի փարատվեին նրանց և վատ, և, ավաղ, լավ կասկածները: Իսկ երբ կոմերիտականը սրտաբաց և զվարթ պատմեց իր և Աստղիկի ծանոթանալու մասին, նրանք վերջնականապես եկան այն եզրակացության, որ Վարդանը պարզասիրտ ու լավ մարդ է, ուղղակի «տան տղա»:

— Ո՞րտեղ ես աշխատում, հայրիկ,— հարցրեց կոմերիտականը՝ ինչպես կոմերիտականների, այնպես էլ ժողովրդի լայն խավերում ընդունված եզակի դիմումով:

Պարզվեց, որ տան գլխավորը, համարյա արդեն ծերունի՝ նիհար դեմքով ու փոքրամարմին, գիշերային պահակ է մի «կոոպերատիվի» մոտ:

— Իսկ դո՞ւ ինչ գործի ես, մայրիկ,— կես-կատակ և կես-լուրջ դիմեց Վարդանը տանտիրուհուն:

— Ի՞նչ գործ, բալա ջան, էփում-թափում եմ էս էրկսի համար: Աստղիկս լավ ա, օգտում ա ինձ, դժար աշխատանքն ինքն ա անում, բայց ինչքան որ չըլի, ծանր ա ինձ համար, պառավում ենք…

— Պառավությունը դեռ հեռու է,— հանգստացրեց Վարդանը:— Իսկ... ձեր աղջիկն ինչո՞ւ չի սովորում:

— Թող սովորի, նրա կուռն ո՞վ ա բռնում: Սովորեց, սովորեց ու ձեռ վե կալավ, որ մնա տանը, ինձ օգտի: Հալբաթ մտինը մարդու գնալն էր…

— Մայրի՛կ…— կարմրեց աղջիկը:

— Ի՞նչ կա որ: Վարդանն էլ, հաշվի, թե մեր տան տղան ա, հետը խոսում ենք:

Վարդանը և՛ շտապում էր վերադառնալ Ցողիկի ու Մուրադի մոտ, և՛ ուզում էր շարունակել ծանոթանալ այդ ընտանիքի հետ:

— Գիտակից ծնողներ եք,— գովեց նա:— Սովորելու թողնում եք: Երևի միայն կոմերիտմիության մեջ մտնել չեք թողնում:

— Խի՞ չպիտի թողանք, այ բալամ,— խոսակցության խառնվեց հայրը:— Բայց ո՞վ ա մեզ կոմսոմոլ ունդուևողը…

— Ձեզ, իսկապես, չեն ընդունի,— ծիծաղեց Վարդանը՝ ցույց տալով Աստղիկի հորն ու մորը:— Ձեր տարիքը մի քիչ…

— Պատճառը տարիքը չի, բալա ջան, պատճառն էն անտերն է…

Տարիքոտ մարդը ձեռքը երկարեց դեպի լուսամուտից այն կողմ երևացող իր «բաղը»:

— Էդ մի երկու ոտք տեղն ի՞նչ բան է, որ խանգարի,— արհամարհանքով ասաց Վարդանը:

— Խանգարում ա: Էլ խանգարելը ո՞նց կըլի:

— Ղալաթ է արել ձեզ էդպես ասողը,— բարկացավ Վարդանը:— Հենց մեկը ես ինքս կերաշխավորեմ, որ Աստղիկին ընդունեն կոմերիտմիության մեջ: Թեև,— ուղղեց Վարդանն իրեն,— բոլորովին էլ պարտադիր չէ անպայման կոմերիտուհի լինել: Բայց սովորել հարկավոր է:

— Էդ ի՜նչ լավ սրտի տեր տղա ես, բալա ջան,— ասաց կինը՝ ավելի շուտ տղայի վերաբերմունքից զգացված, քան թե աղջկա ապագա հաջողությունների համար հուսադրված:

— Դուք էն ասացեք, աստծու հետ ո՞նց եք,— ժպտալով և վախենալով մի քիչ, որ այդպիսի նուրբ հարց է շոշափում, հարցրեց Վարդանը:

— Ո՞նց պտի ըլի, լավ ենք,— մարտահրավիրաբար ասաց տղամարդը:— Ժամ էլ ենք էթում, աղոթք էլ ենք անում, պաս էլ ենք պահում... Ո՞վ կարա արգելի: Խորհրդային իշխանության մեջ էդպիսի օրենք չկա: Էդ դուք եք հնարել՝ կոմսոմոլներդ…

— Ես Աստղիկի մասին եմ հարցնում,— ծիծաղեց լենինականցին՝ զգուշությամբ անցնելով կոմերիտականներին վերաբերող հարցի վրայով:

— Աստղիկի մասին խի՞ ես հարցնում, բալա ջան,— աղջկա հասցեին դժգոհությամբ, ասաց կինը:— Ոնց որ ձեր կոմսոմոլներին տեսած՝ ընենց էլ սրան տեսած: Ժամ ու պատարագ ո՞րտիան գիտի էս անդաստիարակ անաստվածը…

Վարդանը դարձավ դեպի աղջիկը.

— Իսկ դո՞ւ ինչու չես խոսում:

— Նո՞ր նկատեցիր,— քմծիծաղեց Աստղիկը՝ թևերը կրծքին ծալած:— Ի՞նչ խոսամ: Էն ա՝ դուք իմ մասին խոսում եք՝ ոնց որ մարդու եք տալի, ես էլ սուս եմ արել, լսում եմ:

— Դու չե՞ս ուզում կոմերիտմիության մեջ մտնել:

— Էդ հլա ետի խոսք ա,— դատողաբար ասաց աղջիկը:— Խի՞ ես վռազում, խո մեր վերջին հանդիպելը չի՞: Դու քու գլխավոր ասելիքն ասա: Հայրիկ, ուզում ա իր մորաքրոջ աղջկան տեղավորի իմ օթախում: Ի՞նչ կասես:

— Էդ դու պտի ասես, բալա ջան:

— Ես ի՞նչ ասեմ: Թող գա ապրի: Ինչո՞վ ա ինձ խանգարում: Էն ա՝ թախտը պարապ կաղնած: Կողինք էլ ունենք:

Վարդանը հարցրեց քրեհի չափսի մասին:

— Էդ մասին չենք խոսա, ինչ կտա՝ կտա,— ձեռքը թափահարեց տղամարդը:— Լավ աղջիկ որ ըլի՝ կապրի ոնց որ իր ծնողների մոտ: Իսկ ուտելն ու լվանալ-մաքրելը՝ էդ կնանոց գործն ա, թող իրանք իրար մեջ որոշեն:

Վարդանը շնորհակալություն հայտնեց բոլորին և ոտքի ելավ: Բայց նա չէր ուզում գնալ. այնքա՜ն դուր եկավ նրան այդ պարզասիրտ ու բարի ընտանիքը:

39

Մնալով այգում միասին, առանց Վարդանի, Ցողիկն ու Մուրադը մի պահ նայեցին իրար և մնացին լուռ՝ յուրաքանչյուրն իր մտքերի և զգացմունքների հետ:

Մուրադը, որն օրվա ընթացքում ուրիշների ներկայությամբ Ցողիկի հետ խոսելիս կարծես մոռացել էր իր ստացած առաջին տպավորությունը նրանից և վերաբերվում էր նրան ինչպես իր ծանոթ աղջիկներից որևէ մեկին, այժմ, նրա հետ մենակ մնացած, նորից ունեցավ նախորդ երեկոյան ապրած իր այն զգացումը, թե նրա կողքին նստած է մի բացառիկ, արտակարգ էակ: Աղջիկը, օրվա ընթացքում այնքան մոտ և նույնիսկ սովորական թվացող, այժմ նորից հեռացավ Մուրադից, հեռացավ, բարձրացավ և նրանց միջև նորից ստեղծվեց նախորդ երեկոյան եղած մեծ տարածությունը: Կոմերիտականն իր մտքի մեջ նայում էր վերև, շատ վերև, աղջկան, և հասկանում էր, որ իրականն ու շոշափելին նրանց իրարից բաժանող հենց այդ տարածությունն է, իսկ օրվա ընթացքում տղայի զգացած մտերմությունը մի խաբուսիկ բան էր, պատրանք, որի պատճառն այն էր, որ Մուրադն աղջկան տեսնում էր ուրիշների ներկայությամբ՝ Վահրիճի, Վարդանի, քեռու ընտանիքի, որոնք խլում էին տղայի ուշադրության զգալի մասը:

Ճիշտ է, մի անգամ ևս, առավոտյան, Մուրադն ու Ցողիկը հանդիպել էին մենակ, ջրի ծորակի մոտ, բայց կոմերիտականն ամաչում էր վերհիշել այդ հանդիպումը, որովհետև նա այն ժամանակ կեսից հետ մերկ էր և այդ պատճառով խիստ շփոթված:

Ի՜նչ երջանիկ տղա է Վարդանը, որ ունի այդպիսի մտերիմ աղջիկ… Թախիծով շաղախված բարի նախանձի մի տանջալի զգացում համակեց Մուրադի հոգին: Սովորել, սովորել, սովորել… Ի՜նչ ճիշտ պատգամ է թողել Լենինը մեզ... Սովորել... Իսկ ինչո՞ւ: Մինչև այժմ նա սպառիչ պատասխանում էր այդ հարցին. սովորել՝ դառնալու համար բանվոր դասակարգի համար արժանի զավակ, համաշխարհային հեղափոխության օրինակելի մարտիկ ... Բայց այժմ նա զգում էր, որ իր պատասխանը մի քիչ թերի է եղել ամբողջ ժամանակ: Սովորել նաև նրա համար, որ արժանի լինես մի այսպիսի աղջկա սիրո... Դառնալ կուլտուրական մարդ, զարգացած, դաստիարակված, ռուսերենին տիրապետող և... աշխարհագրություն լավ իմացող, որպեսզի շրջես ամբողջ աշխարհը և գտնես մի ուրիշ Ցողիկ՝ քեզ համար…

Եվ հանկարծ, միանգամայն անտեղի կերպով, նրա գլուխը եկավ մի շեշտակի հարց.— ո՞վ է Ցողիկը, «մեշչա՞նկա» թե «ոչ մեշչանկա…»:

Բանֆակում Մուրադին սովորեցնում էին զանազան «առարկաներ», բջիջի, ակտիվի և այլ ժողովներում ու հավաքույթներում՝ քաղաքական կարևոր գիտելիքներ, իսկ թե քանի տեսակ աղջիկներ կան աշխարհի վրա՝ այդ մասին չէր ասում ոչ մի դասատու կամ զեկուցող: Այդ մասին շարունակ վեճեր էին ծագում միայն նրանց սենյակում, գլխավորապես Վարդանի և Վահրիճի միջև: Վարդանն ասում էր բավական բարդ և խրթին բաներ, իսկ Վահրիճը, դրա դիմաց, պնդում էր, որ աշխարհում կան միայն երկու տեսակի աղջիկներ՝ «մեշչանկա» և «ոչ-մեշչանկա»: Առաջին

կատեգորիայի մեջ մտնում է արտամիութենական աղջիկների մի մասը, իսկ երկրորդ կատեգորիայի մեջ՝ մյուս մասը և կոմերիտուհիները:

Վահրիճի սխեման ավելի հստակ էր ու հասկանալի, ուստի և Մուրադն ու Գառնիկը կառչեցին դրան: Ինչ էլ որ լիներ, այդ սխեման, նրանց կարծիքով, «հիմնականում» ճիշտ էր, իսկ Վարդանի ասածներն, ըստ երևույթին, վերաբերում էին մանրամասնություններին, երկրորդական կողմերին, ոչ-էական տարբերություններին…

Եվ այսպես, ո՞վ է Ցողիկը… Որ նա չի պատկանում «ոչ-մեշչանկա» կատեգորիային՝ դա պարզ է: Ուրեմն ի՞նչ «մեշչանկա՞»է նա… Բայց չէ՞ որ վերջիններս արհամարհելի, հաճախ նույնիսկ ծիծաղելի արարածներ են: Բայց գուցե կան նաև այսպիսի հմայիչ մեշչանկանե՞ր… Ինչպե՞ս որոշել… Գուցե հարցնել Ցողիկին իրե՞ն: Բայց չի՞ վիրավորվի նա արդյոք…

Մուրադը որոշեց «երիտբանվորավարի» շիփշիտակ հարցնել աղջկան: Եվ եթե, իրոք, հարցրեց, ապա միայն շնորհիվ այն բանի, որ նա հարցը տվեց առանց աղջկան նայելու, աչքերը գետնին հառած: Եթե նայեր, տեսներ իր կողքին նստած նրբակազմ ու գեղեցիկ աղջկան, որից ճառագայթում էր մի այնպիսի հոգեկան անծանոթ հմայք, Մուրադը հազիվ թե համարձակվեր ասել դա: Բայց այդպես, աչքերը գետնին հառած, երիտասարդին մի պահ թվաց, թե նա դիմելու է այն աղջկան, որին մի երկու ժամ առաջ իրենց սենյակում նա համարյա հրամայեց.

— Ցողիկ, խնդրում եմ քեզ, մի քանի րոպեով գնա Լիլիայի մոտ…

Այժմ նույնպես, նույն հեշտությամբ, առանց նույնիսկ հոգնակիի, նա դիմեց աղջկան.

— Ցողիկ... Դու մեշչանկա չե՞ս…

Աղջիկը, որ մտածկոտ նայում էր իր դիմաց ինչ-որ կետի՝ առանց նկատելու անցուդարձող մարդկանց, որոնք շարունակ պատնեշում էին այդ կետը, կարծես արթնացավ մի ուժեղ ցնցումից, և զարմացած, բայց և շնորհակալությամբ լի հայացքով, նայեց երիտասարդին.

— Մեշչանկա եմ, Մուրադ,— խոստովանեց նա՝ տանջանքով լի ձայնով:— Այն էլ ինչպիսի՜… Ավելի քան մեշչանկա, ես արիստոկրատ եմ…

Մուրադը, որ աղջկան նայելուց հետո արդեն զղջացել էր իր տված հարցի համար, մնաց լուռ:

— Օգնեցեք ինձ, Մուրադ,— ասաց աղջիկը հոգու խորքից եկող վշտով:— Օգնեցեք ինձ, խնդրում եմ, որ ես դադարեմ մեշչանկա լինելուց: Դուք բանվոր եք, գյուղացիական ծագումով, ժողովրդի իսկական զավակ: Եկեք մտերմանանք ձեզ հետ: Ես ձեզ կսովորեցնեմ ռուսերեն, կսովորեցնեմ…— աղջիկը թախծոտ քմծիծաղեց,— թե ինչպես պետք է պատառաքաղ բռնել, իսկ դուք ինձ սովորեցրեք, թե ինչպես անեմ, որ ես էլ ամբողջ գիշերը չքնեմ ուրախությունից, երբ Երևանում կամ Ռոստովում կառուցեն մի նոր գործարան… Դուք ինձ հասկանո՞ւմ եք, Մուրադ: Դուք պետք է որ հասկանաք: Եվ համաձա՞յն եք:

— Հասկանալը՝ հասկանում եմ,— գլխով արեց Մուրադը՝ իր հաստ հոնքերի տակից մեղմ նայելով աղջկան,— բայց համաձայն չեմ: Այսինքն... Ինչպե՞ս ասեմ: Իհարկե, ես ու Գառնիկն էլ կօգնենք, բայց գլխավորն էստեղ Վարդանն է…

— Ինչո՞ւ գլխավորը, Մուրադ,— հարցրեց աղջիկը, և տղան զարմանքով զգաց, որ այդ հարցի մեջ հնչեց կտրուկ հակաճառություն…

— Որովհետև նա մեր մեջ ամենից զարգացածն է և քո ապագա... այսինքն՝ քո վաղեմի…

— Այո, Մուրադ, իմ վաղեմի…— խոսքը խլելով նրանից, համաձայնվեց աղջիկը:— Բայց ոչ ապագա... Իմ ու Վարդանի մտերմությունը վերաբերում է անցյալին: Միայն անցյալին:

Մուրադը ծայր աստիճան զարմացած նայեց աղջկան:

— Միայն անցյալին…— այս անգամ ինքն իր համար կրկնեց Ցողիկը:

Մուրադի արևակեզ դեմքը և նույնիսկ շեղ օձիքի տակից երևացող պարանոցը հանկարծ կարմրեցին մի անսպասելի զգացումից, բայց առավել ևս մի այնպիսի մեծ մտքից, որը նա անկարող եղավ տեղավորել իր գիտակցության մեջ: Արմունկները հենելով իր գորշ, գունաթափ շալվարի ծնկներին, նա գլուխն առավ քարերից քերծված ձեռքերի մեջ և, մոռանալով աղջկա ներկայությունն իր կողքին, մոռանալով ամեն ինչ, ենթարկվեց այդ մեծ միտքն իրեն հաշտեցնելու դժվար ճիգին: Եթե նա, այդ միտքը, ավելի փոքր լիներ, ինչպիսի՜ երջանկություն, ինչպիսի՜ խելահեղ ուրախություն պիտի պատճառեր նրան: Բայց այժմ, այդքան մեծ, վիթխարի այդ միտքը պատճառում էր միայն տանջանք… Մուրադն անհավատալի հստակությամբ վերհիշեց իր և աղջկա հանդիպումն առավոտյան, ջրի ծորակի մոտ: Այն ժամանակ, շփոթված և ամոթահար, նա չէր լսել աղջկա ոչ մի խոսքը, ուշադրություն չէր դարձրել ոչ մի բանի վրա: Համենայն դեպս նա ոչինչ չէր հիշում ամբողջ օրը: Իսկ այժմ նրա աչքի առաջ կանգնեցին այդ հանդիպման բոլոր մանրամասնությունները, բոլորը, բոլորը, մեկը մյուսից անհավատալի, խելապտույտ առաջացնող, գիտակցության մեջ չտեղավորվող…

Երևի վաղուց էր կանգնել Ցողիկը բակում և նայել լվացվող տղային… Իսկ երբ Մուրադը բարձրացրեց գլուխը և նայեց այն կողմ, աղջիկը բացականչելով տվեց նրա անունը, և աղջկա ձայնի մեջ չկար ոչ զարմանք, ոչ հիասթափություն, ոչ շփոթություն, այլ միայն ուրախություն… Եվ հիացմունք… Իսկ երբ Մուրադը սրբիչով ծածկեց իր մարմինը, Ցողիկը մոտեցավ նրան, վար դրեց դույլը, երկու ձեռքով բռնեց սրբիչի երկու ծայրերից, ետ արեց դրանք և սրբիչը դրեց մի կողմ: «Գիտե՞ք ինչ, Մուրադ,— ասաց նա,— ամաչում և ծածկում են այլանդակ մարմինը: Իսկ դուք կարող եք մրցել Միքել-Անջելոյի Դավթի հետ…»: Իսկ ո՞վ է Միքել-Անջելոն և նրա ի՞նչն է Դավիթը՝ տղա՞ն, աշակե՞րտը…

Ո՞վ է Միքել-Անջելոն… Ինչո՞ւ համար Մուրադն այնքան անգրագետ է, որ չգիտե, թե ով է Միքել-Անջելոն… Եթե իմանար՝ ամեն ինչ միանգամից կպարզվեր: Եվ ո՞վ է Դավիթը…

«Սասունցի Դավիթը»…— անցավ հանկարծ Մուրադի մտքով և առաջին անգամ իր այդ տանջալի խոհերի ընթացքում նրան գլխովին ծածկեց, վարար ջրի պես խեղդեց երջանկության զգացումը: Ահա թե ում հետ էր համեմատում Ցողիկը կիսամերկ բանվորին՝ Սասունցի Դավթի…

Ցողիկը շարունակում էր նստած մնալ իր զարմանալի հասարակ, բայց և զարմանալի գեղեցիկ կեցվածքով, հայացքը դիմացի ինչ-որ կետի հառած, իսկ Մուրադը՝ արմունկներն իր գորշ, գունաթափ շալվարի ծնկներին հենած և գանգուր գլուխը քարերից քերծված ձեռքերի մեջ առած: Ահա հենց այդ դիրքով էլ տեսավ նրանց Վարդանը՝ վերադառնալով Կոնդից: Տեսավ դեռ նստարանին չհասած, և քարացավ իր տեղում: Պետք էր կույր լինել՝ չնկատելու համար, որ տղայի և աղջկա միջև տեղի էր ունեցել ինչ-որ կարևոր բան: Իսկ թե ինչ կարևոր բան՝ այդ ևս չհասկանալու համար հարկավոր էր լինել կույր…

Ձուտ երիտասարդական, իրեն հաշիվ չտվող մի ուժեղ խանդ պաշարեց Վարդանին: Չէ՞ որ այդ սքանչելի աղջիկը, որ ահա նստած է այդտեղ, Մուրադի կողքին, Վարդանի մանկության անբաժան ընկերուհին է, նրա կյանքի անանջատ մի մասը: Ո՞վ ավելի իրավունք ունի նրա վրա, քան ինքը՝ Վարդանը… Չէ՞ որ դեռ երեկ երեկոյան նա թևանցուկ շրջում էր այդ աղջկա հետ, ջերմ խոսքեր էր ասում նրան և լսում նրանից նույնպիսի խոսքեր, իսկ հետո աղջիկը շոյեց նրա սև, հարթ, փայլուն մազերը…

Իսկ ի՞նչ պատահեց դրանից հետո… Պատահեց այն, որ Վարդանն իրեն զգաց ավելի շատ կոմերիտական, քան երիտասարդ, մոռացավ աղջկա հմայքը, մոռացավ իր և նրա համատեղ անցյալը և ենթարկվեց մի ինչ-որ քաղաքական, դասակարգային զգացմունքի… Ձայրացուցիչ չէ՞ արդյոք՝ լինել այդքան շատ կոմերիտական և այդքան քիչ երիտասարդ…

Բայց հարկավոր է մոտենալ, այլապես նրանք հանկարծ կարող են նկատել նրան: Եվ ինչո՞ւ հիշել երեկվա երեկոն՝ մոռանալով գիշերը… Վարդանը չի զգում ոչ զղջում, ոչ ափսոսանք: Ինչ-որ

պատահեց իր և աղջկա միջև նախորդ գիշերը՝ չէր կարող չպատահել: Էլ ուրեմն ավելորդ չէ՞ այս խանդը, իրոք որ խելահեղ, իրոք որ իրեն հաշիվ չտվող... Ավելորդ է, այո, բայց մի՞թե խանդը կարող է չքանալ ավելորդության այդ խելոք մտքից…

Դե ի՞նչ, իմ սիրելի Ցողիկ, իմ կյանքի առավոտվա առաջին ծաղիկ... Եղիր երջանիկ ուրիշ տղայի հետ: Դա միանգամայն հնարավոր է և՛ քեզ համար, և՛ նրա:

Իսկ ես…

«Իսկ դո՞ւ… Ի՞նչ ես ուզում դու քեզանից, ոչնչով չգոհացող, ագահ... Նայիր ապա շուրջդ... Ո՞վ է քեզ նման բարդացնում ամեն հասարակ ու սովորական բան... Ո՞վ ես դու, ի՞նչ ես դու, որ քեզ երևակայում ես ուրիշներից ավելի խելոք, ավելի խոր, ավելի բարձր... Բայց մի՞թե դու երևակայում ես: Ոչ: Դու ոչ միայն չես հպարտանում քեզանով, այլև զզվում ես քեզանից, հայհոյում ես քեզ, ատում ես քեզ... Բաց թողնել ձեռքից այդպիսի չքնաղ աղջկան, Ցողիկին…Կհանդիպե՞ս դու արդյոք կյանքում մի ուրիշ այդպիսիին, հիմար: Վերջապես երիտասա՞րդ ես դու, թե... գրող…»:

Թափ տալով իրեն, Վարդանը քայլեց դեպի նստարանը: Երբ նա մոտեցավ, Ցողիկն ու Մուրադը նույնպես, կարծես արթնացան:

— Վերջապե՞ս,— ասաց աղջիկը:

— Հաջողվե՞ց,— հետաքրքրվեց տղան:

— Լրիվ: Գնանք, Ցողիկ:— Նա վերցրեց ճամպրուկը, իսկ աղջիկը՝ վերարկուն:— Հիմա լսիր, Մուրադ…— Վարդանը հաղորդեց նրան Կնյազի խնդիրը:— Աշխատիր, որ Սանթուրյանն անպայման, անպայման գա: Շատ կուրախացնի տղային ու նրա կնոջը: Ճիշտն ասած նաև մեզ: Հենց միասին կգաք: Նորից եմ կրկնում հասցեն՝ երկաթգծի ակումբ:

— Էլ երրորդ անգամ չկրկնես, որովհետև ուշանում եմ բանֆակից,— ասաց Մուրադն շտապ:— Ցտեսություն, Ցողիկ՝ մինչև երեկո: Իհարկե, դու էլ կգաս կարմիր կնունքին: Քեզ համար շատ հետաքրքիր կլինի:

— Կգա, կգա,— բարկացավ Վարդանը՝ ոչ առանց խանդի,— համ ուշանում ես, համ շատախոսում:

Մուրադը վազեց:

— Կգա՞ս, ճի՞շտ է,— միայն հիմա հարցրեց Վարդանն աղջկա համաձայնությունը:— Կտանենք նաև Աստղիկին: Երևակայիր, նա էլ լավ աղջիկ է և նա էլ քեզ նման...— Վարդանը կիսատ թողեց խոսքը:— Ուրեմն կգա՞ս…

— Անպայման,— ժպտաց Ցողիկն իր թախծոտ, այնքան հոգեկան ժպիտով:— Ես կգամ ամեն տեղ՝ որտեղ կլինեք դուք: Հիմի մեր ճանապարհները մեկ են…

40

Երբ Վարդանը Ցողիկին Կոնդ տանելուց հետո վերադարձավ տուն, Գառնիկն իր թախտի վրա պառկած, անորոշ հայացքով նայում էր առաստաղին: Նրա մի փոքր ծուռ քիթը կարծես ավելի էր ծռվել՝ շրթունքների վրա թառած մի ինչ-որ շփոթված ու միաժամանակ երջանիկ ժպիտից:

— Դուռը շատ պինդ մի ծածկի,— խնդրեց նա ներս մտնող իր ընկերոջը՝ առանց աչքերն առաստաղից կտրելու,— Մի փոքր ճեղք բաց թող…

Վարդանը կատարեց նրա խնդիրը և տարակուսանքով հարցական նայեց պառկածին, որը սակայն ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա վրա:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց լենինականցին:

Ոչ մի արձագանք:

— Իսկ դու իմացա՞ր սրիկա Վահրիճի մասին,— փորձեց ինքն սկսել խոսակցություն Վարդանը,— Մուրադը պատմե՞ց քեզ, թե ոչ:

— Հետո, հետո,— ձեռքով արեց Գառնիկը,— լռիր:

— Ասելո՞ւ ես վերջապես, թե ինչ գործի վրա ես,— բարկացավ Վարդանը:

— Արի ինձ մոտ: Նստիր: Լսիր... Լսո՞ւմ ես:

Միայն այժմ Վարդանի ուշադրությանը հասավ հարևանների տնից եկող աղմուկը:

— Նորություն,— զարմացավ նա:— Առաջին անգամն եմ լսում էդպիսի բան:

— Կռվում են,— ասաց Գառնիկը երանության ժպիտով:— Ինձ համար..

— Ինչպե՞ս թե քեզ համար, ի՞նչ ես դուրս տալիս:

— Իմ պատճառով:

— Առի՞թ ես տվել:

— Իմ շուրջը…

Վարդանը քաշեց ընկերոջ օձիքից, նստեցրեց նրան:

— Լսիր, հիմարի գլուխ: Ի՞նչ ես բորբոքում իմ հետաքրքրությունը: Ասա անմիջապես:

— Ե՞ս եմ բորբոքում,— ասաց Գառնիկը՝ այս աշխարհից վերացած մարդու մի այնպիսի անտարբեր, պաղած ձայնով և միաժամանակ պլշած, ոչինչ չտեսնող աչքերով, որ կարծես թմրած լիներ հարբածությունից կամ շշմած՝ ինչ-որ ուժեղ հարվածից:— Ես ինքս եմ բորբոքված:

— Բորբոքվա՞ծ: Դու ավելի շուտ էշացած ես:

— Այո, այո... Ի՞նչ,— մի պահ սթափվեց Գառնիկը:— Էշը դու ես: Չէ, դու էլ չես: Սպասիր... Կաց...

Նա խոսում էր մեքենաբար, առանց մտածելու: Նրա ամբողջ ուշադրությունը, լսողության մեջ դրված, ուղղված էր դեպի հարևանի տնից եկող աղմուկը: Բայց հանկարծ նա ժպտաց և ուրախությունից փայլող աչքերը հառեց ընկերոջ վրա:

— Լսո՞ւմ ես... Լաց է լինում: Ահա քանիերորդ անգամն է:

— Հրճվել ուրիշի լացո՞վ…— սառեց Վարդանը:— Դա սադիզմ է:

— Իսկ մայրը լռեց,— շարունակեց Գառնիկը:— Չէ, նորից գոռաց, բայց դա ամուսնու վրա է և ոչ թե աղջկա: Աղջկա վրա ուրիշ կերպ է գոռում: Ես արդեն ուսումնասիրել եմ…

— Գառնիկ,— աղերսեց Վարդանը,— դու գիտես, որ ես կնոջ հետաքրքրասիրություն ունեմ: Ինչո՞ւ ես տանջում ինձ: Իհարկե, եթե չասեիր, թե դու ես մեղավորը, թող կռվեին, իմ ի՞նչ գործն էր: Բայց քանի որ դու կաս արանքը…

— Այո, ես եմ իրար խառնել նրանց,— ծուռ քիթը վեր քաշելով, հպարտ ոտքի կանգնեց Գառնիկը:

— Եվ դու չե՞ս ամաչում.… Ի՞նչ ես արել…

— Ճիշտը որ ասեմ՝ առանձնապես ոչինչ: Լիլիայի հետ նստել էինք նրա սենյակում, մեզ համար խոսում էինք, հանկարծ էն մեշչանական ընկավ ներս, կարծես հրավիրել էինք: Ուրիշ ոչինչ:

— Դու… Լիլիայի սենյակո՞ւմ…— անսպասելիությունից կակազեց Վարդանը:— Լա՛վ…

Անասելի բարկացած մոտենալով իր թախտին, նա սկսեց հավաքել անկողինը:

— Ի՞նչ ես անում,— զարմացավ այս անգամ Գառնիկը:

— Ոչինչ,— ինքն իրեն տիրապետած մարդու սառնությամբ պատասխանեց Վարդանը:— Ես գնում եմ ձեր մոտից, ընկեր Գառնիկ:

— Դու խո չգժվեցի՞ր,— առանց հասկանալու, թե ինչ պատահեց, ժպտաց սիրահարվածը՝ կատակի վերածելու համար այդ ամենը, ավելի ճիշտ՝ կատակ համարելով ընկերոջ արածը: Բռնելով նրա թևը, նա խանգարեց հավաքելու անկողինը:

— Թողեք ինձ, ընկեր Գառնիկ,— ասաց Վարդանը պաշտոնական տոնով:— Ես չեմ կարող ապրել մի հարկի տակ մի սուբյեկտի հետ, որն իրեն ընկեր է համարում ինձ, բայց ինձանից թաքցնում է իր սիրային գաղտնիքները: Հըմ, ընկե՛ր,— դառը քմծիծաղեց նա՝ մի քիչ թատրոնական արտասանությամբ:— Մեր միջև չինական պարիսպ է եղել կանգնած և ես, հիմարս, մինչև հիմա չեմ նկատել այդ… Մեր առջև ձևացնել ամաչկոտություն, կեղծել, թե չի էլ խոսել երբեք իր սիրած աղջկա հետ, բայց մեր թիկունքի ետևում թաքնված գնալ-գալ նրա սենյակը… Ահա թե ինչ կեղծիքի վրա է եղել խարսխված մեր կոմերիտական ընկերությունը…

— Անկողինը դիր տեղը,— համարյա հրամայեց Գառնիկը:— Ես ոչ մի սուտ չեմ ասել ոչ քեզ, ոչ Մուրադին: Եվ դու, առանց ամաչելու, կասկածում ես ինձ վրա: Դա իմ առաջին խոսակցությունն էր Լիլիայի հետ և առաջին այցելությունը: Ճիշտ են ասել՝ աղքատը դուրս ելավ գողության՝ լուսնյակը ծագեց: Երդվում եմ իմ Կիմով և մեր ընկերությամբ…

— Դե էդպես ասա, շունշանորդի,— հայհոյեց Վարդանը՝ անկողինը նետելով թախտին:— Իզուր քանդոտեցի: Ուրեմն բացատրվեցի՞ր…

— Այո:

— Դժվա՞ր էր:

— Ասա՝ ես իմացա՞, թե ինչ կերպ կատարվեց:

— Ինքն է՞լ է սիրում քեզ:

— Իհարկե,— ձգվեց Գառնիկը:— Ի՞նչ է, չե՞ս նկատել:

— Նկատել ենք, ինչպե՞ս չէ,— հաստատեց Վարդանը՝ ոչ միայն իր, այլև Մուրադի կողմից:— Հետո՞, հետո՞…

— Հետո էլ ի՞նչ: Զագսի մասին էինք խոսում, երբ հանկարծ էն հրեշն ընկավ ներս:

— Զա՞գս…

Վարդանը երկար և մտածկոտ նայեց ընկերոջը: Գառնիկի բոլոր նախորդ ասածներն այժմ թվացին աննկարևոր, երկրորդական, ավելի ճիշտ՝ սովորական, ընթացիկ բաներ: Կարելի է և՛ սիրահարվել, և՛ սովորել, և՛ փոխել աշխատանքի վայրը, և կատարել այդպիսի ուրիշ շատ գործեր, բայց Զա՞գս, ամուսնությո՞ւն… Չէ՞ որ դա հեղաշրջում է՝ ընկերների ամբողջ կյանքում, դա նշանակում է՝ քանդել նրանց համատեղ կենցաղը… Վարդանն այնպես է վարժվել այդ կենցաղին, որ դա համարում է իր, Մուրադի և Գառնիկի կեցության հավիտենական ձևը: Եվ հանկարծ՝ Զագս…

— Ուրեմն էդքան լո՞ւրջ են քու մտադրությունները…— հարցրեց նա ընկճված:

— Ես կոմերիտական եմ,— ձգվեց Գառնիկը հանդիսավոր:— Եվ ես սիրում եմ Լիլիային: Հենց իմ էս սենյակը եկած օրվանից: Էնպես որ, կամ նա, կամ...— Գառնիկը կուլ տվեց «մահ» խոսքը, որովհետև դա կլիներ և՛ սուտ, և՛ ծիծաղելի: Ուզեց ասել՝ «կամ ոչ ոք», բայց դա ևս, անհավատալի կլիներ հենց իր համար:

— Կամ՝ էլի նա,— մի կերպ ավարտեց նա իր հանդիսավոր երդումը:

Մինչ այդ, աղմուկը հարևանների բնակարանում գնալով ուժեղանում էր՝ փոխանակ մեղմանալու: Դրա մեղավորը կոտրված ձայնով դիմեց Վարդանին.

— Ահա արդեն մի քանի ժամ է, որ կռվում են: Ճիշտն ասած, կռվողը միայն մայրիկն է: Հայրիկը միայն մի-մի բառ է ասում, էն էլ՝ կամացուկ, բայց կնիկն իսկույն գոռալով լռեցնում է նրան: Իսկ աղջիկը կամ լալիս է ինքնապաշտպանական նպատակով կամ ինձ է պաշտպանում բառերով: Մի քանի ժամ...— կրկնեց Գառնիկը զարմացած:— Իսկ իմ կարծիքով էդքան ժամանակում նրանք արդեն եկած պիտի լինեին մի ընդհանուր համաձայնության ու հրավիրեին ինձ իրենց տուն՝ իրենց ծնողական համաձայնությունը տալու: Ես նույնիսկ մշակել եմ իմ ասելիքն ու անելիքը: Բայց դրա հույսն էլ չկա...

Վարդանը մեծավարի քմծիծաղեց.

— Մի՞թե էդպես է կատարվում էդ բանը: Փեսան ի՞նչ զիբիլ է, որ դեռ գան ու հրավիրեն: Էդ դու ինքդ պիտի գնաս:

— Ո՞վ, ո՞ւր,— սարսափած ցատկեց Գառնիկը սենյակի հեռու անկյունը:— Իմ ոտքերս չեն բռնի էդպիսի բան անելու: Ես առյո՞ւծ եմ, թե մարդ:

— Դե որ մարդ ես, էլ ինչո՞ւ էիր էդպիսի ապուր եփում,— տաքացավ Վարդանը:— երեսդ որ չի բռնում աղջիկ ուզել՝ վեր ընկիր տեղդ, մնա որպես ճգնավոր:

— Վարդան ջան, խնդրում եմ,— աղաչեց Գառնիկը,— դու ինքդ գնա նրանց մոտ, ուզիր Լիլիային:

— Ե՞ս... Լիլիան ինձ հարկավոր չէ:

— Ոչ թե քեզ համար, ախմախ, այլ ինձ:

— Ախ քե՛զ,— ծոր տվեց լենինականցին:— Էն դեպքում ես ո՞վ եմ՝ հա՞յրդ, մա՞յրդ, թե մոցիքուլդ:

— Դու իմ ընկերն ես,— հիշեցրեց Գառնիկը:

— Ընկերը որ ճար անող լինի՝ իր համար կանի: Ես քեզանից ավելի ամուրի եմ:

— Ազնիվ կոմերիտականի խոսք եմ տալիս,— երդվեց Գառնիկը,— որ ես էլ քեզ համար խնամի գնամ Ցողիկի մոր մոտ: Կատարիր ընկերական պարտքդ իմ հանդեպ:

— Ի՞նչ պարտք,— վեր թռավ Վարդանը:— Ես քեզ պա՞րտք եմ:

— Ոչ թե պարտք,— ուղղեց Գառնիկը՝ զգալով, որ սխալ է բաց թողել,— այլ ծառայություն…

— Ծառա

՛

... Հիմի էլ ես քու ծառա՞ն դարձա,— կատաղեց Վարդանը:— Փոխանակ խնդրելու խոնարհաբար…

— Խուլ խո չե՞ս,— բարկացավ նաև Գառնիկը,— քանի՞ անգամ խնդրեմ քեզ խոնարհաբար: Ի՞նչ ես իմ բառերից կպչում՝ «պարտք», «ծառայություն»: Ես քեզ նման ոճաբան չեմ և հայերեն լեզուն լավ չգիտեմ:

— Որ լավ չգիտես՝ էլ ի՞նչպես ես ամուսնանում:

— Վարդան, խնդրում եմ քեզ, հերիք է ծիծաղես ինձ վրա: Կատարիր քո ընկերական... Այսինքն՝ ուզում եմ ասել՝ օգտվիր քու ընկերական իրավունքից, գնա ուզիր Լիլիային ինձ համար…

Վարդանը մոտեցավ իր թախտին:

— Էյ, էյ, ո՞ւր ես պառկում,— բացականչեց Գառնիկը:— Վեր կաց:

— Հոգնած եմ:

— Սուտ ես ասում: Վեր կաց, խնդրում եմ: Էստեղ երկու սիրող սրտեր են փշրվում, իսկ դու քու մեշչանական հանգստի մասին ես մտածում, էն էլ՝ առանց հոգնած լինելու:

— Ճար չկա, պետք է օգնել քեզ,— հառաչեց Վարդանը և ոտքի կանգնելով, սկսեց հանվել:

— Ի՞նչ ես ձեռ առնում ինձ,— համարյա լաց եղավ սիրահարվածը՝ խանգարելով ընկերոջը հանվել:

— Թող... Թող՝ ասում եմ քեզ, բլուզս կպատռես: Հասկացիր, հիմար, շորերս եմ ուզում փոխել: Էդպիսի կարևոր գործի համար պետք է գնալ յունգշտուրմով:

— Ներողություն, Վարդան ջան, չհասկացա,— շփոթված ժպտաց Գառնիկը:— Սիրահարված եմ, խելքս գլուխս չի:

Եվ ինքն ընկերոջ անկողնի տակից հանեց խնամքով այնտեղ փռած յունգշտուրմ համազգեստը, ապա, թախտի տակից՝ «գետրիները»:

— Բայց խոսք տուր, որ կլինես օրինակելի ամուսին: Եվ հայր:

— Խոսք կտամ, Վարդան ջան, և՛ Լիլիային և՛ նրա ծնողներին:

— Ոչ թե նրանց, այլ ինձ:

— Դո՞ւ ով ես, որ ես քեզ խոսք տամ,— փնչացրեց Գառնիկն արհամարհանքով:

— Ինչպե՞ս թե ով եմ... Չէ, դու լո՞ւրջ ես ասում: Էլ ինչպե՞ս թե՝ ես ով եմ: Ես գնում եմ քեզ համար երաշխավորելու, հասկանո՞ւմ ես:

Գառնիկը ձեռքը խփեց իր անհասկացող ճակատին և ասաց ջերմեռանդ.

— Տալիս եմ կոմերիտականի ազնիվ խոսք:

— Խոստացիր, որ Լիլիային շատ չես ծեծի, երեխաներիդ շատ սոված չես թողնի, մի սիրուհուց ավելի չես պահի…

— Վարդան,— համարյա գոռաց Գառնիկը,— էնտեղ մի անմեղ աղջկա է հոշոտում նրա հրեշավոր մայրը, թանկ է ամեն մի րոպեն, իսկ դու քու քեֆին կատակներ ես անում: Առ գլխարկդ: Թե՞ առանց գլխարկի կգնաս:

— Յունգշտուրմն առանց գլխարկի չի կարելի,— նկատողություն արեց Վարդանը՝ ընկերոջ ձեռքից վերցնելով համազգեստի գլխարկը:

Դուրս գալուց առաջ, այնուամենայնիվ, նա լուրջ կերպով հարցրեց սիրահարվածին.

— Վստա՞հ լինեմ, որ ինձ ամոթահար չես թողնի, Գառնիկ: Այսինքն՝ իմ ամոթահար լինելը դեռ ոչինչ, բայց եթե երջանիկ ընտանիք չկազմես՝ թե դու կդժբախտանաս և թե մանավանդ Լիլիան…

— Վարդան…

— Հավատում եմ, հավատում, մի շարունակիր: Նոր խո չե՞մ ճանաչում քեզ: Ես դա հենց էնպես հարցրի: Բայց ոչ, ինչո՞ւ հենց էնպես: Հարցրի, որովհետև դու քո կյանքում պատրաստվում ես կատարել մի շատ մեծ, շատ պատասխանատու քայլ… Դու…

Նա ուզում էր էլի շարունակել նույն ոգով, բայց գլխի ընկավ, որ ստացվում է ինչ-որ դատարկ ճառ:

— Դե, ես գնացի…— ասաց նա և նայեց ընկերոջը՝ քաջալերող հայացքով:

41

Լսելով իրենց դռան թակոցը, Լիլիայի մայրը մտքով անգամ չանցկացրեց, թե հարևան կոմերիտականներից մեկն է թակողը: Ենթադրելով տեսնել իրենց որևէ բարեկամին կամ ծանոթին, նա ձեռքով հրամայեց ամուսնուն ու աղջկան՝ վերցնել իրենց դեմքի վրա անհոգ մարդու արտահայտություն և, ինքը նույնպես մի երջանիկ ժպիտ ձևացնելով իր դեմքի վրա, բաց արեց դուռը: Նրա ժպիտը ցնդեց վայրկենապես, դրան փոխարինեց կարկտաբեր ամպը, որը պատրաստվում էր որոտալու և կայծակներ արձակելու: Ապա, հաշիվ տալով իրեն, որ դա Գառնիկը չէ, այլ չորս կոմերիտականներից «համեմատաբար տանելին», կինը միայն մի փոքր, շատ փոքր թուլացրեց ամպի սպառնականությունը և նայեց հարցական:

— Կարելի՞ է,— հարցրեց Վարդանը քաղաքավարի:

Կինը, առանց պատասխանելու, մի կողմ քաշվեց դռնից, ճանապարհ տվեց նրան:

— Բարև ձեզ,— ողջունեց կոմերիտականը՝ մտնելով և գլխարկը հանելով:

— Բարև, հարևան,— պատասխանեց թախտի վրա նստած երկարահասակ, նիհար տղամարդը:

Լիլիան միայն նայեց Վարդանին և հանդիպելով նրա հայացքին, ծնողներից աննկատելի ժպտաց մտերմաբար: Նրանք իրար հասկացան:

Կինը՝ լուռ, աթոռ առաջարկեց երիտասարդին՝ այնպիսի մի ընդոստ շարժումով վերցնելով աթոռը և մոտեցնելով սեղանին, կարծես ուզում էր տալ նրա գլխին, բայց հետո փոխեց մտադրությունը:

— Ես եկել եմ իմ և… մեր մյուս ընկերների կողմից: Մենք խիստ անհանգստացած ենք: Ի՞նչ է պատահել այսօր մեր Գառնիկի և ձեր միջև…

— Իսկ ի՞նքն ինչու չէր պատմում ձեզ, այդ պատվազուրկը,— բղավեց միջահասակ, գեր կինը՝ կնճռոտ դեմքով, թեթևակի ներկած շրթունքներով:— Թե՛ ամաչում էր իր արարքից: Բայց հազիվ թե նա ամոթ ունենա:

— Պատմել է, տիկին,— խիստ քաղաքավարի ասաց Վարդանը՝ դիմելով միայն նրան, գիտենալով, որ նա է տան գլխավորը:— Բայց ես ձեզանից եմ ուզում լսել օբյեկտիվ ճշմարտությունը: Դուք փորձառու կին եք, հավասարակշռված, գիտեք սառը դատել, և մենք հույս ունենք, որ դուք երևույթները մեզ կներկայացնեք իրենց իսկական լույսի տակ…

Վարդանը խոսում էր՝ առանց խուսափելու ճոռոմ արտահայտություններից, անխիղճ առատությամբ շողոքորթելով կնոջը և միաժամանակ գործադրելով այնպիսի շարժուձևեր, դեմքին տալով այնպիսի արտահայտություններ, որ եթե չլիներ նրա հագի յունգշտուրմը, պիտի թվար, թե նա «բարձր արիստոկրատիայի» մի զավակ է՝ մոր կաթի հետ միասին «կիրթ ձևեր» յուրացրած:

— Ծխեցեք,— առաջարկեց հաշվապահը:

— Շնորհակալություն,— տեղից թեթևակի վեր կենալով և ձեռքը կրծքին դնելով, ասաց լենինականցին:— Ես ծխող չեմ:— Եվ ավելացրեց հատուկ շեշտով.— և ոչ էլ իմ ընկերները:

Տեսնելով, որ տղամարդն ինքը ծխախոտ վերցրեց, Վարդանը վեր ցատկեց տեղից, վառեց լուցկին և մեկնեց նրան: Հաշվապահը, շփոթված այդ սիրալիրությունից, կպցրեց ծխախոտը և շնորհակալություն հայտնեց: Մի վայրկյան նրանց երկուսի հայացքները հանդիպեցին իրար և Վարդանը հասկացավ, որ հանձինս այդ տղամարդու նա ձեռք բերեց մի դաշնակցի: Լիլիայի հայրը քաջալերական ինչ-որ շարժում արեց իր նիհար դեմքի վրա:

— Ներեցեք, ես ձեզ ընդհատեցի,— նորից նստելով, դիմեց Վարդանը կնոջը:

— Երևակայո՞ւմ եք այդ անամոթի արածը,— պայթեց կինը միանգամից:— Ես բաղնիքից գալիս եմ տուն և ի՞նչ տեսնեմ: Այդ պատվազուրկը, գյադայի մեկը, ներխուժել է մեր բնակարանը, մտել է երեխայի սենյակը և փորձում է գայթակղեցնել նրան... Տեսնում եմ, որ դուք դաստիարակված երիտասարդ եք և պատահաբար եք ընկել դրանց միջավայրը, ուրեմն լավ կհասկանաք կատարվածի ամբողջ խայտառակությունը:

Վարդանը գլուխն օրորեց ի նշան համաձայնության, բայց և իսկույն հարցրեց զգուշությամբ.

— Իսկ գուցե, տիկին…

Նա պաուզա տվեց:

— Վառվառա Սարիբեկովնա,— թելադրեց կինը:

— Իսկ գուցե, Վառվառա Սարիբեկովնա, դա գայթակղության փորձ չի եղել, այլ սիրո բացատրությո՞ւն... Համենայն դեպս Գառնիկն այդպես է ներկայացնում մեզ իր աուդիենցիան…

— Ի՞նչ սեր,— բղավեց կինը:— Մի՞թե ժամանակակից երիտասարդները, այն էլ՝ կոմերիտականներ, ընդունակ են սիրելու:

— Ընդունակ են,— կամացուկ ձայնով և մեղմ ժպիտով ասաց Վարդանը:— Ընդունակ են, Վառվառա Սարիբեկովնա: Համաձայնվեցեք ինձ հետ, որ դուք ծանոթ չեք ժամանակակից երիտասարդության կենցաղին և դրա համար եք այդպես դատում: Բայց դիմենք այնպիսի փաստերի, որոնք գտնվում են ձեր տեսողության դաշտում: Վերցնենք հենց թեկուզ մեր, չորս կոմերիտականներիս կենցաղը:— Վարդանը դիտմամբ այդ թվի մեջ մտցրեց նաև Վահրիճին, որովհետև հո չէ՞ր կարող նրա հետ կատարված պատմությունը բաց անել այդտեղ:— Դուք երբևէ տեսած կա՞ք, որ մեզ մոտ գնան-գան զանազան աղջիկներ՝ բացի մեր ընդհանուր ընկերուհիներից: Կամ որ մենք հարբած վերադառնանք տուն: Կամ մի ուրիշ այդպիսի բան: Իհարկե,— ժպտաց նա հանցավոր,— չի կարելի ասել, թե մենք անմեղ հրեշտակներ ենք: Երբեմն-երբեմն մենք աղմկում ենք սահմանված ժամերից դուրս և խանգարում ձեր հանգիստը: Բայց, ընդունեցեք, Վառվառա Սարիբեկովնա, որ դա, որքան էլ որ անախորժ, այնուամենայնիվ անբարոյականություն չէ…

Վարդանի մեղմ և համահավասար խոսակցության ազդեցության տակ կինն աստիճանաբար խաղաղվում էր: Կոմերիտականի ավարտելուց հետո նա կարծես միայն նոր տեսավ դատարկ սեղանը և խստադեմ կարգադրեց աղջկան.

— Թեյ դիր:

Լիլիայի դուրս գնալուց հետո Վարդանը, ցույց տալով, որ հասկացավ, թե ինչու կինը դուրս ուղարկեց աղջկան, նայեց նրա ետևից և երբ դուռը ծածկվեց, շուռ եկավ դեպի նա և շշնջաց դավադիր.

— Ամբողջ բարդությունը հենց այն է, որ երկուսն էլ սիրում են իրար, Վառվառա Սարիբեկովնա: Երանի թե դա գայթակղության փորձ լիներ: Այդ դեպքում դուք ձեր աղջկան կնախազգուշացնեիք, իսկ մենք՝ մեր ընկերոջը կսաստեինք կոմերիտական գծով: Բայց…

Վարդանն անհույս մի շարժում արեց ձեռքով:

Լիլիայի մայրը, որը բոլորովին էլ առանձին խոսակցություն ունենալու համար չէր դուրս ուղարկել աղջկան, այլ իսկապես միմիայն թեյ դնելու, որովհետև կռվով տարված, նրանք դեռ չէին թեյել, ակամայից ենթարկվեց Վարդանի դավադրական տոնին և ասաց նույնպես կիսաշշուկ.

— Ես դա վաղուց էի գուշակում... Բայց, աստված իմ, ունենալ կոմերիտական փեսա՛… Երբեք, երբեք, երբեք…

Վերջին «երբեք»-ը նա ասաց գոռոցով, բայց և իսկույն սսկվեց, որ աղջիկը չլսի: Ապա, իր գոռալու հանցանքն ամբողջովին գցելով ամուսնու վրա, ասաց խիստ տոնով.

— Ի՞նչ ես հեռու նստել: Մոտեցիր, որ քու պատճառով չբղավեմ: Քու երեխայի գոյության հարցն է վճռվում:

Տեսնելով, որ ամուսինը վեր կացավ և ուզում է նստել ավելի մոտիկ, նա ձայն տվեց վախեցած.

— Տեղդ կաց, ի սեր աստծու: Հիմի խեղճ երեխան ներս կմտնի ու կնկատի, որ գաղտնի խոսակցություն ենք սկսել...

Երկարահասակ և նիհար տղամարդը հառաչելով նստեց էլի իր տեղը և մի հուսահատ հայացք գցեց թախտի մոտ դրված մի աթոռի, որի վրա դարսված էին թղթապանակներ: Երբ նա, ամեն օրվա նման, այդ բոլորը բերեց բանկից՝ տանը դրանց վրա աշխատելու համար, բոլորովին չէր էլ գուշակում, որ երեկոն կորչելու է իսպառ, այսպես ապարդյուն…

— Եվ այսպես…— սկսեց կոմերիտականը:

— Եվ այսպես,— կրկնեց կինը,— հարգելի Վարդան, կգնաք և կասեք այդ պատվազուրկին, որ ես աղջիկ չեմ մեծացրել նրա համար: Նա իմ Լիլիայի թայը չի…

— Վառվառա Սարիբեկովնա...— խնդրական ժպտաց Վարդանը:

— Ոչ, ոչ, ոչ: Ինչպե՞ս պիտի նա ապահովի իմ աղջկա ֆիզիկական գոյությունն իր չնչին աշխատավարձով: Ծխախոտի գործարանի բանվոր…

Վարդանն ապշեց կնոջ ունեցած հարուստ տվյալներից՝ Գառնիկի մասին: Բայց գուցե և մյուսների՞…

— Գոնե ձեզ նման թերթի աշխատակից լիներ,— շարունակեց կինը,— ոճաբան... Կարելի էր հույս ունենալ, որ վաղը-մյուս օրը կամ խմբագիր կդառնար, կամ, ամենավատ դեպքում՝ գրող: Բայց բանվոր…

— Ես ձեզ պիտի բարկացնեմ, Վառվառա Սարիբեկովնա, նախապես ներողություն եմ խնդրում դրա համար,— ասաց Վարդանն այնպիսի մի ժպիտով, որ բոլորովին զինաթափեցրեց կնոջը:— Ես ինձ թույլ եմ տալիս չհամաձայնվել ձեզ հետ: Մեզ մոտ բանվորա-գյուղացիական իշխանություն է և բանվորությունն ամեն տեղ առաջին պլանի վրա է: Մի՞թե ոճաբանը կամ հենց թեկուզ հաշվապահը,— նա ձեռքով արեց դեպի տղամարդը և ժպտաց,— կարող են համեմատվել բանվորի հետ: Վաղը Գառնիկը կարող է դառնալ ինժեներ կամ, ձեր արտահայտությամբ ասած, ամենավատ դեպքում՝ դիրեկտոր: Նրա առաջ բաց են բոլոր ճանապարհները: Իհարկե, մեր առաջ էլ են բաց, բայց մի՞թե մենք կարող ենք համեմատվել Գառնիկի կամ Մուրադի հետ: Ճիշտ չե՞մ ասում…— դիմեց նա տղամարդուն և պաուզա տվեց:

— Ավետ Հայրապետովիչ,— ամուսնու փոխարեն հաղորդեց կինը:

Լիլիան, հասկանալով, որ իր «պողպատն» է կոփվում իր բացակայությամբ, չէր շտապում մտնել ներս: Թեյը դնելուց հետո նա մոտեցավ իրենց դռանը և փորձեց ականջ դնել, բայց ոչինչ չէր լսվում: Ապա մոտեցավ կոմերիտականների դռանը՝ գուշակություններ անելով, թե ովքեր կան ներսում: Եվ այդտեղ, դռան ճեղքից, նա տեսավ Գառնիկին, որը քիթը դուրս հանած, կարծես հոտոտում էր իրերի ընթացքը: Աղջիկը սարսափած վրա քաշեց դուռը, պինդ ծածկեց, բայց կոմերիտականը նրա փայլող աչքերից հասկացավ, որ Վարդանի այցելությունը բարերար ազդեցություն է գործել դեպքերի ընթացքի վրա: Այդ էր ապացուցում նաև գոռգոռոցների լիակատար ընդհատումը հարևանների մոտ:

Երբ Լիլիան, վերջապես, նորից մտավ սենյակ, այժմ իրոք, սեղանի շուրջը տեղի էր ունենում այնպիսի կոնսպիրատիվ խոսակցություն, որ «երեխայի» ներկայությունն այդտեղ անհնար էր:

— Փոխիր հագուստդ,— խիստ տոնով կարգադրեց մայրը նրան:— Ես այդպե՞ս եմ դաստիարակել քեզ, որ տնային հագուստով երևաս հյուրի մոտ…

Լիլիան ճախրելով մտավ իր սենյակը:

Վարդանն ըստ երևույթին արդեն «ջրել» էր կնոջ բոլոր հիմնական փաստարկումները և բավական կակղացրել նրան, որովհետև, ինչպես խեղդվողը կառչում է ծղոտից, այնպես էլ Վառվառա Սարիբեկովնան կառչեց վերջին պատճառաբանությունից.

— Գոնե քիթը ծուռ չլիներ…

— Ո՛ւմ քիթը...— սարսափելի զարմացավ Վարդանը:— Դուք Գառնիկի՞ մասին եք ասում: Չի կարող պատահել:

— Ծուռ է, ծուռ է, ծուռ է,— գլուխը ձեռքերի մեջ առնելով, տանջալի արտասանեց կինը:

— Ես հասկացա, թե ինչու է ձեզ այդպես թվում,— հանկարծ բացականչեց Վարդանը՝ ներողամիտ ժպտալով կնոջ հասցեին:— Դուք մասամբ իրավացի եք: Բայց դա տեսողական պատրանք է՝ պերսպեկտիվայի կրճատման հետ կապված: Ինքներդ դատեցեք.— ձեր դուռը և մեր դուռը գտնվում են ոչ թե ուղղակի դեմ-դիմաց, այլ միմյանց նկատմամբ շեղակի, կամ, ինչպես երկրաչափներն են ասում,— ավելացրեց նա արհամարհանքով, կարծես բարկանալով, թե ինչու են երկրաչափներն այդպես ասում,— ըստ դիագոնալի: Եվ ահա, երբ դուք դուրս եք գալիս ձեր սենյակից, իսկ Գառնիկը մեր, դուք նրան բնականաբար տեսնում եք ռակուրսի մեջ…

Վարդանը հիշեց, որ դպրոցում նա ֆիզիկայի ու երկրաչափության առարկաներից երբեք չէր ստացել երեքից ավելի լավ թվանշան: Բայց այժմ նա զգաց, որ դա էլ շատ է եղել իր համար: Նրա միակ հույսն այն էր, որ Վառվառա Սարիբեկովնան այդ նույն առարկաներից երկու պիտի ստացած լիներ: Բայց Լիլիայի մայրը հարցին մոտեցավ բոլորովին անսպասելի կողմից:

— Լավ,— ասաց նա,— ես համաձայն եմ ձեր տված բացատրության հետ: Բայց այդ դեպքում ինչո՞ւ համար ես ռակուրսով չեմ տեսնում նաև մնացյալ երեքիդ քթերը…

— Այդ արդեն դուք ինքներդ պիտի ասեք, ես չգիտեմ,— անդրդվելիորեն ժպտաց Վարդանը՝ ամբողջ պատասխանատվությունը գցելով կնոջ վրա:

— Մի՞թե քիթը կարող է վճռական դեր խաղալ ամուսնության հարցում,— փորձեց իր խոսքն ասել հաշվապահը:— Ես էլ մի կարգին քիթ չունեմ, բայց ահա…

— Քեզ ոչ ոք չխնդրեց միջամտել,— նկատողություն արեց կինը նրան:— Ես էլ գիտեմ, որ քիթն առանձին վերցրած, չի կարող տրագեդիա ստեղծել: Բայց երբ նա լցնում է բացասական կողմերով լի բաժակը…

— Մենք բաժակն արդեն դատարկեցինք,— ժպիտով հիշեցրեց Վարդանը:— Մենք համոզվեցինք, որ Գառնիկը չի ծխում, չի թրևում, ունի օրինակելի վարք, նրա առաջ բաց են բոլոր ճանապարհները... Նա ծնողներ չունի և ձեզ կսիրի որպես իր հարազատ հորն ու մորը: Իսկ Լիլիայի համար նա կլինի... Բայց ինչո՞ւ եմ ես ինքս ասում այս բոլորը: Ձեր թույլտվությամբ նա ինքը կարող է գալ և հավաստիացնել ձեզ…

— Ի՞նչ...— ճչաց կինը:— Այդ ավազակն իմ տա՞նը: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Եթե նա պատվի տեր երիտասարդ լիներ, գողի պես չէր սողոսկի մեր տունը մեր բացակայությամբ՝ յուղելու համար անփորձ երեխայի գլուխը, այլ կդիմեր նրա ծնողներին՝ ինչպես կարգն է:

— Իհարկե, իհարկե,— իսկույն համաձայնվեց Վարդանը:— Մի՞թե ես քաջալերում եմ նրա արարքը: Բայց խեղճ տղան երևի ամաչել է անձամբ ձեզ դիմելուց և ուզեցել է դա կատարել ձեր աղջկա միջոցով:— Տեսնելով, որ կինն ուզում է առարկել, Վարդանն շտապ ավելացրեց.— Ես հասկանում եմ, դա վայելուչ բան չէ, բայց հոգեբանորեն միանգամայն բացատրելի է: Բացի դրանից, մի մոռացեք, Վառվառա Սարիբեկովնա, որ նա չէր կարող դիմել ձեզ՝ առանց ունենալու ձեր աղջկա համաձայնությունը: Չէ՞ որ դա նրանց առաջին խոսակցությունն է եղել: Առաջին խոսակցությունը...— կրկնեց Վարդանը պաթետիկ տոնով:

Կինը ոչնչով չառարկեց: Կոմերիտականը, թաքցնելով իր խրախճանքը, ձեռքերը տարավ դեպի գրպանները, շոշափեց և, ոտքի կանգնելով, ասաց:

— Ներեցեք ինձ մի րոպեով, ես մոռացել եմ թաշկինակ վերցնել…

Նետվելով իրենց սենյակը, նա շշնջաց հրամայաբար.

— Շո՛ւտ, հագիր յունգ-շտուրմդ և պատրաստ եղիր:

— Ասա, ինչպե՞ս են գործերը,— հարձակվեց նրա վրա Գառնիկը:

— Ավելորդ հարց ես տալիս,— բարկացավ Վարդանը:— Եթե ասում են՝ շորերդ փոխիր՝ ուրեմն հասկացիր, թե ինչպես են գործերը: Դե, ես գնացի, ժամանակ չունեմ:

— Վարդան, սպասիր, խնդրում եմ: Սպիտակեղենս էլ փոխե՞մ:

— Հիմար: Դու խո բժշկական քննության չե՞ս գնում:

— Ես ի՞նչ իմանամ,— հառաչեց Գառնիկը,— քա՞նի անգամ եմ նշանվել որ…

— Ցերեկվա արարքիդ համար ներողություն կխնդրես նրա ծնողներից,— պատվիրեց Վարդանը:

— Ես ի՞նչ եմ արել որ,— բորբոքվեց Գառնիկը:

— Դատողություններ չանել,— ֆշշաց ընկերը նրա վրա:— Ասում են՝ խնդրիր, ուրեմն՝ խնդրիր: Հա, ապագա զոքանջիդ անուն-հայրանունը Վառվառա Սարիբեկովնա է: Կրկնիր մի քանի անգամ, որ սովորես:

— Վառվառա Սարիբեկովնա, Վառվառա Սարիբեկովնա...— ջերմեռանդ շշնջաց «փեսացուն»:— Խոսքը մեր մեջ՝ զզվելի անուն է:

— Դու ինքդ ես ընտրել էդպիսի անուն ունեցող աղջիկ:

— Իսկ հո՞ր անունը…

— Դա բոլորովին կարևոր չէ: Հետո կսովորես: Հիմա չեմ ասում, որ երկուսն էլ չմոռանաս: Կանվանես «հայրիկ»…

Երբ Վարդանը նորից մտավ հարևանների մոտ, սեղանի վրա արդեն հայտնվել էին թեյի պարագաներ: Վարդանն աչքի տակով հաշվեց, որ դրված էր հինգ բաժակ: Լիլիան, զուգված, ծիծաղելիորեն անմեղ տեսքով, նստել էր սեղանի մոտ. մայրն էր տեսնում թեյի պատրաստությունը:

— Ի՞նչ ես փայտացել, կարծես մարդու տալու աղջիկ լինես,— բարկացավ մայրը նրա վրա:— Գնա տես թեյը եփվե՞ց:

Աղջկա գնալուց հետո Վարդանը դիմեց կնոջը.

— Խնդրում եմ ձեզ, Վառվառա Սարիբեկովնա, թույլ տվեք, որ Գառնիկն էլ մասնակցի այս խոսակցությանը, որը որոշ չափով վերաբերում է նաև նրան...

— Ոչ, ոչ, ոչ,— ճչաց կինը— նա ոտք չպիտի դնի այստեղ:

— Դուք ինձ չհասկացաք: Այսինքն՝ ես ինքս ճիշտ չարտահայտվեցի: Ես ուզում եմ, որ նա գա ձեզանից ներողություն խնդրելու և... և ուրիշ ոչինչ: Պե՞տք է մի կերպ հարթել այս անախորժ պատմությունը, թե ոչ:

— Օ՛հ, չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ…

— Թող գա, Վարյա, ի՞նչ ես համառում,— համոզեց ամուսինը:

— Իսկ դու լռիր, քեզ չխնդրեցին խոսել,— իր բարկության մնացորդները նրա վրա թափեց Վառվառա Սարիբեկովնան:

42

Գառնիկը, տետրակաչափ հայելին ձեռքին, իրեն էր նայում դրա մեջ և համեստաբար մտածում՝ «տղա ենք, էլի», երբ դուռը շրխկալով բացվեց և նորից ներս ընկավ Վարդանը:

— Գնանք, շո՛ւտ…

— Ի՞նչ...— սարսափած ետ ցատկեց սիրահարվածը:— Չեմ կարող…

— Ի՞նչ է նշանակում՝ «չեմ կարող»...— սառեց-մնաց Վարդանը:— Դու խո չե՞ս ցնդվել:

— Դեռ չհասկացա՞ր, որ ցնդվել եմ,— իր հերթին զարմացավ Գառնիկը:

— Գնանք, գնանք, քեզ չեն ուտի:

— Իսկ դա շա՞տ անհրաժեշտ է,— համենայն դեպս հետաքրքրվեց ծուռքիթը:

— Ոչ շատ: Միայն այն չափով, որ չափով որ դու ես ամուսնացողը և ոչ թե ես:

— Գնանք...— հառաչեց Գառնիկը:

Նախասենյակում Վարդանը վրա-վրա տալով խորհուրդներ տվեց ընկերոջը, թե ինչպես պիտի պահի նա իրեն այնտեղ, բայց Գառնիկը շշմածի պես էր և ոչինչ չէր լսում:

Լենինականցին վարժ մարդու սովոր ձեռքով բաց արեց հարևանների դուռը, ներս թողեց ընկերոջը և ապա մտավ ինքը:

Գառնիկը հարբածի քայլերով մոտեցավ թախտի վրա նստած նիհար տղամարդուն և ձեռքը մեկնելով նրան, թոթովեց.

— Բարև, մայրիկ…

Ապա մոտեցավ կնոջը.

— Բարև, հայրիկ…

Եվ իսկույն ուղղեց իրեն.

— Վայվառա Սարիբեկովնա:

Այնուհետև նա մոտեցավ Լիլիային՝ նույնպես բարևելու, բայց աղջիկը սարսափած թաքցրեց իր ձեռքը:

Գառնիկը ճոճվելով մոտեցավ Վարդանին և թըմփալով ընկավ նրա կողքի աթոռի վրա: Ամենաապահով տեղն այդտեղ էր:

Կինը հրացայտ աչքերով նայեց նրան:

— Այդ ինչպե՞ս է: Մեր բացակայությամբ նստում ես երեխայի կողքին, իսկ մեր ներկայությամբ չե՞ս կարող: Խնդրեմ, մեծապատիվ ընկեր, տեղափոխվիր, ապացուցիր նորից քո անպատկառությունը…

Գառնիկը սարսափահար սեղմվեց Վարդանին:

— Տեղափոխվիր,— աննկատելիորեն շշնջաց լենինականցին: Տեսնելով, որ նա չի շարժվում տեղից, կրկնեց՝ ատամները կրճտացնելով.— տեղափոխվիր, իշի գլուխ, մի խայտառակիր ինձ…

Գառնիկը վեր կացավ և մահապարտի իր քայլերն ուղղեց դեպի «երեխան»: Լիլիան մի այնպիսի անհյուրընկալ հայացքով նայեց նրան, կարծես խեղճ տղան մի անծանոթի մեկն էր, որը պրտկերեսությամբ ուզում էր ծանոթանալ նրա հետ:

— Ըհը,— ցույց տվեց կինը ձեռքով,— իսկ հիմի նստեցին մեջք-մեջքի՝ կարծես քսանհինգ տարվա ամուսիններ լինեն…

Վարդանը զվարթ վեր կացավ տեղից, մոտեցավ զույգին, նրանց աթոռները քաշեց իրար մոտ և նրանց երեսները շուռ տվեց դեպի իրար:

Թախտի վրա նստած տղամարդը գերագույն շնորհակալությամբ նայում էր իր ապագա փեսային: Պատրաստվելով մտնել նրանց ընտանիքը, երիտասարդն ավտոմատիկորեն իր ուսերի վրա էր վերցնելու Վառվառա Սարիբեկովնայի բնավորության ծանր բեռի առնվազն կեսը: Ի՞նչ խոսք, որ երկու տղամարդը շատ փոքր ուժ է՝ քաշելու համար այդպիսի ծանր լուծ, բայց և այնպես երկուսն ավելի լավ է, քան թե մեկը:

Լիլիան ուզեց վեր կենալ՝ թեյ լցնելու համար:

— Նստիր, նստիր,— հանդիմանական տոնով սաստեց մայրը:— Ցերեկն իմ կամքի հակառակ էիր գնում, ինձ բանի տեղ չէիր դնում, իսկ հիմա ուզում ես խաթրս առնե՞լ: Թող ես ծառայություն անեմ քու առաջ, թեյ լցնեմ…

Լիլիան բողոքի մի շարժում արեց և նորից ուզեց վեր կենալ:

— Նստիր, նստիր,— հանգստացրեց հայրը:— Կարգն էդպես է: Ճիշտ է, մաման օրիգինալ ձևով է արտահայտում իր մտքերը, բայց դա հարկավոր է հասկանալ:

Կինը մի այնպիսի կրակոտ հայացք նետեց դեպի ամուսինը, որ վերջինս մի ումպով կուլ տվեց ջեռ թեյի կեսը՝ գոնե մի փոքր զովանալու համար:

Մի քանի րոպե բոլորը լուռ թեյ էին խմում, ապա Վառվառա Սարիբեկովնան իր հայացքը սևեռեց ապագա փեսայի վրա և համարյա հրամայեց.

— Ինչո՞ւ ես լռել, մի բան ասա:

Գառնիկը՝ բաժակը դրեց վար, կենտրոնացավ, մտածեց և ասաց.

— Ցրտերն ընկան:

Վարդանի մազերը բիզ-բիզ կանգնեցին: Բայց փոխանակ ընդհանուր փռթկոցի, նա նորից լսեց կնոջ ձայնը.

— Այո, երիտասարդ, ցրտերն ընկան, իսկ դու երևի էս ձմեռ էլ անցած տարվա բարակ վերարկուով ես անցկացնելու: Ես զարմանում եմ,— դիմեց նա Վարդանին,— ստանում են բավարար ռոճիկ և չեն կարողանում իրենց կյանքը դասավորել: Քո ռոճիկով,— այդտեղ Վառվառա Սարիբեկովնան այնպիսի ճշտությամբ անվանեց Գառնիկի աշխատավարձը, որ կոմերիտականների մարմնով սարսուռ անցավ,— քո ռոճիկով կարելի է երկու-երեք հոգուց բաղկացած ընտանիք պահել, իսկ դու... Դա ձեզ էլ է վերաբերում, մյուսներիդ,— բարկացած դիմեց կինը Վարդանին:

— Ես լրիվ համաձայն եմ ձեզ հետ, Վառվառա Սարիբեկովնա,— այս անգամ միանգամայն անկեղծ ասաց լենինականցին:— Ինչի՞ է նման ամուրի երիտասարդի կյանքը: Ոչ կարգին ուտում ես, ոչ կարգին հագնվում, իսկ դրամը ծախսվում է: Կամ վերցնենք մեր սենյակը: Ինչի՞ է նման: Ոչ մի կահ-կարասի: Ես համոզված եմ, որ Գառնիկն ու Լիան մի քանի տարում էնպիսի տեսք կտան դրան ո՛ր...

— Ի՞նչ գործ ունեն Գառնիկն ու Լիլիան ձեր սենյակում,— չհասկացավ կինը:

— Բա ինչպե՞ս: Բա որտե՞ղ պիտի ապրեն: Մեր մի ընկերն արդեն փոխադրվել է ուրիշ տեղ, ես ու Մուրադը նույնպես կճարենք մի սենյակ և…

— Դուք ոչ մի տեղ չեք գնա,— կարգադրեց կինը:— Ինչպես որ գիշեր ու ցերեկ մեր զահլան տարել եք աղմուկ ու ծիծաղով, էնպես էլ շարունակեցեք տանել, դա է մեզ վիճակված, ի՞նչ արած: Իսկ Լիլիան, եթե ցանկանում է ամուսնանալ, ապա թող ստիպված լինի իր սենյակում տեղավորել իր ամուսնուն:

Կոմերիտականները նայեցին իրար: «Ի՜նչ լավ մեշչանկա է Վառվառա Սարիբեկովնան»,— կարդաց Վարդանն ընկերոջ աչքերում:

— Դե, էլ ուրի՞շ ինչ կասես, Գառնիկ,— հարցրեց կինը:

Գառնիկը հանդիսավորաբար ոտքի կանգնեց:

— Կասեմ էն, Վայվառա Սարիբեկովնա, որ ես սիրում եմ Լիլիային և…

Լիլիան ամոթահար քաշեց նրա բլուզի փեշը: Գառնիկը, խոսքն ընդհատելով, հարցական նայեց նրան: Աղջիկն ավելի շփոթվեց:

— Սիրում եմ Լիլիային,— շարունակեց կոմերիտականը,— ուզում եմ ամուսնանալ հետը: Որքան որ ես գիտեմ, ձեր աղջիկը համամիտ է իմ հայացքներին: Ուրեմն, հայրիկ ու մայրիկ, խնդրում եմ ձեզ, որ տաք ձեր սկզբունքային համաձայնությունը...

Վարդանը գոհ նայեց ընկերոջը:

Թեև «փեսացուի» այդ պաշտոնական խոսքը մի քիչ ուշացել էր՝ ընկնելով «նորապսակների» ինչ սենյակում ապրելու հարցի ետևը, բայց և այնպես թողեց հարկ եղած տպավորությունը:

Կինն իր իշխանական ձեռքը մեկնեց դեպի ամուսինը և ասաց հեզ ձայնով.

— Նա է տան գլխավորը, սիրելի զավակներ, թող նա էլ ասի առաջին խոսքը:

Ավետ Հայրապետովիչը, լսելով, որ ինքն է տան գլխավորը, հուզվեց և մոտենալով երիտասարդներին, արտասվալի համբուրեց նրանց ճակատները: Ապա համբուրեց նաև կինը: Վերջում մոտեցավ Վարդանը, ջերմ սեղմեց Լիլիայի ձեռքը, համբուրվեց ընկերոջ հետ և շշնջաց նրա ականջին.

— Առաջին ու վերջին անգամը լինի, որ ես նշանում եմ քեզ: Քիչ մնաց խայտառակեիր ինձ:

— Ճիշտն ասած, ես քեզ իզուր մեջտեղ գցեցի,— խոսքի տակ չմնաց Գառնիկը:— Ես առանց քեզ էլ գործը գլուխ կբերեի: Գնա նստիր տեղդ և քեզ ազատ զգա մեր տանը…

Բոլորը լսեցին կոմերիտականների դռան ձայնը: Վարդանը բացականչեց.

— Գառնիկ… Ախր այսօր մենք հրավիրված ենք կարմիր կնունքի… Ինչ անհարմար ստացվեց…

— Անհարմար ոչինչ չկա,— հակաճառեց կինն իր խիստ տոնով:— Կգնաք՝ ուր որ ձեզ հարկավոր է: Մենք պաշտոնական նշանդրեքը կկատարենք մի քանի օր հետո: Մենք հո պատի ծակից չե՞նք դուրս եկել, ազգականներ ունենք, բարեկամներ: Դուք էլ կգաք ձեր ընկերներով-ընկերուհիներով: Ցողիկին կբերեք անպայման,— դիմեց նա Վարդանին:— Ես ուզում եմ, որ նա ու իմ Լիլիան մտերմություն անեն իրար հետ:

— Իսկ թույլ կտա՞ք, Վայվառա Սարիբեկովնա,— դիմեց Գառնիկն իր ապագա զոքանջին,— որ Լիլիան էլ մեզ հետ գա կարմիր կնունքին…

— Խլեցիր աղջկաս, իսկ հիմի իմ համաձայնությո՞ւնն ես հարցնում, ավազակ,— հեկեկաց կինը՝ իր գեր մարմինը նետելով ամուսնու վտիտ կրծքի վրա:— Իհարկե, գնացեք, գնացեք, գնացեք…

Երբ Վարդանը մտավ իրենց սենյակը, Մուրադն արդեն ավարտում էր յունգ-շտուրմի հագնելը:

— Եկա՞ր,— դիմեց նա լենինականցուն:— Իսկ որտե՞ղ է էն անպիտանը, ուշանում ենք:

— Էն անպիտանը հարևանի տանն է, իր նշանածի մոտ,— անտարբեր տոնով ասաց Վարդանը:

Գետրին վար ընկավ Մուրադի ձեռքից:

— Ի՞նչ ես դուրս տալիս:

— Կիմովս եմ երդվում:

— Ցա՛հ…— բացականչեց Մուրադը:— Ես շշմեցի: Ի՞նչ կերպ, ե՞րբ, ինչո՞ւ համար:

— Հետո, հետո, ուշանում ենք, հագիր գետրիները:

— Գառնիկը… Լիլիայենց… տանը…— արտասանեց Մուրադն ինքնիրեն՝ աշխատելով հաշտվել այդ մտքի հետ: Բայց, ըստ երևույթին, բան դուրս չէր գալիս:— Իսկ լեզուն կապ չէ՞ր ընկել: Կարողացա՞վ խոսել:

— Այո, խոսեց…— փնչաց Վարդանը:— Սպասում էին, թե ինչ կասի, իսկ նա ասաց.— «ցրտերն ընկան»…

Վարդանը զղջաց իր ասածի համար: Մուրադը բռնեց փորը և բերանքսիվայր ընկավ իր թախտի վրա: Նա չարձակեց ոչ մի ծպտուն և միայն սկսեց ցնցվել ու լխկլխկալ: Հենց այդ վիճակումն էլ տեսան նրան ներս մտնող Ցողիկն ու Աստղիկը:

— Ի՞նչ է պատահել,— վախեցած բացականչեց Ցողիկը՝ մոտ վազելով Մուրադին:

— Ոչինչ, ոչինչ,— հանգստացրեց Վարդանը:— Հիմա կպրծնի:

Մուրադը վեր ցատկեց տեղից, առանց որևէ մեկին նայելու նետվեց միջանցք և այնտեղ մի փոքր հանգստացավ: Բայց նրան վիճակված չէր լրիվ հանգստանալ: Հարևանի դուռը բացվեց, այնտեղից դուրս ելան Լիլիան ու Գառնիկը: Տեսնելով նրան, Մուրադը փորձ արեց շնորհավորելու, բայց հազիվ էր բռնել աղջկա ձեռքը, երբ փոթորկալի ու լուռ ծիծաղը նորից կատաղիորեն ցնցեց նրա բոլոր մկանները:

— Լիլիա, շն... շն... շն-շն... շն-շն…

— Մենք էլ «շն»,— բարկացավ Գառնիկը՝ նկատի ունենալով «շնորհակալություն» բառը:

43

Վարդանն ու Մուրադը, Գառնիկն ու Լիլիան, Ցողիկն ու Աստղիկը՝ զույգ-զույգ, թևանցուկ արած, մոտենում էին երկաթգծի ակումբին: Ամեն ինչից երևում էր, որ կոնդեցի աղջիկն ու նրա կենվորուհին հավանել էին իրար և կարճ ժամերի ընթացքում արդեն մտերմացել: Նրանք զբաղված էին իրենց խոսակցությամբ, ընդ որում շարունակ պատմում էր Աստղիկը, իսկ Ցողիկը՝ լսում:

Իրենց խոսակցությամբ էին զբաղված նաև Գառնիկն ու Լիլիան, որոնք այնքան էին կլանվել, որ ոչինչ չէին տեսնում իրենց շուրջը: Բայց երբեմն-երբեմն նրանց այդ վիճակից հանում էր Մուրադը՝ բացականչելով.

— Ցրտերն ընկան:

Եվ բոլորը ծիծաղում էին, իսկ Մուրադը հրճվում էր: Բավական է, ախր վառել է նրան էդ ծուռքիթն իր սրամտություններով ու ծաղրով: Վերջապես Մուրադը կարող է վրեժ լուծել ամեն ինչի համար: Եվ որպեսզի այդ խոսքերի կրկնությունը չդառնար միակերպ, նա ամեն անգամ դրանք արտասանում էր մի նոր ինտոնացիայով կամ բոլորովին չէր արտասանում, այլ ատամներն էր իրար չխկչխկացնում մրսող մարդու նման: Եվ բոլորը հասկանում էին, որ «ցրտերն ընկան»:

Իսկ իրականում տաք երեկո էր, երևանյան գաղջ աշնան տաք երեկո: Փողոցը, որով անցնում էին երիտասարդները, մութն էր, միայն տեղ-տեղ լուսավորված էլեկտրական լապտերներով, որոնք իրարից շատ հեռու-հեռու էին և թույլ: Տներում վառվում էին ոչ այնքան էլեկտրական, որքան որ նավթի լամպեր:

Վարդանը՝ լուռ, իր մտքերի հետ, քայլում էր Մուրադի կողքով: Նրա ականջներում հնչում էր ինչ-որ ծանոթ շրշոց: Դա՝ տպվում էր «Ավանգարդի» երեքշաբթի օրվա համարը... Տպագրիչը մեկը մյուսի ետևից թերթերը տալիս էր մեքենայի բերանը, իսկ մեքենան դրանք փաթաթում էր իր հաստ թմբուկի վրա: Կոմերիտական լրագրի շարվածքը, ետ ու առաջ շարժվելով, մտնում էր պտտվող այդ թմբուկի տակ ու դուրս գալիս, իսկ փայտե երկար ու տափակ մատների մի ամբողջ շարք, տպված լրագիրն իր վրա վերցնելով, բերում և շուռ էր տալիս իր առջև, դաստա կազմում:

Վարդանի պատմվածքը, շարված-պատրաստ, սպասում էր տպվելու իր հերթին: Վաղը լույս կտեսնի լրագրի այդ համարը, ապա լույս կտեսնի հինգշաբթի օրվանը, դրանից հետո՝ կիրակի օրվանը, որտեղ կզետեղվի դա…

Թե՞ գուցե պատմվածքը դեռ շարված չէ: Գրաշարապետը չի սիրում տառեր զբաղեցնել ժամանակից շուտ, թերթի ոչ հերթական համարի համար, քանի որ տպարանն այնքան էլ հարուստ չէ և այնտեղ միշտ զգացվում է տառերի պակասություն: Հը՞, գուցե դեռ շարված չէ՞: Ինչ լավ կլիներ, եթե այդպես լիներ: Վարդանը հենց վաղը կգնար այնտեղ, կվերցներ ձեռագիրը և կպատռեր: Գրո՛ղ... Ձահրումար է նա և ոչ թե գրող…

Գրողը պետք է գրի կարևոր բաների մասին և ոչ թե սիրո: Իհարկե, սերն էլ է կարևոր, բայց մի՞թե դա կարող է համեմատվել ուրիշ նյութերի հետ: Ահա նրանք անցնում են Հայաստանի մայրաքաղաքի մութ անբարեկարգ մի փողոցով, որի երկու կողմերում կանգնած են միհարկանի տներ: Այդ տներում վառվում են նավթի լամպեր, իսկ դրանց լույսի տակ նստել և ուրախ-ուրախ իրենց գործերով են զբաղվում մարդիկ, հանգստանում են, թեյում, կարդում, զրուցում…

Իսկ գրողը պետք է գրի այնպիսի պատմվածքներ, որ զվարթությունը մի պահ չքանա հանգստացողների դեմքի վրայից, նրանց պատի մտահոգությունը և նրանք նայեն իրենց շուրջը, ցավ զգան այն բանից, որ Հայաստանի մայրաքաղաքն ունի բազմաթիվ բազմաթիվ մութ փողոցներ, որոնց վրա կանգնած են միհարկանի անշուք տներ, որոնց ներսում վառվում են նավթի լամպեր... Իսկ երբ նրանք սուր ցավ զգան դրանից, ավելի մեծ բաղձանքով կձեռնարկեն նոր շենքեր, գործարաններ, էլեկտրակայաններ կառուցելուն, ավելի մեծ անձնվիրությամբ կփարվեն խորհրդային իշխանությանը, ժողովրդի պաշտպան Կարմիր բանակին… Ահա թե ինչի մասին պիտի գրի գրողն իր պատմվածքները՝ փոխանակ սիրո…

Բայց ոչինչ, ոչինչ, թող այս մի պատմվածքը, քանի որ արդեն շարված է, իհարկե, շարված է, լույս տեսնի սիրո մասին, իսկ հաջորդ պատմվածքն արդեն…

Երիտասարդները հասան ակումբի շենքին: Քարաշեն, աղյուսաշեն և հողաշեն Երևանում դա գուցե միակ փայտե շենքն էր: Դրա պատերը կազմված էին այն նեղ ու երկարավուն տախտակներից, որոնցից ապրանքատար վագոններն են կառուցում: Շենքը թողնում էր հսկայական վագոնի տպավորություն: Դարբասի նման լայն դուռը բացվում էր ուղղակի դահլիճի վրա: Այնտեղ դրված էին երկու հարյուրի չափ աթոռներ, որոնց միայն կեսն էր այժմ զբաղված:

Երիտասարդները ներս մտան ճիշտ այն րոպեին, երբ լսվեց լռության հրավիրող զանգակի ձայնը, և կարմիր կնունքին նվիրված երեկոն սկսվեց: Հաստատված լռության մեջ հնչում էին միայն մի քանի նորածինների լացի զանազանակերպ ձայները:

Բեմի վրա, կարմիր հասարակ կտորով ծածկված երկար սեղանի ետևում, նստել էին հինգ հոգի՝ պրոֆմիության տեղկոմի նախագահը՝ արդեն տարիքոտ մի մարդ, երկաթուղային արհեստանոցների կոմերիտական բջիջի քարտուղարը, մի կին, մի պիոներուհի և Ռոկլանան:

Տեղկոմի նախագահը ոտքի կանգնեց և դահլիճում նստածները պատրաստվեցին լսելու մեկն այն սովորական ու շաբլոն ճառերից, որոնք արտասանվում են բոլոր այդպիսի դեպքերում և հանդիսանում են իսկական ուրախությունների անխուսափելի վերադիրը:

Եվ իրոք, տարիքոտ մարդու առաջին խոսքերը ոչնչով չէին տարբերվում հազար անգամ լսված այդպիսի խոսքերից: Հազվագյուտ բան չէր նաև այն, որ նրա առոգանությունը տեղական չէր՝ ոչ երևանյան և ոչ էլ ընդհանրապես ռուսահայ, այլ մատնում էր նրա արևմտյան հայաստանցի լինելը: Բայց ահա նա ավարտեց իր խոսքի պաշտոնական համառոտ մասը, որից հետո փոխվեց և նրա ձայնը, և նույնիսկ դեմքի արտահայտությունը: Նախագահից ու հռետորից նա վերածվեց մտերիմ զրուցակցի՝ թախիծի ամպը ճակատի վրա:

— Սիրելի ընկերներ,— ասաց նա հանգիստ, ոչ-բարձր ձայնով,— այսօր մենք հավաքվեր ենք հոս՝ ձեզ հետ միասին ուրախանալու, որ հայ ժողովուրթի հնաթարյան հայրենիքում, մեր փազմաչարչար հողի վրա, բացվեր են թարցյալ մեյ քանի ծաղիկներ, ծնվեր են թարցյալ մեյ քանի երեխայք: Թե ինչ կնշանակե այս փան՝ կարող է քնահատել լոկ հայ ժողովուրթ, որ թեռ տաս տարի առաջ կորցրեց իր կես, կորցրեց մեկ և կես միլիոն զավակներ, որոնքյ զոհ գնացին թուրք յաթաղանին: Ես համոզված եմ, սիրելի փարեկամներ, որ այս թահիճին մեջ, հարկավ, կքտնվին քոնե մեյ քանի ծնողք, որոնց երեխայց արյունարփու թահիճներ նետեցին Եփրատի երախ կամ ողջակիզեցին տներ լցրած ու թուռ վերան կողպած…

Դահլիճում լսվեցին կանանց փղձկոցներ, հեկեկոց:

— Ես կասեմ՝ մեյ քանի ծնողք, որովհետև մյուս փազմահազար նահատակված երեխայց ծնողներ որտե՞ղ են, իրենք ևս զոհ գացին հրեշավոր սպանդին, որի նման չունի համաշխարհային պատմություն…

— Գառնիկ...— շշնջաց Լիլիան վախեցած:— Ի՞նչ պատահեց քեզ…

Բայց կոմերիտականը, առանց աղջկան պատասխանելու, գլուխն իր դիմացի աթոռի թիկնակին դրած, շարունակում էր լուռ արտասվել:

— Մի խանգարիր...— շշնջաց աղջկան նրա մյուս կողքին նստած Մուրադը:— Նա այնտեղացի է…

Իսկ բեմի վրայից շարունակում էին հնչել քարի պես ծանր խոսքեր, կարծես մարդիկ հավաքվել էին ոչ թե ուրախ կնունքի, այլ սգահանդեսի.

— Մեր ժողովուրթ տեսած է Հռովմի լեքիոններ, պարսից հոծ փանակներ, մեր երկիր ասպատակած են արաբներ, սելջուկներ... Ո՞վ, ո՞վ, ըսեք ինծի, ո՞ր մեկ փռնակալ չէ անցեր Հայաստանով, չէ թարցուցեր ան Ավարայրի թաշտ…

Պաուզա տալով, նա շարունակեց.

— Փայց...— Նա նորից պաուզա տվեց:— Փայց օսմանյան փռնակալներ քերազանցեցին այդ ամեն: Անոնք մեր ժողովուրթ կանգնեցուցին անթունթի եզր և ըսին՝ «հոս պիտիիյնաք»: Եվս մեյ քիչ, և հայ ժողովուրթ պիտի երթար շարվիլ փնաջինջ այլ ազգաց քով՝ Ասորեստան, Փափելոն և այլքյ… Ժողովուրթ մը, որ մեյ քանի հազարամյակ հաց քամած է հայ լեռնաստանի քարերեն, մշակած է ղռլամա հողեր, համաշխարհային պատմության տված է քիտնականներ՝ Անանիա Շիրակացի, Ամիր Դովլաթ և փազում ու փազում այլ քիտնականներ, որ զարգացուցած է առևտուր, փարեկամական կապեր այլ ազգաց հետ, և այլն և այլն, պիտի ջնջվեր երկրի երեսին լոկ այն պատճառով, որ թուրքյ փռնակալ այդպես կուզեր...

Ցողիկը լրիվ չէր հասկանում նրա ասածները, և Վարդանը, նրա կողքին նստած, կամացուկ բացատրում էր անհասկանալի բառերն ու արտահայտությունները:

— Իսկ թաշնակներ լմնցուցին ամեն ինչ,— շարունակեց հռետորը:— Հայ ժողովուրթ, որ միշտ կարիքյ է զգացած մեյ լավ ղեկավար կուսակցության, որ ղեկավարե իր ազատաքրական պայքար, խափված է թաշնակներու կողմե, որոնք միշտ ծառայած են իմփերիալիստ պետությանց…

Բարձրացնելով ցուցամատը և ցույց տալով դրա ամենածայրը, նա ասաց.

— Մեյ մազ, մեյ բարայ մազ էր մնացե մեր կործանման: Եվ ահա, խորհրդային Ռուսաստան փրկեց մեզ: Լենին…

Ղեկավարի անունը շրջապատվեց ծափահարությունների համերաշխ որոտով, որը գալիս էր բազմաչարչար հայ ժողովրդի մնացորդների հոգուց, սրտից, ամբողջ էությունից:

— Եվ ահա,— նորից լսվեց բեմից,— այսինքն՝ քսան թվականի նոյեմփերի 29-են ետք, հայ ժողովուրթ ամեն օր կնշե ոչ թե համաճարակ ու մահ, պատերազմ և սպանդ, այլ աշխատանքյ և վերականքնություն, հարսանիքյ և կնունքյ…

Ժողովրդի մռայլ ու սգավոր անցյալի պատկերից հետո այդ խոսքերն այնպիսի լուսավոր շողերով ողողեցին ներկաների սրտերը, որ նրանք խոր շունչ քաշեցին՝ կարծես կոշմարային քնից արթնացած, և սկսեցին խելահեղ ծափահարել, ծափահարել ոչ այնքան հռետորին, որքան իրենց այսօրվան:

Առաջին շարքերի կողմից երևաց Կնյազը, որն աչք հածելով նստածների վրայով, որոնում էր Վարդանին: Տեսնելով լենինականցուն, նա նայեց ոչ այնքան վստահ՝ նա՞ է արդյոք: Բայց

Վարդանը գլխով արեց նրան և Կնյազն ուրախացած մոտեցավ: Տեսնելով Վարդանի շուրջը նստածներին, նա հասկացավ, որ դրանց բերել է իր ծանոթ կոմերիտականը:

— Եկե՛լ եք,— շշնջաց նա՝ բեմից խոսողին չխանգարելու համար:— Իսկ որտե՞ղ է ընկեր Սանթուրյանը:

— Նա ինձանից հետո մի դաս էլ ուներ,— հայտնեց Մուրադը:— Կգա:

Կնյազը պարզասրտորեն սեղմեց բոլորի ձեռքերը, ծանոթացավ նրանց հետ:

— Ոչ մեկդ չփախչի,— նախազգուշացրեց նա:— Բոլորդ գալիս եք մեր տուն: Դու, ընկեր, անունդ մոռացա…

— Վարդան:

— Դու ես պատասխանատու, որ բոլորը գան:

Կնյազը շողում էր ուրախությունից: Ականջ դնելով առաջին շարքերից մանկական լացի ձայներին, նա ասաց ժպտալով.

— Էն մեկը, որ ամենից ուժեղ է բոռում՝ իմ տղան է…

Եվ շտապեց իր բոռացող տղայի մոտ:

— Իսկ ի՞նչ առնչություն ունի Ռոկլանան այս երեկոյի հետ,— հարցրեց Ցողիկը Վարդանին:

— Չգիտեմ,— անտարբերությամբ ասաց լենինականցին:— Երևի որպես կոմերիտուհիների ներկայացուցիչ: Նա ակտիվիստ է և քաղաքում բոլորը ճանաչում են նրան: Իսկ ես համարյա զզվում են նրանից:

— Գիտե՞ս ինչ,— ասաց Ցողիկը:— Իմ կարծիքով նա այնքան էլ վատը չէ, որքան որ դու ես կարծում և որքան որ նա է ցույց տալիս իրեն:

Աստղիկը չէր խոսում ոչ ոքի հետ և կլանված հետևում էր բեմում տեղի ունեցողին: Նա առաջին անգամն էր ներկա գտնվում ոչ միայն կարմիր կնունքի, այլև ընդհանրապես մարդկային այդպիսի մեծ հավաքույթի: Այն, որ կոմերիտականները բերել էին նրան այստեղ, նա համարում էր մեծ պատիվ իր համար, անչափ հպարտ էր դրանով և շնորհակալությամբ էր լցված դեպի Վարդանը, նրա մորաքրոջ աղջիկը, մյուսները:

Դահլիճի լռությունը, որը հաստատվել էր տեղկոմի նախագահի խոսքի ընթացքում, նորից խախտվեց: Աղմուկն սկսվեց նրա ավարտելուց հետո բռնկված ծափահարություններով, մասնավոր խոսակցություններով, որոնք շարունակվեցին հաջորդ հռետորի՝ կոմերիտական բջիջի քարտուղարի խոսքի ընթացքում, որովհետև նա, իր կոմերիտական աշխատանքների մեջ հիանալիորեն աչքի ընկնող, խոսել բոլորովին չգիտեր:

Դահլիճում նստածները, համարյա առանց բացառության, կնքվող երեխաների ընտանիքներն էին և ազգականները: Եկել էին մեծից մինչև փոքրը: Պառավներն ու ծերունիները նստել էին խռովկան դիրքով, նեղացած յուրայիններից, որ սուրբ կնունքի փոխարեն նրանց թոռանը մկրտում էին կարմիր կնունքով: Վատ հագնված երեխաները, չուստերով և ծակ կամ կարկատանված գուլպաներով, այդքան շատ նոր խաղընկերներ տեսնելուց ուրախացած, վազվզում էին դատարկ նստարանների արանքներով, ծիծաղում, լիաձայն խոսակցում իրար հետ, և երբեմն-երբեմն, այդ ամենից ձանձրացած, մոտենում էին ծնողներին և հարցնում, թե վերջապես ե՞րբ է լինելու կնունքը:

Դահլիճ մտավ փողային նվագախումբը՝ էլեկտրական լույսի տակ փայլեցնելով իր դեղին նվագարանները: Խումբը երևի հենց նոր էր ավարտել մի այլ տեղում նվագելը, որովհետև

կորնետիստը, դահլիճով դեպի բեմ անցնելիս, բաց արեց իր երաժշտական գործիքի փոքրիկ կափույրը, ցնցեց, և անցքից կաթեցին մի քանի կաթիլներ:

Տեսնելով նվագախումբը, ներկաները խիստ ոգևորվեցին և աղմուկն ավելի ուժեղացավ: Կոմերիտական բջիջի քարտուղարը, «սեղմելով» իր խոսքի վերջին մասը, «ամփոփեց» և նստեց իր տեղը:

— Նորածինները հրավիրվում են բեմ,— հայտարարեց Ռոկլանան՝ տեղից վեր կենալով:

Առաջին շարքերում սկսվեց մեծ շարժում: Մեկևկես տասնյակի չափ տղա և աղջիկ պիոներներ, համազգեստով և կարմիր փողկապով, մայրերից վերցրին նրանց երեխաներին և բարձրացան բեմ:

— Լավ գրկի, վեր չքցես, ի սեր աստծու,— շշնջաց մի մայր:

— Քցում ա՝ թող քցի,— կատակեց հայրը բարձրաձայն, ըստ երևույթին արդեն մի փոքր խմած,— թաղան կպատրաստենք, դժար հո չի՞…

Դահլիճում ծիծաղեցին:

— Սուս, անամոթ-խայտառակ,— կաս-կարմիր կտրվելով, սաստեց կինը՝ եղունգները խրելով նրա թևի մեջ: Ապա, ավելի կամացուկ, ավելացրեց:— Հլա մի ինձ հարցրու՝ դժա՞ր է, թե անդժար…

Նախագահության սեղանի ետևում նստած պիոներուհին՝ պիոներների կոլվարը, վեր կացավ տեղից և սկսեց պիոներներին շարել բեմի առջևամասում, մի գծի վրա: Նորածիններից մի քանիսը քնած էին, մյուսները մրցում էին իրար հետ իրենց թույլ կամ զիլ ձայներով: Կային և այնպիսիները, որոնք լուռ, հանգիստ և անհասկացող հայացքները հառել էին դեպի տարածությունը և կարծես սպասում էին դեպքերի հետագա ընթացքին:

Մայրերը դահլիճից վախով ու տագնապով հետևում էին պիոներների յուրաքանչյուր շարժմանը՝ վտանգի դեպքում բեմ նետվելու և իրենց երեխային փրկելու համար: Իսկ երբ կոլվարն ասաց՝ «պիոներներ, պատրաստ», մայրերի վախը վերածվեց սարսափի, որովհետև պիոներները, պատասխանելու համար իրենց պետի կոչին, բարձրացրին աջ ձեռքերը ճակատների մոտ, բղավեցին՝ «միշտ պատրաստ ենք», իսկ երեխաները մնացին միայն մի ձեռքով նրանց կրծքերին սեղմված:

— Թողնել,— հրահանգեց կոլվարը:

Պիոներներն արագ իջեցրին իրենց ձեռքերը, և մայրերի սիրտը նորից տեղն ընկավ:

— Կարմիր կնունքը հայտարարում եմ բացված,— ասաց նախագահը:

Հնչեց «Ինտերնացիոնալը»: Բոլորը ոտքի կանգնեցին: Պիոներները պատվի առան…

— Ձայնը տրվում է կոմերիտմիության ներկայացուցիչ ընկեր Ռոկլանային,— ասաց նախագահը և ավելացրեց ավելի կամացուկ.— Կարճ կկապես, թե չէ երեխաները կհոգնեն:

«Երեխա» ասելով նախագահը ներկա դեպքում նկատի ուներ պիոներներին:

Բայց նախքան Ռոկլանան կխոսեր, բեմ վազեց Կնյազի կինը՝ խիստ նիհար և բավական գեղեցիկ, ռետինե պտուկը դրեց ծծկերի բերանը՝ լռեցնելու համար նրա իրոք որ բոլորից ուժեղ լա՛ցը, թե՛ բողոքի ցույցը:

— Սիրելի պիոներներ,— ասաց Ռոկլանան՝ մի պահ ձեռքերը կոխելով իր կաշվե պիջակի գրպաններն ու հանելով,— դուք հանդիսանում եք կոմերիտականների փոխարինողները: Իսկ հանձինս այդ երեխաների, որոնց ներկա մոմենտին դուք գրկել եք, փոխարինողներին

փոխարինողներն են գալիս: Լենինյան կոմունիստական երիտասարդական միությունը վստահ է, որ դուք ուրախությամբ կընդունեք նրանց ձեր շարքերը՝ երբ ժամանակը գա…

— Ժամանակը որ գա՝ սրանք արդեն պիոներ չեն լինի, այլ արդեն կոմսոմոլ,— հիշեցրեց դահլիճից նույն կատակասերը: Նրա կինը, համարյա արտասվելով, նայեց ամուսնուն՝ չգիտես խնդրելո՞վ, թե՞ հրամայելով, որ նա լռի:

— Դաստիարակեցեք ապագա հոկտեմբերիկներին, ապագա պիոներներին,— շարունակեց Ռոկլանան:— Աճեցրեք կադրեր կոմերիտմիության համար…

Ռոկլանայի խոսքի ընթացքում նվագախմբի պետը, մեջքով դեպի նա կանգնած, շուռ էր տվել գլուխը և նայում էր նրան: Հենց որ կոմերիտուհու խոսքերի արանքում գտնում էր գոնե մի փոքրիկ պաուզա, նա հապճեպ նշան էր անում իր առջևում տեղավորված նվագախմբին, և թնդում էր տուշը: Ռոկլանայի խոսքը, որ ոչ շատ կարճ էր և ոչ էլ շատ երկար, մի քիչ ձգձգվեց այդ տուշերից: Վերջապես նա ավարտեց, բայց չնստեց իր տեղը, այլ կաշվե պիջակի հորիզոնական գրպաններից մեկից հանեց մի ծալած թուղթ և բաց արեց:

— Թող պիոներները նստեն,— լսվեց դահլիճից մի կնոջ ձայն:

— Ճիշտ է, թող նստեն,— միացան ուրիշները:

— Խելոք առաջարկ է,— համաձայնվեց նախագահը:

Դահլիճից աթոռներ տվեցին բեմ և պիոներները, խոր շունչ քաշելով, նստեցին:

Նայելով թղթին, Ռոկլանան կարդաց.

— Վարդուհի և Մարկոս Ավետիսյանների երեխային, ծնողների համաձայնությամբ, տրվում է Կիմ անունը... Կիմ:

Առաջին աթոռի վրա նստած պիոները վեր կացավ կանգնեց՝ իր սանիկին գրկած: Տուշ, ծափեր, բացականչություններ:

— Արաքսյա և Մարկոս…

— Խի՛, քանի՛ կնիկ ունի էդ Մարկոսը,— լսվեց նորից նույն զվարթ մարդու ձայնը:

Դահլիճում լսվեցին փռթկոցներ: Նախագահը միջամտեց:

— Ընկեր, եթե մեյ անքամ էլ խանգարես՝ թուրս պիտի հրավիրեմ:

— Էրեխիս տվեք ինձ՝ ուր ուզում եք հրավիրեք:

Նախագահը, բարի մարդ, հասկացավ, որ ուրախության առատությունից է դահլիճում նստածը կատակախոսում, ծիծաղեց, հանդիմանաբար օրորեց գլուխը և բարեկամական հայացքով հասկացրեց նրան՝ լռիր, անհարմար է:

— Էդ ուրիշ բան,— համաձայնվեց կատակասերը, և դիրքը փոխելով, պատրաստվեց մինչև վերջ լռելու:

— Արաքսյա և Մարկոս Հալաճյանների աղջկան տրվում է Կիմա անունը…

Նորից տուշ, ծափեր:

— Մանուշ և Կնյազ Լալայանների երեխային տրվում է Լենդրոշ անունը:

Հերթական ծափահարություններից և տուշից հետո Ռոկլանան ուզում էր շարունակել, բայց այդ րոպեին բեմ բարձրացավ Կնյազը, մոտեցավ նախագահին, ինչ-որ բան ասաց նրա ականջի մոտ: Նախագահը հաստատակամորեն գլխով արեց մի քանի անգամ և ձայն տվեց նրան:

— Ընկերներ…— մի քիչ կակազելով, ասաց Կնյազը:— ինչպես լսեցիք՝ իմ անունը Կնյազ է: Իմ խեղճ ծնողներն են էդ անունը դրել՝ հույս ունենալով, որ երբ մեծանամ, ես էլ դառնամ իսկական կնյազ… Գուցե թե դահլիճում նստած լինի մի որևէ Նապոլեոն կամ Մանթաշով: Նրանք էլ ինձ նման ման են գալիս խորհրդային հողի վրա, մենք միասին երկիրն ենք վերակառուցում, իսկ մեր վրա դեռ կրում ենք հնի էդ մնացորդը: Պարզ է, որ Լենդրոշի հայրը չի կարող լինել Կնյազ: Դրա համար էլ ես փոխում եմ իմ անունը և դնում եմ Ազատ…

Նվագախումբը նվագեց եռակի տուշ, մարդիկ ծափահարեցին սովորականից ավելի, բայց նույնիսկ այդ աղմկալի հնչյունների միջից հստակ լսվեց կատակաբանի ձայնը.

— Պիոներներ, բա խի՞ էդ մի էրեխին չեք գրկել:

Դահլիճում նստած պարզասիրտ մարդիկ բուռն ծիծաղեցին այդ անպաճույճ կատակի վրա, որից հետո Ռոկլանան անցավ առաջ: Ամեն ինչ այլևս անցավ հարթ մինչև վերջ՝ միայն մի բացառությամբ: Մի անգամ Ռոկլանան, անվանելով հերթական ծնողների անուն-ազգանունները, հայտարարեց երեխայի անունը՝ Մայա:

Դահլիճից լսվեց մի կնոջ վիրավորված ճղավոց.

— Ո՞նց եք իմ թառլան տղին աղջկա անուն կպցնում:

— Սխալ ես բերել էրեխիդ, աղջիկ պիտի բերեիր,— նկատողություն արեց կատակասերը:

Ծիծաղի բուռն պոռթկոցի միջից լսվեց մի ուրիշ կնոջ ձայն.

— Էդ մեր էրեխեն չի, մերն աղջիկ է:

Ռոկլանան զարմացած նայեց իր ձեռքի ցուցակին: Ոչ, ոչ, նա բաց չի թողել ոչ մի անուն, չի խառնել ոչինչ:

Բայց թյուրիմացությունը ոչ թե թղթի վրա էր, այլ աթոռների: Պիոներներից երկուսը սխալ էին նստել: Փոխեցին իրենց տեղերը:

— Դուք իզուր եք պիոներներին չարչարում, տեղերը փոխում,— բողոքեց կատակասերը:— Էն ա՝ էրեխանցը կփոխեիք:

Դահլիճն այնքան էր վարժվել նրա սրախոսություններին, որ առանց խորանալու նրա ասածի իմաստի մեջ, նորից թնդաց ծիծաղից: Նախագահը նրան նոր նկատողություն անելու համար վեր կացավ վճռական շարժումով, բայց նրան կանխեց կատակասերն ինքը.

— Ընկեր նախագահ, էս խի՞ են ծիծաղում, ես չհասկացա: Ես ոչ թե ասում եմ, որ ծնողներն իրենց էրեխեքին փոխեն, այլ նստած պիոներները գրկից գիրկ փոխեն:

Բոլորը նորից ծիծաղեցին, որ ճիշտ չէին հասկացել, բայց նախագահը նայեց կասկածանքով՝ արդյոք իր խոսքի իմաստը չփոխե՞ց այդ անպիտանը:

— Ի՛նչ լավ է ձեզ մոտ…— անկեղծ հիացմունքով շշնջաց Ցողիկը:

— Ո՞րտեղ՝ մեզ մոտ,— չհասկացավ Մուրադը:

— Ամեն տեղ…

— Քեզ է՞լ է դուր գալիս մեզ մոտ,— հարցրեց Մուրադը կոնդեցի աղջկան:

Աստղիկը կտրվեց բեմից, խոր շունչ առավ:

— Անպայման, անպայման ես էլ իմ էրեխին...

Եվ շիկնելով, կտրուկ լռեց: Նա բոլորովին չէր ուզում բարձրաձայն ասել այդ: Դա ստացվեց ինքնիրեն:

— Գառնիկն ու Լիլիան նույնպես, իրենց երեխին...— ասաց Մուրադը:

Բայց սիրահարվածները, միմյանցով կլանված, չլսեցին նրան:

— Ահա և Սանթուրյանը,— ասաց Վարդանը:— Հրավիրիր նրան մեզ մոտ, Մուրադ:

Կարմիր կնունքն ավարտվելու վրա էր: Այժմ պիոներների կոլվարը, պատասխանելով կոմերիտական բջիջի քաղտուղարին ու Ռոկլանային, ասաց, որ պիոներները պատվով կկատարեն իրենց վրա դրված պարտականությունը, կդաստիարակեն իրենց շարքերում փոքրիկ Կիմին, Կիմային, Լենդրոշին, Մայային, մյուս Կիմին, Օկտային, Ռևոյին, Լյուցիային, Ռոկլանային, Նինելին, Վիլենին, մյուսներին:

— Բա Ազատի՞ն,— հարցրեց կատակասերը:

Դահլիճը մի անգամ ևս ծիծաղեց և կարմիր կնունքը հայտարարվեց փակված:

Նորից երևաց Կնյազը: Հավաստիանալով, որ Սանթուրյանն արդեն եկել է, նա հապճեպ, շուտասելուկի ձևով, դիմեց կոմերիտականներին.

— Դուք ինձ մի րոպե սպասեցեք, ես էրեխիս ու կնկաս վերցնեմ՝ գամ: Բացի դրանից, գուցե նախագահության անդամներից մեկնումեկին էլ ճանկ գցեմ, բերեմ: Տեսնո՞ւմ եք՝ իրար մեջ բաժան-բաժան են անում...

— Ազատ,— ասաց Ցողիկը,— աշխատեցեք անպայման, անպայման բերել այն աղջկան… Ռոկլանային:

Լենդրոշի հայրը գերագույն շնորհակալությամբ նայեց Ցողիկին, որն առաջին մարդն էր, որ նրան անվանեց Ազատ:

— Աչքիս վրա,— բացականչեց նա:— Խոսք եմ տալիս, որ խաթրով լինի, զոռով լինի, ես էդ Ռոկլանայիդ փախցնեմ, բերեմ քեզ…

Եվ վազեց:

— Ինչի՞դ է պետք,— տհաճությամբ և նույնիսկ վրդովմունքով հարցրեց Վարդանն ընկերուհուն:— Ինչո՞ւ ես ուզում փչացնել իմ տրամադրությունը:

— Քո՞ տրամադրությունը...— զարմացավ Ցողիկը:— Ի՞նչ կապ ունի…

Եվ կիսատ թողեց իր խոսքը: Նա հասկացավ:

— Կաշխատեմ, որ ոչ ոք չփչացնի քո տրամադրությունը, Վարդանչիկ, սիրելիս,— ժպտաց նա՝ շոյելով ընկերոջ յունգ-շտուրմի թևքը:

44

Դեպի Ազատի տունը քայլող խմբի մեջ կենտրոնական դեմքերն ամենափոքրը և ամենատարիքոտն էին՝ Լենդրոշն ու Սանթուրյանը: Դեռ ակումբից դուրս չեկած, բոլորը շրջապատեցին Մանուշին և խնդրեցին ցույց տալ երեխային: Մայրն զգույշ ետ տարավ նրա երեսը

ծածկած շորը, որպեսզի չարթնացնի նրան: Բայց երբ շորը ետ գնաց ՝ հավաքվածները տեսան նոր քաղաքացու խոշոր, լայն բացվածքի աչքերը՝ միանգամայն զգաստ և արթուն: Անսպասելիությունից բոլորը ծիծաղեցին: Լիլիան խլեց մորից Լենդրոշին, գրկեց և նրանք դուրս ելան փողոց: Այնուհետև ճանապարհին բոլորը փոխնիփոխ գրկում էին նորածնին, ընդ որում, ամեն անգամ հարկ էր լինում խլել նրան նախորդի գրկից:

Ազատը դեռ ակումբում ամուր սեղմեց Սանթուրյանի ձեռքը և շնորհակալություն հայտնեց թե նախորդ երեկոյի համար և թե այն բանի, որ դասատուն չէր մերժել երիտասարդի խնդիրը և եկել էր կնունքին: Ապա Մուրադը, իրեն հատուկ պարզամտությամբ ու շիփշիտակությամբ, ասաց.

— Ընկեր Սանթուրյան, լավ է, որ բանֆակում մարդ ճանաչելու առարկա չեն անցնում, թե չէ ես էդ առարկայից միշտ պիտի կտրվեի: Էսքան ժամանակ դուք իմ դասատուն եք և ես ձեզ չեմ ճանաչել: Դուք ոչ միայն ֆիզիկայի դասատու եք, այլև կոմունիստ…

— Մեծ Ամերիկա ես գտել,— կատակեց Սանթուրյանը:

— Ես դա կապացուցեմ,— բորբոքվեց Մուրադը՝ կարծես Սանթուրյանն ինքը կասկածի տակ էր առել իր կոմունիստ լինելը և Մուրադն ուզում էր պաշտպանել նրան նրանից:

Բոլորը ծիծաղեցին:

— Ինչի՞ եք ծիծաղում,— բարկացավ Մուրադը:— Ես կապացուցեմ, որ կարելի է լինել ֆիզիկայի լավ դասատու, բայց չլինել կոմունիստ:

Հավաքվածները նորից ծիծաղեցին՝ այս անգամ նրա համար, որ Մուրադն ուզում էր ապացուցել այդպիսի մի տարրական ճշմարտություն: Բայց այդ պահին, զարմացնելով բոլորին, Սանթուրյանն ասաց.

— Չի կարելի:

Մուրադը զարմացած նայեց նրան:

— Ինչպե՞ս թե չի կարելի,— բողոքեց նա:— Բա անկուսակցականները, հին դասատուները…

— Չի կարելի,— կրկնեց դասատուն, չգիտես՝ լուրջ, թե կատակով, և այս անգամ բոլորը հետաքրքրված լսեցին նրան:— Ի՞նչ է նշանակում կոմունիստ: Ո՞վ է կոմունիստը: Դա էն մարդն է, որ պայքարում է ժողովրդի լավ կյանքի, լավ ապագայի համար: Կոմունիստ՝ դա մեծ բովանդակություն ունեցող բառ է: Դա իր մեջ միացնում է հազար տեսակ լավ հատկություններ: Ու եթե որևէ մարդ ունի դրանցից գոնե մեկը, ուրեմն նա մի հազարերորդ մասով կոմունիստ է:Դու ասում ես՝ «անկուսակցականներ, հին դասատուներ»: Իսկ մտածե՞լ ես, թե ինչ է նշանակում դասատու, թեկուզև հարյուր տարի առաջ, երկու հարյուր տարի առաջ… Դա նշանակում է մի մարդ, որը ձգտում է իր գիտելիքները հաղորդել ուրիշներին, որպեսզի էդ ուրիշները, գիտելիքներով զինված, ավելի լավացնեն ժողովրդի կյանքը: Իսկ չէ՞ որ դա հենց կոմունիստի գիծ է: Ուրեմն, դուրս է գալիս, որ ամեն մի դասատու, որ դարումն էլ ապրած լինի, գոնե մի հազարերորդ տոկոսով կոմունիստ է եղել…

— Է՛, էդ չեղավ,— ծիծաղեց Մուրադը՝ թերահավատ նայելով Սանթուրյանի երեսին:— Դուրս է գալիս, որ կոմունիստները եղել են նույնիսկ Մարքսից առաջ…

— Ոչ թե կոմունիստները,— ուղղեց դասատուն,— այլ նրանց նախակարապետները: Բա ինչո՞ւ են ասում, որ կոմունիստները մարդկության լավագույն իղձերի կատարողներն են: Իսկ մարդկությունը միշտ էլ ունեցել է իր լավագույն իղձերն ու երազները…

— Էդ իմաստով համաձայն եմ, իհարկե,— գլուխը քորեց Մուրադը: Մյուսները ծիծաղեցին:

Դա միակ խոսակցությունն էր, որն ունկնդրում էին բոլոր մյուսները: Այնուհետև, ճանապարհին, բոլորը բաժանվեցին փոքրիկ խմբերի, մանավանդ՝ զույգերի, և սկսվեցին մասնավոր խոսակցությունները, ընդ որում ոչ ոք ոչ ոքի հետ չէր խոսակցում ամբողջ ճանապարհին՝ մինչև վերջ: Շրուցակիցների կազմն անընդհատ փոխվում էր, փոփոխվում էին նաև զրույցների նյութերը: Միայն Գառնիկն ու Լիլիան էին, որոնք սկզբում փորձ արեցին մնալ որպես «մի հոգի և մի մարմին», բայց շուտով Լիլիային տարավ Ցողիկը, իսկ Գառնիկին՝ Մուրադը:

— Վարդանը քեզ պատմե՞ց Վահրիճի մասին,— հարցրեց Մուրադը Գառնիկին:

— Հա, իսկապես,— բացականչեց Գառնիկը՝ այդ օրվա երկրորդ կեսի ընթացքում առաջին անգամ կենդանի հետաքրքրություն ցույց տալով Լիլիայի հետ առնչություն չունեցող նյութի:— Ի՞նչ է պատահել: Վարդանը հարցնում է՝«Մուրադը քեզ պատմե՞ց», իսկ դու հարցնում ես՝ «Վարդանը քեզ պատմե՞ց»…

— Դե լսիր: Որ ասեմ՝ կշշմես…

— Ինչպե՞ս, Ցողիկ, դուք ինչպե՞ս կարող էիք դեռ երեկ երեկոյան իմանալ, որ ես սիրում եմ Գառնիկին:

— Լիլիա, սիրելիս, դուք մոռանում եք, թե երեկ երեկոյան ինչ ասացիք ինձ.— «Մաման չափազանցնում է, նրանք բոլորն էլ լավ տղաներ են, մանավանդ՝ Գառնիկը»: Եվ ինչպիսի տոնով ասացիք՝ «մանավանդ Գառնիկը...»:

— Օյ, ճիշտ է, ճիշտ է, ես հետո զղջացի, որ ասացի այդ բանը…

— Ազնիվ խոսք եմ տալի, Ազատ, որ թե ես տղա ըլնեի՝ քու Մանուշին պիտի փախցնեի քեզնից: Ախ, ջանիկս, դու ինչքան լավ ես…

Եվ Աստղիկը նետվելով դեպի երիտասարդ կինը, փաթաթվեց նրան և համբուրեց այտը:

— Ռոկլանա, դու ինչո՞ւ համար ես էդպես մեն-մենակ քայլում:

— Ծխում եմ, ընկեր Վարդան:

— Իսկ չի՞ կարելի, որ ինձ հետ խոսես առանց «ընկերոջ»:

— Երևում է՝ չի կարելի: Եթե դու ընկեր լինեիր՝ ես քեզ ընկեր չէի ասի: Բայց դու ընկեր չես, և ես ստիպված եմ ընկեր ասել քեզ...

Վարդանը մտքում ակամայից ծիծաղեց այդ բառախաղի վրա, ապա ասաց մտերմաբար.

— Մենք դեռ կխոսենք քեզ հետ, Ռոկլանա, և դու կտեսնես, որ սխալվում ես: Ես առաջվա նման դարձյալ ընկեր եմ քեզ: Միայն թե… միայն ընկեր:

«Հիմար, և դեռ ոճաբան ես,— բարկացավ Վարդանն իր մտքում իր վրա: «Միայն թե միայն...»: Բա դա արտահայտության ձև՞ է: Բայց ինչո՞ւ, ես ճիշտ արտահայտեցի միտքս...»:

— Էհ, Մուրադ, Մուրադ... Իսկապես որ, հարկավոր է քեզ «թույլ» նշանակել, բայց չգիտեմ, թե որ առարկայից: Երևի էլի հենց ֆիզիկայից: Էլ ինչո՞ւ համար եմ ես քեզ ֆիզիկա դասավանդում, ինչի՞ համար ես դու անցել Արքիմեդի լծակը, ձգողականության օրենքը, շփումը, մեխանիկան, եթե միշտ հպարտանում ես նրանով, որ քու էդ «պրոլետարական մեջքով ես քար կրում սոցիալիզմի շենքի համար»: Իհարկե, հպարտացիր, որ քար ես կրում, բայց ցավիր, որ մեջքով ես կրում: Որքան կարելի է շուտ պիտի ազատել քու մեջքն էդ բեռից, դնել բեռը մեխանիզմների ուսին: Դու երևի չգիտես էլ, թե ինչ բան է վերամբարձ կռունկը: Իսկ եթե չգիտես՝ ես եմ մեղավոր…

— Ուրեմն ի՞նչ, պրոլետարիատն ապագայում վերանալո՞ւ է,— վախեցած հարցրեց Մուրադը՝ նույնիսկ մոռանալով պատասխանել դասատուի հարցին՝ վերամբարձ կռունկի մասին:— Բա ի՞նչ պիտի անենք էն ժամանակ բանվորներս, նորից գնանք գյո՞ւղ…

— Գյուղումն էլ կլինեն մեքենաներ, սիրելիս: Օրինակ, տրակտոր: Դու գյուղ չես վերադառնա, այլ կմնաս բանվոր և կղեկավարես մեխանիզմները: Ի՞նչ կյանք է սպասում քեզ, Մուրադ, դու դեռ չգիտես…

— Ուրեմն, Գառնիկ, չմոռանաս, սրանից հետո առավոտ իմ արթնանալուց հետո իսկույն ոտքի կցատկես, կմոտենաս իմ թախտին, գլուխ կխոնարհես և կասես՝ «բարի լույս, սիրելի Վարդան»: Իսկ ամեն երեկո…

— Իսկ ամեն երեկո դու ինքդ շնորհակալություն կհայտնես ինձ, որ իմ պատճառով մարդամեջ մտար, ծանոթացար Վայվառա Սարիբեկովնայի և հայրիկի հետ:

— Մայրիկի հետ,— ուղղեց Վարդանը:— Չէ որ դու նրան մայրիկ անվանեցիր, իսկ մայրիկին՝ հայրիկ: Քիչ էր մնում տրաքվեի ծիծաղից: Հազիվ էի ինձ պահում:

— Ես էդպիսի բան չեմ ասել, սուտ է: Սարքում ես:

— Ազնիվ կոմերիտականի խոսք:

Գառնիկը սառեց-մնաց:

— Ի միջի այլոց, «հայրիկի» անունը ոչ թե Վայվառա է, շարունակեց լենինականցին,— այլ Վառվառա:

— Էդ մեկը ներողություն,— կտրուկ հակաճառեց ծուռքիթը:— Նա Վայվառա է, այսինքն «վա՛յ, վառվեցին քու ձեռքին: Մի՞թե նա քիչ է վառել ինձ իր մեշչանական խստությամբ:

— Դեռ ո՛ւր ես…— ծոր տվեց Վարդանը:

— Բայց Վահրիճը, Վահրիճը,— հանկարծ նյութը փոխեց Գառնիկը:— Եվ մենք էդքան ժամանակ չճանաչեցինք էդ սրիկային: Ճիշտ է, բոլորս էլ ատում էինք նրան, բայց ո՞վ իմանար, թե դա դասակարգային ատելություն է: Ախր մենք…

— Մի արդարանա,— ընդհատեց նրան Վարդանը,— երեքս էլ մեղավոր ենք և առաջին հերթին՝ ես ինքս…

— Գիտե՞ս, Վարդան, էն, որ ես հենց սկզբից չէի ասում քեզ ու Մուրադին իմ սիրահարվածության մասին ու միշտ ժխտում էի, դա ոչ թե իմ անընկերական վերաբերմունքից էր ու գաղտնապահությունից, այլ հենց նրանից, որ…

— Որ վախենում էիր Վահրիճից,— թելադրեց լենինականցին:

— Չէ՛, չէ՛ ավելի վատ: Էդ սրիկան համարյա համոզել էր ինձ, որ սերը հակակոմերիտական արարք է: Ես դատապարտում էի ինձ, որ սիրահարված եմ: Դատապարտում էի ու… շարունակում սիրել…

— Ազատ, ես քեզ պիտի ասեմ՝ ինչպես երիտասարդը երիտասարդին: Դու երջանիկ ես, որ Մանուշի պես աղջիկ ես գտել: Ճիշտ է, մենք բոլորս էլ առաջին անգամն ենք տեսնում, բայց սիրահարվել ենք վրան: Նայիր, նայիր,— զարմացած շշնջաց Մուրադը՝ գլխով ցույց տալով:— Ռոկլանան խոսում է նրա հետ… Աչքերիս չեմ հավատում: Ախր նա ատում է բոլոր աղջիկներին, մանավանդ՝ կանանց, և հանկարծ նա էլ…

Ամուսինը հպարտությամբ, սիրահարված աչքերով նայեց իր կնոջը:

Եվ իրոք, Մանուշն այն երջանիկ ծնունդներից է, որոնք մարդկանց հմայում են առաջին իսկ հայացքից: Փոքրամարմին, նիհար, նույնիսկ զգալիորեն տանջահար տեսքով, ոչ-շատ գեղեցիկ, նա առաջացնում էր այնպիսի խանդաղատանք, նրան գգվելու, գուրգուրելու, պաշտպանելու, հովանավորելու, իր անձը նրան զոհելու այնպիսի ցանկություն, որ դեռ աչքդ չթարթած, տեսնում էիր, որ սիրահարվել ես նրան: Իսկ նրա աշխուժությունն ու զվարթությունը, այնքան անհարիր նրա նիհար ու տանջահար տեսքին, նրան տալիս էին անմեղ երեխայի անմիջականություն և միամտություն: Հիրավի, նրա վրա չսիրահարվելու համար հարկավոր էր սիրահարված լինել մի ուրիշ աղջկա:

— Իսկ դու սիրած չունե՞ս, Մուրադ,— հետաքրքրվեց Ազատը:

— Ոչ,— պատասխանեց բանվորն անմիջապես:

— Մտքիդ մեջ է՞լ հեչ մեկին չես սիրում:

— Չգիտեմ, Ազատ…— Մուրադը, կարծես վախեցած, կրկնեց,— Չգիտեմ, չգիտեմ...

— Ընկեր Ռոկլանա…

— Լսում եմ ձեզ, ընկեր Ցողիկ:

— Առանձնապես ոչինչ: Ինձ համար պարզապես հաճելի է ձեզ հետ քայլելը: Դուք դեմ չե՞ք:

— Խնդրեմ: Փողոցը պատկանում է ոչ թե ինձ, այլ մասսային: Հա, ի միջի այլոց, ես նորություն իմացա,— քմծիծաղեց նա,— Աստղիկն ասաց, որ դուք ընկեր Վարդանի մորաքրոջ աղջիկն եք:

— Դա ճիշտ չէ, իհարկե,— ծիծաղեց Ցողիկը:— Ես հենց նոր ասացի Աստղիկին, որ Վարդանը փչել է: Թեև ճիշտն ասած, Ռոկլանա, դա ըստ էության ճիշտ է, նա ինձ համար եղբոր նման է և ես նրա համար՝ քրոջ:

Կաշվե պիջակավոր կոմերիտուհին կտրուկ նայեց աղջկա աչքերին, բայց այնքան անկեղծություն և ազնվություն կար այնտեղ, որ չհավատալ նրան անկարելի էր: Ռոկլանան խոր շունչ առավ, նրա կրծքի վրայից ընկավ Ցողիկին ատելու երկու պատճառներից մեկի ծանր քարը: Մյուս ծանր քարը՝ Ցողիկի աղջիկ լինելու հանգամանքը, մնում էր:

— Էս կողմով անցեք, Ցողիկ, էդտեղ մայթը ջարդված է,— նախազգուշացրեց կաշվե պիջակավորն իր ուղեկցուհուն:

— Չհոգնեցի՞ք, ընկեր Սանթուրյան: Բայց հրեն, հասնում ենք մեր տանը:

— Ես էդքան շուտ հոգնողներից չեմ, երիտասարդ, դու իմ տարիքի բոստանը քար մի գցի:

— Ընկեր Սանթուրյան…

— Լավ, լավ, մի արդարանա: Առանց էն էլ բարկացած եմ քեզ վրա: Բա մարդ էլ էդքան զո՞ւրկ լինի պայքարի ոգուց, թույլ տա, որ իրեն վտարեն կոմերիտմիությունից ու դեռ դրանից հետո էլ մինչև հիմա հաշտված մնա իր վիճակի հետ: Ես որ քո տեղը լինեի, իմ հարցը քննելու օրը Մանուշին կտանեի հետս բջիջի ժողովին, ցույց կտայի կասեի.— «Ապա, տեսնեմ ձեզանից ո՞ր մեկն է էն քարն ու ապառաժը, որ չսիրահարվի էս հրեշտակի վրա»: Եվ էս անգամ բջիջը քեզ կվտարեր ոչ թե սիրահարված լինելուդ համար, այլ խանդից ու նախանձից դրդված:

Ազատը ծիծաղեց և նորից հպարտությամբ նայեց դեպի իր կինը:

— Գիտա՞ս ինչ, Վարդան,— խոսեց Աստղիկը,— թե որ Ցողիկն իսկապես քու մորաքրոջ աղջիկն ըլեր՝ էդ ուրիշ բան: Բայց որ համ մորաքրոջդ աղջիկը չի, համ էլ չես սիրում ընդրան՝ էդ մեկը հասկանալու բան չի: Այո, այո, պարզ երևում ա, որ չես սիրում: Այսինքն՝ սիրում ես որպես ընկեր,

բայց սիրահարված չես: Իմ աչքն ինձ չի խափում: Հմի ես ինքս ինձ հարց եմ տալիս՝ տենաս խի՞ չի սիրում: Չըլի՞ ուրիշ սիրած ունես:

— Ոչ,— գլուխն օրորեց Վարդանը:

— Որ ըտենց ա՝ սկի չես էլ ունենա: Հա, հա, դրուստ եմ ասում, չես էլ ունենա: Օրինակ, գանք ինձ: Կարող է՝ ես շատ սիրուն չեմ, բայց մարդը որ սառուց ըլի՝ ես նրան կհալեցնեմ: Մեր թաղի բոլոր տղեքն իմ քամակից են ման գալի: Իսկ դո՞ւ: Ես երեկ մի թեթև ձեռ ու ոտ ելա, թե էս ա՝ քանալու ես ինձ վրա, բայց հետով դու քեզ էն տեսակ պահեցիր, որ ինքս էլ չհմացա՝ ոնց էլավ, որ դու ինձ համար դարձար ախպոր պես: Հմի որ ուզենամ էլ, չեմ կարա, թե ուրիշ մտքով մտիկ տամ քեզ:

— Ես էլ քեզ,— արձագանքեց Վարդանը:

— Տեսնո՞ւմ ես: Հմի գանք էն կաշվե պինջակավորին: Մի սհաթ բեմի վրա նստած էր, հիմի էլ գալիս է մեզ հետ, ուրեմս դու լավ տեսար ընդրան...

— Մենք վաղուց ծանոթ ենք միմյանց,— հայտնեց Վարդանը:

— Հլա նույնիսկ վաղուց...— գլուխը ցավակցաբար օրորեց Աստղիկը:— Ու դու մինչև հիմի սեր չես քցե վրան... Վայթե դու էնքան շնորք էլ չունես, որ մտիդ մեջ հանես ընդրա պինջակն ու տղամարդու շորերը, ու տեսնես, թե ինչ ախչիկ կա ընդրանցում: Էդ հլա ձեռ ու ոտի մասին ու ընդհանրապես ջանդակի: Բա հոքի՞ն: Ես Աստղիկը չըլեմ, թե նա լավ կոմսոմոլկա չի:

— Այո,— համաձայնվեց լենինականցին,— լավ կոմերիտուհի է և լավ ընկեր:

— Տեսնո՞ւմ ես: Ու էլի չես սիրում... Դու ինձ դրուստն ասա, Վարդան, որպես ախպերը քրոջը՝ չըլի՞ դու մի պակասավոր կողմ ունես ու քու մի քանի տոկոսը պակասում ա որպես տղամարթու…

Վարդանը բարձր ու լիաթոք ծիծաղեց, ուղղակի հռհռաց:

— Ըտենց ա, որ կա,— եզրակացրեց աղջիկը:— Էն էլ՝ էնքան ուժեղ տոկոսով ա պակասում, որ դու ծիծաղում ես, չես հասկանում քու էֆեկտը:

— Դեֆեկտը,— հանկարծակի տխրելով, ուղղեց լենինականցին:

— Ունդունո՞ւմ ես, ուրեմս:

— Ընդունում եմ, Աստղիկ, սիրելի... քույրիկ: Ի՞նչ եմ ուզում ես, ո՞ւմ եմ փնտրում՝ ինքս էլ չգիտեմ: Բայց որ փնտրում եմ՝ դա փաստ է, և դու կսխալվես, եթե մտածես հակառակը: Այ, եթե... Բայց խնդրում եմ քեզ, Աստղիկ, որպես քրոջ, որ ոչ ոքի չասես այս մասին... Եթե Մանուշն Ազատի կինը չլիներ, ես միլիոն աղջկա միջից կգտնեի նրան, աշխարհի ծայրը կգնայի նրա հնամաշ կոշիկների ետևից, հազար գժություն ու հազար հերոսություն կանեի նրա համար, միայն թե նա…

Աստղիկն ապշած, առավել ևս վախեցած, նայեց կոմերիտականին:

— Իսկ դու ասում ես, թե ես ոչ ոքի չեմ կարող սիրել…— թախիծով հառաչեց Վարդանը:

45

Կնունքից վերադարձողների խումբն աշխույժ խոսակցությունների աղմուկով մտավ Ազատի ցույց տված դռնով մի փոքրիկ բակ, մոտեցավ միհարկանի տնակին: Միջանցքում դեմ-դիմաց կային երկու դռներ: Դրանցից մեկով նրանք մտան ներս, իսկ Ցողիկը կանգ առավ դռան մոտ՝ սենյակի տեսարանից զգացված:

Ցածրիկ առաստաղ ունեցող սենյակում ձգված էր հրավերքի սեղանը՝ բաղկացած մի քանի առանձին սեղաններից՝ տարբեր լայնության ու երկարության և նույնիսկ բարձրության, անշուշտ հարևաններից վերցված: Սեղանները ծածկված էին տարբեր գույնի մի քանի սփռոցներով՝ մերթ հնամաշ, մերթ համեմատաբար նոր, իհարկե, դարձյալ հարևաններից փոխ առնված: «Սերվիրովկան» բաղկացած էր տարբեր կալիբրի և տարբեր նախշեր ունեցող ափսեներից, որոնց մեջ համարյա չկային երկու հատ իրար նման: Նույնպիսիք էին նաև դանակ-պատառաքաղները և գինու բաժակներն ու գավաթները: Չկային ոչ սկուտեղներ, ոչ վազեր, ոչ այլ պարագաներ: Միրգը պարզապես դիզված էր մեծ ափսեների մեջ՝ ինչպես կանաչին ու արմատեղենը:

Ուրախության այդ սեղանը կազմել էր համերաշխ հարևանությունը՝ ոչ միայն այն իմաստով, որ բոլոր իրերը հավաքված էին նրանց մոտից, այլև որ նրանք անձնապես մասնակցություն էին ցույց տվել դրա կազմակերպմանը: Ցերեկը, երբ Ազատը, այն ժամանակ դեռ Կնյազ, վազվզում էր դեսուդեն՝ մթերք գնելու համար, նրա տարիքոտ մի հարևանը հանձն էր առել անձամբ ճարել նրա համար լավ գինի: Մյուս հարևանը գնացել էր լավ միս ճարելու: Հարևանուհիներից մի երկուսն օգնել էին Մանուշին՝ եփել-թափելու: Մի կին իր վրա էր վերցրել նրա երեխային խնամելու հոգսը, իսկ մի ուրիշը, նույնպես նորածնի մայր, եկել և օրվա ընթացքում մի քանի անգամ կուրծք էր տվել նրան: Ի միջի այլոց, նա ամեն օր էր այդպես անում, որովհետև նիհար Մանուշի կաթը չէր բավարարում շատակեր Լենդրոշին, իսկ այդ հարևանուհին նույնիսկ նեղվում էր կաթի առատությունից:

Նույնիսկ բավական հեռու ապրող մի կին, փայտե ոտքով, որին Մանուշը հանդիպում էր միայն աղբյուրի մոտ, ջուր վերցնելիս, եկել և դրամ էր առաջարկել փոխարինաբար՝ եթե երիտասարդ ամուսինները կարիք ունեին դրան:

Նույնիսկ այն սենյակը, որտեղ բացված էր սեղանը՝ հարևանի սենյակն էր: Ազատի ու Մանուշի սենյակը փոքր էր, ուստի և միջանցքի հարևաններն առաջարկել էին իրենցը:

Օրվա ընթացքում Մանուշն իզուր էր մի քանի անգամ խնդրել պատվիրել բոլոր այդ մարդկանց, որ անպայման, անպայման, ներկա գտնվեն կնունքի սեղանին: Մեկն ասել էր, որ զբաղված է, մյուսը, որ տկար է, իսկ ընդհանրապես բոլորը, որ «մենք տանու մարդ ենք, մենք ոչինչ, դուք հյուրերին յոլա տարեք»: Եվ կամ՝ «ես էս տարիքին ո՞նց գամ-նստեմ էն ջահել-ջուհուլի մեջ»:

Իհարկե, ոչ «զբաղվածությունը», ոչ «տկարությունը» և ոչ էլ «տարիքը» չէին խանգարել համարյա բոլոր նրանց՝ ներկա գտնվելու երկաթուղային ակումբում իրենց բոլորին սիրելի Մանուշի և նախկին Կնյազի երեխայի կնունքին: Այնտեղից դուրս գալիս նրանք, համեստ ու զիջող, չէին մոտեցել Լենդրոշին ու նրա ծնողներին, այլ քայլում էին ետևից, բավական ետ մնալով և թույլ տալով, որ նրանց հետ քայլի «ջահել-ջուհուլների» խումբը՝ իր խոսակցություններով ու զվարթությամբ տարված:

Իսկ եթե չէին եկել ուրիշ երիտասարդներ, ապա պատճառը ոչ թե այն էր, որ Ազատն ու Մանուշը չունեին ընկեր-ընկերուհիներ կամ դրանք մերժել էին գալ, այլ որ երիտասարդ ամուսիններն սկզբում, ինչպես հայտնի էր դարձել Վարդանին դեռ ցերեկը, որոշել էին ոչ ոքի չհրավիրել՝ վախենալով մերժումից, իսկ վերջին օրը նրանք այնքան էին զբաղված, որ չէին կարողացել տեղեկացնել ոչ մեկին: Ի միջի այլոց, Մանուշի երկու ընկերուհիները, դեռ որբանոցային տարիներից, մեկն արդեն ամուսնացած, իսկ մյուսը՝ դեռ ոչ, լսել էին, եկել, և այժմ խոհանոցում օգնում էին հարևանուհիներին:

— Նստեցեք, տեղավորվեցեք,— հրավիրեց Ազատը սենյակ մտածներին:— Ընկեր Սանթուրյան, դուք անցեք սեղանի գլուխը: Ով որ գլխարկ կամ պիջակ ունի հանելու՝ համեցեք մեր սենյակը…

Ցողիկը, դռան մոտ կանգնած, դեռ նայում էր, բայց այժմ նա կախարդվածի պես հայացքը հառել էր Մանուշի վրա: Փոքրիկ ու նիհարիկ մայրը, վերցնելով երեխային վերջին մարդու գրկից, սենյակի էլեկտրական լույսի տակ սիրո ժպիտով նայում էր նրա դեմքին, կարծես տեսնելու համար, թե ինչպիսին է նա կնքվելուց և անուն ստանալուց հետո:

Ցողիկը բռնեց իր կողքով անցնող Վարդանի թևը և շշնջաց ռուսերեն.

— Նայիր, նայիր... Ես շատ մադոննաներ եմ տեսել, բայց այսպիսին՝ ոչ: Հարկավոր է մի մայր, որը հենց նրան գուրգուրի այդպես փոքրիկ ու նիհար, բայց ահա նա ինքն է գուրգուրում: Դու նմանություն չե՞ս գտնում Ռաֆայելի մադոննայի ու նրա միջև: Ներքին նմանություն: Բայց դու ո՞ւր ես նայում, Վարդանչիկ: Մի՞թե նա քեզ չի հետաքրքրում, մի՞թե դու չես հիանում նրանով:

— Չի հետաքրքրում… Չեմ հիանում…— կոկորդային տարօրինակ ձայնով արտասանեց Վարդանը:

Ցողիկը զարմացած թողեց նրա թևը:

— Չի կարող պատահել,— շշնջաց նա վախով:— Ես չեմ հավատում, որ քո միջից այդքան ջնջված լինի գեղեցիկի զգացումը և չքացած լինեն զգացմունքները: Չէ՞ որ դու երեխա ժամանակ... Չեմ հավատում:

Վարդանը տանջանքով, ինչպես մեծ ծանրություն, բարձրացրեց կոպերը և նայեց Մանուշին: Ցողիկն այլևս չէր նայում երիտասարդ մորը, այլ շուռ եկած, անթարթ հայացքը հառել էր ընկերոջ երեսին: Ի՞նչ էր կատարվում այնտեղ... Ցողիկը տագնապով էր հետևում նրա աչքերի ճակատագրական (այդ բառը եկավ ինքնիրեն) արտահայտությանը, աննկատելիորեն թրթռացող շրթունքներին, որոնք կարծես պատրաստվում էին և չէին կարող արտասանել այն խոսքերը, որոնք, հուզմունքից ուռճացած, քարի պես դեմ էին առել նրա կոկորդում: Ցողիկը վախով սպասում էր, թե ուր որ է՝ այդ շրթունքներից դուրս կթռչի մեն-մի հնչյուն, մի կարճ բացականչություն, որն իր մեջ կպարունակի չարտասանված բոլոր խոսքերի անդնդային խորությունն ու անդնդային էլ անհուսությունը:

Բայց Վարդանը լուռ էր: Փայլուն սև ու հարթ մազերով, շագանակագույն նշաձև աչքերով, ուղիղ քթով, հստակ գծագրված շրթունքներով, նա այժմ գեղեցիկ էր ոչ թե իր սովորական, ըստ ամենայնի սովորական գեղեցկությամբ, այլ ինչ-որ ճակատագրական... Դարձյալ այդ բառը... Բայց որքա՜ն ճիշտ է այն: Երևի այդպես գեղեցիկ լինում է մահվան դատապարտված անմեղ մարդը՝ գլխատվելուց առաջ, երբ նրա կյանքի վերջին վայրկյանի չնչինորեն փոքր կետի մեջ խտանում է նրա ողջ հոգին, էությունը...

Ցողիկն արագ խլեց ընկերոջ ձեռքը և սեղմեց իր ձեռքերի մեջ՝ ինչպես հայտնում են իրենց խոր ցավակցությունն ու կարեկցանքը մտերիմ մարդուն:

Վարդանն սթափվեց, նրա առաջին միտքը եղավ բարկանալ, ժխտել, բայց նրա առջև կանգնած էր ոչ թե Գառնիկը կամ Մուրադը, այլ Ցողիկը՝ մինչև մարդու հոգու ամենախորքը մտնող և ամեն ինչ հասկացող հայացքով…

— Դա երբեմն իջնում է կայծակի պես...— ասաց Վարդանը՝ անօգուտ համարելով թաքցնելը:— Ոչ, միշտ է իջնում կայծակի պես՝ եթե դա իսկական է... Միայն թե,— թախիծով ժպտաց նա,— դրան չի ուղեկցում որոտը, որպեսզի նախազգուշանաս և պաշտպանվես…

— Որոտը միշտ ճայթում է կայծակից հետո,— ներողամիտ ժպտաց ընկերուհին:— Դու մոռացել ես, չէ՞ որ լույսը մի վայրկյանում անցնում է երեք հարյուր հազար կիլոմետր, իսկ ձայնը…

— Իսկ ձայնը...— կրկնեց Վարդանը:— Ոչ, Ցողիկ, ձայնը չի լսի ոչ ոք: Երբեք... Չլսեցիր նաև դու... Խոստացիր:

Լենդրոշին տալով Ազատին, Մանուշն շտապեց խոհանոց՝ տեսնելու, թե ինչ է կատարվում այնտեղ:

Վարդանին և Ցողիկին մոտեցավ Մուրադը՝ իր և Գառնիկի գլխարկները ձեռքին: Վերցնելով նաև Վարդանի գլխարկը, նա ուղղվեց դեպի միջանցք:

Ըստ երևույթին, Ցողիկի և Աստղիկի միջև սկսվել էին իրենց գաղտնիքները, որովհետև կոնդեցի աղջիկը հեռվից նշան արեց իր նոր կենվորուհուն, և նրանք դուրս ելան բակ: Այնտեղ Աստղիկը շշնջաց.

— Գնանք փողոց, նայենք:

Փողոցի դռան մոտ արդեն, նա խոսեց լրիվ ձայնով.

— Չըլի՞ էդ շշմածները տունը կորցրին:

— Հազիվ թե, Աստղիկ: Ես ուշադրություն էի դարձնում, նրանք ակումբից սկսած գալիս էին մեր ետևից և տեսան, թե ուր մտանք մենք:

— Բա ինչո՞ւ չեն գալի:

— Դեռ շուտ է, Աստղիկ: Խեղճերը դեռ պետք է հասնեն Կոնդ ու վերադառնան,— ժպտաց Ցողիկը:— Իսկ Կոնդը, որքան որ նկատեցի, այստեղից բավական հեռու է:

— Ախր ես ընդրանց հրամայեցի ֆայտոնով գնալ ու ֆայտոնով էլ գալ:

— «Հրամայեցի՜»...— ծիծաղեց Ցողիկը:— Դուք ի՞նչ իրավունք ունեք հրամայելու ուրիշներին:

— Խի՞, մեր թաղի տղեքն ուրի՞շ են: Որ պահանջեմ՝ ինձ համար ճանճի պես իրենց վեր կքցեն մեր քռիցը:

— Սիրահարվա՞ծ են ձեզ վրա:

— Սկի որ սիրահարված էլ չըլեն՝ սիրում են: Տեսա՞ր, մի խոսքս էրկու չարին,— հպարտացավ Աստղիկը՝ ծիծաղելով:— Էն մեկը, բոյովը, խեղճն ախր կինո պիտի գնար հընկերների հետ: Բայց հենց որ ասացի՝ «արի, գործ կա», նա կինոյի տոմսը տվեց իր պզտի ախպորն ու վազ տվեց էկավ:

Ցողիկն ու Աստղիկը, պատրաստվելով գալ կնունքի, որոշել էին նվեր տանել նորածնին: Աստղիկենց պարտեզում աճում էին հիանալի ծաղիկներ, և նրանք որոշեցին բերել մի մեծ ծաղկեփունջ, ավելի ճիշտ՝ ուրախ պսակ: Բայց ուրախ և տխուր պսակների վարպետը՝ Աստղիկի հայրը, հակառակի պես, տանը չէր: Աղջիկը պատվիրեց մորը, որ երբ հայրը գա տուն, նախքան իր գիշերային պահակության գնալը պատրաստի մի շատ լավ պսակ: Իսկ իրենց թաղի տղաներից երկուսին պատվիրեց գալ երկաթուղային ակումբ և այնտեղից հետևել նրան ու տեսնել, թե ինչ տուն է նա մտնում, որպեսզի պսակը բերեն այդտեղ:

Հազիվ էր անցել մի քանի րոպե, երբ լսվեց ձիու սմբակների ձայն և անմարդ փողոցը մտավ մի կառք: Կառքը եկավ և կանգնեց բակի դռան մոտ: Այնտեղից վար ցատկեցին երկու լավ տղաներ և զգուշությամբ իջեցրին ճյուղերից ու ծաղիկներից սարքած մի մեծ, փառահեղ քնար:

— Աստղո ջան,— շտապեց արդարանալ տղաներից մեկը,— չնեղանաս, էս կռնից մենք ֆայտոն չկարացինք ճարենք, բայց չուշացանք, վազ տվեցինք Ղարադաղլարի կողմերի քուչեքով, կարճ ճամփով:

— Ետ դառնալիս էլ էդ կողմերով էկանք: Քիչ մնաց ձիանոց մեկի ոտքը զայիֆ ըլներ:

— Վայ, ջանիկս,— բացականչեց Աստղիկը հոր հասցեին՝ առանց կարևորություն տալու երիտասարդների ասածներին, առանց շնորհակալություն հայտնելու կամ գոնե թեկուզ բարկանալու:— Տես, ինչ գրամաֆոն ա սարքե: Հավանո՞ւմ ես, Ցողիկ:

— Բառեր չեմ գտնում,— ասաց Վարդանի ընկերուհին անկեղծ հիացմունքով:— Ես չէի սպասում, թե նա այդպիսի ընդունակություն ունի:

— Ուղղակի գրամաֆոն ա,— նորից կրկնեց աղջիկը, և Ցողիկը հասկացավ, որ դա բարձր գնահատական է նշանակում:

Դառնալով դեպի տղաները, Կոնդի իշխանուհին ասաց խիստ ձայնով.

— Դե հմի գնացեք, ազատ եք:

— Աստղիկ...— հանդիմանանքով ասաց Ցողիկը:

Բայց տղաները, որ լուռ, խելոք նայում էին աղջկան, ոչ միայն չվիրավորվեցին, այլև միանգամայն բնական գտնելով նրա նաև այդ վերջին հրամանը, շտապեցին կատարել այն: Նրանք շուռ եկան, նստեցին կառք և վերադարձան՝ այդպես էլ ոչ մի ուշադրություն չդարձնելով Ցողիկի վրա:

— Վերցրու էդ կռնից, ես էլ էս կռնից կվերցնեմ,— ասաց Աստղիկը՝ իսկույն մոռանալով և՛ կառքը, և՛ տղաներին:— Մուղաթ կաց, դուռը նեղ է, ծաղիկ-մաղիկ չպոկվի:

— Առաջ դուք անցեք, Աստղիկ:

— Աղջի, հերիք չէ՞ ինձ «դուք» ասես: Ես հլա երկուհոգավոր չեմ:

Ցողիկը ծիծաղեց:

— Բայց ի՞նչ է նշանակում «էրկուհոգավոր»:

— Էն, որ ամեն աղջիկ մի օր ըլելու է: Կըլես՝ կհասկանաս:

— Հրաշալի քնար է,— նորից հիացավ Ցողիկը:— Ես ձեր... քու հայրիկին կվճարեմ նրա չարչարանքի համար:

— Լսիր, Ցողիկ...— Աստղիկը նույնիսկ կանգ առավ:— Դու ուզո՞ւմ ես մեր տանն ապրել:

— Իհարկե,— զարմացավ Ցողիկն անակնկալ հարցի վրա:

— Վնաս չունի՞, որ մի քիչ հեռու է քաղաքի կենտրոնական տեղերից:

— Դա ոչինչ:

— Քեզ հարմա՞ր է:

— Այո, այո: Եվ ամենագլխավորը՝ ես շատ հավանեցի ձեզ... Այս անգամ՝ ձեզ, և ոչ միայն քեզ:

— Դե որ ըտենց ա՝ ինչքան կարաս քիչ խոսա փողի մասին, թե չէ, հրեն, էն՝ Էրևանը, էն՝ դու:

Ցողիկը շփոթված ծիծաղեց:

— Արի հլա ներս չտանենք էս քնարը, դնենք ծառի տակ,— առաջարկեց կոնդեցի աղջիկը:— Կտանենք սեղան նստելուց հետո:

Երբ քնարը թաքցնելուց հետո նրանք մոտեցան տնակին, դրա դռան մոտ կանգնած ծխում էր Ռոկլանան:

— Դուք հաճախ եք ծխում,— նկատեց Ցողիկը:— Չե՞ք վախենում, որ կվնասեք ձեր առողջությանը:

Կաշվե պիջակավորն օրորեց գլուխը.

— Ես ախր ծուխը ներս չեմ քաշում:

— Բա էլ խի՞ ես քաշում,— զարմացավ Աստղիկը:

Ռոկլանան մի պահ անտարբեր նայեց նրան՝ ավելորդ գտնելով պատասխանել, բայց, ըստ երևույթին, նա այսօր կորցրել էր իր մշտական անբարյացակամությունն աղջիկների ու կանանց նկատմամբ: Նա պատասխանեց.

— Հարկավոր է: Սովորություն է դարձել: Մանավանդ, երբ քեզ պաշարում են զանազան մտքեր…

— Հետաքրքիր ա, հմի էս րոպեիս ի՞նչ ես մտածում, ընկեր Ռոկլանա:

— Մտածում եմ,— պատասխանեց նա՝ դիմելով, սակայն, Ցողիկին՝ որպես ավելի խելոք մարդու,— որ եթե ես հրաժարվեմ երեխա ունենալուց, դու հրաժարվես, նա հրաժարվի, բա էլ ինչպե՞ս է աճելու ապագա մարդկությունը: Ո՞վ է ծնելու նրան: Մի՞թե միայն անկուսակցական մասսան…

Եթե երեք կոմերիտականները լսեին իրենց տղա-աղջիկ ընկեր-ընկերուհու այդ խորհրդածությունները, անշուշտ պիտի ապշեին և չհավատային իրենց ականջներին: Բայց Ցողիկն ու Աստղիկը չէին ճանաչում նրան՝ ինչպես հարկն է, ուստի և բավարարվեցին համաձայնվել նրա հետ այն բանում, որ այո, իսկապես, նրանց բոլորին հարկավոր է երբևէ հետևել Մանուշի օրինակին:

46

Ազատի տարիքոտ հարևանը, իրոք որ, ճարել էր լավ գինի, եթե, իհարկե, կարելի է լավ համարել այն հատկությունը, երբ խմելուդ ժամանակ գինին խաբում է քեզ իր քաղցրությամբ ու անմեղությամբ, իսկ խմելուց հետո իսկույն հարբեցնում:

Տասնչորս սեղանակիցներից ոչ մեկը, նույնիսկ տղամարդիկ, խմել չէին սիրում և հենց սկզբից որոշել էին բավարարվել քչով: Բայց նույնիսկ այդ շատ քիչը շուտով ազդեց նրանց վրա, և սեղանը դարձավ խիստ աշխույժ: Սեղանի թամադա Սանթուրյանը, երեկոյի պաշտոնական «ներածական» մասը ղեկավարելուց հետո ամեն ինչ թողեց «ինքնահոսի», որպեսզի երիտասարդությունը զվարճանա անկաշկանդ: Բայց Մուրադը, արդեն գլուխը մի քիչ տաքացած, ինքնիշխան կերպով իր ձեռքը վերցրեց սեղանի ղեկավարությունը՝ ցույց տալով Վարդանի ու Գառնիկի համար այնքան անսպասելի սրամտություն:

— Ընկերներ,— ասաց նա՝ ժողովի նախագահի գործնական և նույնիսկ քիչ թթված դեմքով,— ընկեր Լենդրոշի կնունքին նվիրված հանդիսավոր ժողովը համարում եմ բացված: Այսօր մեր օրակարգում ունենք փլավ, խաշլամա, Զանգվի ձուկ, գինի և ուրիշ բազմաթիվ ընթացիկ հարցեր: Ներկա են ֆիզիկայի և կոմունիզմի գծով՝ ընկեր Սանթուրյանը, յունգ-շտուրմի գծով՝ Վարդանն ու Ռոկլանան, և իհարկե, ես:

— Բա ե՞ս,— վիրավորվեց Գառնիկը:

— Դու ներկա ես փեսայական գծով՝ քո հարսնացուի հետ միասին,— ձեռքը թափ տվեց Մուրադը:— Աղջիկների հոծ բանակի կողմից ողջունելու են եկել Մանուշի երկու ընկերուհիները, ինչպես նաև Աստղիկն ու Ցողիկը: Ներկա են հարևանուհիները՝ մայր և աղջիկ, իսկ հայրը փախել է ժողովից՝ որպես պասիվիստ…

— Չի փախել,— ձայն տվեց նրա կինը,— հարսանիքի է գնացել:

— Ինչո՞ւ գնալ հարսանիքի,— զարմացավ Մուրադը,— երբ մենք այստեղ տոնում ենք հարսանիքի ետևից եկող երկրորդ ֆազը…

— Փուլը…— ինքն իր հետ խոսելով, ուղղեց Վարդանն ըստ սովորության:

— Մենք այսօր,— շարունակեց բանվոր-շինարարը,— հրավիրել ենք նաև մի երկու կողմնակի անձանց՝ Ազատին և նրա ազատությունը սանձող Մանուշին: Թող նստեն, ոչինչ, մեզ չեն խանգարի: Իսկ այժմ ես առաջարկում եմ ներս հրավիրել ընկեր Լենդրոշին…

Նրա խոսելու ընթացքում բոլորը հաճախակի ծիծաղում էին և ծափահարում, իսկ նրա առաջարկից հետո տղաներն աղմուկով ոտքի ցատկեցին, վազեցին դուրս, ապա վերադարձան լուռ՝ բերելով երեխային՝ օրորոցում քնած:

Բոլորը շրջապատեցին օրորոցը, և Սանթուրյանն ասաց կամացուկ.

— Քնիր, Լենդրոշ, քնիր, մեծացիր… Երբ որ դու մեծանաս, դառնաս քեզ շրջապատող երիտասարդների տարիքին, ես գուցե արդեն գոյություն չունենամ: Բայց աչքիս առաջ տեսնում եմ, որ դու լինելու ես քու ծնողներին և էս բոլորին արժանի ժառանգ: Ինչո՞ւ համար: Որովհետև քեզ դաստիարակելու են, դեռ փոքրուց, պիոներական կազմակերպությունը, կոմերիտմիությունը: Վերցրու իմ փոքրիկ նվերը, որը նույնպես կարող է մի փոքրիկ դեր խաղալ քու դաստիարակության մեջ…

Այս ասելով, նա իր բաճկոնի գրպանից հանեց և օրորոցի մեջ դրեց մի փոքրիկ առարկա: Մուրադն իսկույն վերցրեց և նայեց: Մյուսները հետաքրքրված հավաքվեցին նրա շուրջը:

Դա ձեռքաչափ մի ալբոմ էր՝ շքեղ կազմով: Երիտասարդներն սկսեցին թերթել: Ահա Գավրոշը՝ Փարիզի բարիկադների վրա: Ահա սպարտացի տղան, որը թիկնոցի տակ դրած, տանում է մի աղվեսի ձագ: Տարիքոտ սպարտացին հարցնում է նրան, թե չի՞ տեսել նա արդյոք աղվեսի ձագին: Տղան տալիս է բացասական պատասխան: Իսկ աղվեսի ձագը, ցանկանալով ազատվել, հոշոտում, քրքրում է տղայի կողը: Բայց տղան ոչնչով չի արտահայտում այդ: Ուր որ է՝ նա վար կընկնի անշունչ, բայց նրա դեմքի վրա մինչև վերջ էլ չի զգացվի ցավի ոչ մի նշույլ... Ահա աշխարհի բոլոր դասագրքերով անցած հերոս տղան, որը կանգնած երկաթգծի ռելսերի միջև, կոտրված ռելսի մոտ, փրկում է մոտեցող մարդատար գնացքը... Ալբոմում հավաքված են էլի ուրիշ շատ երեխաներ, որոնցից յուրաքանչյուրն ունի, Սանթուրյանի ասածի նման, կոմունիստի հազար գծերից գոնե մեկը: Միայն նրանցից մեկն է, որ ոչ միայն չունի, այլև, ընդհակառակը, խայտառակում է իրեն ամոթաբեր արարքով: Բայց նրա վրա էլ ուղղված է նրա հարազատ հոր, չափից դուրս անողոք Մատեո Ֆալկոնեի հրացանը…

— Ո՞վ է հրատարակել այդ հիանալի ալբոմը, ե՞րբ, ո՞րտեղ…

— Ես դա պահել էի իմ որդու համար...— ասաց Սանթուրյանը խուլ ձայնով,— բայց… բայց դու փոխարինիր նրան, սիրելի Լենդրոշ…

Վարդանն ու Մուրադն ամոթահար նայեցին իրար: Ինչ վատ է, որ իրենք գլխի չեն ընկել նվեր բերելու... Բայց այդ րոպեին սենյակում տարածվեց թարմ ծաղիկների մի ուժեղ, հաճելի բույր, և օրորոցին մոտեցան Ցողիկն ու Աստղիկը՝ բերելով հիանալի քնարը:

— Թող քո մանկությունը,— ասաց Ցողիկը հուզված,— լինի այս ծաղիկների պես գեղեցիկ ու պայծառ: Ընդունիր սա մեր կողմից՝ Աստղիկի, Վարդանի, Մուրադի, Գառնիկի, Լիլիայի և իմ…

— Ներեցեք…— առաջ եկավ Գառնիկը՝ իր ծուռ քիթն այնպիսի հպարտությամբ ցցած, որ քիչ մնաց նրա ընկերները փռթկային: Բաց Գառնիկը հենց դրա համար էր բռնել նորափեսայի իր ծանրաբարո դիրքը:— Ներեցեք, ես ու իմ ապագա կողակիցը...

Լիլիան շփոթված քաշեց նրա փեշը:

— Կողակիցը,— դիտմամբ կրկնեց Գառնիկը,— տալիս ենք ահա այս նվերը: Ճիշտ է, տալիս ենք ոչ թե երեխային, այլ նրա մորը:

Լիլիան մոտեցավ Մանուշին, համբուրեց նրա նիհար այտը և կրծքի վրա ամրացրեց ոսկեջրած արծաթյա մի գեղեցիկ բրոշկա: Մանուշը ժպտաց և շնորհակալություն հայտնեց, իսկ հարևանի

կինը հասկացողաբար կկոցեց աչքերը: Անշուշտ, Լիլիայի մայրն էր տվել այդ նվերը՝ նորածնի մոր համար, որպեսզի իր աղջիկն էլ մոտ ապագայում ունենար տղա առջինեկ... Նա մոտեցավ և ինչ-որ բան փսփսաց Մանուշի ականջին: Քիչ հետո, երբ օրորոցը նորից տարան մյուս սենյակը և նստեցին սեղանի շուրջը, Մանուշն ափսեի միջից ընտրեց մի մեծ, կարմիր խնձոր և ոտքի կանգնելով, հանդիսավորաբար հրամցրեց Լիլիային: Լիլիան կաս-կարմիր կտրվեց և կախեց գլուխը:

— Շնորհակալություն, մեր Լիլիան խնձոր չի ուտում…— ասաց Գառնիկն ամուսնու տոնով, բայց Լիլիան սեղանի տակ պինդ քաշեց նրա փեշը, և նա կտրուկ լռեց՝ առանց հասկանալու, թե ինչու են ընդհատում իր կատակը:

Միայն որբանոցներում մեծացած և ժողովրդական շատ տրադիցիաներից կտրված Գառնիկը, Ազատը և Մանուշի երկու ընկերուհիները չգիտեին այդ արարողության նշանակությունը: Չգիտեր, իհարկե, նաև Մանուշը, բայց նրան հասկացրեց հարևանի կինն իր փսփսոցով: Կարմիր խնձոր ուղարկելը նշանակում էր՝ «ցանկանում ենք, որ դուք էլ ունենաք մի ղոչ տղա...»:

Երկրորդ խնձորը Մանուշը տվեց իր ամուսնացած ընկերուհուն, որն իսկույն, ամենայն հանգստությամբ կծեց այն և սկսեց ուտել: Բայց երբ նրան բացատրեցին, թե ինչ խնձոր է դա, պատառը մնաց նրա բերանում, նա քիչ մնաց դուրս նետեր այն: Նա աղջիկ էր ուզում ունենալ:

— Խնձորներն ընդունվում են միաձայն,— հայտարարեց Մուրադը:

Մանուշը շուտ-շուտ գնում էր մյուս սենյակը՝ տեսնելու, թե չի արթնացել արդյոք երեխան: Մի անգամ այնտեղից վերադառնալիս նա մոտեցավ Վարդանին, խոնարհվեց դեպի նա և ասաց ականջի մոտ.

— Ընկեր Վարդան, բան կեր, դու հենց մենակ խմում ես: Կհարբես ախր…

Վարդանը շուռ չեկավ և չնայեց երիտասարդ կնոջը, այլ միայն գլխով արեց՝ «լավ, լավ»:

Ռոկլանան, Վարդանի կողքին նստած, ասաց մեղմ.

— Գնացեք ձեր տեղը, Մանուշ, գործ չունեք սրա հետ: Սա աղջիկների ու կանանց հետ խոսել չի սիրում:

Հարևանի աղջիկը խոսակցությամբ էր տարված Մանուշի ամուրի ընկերուհու հետ, որին նա վաղուց էր ծանոթ: Իսկ ամուսնացած ընկերուհին ուշադիր լսում էր հարևան կնոջ բացատրություններն այս կամ այն ուտելիքը պատրաստելու մասին և մի թղթի կտորի վրա մատիտով նշում էր ռեցեպտները: Գառնիկն ու Լիլիան շարունակ տարված էին միմյանցով, բայց դա ներելի էր: Նրանց կյանքում սիրահարվածության ամբողջ «օրացույցային պլանը» խախտվել էր, նրանք նախ «նշանվել» էին, ապա միայն սկսում էին ծանոթանալ միմյանց հետ և մտերմանալ: «Էն մեշչանկայի» պատճառով»,— երբեմն-երբեմն բարկացած մտածում էր Գառնիկը:

Ազատն ու Մուրադը, Սանթուրյանի երկու կողմերում նստած, նրա հետ զբաղված էին ինչ-որ կարևոր խոսակցությամբ, ըստ երևույթին՝ Ազատի մասին: Անվանվում էին՝ «բջիջ», «կոմիտե», հոլովվում էին անուններ, և սակայն Վահրիճի անունը չէր հիշատակում և ոչ մեկը: Նա դուրս էր ընկել երիտասարդների կյանքից՝ իբրև ոչ միայն անպետք, այլև չնչին իր:

Ցողիկն ու Աստղիկը նստած էին իրար մոտ: Կոնդեցի աղջիկը սիրահարված նայում էր իր կենվորուհուն:

— Վայ, ջանիկս,— բացականչում էր նա,— դու ինչքան լավն ես հարբած ժամանակ: Ես քեզ ամեն օր գինի պտի խմացնեմ ու մտիկ տամ:

— Ուրեմն չհարբած ժամանակ վա՞տն եմ: Հա՞, վա՞տն եմ:

— Էն ժամանակ ուրիշ տեսակ ես լավը, հմի՝ ուրիշ տեսակ:

— Գիտե՞ս ինչ, Աստղիկ... Ես քեզ սիրում եմ: Ես բոլորիդ եմ սիրում: Ի՜նչ լավ մարդիկ եք դուք... Դու գիտե՞ս ինչ է նշանակում փղոսկրյա աշտարակ: Ես Ռոստովում ապրում էի փղոսկրյա աշտարակում... Ազնիվ խոսք: Տարօրինակ չէ՞՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից ութ տարի հետո՝ փղոսկրյա աշտարակ... Այն էլ՝ երիտասարդ աղջկա համար…

— Ի՞նչ ես դուրս տալի,— ծիծաղեց Աստղիկը:

Ցողիկն սթափվեց: Մի ուրիշ անգամ նա ցավ պիտի զգար, որ իր համակրած մարդը չի կարողանում հասկանալ իրեն: Բայց այժմ նա ուրախ էր, որ Աստղիկը նրա հոգու անսպասելի պոռթկումն ընդունեց որպես հարբածի կատակ: Բայց քիչ հետո, նորից կորցնելով իր զգոնությունը, նա խոսեց նույն կերպ: Նրա գլուխը պտտվում էր, նա և՛ հարբած էր, և՛ միաժամանակ նրա մտքերն ստացել էին ինչ-որ արտասովոր հստակություն: Այն, որ նա նորից դիմեց Աստղիկին՝ դա գինուց էր: Իսկ իրականորեն նա խոսում էր ինքն իր հետ.

— Դու տեսե՞լ ես ոսկեզօծված ժանգ: Այո, այո, ժանգ: Ոսկեզօծված: Ասում էին՝ «ոսկե երիտասարդություն»: Բայց դուրս եկավ, որ ոսկին միայն երեսանց էր, մի շատ բարակ շերտ, այսքան…

Ցողիկը ցույց տվեց իր ցուցամատի կեսը:

— Բա դա բարա՞կ է, Ցողիկ ջան,— բուռն ծիծաղեց կոնդեցի աղջիկը՝ նորից հիանալով իր նոր կենվորուհու հարբածությունից:

Ցողիկն ինքն էլ ժպտաց և նախ ցույց տվեց իր եղունգի ծայրը, ապա կոտեմի մի բարակ տերև:

— Այսքան: Ոչ, դեռ ավելի բարակ…

Նա նայեց շուրջը՝ գտնելու համար մի այնպիսի խիստ բարակ առարկա, որը կարելի լիներ համեմատել «ոսկե երիտասարդության» ոսկու հետ: Չգտավ և իսկույն էլ մոռացավ այդ մասին: Նրա աչքն ընկավ Մուրադին:

— Աստղիկ, դու Մուրադին հավանո՞ւմ ես:

— Չէ:

— Չէ՞: Ինչո՞ւ:

— Ես էդպիսի ջանավար տղաների չեմ կարա, թե հավանեմ: Տղան պտի մի քիչ նազուք ըլնի, աղջկա բարակ մեջքով: Այ, ոնց որ մեր կոնդեցի տղեքը:

— Իսկ ես հավանում եմ:

— Այսինքն՝ ես էլ եմ հավանում՝ բացի կերպարանքից:

— Իսկ ես հավանում եմ նաև կերպարանքը,— համառ պնդեց Ցողիկը:

— Վայ, ջանիկս,— գրկեց նրան Աստղիկը:— Խմածդ էլ գոնե մի բան ըլեր՝ էլի ոչինչ: Քու էդ խմածով էրեվանցու կատուն էլ չի հարփի: Բայց դու էնքան լավն ես դարձել, որ քիչ ա մնում, թե ես քեզ ուտեմ: Էգուց ես քեզ կասեմ ու դու մի լավ կծիծաղես քու վրա, որ քու էդքան նեժնի կերպարանքով, էդքան լավը, դու էն ջանավարին էիր հավանում:

Բայց Ցողիկը շարունակում էր նայել «ջանավարին»:

Մուրադը, կարծես զգալով աղջկա երկարատև հայացքը՝ իր վրա հառած, նայեց նրան: Ցողիկը բարձրացրեց գինու փոքրիկ բաժակը, նշանացի հասկացրեց, որ խմում է նրա կենացը, և խմեց դանդաղ, երկար կումով:

— Պարում եմ,— հանկարծ բղավեց Մուրադը՝ վեր ցատկելով տեղից: Նա ուղղեց իր յունգ-շտուրմի լայն գոտին, մի ուսով շեղակի ձգված գոտկակալը և խնդրեց.— Շուտ, մի որևէ պարերգ, թե չէ կտրաքվեմ ուրախությունից…

Սեղանակիցները երգեցին և Մուրադն սկսեց պարել: Բայց դա պար չէր, այլ հաղթանակած սիրո երգ՝ տղամարդու կտրուկ, բայց և այնքան ճկուն շարժումներով արտահայտված: Ո՞ վ կարող էր սովորեցնել բանվորա-գյուղացի Մուրադին այդպիսի պար՝ եթե ոչ սերը:

— А впрочем,— ասաց Ցողիկն ինքնիրեն,— դա նրա առավելությունն է, որ նա այնքան հղկված չէ, որքան որ ես ու Վարդանը: Մեր մեջ կա ինչ-որ մեղկություն: Դա ինձ, որպես աղջկա, դեռ ներելի է: Բայց Վարդանին…

Կարծես հակաճառելու համար նրա մտքերին, Աստղիկն ասաց նրա ականջի մոտ:

— Հլա մտիկ տուր: Պարում է ոնց որ արջ: Բա ափսոս չի՝ Վարդանը: Հմի չհանե՞մ ախպորս ընդրա հետ մրցության:

Ցողիկը մի պահ սթափվեց, բռնեց Աստղիկի թևը.

— Հանգիստ թող Վարդանին, նա այսօր... նա այսօր չի կարող պարել…

Երբ Մուրադը նստեց իր տեղը, վեր կացավ Գառնիկը: Նրա դեմքի վրա ուրախություն չկար, այլ տխրության մոտիկ ինչ-որ հանդիսավորություն:

— Ապա, նախկին որբեր, վեր կացեք,— ձայն տվեց նա:— Պարենք մեր որբական կլոր պարերից մեկը: Ի՞նչ անենք, որ որբական է: Էդ է եղել մեր մանկությունը…

Վեր կացան Ազատը, Մանուշը, նրա երկու ընկերուհիները: Նրանք թև-թևի տվեցին և Գառնիկը երգեց.

Ամպերն ելան կամար-կամար

Մասիս սարիցը…

Խումբը միացավ.

Նամակ եմ ստացել

Ազիզ յարիցը…

Հայկական կլոր պարի շարժումներով խումբը շրջանցեց սեղանը: Բայց դեռ չէր անցել դրա կեսը, երբ Ռոկլանան, որ լուռ նստած, կարծես պայքարում էր ինքն իր հետ, ընդոստ վեր ցատկեց տեղից, միացավ պարողներին և իր թևը փաթաթելով Մանուշի և Ազատի թևին, երգեց բոլոր երեք կոմերիտականների համար այնքան անսպասելի դուրեկան ձայնով.

Հանիկ նանարիկ Նանար,

Ջանիկ նանարիկ Նանար…

— Ռոկլանա,— ուրախացած ծափ տվեց Վարդանը:— Ռոկ…

Նա չավարտեց: Այժմ նրա մոտով անցնում էր ոչ թե Ռոկլանան, այլ Մանուշը... Վարդանը երեսը շուռ տվեց նրանից:

— Իսկապես որ նա չի սիրում կանանց ու աղջիկներին,— մի փոքր վշտացած, շշնջաց Ազատի կինը Ռոկլանայի ականջին:

— Բայց հետաքրքիրն էն է, որ ինձ ծափ տվեց...— չգիտես՝ տարակուսած, չգիտես՝ ուրախացած, պատասխանեց Ռոկլանան և նորից միացավ խմբերգին:

Երբ կլոր պարի ելածները նստեցին իրենց տեղը, Ցողիկը վեր կացավ և մոտեցավ կաշվե պիջակավոր աղջկան:

— Կարելի՞ է ձեզ մի րոպեով:

Ռոկլանան, որ նույնպես բավական ազդված էր գինուց, նայեց նրան և ակամայից ժպտաց:

— Դուք հարբած եք, Ցողիկ:

— Ոչինչ, ոչինչ…

Նա թևանցուկ արեց կաշվե պիջակավորին, տարավ մյուս սենյակը: Դուռը ծածկելուց հետո նախատինքով դիմեց նրան.

— Դուք ինչո՞ւ չեք սիրում ինձ, Ռոկլանա: Ինչո՞ւ չեք սիրում: Ես մեշչանկա՞ եմ, հա՞... Իսկ ես ահա, չգիտեմ ինչու, ձեզ սիրում եմ…

— Կամաց խոսեք, Ցողիկ,— մեղմ նախազգուշացրեց Ռոկլանան,— երեխան կարթնանա:

— Ինչո՞ւ չեք սիրում ինձ:

— Ես կանացի սեռն ընդհանրապես չեմ սիրում: Ես ինձ էլ չեմ սիրում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև... ես ձեզ հետո կբացատրեմ, Ցողիկ, հիմա չեմ կարող: Երկու փոքրիկ բաժակ գինի եմ խմել, բայց գլուխս պտտվում է…

Բայց գինին չէր նրա չպատասխանելու պատճառը: Առաջին անգամը լինելով, նա զգաց, որ ինքն էլ չգիտե, թե ինչու չի սիրում «կանացի սեռը»: Իր ատելության միակ և հիմնավոր պատճառը՝ կանանց թուլությունը, պատկանում էր անցյալին: Ռոկլանան վաղուց էր մոռացել այդ պատճառը, վաղուց էր մոռացել, թե ինչից էր սկսվել նրա կնատյացությունը: Օրը հիշում էր, բոլոր մանրամասնությունները հիշում էր, բայց պատճառը՝ ոչ... Թե՞ դա հարբածությունից է, որ չի հիշում…

Ցողիկը լուռ սպասում էր պատասխանի:

— Դուք մեշչանկա չեք,— հայտարարեց վերջապես Ռոկլանան՝ լռության մատնելով կանացի սեռին վերաբերող հարցը:— Դուք միայն գեղեցիկ եք: Եվ իզուր եք կարծում, թե ես չեմ սիրում ձեզ:

— Իսկ ցերեկը չէիք սիրում:

— Գուցե…

— Կարծում էիք, թե Վարդանն ու ես սիրահարված ենք և խանդում էիք…

— Ընկեր Ցողիկ...— վրդովվեց Ռոկլանան՝ միանգամից սթափվելով:

Ցողիկն իր նուրբ թևերը պատեց նրա պարանոցով և խոսեց նրա հետ եզակի՝ միաժամանակ ապշելով իր «անտակտության» վրա: «Աստված իմ, այս ինչեր եմ անում»,— մի պահ անցավ նրա ուղեղով:

— Ռոկլանա, սիրելիս, մի խոսիր ինձ հետ այդպիսի չոր տոնով, տղամարդու ձևացրած ձայնով: Մի՞թե դա սազում է քեզ պես գեղեցիկ աղջկան…

— Չծաղրել,— համարյա կոպտությամբ ասաց կոմերիտուհին և արձակեց նրա թևերն իր պարանոցից:— Ես շատ լավ գիտեմ իմ տգեղ լինելը, բայց դա ինձ համար էական չէ…

— Տգե՞ղ... Այդ դո՞ւ... Դու, սիրելի Ռոկլանա, միայն հաստագլուխ տղաներին կարող ես խաբել քո կաշվե պիջակով, յունգ-շտուրմի բլուզով, հաստ գուլպաներով, ցածրակրունկ կոշիկներով,.. Եվ ծխախոտով: Իսկ ես աղջիկ եմ և ամեն ինչ տեսնում եմ:

— Ի՞նչ ես տեսնում,— բարկացավ Ռոկլանան:

— Այն, որ դու…

Ներս մտավ Մանուշը՝ երեխային նայելու: Ցողիկը կիսատ թողեց խոսքը և դիմեց նրան.

— Այ, թող նա ասի: Մանուշ, սիրելիս, ասացեք խնդրեմ, ի՞նչ կարծիք ունեք Ռոկլանայի մասին:

Անսպասելի հարցը շփոթեցրեց փոքրիկ տիկնոջը: Նա հարգանքով նայեց կաշվե պիջակավոր կոմերիտուհուն, տատանվեց մի պահ, բայց անկարող եղավ զսպել իր մեջ Ազատից սովորած կոմերիտական ուղղախոսությունը:

— Շատ վատ,— ասաց նա՝ միաժամանակ կարծես ներողություն խնդրելով իր այդ կոպիտ բնորոշման համար:

— Տեսնո՞ւմ ես, ընկեր Ցողիկ,— հաղթական վրա բերեց Ռոկլանան՝ այնպիսի ուրախությամբ, կարծես հպարտանում էր, որ վատ կարծիք ունեն իր մասին:

— Իսկ... ինչո՞ւ վատ,— հարցրեց Վարդանի ընկերուհին Մանուշին:

— Իհարկե, վատ,— հաստատեց կինն իր ասածը:— Գիտակից կոմերիտուհին, գեղեցիկ խոսքեր ասելով ուրիշների երեխաների հասցեին, բա կթաքցնի՞ իր գեղեցկությունը, կդառնա՞...

Նա սարսափահար կիսատ թողեց իր խոսքը՝ հիշելով, որ ինքը տանտիրուհի է և իրավունք չունի այդպես արտահայտվել հյուրի մասին:

— Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես,— այս անգամ Ցողիկը հարցրեց Ռոկլանային և, բարձր ծիծաղելով, փաթաթվեց նրան: Բայց հենց որ նրա մերկ թևերը հպվեցին կոմերիտուհու կաշվե պիջակի սառնությանը, նա սթափվեց և մի պահ նրան թվաց, թե տղամարդու է գրկել: Նա ետ քաշվեց:

— Ի՞նչ եք ինձ խելքահան անում,— բարկացավ Ռոկլանան: Եվ, ինչպես վիրավորական ածական, վերադարձրեց նրանց.— Դուք ինքներդ եք գեղեցիկը…

— Դու որ աղջկա պես հագնված լինեիր, ընկեր Ռոկլանա,— շարունակեց Մանուշը՝ առանց ուշադրություն դարձնելու նրա բարկության վրա,— բոլորի հետ կմրցեիր մեր սեղանի շուրջը, Լենդրոշի արևը վկա...

Ռոկլանան նայեց նրան, ինքն էլ չիմանալով՝ հավատա՞լ թե ոչ, բարկանա՞լ, թե ուրախանալ... «Իսկ ինչո՞ւ ուրախանալ,— անցավ նրա մտքով:— Հիմար, կարծես գովում են քո ջանքերով ձեռք բերած հատկությունները՝ խելք, կրթություն, մարտունակություն և այլն: Գեղեցկությունը, եթե, իսկապես, ունես դու, քո ծնողներն են տվել քեզ, դու այդտեղ ոչ մի արժանիք չունես...»:

Ցողիկը, որ փսփսում էր Մանուշի հետ, անվստահ մոտեցավ կաշվե պիջակավորին:

— Ռոկլանա... Ես քեզ... ես ձեզ մի բան պիտի առաջարկեմ...— Ցողիկի գինովությունն արդեն անցել էր և նա նորից անկարող էր դարձել խոսելու կոմերիտուհու հետ եզակի:— Միայն թե

խնդրում եմ չբարկանաք... Թույլ տվեք ինձ ու Մանուշին ՝ աղջկա զգեստ հագցնել ձեզ: Դուք կտեսնեք, թե որքան կսազի ձեզ՝ լինել... աղջիկ...

— Ընկեր Ցողիկ,— արտասանեց կոմերիտուհին՝ ընդգծվածորեն թավ ձայնով,— ես ձեզ հարգում եմ և թույլ տվեք, որ սրանից հետո ևս հարգեմ…

— Լավ, ընկեր Ռոկլանա, թույլ տվեք, էլի,— խնդրեց նաև Մանուշը:

— Ուրեմն դուք է՞լ,— գլուխն օրորեց Ռոկլանան:

Խնդրողներին թվա՞ց, թե իրոք, Ռոկլանան շատ բարկացած չէր: Այդ բանից վստահություն առած, նրանք շարունակեցին խնդրել, ապա հանկարծ փոքրիկ ու նիհարիկ Մանուշը բացականչեց.

— Ի՞նչ ենք խնդրում, Ցողիկ, եկեք զոռով հանենք հագուստները: Ի՞նչ է, երկուսով չե՞նք կարող հաղթել մի աղջկա…

Ցողիկը, չվստահանալով այդպիսի բան անել, նայեց Ռոկլանային:

— Ի՞նչ եք ուզում անել, աղջկերք,— վախեցած և անօգնական շշնջաց Ռոկլանան, և դա վճռեց ամեն ինչ: Առաջին անգամը լինելով, Ցողիկն ու Մանուշն զգացին, որ իրենց դիմաց ընդամենը մի աղջիկ է՝ իրենց նման աղջիկ: Նրանք երկու կողմից մոտեցան կոմերիտուհուն:

— Թողեք, կբարկանամ,— ապարդյուն շշնջում էր նա:— Թողեք, ես ինքս կհանեմ մնացածը: Գոնե դուռը փակեցեք. հանկարծ մարդ կարող է մտնել:

Երբ նա մնաց սպիտակեղենով ու ոտաբոբիկ կանգնած, Մանուշն ու Ցողիկը, թև-թևի տված, կանգնեցին նրա առաջ՝ ինչպես ցուցափեղկում դրած մանեկենի, և սկսեցին նայել:

Ռոկլանան, թևերը կրծքին խաչած և ձեռքերն ուսերին դրած, մեծամարմին ու լիքը, նրանց հայացքների տակ ամոթահար, երկչոտ, կարծես սպասում էր իր մահապատժին: Նրան հանել էին իր ամուր պատյանից և պարզվել էր, որ կանացի սեռին խորթ նրա «ուժը» ոչ թե նրա մեջ է եղել, այլ հենց այդ պատյանի…

Մանուշը մոտեցավ հագուստի պահարանին, հանեց այնտեղից մի գեղեցիկ շրջազգեստ, բերեց Ռոկլանային:

— Մենք ցույց կտանք այդ Վարդաններին,— շշնջաց Ցողիկը նրա ականջին՝ վրեժխնդրի տոնով:— Նա դեռ կտեսնի, թե ով ենք մենք: Հագեք, Ռոկլանա…

— Մոռացել եմ...— կարմրեց աղջիկը:

— Ի՞նչն ես մոռացել:

Այժմ, երբ աղջիկը դուրս էր ելել կաշվե պիջակի միջից, Վարդանի ընկերուհին նորից անցավ դու-ի՝ ինքն էլ չնկատելով այդ:

— Մոռացել եմ շրջազգեստ հագնելը: Որբանոցից դուրս գալուց ի վեր ես միշտ յուբկա ու բլուզ եմ հագել:

Մանուշն ու Ցողիկն զգեստն անցկացրին նրա գլխով, քաշեցին վար, հարդարեցին: Հագուստը ճիշտ նրա վրայով էր: Բայց դա փոքրամարմին Մանուշինը չէր, այլ հարևանի աղջկանը: Մանուշը, որը խիստ մտերիմ էր նրա հետ, միանգամայն բնական էր համարում օգտվել նրա իրերից՝ առանց նրան հարցնելու:

— Աչքերիս չեմ հավատում…— ասաց Ցողիկը՝ նայելով կոմերիտուհուն:

— Ի՞նչ է, վա՞տ է,— վախեցավ Ռոկլանան:

— Կիմանաս: Առայժմ նստիր:

Նրան հագցրին մետաքսե գուլպաներ և սև լաքից տուֆլիներ: Ցողիկը, գեղեցկության սիրահար, բացականչեց կամացուկ՝ երեխային չարթնացնելու համար.

— Ինչպիսի՜ ոտքեր... Աստված իմ, ինչպիսի ոճե՛մ…Եվ դու... և դու այսքան ժամանակ թաքցրել ես դրանք, Ռոկլանա... Պետք է ծեծել քեզ: Պատրաստ է: Ոտքի կանգնիր:

Ռոկլանան ոտքի ելավ և քիչ մնաց վայր ընկներ տուֆլիների բարձր կրունկների վրա:

— Եղա՛վ, անպիտան աղջիկ,— հանդիմանեց Վարդանի ընկերուհին՝ ինքն էլ մի պահ զարմանալով, որ այդպիսի տոնով է խոսում նրա հետ: Բայց Ցողիկի դիմաց կանգնած էր ոչ թե պատկառանք ազդող նախկին կաշվե պիջակավոր «անսեռ» արարածը, այլ մի գեղեցիկ աղջիկ, որը, թեկուզև բարձրահասակ ու լիքը, թողնում էր այնքա՛ն անօգնական տպավորություն:— Աստված իմ, դեռ հարկավոր է քայլել սովորեցնել քեզ՝ ինչպես երեխայի…

— Իսկ հիմի մոտեցիր հայելուն, անպիտան աղջիկ,— կրկնելով Ցողիկի ածականը, ասաց Մանուշը:

Սեղանների համար տեղ ազատելու նպատակով հարևաններն իրենց կահ-կարասին փոխադրել էին այդտեղ: Ճոճվելով բարձր կրունկների վրա, Ռոկլանան, Ցողիկի ու Մանուշի ուղեկցությամբ, մոտեցավ հագուստի պահարանին: Նայելով դրա դռան հայելու մեջ, կոմերիտուհին չկարողացավ տեսնել իրեն: Նա տեսավ միայն երեք աղջիկների՝ ամեն մեկն իր տեսակի գեղեցիկ ու նուրբ, կողք-կողքի կանգնած: Անցան վայրկյաններ, մինչև նա հասկացավ, որ դրանցից մեկը՝ կենտրոնում կանգնածը, ինքն է... Նա մի ճիչ արձակեց՝ նույնիսկ ոչ թե հիացմունքից, այլ անսպասելիությունից, և իր խոշոր աչքերը հառեց իր վրա:

Հայելու միջից նրան էր նայում կարճ կտրած բաց-շագանակագույն մազերով մի աղջիկ՝ գիրանալու հակամետ, բավարարաչափ լիքը դեմքով: Նրա բարեձև մարմինը գրկել է մուգ-մորագույն զգեստը, որը գրավչորեն պրկվել էր նրա բարձր կրծքի վրա: Հագուստի պարանոցը բաց էր, իսկ թևքերն իջնում էին արմունկներից մի փոքր ներքև: Նրա կազմվածքին, որն ինքնին բարեձև էր, արտակարգ շքեղություն էին տալիս աղջկա արտակարգ գեղեցիկ ոտքերը՝ թաթերի բարձր երեսներով, սլացիկ սրունքներով:

— Մի՞թե դա ես եմ...— շշնջաց նա՝ առանց աչքն իրենից կտրելու: Ուշադիր նայելու համար նա ավելի մոտեցավ հայելուն և դանդաղ հպվելով ապակուն, հանկարծ համբուրեց իր շրթունքները…

— Իսկ հիմա, Ռոկլանա, սիրելիս,— շշնջաց Ցողիկը նրա ականջի մոտ,— քեզ հարկավոր է մոռանալ տղամարդու ժեստերն ու միմիկան: Դու աշխատիր որքան կարելի է շատ կոտրատվել, նազանքներ բանեցնել: Ոչինչ, եթե դա անբնական դուրս գա: Դրանից քեզ այնքան մեծ վնաս չկա, որքան որ եթե դու…

Նա կիսատ թողեց խոսքը: Որքան էլ որ երկու փոքրիկ գավաթ գինուց թեթևակի հարբած, նա ուրախությամբ նկատեց, որ Ռոկլանան կարիք չունի արհեստական կանացի ձևերի: Տղամարդու հագուստից դուրս եկած, նա միանգամից վերափոխվել էր ամբողջովին: Նրա շարժումներն ու միմիկան, պայմանավորված լինելով միմիայն նրա հագուստներով, նա հանել էր կաշվե պիջակի հետ միասին, իսկ այժմ, գեղեցիկ զգեստի հետ մեկտեղ ստացել էր նաև կանացիության ողջ էությունը…

Իհարկե, հրաշք տեղի չէր ունեցել, այլ Ռոկլանան մտել էր իր իսկական հագուստի մեջ: Բայց չէր կարելի ասել, թե տարիների նրա դիմակավորումն անպատիժ էր անցել նրա համար: Գուցե դեռ երկար ժամանակ երբեմն-երբեմն նա կատարեր տղամարդկային կամ պարզապես տգեղ շարժուձևեր, նրա դեմքի վրայով սահեր-անցներ իր սեռի հետ անհարիր միմիկա, նրա կանացի քնքուշ ձայնի մեջ սողոսկեր տարիներ շարունակ ձևացրած օտար ինտոնացիան: Իսկ ծխախոտի հոտը նրա բերանից, անշուշտ, վերանալու էր երկար օրերի ու շաբաթների, եթե ոչ ամիսների

ընթացքում, որպեսզի նրան համբուրող առաջին երիտասարդը նրա շրթունքներից առներ միայն կանացի համ և բույր:

Բայց այժմ, կարճ րոպեների ընթացքում, այդ թերությունները դեռ չէին արտահայտվում: Կարելի էր հույս ունենալ, որ դրանք իրենց ցույց չեն տա նաև սեղանի շուրջը, և այն անակնկալ էֆեկտը, որ նա պիտի թողներ առաջին րոպեին, պիտի մնար մինչև վերջ:

Ռոկլանան, առանց կտրվելու, հայելու մեջ նայում էր իրեն: Տարիներ շարունակ կառուցած նրա բերդը գահավիժորեն փուլ էր գալիս այդ րոպեների ընթացքում, Ցողիկի և Մանուշի աչքի առաջ: Կատարվում էր, իրոք, ինչ-որ ֆենոմեն, անհավատալի կերպարանափոխություն: Ռոկլանան չէր կատարում ոչ մի շարժում, չէր շարժվում նրա և ոչ մի դիմագիծը, բայց րոպե առ րոպե նա դառնում էր ավելի և ավելի աղջիկ: Կարծես իր տեսքը, իր իսկ աչքերի միջով իր մեջ ներծծվելով, հագեցնում էր նրա էությունը ոտից գլուխ: Երեխա-աղջիկը հասուն աղջիկ է դառնում տարիների ընթացքում, իսկ Ռոկլանան, որ գալիս էր ոչ թե մանկությունից, այլ «տղամարդությունից», հասուն աղջկա վերածվելու նույն այդ պրոցեսն ավարտում էր րոպեների ընթացքում: Ուստի և, ոչ Ցողիկը, ոչ Մանուշը չզարմացան, երբ նա բարձրացրեց ձեռքերը, մոտեցրեց ականջներին և, շարունակելով անթարթ նայել հայելու մեջ իրեն, շշնջաց.

— Աղջիկներ... Օղեր ճարեցեք ինձ համար...

Մանուշը բերեց իր ոսկեգույն օղերը՝ հասարակ կարմիր ակներով: Ռոկլանայի մայրը, դեռ նրա երեխա ժամանակ, ծակել էր նրա ականջները: Երևի ծակել էր ոչ թե բարակ հերոնով, այլ հաստ մեխով, որովհետև ժամանակի ընթացքում դրանք չէին փակվել, այլ միայն նեղացել էին: Օղերի բռնակները հեշտությամբ անցան դրանցով:

— Բրոշկա…— պահանջեց Ռոկլանան:

Մանուշը հանեց բրոշկան իր կրծքից, տվեց նրան:

— Ուլունքներ…

— Ուլունքներն ավելորդ են, սիրելիս,— փորձեց համոզել Ցողիկը:

— Ոչ, ոչ, ուլունքներ,— պնդեց Ռոկլանան:

Մանուշը սեղանակի վրայից վերցրեց հարևանի աղջկա մարջանի շարքը, տվեց նրան:

— Ճիշտ է, սազեց…— շշնջաց Ցողիկը:— Դու ճաշակով աղջիկ ես, Ռոկլանա…

Ավարտելով արդուզարդը, Ռոկլանան շուռ եկավ, նայեց ընկերուհիներին: Բայց նրա հայացքում այլևս հարց չկար, թե՝ «ինչպիսին եմ ես», այլ սրտապատառ, թեկուզև զսպված ուրախություն՝ «տեսնո՞ւմ եք ինչպիսին եմ ես»…

Ընկերուհիները գրկեցին և համբուրեցին նրան:

— Շրթնաներկ,— այս անգամ պահանջեց Ցողիկը:

— Ոչ, ոչ,— վախեցավ Ռոկլանան,— ես կոմերիտուհի եմ…

— Վաղվանից՝ դա քո գործն է, կարող ես և չքսել, իսկ հիմա ես ուզում եմ, որ դու փուրոր առաջացնես այնտեղ:

Նա ինքն զգուշությամբ խնամքով ներկեց նրա շրթունքները՝ ճաշակով ու չափավոր: Երբ նկարչի նման ետ գնաց մի քայլ և նայեց՝ նա զարմացավ այն արտակարգ շուքից, որ տվել էր աղջկա դեմքին ներկի վառ-կարմիրը: Մանուշը շատ թեթևակի պուդրայեց նրա դեմքը և դուխի ցանեց հագուստին:

— Աստված իմ,— բացականչեց Ցողիկը,— եթե ես իմանայի, որ դու այսքան լավն ես՝ չէի հնարի այս բոլորը: Դու ստվերի մեջ կթողնես Մանուշին, ինձ և մյուսներին: Խնդրում եմ, նորից հագիր քո հագուստը…

Ռոկլանայի աչքն ընկավ իր կաշվե պիջակին, նա վախեցած բացականչեց և ետ ընկրկեց, կարծես իրոք, նրա վրա նորից քաշել էին ուզում արդեն այնքան խորթ ու սարսափելի դարձած այդ պատյանը...

Ռոկլանան մի քանի անգամ քայլեց սենյակում՝ անկյունից-անկյուն, ձեռքերն իրար միացրած և ցած կախած: Ընկերուհիներին թվում էր, թե նա ուզում է վարժվել քայլելու, բայց նա քայլում էր արդեն միանգամայն վարժ, կարծես նրա գեղեցիկ ոտքերը, կոպիտ գուլպաներից ու կոշիկներից ազատագրված, իրենք էին գտել իրենց քայլվածքի բնական ձևը: Ռոկլանան պարզապես մտածում էր՝ առաջին անգամ մարդկանց երևալու մտքից վարանած: Բայց նրա ուղեղում կանգնած էր այն հաճելի, երջանկացնող գիտակցությունը, որ նա գեղեցիկ աղջիկ է և ոչինչ չունի վարանելու: Նա ժպտաց՝ նախաճաշակելով իր թողնելիք տպավորությունը, բարձրացրեց գլուխը և դիմեց ընկերուհիներին.

— Դե ի՞նչ, գնա՞նք, աղջիկներ…

Մանուշը մի պահ մոտեցավ օրորոցին՝ հավաստիանալու համար, որ երեխան քնած է, և այդ պահին Ռոկլանան շշնջաց Ցողիկի ականջին.

— Իսկ որպես վրեժ՝ ես երբեք, երբեք չեմ լինելու Վարդանինը՝ եթե մինչև անգամ նա հիմի ուզենա դա: Երբեք…

— Եվ լավ էլ կանես,— քաջալերեց Ցողիկը:— Պատժիր:

Նրան դուր եկավ ոչ թե պատժելու ցանկությունը, այ աղջկային այն ինքնասիրությունն ու արժանապատվության զգացումը, որն արթնացել էր նախկին կաշվե պիջակավոր կոմերիտուհու մոտ: Իսկ գալով պատժելուն, ապագան ինքը կպարզի՝ այդպե՞ս կվարվի նա, թե մի այլ կերպ...

Խնջույքի սենյակից լսվում էին ձայներ: Խոսում էր Սանթուրյանը, իսկ մյուսները բղավում էին՝ «ճիշտ է, ճիշտ է», կամ ծափահարում էին: Ապա բոլորը լռեցին և լսվեց միայն ֆիզիկայի դասատուի ձայնը: Բաժակը ձեռքին, ոտքի կանգնած, նա խոսում էր.

— Դուք դեռ նոր եք սկսում ապրել, սիրելի երիտասարդներ: Ոչ միայն էն իմաստով, որ դեռ նոր եք սկսում ձեր անհատական կյանքը, այլև որ ձեզ հետ միասին սկսվում է ընդհանրապես նոր կյանքը: Կգա ժամանակ, Լենդրոշն նրա հասակակիցները կդառնան բարձր կուլտուրայի տեր, հիանալի կրթված ու դաստիարակված, լավ հագնված, լավ բնակարաններում ապրող երիտասարդներ: Եվ մի օր նրանք պահած տեղից կհանեն իրենց ծնողների, այսինքն՝ ձեր, խունացած լուսանկարները, կնայեն անշուք ու աղքատիկ հագնված երբեմնի երիտասարդներին և կշշնջան երախտագիտությամբ. «Շնորհակալություն ձեզ, սիրելիներ, դուք սկսեցիք ապրել, իսկ սկսելը միշտ էլ դժվար է: Բայց մենք միայն կարեկցանքով չէ, որ տալիս ենք ձեր անունը: Եթե կուզեք, բոլորովին էլ կարեկցանքով չէ: Մենք նախանձով ենք հիշում ձեր երիտասարդությունը՝ լի հեղափոխական ռոմանտիկայով, նոր կյանքի սկզբնավորման բուռն ոգևորությամբ: Հեշտ չի լինի մեզ համար՝ դառնալ ձեր արժանի զավակները, բայց մենք կձգտենք դրան և անպայման կհասնենք...»:

Նա ընդհատեց իր խոսքը և զարմացած նայեց դեպի դուռը: Բոլորը, որ աչքները հառել էին դեպի նա, նույնպես շուռ տվեցին գլուխները:

— Ռոկլանա՞…— հնչեց հիացմունքի միահամուռ շշուկը՝ լի թերահավատությամբ դեպի իրենց տեսածը: Բայց երբ անցավ վարանման առաջին րոպեն, բոլորի հիացմունքին միախառնվեց նաև հարգանքի ակնածական զգացումը գեղեցիկ աղջկա հանդեպ: Կաշվե պիջակավոր տղամարդու, ավելի ճիշտ՝ անսեռ արարածի նկատմամբ տածած խորթ հարգանքի փոխարեն աղջիկն այժմ

արժանացել էր այն սիրախառն ակնածանքին, որն առաջացնում է մարդու մեջ նրա նույնիսկ ամենամտերիմ ընկերուհին, սիրեցյալը, կինը, երբ նա շատ գեղեցիկ է: Գեղեցկությունը, որը պարարտ հող է մտերմության համար, մարմարե պատվանդան է միաժամանակ, որի վրա կանգնած է քո մտերիմը՝ քեզանից մի քիչ հեռու և մի քիչ բարձր…

Առանց որևէ բացականչության կամ խոսքի, բոլորը ոտքի կանգնեցին՝ լուռ ողջունելով նրա վերադարձն իր սեռի շարքերը: Հայացքներով ուղեկցեցին նրան՝ մինչև որ նա գնաց-նստեց իր տեղը: Ապա նստեցին նաև նրանք:

Միայն մի պահ շփոթվեց Ռոկլանան, ապա, իրեն հատուկ ներքին ուժով, ոչ տղամարդկային օտար «ուժով», այլ ավելի մեծ՝ կանացի, գտավ իրեն: Եվ տարօրինակ կլիներ, անգամ ծիծաղելի, եթե նա, այդպես մեծամարմին ու լիքը, պահեր իրեն որպես ամաչկոտ կես-երեխա: Միայն վայրկյաններ հարկ եղան, որպեսզի նա, իրոք, գտներ և ճանաչեր իրեն. դա իր արժանապատվությունն ու իր գեղեցկության ուժն իմացող աղջիկն էր, սովոր այն բանին, որ երիտասարդները խմբվեին նրա շուրջը և կատարեին նրա ամեն մի ցանկությունը:

Դիմելով իր կողքին նստած «կավալերին»՝ Վարդանին, Ռոկլանան գլխի ծանրաբարո շարժումով ցույց տվեց իր բաժակը, այսինքն՝ լցրեք: Վարդանն արագ, հազիվ չթափթփելով գինին, շտապեց կատարել նրա խնդի՞րը, թե՞ հրամանը: Ռոկլանան գլխի մի նոր շարժումով շնորհակալություն հայտնեց նրան և շուռ եկավ դեպի Սանթուրյանը:

Ցողիկն ապշած նայում էր Ռոկլանային: Նա կարծես կաշվե պիջակի միջից դուրս էր կանչել մի ոգու, որին այժմ անկարող էր վերադարձնել այնտեղ: Ոգին րոպե առ րոպե դառնում էր ավելի և ավելի որոշակի, մարմնավորվում էր և ուժեղանում: Ռոկլանան ստացել էր բոլորին դուր եկող աղջկա մի այնպիսի անկախ և կանացիորեն հպարտ, իշխանական տեսք, որ բոլորն ապշել էին, բայց քաշվում էին բարձրաձայն արտահայտել իրենց ապշությունը:

Իշխանական և միաժամանակ կանացի մի շարժումով դիմելով Սանթուրյանին, Ռոկլանան ասաց.

— Շարունակեցեք, սիրելի Սանթուրյան, մենք լսում ենք ձեզ…

Եվ Սանթուրյանը, ոչ միայն ֆիզիկայի դասատու, ոչ միայն կոմունիստ, այլև տղամարդ, ենթարկվեց գեղեցիկ աղջկա հրամանին և իսկույն շարունակեց.

— Խմենք ուրեմն, սիրելի երիտասարդներ, երիտասարդների և նրանց ծնողների կենացը: Այո, ընկերներ…— նա գոհունակությամբ նորից նայեց Ռոկլանային,— այո, ընկերներ, մենք սկսում ենք ապրել…

ՎԵՐՋԱԲԱՆ

1

Բաց լուսամուտից ներս էր հորդում Երևանի սքանչելի առավոտների թարմ ու զով օդը: Դեռ վաղ ժամ էր, ուստի և գարուն: Ամառը, ինչպես ամեն օր՝ ապրիլից սկսած, գալու էր կեսօրի մոտերքը:

Երկու ընկերները հանգիստ քնած էին իրենց երկաթյա անշուք մահճակալների վրա, երբ լսվեց դռան թակոցը: Մի պահ անց թակոցը նորից կրկնվեց և այս անգամ լսվեց այցելուի ձայնը.

— Է՛յ, կոմերիտականներ, մի՞թե դեռ քնած եք:

— Ո՞վ է,— բարկացած ձայն տվեց Մուրադը:

Ներս մտավ Գառնիկը՝ տնային թաղիքե ոտնամանները ոտքերին, շալվարով, բայց առանց վերնաշապկի, բաճկոնն ուսերին գցած:

— Բարի լույս, կոմերիտականներ,— ասաց նա այնպիսի տոնով, կարծես ինքն արդեն կոմունիստ լիներ կամ դեռ անկուսակցական:— Զոքանչս գտնում է, որ դուք արդեն պիտի գաք նախաճաշելու:

— Գնա կորիր դու էլ, քու զոքանչն էլ,— բարկացավ Մուրադը:— Չեն թողնում, որ գոնե կիրակի օրով մարդ մի ժամ ավելի քնի:

— Զոքանչս գտնում է, որ կիրակին նույնպիսի օր է, ինչպես մյուս օրերը: Է՛յ, Արամայիս, դեռ քնա՞ծ ես:

— Ոչ, քաղաքացի Գառնիկ, քնած չեմ, այլ լսում եմ քո զոքանչի ձայնափողի հնչյունները:

— Զոքանչս գտնում է, որ դա զրպարտություն է:

— Ավելորդ տեղը դուրս ես տալիս,— ծիծաղեց Մուրադը՝ տեղից վեր կենալով:— Դու էն ասա, թե ի՞նչ նախաճաշ է պատրաստել զոքանչդ մեզ համար:

— Դա մեր ընտանեկան գաղտնիքն է,— մերժեց հայտնել Գառնիկը:

— Ախր քիչ հետո մենք պիտի ուտենք էդ գաղտնիքը:

Գառնիկը չպատասխանեց: Նա հովանավորող հայացքով նայեց շուրջը՝ տեսնելու, թե ինչ անկանոնություններ կան այդտեղ, որոնք հարկավոր է ուղղել: Պատի օրացույցի վրա դեռ երեկվա ամսաթիվն էր՝ մայիսի 29-ը: Նա պոկեց թերթը: Փոքրիկ սեղանի վրա դրված էր հագուստի խոզանակը: Նա վերցրեց այն և տեղափոխեց անկյունում կանգնած ցածրիկ կամոդի վրա, տետրակաչափ հայելու մոտ:

— Նորություն լսե՞լ եք,— հարցրեց նա՝ վերցնելով սենյակում գտնվող երեք աթոռներից մեկը և նստելով:

— Էլի զոքանչիդ գծո՞վ է,— հետաքրքրվեց Արամայիսը:

— Էս անգամ ոչ: Վահրիճի մասին է: Էն, որ մի ութ ամիս առաջ փախավ մեր սենյակից:

— Հետո՞, հետո՞,— հետաքրքրվեցին ընկերները:

— Բանից դուրս է գալիս, որ նա էստեղից, իսկապես, գնացել է իրենց գյուղը: Եվ գիտե՞ք, թե ինչո՞ւ: Սպանելու համար իր հարազատ հորը: Այո՛, այո՛, որպես կուլակի, որն արգելք է հանդիսացել նրա ազնիվ կյանքի ճանապարհին: Խիստ մեծ հույս է ունեցել, որ դատարանը կարդարացնի նրան՝ հանուն նրա վեհ ձգտումների:

— Էշ,— բացականչեց Մուրադը:— Ես վաղուց եմ ասել նրա մասին: Հետո՞, հետո՞…

— Ոչ թե էշ,— ուղղեց Գառնիկը,— այլ իշու և աղվեսի խառնուրդ:

— Հիբրիդ...— ուղղեց Արամայիսը:

— Հետո էլ ի՞նչ,— շարունակեց Գառնիկը:— Մի գիշեր, կացինը ձեռքին, մոտեցել է հոր անկողնուն ու խփել: Իսկ հայրը, ասում են, արջի նման մի աժդահա մարդ է, ու երևի բավական հաստագլուխ, որովհետև կացինը միայն ճակատի կաշին է քերծել մի քիչ: Սա վեր է կացել ու շան ծեծ է տվել իր լողլողին, հետո էլ իր ձեռքով տարել-հանձնել է իշխանություններին՝ երևի նույնպես նրանց աչքը մտնելու համար:

Մուրադն ու Արամայիսը նայեցին իրար.— ահա թե ինչ սրիկա է ապրելիս եղել մեզ հետ... Ապա նորից դարձան դեպի Գառնիկը:

— Ինչպես գիտեք,— շարունակեց նա,— խորհրդային օրենքը հավասար է բոլորի համար: Այսինքն՝ քրեական օրենքը: Դատել են նրան ու կանխամտածված սպանության փորձ կատարելու համար դատապարտել ութ տարվա:

— Դու ո՞րտեղից ես իմացել էդ բոլորը,— հարցրեց Մուրադը՝ շարունակելով հագնվել:

— Մեր նախկին որբերից մեկը միլիցիայումն է աշխատում, երեկ նա պատմեց: Իսկ հիշո՞ւմ եք Ջաբարյանի ու մյուսների դատը, որ ձմեռը տեղի ունեցավ: Երեկ ահա հենց էդ դատապարտվածներին ուղարկել են աքսոր ու Վահրիճին էլ նրանց հետ: Ընկերս ասում է, որ էդ «ձեր» Վահրիճը «թեորետիկի» չեմոդանն ինքն էր վերցրել ու ընդհանրապես օգնում էր նրան ամեն ինչում: Սրտառուչ և անկեղծ ընկերություն և ոչ թե ինչպես մեզ հետ:

— Ուրեմն Ջաբարյանին աքսորեցին,— ասաց Արամայիսն ինքնիրեն:

— Այո, հինգ հոգի էլ նրա հետ: Երեքական տարով ազատ աքսոր:

— Ապուշներ, գազազած թշնամիներ,— արձագանքեց Արամայիսը:— Ախր մի տարի էր մնացել, որ ավարտեր համալսարանը, դուրս գար կյանքի լայն ասպարեզ: Ի՞նչ էին ուզում, ինչո՞վ չէր գոհացնում նրանց մեր կյանքը՝ չեմ հասկանում…

— Է՛, չեղավ,— կեղծ ցավակցությամբ գլուխն օրորեց Մուրադը,— լավ չարեցին, որ աքսորեցին: Հիմի Ջաբարյանը հյուսիսի սպիտակ արջերին դաշնակ կդարձնի ու ինքն էլ կդառնա նրանց ջոջը:

— Իսկ դու սպիտակ արջ տեսած կա՞ս որ,— բարկացավ Գառնիկը նրա վրա:— Գիտե՞ս, որ նրանք շատ են սիրում ջոջ ուտել:

— Վահրիճը բոլորին կջարդի կացնով,— նկատեց Վարդանը:

— Ինչպես ջարդեց իր հորը,— ավելացրեց Գառնիկը:

Այդպիսի անողոք կատակով ավարտեցին երեք անբաժան ընկերներն այդ նյութը՝ այլևս երբեք դրան չանդրադառնալու համար իրենց ողջ կյանքում:

Ավարտելով հագնվելը, նրանք դուրս ելան նախասենյակ, լվացվեցին, վերադարձան, ընդ որում Գառնիկը շարունակ ուղեկցում էր նրանց: Նրանք մոտեցան հարևանների դռանը և ուզում էին թակել, բայց «փեսան» բաց արեց այն և ընկերներին թողեց ներս:

— Բարի լույս, Վառվառա Սարիբեկովնա, բարի լույս, Ավետ Հայրապետովիչ:

«Ջոքանչն» ուշադիր, ոտից-գլուխ զննեց երկու ընկերներին և ասաց.

— Ապա, Մուրադ, վերադարձեք ձեր սենյակը և խոզանակով լավ մաքրեցեք ձեր անդրավարտիքի ծնկները:

— Վառ…

— Առանց հակաճառության,— առարկություն չվերցնող տոնով ձեռքը բարձրացրեց խստադեմ կինը:

— Այդ ինչպե՞ս է, որ այս ժամին տանն եք,— ժպտալով հարցրեց նրան Արամայիսը:

— Իսկ դուք, Արամայիս, խորամանկ մի ձևանաք, դա բոլորովին չի սազում ձեզ: Դուք շատ լավ գիտեք, թե ես ինչու եմ տանը: Ձեր հարգելի ընկերն ինձ արգելել է եկեղեցի ոտք դնել…

— Մայրիկ…

— Մի ժխտիր, Գառնիկ, ի սեր աստծու, խնդրում եմ,— սրտնեղվեց կինը:— Ինչո՞ւ թաքցնել իր մտերիմ ընկերներից:

— Ես ոչ թե արգելել եմ,— դիմեց Գառնիկն Արամայիսին,— այլ մի քանի անգամ գիտական զրույց եմ ունեցել Վառվառա Սարիբեկովնայի հետ և, ինչպես երևում է, մի քիչ խախտել եմ նրա հավատը…

— Ի՞մ հավատը...— սոսկալի վիրավորված, բացականչեց զոքանչը:— Դու դեռ շատ անփորձ ես՝ ինձ վրա ազդեցություն ունենալու համար: Ես պարզապես տանն եմ աղոթում: Իսկ եկեղեցի չեմ գնում նրա համար, որ ստվեր չընկնի ձեր անվան վրա, ընկեր կոմերիտական:

Գառնիկն աչքով արեց ընկերոջը՝ «սուտ է ասում, ոչ ես եմ նրան աղոթելիս տեսել, ոչ էլ Ավետ Հայրապետովիչը...»:

— Նստիր, խնամի,— հրավիրեց հաշվապահը Վարդանին, ապա, տեսնելով անդրավարտիքի ծնկները մաքրելուց հետո վերադարձող Մուրադին, նաև նրան:— Նստիր, երիտասարդ:

— Կանչիր կնոջդ,— կարգադրեց զոքանչը փեսային:

Բայց այդ րոպեին Լիլիան ինքը դուրս ելավ իր սենյակից՝ խալաթով, բավական հաստացած:

— Թեյ լցրու, աղջիկս, կարգադրեց մայրը:

— Դու ինձ մոտ նստիր, շանթարգել,— դիմեց աները փեսային:

Մուրադը փռթկաց:

— Ե՞րբ ես վերջ տալու այդ հիմար կատակին,— զայրացավ կինն ամուսնու վրա:

— Մի՞թե դա կատակ է, Վարյա,— զարմացավ հաշվապահը՝ քթի տակ ծիծաղելով:

Կինը չպատասխանեց: Դուրս ելավ միջանցք և բերեց այնտեղից մի մեծ թավա:

— Ձվածեղ,— ուրախացավ Մուրադը:

— Օմլետ,— մատը բարձրացրեց Գառնիկը:— Քանի՞ անգամ եմ ասել քեզ: Կրկնիր, որ չմոռանաս՝ «օմլետ»: Ճիշտ սովորիր անունը, որ ճիշտ ուտես: Ես էլ դա առաջ ձվածեղավարի էի ուտում, ու քիչ մնաց, որ ստամոքսս փչացնեմ…

Զոքանջն ընդհատեց ուտելիքն ափսեների մեջ դնելը և խուզարկու նայեց փեսային՝ ստուգելու համար, թե չի՞ ծաղրում նա արդյոք: Բայց Գառնիկի դեմքը քարի պես անդրդվելի էր, միայն քիթն էր սովորականից մի քիչ ավելի ծռվել:

Սկսեցին լուռ նախաճաշել: Ապա Լիլիան հարցրեց.

— Ցողիկը ե՞րբ է գալու, Մուրադ:

— Չի գալու: Պայմանավորվել ենք, որ մենք ինքներս Զանգու գնալիս նրան ու Աստղիկին կվերցնենք տնից:

— Նորից Զանգու,— հառաչեց Լիլիան:— Իսկ գուցե ես չգնա՞մ, մամա: Թող Գառնիկը գնա:

— Հիմար բան ես ասում,— բարկացավ մայրը:— Դու շատ լավ գիտես, որ քեզ անհրաժեշտ է քայլել, շրջել: Ի՞նչ ունես տանը կիրակի օրով:

— Ոչ թե տանը, այլ ես ուզում էի գնալ Ազատենց:

— Ազատենք իրենք էլ են այսօր լինելու ձորում,— հայտնեց Մուրադը:— Մենք արդեն որոշել ենք, թե որտեղ ու երբ պիտի հանդիպենք:

Արամայիսը կախեց գլուխը: Եվ նույն րոպեին, չար զուգադիպությամբ, Ավետ Հայրապետովիչը հարցրեց նրան.

— Արամայիս, դու սիրահարվա՞ծ ես:

Լենինականցին ուղղակի ցնցվեց իր տեղում, նրան թվաց, թե նա նստած է մերկ հոգով և բոլորը տեսնում են նրա մտքերն ու զգացմունքները:

— Սիրահարվա՞ծ... Ոչ.. Ոչ, ոչ... Իսկ ինչո՞ւ եք հարցնում:

— Անցած օրը կարդացի քու նոր պատմվածքն ամսագրի մեջ: Նորից սիրային և նորից ուժեղ: Մեր լեզվով ասած՝ բալանսը պահպանված է: Դեբետ-կրեդիտ: Գերածախս չկա: Ընթերցողն ակամա ինքն էլ է վարակվում սիրով…

Կինը ցասումով նայեց ամուսնուն:

— Ակամայից ինքն էլ է վարակվում սիրով... դեպի իր կինը,— շտապ զարգացրեց իր միտքն Ավետ Հայրապետովիչը:

Նախաճաշից հետո Վառվառա Սարիբեկովնան դիմեց երեք ընկերներին և Լիլիային.

— Այսօր ամսի երեսունն է, իսկ վաղը երեսունմեկը: Խնդրում եմ ասել՝ ի՞նչ դժգոհություններ կան այս ամսվա ընթացքում:

— Ոչ մի,— թնդացին չորսը միանգամից:

— Սոված չե՞մ թողնում ձեզ:

— Մայրիկ…

— Սպասիր: Թող ընկերներդ ասեն: Համե՞ղ եմ պատրաստում, ո՞չ միօրինակ:

— Վառվառա Սարիբեկովնա,— ժպտաց Արամայիսը,— չունենք ոչ մի, ոչ մի դժգոհություն, բացի... բացի այն, որ կաթն ամեն առավոտ մեր զահլան տարել է...

— Գուցե ձեզ գարեջո՞ւր է հարկավոր: Բայց ես չեմ ուզում ձեզանից հարբեցողներ պատրաստել: Ուրիշ բողոքներ չկա՞ն, գո՞հ եք:

— Գոհ ենք,— արձագանքեց խումբը:

— Այդ դեպքում թույլ տվեք հայտնել,— հանդիսավորաբար հայտարարեց Վառվառա Սարիբեկովնան,— որ ձեր տված գումարը ոչ միայն բավարարել է, այլ նորից ավելացել:

— Չի կարող պատահել,— բացականչեց Մուրադը:

— Ուրեմն ի՞նչ,— բարկացավ կինը,— ես Ավետի ռոճի՞կն եմ ծախսում ձեզ վրա: Շատ հարկավորս եք դուք: Դասավորել է պետք, երիտասարդներ, իսկ դուք շռայլելու եք սովորել: Եվ ուրեմն, Գառնիկի ավելացած գումարը ես պահում եմ որպես նրա ու Լիլիայի անձեռնմխելի ֆոնդ, իսկ ձերը փոխանցում եմ հունիսի հաշվին: Հետևաբար վաղն ինձ կտաք ոչ թե նախորդ ամսվա չափ, այլ պակաս:

Նա անվանեց գումարը:

— Ինչ լավ եղավ,— ուրախացավ Մուրադը:— Ուրեմն գարեջրի փողը շատանում է:

— Նույնիսկ կարող եք անցնել օղու,— առաջարկեց կինը:— Ի միջի այլոց, Մուրադ, ինչո՞ւ եք զրպարտում ձեզ, չէ՞ որ դուք շատ քիչ եք խմում, և ես դա լավ գիտեմ: Եվ դուք շատ ճիշտ եք վարվում, որ ձեր բոլոր ազատ գումարները հանձնում եք Ցողիկին: Դա ձեզ, մոտ ապագայում…— Կինը, տեսնելով տղայի շփոթվելը, կիսատ թողեց խոսքը, շտապեցրեց.— Լիլիա, հագնվիր: Գնացեք, քանի դեռ շոգը չի ընկել: Ինչպե՞ս են Ցողիկի գործերը համալսարանում, Մուրադ:

— Ընդունվելով հունվարին, լրացուցիչ ընդունելությունների ժամանակ, խեղճն սկզբում ստիպված էր շատ լարված պարապել, որ հասցնի, բայց հիմի լավ է, Վառվառա Սարիբեկոնա:Միայն թե հեռու է ապրում համալսարանից, դա է վատը:

— Իսկ ինչո՞ւ չի փոխադրվում հանրակացարան կամ ուրիշ սենյակ: Ես ինքս քանի անգամ համոզել եմ:

— Չի ուզում հեռանալ Աստղիկից: Վարժվել են իրար: Բայց ուզի, թե չուզի, շուտով պիտի հեռանա: Այսինքն՝ Աստղիկն ինքը պիտի հեռանա նրանից, բարեբախտաբար ոչ շատ հեռու, հարևան տունը: Ամուսնանում է:

— Ապա՛, ապա՛,— հետաքրքրվեց կինը:

Նրանք սկսեցին զրուցել, իսկ Արամայիսը վերադարձավ իր սենյակը, մոտեցավ դեպի հարևան կտուրը նայող լուսամուտին, կանգնեց դրա առաջ, թախծոտ նայեց դուրս:

«Ի՞նչ ես ուզում կյանքից, ագահ… Ինքդ էլ չգիտես: Բոլորն ուրախանում են, սիրում, սիրվում, զբոսնում, բոլորը մարդիկ են, իսկ դու… դու գրող ես: Երևակայում եմ, թե ինչպիսի գրող ես դու…»:

«Բայց ինչո՞ւ է այդպես դասավորվում, Արամայիս… Աշխարհի համարյա բոլոր մեծ գրողները, նաև մյուս արվեստագետները, եղել են դժբախտ, և մեծ գրող դառնալու այդ անհրաժեշտ նախապայմանն ունես նաև դու… Ճիշտ է, դա առայժմ քո ունեցած միակ նախապայմանն է, բայց ի՞նչ արած, գոհացիր դրանով: Ագահ, ագահ…»:

«Դու մինչև հիմա խանդում ես Ցողիկին Մուրադի նկատմամբ: Ինչո՞ւ ես խանդում, չէ՞ որ դու չես սիրում նրան: Բայց դու մտածում ես՝ ախր նա իմ մանկության ընկերուհին էր, իմ էության մի մասը, և հանկարծ՝ ուրիշի հետ… Իսկապես, դու այդտեղ իրավացի ես, Արամայիս: Տարօրինակ է տեսնել քո մանկության ընկերուհուն, քո Ցողիկին՝ ուրիշի հետ շրջելիս, շշնջալիս… Դրա մեջ դու տեսնում ես ինչ-որ անարդարություն, որը և, մերթ-մերթ, գազազեցնում է քո մեջ խանդը: Դու վրեժխնդրորեն մտածում ես, ավելի շուտ՝ մտովին խոսում քո մոտիկ ընկեր Մուրադի հետ.— խոսիր Ցողիկի հետ ինչի մասին որ ուզում ես՝ քո և նրա համատեղ անցկացրած երեկոյի, ամբողջ նախորդ օրվա, անցած ամսվա, վեց ամսվա, բայց քո և նրա համատեղ անցկացրած մանկության մասին դու չես խոսել, որովհետև

այդպիսի բան գոյություն չի ունեցել, այդտեղ արդեն Ցողիկն իմն է և իմն էլ կմնա, և չկա աշխարհում և ոչ մի ուժ, որ կարողանա խլել ինձանից նրա մանկությունը և տալ քեզ: Բայց… բայց եղեք երջանիկ, ձեր հերն անիծած, չէ՞ որ երկուսիդ էլ սիրում եմ ես…»:

«Իսկ Աստղիկին, Աստղիկին… Դու նրան էլ ես խանդում նրա սիրած տղայի նկատմամբ: Ծիծաղելի չէ՞: Չէ՞ որ դու Աստղիկին բոլորովին էլ չես սիրել ոչ մի րոպե: Դեռ հազիվ ծանոթացած իրար հետ, դուք դարձաք եղբոր և քրոջ նման մտերիմներ: Եվ հանկարծ, լսելով, որ նա սիրահարված է, դու իսկույն խանդեցիր նրան… Ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով: Եվ հազար ու մի ապուշ մտքեր են գալիս գլուխդ.— եթե ես ուզենայի՝ մեր ծանոթության հենց առաջին օրը նա իմը կլիներ, որովհետև հավանեց ինձ և տրամադիր էր իմ նկատմամբ: Դե ի՞նչ, կեցցես դու, որ այդպիսի անդիմադրելի հմայք ունես քո չնաշխարհիկ գեղեցկությամբ և այլ հատկություններով: Բայց դրանից ի՞նչ, որ նա սկզբում հիմարություն ունեցավ հավանել քեզ որպես տղայի: Հո նա ինքը շուռ չտվե՞ց ձեր փոխհարաբերությունները եղբոր-քրոջ հունով, այդ դու ինքդ շուռ տվեցիր: Էլ ո՞ւմ վրա ես փրփրում, որ նա օրեցօր գեղեցկանում է և շուտով դառնալու է ուրիշի կինը և ոչ թե քոնը: Իսկ քեզ

թվում է, թե այդ քեզ են թալանում ուրիշ երիտասարդները, մեկ առ մեկ խլում են քեզանից քո բոլոր աղջիկներին: Քո... Քո Ցողիկին, քո Աստղիկին, քո Ռոկլանային...»:

«Բայց ի՞նչ ծիծաղելի վիճակի մեջ ընկար դու Ռոկլանայի նկատմամբ... Տե՛ղն է քեզ: Զզվում էիր նրանից, խուսափում, իսկ երբ նա ինքն էր որսում քեզ ու սեր բացատրվում, դու սարսափած նայում էիր նրա կաշվե պիջակին ու կոպիտ վիրավորում դրա մեջ գտնվող «արարածին»: Գրո՛ղ... Գրող, որը չի կարողանում ներթափանցել հասարակ կաշվե պիջակից, բայց ուզում է թափանցել կյանքի բարդ երևույթների խորքը... Իսկ երբ դու առաջին անգամ տեսար նրան աղջկա իր ամբողջ փայլի մեջ՝ գիշերը մինչև լույս չկարողացար քնել, առանց հասկանալու՝ սիրահարվածությունի՞ց էր դա, թե՞ անակնկալից: Եվ այդպես էլ, առանց հասկանալու, հենց հետևյալ օրը գտար նրան, ներողություն խնդրեցիր անցյալում քո հասցրած բոլոր վիրավորանքների ու դառնությունների համար և... և սեր բացատրեցիր նրան… Իսկ նա,— կեցցես, Ռոկլանա,— վերցրեց ու մերժեց քեզ: Մերժեց կանացիորեն մեղմ, բայց տղամարդուց էլ ավելի վճռական: Սիրում էր քեզ, բայց մերժեց: Ճիշտ վարվեց, տե՛ղն էր քեզ, մի՞թե կարելի էր այդքան վիրավորել աղջկան, որքան որ դու էիր վիրավորել նրան՝ երկար ժամանակ... Մի շաբաթ հետո դու նորից սեր բացատրեցիր նրան, մի ամիս հետո՝ նորից, դու նույնիսկ,— ամոթ է հիշելը,— լաց եղար մի անգամ, բայց նա մնաց անդրդվելի: Ոչ, նա չէր չարախնդում կամ խրախճում իր հաղթանակը, նա շատ բարի և լավ աղջիկ է, նրա հոգում չկա այդպիսի դաժանություն: Նա միայն գլուխն էր օրորում բացասաբար՝ ակնհայտորեն մեծ ճիգով պայքարելով իր հետ, հաղթահարելով իրեն: Իսկ դու ավելի և ավելի էիր բորբոքվում նրա նկատմամբ, աղաչում նրան, պաղատում, ասում հազար ու մի ջերմ խոսքեր... Քեզ թվում էր, թե նա աշխարհի ամենալավ աղջիկն է: Աշխարհը թողնենք մի կողմ, դու դեռ հարյուր տոկոսով ծանոթ չես դրան, բայց որ ոչ Լենինականում և ոչ էլ Երևանում դու չես տեսել այդպիսի գեղեցիկ աղջիկ՝ ներառյալ նաև Ցողիկին՝ դա փաստ է: Ամբողջ Կոոպերատիվ տեխնիկումը սիրահարված է նրա վրա, իսկ մի երիտասարդ պրոֆեսոր, համալսարանից, ըստ լուրերի, շատ մտերիմ է նրա հետ... Եվ նորից՝ քո ամենապարփակ խանդը... Ախր ինչի՞ համար է դա: Չէ՞ որ դեռևս վեց ամիս սրանից առաջ, երկու ամսվա «սիրո» տանջանքներից հետո, դու քեզ համար վերջնականապես պարզեցիր, որ չես սիրում Ռոկլանային: Չես սիրում նույնիսկ Ռոկլանային... Այդ արդեն դառնում է զավեշտական: Բայց, ինչ էլ որ լինի, դու պարզեցիր, որ այն, ինչը որ սկզբում քեզ թվում էր սեր, դուրս եկավ պարզապես հիացմունք՝ անակնկալից ուժգնացած: Դու մինչև հիմա էլ, իհարկե, հիացած ես նրանով, բայց սիրել կարող ես միայն ուրիշ աղջկա: Իսկ թե ում՝ ինքդ էլ չգիտես…»:

«Ոչ, դու գիտես, թե ում, բայց սարսափում ես հանձն առնել դա քո առաջ, որովհետև նա ամուսնացած կին է, քեզ նման մի երիտասարդի կին, և նա սիրում է իր ամուսնուն, երեխային: Ինչպե՞ս չես ամաչում, կոմերիտական... Բայց ինչո՞ւ ամաչել: Մի՞թե դու որևէ կերպ արտահայտում ես քո զգացմունքը: Ոչ ոք չգիտե այդ մասին՝ բացի Ցողիկից ու Աստղիկից, իսկ նրանց էլ դու մատնել ես քեզ՝ հենց առաջին օրը: Հիմա, իհարկե, դու այդ չէիր անի: Բայց դու նրանց երդվեցրել ես՝ չասել այդ մասին ոչ ոքի: Եվ չգիտե նրանցից բացի ոչ ոք...»:

«Ինչո՞ւ համար են մարդիկ ծնվում այդքան անկրկնելի… Աշխարհում գոյություն ունի երկու միլիարդից ավելի մարդ և նրանցից ոչ մեկը մյուսին նման չէ: Ճիշտ է, երբեմն երկու մարդ կարող են թվալ խիստ նման, բայց երբ դու ավելի մոտիկից ես սկսում ճանաչել նրանց, նմանության պատրանքն անցնում է իսպառ: Երանի լիներ Մանուշին նման մի ուրիշ աղջիկ: Ի՞նչպես կսիրեիր դու նրան...»:

«Բայց սպասիր: Աշխարհում կա երկու միլիարդից ավելի մարդ, բայց նշանակո՞ւմ է դա արդյոք, որ կա այդքան էլ «տեսակ»: Որքան էլ որ ամեն մարդ ինքնուրույն լինի և անկրկնելի, մի՞թե նրանց մեջ չկան ընդհանուր գծեր, միթե նրանք չեն բաժանվում «տեսակների»: Ի՞նչ տեսակ աղջկա ես սիրում դու, Արամայիս: Ասենք՝ շիկահեր, կամ թուխ...»:

«Բայց մի՞թե հարցն այդ է՝ շիկահեր կամ թուխ: Համենայն դեպս՝ դա ամենակարևորը չէ: Ապա, Արամայիս, որոշիր ամենակարևորը, որոշիր, թե ինչ տեսակ աղջկա կարող ես սիրել դու, այլ կերպ ասած, ինչո՞ւ ես սիրում դու Մանուշին...»:

«Երբ մենք ասում ենք՝ «սեր», մեզ հաճախ թվում է, թե խոսում ենք մի այնպիսի զգացմունքի մասին, որ միևնույնն է ամեն տեղ և ամեն ժամանակ: Բայց դա այդպես չէ: Սերը բարդ զգացմունք է և ունի բազմաթիվ վարիանտներ: Մեկի սերը հավասար է գեղեցկության պաշտամունքի, մյուսինը՝ համակեցության պահանջի, երրորդինը... Բայց ինչո՞ւ թվել սիրո հազար վարիանտները: Դու այն ասա, թե ո՞րն է քո սերը, Արամայիս...»:

«Քո սերը, Արամայիս, բաղկացած է հովանավորության զգացմունքից: Դու՝ կարող ես սիրել մի այնպիսի աղջկա, որն զգա քո կարիքը որպես իրենից ավելի ուժեղի, խելոքի, համարձակի, մի խոսքով՝ տղամարդու: Այդ աղջիկն ըստ երևույթին փոքրամարմին է, նիհար, նույնիսկ հիվանդոտ, նա դեռ բավական անուսում է, աղքատիկ հագնված, խեղճ… Դու նրան վերցնում ես տղամարդու քո թևի տակ, գուրգուրում ես նրան, պաշտպանում աշխարհի բոլոր հողմերից ու պատահարներից, և տեսնում ես, թե ինչպես նա փոխվում է քո աչքի առաջ, քո ջանքերով, քո սիրո ուժով... Նա դառնում է առողջ, գեր, աշխույժ, համարձակ, նա ստանում է հիանալի կրթություն, սկսում է հագնել շքեղ զգեստներ, ապրել քեզ հետ միասին բարեկարգ բնակարանում... Ինչպիսի՛ խնդությամբ է լցվում քո կոմերիտական հոգին, երբ դու նայում ես նրան և հպարտությամբ տեսնում նրա աճումը, քո «ձեռքի աշխատանքը»... Քո կինը «պատրաստ» է, բայց դու ինքդ ես «պատրաստել» նրան: Ահա հենց դրա համար էլ դու չես կարողանում սիրել սկզբանից անտի «պատրաստ» աղջիկների՝ Ցողիկի պես խորաթափանց ու խելոք, Աստղիկի պես կենսալի և աշխույժ, Ռոկլանայի պես մեծամարմին ու ինքնիշխան... Քեզ դուր են գալիս բոլոր այդ հատկությունները, բայց դու ուզում ես, որ քո սերը լինի ստեղծագործող սեր, որ դու ինքդ ածեցնես այդ բոլորը քո սիրածի մոտ՝ աշխարհից քշված խեղճ աղջկա...»:

«Կգա ժամանակ, երբ համաշխարհային պատերազմից, թուրքերի ջարդից, դաշնակների տիրապետությունից ծեծկված Հայաստանում չի մնա այլևս հնի որևէ հետք, չեն մնա նաև աշխարհից քշված խեղճ աղջիկներ: Քո խորհրդային հանրապետությունը, Արամայիս, իսպառ կսրբի նրանց վերջին արցունքները, աշխատանք կտա նրանց բոլորին, կբնակեցնի լուսավոր ու չոր բնակարաններում, կտա աշխարհի բոլոր բարիքները: Քո հանրապետությունը ղեկավարող կոմունիստական կուսակցությունը կդաստիարակի նրանց, կդարձնի պատրաստված ու կրթված քաղաքացիներ, համարձակ բնավորության տեր, աշխույժ, ճարպիկ, հնարագետ, և ուրախ, ուրախ, ուրախ,— բավական է հազարամյա մեր հայկական տխրությունը...»:

«Դե, ի՞նչ, այն ժամանակ մարդկանց միջից ինքն իրեն կանհետանա նաև սիրո այն վարիանտը, որն այժմ դու փայփայում ես քո կրծքի տակ: Չեն լինի աշխարհից քշված խեղճ աղջիկներ՝ չի լինի նաև սերը նրանց նկատմամբ: Խղճահարությունն ազնիվ զգացմունք է, բայց դա նաև ծանր, անտանելի զգացմունք է: Դրանից ազատագրվելու համար պետք է վերացնել աշխարհիս երեսից խեղճությունը...»:

«Արամայիս, Արամայիս, անտանելի մարդ... Դու կոմերիտական ես նույնիսկ քո սիրո մեջ... Քո այդ ազնիվ, վեհ, և այլն, և այլն զգացմունքի համար դու արժանի ես, որ ոչ թե քեզ սիրեն աղջիկները, այլ գոհունակություն հայտնի կոմերիտմիության Երևանի կոմիտեն՝ կցելով դա գործիդ...»:

Արամայիսը թախծոտ ծիծաղեց իր վրա: Համարյա թե դրանից հետո իսկույն Մուրադը շրխկոցով բաց արեց դուռը և բղավեց.

— Խլացե՛լ ես, ինչ է, ահա քանի անգամ կանչում եմ քեզ, և ոչ մի պատասխան: Մտածեցի՝ չլինի՞ թողել-փախել ես: Գնանք, Գառնիկն ու Լիլիան արդեն իջան փողոց…

Կան աշխարհում շքեղ քաղաքներ՝ պալատներով՝ բազմահարկ գեղեցիկ շենքերով, հսկայական փայլուն ցուցափեղկերով, ասֆալտապատ փողոցներով, հրապարակներով, շատրվաններով, պուրակներով… Եվ կան աշխարհում աղքատիկ քաղաքներ՝ Երևանի նման, որ ունեն միայն միհարկանի տներ՝ ըստ մեծի մասին հողաշեն, նեղ փողոցներ՝ կլոր քարերով սալահատակված, ծուռումուռ նրբանցքներ՝ ցեխով և լավագույն դեպքում փոշիով ծածկված... Դարեր շարունակ այդ քաղաքները չեն փոխում իրենց տեսքը և ինչպե՞ս կարող են փոխել, երբ ժողովուրդը՝ այնտեղ ապրող, մնացել է նույն չարքաշն ու հարստահարվածը... Փոփոխվում են միայն տիրողներն ու նրանց բնակարանները, սարդարի պալատին փոխարինում է նահանգապետի առանձնատունը, խաների «քյոշքերի» տեղակ կանգնում են առևտրականների «մյուլքերը»: Բայց մի՞թե կարող են քաղաքի տեսքը փոխել դրանք՝ հողաշեն ու միհարկանի տնակների ծովի մեջ միայնակ կանգնած…

Իսկ լավ ապրել, գեղեցիկ ապրել ուզում են ոչ միայն խաներն ու առևտրականները, այլև ֆահլաներն ու իրղադները: Ի՞նչ կարող են անել նրանք դրա համար, ոչ լավ ուտել, ոչ լավ հագնվել, ոչ լավ բնակարաններում ապրել... Եվ նրանք անում են այն, ինչ որ կարող են, նրանք դիմում են մեծ բնության օգնությանը, ծառեր են տնկում իրենց տնակների առջև և փոքրիկ բակերում:

Ի՞նչ է հարկավոր ծառին՝ փարթամորեն աճելու համար՝ մի քիչ հող և մի քիչ ջուր: Եվ նա աճում է աղքատի դռան մոտ այնպես, ինչպես հարուստի պարտեզում, աճում է այսօր այնպես, ինչպես աճել է հազար տարի առաջ և աճելու է հազար տարի հետո...

Բարի, գեղեցիկ, փարթամ բնություն... Նայում ես Երևանին Քանաքեռի բարձրավանդակից և աչքդ հիանում է նրա տեսքից: Բուսականության մեջ թաղված քաղաք, երկրային դրախտ…

Բայց դու իջնում ես բարձրավանդակից, մտնում «քուչաներն» ու նրբանցքները, և սրտի ցավով տեսնում, թե ինչ խեղճություն է թաքցնում առատաձեռն բնությունն իր փարթամ ծածկոցի տակ... Ոչ թե հիացմունք, այլ թախիծ է առաջացնում Երևանն այժմ քո հոգում: Բնությունն այնտեղ կարծես նրա համար է, որ ավելի շեշտի կյանքի թշվառությունը, բայց շեշտի ոչ թե թշնամու նման, այլ հարազատ մոր, որն ասում է վշտահար ժպիտը դեմքին՝ «չէ՞ որ դուք կարող էիք շատ ավելի լավ ապրել, զավակներ, չէ՞ որ դուք կարող էիք ձեր ձեռքով ստեղծած կյանքով հասնել ինձ և գերազանցել ինձ... Եվ ես այն ժամանակ կզարդարեի ձեր Լենինի հրապարակը, ձեր Հաղթանակի այգին, Կոմերիտմիության այգին, Պիոներների հանգստի և կուլտուրայի այգին, ծառերով ու թփերով, ծաղիկներով ու սեզով կհագեցնեի ձեր ընդարձակ բակերը, իմ կանաչ ժապավենները վար կիջնեին Աբովյան փողոցն ի վար, բոլոր մյուս փողոցներն ի վար, և Երևանի վարդագույն ու նարնջագույն շենքերը կմրցեին իմ կանաչության հետ...»:

Միայն Հրազդանի ձորում, որն ընկած է քաղաքից դուրս, դրա եզրին, չկա բնության այդ թախիծը, որովհետև չկան այնտեղ շենքեր և չկա կոնտրաստ: Համարյա վայրենի բնությունն է տիրապետում այնտեղ: Ճիշտ է, աշխարհ տեսած մարդու հոգում դա ևս կառաջացնի թախիծ, կառաջացնի կարոտ՝ տոփանված ճեմուղիների, շքեղ սանդուղքների, կամրջակների, զրուցարանների, խաղերի հրապարակների և այլն և այլն, բայց մի՞թե աշխարհ տեսած մարդիկ են Գառնիկն ու Մուրադը, Աստղիկն ու Մանուշը և բոլոր այն մյուսները, ովքեր ամեն կիրակի քաղաքի բոլոր կողմերից հոսում են դեպի Կոնդի բլուրը, բարձրանում են դրա վրա և անցնելով նեղ փողոցներով, իջնում են մյուս լանջն ի վար՝ ձորում անցկացնելու համար իրենց կիրակնօրյա հանգիստը:

Հրազդանի ձորում անհամեմատ ավելի զով է, քան քաղաքում: Խելահեղորեն աճած ծառերի սաղարթների տակ համարյա ցուրտ է: Հրազդանը, որ գալիս է հեռու սարերում ընդարձակորեն փռված հեքիաթային Սևանա լճից, այդ ձորում հոսում է քարերով ու ժայռերով լի ոլործուն հուներով: Լեռնային գետակի սրընթաց ջուրը, խփվելով բազմաթիվ քարաժայռերին, փրփրում է և խշշում: Գետը նման է լվացքի երկար տաշտի, որտեղ ջրի վրա դիզվել է սապոնի փրփուրը՝ կոհակ-կոհակ: Եվ ամբողջ ձորը թնդում է խշշոցից: Զգացվում է, որ նույն խշշոցն է կանգնած նաև վերին շրջադարձի ետևում, ներքին շրջադարձի ետևում: Երևանի ամբողջ երկարությամբ: Ջուրը, հարվածելով փոքր ու մեծ քարերին, առաջացնում է հսկայական քանակությամբ ջրափոշի, որը

բարձրանում է օդի մեջ: Այդ ջրափոշին աչքով տեսանելի չէ, բայց ինչպիսի՛ հաճույքով են զգում դրա ներկայությունն օդի մեջ մարդկանց թոքերը, որոնք ծծում են դա որպես առողջության խորհրդավոր էլիքսիր:

Գետի ձախ ափի վրա, քաղաքի կողմի, ձգված է զբոսանքի համար սարքված հողե ճանապարհ: Մյուս ափի վրա՝ կածաններ և ոտնահետքեր: Շրջում են մարդիկ այդ ճանապարհով ու կածաններով, և երբ նրանք թեքվում են աջ, ապա առյուծի նման փրփրաբաշ գետը նույնպես, գառան հեզությամբ, թեքվում է մարդկանց հետ աջ: Իսկ եթե ձախ՝ ուրեմն ձախ:

Լանջերը բարձր են՝ մինչև վերջ ծառերով ծածկված: Մարդկանց բազմաթիվ խմբեր նստած են թե ներքևում՝ ուղղակի ջրի պռունկին, թե ավելի վերևում՝ ճանապարհի եզրերին, թե լանջի ամբողջ լայնությամբ՝ ամեն տեղ: Նույնիսկ ամենաբարձրում երևում են մարդիկ, որոնք, սակայն, նստոտած չեն, այլ անցնում են գործնական քայլերով: Այդ արդեն քաղաքն է այնտեղ, դրա վերջին փողոցը:

Դիմացի լանջի վրա, շատ տեղերում, աճում են պտղատու ծառեր: Բայց դրանք արդեն մասնավոր այգիներ են, և զբոսնողները չեն կարող մտնել այնտեղ: Դրանցից յուրաքանչյուրում կանգնած են քարե փոքրիկ տնակներ, որոնք չեն երևում հեռվից, իսկ մոտիկից այնքա՜ն հաճելիորեն մերվում են շրջապատի հետ: Տնակի առջև դրված է թախտ, որի վրա փռված է գույնզգույն կարպետ: Կարպետ է փռված նաև ուղղակի գետնի վրա՝ լանջի թեքության մեջ հարթած մի փոքրիկ հրապարակի: Թախտի վրա քնած է մի ծերունի, գետնի վրա նստել են մի կին ու մի աղջիկ, որոնք կորկոտ են մաքրում ճաշի համար: Հավերը, կարպետի մոտ կանգնած, զգաստ հետևում են նրանց ձեռքերի շարժումներին և իսկույն վրա հասնելով, կտցահարում են նրանց նետած մոլասերմերը: Պատի տակ մի տղամարդ քթոցներ է նորոգում կիրակի օրով, անշուշտ համարելով, որ դա աշխատանք չէ, այլ «ձեռքի խաղ», հետևաբար և, «մեղք չէ»: Ծառերի տակ խաղ են անում երեք երեխաներ: Բոլորը ձորում զբոսնում են, իսկ այս ընտանիքն իր տանն է և պարզապես ապրում է:

Բայց ահա ևս մի շրջադարձ, և աչքիդ առջև կանգնում է անսպասելին, սքանչելին՝ Երևանի հիդրոէլեկտրակայանը: Բնությունը միանգամից քաշվում է աջ ու ձախ, և ձորի խողովակը, որն այդտեղ ընդարձակվել է կիսաշրջանաձև, աչքիդ է ներկայացնում ինդուստրիալ մի պատկեր: Կանգնած է լեռ քարից կառուցված բարձր շենքը՝ հսկայական լուսամուտներով: Գետի առաջը կտրված է երկաթբետոնե ոչ-բարձր ամբարտակով, որից ցած է թափվում արդեն օգտագործված ջուրը՝ փոքրիկ, բայց լայն ջրվեժով: Շենքի ետևում, ձորի լանջն ի վեր, բարձրանում են մեծ տակառի հաստություն ունեցող երկու կարմիր խողովակներ: Հրազդանի մի մասը, մարդու կամքով վերև հանած, հավաքվել է բարձրում մի մեծ ջրավազանի մեջ, որտեղից այդ երկու խողովակներով դիք իջնում է դեպի հիդրոկայանի շենքը, մտնում է դրա տակ, աշխատեցնում է տուրբինները և դուրս գալով կամարակապ ինչ-որ գետնուղուց, նորից թափվում է իր բնական հունի մեջ:

Շուրջը, շատ տեղերով, կանգնած են երկաթե սյուներ՝ շագանակագույն մեկուսացուցիչների ուսերով: Դրանցից զանազան կողմեր են ձգվել հաստ հաղորդալարեր: Կանգնած են էլի ինչ-որ օժանդակ շենքեր, գցված են ճանապարհներ, ափից-ափ տանող կամրջակ՝ ցածրիկ ջրվեժի վրա կախված, էլի բետոն, էլի երկաթ... Բարեկարգված է ձորի այդ ամբողջ հատվածը:

Մարդիկ այդտեղ ավելի շատ են, քան ձորի որևէ այլ մասում: Դա է ձորի ամենանշանավոր մասը: Երեխան անգամ գիտե Լենինի պատգամը՝ «Խորհրդային իշխանություն, պլյուս էլեկտրիֆիկացիա՝ հավասար է կոմունիզմի»: Եվ յուրաքանչյուրը գիտե նաև Լենինի մի այլ պատգամը՝ «Հայաստանին հարկավոր է խորհրդային իշխանություն և ոռոգում»: Եվ իրոք, ձորալանջի կես-բարձրության վրա, բետոնե հունի մեջ առնված, անցնում է Հայաստանի առաջին մեծ ջրանցքը…

Քաղաքն այդ ձորից չի երևում: Դա լանջի բարձրումն է և դրանից այն կողմ: Առավել ևս չի երևում այդտեղից ամբողջ Հայաստանը: Բայց ձորում շրջող մարդիկ գիտեն, տեսնում են, որ կոմունիզմը, սկսելով այդտեղից՝ հիդրոկայանից ու ջրանցքից, երկաթե լարերով հոսում է դեպի Իլիչի լամպերը,

դեպի արհեստանոցների ու փոքրիկ գործարանների մեքենաները, ջրանցքի հունով հոսում է դեպի խաղողի այգիներն ու բամբակի դաշտերը…

Եվ դեռ հարց է՝ ինչո՞ւ համար է իր կիրակի օրն այդ ձորում անցկացնում երևանցին՝ ավելի շատ բնությա՞նը մոտ լինելու համար, թե՞ կոմունիզմի կորիզին…

Հիդրոկայանի շուրջն աճել են նաև ծաղիկներ՝ բազմագույն, բազմաթիվ տեսակների՝ մարդկանց ձեռքով ստեղծված: Հիանալի ծաղկանոց՝ աղյուսագույն ճեմուղիներով, թիակնաձև մորուք ունեցող այգեպանով, որը, ջրցիրը ձեռքին, ջրում է ծաղիկները Հրազդանի ջրով: Ահա և… բայց ոչ, դրանք ծաղիկներ չեն, այլ ավելի գեղեցիկ ծնունդներ, դրանք մարդկանց երեխաներ են՝ խմբովին զբոսանքի ելած: Նրանք հագնված են տարբեր գույնի ու ձևի հագուստներ՝ թե տղա և թե աղջիկ: Եվ միայն տղաների միանման կարճ խուզած մազերն են մատնում, որ նրանք բոլորը միևնույն տեղից են՝ մանկատնից:

— Գառնիկ, ախպեր,— բղավում է նրանցից մեկը՝ վեր ցատկելով տեղից:

— Գառնիկ ախպեր, քեզ են կանչում,— գլխով ցույց է տալիս Մուրադը:

Նախկին «խուժանը» մոտ է վազում երիտասարդների խմբին և իր սպիտակ ու փափուկ ձեռքը մեկնելով, հերթով բարևում է նրանց: Նա ծանոթ է բոլոր չորսին էլ:

Նախկին «խուժանի» վերջնական անունն Աշոտ է, իսկ առայժմ, քանի դեռ փոքր է՝ Աշոտիկ: Նրա ետևից երիտասարդների խմբին է մոտենում տղաների մանկատան վարիչը՝ նա, որի հետ անցյալ տարի Գառնիկը կռվեց: Լիլիայի ամուսինն ու նա ջերմ բարևում են իրար և ժպտում:

— Ինչպե՞ս եք,— հարցնում է Գառնիկը: Հոգնակի դիմումը վերաբերում է ոչ թե վարիչին, այլ մանկատանը:

— Անցած տարվա քո կոթոցի վրա լավ ենք, վնաս չունի:

— Ամե՞ն կիրակի ես երեխաներին բերում Զանգու:

— Քոռ խո չե՞ս: Ամեն կիրակի:

— Քոռը դու ես: Իսկ մյո՞ւս օրերն ինչպես են անցնում:

— Նույնպես հետաքրքիր: Ղալաթ ես անում, որ կասկածում ես:

— Ղալաթը դու ես անում: Անցյալ օրն ինքնագործ խմբակի ելույթը լավ անցա՞վ:

— Ոչինչ:

— Ոչինչը դու ես, կարգին պատասխան տուր:

Աշոտիկը, որին շրջապատել էին Մուրադը, Արամայիսն ու Լիլիան, նորից մոտենում է իր «ախպորը», որն ստիպվում է երեխայի ներկայությամբ ընդհատել հաճոյախոսությունների փոխանակությունը մանկատան վարիչի հետ:

Հետզհետե խմբին են մոտենում նաև մյուս երեխաները: Նրանցից մի քանիսը հերթն իրարից խլելով մոտենում են Աշոտիկին և ինչ-որ բան են փսփսում նրա ականջին: Լսվում են միայն առանձին բառեր.— «Ի՞նչ կլինի… ասա ախպորդ… թող էլի… մի անգամ էլ… ի՞նչ կլինի… շատ ենք խնդրում…»:

Վերջապես Աշոտիկը դեմքի և մանավանդ աչքի մի փոքրիկ ակնարկով բարեխոսում է Գառնիկի մոտ: «Ախպերն» աչքով է անում՝ ի նշան համաձայնության: Լիլիան, որը նկատում է աչքերի այդ խաղը, բարկացած դիմում է ամուսնուն.

— Չհամարձակվես, Գառնիկ, հասարակական վայրում…

Բայց նա դեռ չի ավարտել իր խոսքը, երբ Գառնիկը հանկարծ կերպարանափոխվում է, նրա գլուխն իջնում է ներքև, ոտքերը փոխարինում են ձեռքերին, իսկ ձեռքերը՝ ոտքերին: Նա այնպիսի արագությամբ է վազում ճանապարհով դեպի դրա եզրը, որ ընկերները ծիծաղում են, իսկ երեխաները քրքջում են խելահեղ:

— Լավ, էլի մի նեղանա, Լիլիա քույրիկ ջան,— խնդրում է Աշոտիկը՝ ծիծաղն ընդհատելով:

Բայց Լիլիան ծիծաղում է բոլորից ավելի:

Մոտակայքում գտնվող մարդիկ բոլոր կողմերից թափվում են այդտեղ: Գառնիկը, ձեռքերի վրա վազելով, մոտենում է մի բարակ ծառի, մի ձեռքով բռնում է դրա բնից, ցնցում, կարծես ուզում է արմատահան անել: Երեխաների քրքիջը հասնում է իր գագաթնակետին, ուղղակի արցունք է ցայտում նրանց աչքերից:

— Եվ սա պիտի հայր լինի...— հանդիմանաբար մրմնջում է Լիլիան ինքնիրեն: Բայց Արամայիսը լսում է նրա խոսքերը:

— Ավելի լավ հայր չի կարող լինել, Լիլիա,— ասում է նա:— Տեսնո՞ւմ ես ինչքան է սիրում նա երեխաներին:

— Սուրիկո,— բղավում է մի փոքրիկ տղա իր ընկերոջը,— արի, շուտ, էստեղ ցիրկ են խաղում…

«Ցիրկ» բառի վրա Գառնիկը թուլանում է ծիծաղից, թուլանում են նրա թևերը և նա տապալվում է գետնին, մնում է կանաչի վրա բերանքսիվայր պառկած, և միայն նրա մեջքն է ցնցվում լուռ ծիծաղից՝ ինչպես մի ժամանակ Մուրադի փորը: Հետո նա վեր է կենում՝ միանգամից լրջանալով, թափ է տալիս ձեռքերը, հագուստները, և ուզում է ասել երեխաներին՝ «հերիք է, դե հիմի գնացեք», բայց նրանք առանց այն էլ արդեն գիտեն, որ ներկայացումն ավարտված է: Այժմ նրանք իրենք են գլուխկոնծի տալիս դեսուդեն՝ աշխատելով կանգնել գլխիվայր, ձեռքերի վրա: Դա հաջողվում է միայն մի տղայի, և այն էլ նրա համար, որ մի աղջիկ բռնել է նրա ոտքերը: Գառնիկը ծափահարում է: Երեխաները՝ նույնպես:

Երիտասարդների խումբն անցնում է հիդրոկայանի շենքից այն կողմ, մոտենում է այսպես կոչված մեծ ջրվեժին: Դա իրականում ջրվեժ չէ, այլ «ջրհոս»: Լանջի վերևից իջնում է երկաթբետոնե մի լայն տաշտակ՝ տափակ տակով և ցածրիկ կողերով: Այդ տաշտակով սովորաբար ցած է հոսում ջրաճնշիչ ավազանում կուտակված այն ավելորդ ջուրը, որը չեն կարողանում տեղավորել իրենց մեջ երկու կարմիր խողովակները: Իսկ այն օրերին ու ժամերին, երբ հիդրոկայանն ընդհատում է իր աշխատանքը, այդտեղով գահավիժում է վերևում կուտակված ամբողջ ջուրը:

Ջուրն այժմ «տաշտակում» շատ քիչ է, հազիվ է ծածկում հատակը մի բարակ շերտով, որը սակայն, կայծակի արագությամբ է սլանում ներքև, ինչպես թափանցիկ կտոր՝ գերարագ աշխատող գործվածքային հսկայական մի դազգահից: Ջրի այդ հար խաղացկուն շերտն անընդհատ գալիս և մտնում է ճանապարհի տակ, դուրս է գալիս մյուս կողմում և նորից թափվում իր մայր հունի մեջ: Երիտասարդները կանգնում են «տաշտակը» ճանապարհից անջատող երկաթաճաղերի մոտ և նայում ջրի անվերջանալի ժապավենին, որը գալիս և խելահեղ արագությամբ անհետանում է նրանց ոտքերի տակ:

Մեկը ետևից փակում է Մուրադի աչքերը: Մուրադը բռնում է նրա ձեռքերը, մոտեցնում է շրթունքներին և համբուրում: Արամայիսը շուռ է տալիս գլուխը: Նա չի կարողանում տանել սիրո զեղման այդպիսի տեսարաններ: Երբ դու անես նույնը՝ դա կթվա բնական, գեղեցիկ և այլն և այլն, բայց երբ ընկերդ է անում՝ քո մանկության ընկերուհու հետ՝ դա ուղղակի զզվելի բան է:

Արամայիսը շուռ է տալիս գլուխը, բայց այդ կողմում ևս, ավելի քաղցր չէ վիճակը: Կանգնել է լիակուրծք Աստղիկն իր Եղոյի հետ: Եղո… Եղիազար… Ինչ անճաշակ անուն… Եվ ընդհանրապես, ի՞նչ է գտել Աստղիկը նրա մեջ…

Արամայիսը կարմրում է զայրույթից ինքն իր վրա: Լռելո՞ւ ես վերջապես, սրիկա: Սրիկա նա անվանում է ոչ թե իրեն, այլ իր խանդը: Եղո՝ դա գուցե, իրոք, գեղեցիկ անուն չէ, բայց մի՞թե վատ երիտասարդ է Եղոն: Նա ոչ միայն վայելչակազմ է ու «բարակ մեջքով», այլև, որ ամենագլխավորն է, ունի որոշակի հմայք, բոլորը՝ ծեր, պառավ, երիտասարդ, երեխա՝ հավանում են նրան, իսկ Վարդանը՝ գուցե բոլորից էլ ավելի…

Արամայիսը ջերմ բարևում է նրան և Աստղիկին, ապա հոգատարությամբ հարցնում.

— Նախաճաշե՞լ եք:

— Խի՞ չէ,— զարմանում է Աստղիկը:

— Իսկ պաչվե՞լ եք:

— Խի՞ չէ,— ավելի է զարմանում Կոնդի իշխանուհին:

— Դե ուրեմն պոմադադ սրբիր Եղոյի երեսից…

Եղոն կարմրում է այնքան, որ Աստղիկը, թաշկինակը մոտեցնելով նրա այտին, չի կարողանում գտնել շրթնաներկի տեղը:

— Գնանք նստենք մի տեղ,— առաջարկում է Գառնիկը՝ մոռանալով զոքանչի հրամանը՝ Լիլիային քայլեցնել տալու մասին:

— Սպասիր,— ձեռքով է անում Մուրադը,— ես Ազատի հետ պայմանավորվել եմ հանդիպել հիդրոկայանի շենքի մոտ: Հիմի ուր որ է կգան:

Ցողիկը մոտենում է Արամայիսին:

— Ինչպե՞ս ես ապրում, Վարդանչիկ, սիրելի, մի շաբաթ է, որ չեմ տեսել քեզ:

— Ոչ թե Վարդան, այլ Արամայիս:

— Ոչ, Վարդանչիկ, ում համար էլ որ դու Արամայիս լինես՝ ինձ համար և քո մոր համար միշտ էլ Վարդան ես: Ինչպե՞ս է մամադ:

— Շուտով փոխադրում եմ Երևան, ինձ մոտ: Սենյակ եմ փնտրում: Իսկ քո՞ մաման:

— Իմ մաման… Ուրեմն, քույրս վերջնականապես ամուսնացել է և նույնիսկ ուզում է երեխա ունենալ: Մամային տարել է իր մոտ և թույլ չի տալիս այլևս զբաղվել այն բանով… առևտրով:

Մաման հիմա Լենինականումն է: Եկել է վաճառելու մեր իրերը: Ինձ նամակ է գրել, թե ի՞նչ պահի ինձ համար, իսկ ես պատասխանեցի, որ ոչինչ չեմ ուզում հին տնից, և որ ես ու Մուրադն ամեն ինչ նորից կսկսենք, դա ավելի հաճելի է: Նա շուտով գալու է Երևան՝ Մուրադին տեսնելու…

Վարդանը լուռ էր: Ցողիկը, դեմքի ցավակցական, միաժամանակ նաև ծաղրական արտահայտությամբ, իր ձեռքը դրեց ընկերոջ ձեռքի վրա: Որքա՜ն լավ է հասկանում Ցողիկն Արամայիսին: Խանդել առանց սիրո… Մի՞թե դա տրագիկոմեդիա չէ…

Արամայիսը հասկանում է ցավակցության ծաղրական լինելը, բարկանում է և ուզում է վարձահատույց լինել, բայց վրա է հասնում գիտակցությունը.— «Տեղն է քեզ. ծիծաղելի ես՝ ուրեմն թույլ տուր, որ ծիծաղեն վրադ»:

Նա ասում է գործնական տոնով.

— Իհարկե, դու ճիշտ ես որոշել՝ վաճառել բոլոր իրերը: Պետք է լիկվիդացիայի ենթարկել անցյալը՝ ինչպիսին էլ եղած լինի նա՝ լավ, թե վատ: Մոռանալ վատը, իհարկե, ավելի հեշտ է, քան թե լավը, բայց մոռանալ վերջինս գուցե ավելի կարևոր է... որպեսզի շարունակ ետ չնայես…

— Այո՛, այո՛, Վարդանչիկ: Ամեն մի իր ինի խտացումն է: Գոնե ինձ համար: Պապայի գրասեղանը՝ կոճղի պես հաստ ու ծանր, որի վրա նա իր գրքերն էր գրում... վեներական հիվանդությունների մասին: Կամ մամայի «գարդերոբը» ֆրոնտոնով, քիվերով, տրիգլիֆներով, կանելյուրային սյունիկներով…

— Իսկ…

Արամայիսը կանգ առավ, ճիգ գործադրեց իր վրա և շարունակեց ավելի անտարբեր տոնով.

— Իսկ մեր օղակնե՞րը…

— Գիտե՞ս ինչ,— նույնպիսի անտարբեր է նույնիսկ զվարթ տոնով, պատասխանեց Ցողիկն իսկույն՝ կարծես սպասելով այդ հարցին և վաղուց պատրաստ ունենալով դրա պատասխանը,— գիտե՞ս ինչ, ես նամակում գրել եմ մամային, որ նա թաղի դրանք մեր պարտեզում՝ վարդի թփերի մնացորդների տակ...

Ոչ, շատ էր զվարթ և շատ էր անտարբեր Ցողիկի տոնը՝ բնական լինելու համար: Եվ որքա՜ն անհարիր էր այդ տոնը խոսքերի բովանդակությանը... Ինչո՞ւ կեղծել երկուստեք, և ո՞ւմ առաջ…

Ցողիկն ու Արամայիսը մի պահ լուռ, թախծոտ, խոնարհեցին իրենց գլուխները: Գուցե այդ րոպեին Ցողիկի մայրը Լենինականում հողին էր հանձնում իր աղջկա և հարևանի տղայի մանկությունը և այժմ նրանք պատվո տուրքն էին տալիս այդ տխուր արարողությանը... Գնաս բարով, սիրելի, անդառնալի մանկություն, դու ծնվել էիր այդտեղ, այդտեղ էլ հող դարձիր…

— Էս էլ՝ Ազատն ու Մանուշը,— բացականչեց Մուրադը:— Ախր ասացի՝ շուտով կերևան: Դե հիմի գնանք՝ ուր որ ուզում եք:

Լենդրոշին գրկել էր Ազատը: Մանուշը ձեռքում բռնել էր երեխայի վերնազգեստը և մի փոքրիկ շիշ ջուր: Նա հագնված էր շատ լավ, և Ազատն իր հնամաշ հագուստով թվում էր նրա ոչ թե ամուսինը, այլ ծառան: Լավ հագնվել երկուսով՝ նրանց միջոցները չէին ներում, և Ազատը, ինքնամոռացության աստիճան սիրելով կնոջն ու երեխային, հագցնում և զարդարում էր նրանց: Դա միակ հողն էր, որի վրա հաճախ վիճում էին ամուսինները և երբեմն նույնիսկ խռովում իրարից, բայց ամեն անգամ Ազատին հաջողվում էր հաղթել և հերթականգնումը կատարել ոչ թե իր համար, ինչպես Մանուշն էր պնդում, այլ՝ նրա:

Մանուշը փթթուն տեսք ուներ, թեկուզև դեռ բավական նիհար էր: Ըստ երևույթին նա երբեք շատ գեր չէր լինելու, ըստ երևույթին, նիհարկոտությունը նրա կազմվածքի մշտական կեցությունն էր, բայց այժմ դա ոչ թե անառողջ, այլ կենսալի նիհարկոտություն էր:

«Այո, այո... Ես էլ ճիշտ այդպես կսիրեի նրան... այսինքն՝ իմ կնոջը... Կհանեի մի օր նրա հնամաշ տուֆլիները և կհագցնեի նորերը: Եվ այդ օրը տոն կլիներ ինձ համար: Ես ամեն օր իմ ձեռքով կկերակրեի նրան՝ ինչպես երեխայի, և կտեսնեի, թե ինչպես օրեցօր կազդուրվում և լավանում է նա: Եվ իմ կյանքի յուրաքանչյուր օրը տոն կլիներ ինձ համար...»:

Ազատն ու Մանուշը, ըստ իրենց սովորության, մեկառմեկ սեղմեցին բոլորի ձեռքերը ջերմ բարևով: Արամայիսը երկու ձեռքով բռնեց երիտասարդ ամուսնու ձեռքը, ցնցեց մի քանի անգամ, կարծես լուռ շնորհակալություն էր հայտնում, որ նա այդպիսի լավ ամուսին է Մանուշի համար… Բայց երբ Մանուշն ինքը մոտեցավ լենինականցուն, վերջինս սառնությամբ հազիվ իր մատները դիպցրեց նրա ձեռքին և գտնելով ինչ-որ պատրվակ, իսկույն շուռ եկավ:

Մանուշը զսպեց իր ծանր հոգոցը: Նա վաղուց արդեն համոզվել էր, որ Արամայիսը չի սիրում ոչ թե ընդհանրապես բոլոր կանանց ու աղջիկներին, այլ միայն իրեն... Ի՞նչ վատ բան է արել Մանուշն այդ տղային... Եվ բոլորը նկատում են նրա վերաբերմունքը, իսկ Ազատը հաճախ ասում է կնոջը.— «Արամայիսը հիանալի տղա է, բայց որ քեզ չի սիրում՝ դա կպչում է սրտիս...»:

Մանուշը չգիտե, որ նույն այդ պատճառով Մուրադն ու Գառնիկը հաճախ բարկանում են իրենց ընկերոջ վրա, կռվում հետը, իսկ նա ավտոմատիկ նույնությամբ կրկնում է ամեն անգամ.— «Չեմ ատում, բայց չեմ էլ սիրում»:

— Բայց դուք բավական ուշացաք,— նկատողություն արեց Մուրադն ամուսիններին:

— Ունենք հարգելի պատճառ:

— Գիտեմ, գիտեմ, ձեռքը թափ տվեց շինարար բանվորը,— էդ հարգելի պատճառից շուտով կունենան նաև Գառնիկն ու…

Լիլիան կսմթեց Մուրադի թևը՝ սաստելով լռել, բայց ի՞նչ է կսմթոցն այդպիսի արջի համար: Նա հանգիստ ավարտեց իր նախադասությունը:

— Ոչ, էս անգամ պատճառն ուրիշ էր: Մենք շուտ ենք եկել ձորը, բայց էստեղ հանդիպեցինք ընկեր Սանթուրյանին:

— Հլա ղո՞րթ...— թերահավատ բացականչեց Աստղիկը:

— Էն է,— ձեռքով արեց Ազատը դեպի ձորն ի վար, նստած է Ծիծեռնակաբերդի դիմաց, էս ափի վրա: Էդ կողմ գնալիս գնանք հանդիպենք բոլորովս:

— Էլի մենա՞կ է,— հետաքրքրվեց կոնդեցի աղջիկը:

— Իհարկե: Հարցնում եմ՝ «ի՞նչպես եք, ընկեր Սանթուրյան»: Ասում է՝ «շատ լավ եմ»: Հարցնում եմ՝ «ինչո՞ւ եք մենակ նստել»: Ասում է՝ «նայում եմ ձեզ բոլորիդ և ուրախանում»: Ճիշտ է, նա ուրախ էր, բայց տխուր էլ էր:

— Ափսոսում է իր կորցրած երիտասարդությունը,— բացատրեց Մանուշը:

— Էհ, դուք էլ մարդ չեք,— սրտնեղված բացականչեց Աստղիկը բոլորի հասցեին:— Չկարացիք, թե ընկեր Սանթուրյանին մի կնկա հետ նշանեիք: Ազնիվ կոմերիտուհու խոսք,— նա ձեռքը դրեց իր կրծքի հեռավոր գագաթին ամրացված Կիմի վրա,— թե Եղոն չըլեր, ես ինքս կառնեի ընկեր Սանթուրյանին…

— Է՛յ, է՛յ,— սթափեցրեց նրան Եղոն:

Բոլորը ծիծաղեցին:

— Վա՛,— զարմացավ աղջիկը,— բա չլսեցի՞ր, ասացի՝ «թե Եղոն չըլներ»: Բայց դու խո ըլե՞լ ես:

Սիրահարված աչքերով նայելով «կոնդեցուն», նայելով անվայելուչ կերպով տենչալի ու երկար, աղջիկն ասաց բարձրաձայն.

— Ցանի ես քու ի՞նչը հավանեցի... Ընչո՞վ ես դու մեր կոնդեցի մյուս տղերքից լավը: Հրեն, բոլորն ինձ համար կաղնած են, մի հատ որ շվացնեմ՝ չորս կողմից վրա կհասնեն: Կա-չկա՝ դու ընդրանց բոլորի մեջ ամենաբախտավորն ես:

— Իհարկե բախտավոր եմ,— համաձայնվեց Եղոն,— բայց որ ձենդ կտրես՝ ավելի բախտավոր կըլեմ: Դրանք տանն ասելու խոսքեր են, ոչ թե մասսայական ձորում...

Բոլորը ծիծաղեցին: Առանց նկատելու, նրանք արդեն քայլում էին ձորով դեպի վեր: Որքան ավելի էին հեռանում նրանք «կենտրոնից»՝ հիդրոկայանից, այնքան ավելի էին սակավանում զբոսնող մարդիկ: Այժմ երիտասարդների մոտով անցնում էին ոչ թե բազմամարդ հոսանքները, որոնց մեջ չես կարողանա դիտել յուրաքանչյուրին առանձին-առանձին, այլ հատուկենտ խմբեր կամ զույգեր, որոնց հետաքրքրությամբ նայում էին ընկերները: Բայց զբոսնողների փոխարեն այդտեղ ավելի շատ էին ծառերի տակ հանգստացողները կամ ճաշի նստածները: Մերթ այս ափի վրա, մերթ այն, ծառերի միջից բարձրանում էր փոքրիկ խարույկի հազիվ նկատելի ծուխը և տարածվում էր խորովածի հոտը: Մի քանի երիտասարդներ, չվախենալով ջրի ոչ սառնությունից և ոչ էլ արագ ընթացքից, լողանում էին գետի մեջ: Միայն նրանց մարմինների համեմատությամբ էր երևում, թե որքան մեծ էին ջրից դուրս ցցված ժայռերն այդտեղ և որքան խորն էր ջուրը՝ գոտկատեղից հետ:

Արամայիսը քայլում էր խմբի հետ, բայց բոլոր խոսակցություններին անհաղորդ, լուռ: Նա սովորականի պես թախծոտ էր ու մտածկոտ, բայց նրա ընկեր-ընկերուհիներից ոչ ոք չէր հարցնում պատճառը: Թախիծն ու մտածկոտությունը նրանք պարզապես բնական վիճակ էին համարում գրողի համար:

Արամայիսի հայացքը սահում էր ամեն ծառի ու քարի, նստած կամ անցնող ամեն մարդու վրայով: Նա և՛ նկատում էր դրանք և դրանց, և՛ չէր նկատում: Իսկ եթե նա ուշադրություն դարձրեց դիմացից եկող մի աղջկա վրա, ապա լոկ այն պատճառով, որ նա գալիս էր միայնակ: Միայնակ տղա Հրազդանի ձորում՝ դա դեռ հասկանալի էր, բայց միայնակ աղջիկ... Ըստ երևույթին, նա կորցրել էր իր խումբը կամ խռովել էր ընկերոջից և վերադառնում էր տուն:

Աղջիկը փոքրամարմին էր, հագնված խիստ կոկիկ, բայց և խիստ աղքատիկ: Կարելի էր կռահել, թե ինչպիսի հոգ էր տանում նա իր հագուստին ու ոտնամաններին, որպեսզի դրանք ծառայեին երկար ժամանակ: Նա ուներ գեղեցիկ, առատ մազեր, որոնք սակայն, դարսված էին ինչ-որ անճաշակ մազահարդարով և ամրացված էին երեք սանրերով: Նա մի ձեռքով բռնել էր իր մյուս ձեռքը, սեղմել էր կրծքի տակ, համարյա փորի վրա, և այդպես էր քայլում: Դա խեղճ պոզա էր, վշտահար պոզա, կարծես նա բան էր կորցրել և գտնելուց հուսահատված, ձեռքերն էր կոտրատում կսկիծով:

Արամայիսը նայեց նրա դեմքին և մի անսահման կարեկցանք համակեց նրան: Աղջիկն ուներ այնպիսի երկչոտ տագնապած հայացք, կարծես բոլորից, ովքեր նայում էին նրան, նա որևէ վատ բան էր սպասում և աղերսում էր չանել այդ վատ բանը: Նա գեղեցիկ աղջիկ էր, և ո՞ր աղջիկը գեղեցիկ չէ այդ տարիքում, բայց որքան էր տուժում այդ գեղեցկությունը մաշկի անառողջ գունատությունից և այտերի ներս ընկած լինելուց, որոնք, անկասկած, թերասնվելու հետևանք էին:

Աղջիկը նկատեց Արամայիսի անթարթ հայացքը՝ իր վրա հառած, նրանց հայացքները մի պահ հանդիպեցին, և այդ կարճ պահում լենինականցին աղջկա աչքերում կարդաց ինչ-որ հանկարծակի տագնապ: Նա արագ շուռ տվեց հայացքը՝ հանգստացնելու համար աղջկան, որ ոչինչ չէր սպառնում նրան՝ ոչ անպատկառ հետապնդում, ոչ անվայելուչ խոսք, ոչ աչքի երկիմաստ թարթում... Բայց երբ աղջիկն անցավ խմբի մոտով, Արամայիսը շուռ եկավ և երկար նայեց նրա ետևից, մինչև որ նա ծածկվեց շրջադարձի ետևում:

Արամայիսն սթափվեց, ետ դարձավ և ուզում էր հասնել ընկերների խմբին, բայց կանգ առավ անակնկալի եկած: Խումբը, որը, նա համոզված էր, ոչինչ չէր նկատել և շարունակում էր քայլել, լուռ կանգնած էր այդտեղ: Բոլորը նայում էին Արամայիսին: Եվ ոչ մեկի աչքերում չկար ծաղր, ոչ մեկը չէր պատրաստվում ծիծաղել նրա վրա՝ աղջկա ետևից այդքան երկար նայելու համար: Գուցե նրանք լուրջ բա՞ն էին տեսնում տղայի այդպիսի վարմունքի մեջ, գուցե ողջունո՞ւմ էին այդ լուրջ բանը, որպեսզի Գառնիկի ու Լիլիայի, Ազատի ու Մանուշի, Մուրադի ու Ցողիկի, Աստղիկի ու Եղոյի հետ քայլող իրենց ընկերը չմնար այլևս այդպես մենակ…

Արամայիսը շփոթվեց անակնկալից, շփոթվեց սիրով ու հոգատարությամբ լի նրանց հայացքից և ասաց այն, ինչը չպիտի ասեր ոչ մի դեպքում, և ինչի համար նա խորապես զղջաց իսկույն…

Դա դուրս եկավ ինքնաբերաբար: Եվ այնպիսի սեր ու կարոտ կար նրա խոսքերի մեջ, որ հասկանալ դրանք մի ուրիշ կերպ՝ անկարելի էր:

— Որքա՜ն նման էր նա Մանուշին...

Ազատի կինը կաս-կարմիր կտրեց և երեխայի վերնազգեստով ծածկեց իր երեսը՝ միանգամից հասկանալով այն, ինչ նա չէր հասկացել ամիսներ շարունակ:

Ազատը նայեց լենինականցուն՝ թե՛ խորը կարեկցանքով ու հարգանքով նրա անհույս զգացմունքի հանդեպ, թե երախտագիտությամբ՝ ամիսներ շարունակ նրա պահպանած ազնիվ լռության համար, և թե՝ նկատելի խանդով:

Գառնիկն ու Մուրադը նայում էին իրար և առաջին անգամ իրենց երեքի ընկերության ընթացքում չէին բարկանում Արամայիսի վրա՝ իրենցից գաղտնիք պահած լինելու համար: Ընդհակառակը, նրանք շատ կուզենային, որ դա այդպես էլ մնացած լիներ գաղտնիք և երբեք դուրս չթռչեր նրա անզգույշ շրթունքներից:

Եղոն աչքերն էր արագ-արագ փոխադրում Արամայիսից Մանուշի և Մանուշից Արամայիսի վրա, իսկ Աստղիկը, սեղմելով նրա ձեռքը, հասկացնում էր, որ նա անխղճորեն սխալվում է, փոխադարձության մասին խոսք անգամ չի կարող լինել այստեղ, և որ «այդ մասին» ոչ ոք ոչինչ չգիտեր, այդ թվում նաև Մանուշը:

Լիլիան ամոթահար կախել էր գլուխը, կարծես իր հետ էր կատարվել այդ անհարմար պատմությունը: Եվ միայն Ցողիկն էր, որ չէր շփոթվել և այժմ փնտրում էր դրությունը փրկելու միջոց:

— Բոլորովին էլ նման չէ,— բացականչեց նա վերջապես:— Եթե նման լիներ՝ դու այդպես սիրհարված աչքերով չէիր նայի նրա ետևից:

Բոլորն իսկույն բռնեցին նրա նետած պարանը և սկսեցին միահամուռ հաստատել, որ այդ երկուսի միջև, իրոք որ, ոչ մի նմանություն չկա:

— Ես արտաքինի մասին չեմ ասում, այլ ներքին նմանության,— ասաց Արամայիսը՝ ինքն էլ աշխատելով ուղղել իրեն, բայց չհասկանալով, որ ավելի է խորացնում անհարմար վիճակը, քանի որ ոչինչ չի ժխտում, այլ հաստատում է և պնդում:

Դժվար էր ասել, թե ինչպես պիտի կոծկեին ընկերներն այդ խոսակցությունը, եթե չօգներ պատահականությունը:

— Արամայիս, Ռոկլանադ է գալիս, նայիր,— բացականչեց Մուրադը:— Եվ էլի պրոֆեսոր Բադյանի հետ:

Արամայիսն ինքն առաջինը բռնեց փրկության այդ ծղոտը: Ձևացնելով, թե խանդում է, նա ասաց վրդովված.

— Եվ ի՞նչ է գտել այդ բադի մեջ: Գոնե մի կարգին արտաքին ունենար:

— Իզուր ես վատաբանում,— ընդգծված վրդովմունքով ասաց Ցողիկը:— Դա խանդից է: Բադյանը շատ գեղեցիկ երիտասարդ է:

Բոլորը հարձակվեցին Արամայիսի վրա, հաստատեցին, որ նա անտարբեր չէ Ռոկլանայի նկատմամբ և դրա համար է փնովում նրա ուղեկցին: Արամայիսը դիտմամբ ձևացրած անհամոզիչ տոնով սկսեց ապացուցել, որ նա միանգամայն անտարբեր է, մազաչափ անգամ չի խանդում և այլն:

Բոլորը թեթևացած շունչ քաշեցին:

Ռոկլանան հագել էր առանց թևքերի զգեստ՝ ցուցադրելով իր լիքը թևերը՝ դեռ բոլորովին չարևակիզված, սպիտակ: Զգեստը պիրկ գրկել էր նրա բարձրահասակ, լիքը մարմինը: Մարմնագույն գուլպաները նույնպես, այնքան պիրկ էին գրկել նրա ամուր և գեղեցիկ ոտքերը, կարծես հարկ եղածից փոքր չափսի էին և աղջիկը զոռով էր քաշել դրանք իր ոտքերի վրա: Շրջազգեստի փեշերը կարճ էին, համարյա մինչև ծնկները: Դա ներելի է Ռոկլանային, նա արել էր ամեն ինչ՝ ընդգծելու համար այնքան տարիներ ճնշած իր գեղեցկությունը: Եվ միայն նրա պարանոցն էր դեկոլտեի փոխարեն համեստորեն ծածկված հագուստի նեղ օձիքով: Իսկ որ նրա փարթամ կուրծքն առաջ էր հրել ու ձգել զգեստի այդ վերին մասը, ի՞նչ կարող էր անել դրա հետ Ռոկլանան:

Աղջկանից ճառագում էր հագուստի, քայլվածքի, դեմքի արտահայտության մի այնպիսի կուլտուրա, որ Ցողիկը, աչք չկտրելով նրանից, նախանձ զգաց նրա հանդեպ: Աղջիկը գալիս էր բարձրակրունկ սև լաքե տուֆլիներով: Կարող էր անճաշակություն թվալ, որ նա կրեմագույն սպիտակ հագուստի հետ հագել էր այդ գույնի տուֆլիներ: Բայց ոչ, կոնտրաստը ճաշակավոր դարձնելու և ներդաշնակության հասցնելու համար նա կրում էր նաև սև լաքե պայուսակ, որն այժմ կոկետորեն հագել էր իր մերկ ուսի վրա: Ախ, աղջիկներ, հմայքի վարպետներ... Նա շատ լավ գիտեր, որ պայուսակի սևության ու փայլի համադրությունից շահում էր նրա թևի անփայլ սպիտակությունը: Նրա բաց-շագանակագույն մազերը, համարյա տղայի մազերի պես կարճ խուզված, բայց առատ, այնպիսի հաճելի անկանոնությամբ էին պատել նրա գլուխը, որ կարծես մի անվարժ վարսավիր էր խուզել դրանք կարճ ու երկար փնջերով, իրար վրա դիզված, ձգտելով միայն մի բանի՝ տալ դրանց ընդհանուրին կլոր ձև, աշխատելով, որ դրանք բոլոր կողմերից համահավասար առատությամբ պատեին աղջկա գլուխը:

Ռոկլանայի հետ քայլում էր իրոք որ շատ գեղեցիկ մի երիտասարդ՝ հիանալի կարված թանկագին մոխրագույն կոստյումով ու սև կիսակոշիկներով, գլխաբաց, միանգամայն շեկ գանգուրներով: Նա ակնհայտորեն գիտակցում էր իր գեղեցկությունը և մեծ հոգ էր տանում դրան: Այդպիսի երիտասարդները սովորաբար լինում են դատարկագլուխ, բայց բնությունն ըստ երևույթին նրան ստեղծել էր իր հարբած շռայլության մի պահին: Նա մեծ հույսեր ներշնչող գիտնական էր՝ այդ տարիքում արդեն պրոֆեսորի կոչում ստացած: Միաժամանակ նա ակտիվ կոմերիտական էր և ղեկավարում էր լենինիզմով պարապողների մի մեծ աուդիտորիա:

Ռոկլանան, ուշադիր լսելու համար գլուխը մի փոքր խոնարհած, դեմքի լուրջ արտահայտությամբ, լսում էր ուղեկցին՝ դանդաղ քայլելով, ուսին հագած պայուսակի կապը ձեռքով բռնած: Հավասարվելով երիտասարդների խմբին, նա գլխով թեթևակի բարևեց նրանց և առաջ անցավ: Դա կարող էր թվալ անտարբերություն կամ գոռոզամտություն նրա կողմից՝ եթե չլիներ նրա դեմքի և աչքերի այն մտերիմ արտահայտությունը, որը կարծես ասում էր՝ «բարև ձեզ, բայց սպասեցեք տեսնեմ սա ինչ է ասում, իսկ մենք հետո էլ կարող ենք տեսնվել ձեզ հետ»:

Բադյանը միայն մի կարճ հայացք նետեց դեպի երիտասարդները, որոնց հետ ծանոթ չէր, և շարունակեց իր խոսակցությունը Ռոկլանայի հետ:

Մուրադը, որն այժմ ինքն էր գրկել Լենդրոշին, մի քիչ տեղ գնալուց հետո մեկնեց նրան Գառնիկին և ասաց.

— Առ, պահիր: Քեզ հարկավոր է սովորել:

— Ի՞նչ ես ձեռ առնում մարդիս,— հարձակվեց նրա վրա Լիլիան:— Նա քեզ համար օբյեկտ չի:

— Տեսնո՞ւմ եք, ընկերներ,— գլխով ցույց տվեց շինարար բանվորը:— Ես սխա՞լ էի ասում, որ մայր ու աղջիկ մի պտուղ են:

Ապա դարձավ դեպի Լիլիան.

— Նա ընդամենը մի քանի ամիս է, որ քու մարդն է, իսկ մի քանի տարի է, որ իմ ընկերն է: Ո՞վ ավելի շատ իրավունք ունի նրա վրա: Ուզեմ՝ կվերցնեմ նրան ու կնետեմ Զանգու:

— Ապա, համարձակվիր, սպառնաց կինը,— ես քու աչքերը դուրս կչանգռեմ տեղից:

— Կարա…— հասկացողաբար հաստատեց Եղոն:— Կնիկը որ մարդուն սիրի՝ սար էլ շուռ կտա նրա համար:

— Չհավատաս, թե ես քեզ համար ըտենց բան անեմ,— արտասանեց կոնդեցի աղջիկը՝ իր խոսքերի հետ այնքա՜ն անհարիր կերպով սիրահարված աչքերով վարից-վեր նայելով տղայի աչքերին և կատվի պես իր ուսը քսելով նրա թևին:

Երիտասարդները գտան նստելու մի հաճելի վայր՝ ճանապարհից մի քիչ վեր, և նստոտեցին՝ նախապես փռելով շրջահայաց Լիլիայի բերած լրագրերը:

— Վերջին անգամը լինի, որ էսպես դատարկ ենք գալիս զբոսանքի,— բարկացած ասաց Մուրադը:— Չգիտեմ, թե դուք ինչպես, բայց ես ու Ցողիկը որոշել ենք, որ ամեն կիրակի սեփական պատրաստած խորոված պիտի ուտենք բնության ծոցում: Правда, дорогая? Натверди мои слова.

— Օյ, Մուրադ, խնդրում եմ,— աղերսեց Ցողիկը,— դու դեռ մի խոսիր մարդկանց մոտ ռուսերեն՝ մինչև որ լավ չսովորես: Ոչ թե Натверди, այլ подтверди.

— Ну, подверди,— շարունակեց Մուրադը ռուսերեն:— Не все ли равномерно? Какой разницы?

— Օյ, օյ,— հծծաց Ցողիկը և պինդ փակեց ականջները,— прекрати, умоляю тебя, а то я разочаруюсь. Ты не знаешь, какая я привередливая.

— Успокойтесь, Ցողիկ,— մեջ մտավ Գառնիկը,— он же нарочно. Неужели вы думаете, что он настолько без грамотный? Он просто шутник несчастный.

Բոլորը ծիծաղեցին, բոլորը քիչ թե շատ հասկանում էին ռուսերեն:

Մանուշը վերցրեց երեխային, վեր կացավ և մի քիչ հեռանալով, սկսեց ետ ու առաջ քայլելով օրորել նրան՝ քնեցնելու համար: Բայց նրա մտածկոտ քայլվածքը մատնում էր մենակ մնալու նրա ցանկությունը: Նա մտածում էր Արամայիսի մասին: Ինչպե՞ս է հարկավոր վարվել նրա հետ այսուհետև... Ի՞նչ հիմարն է նա, ի՞նչ հիմարը... Ոչինչ գլխի չի ընկել այդքան ժամանակ և քանի-քանի անգամ, մենակ, թե ուրիշների ներկայությամբ, միամիտ սրտով մոտեցել է նրան, ուղղակի երեսին տրտնջացել, որ նա չի սիրում իրեն նրա մյուս ընկեր-ընկերուհիների պես, քաշքշել է միասին պարելու, իրար կողքի նստելու... Իսկ բանից դուրս է գալիս, որ... Ինչպիսի՜ անազնվություն Արամայիսի կողմից…

Բայց Մանուշը, հակառակ իր մեղադրանքին, զգում էր, որ Արամայիսը չի կատարել ոչ մի անազնիվ բան և հարկ չկա վիրավորվել նրանից: Ընդհակառակը, նրա աղջկային ինքնասիրությունը շոյված էր այն բանից, որ Արամայիսը մինչև հիմա ատելիս չի եղել նրան՝ ինչպես ինքն էր կարծում: Եվ ինչպիսի՜ ազնվություն նրա կողմից՝ թաքցնել իր զգացմունքը բոլորից և առաջին հերթին Մանուշից: Ինչպե՞ս կարելի է չհարգել այդպիսի տղայի... Նա համոզված է, որ նույն կարծիքին է նաև Ազատը:

Երիտասարդների խումբն աշխույժ զրուցում էր՝ երբեմն բոլորով միասին, երբեմն մասերի բաժանված: Եվ ոչ մեկը չէր նկատում, ավելի ճիշտ՝ նկատելու չէր տալիս, որ Արամայիսը նստել էր մի քիչ կողմ և ոչ ոքի հետ չէր խոսում: Ոչ ոք չէր ուզում նկատել նաև այն, որ Լենդրոշն արդեն քնել էր, բայց Մանուշը, փոխանակ նրան զգուշությամբ պառկեցնելու, շարունակում էր շրջել և օրորել նրան…

«Ինչո՞ւ, ինչո՞ւ չվազեցի ես նրա ետևից, ինչո՞ւ կորցրի նրան…— մտածում էր Արամայիսը խոր կսկիծով:— Ես հաստատ գիտեմ, որ դա նա էր, որին ես փնտրում էի այսքան երկար ժամանակ և որին ես գտել էի Մանուշի մեջ... Բայց նա Մանուշից էլ էր լավը,— այսինքն՝ ոչ թե լավը, այլ անօգնականը, որովհետև Մանուշն ունի ամուսին, երեխա, իսկ նա ոչ ոք չունի, շրջում է մենակ...

Ինչպե՜ս կգուրգուրեի ես նրան... Ինչո՞ւ չգնացի ես նրա ետևից... Թող ասեին բոլորն իմ մասին ինչ որ ուզում էին, թող ծիծաղեին ինձ վրա: Բայց նրանք չէին էլ պատրաստվում ծիծաղել, նրանք էլ էին տեսնում, որ ես նայում եմ իմ բախտի ետևից, սպասում էին թե ես կսլանամ, կբռնեմ այն... Իսկ ես չգնացի... Իսկ հիմա այլևս ուշ է, ես չեմ գտնի նրան...»:

«Ոչ, իհարկե, հարցն այն չէ, որ ուշ է, և ընդհանրապես մի՞թե կարելի է հուսահատվել՝ առանց գտնելու որևէ փորձ անգամ անելու: Իհարկե, հարցն այն չէ: Եվ եթե ես չեմ կարողանում շարժվել իմ տեղից՝ դա ոչ թե նրա համար, որ ուշ է, այլ որովհետև իմ այն խոսքերից հետո ես իրավունք չունեմ տեղից շարժվելու... Բոլորը պիտի հասկանան, որ հեռանալով այստեղից, ես գնում եմ Մանուշին փնտրելու: Ճիշտ է, ուրիշ Մանուշի, իմ Մանուշին, բայց և այնպես Մանուշին... Հազիվ իմ ընկերները մի կերպ կոծկեցին իմ արարքը, իսկ ես, եթե գնամ, նորից բաց կանեմ այն... Ինչո՞ւ ասացի այն խոսքերը, որոնք ճակատագրական դարձան ինձ համար, կապեցին իմ ոտքերն ու ձեռքերը, թույլ չեն տալիս, որ գնամ, որոնեմ նրան... Ես դրանով ոչ միայն բաց կանեմ նրանց կոծկածը, այլև կապացուցեմ, որ Մանուշն ինձ համար ավելի լուրջ զգացմունք է, քան նույնիսկ ենթադրում են այժմ նրանք: Եթե ես գտնեմ նրան՝ դեռ ոչինչ, հարցը կավարտվի դրանով: Իսկ եթե չգտնե՞մ... Կմնա միայն մի Մանուշ՝ ամուսնացած, իմ ընկերոջ կինը, իսկ ես՝ նրա վրա սիրահարված... Հարկավոր կլինի անմիջապես դադարեցնել ծանոթությունն Ազատի և նրա կնոջ հետ՝ եթե չեմ ուզում, որ մեր հետագա փոխհարաբերությունները դառնան բռնազբոսիկ և փոխադարձաբար ճնշող... Իսկ քանի որ իմ բոլոր ընկերները մտերիմ են նրանց հետ և հաճախ են լինում միասին, ուրեմն ես հեռու եմ մնալու նաև իմ ընկերախմբից, իմ ընկեր-ընկերուհիներից... Ահա թե ինչ կորցրի ես մի անզգույշ խոսքով...»:

«Բայց... գնալ, գնալ, գնալ... Հակառակ բոլոր այդ տեղին մտքերի՝ գնալ, որոնել, գտնել նրան... Գնալ, իհարկե, կարելի է, միայն եթե անպայման գտնես նրան: Այդ դեպքում ամեն ինչ կհարթվի: Ես կունենամ իմ սիրեցյալը, իմ կինը, և մեր ընկերության մեջ ամեն ինչ կշարունակվի նույնությամբ: Բոլորը կծիծաղեն ինձ վրա և առաջին հերթին մենք երեքս՝ ես, Մանուշը և այն աղջիկը: Իմ ու Մանուշի միջև կստեղծվեն իսկապես որ ընկերական փոխհարաբերություններ, կչքանա թաքուն սերը նրա նկատմամբ, ձևացրած սառնությունը... Եթե միայն կարողանամ անպայման գտնել...»:

Արամայիսը նույնիսկ մի շարժում արեց՝ վեր կենալու համար, բայց նորից մնաց իր տեղում:

«Գտնել... Իսկ ի՞նչ է նշանակում՝ գտնել... Եթե դա նշանակում է՝ նորից տեսնել աղջկան՝ ապա դա, հնարավոր է, որ անհնար չէ : Թյո՜ւ,— կողմնակիորեն անցավ Արամայիսի մտքով,— ա՛յ թե ոճ է: Իսկ եթե «գտնել» նշանակում է՝ գտնել նրա փոխադարձ սերը, ապա ո՞վ կարող է երաշխավորել: Իսկ ինձ հարկավոր է, իհարկե, այդպես գտնել նրան: Բայց նա ինձ նայեց այնպիսի երկչոտ ու խեղճ աչքերով, կարծես ինչ-որ ստորություն էր սպասում ինձանից: Ես որոշակիորեն դուր չեկա նրան: Իսկ այն, որ նրա աչքերում մի պահ հայտնվեց ինչ-որ հանկարծակի արտահայտություն, ես հենց այդպես էլ չհասկացա, թե ինչ էր դա...»:

«Ախ, Արամայիս, Արամայիս, գրո՜ղ, զգացմունքների մա՛րդ... Փոխանակ սլանալու քո հույզերի հեղեղատով ներքև,դու անշարժ նստել և դատողություններ ես անում հազար ու մի բանի մասին: Ամոթ քեզ...»:

«Բայց ոչ, դու մտածում ես ոչ թե հազար ու մի, այլ միայն մի բանի մասին, և դու իրավացի ես, և ճիշտ է քո գիտակցության կոնտրոլը քո հույզերի վրա: Դու մտածում ես այն մասին, որ փոխանակ գտնելու այն աղջկան, դու կարող ես կորցնել քո ընկերներին: Մի՞թե դու կարող ես հաշտվել այդպիսի կորուստի հետ...»:

«Ինչպիսի՜ սոսկալի վիճակ, հը՞... Իմանալ, որ նա այս րոպեիս շրջում է ինչ-որ տեղ, մոտիկ, և չկարողանալ գնալ-գտնել նրան... Երանի կարողանայի հաստատ իմանալ, որ անպայման, անպայման գտնելու եմ նրան և նա չի խուսափելու ինձանից... Իսկ գնալ առանց այդ երաշխիքի՝

կնշանակի փակել վերադարձի բոլոր ճանապարհները: Արդեն իսկ այն, որ ես մենակ եմ նստած և չեմ մասնակցում ընդհանուր խոսակցությանը, լավ չէ...»:

Բայց ինչպիսի՜ արտակարգ աղջիկ էր Ցողիկը... Նրա խորաթափանցությունը հասնում էր պայծառատեսության: Իհարկե, հրաշք չկար այդտեղ և նա չէր կարդում ու չէր էլ կարողանա կարդալ Արամայիսի բոլոր մտքերը: Նա պարզապես տեսնում էր, որ իր ընկերն ուզում է գնալ որոնելու աղջկան, բայց պատրվակ չի գտնում այդտեղից հեռանալու…

— Արամայիս, սիրելի ընկեր, խնդրում եմ քեզ,— ասաց նա հանկարծ,— մի մերժիր ինձ համար մի ընկերական ծառայություն: Գնա էլեկտրակայանի մոտ ու լիմոնադ բեր բուֆետից: Սոսկալի ծարավ եմ…

— Շշի մեջ ջուր կա, խմիր,— շշնջաց Մանուշը՝ երեխային չարթնացնելու համար:

— Ինչպե՞ս կարելի է,— ժպտաց Ցողիկը,— եփած ջուր Լենդրոշին է հարկավոր:

Մանուշն ուզեց պնդել, որ երեխային կարող է պետք գալ միայն մի «պուտ» ջուր, շշի մի քառորդից էլ պակաս, բայց նա նկատեց Ցողիկի հայացքը և լռեց: Նա հասկացավ, որ աղջիկը դիտմամբ է ուղարկում Արամայիսին, չգիտես ինչու, բայց այդպես է պետք…

Արամայիսը պաշտամունքի հասնող երախտագիտությամբ նայեց իր ընկերուհուն, որսաց նրա սաստող հայացքը, զսպեց իր ուրախությունը, ձևացրեց չափավոր դժգոհություն աղջկա խնդրից և դժկամ քայլերով հեռացավ: Ծածկվելով շրջադարձի ետևում, նա սկսեց համարյա վազել: Նա քայլերը դանդաղեցրեց միայն հիդրոկայանի մոտերքը, որտեղ լի էր բազմությունը, և սկսեց հազարավոր մարդկանց մեջ տենդահար աչքերով փնտրել միակին…

Աղջիկը չկար: Բայց մի՞թե կարելի էր գալ այդպիսի որոշակի եզրակացության: Գուցե և կար, գուցե և հենց նոր անցավ այդտեղով, բայց Արամայիսը չտեսավ նրան…

Արամայիսը շարունակեց ճանապարհը հիդրոկայանից այն կողմ՝ ձորով ներքև, գնաց այնքան, մինչև որ զբոսնողները դադարեցին հանդիպել: Այդտեղից, ավելի ևս ուշադիր նայելով մարդկանց, նա վերադարձավ կայանի մոտ:

Ոչ, աղջիկը չկար: Չէ՞ որ նա մենակ էր, ուրեմն հավանաբար գնացել է տուն: Իսկ եթե չի՞ գնացել... Իսկ եթե նա մենակ նստած է որևէ խուլ անկյունում՝ թփերով ու ծառերով պատսպարվա՞ծ...

Արամայիսը գիտեր, թե ինչպիսի մոլուցքի կարող է հասցնել մարդուն ապարդյուն որոնումը՝ եթե ուժեղ կամքով չընդհատես այն: Ընկերների մոտից նրա մեկնելուց արդեն անցել էր ավելի քան մի ժամ: Ուշանալ այլևս չէր կարելի, պետք էր վերադառնալ…

Միայն ճանապարհի կեսն անցնելուց հետո նա հիշեց, որ լիմոնադ չի գնել: Այլևս չվերադարձավ: Կասի, որ չկա: Մանավանդ որ Ցողիկը բոլորովին էլ ծարավ չէ…

Արամայիսն աղջկան տեսավ միանգամայն անսպասելի, երբ այլևս դադարել էր որոնելուց և չէր էլ նայում իր մոտով անցնողներին: Մաշված տուֆլիներով, քթերը քերծված, թեկուզև խնամքով ներկված, նա գալիս էր դիմացից: Երևի Արամայիսի դեմքն այլայլված էր, որովհետև աղջիկը, նայելով նրան, երկչոտ ճիչ արձակեց: Եվ Արամայիսը, մոռանալով ամեն բան, մտածելով միայն աղջկան չվշտացնելու, չվիրավորելու, չանհանգստացնելու մասին, դեռ նրան հավասարված՝ շեղեց ճանապարհը, մագլցեց լանջն ի վեր: Ապա,երբ նրա կարծիքով ամեն ինչ անցել էր, նա ետ շրջվեց, նայեց ներքև:

Աղջիկը, ուժասպառ և հուսահատ, նույնպես մագլցում էր լանջն ի վեր…

— Ո՞ւր եք գալիս այս կողմ,— հարցրեց Արամայիսը կարեկցաբար,— այս կողմում կածան չկա, ձեզ համար դժվար է…

Նա ներքև մեկնեց իր ձեռքը: Աղջիկը, հոգնածությունից ետ ընկրկելու պատրաստ, իսկույն բռնեց այդ ձեռքը, բարձրացավ տղայի մոտ, կանգ առավ և սկսեց հևոցով շնչել: Նրա սիրտն ըստ երևույթին բաբախում էր անսովոր ճիգից:

— Ո՞ւր եք գնում,— նորից մեղմ հարցրեց կոմերիտականը:

— Ոչ մի տեղ: Ձեզ մոտ:

— Ի՞նձ մոտ...— Արամայիսը ձեռքն արագ տարավ իր սրտին, այժմ դա ավելի ուժգին էր բաբախում, քան աղջկանը:

— Այո: Ես ձեզ ճանաչում եմ: Երկու տարի է, որ ես փնտրում եմ ձեզ…

— Ի՞նձ... Դուք սխալվում եք, ընկերուհի... Դժբախտաբար սխալվում եք:

— Ոչ, չեմ սխալվում: Դուք այն ժամանակ ինձ ազատեցիք խուլիգանների ձեռքից...

Արամայիսը մի կարճ բացականչություն արձակեց և ուշադիր նայեց նրան: Բայց ոչ, չի կարող հիշել նրան, որովհետև այն ժամանակ էլ նա ուշադրություն չի դարձրել աղջկան:

— Առաջին շրջանում ես ձեզ... թույլ կտա՞ս, որ անվանեմ ոչ թե «ձեզ» այլ «քեզ»... Առաջին շրջանում ես քեզ փնտրում էի շնորհակալություն հայտնելու համար: Եթե գտնեի՝ էդպես էլ կվերջանար: Բայց չէի գտնում, ու քանի չէի գտնում՝ էնքան շատ էի ուզում գտնել, մինչև որ դու ինձ համար դարձար… Իսկ հիմի էնքան եմ ուրախացել, որ քիչ է մնում... Ինչպե՞ս է անունդ...

— Արամայիս…— հազիվ արտասանեց լենինականցին՝ դեռ այնքան ընդարմացած այդ անակնկալից, որ ոչ ուրախությունը, ոչ երջանկության խելահեղ զգացումը, դեռ չէին կարողանում պաշարել նրան:

Աղջիկն իր նիհար, աշխատանքից կոշտացած փոքրիկ ձեռքը մեկնեց տղային.

— Իսկ իմ անունը Ծաղիկ է: Ես որբ եմ: Ես առաջ որբանոցի որբ էի, իսկ հիմի՝ տան որբ: Ոչ ոք չունեմ: Դու լավ տղա ես, եղիր ինձ եղբայր, ընկեր, ինչ ուզում ես, մենակ թե եղիր…

— Դու ես... Դա դու ես...— հազիվ արտասանեց Արամայիսը: Նրա կզակը ցնցվում էր հուզմունքից:

— Իսկ ես ապա ինչքա՜ն եմ փնտրել քեզ, եթե իմանաս... Քեզ, Ծաղիկ, քեզ, մի զարմանա... Բայց ես չգիտեի, թե այդ դու ես: Եվ այլև, չկրկնես «եղբայր» խոսքը: Մենք կլինենք... ընկերներ, ամբողջ կյանքում, մինչև մահ…

— Վա՛յ, մայրիկ…— շշնջաց աղջիկը՝ իրեն կորցրած,— Ես ի՞նչ է կատարվում…

— Ոչինչ, ոչինչ... Դա միշտ այդպես է կատարվում, երբ իսկական է: Գնանք:

— Ո՞ւր…

— Իմ ընկերների մոտ: Եվ քո: Գնանք: Բայց սպասիր: Դու չե՞ս խրտնի՝ եթե թևանցուկ անեմ քեզ, Ծաղիկ: Կսայթաքվես, ազնիվ կոմերիտականի խոսք: Ախր ինչո՞ւ ես բարձրանում այս քարերն ի վեր՝ առանց ընկերոջ: Բայց սրանից հետո՝ ոչինչ, մենք միասին կբարձրանանք: Անցիր այս կողմով, այստեղ ավելի հարթ է: Ընկերներս նստած են հենց այս բարձրության վրա, այնպես որ մենք ուղիղ դուրս կգանք նրանց մոտ: Դու նրանց մեջ կտեսնես նաև այն երկու տղաներին, որոնք այն ժամանակ ազատեցին ինձ: Այո, ես քեզ ազատեցի, իսկ նրանք՝ ինձ: Իսկ այդ դեպքից հետո, հետագայում, այդ սրիկաներն այլևս չե՞ն անհանգստացրել քեզ, Ծաղիկ:

— Մի ժամանակ՝ շատ, իսկ հետո կորան: Երևի ձերբակալեցին նրանց:

— Ոչինչ, այսուհետև մենք միասին կլինենք միշտ: Այսինքն՝ ոչ թե միայն ես ու դու, այլև իմ բոլոր ընկերներն ու ընկերուհիները: Իսկ դու էդքան խեղճ մի լինի, Ծաղիկ: Ճիշտ են ասում՝ հույս դիր ընկերոջդ վրա, բայց ինքդ էլ ունեցիր քո սեփական ոտքերն ու ձեռքերը, քո սեփական գլուխը:Բայց այդ բոլորի մասին՝ հետո, հետո: Ինչքա՜ն բան ունենք խոսելու, իրար պատմելու... Հետո, հետո, մենք արդեն հասնում ենք: Տեսնո՞ւմ ես այն նստած ութ հոգուն: Նրանք են…

Ցողիկն առաջինը նկատեց մոտեցող զույգին: Անշուշտ սպասում էր: Նա ձեռքով ցույց տվեց նրանց կողմը և ասաց միանգամայն սովորական տոնով.

— Ահա և վերջապես նրանք՝ Արամայիսն ու... նրա Մանուշը: Իսկ լիմոնադ, այդպես էլ, մոռացել են բերել: Կռվելու եմ հետները...

1948–1949

ԵՐԵՎԱՆ—ՄՈՍԿՎԱ